



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4749


9147.925)

8-13



ՄԱՏԵՄԱՏԻԿԱԿԱՆ

ԱՐԵՄԵՆԻԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՆ



Գ.

ՊԵՏԱԲՈՒԹԻՒՆ ՀԵՅՈՑ

9(47.925)

- 2 - 13

ՊԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ե Յ Ո Ց

ՀԱՅԿԵԶԱՆՑ ՏԷՐՈՒԹԵԼՆ ՍԿՍԵԼԻՆ

ՄԻՆՁԵՒ

ՄԵՐ ԺԵՄԵՆԵԿԸ

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՉԵԳԸՃԵԼՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԻՆ



Վ Ի Է Ն Ն Ը

ՊԵՇԱԳԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1851 ՌՅ

38512 - шк



21759-60

Յ Ե Ռ Ե Ջ Ա Բ Ե Ն

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ Ճշմարիտ բաղձանք ունեցող ազգի մ'առաջին ու գլխաւոր պարտքն է իր անցեալ վիճակին վրայ աղէկ եւ կատարեալ տեղեկութիւն ունենալ, որպէս զի իրեն սեպհական բնաւորութիւնը, կարողութիւններն եւ նաեւ պակասութիւնները ճանչնալով՝ կարող ըլլայ իր ներկայ վիճակն աղէկ կարգաւորել, եւ իրեն յաջող եւ երջանիկ ապագայ մը պատրաստել: Ասոր ճշմարտութեանը համոզուած ըլլալով, մենք ալ մեր ազգին աս քաղցր պարտաւորութեան կատարումը դիւրացընելու համար՝ անոր աս նոր Հայոց պատմութիւնը կը մատուցանենք, որպէս զի ասով ինքն ալ իր անցած վիճակը ճանչնայ եւ իր ընթացքն ըստ այնմ՝ ուղղէ, եւ այնպէս իր նպատակին դիւրաս հասնի:

Ինչպէս ամէն ընթերցողնիս պիտ'որ տեսնեն, գլխաւոր ջանքերնիս ան եղած է որ պատմութիւննիս պարզ եւ միանգամայն կարելի եղածին չափ կատարեալ ընենք եւ հարկաւոր բան մը դուրս թող չտանք: Ասոր համար ամէն Ազգային պատմագիրներն՝ եւ նաեւ մեր ազգին վրայ խօսող հին ու նոր Օտարազգի հեղինակաց մեծ մասը կարդալով՝ անոնց մէջէն կարեւոր տեղեկութիւններն, որչափ գրքերնուս չափը կը ներէր, քաղեցինք: Բայց

որպէս զի գրքերնիս չափէն աւելի չծանրացրնենք,
եկեղեցական դէպքերն եւ կրօնական խնդիրները
պատմելն ուրիշ տեղոյ եւ ժամանակի թող տուինք,
եւ միայն այնպիսի դէպքերը յիշեցինք, որոնք ար-
տաքին պատմութեան հետ անբաժին կապակցու-
թիւն մ'ունէին, եւ անոնց աղէկ հասկըցուելուն
համար անհրաժեշտ հարկաւոր էին:

Ամէն մէկ պատմութեան քով՝ նոյնը պատմող
հեղինակին անունը յիշելն աւելորդ համարեցանք,
եւ միայն իւրաքանչիւր Գրքին սկիզբն անոր մէջ
բովանդակած պատմութեան Աղբիւրներուն վրայ
համառօտ տեղեկութիւն տուինք: Գարձեալ այնպի-
սի դէպքերն՝ որոնք միայն պատմութեան լուսա-
ւորութեան կը ծառայէին, եւ ան պատմութիւն-
ները՝ զորոնք զանազան հեղինակներ իրարմէ տար-
բեր կը պատմէին, նոյն պատմութեանց տակ զատ
գրով դրինք, որպէս զի թէ բուն պատմութեան
ընթացքը չընդհատի, եւ թէ անոր պայծառ իմա-
ցուելուն օգնող բան մը դուրս չմնայ:

Ար յուսանք որ մեր աս փոքր աշխատութիւնն
ընդունելութիւն կը գտնէ, եւ իր վախճանին կը
հասնի՝ որն որ է մի միայն Աստուծոյ Փառքն եւ
Ազգերնուս օգուտը:

Գ Լ Ո Ւ Խ Ն Ե Ր Ո Ւ Ն Ց Ա Ն Կ Ը

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա.	Ազգային պատմութեան օգուտը	Ա
Բ.	Հայոց տէրութեան փոփոխութիւններուն, եւ աս մեր պատմութեան կարգին ու բաժանման վրայ ընդհանուր տեղեկութիւն	Բ
Գ.	Հին Հայաստանի աշխարհագրութիւնը	Գ

Գ Ի Բ Ք Ա . Հ Ա Յ Կ Ա Ջ Ա Ն Ց Տ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

ԳԼ.	Ա. Հայկ	2
ԳԼ.	Բ. Արմենակէն մինչեւ Հարմային ժամանակը	6
ԳԼ.	Գ. Արամ	9
ԳԼ.	Դ. Արայ Գեղեցիկ	12
ԳԼ.	Ե. Կարդոսէն մինչեւ Սկայորդւոյն ժամանակը	14
ԳԼ.	Զ. Պարոյր, մինչեւ Տիգրան Ա	16
ԳԼ.	Է. Տիգրան Ա	19
ԳԼ.	Ը. Տիգրանին յաջորդները մինչեւ Վահէ	26
ԳԼ.	Թ. Հայաստանի կուսակալները	30

Գ Ի Բ Ք Բ . Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ե Ա Ց Թ Ա Գ Ա Ւ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

ԳԼ.	Ա. Վաղարշակ Ա	36
ԳԼ.	Բ. Արշակ Ա	39
ԳԼ.	Գ. Արտաշէս Ա	40
ԳԼ.	Դ. Տիգրան Բ	42
ԳԼ.	Ե. Արտաւազդ Ա	66
ԳԼ.	Զ. Արտաւազդին յաջորդներն ըստ արտաքին պատմագրաց	68
ԳԼ.	Է. Արշամ	78
ԳԼ.	Ը. Արգար	80
ԳԼ.	Թ. Անանուն, Սանատրուկ	86
ԳԼ.	Ժ. Երուանդ Բ	88
ԳԼ.	ԺԱ. Արտաշէս Բ	93
ԳԼ.	ԺԲ. Արտաւազդ Բ	102
ԳԼ.	ԺԳ. Տիրան Ա	104
ԳԼ.	ԺԴ. Տիգրան Գ	105

ԳԼ. ԺԵ.	Վաղարշ	107
ԳԼ. ԺԶ.	Խոսրով Ա. ՄԷԾ	109
ԳԼ. ԺԷ.	Խոսրովին մահուանէն մինչեւ Տրդատին [Թագաւորելը	113
		116
ԳԼ. ԺԸ.	Տրդատ	135
ԳԼ. ԺԹ.	Խոսրով Բ.	139
ԳԼ. Ի.	Տիրան Բ.	142
ԳԼ. ԻԱ.	Արշակ Բ.	152
ԳԼ. ԻԲ.	Պապ	156
ԳԼ. ԻԳ.	Վարադրատ	161
ԳԼ. ԻԴ.	Արշակ Գ. Վաղարշակ Բ. Խոսրով Գ.	164
ԳԼ. ԻԵ.	Խոսրով Գ. առանձին	166
ԳԼ. ԻԶ.	Վառամշապուհ	168
ԳԼ. ԻԷ.	Խոսրով երկրորդ անգամ ու Շապուհ Պարսիկ	170
ԳԼ. ԻԸ.	Արտաշէս Գ. կամ Արտաշիր	

Գ Ի Բ Գ. Գ. ՄԱՐԶՊԱՆՆԵՐՆ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ

ԳԼ. Ա.	Յազկերտին Հայոց դէմ հանած հարա- ծանքին սկիզբը	175
ԳԼ. Բ.	Նախարարաց Հայաստան դառնալն եւ վա- սակին ըրածները	181
ԳԼ. Գ.	Աղուանից երկրին պատերազմները	185
ԳԼ. Դ.	Վասակին Հայաստան ըրածները	188
ԳԼ. Ե.	Վարդանանց պատերազմը	192
ԳԼ. Զ.	Ատորոմիդդ մարզպանին Հայաստան դալը	194
ԳԼ. Է.	Ղեւոնդեանց մարտիրոսութիւնը	198
ԳԼ. Ը.	Վահան Մամիկոնեան եւ իր Պարսից դէմ ըրած պատերազմները	201
ԳԼ. Թ.	Անդեկանին եւ Վահանին մարզպանու- թիւնը	214
ԳԼ. Ժ.	Վարդին մարզպանութենէն մինչեւ Վրոն Ճիհր մարզպանին ժամանակը	218
ԳԼ. ԺԱ.	Սմբատ Բագրատունի եւ Գաւիթ Սահա- ռունի	222
ԳԼ. ԺԲ.	Վարազտիրոց մարզպանը. Գաւիթ, Վա- րազտիրոց, Համաղասպ եւ Գրիգոր կիւ- րապաղասաները	225
ԳԼ. ԺԳ.	Աբդըլային ստրիկանութենէն մինչեւ Եզիս Բ.	229
ԳԼ. ԺԴ.	Խուզիմա, Հոլ, Ապուսէթ	233

Գ Ի Բ Ք Դ . Բ Ա Գ Բ Ա Տ Ո Ի Ն Ե Ա Ց Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

ԳԼ . Ա . Աշուտ Ա	239
ԳԼ . Բ . Սմբատ Ա	243
ԳԼ . Գ . Աշուտ Բ . Էրկաթ	262
ԳԼ . Դ . Աբաս	276
ԳԼ . Ե . Աշուտ Գ . Ողորմած	279
ԳԼ . Ջ . Սմբատ Բ	282
ԳԼ . Է . Գաղիկ Ա . Արքայից արքայ (Շահնշահ)	288
ԳԼ . Ը . Յովհաննէս Սմբատ	290
ԳԼ . Թ . Գաղիկ Բ . ին Էրէք տարւան թագաւորու- թիւնը	299
ԳԼ . Ժ . Գաղիկ Բ . ին Էրեսունուհինգ տարւան պանդխտութեան ժամանակը	306

Գ Ի Բ Ք Ե . Ռ Ո Ի Բ Ե Ն Ե Ա Ն Ց Տ Ե Ի Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

ԳԼ . Ա . Ռուբէն Ա	322
ԳԼ . Բ . Կոստանդին Ա	323
ԳԼ . Գ . Թորոս Ա	325
ԳԼ . Դ . Լեւոն Ա	329
ԳԼ . Ե . Թորոս Բ	334
ԳԼ . Ջ . Թովմաս Պայլ ու Մլէհ	342
ԳԼ . Է . Ռուբէն Բ	345
ԳԼ . Ը . Լեւոն Բ	347
ԳԼ . Թ . Ջապէլ թագուհի եւ Փիլիպոս	363
ԳԼ . Ժ . Հեթում Ա	368
ԳԼ . ԺԱ . Լեւոն Գ	371
ԳԼ . ԺԲ . Հեթում Բ . Թորոս Գ . Սմբատ ու Կոս- տանդին Բ	378
ԳԼ . ԺԳ . Լեւոն Դ	384
ԳԼ . ԺԴ . Օշին	386
ԳԼ . ԺԵ . Լեւոն Ե	389
ԳԼ . ԺԶ . Կոստանդին Գ . Գուխտոն եւ Կոստան- դին Դ	401
ԳԼ . ԺԷ . Լեւոն Ջ	404

Գ Ի Բ Ք Չ . Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ն ' Ի Ր
Ա Ն Կ Ա Խ Ո Ի Թ Ե Ն Է Ն Ջ Ր Կ Ո Ի Ե Լ Է Ն Ե Տ Ք Ը

ԳԼ . Ա . Մէլիքշահին Հայաստանի տիրելէն մինչեւ թաթարաց զանիկա դրաւերուն ժամանակը	414
ԳԼ . Բ . Հայաստան թաթարաց իշխանութեան տակ	416

ԳԼ. Գ.	Լանկիթիմուրին արչաւանքները, մինչև Օսմանեանց Հայաստանի տիրելը	418
ԳԼ. Գ.	Օսմանեանց Հայաստանի տիրելը	422
ԳԼ. Ե.	Շահաբասին Հայաստան արչաւելը	424
ԳԼ. Զ.	Գաւիթ Սիւնի իշխան եւ իր բրած- ները	429
ԳԼ. Է.	Օսմանեանց բոլորովին Հայաստանի տիրե- լը. Նատրը շահին անոր մէկ մասը նորէն առնուլը	433
ԳԼ. Ը.	Ռուսաց Հայաստանին մէկ մասին տի- րելը	436
ԳԼ. Թ.	Հայոց ազգին հիմակւան վիճակը	440
	Ժամանակագրական տախտակ	453
	Անուանց ցանկը	461

3. Ասոր դադրելէն ետեւ 452 տարի Հայաստան պարսիկ եւ ազգային Մարզպաններու (կուսակալներու) եւ արաբացի Ռատիկաններու ձեռքով կառավարուեցաւ, մինչեւ Աշոտ Աին թագաւորելը (885) որմէ սկսաւ.

4. Արրորդ Հարստութիւնն՝ ու Բագրատունեաց Հարստութիւն անուանեցաւ, որովհետեւ Աշոտ Բագրատունեաց նախարարութեան ցեղէն էր: Ասիկա մինչեւ Գագիկ Բին մահը (1079) 194 տարի տեւեց:

5. Հայոց Չորրորդ Հարստութիւնը Բագրատունեաց իշխանութեան դադրելէն տարի մը ետքը Կիլիկիայի մէջ Ռուբէն անունով Բագրատունի իշխանէ մ'ըսկսաւ, ասոր համար ալ Ռուբենեան Հարստութիւն կոչուեցաւ, եւ մինչեւ Լեւոն Զին բռնուիլը (1375) 296 տարի տեւեց:

6. Ասիկէ ետեւ մեր ազգն իր սեպհական իշխաններէն զրկուելով եւ ազատութիւնը կորսնցընելով՝ զանազան օտար ազգաց հպատակ եղաւ, եւ հիմա ալ գլխաւորաբար երեք տէրութեանց տակն է, այսինքն մեծ մասն Օսմանեան տէրութեան, մէկ մասը Ռուսաց ու մէկ պզտիկ մասն ալ Պարսից տակ:

Բ. Հայոց տէրութեան աս գլխաւոր փոփոխութիւններուն միտ դնելով՝ Պատմութիւննիս վեց Գիրք կը բաժնենք: Առաջին գրքին մէջ Հայկազանց ցեղին կամ Հարստութեան, եւ անոնցմէ ետեւ Հայաստանը կառավարող կուսակալաց պատմութիւնը կը դնենք: Երկրորդ գրքին մէջ Արշակունեաց թագաւորութեան դէպքերը կը պատմենք. Երրորդին մէջ Մարզպանաց ու Ռատիկանաց պատմութիւնը կը դնենք. Չորրորդին մէջ Բագրատունեաց, Հինգերորդին մէջ Ռուբենեանց ցեղին թագաւորաց գործքերը կը պատմենք. իսկ Աեցերորդ գրքին մէջ Հայոց տէրութեան ջնջուելէն մինչեւ մեր ժամանակը Հայաստանի եւ Հայոց ազգին մէջ պատահած երեւելի դէպքերը կը նկարագրենք:

Իւ որովհետեւ պատմութիւնն առանց աշխարհագրութեան աղէկ ու պայծառ չի կրնար հասկրցուիլ, հոս դեռ պատմութիւննիս շսկուած՝ շին Հայաստանի համառօտ աշխարհագրութիւնը կը դնենք:

Գ. շին Հայաստանի աշխարհագրութիւնը:

Հայաստանին սահմանն է արեւելքէն Կասպից ծովն ու Պարսից (յառաջագոյն Մարաց) երկիրը, հարաւէն Ասորեստան, Միջագետք, Ասորիք ու Կիլիկիա, արեւմուտքէն Փոքր Ասիա ու հիւսիսէն Խաղտիք, Կողքիս, Վերք եւ Աղուանք. ու 52—67 երկայնութեան եւ 36—42 լայնութեան աստիճաններուն մէջ կ'իյնայ:

Բնդարձակութիւնը հին աշխարհագիրներէն ոմանք աւելի ոմանք պակաս կը դնեն. բայց հիմակաւն հաշիւներուն նայելով՝ 18—20,000 քառակուսի աշխարհագրական մղոն է:

Իր լեռներուն մէջ գլխաւորներն են Այրարատ կամ Մասիս լեւը, Կորդուաց լերինք, Տաւրոս լերանց մէկ մասն, որն որ իր հարաւային սահմանին վրայ է, Անտիտաւրոս (Փոքր Հայաստանի մէջ): Ասանցմէ ուրիշ կան շատ փոքր լեռներ, ինչպէս Արագած, Սուկաւէտ, Նպատ, Գեղ, Ծաղկաց լեռուն, Վարազ, Սիմ եւ այլն:

Մեծ գետերն են, Եփրատ կամ Արածանի, Տիգրիս կամ Դիզաթ, Երասխ, Կուր, Ճորսխ. իսկ պզտիկներն Ալիս ու Մելրոս (Փոքր Հայոց սէջ), Գայլ գետ, Ախուրեան, Քասաղ, Տղմուտ գետ: Երկու մեծ լիճ ունի, որոնք են Ծով Բզնունեաց կամ Ռըշտունեաց (Վանայ ծով), ու Ծով Գեղամայ: Իր արեւելեան հարաւային սահմանին վրայ է նաեւ Կասպուտան կամ Ռրմիայ Ծովը: Բերքերն իւրաքանչիւր նահանգին մէջ կը դնենք:

Հայաստան գլխաւոր երկու մաս կը բաժնուի, այսինքն Փոքր Հայք եւ Մեծ Հայք:

Փ Ո Ք Ը Հ Ա Յ Ք : Արեւելքէն սահմանակից է Մեծ Հայոց, հարաւէն Ասորեոց ու Կիլիկիայի, արեւմուտքէն Բուն Կապադովկիայի ու հիւսիսէն Պողէմնիական Կապադովկացեոց ու Պոնտոսի : Գլխաւոր գետերն են Մելրս եւ Ալիս : Լեռներն՝ Անտիաարոս լեռանց շարքը : Չորս Նահանգ կը բաժնուի . 1. Առաջին Հայք , 2. Երկրորդ Հայք , 3. Երրորդ Հայք , 4. Կապադովկիա ¹ :

1. Առաջին Հայք : Փոքր Հայաստանին մէջ տեղն է : Քաղաքներուն մէջ գլխաւորներն են , Մելիտինէ , Սամոսատա եւ այլն :

2. Երկրորդ Հայք : Կիլիկիային հիւսիսային կողմն է , ոսկից որ Տաւրոս լեռանց շարքովը կը բաժնուի : Գլխաւոր քաղաքն է Կոկիսն :

3. Երրորդ Հայք : Փոքր Հայոց հիւսիսային մասն է : Քաղաքներուն մէջ երեւելի են Սեբաստիա , Նիկոպոլիս եւ այլն :

4. Կապադովկիա կամ Գամիրք : Հայաստանին արեւմտեան ծայրն է : Գլխաւոր քաղաքներն են Մաժաք կամ Կեսարիա , Նազիանզ , Եւզոկիա եւ այլն :

Մ Ե Ծ Հ Ա Յ Ք : Մեծ Հայոց սահմանն է արեւելքէն Կասպից ծովն ու Պարսից (յառաջագոյն Մարաց) Արաբաստական Նահանգն , արեւմուտքէն Փոքր Հայք , հիւսիսէն Կողքիս , Վիրք եւ Աղուանք , հարաւէն Ասորիք , Միջագետք եւ Ասորեստան : Գետերն ու լեռները վերը յիշուածներն են : Բոլոր Մեծ Հայք տասնուհինգ Նահանգ կը բաժնուի որոնց անուններն են

Ա . ԲԱՐՁՐ ՀԱՅՔ .

Բ . ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔ .

Գ . ԱՂԶՆԻՔ .

Դ . ՏՈՒՐՈՒՔԵՐԱՆ .

Ե . ՄՈԿՔ .

1 Կապադովկիա Նահանգը մասը միայն Փոքր Հայաստանի շատ ընդարձակ էր , որուն մէկ մէջ կ'իյնար :

- Զ. ԿՈՐՃԱՅՔ.
 Է. ՊԼՐՍԿԱՀԱՅՔ.
 Ը. ՎԼՍՊՈՒՐԱԿԱՆ.
 Թ. ԼՐՑԱԽ.
 Ժ. ՍԻՆՏԻՔ.
 ԺԱ. ՓԵՅՏԱԿԱՐԱՆ.
 ԺԲ. ՈՒՏԻ.
 ԺԳ. ԳՈՒԳԱՐՔ.
 ԺԴ. ՏԱՅՔ.
 ԺԵ. ԼՅՐԱՐԱՏ.

Ա. Բարբր Հոյր :

Մեծ Հայոց հիսիսային արեւմտեան ծայրն է : Գիրքը շատ բարձր ըլլալուն՝ ամէն կողմ մեծ ու պզտիկ զեւեր կ'արձակէ, որոնց մէջ գլխաւորներն են Եփրատ, Երասխ ու Ճորոխ : Աս նահանգին մէջ շատ ջերմուկներ ալ կան :

Ինը գաւառ կը բաժնուի .

- | | |
|---------------|-------------|
| 1. Գարանաղի . | 6. Գերջան . |
| 2. Առիւծ . | 7. Սպեր . |
| 3. Մընձուր . | 8. Շապոմք . |
| 4. Եկեղեաց . | 9. Կարին . |
| 5. Մանանաղի . | |

Գարանաղի : Քաղաքներն են Անի, Թորգան եւ այլն : Հոս է նաեւ Մանեայ այրք ըսուած տեղն՝ ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ վախճանեցաւ, ու Սեպուհ լեռը :

Եկեղեաց : Գլխաւոր տեղերն են Երեղն աւան կամ Երիզայ, Խախ զեւղ, Թիլն աւան, Չրմէս, Վասակերտ եւ այլն :

Գերջան : Աս գաւառին մէջն է Բագայառինջ զիւղը :

Սպեր : Բագրատունեաց ցեղին երկիրն էր : Գլխաւոր տեղերն են Սմբատաւան, Բայբերդ :

Կարին : Բարձր Հայոց ամենէն մեծ դաւառն է :
Գլխաւոր քաղաքն է Կարնոյ քաղաք կամ Թէսոպու-
պոլիս : Շատ դեղեր ալ ունի որոնք են Մարազայ
դեօղ, Արծաթի, Արծն, եւ այլն :

Բ. Չորրորդ հոյ :

Բարձր Հայոց հարաւային կողմը կ'իյնայ . արեւ-
մուտքէն սահմանակից է Երկրորդ Հայոց, արեւելքէն
Տուրուբերան նահանգին, ու հարաւէն Աղձնեաց : Իր
լեռներուն մէջ Բիւրեղի հանք կայ : Հոս առիւծ ալ
կը գտնուի :

Ութը դաւառ ունի :

- | | |
|-----------------|-------------|
| 1. Խորձէն . | 5. Ծովիք . |
| 2. Հաշտեանք . | 6. Հանձիթ . |
| 3. Պաղնատուն . | 7. Գորէք . |
| 4. Բալահոյզիս . | 8. Գեղիք . |

Խորձէն : Մորմորանս . Գ. (Գիւղ)

Հաշտեանք : Մուշեղայ . Գ. Ուրայ . Գ. Գիւրեհ . Գ. :

Պաղնատուն : Պաղին Բ. (Բերդ) .

Ծովիք : Աս նահանգին ամենէն մեծ դաւառն է :
Գլխաւոր քաղաքն է Մարաիրոսաց քաղաք կամ
'Նփրկերտ . ասիէ զատ ունի Մամբրէ, Բնաբեղ, Կար-
կատակերտ եւ այլն քաղաքները :

Գ. Աշնի :

Մեծ Հայոց հարաւային արեւմտեան կողմն է ,
հիւսիսէն սահմանակից է Չորրորդ Հայոց, հարաւէն
Ասորոց երկրին ու Միջագետաց : Բերքերն են շատ
երկաթ, նաւթ ու գլժոր :

Տասը դաւառ կը բաժնուի :

- | | |
|--------------|----------------------|
| 1. Արզն . | 6. Ազնուաձոր . |
| 2. Նփրկերտ . | 7. Խերհէթք . |
| 3. Քեղ . | 8. Գղեղ . |
| 4. Կեթիկ . | 9. Սանձոր կամ Սալնոյ |
| 5. Տասիկ . | 10. Սասուն . [ձոր . |

Աս նահանգին գլխավոր քաղաքն է Տիգրանակերտ, զորն որ Տիգրան Ա. շինած է: Գեղերուն մէջ երեւելի է Բառակէջ տանը:

Գ. Տարագիրք:

Չորրորդ Հայոց արեւելեան կողմը կ'իյնայ: Բերքերն են, գաղպէ, մեղր, մաշկամիրգ (գույցէ շագանակ ըսուած պտուղն է), երկաթ ու ձերմակ նաւթ: Աս նահանգին մէջն է Բյնունեայ (Վանայ) ծովը:

Տասնուվեց գաւառ ունի.

- | | |
|-----------------|------------------|
| 1. Խոյթ. | 9. Հարք. |
| 2. Ասպակունիք. | 10. Վարաժնունիք. |
| 3. Տարօն. | 11. Բյնունիք. |
| 4. Աշմունիք. | 12. Երեւարք. |
| 5. Մարդաղի. | 13. Աղիովիտ. |
| 6. Գասնաւորք. | 14. Ապահունիք. |
| 7. Տուարածատափ, | 15. Կոր. |
| 8. Գալառ. | 16. Խոռխոռունիք. |

Տարօն: Տուրուբերանին մեծ գաւառն է: Գրելխաւոր քաղաքներն ու գեղերն են, Յաշիշաա Բ. (Քաղաք), Հացեկք Գ. Մուշ Ա. (Աւան), Ծաղիկ Գ. Կուառս Գ. Գոմկունք Գ. Մեղաի Գ. Վելչապ Բ. Մծուբք Բ. Ողական Բ. (Բերգ), Կուառս Գ. Խորնի Գ. Մեղաի Ա. Չիւնկերտ Բ. եւ այլն:

Աս գաւառին Տարօն անուանելուն պատմութիւնը խորենացին (Գիրք Ա. ԳԼ. 6.) այսպէս կը պատմէ: Օր մը, կ'ըսէ, փլիսոփաներու մէջ աշխարհագրութեան վրայ խօսք եղած ատեն, Ողիմպիոսորոս անունով իմաստուն փիլիսոփայ մ'ասանկ ըսաւ. «Աւանդութիւն մը կայ որն որ գրքի մէջ գրուած չէ, այլ միայն բերնէ բերան մեզի հասած է, թէ հին գրքի մը մէջ ասանկ կը պատմուէր: Քսիսութրոսին (Նոյին) տապանը Հայաստան կենալէն ետքն, իր որդիներէն մէկը Սիմ անունով, հիւսիսային արեւմտեան կողմերը գնաց, եւ երկայն լեւան մը քով պղտիկ դաշտ մը գտնելով, հոն քիչ մ'ատեն բնակեցաւ, եւ իր անուամբն ան լեւան անունը Սիմ անուանեց. ետքը նորէն իր եկած

երկիրը գարձաւ : Բայց ասոր որդիներէն մէկը Տարբան անունով՝ իր ազդցմովը հոն մնաց, ու նոյն դաւառն իր անուամբը Տարօն անուանեց, իր բնակած տեղն ալ Յրօնք, որովհետեւ ան տեղն իր որդիքն իր քովէն ցրուեցան, : Խորենացին կ'ըսէ թէ աս պատմութիւնը հին ատենան հայերը երգերու մէջ կ'երգէին :

Աշմունիք : Երեղ քաղաք :

Հարք : Գլխաւոր քաղաքն է Մանաւազակերտ կամ Մանազկերտ : Աս դաւառին մէջն է Հայկաշէն Հայաստանի մէջ մեր Հայկ նահապետին շինած առաջին գեղը : Հերեան Գ :

Բզնունիք : Աւնայ ծովուն քովերը կ'իյնայ՝ որն որ աս դաւառին անուամբը յառաջագոյն Ծով Բզնունեաց կը կոչուէր : Աս դաւառն ունի Խլաթ քաղաքն, Արծկէ գեղը եւ ուրիշ քանի մը պղտիկ գեղեր :

Աղիովիտ : Առաջին Արտաւազդին (Տիգրան Բ-ին որդւոյն) ատենն աս դաւառը թագաւորական ցեղի գաւառ եղաւ, որովհետեւ աս Արտաւազդ իր եղբայրներն ու քուրերը հոս բնակեցուց : Գլխաւոր քաղաքն է Զարիշատ : Հոս է նաեւ Արճէշ քաղաքը :

Ապահունիք : Ասոր մէջն էին Գալարիս կամ Ածուղ գեղն՝ ուր որ Պարսիկները Տիրան Բ. թագաւորին աշուրները հանեցին :

Ե. Մ-ի :

Աղձնեաց արեւելեան կողմն է : Իր հարաւային սահմանէն կ'անցնի Տաւրոս լեռանց մէկ մասը : Բերքերն են մանրագոր ու կաքաւ : Հոս ինձ ալ կը գտնուի :

Ինը գաւառ կը բաժնուի .

- | | |
|-------------------|--------------------|
| 1. Իշայր . | 6. Առանձնակ Մօկը . |
| 2. Միւս Իշայր . | 7. Արքայից գաւառ . |
| 3. Իշոյ գաւառ . | 8. Արգաստովիտ . |
| 4. Առուենից ձոր . | 9. Զերմաձոր . |
| 5. Միջայ . | |

Զ. Կորճայի :

Մոկաց արեւելեան կողմն է. հարաւէն Ասորեստանի ու հիւսիսէն Պարսկահայոց սահմանակից է : Աս նահանգին մէջն է Կորդուաց լեռինք ըսուած լեռանց շարքն, որն որ իր անունն ասոր Կորդուք գաւառէն կ'առնու : Գլխաւոր բերքն է զառիկ :

Գաւառները տասնումէկ հատ են .

- | | |
|---------------------|------------------|
| 1. Կորդուք . | 7. Մոթողանք . |
| 2. Վերին Կորդրիք . | 8. Որսիրանք . |
| 3. Միջին Կորդրիք . | 9. Կարաթունիք . |
| 4. Ներքին Կորդրիք . | 10. Ճահուկ . |
| 5. Այսուանք . | 11. Փոքր Աղբակ . |
| 6. Այգառք . | |

Կորդուաց գաւառին բնակիչներն այնչափ անուանի էին որ ուրիշ պատմագիրները զանոնք իբրեւ առանձին թագաւորութիւն մը կը գնեն :

Է. Պարսկահայի :

Կորճէից արեւելեան հիւսիսային կողմն, Ասորպատական նահանգին քովը կ'իյնայ : Հատ այժեամբ ուցիռ (վայրենի էշ) ունի :

Ինը գաւառ կը բաժնուի .

- | | |
|------------------------|----------------|
| 1. Այլի կամ Կուրիճան . | 6. Տամբերս . |
| 2. Մարի . | 7. Զարեհաւան . |
| 3. Թրափի . | 8. Զարեւանդ . |
| 4. Այսուերս . | 9. Հեր . |
| 5. Ըռնայ . | |

Հեր գաւառն ունի համանուն գլխաւոր քաղաք, եւ Նուարսակ ու Փեռոտակ գեղերը :

Հայաստանին ամենէն մեծ նահանգն է, Պարսկահայոց հի սիսային արեւմտեան եւ Այրարատ նահանգին հարուային կողմը կ'իյնայ :

Երեսուներկէց դաւառ կը բաժնուի .

- | | |
|---------------------|--------------------|
| 1. Ռշտունիք . | 19. Թոռնաւան . |
| 2. Տոսք . | 20. Ճուաշ . |
| 3. Բուդունիք . | 21. Ռոտկրճունիք . |
| 4. Արճիշակավիտ . | 22. Մեծնունիք . |
| 5. Աղովիտ . | 23. Պալունիք . |
| 6. Կուղանավիտ . | 24. Գուկան . |
| 7. Աբերանի . | 25. Աշուանդոտ . |
| 8. Գառնի . | 26. Պատոպարունիք . |
| 9. Բուժունիք . | 27. Արտաշէզեան . |
| 10. Աւնոյոտն . | 28. Արտաւանեան . |
| 11. Անձեւացիք . | 29. Բաքան . |
| 12. Աարպատունիք . | 30. Գաբիթեան . |
| 13. Երիթունիք . | 31. Գազրիկան . |
| 14. Մարդաստան . | 32. Տանկրիայն . |
| 15. Արտաղ կամ Շա- | 33. Վարաժնունիք . |
| 16. Ակէ . [ւարշան . | 34. Գողթն . |
| 17. Աղբակ մեծ . | 35. Նախճուան . |
| 18. Անձախաձոր . | 36. Մարանդ . |

Ռշտունիք : Բզնունեաց (Վանայ) ծովին քովերը կ'իյնայ : Քաղաքներն են Մանակերտ, Ոստան եւ այլն : Հոս է նաեւ Նարեկայ վանքը, Աղթամար կղզին (Բզնունեաց ծովին մէջ) եւ Ընձաքեարս լեռը, նոյն ծովին քովերը :

Տոսք : Բզնունեաց ծովին արեւելեան կողմն է . իր քաղաքներուն մէջ երեւելի է Շամիրամայ քաղաքը որն որ Վան կ'անուանուի : Ունի դեղեր ալ, ինչպէս Արտամատ, Ահեւականից դիւղ եւ այլն : Ա՞ դաւառին մէջն է Վարագ լեռը :

Առբերանի : Գլխաւոր քաղաքն է Բերկրի : Ունի Աւետ փոքր անունով գեղ մ'ալ :

Անձեւացիք : Կանգուար Բ :

Երիթունիք : Հայք Գ :

Արտազ¹ կամ Շաւարշան : Այրարատ լեւան արեւելեան հարաւային կողմերը կ'իյնայ : Գլխաւոր քաղաքն է Շաւարշան : Գեղերն Աւարայր, Ներսէհապատ, Եղինդ :

Աղբակ մեծ : Հաղամակերտ Ա :

Թոռնաւան : Գետս աւան. Նկան Բ :

Ճուշ : Գիւղիկ Գ. Մառական Ա. Շամիրամ Բ :

Գողթն : Երասխ գետին քովն է : Շատ գինի ունի : Աս գաւառին մէջն է Ճուղայ կամ Զուղայ աւանն՝ որն որ հիմա Հին Զուղայ կ'անուանուի :

Նախճուան : Երասխին քովերը կ'իյնայ : Գլխաւոր քաղաքը նոյնպէս Նախճուան կամ Նախիջեւան կը կոչուի :

Թ. Անի : :

Այրարատ գաւառին արեւելեան կողմն է, Երասխ գետին եւ Արցախ նահանգին մէջը : Շատ ամուր տեղեր ունի : Բերքերն են նուռ ու մուրա :

Տասուերկու գաւառ ունի.

- | | |
|----------------|----------------|
| 1. Երընջակ . | 7. Ծղակ . |
| 2. Ճահուկ . | 8. Հաբանդ . |
| 3. Վայոյ ձոր . | 9. Բաղք . |
| 4. Գեղաքունի . | 10. Զորք . |
| 5. Սոսք . | 11. Արեւիք . |
| 6. Աղահէճք . | 12. Կուսական . |

Գեղաքունի : Աս գաւառին մէջն է Գեղամայ ծովն, որն որ Սեւան անունով կղզի մ'ունի, ու Գեղ լեւոր : Գլխաւոր տեղն է Գեղամի՝ զորն որ Գեղամ

¹ Աս գաւառին Արտազ ա- Տես Բ. Գրքին ԺԳ. Գլխոյն նուանուելուն պատմութիւնը մէջ :

նահապետը շինեց: Աս զեղն ետքն իր Գառնուկ կամ Գառնիկ թուանն անունովը Գառնի անուանուեցաւ:

Արընջակ: Համանուն բերդ մ'ունի:

Վայոց ձոր: Հողոյիմ գիւղ:

Բաղք: Բաղաբերդ անունով երեւելի բերդ մ'ունի:

Ժ. Արցախ:

Սինեաց նահանգին արեւելեան կողմն է: Շատ անառներ ունի:

Տասուերկու գաւառ կը բաժնուի:

- | | |
|-----------------|--------------------|
| 1. Միւս Հարանդ. | 7. Մուխանք. |
| 2. Վայկունիք. | 8. Պիանք. |
| 3. Բերդաձոր. | 9. Պանծկանք. |
| 4. Մեծկուանք. | 10. Սիսական ոստան. |
| 5. Մեծիրանք. | 11. Բուստիխանէս. |
| 6. Հարճլանք. | 12. Կողթ. |

Միւս Հաբանդ: Ասոր մէջն է Ամարաս գեղը:

ԺԱ. Փայտախորան:

Արասի գետին քովն է. արեւելքէն սահմանակից է Կասպից ծովին եւ արեւմուտքէն Ուտի նահանգին: Բերքերուն մէջ երեւելի է բամբակն՝ որն որ շատ առատութեամբ կ'ըլլայ. ունի նաեւ տեսակ մ'ինքն իրեն բուսնող զարի:

Տասուերկու գաւառ ունի.

- | | |
|---------------------|---------------------|
| 1. Հրաքոտպերոժ. | 7. Հանի. |
| 2. Վարդանակերտ. | 8. Աթլի. |
| 3. Եօթնփորակեան բա- | 9. Բաղաւան. |
| 4. Ռոտիբաղա. [ղինք. | 10. Սպանդարանպերոժ. |
| 5. Բաղանոս. | 11. Որմղպերոժ. |
| 6. Առոսպիժան. | 12. Ալեւան. |

Աս նահանգին գլխաւոր քաղաքն է Փայտա-կարան:

Արցախ նահանգին ու Կուր գետին մէջն է, Երասխին արեւմտեան կողմը :

Գաւառները եօթն են .

- | | |
|----------------|--------------------|
| 1. Աւանուտ . | 5. Տուչքատակ . |
| 2. Տախ . | 6. Գարդման . |
| 3. Ռոտպոցեան . | 7. Ուտի առանձնակ . |
| 4. Աղուէ . | |

Ուտի առանձնակ : Ասոր մէջն է Պարտաւ Երեւելի քաղաքն ու Խաղխաղ եւ այլն :

Ուտի նահանգին արեւմտեան կողմն է . հարաւէն սահմանակից է Այրարատ նահանգին ու հիւսիսէն Վրաստանին : Բերքերն են սերկելիլ ու սաւսախ :

Ինը գաւառ ունի .

- | | |
|---------------|--------------|
| 1. Չորափոր . | 6. Կանգարք . |
| 2. Ծորափոր . | 7. Արտահան . |
| 3. Կողբափոր . | 8. Զաւաղխք . |
| 4. Տաշիր . | 9. Կլարջք . |
| 5. Թուղք . | |

Չորափոր : Արքունաշէն Գ. Կայեան . Բ .

Տաշիր : Շամշողդէ Բ. Լոռի Բ. Բազունիք Գ .

Օձուն Գ :

Կանգարք : Աս գաւառին մէջն է Լեւոն մթին ըսուած լեռը :

Արեւելեան կողմանէ Գուգարք նահանգին սահմանակից է , հարաւէն Այրարատին ու հիւսիսէն Կողքիսի : Շատ բերդեր եւ ամրոցներ ունի : Բերքերն են թուզ , նուռ , սերկելիլ , նուշ , աղտոր , պողախունկ :

Ինը գաւառ կը բաժնուի .

- | | |
|------------------|---------------|
| 1. Կող . | 6. Ոքաղէ . |
| 2. Բերդացփոր . | 7. Աղբորդ . |
| 3. Պարտիզացփոր . | 8. Կափոր . |
| 4. Ճակք . | 9. Ասեացփոր . |
| 5. Բուխա . | |

Աս նահանգին երեւելի տեղերն են Հաւաճիչ Ք. Մինայառինջ Գ. Արաճեղ Գ. Զենակա Գ. Էրախա-
նի Բ. Որջնհաղ Գ. եւ այլն :

ժԵ. Այրարատ :

Աս նահանգն՝ որն որ մեր [Թագաւորաց սեպհա-
կան երկիրն ու բնակութեան տեղն էր, Հայաստանին
միւս նահանգներէն շրջապատուած է : Արեւելքէն
սահմանակից է Սիւնեաց ու Վասպուրական նահանգ-
ներուն, արեւմուտքէն Բարձր Հայոց, հարաւէն Տու-
րուքերանին ու Վասպուրականին, ու հիւսիսէն Տայոց
եւ Գուգարաց : Գետերն են Երասխ ու Քասաղ .
Գայրտայ ծովակ անունով պզտիկ լիճ մ'ալ ունի :
Գլխաւոր լեռներն են Այրարատ (Մասիս) ուսկից բոլոր
նահանգն իր անունը կ'առնու, Արագած, Նպատ,
Սուկաւէտ եւ այլն : Բերքերուն մէջ երեւելի է Որդան
կարմիր ըսուած ներկն՝ որն որ կարմիր որդ մին է :
Ասկից զատ զանազան անասուններ, [Թռչուններ,
պտուղներ ու հանքեր ունի : Աս նահանգին մէջն
է Կաթողիկոսարանն ալ :

Այրարատ նահանգը քսան գաւառ կը բաժնուի .

- | | |
|-----------------|-----------------|
| 1. Բասեն . | 8. Շիրակ . |
| 2. Գաբեղեանք . | 9. Վանանդ . |
| 3. Աբեղեանք . | 10. Արագածոտն . |
| 4. Վահեւունիք . | 11. Ճակատք . |
| 5. Արշարունիք . | 12. Մասեացոտն . |
| 6. Բազրեւանդ . | 13. Կողովխա . |
| 7. Ծաղկոտն . | 14. Աշոցք . |

- | | |
|-------------|--------------------|
| 15. Նիգ . | 18. Վարաժնուռնիք . |
| 16. Կտայք . | 19. Ոստան . |
| 17. Մազազ . | 20. Գուին . |

Բասեն : Աս գեղերն ունի . Վաղարշաւան , Որգորու , Ոսխայ , Ալվար , Գու , Բողբերդ , Աւկամի , Գոմաձոր եւ այլն :

Արշարունիք : Երասխ գետին քովերն է : Քաղաքներն են Երուանդաշատ , Բաղարան , Երուանդակերտ , Արտագերս Բ . Կապոյտ Բ . Գիւղ շիրմաց . Կաղզուան Գ . Հոս է ծննդոց ըսուած անտառն եւ Երուանդավան կամ Մարաց մարգ դաշան , որուն վրայ տես Պատմութեան մէջ Գիրք Բ . Գլ . Ժ :

Բագրեւանդ : Բասեն եւ Արշարունիք գաւառներուն քովն է : Աս գաւառին մէջն է Նպատ լեռը : Քաղաքներն են Զարեհաւան , Վաղարշակերտ : Գեղերն եւ աւանները՝ Բաղաւան կամ Գիցաւան , Բլուր , ուր որ Ս . Սահակ վախճանեցաւ , Եղեգեակ , Չիրաւ , Բերդկունք , Խու , Արծակ եւ այլն :

Օսաղկոտն : Հոս է Շահապիվան լեռը՝ Հայոց զօրացը բանակին տեղը : Աս լեռան վրայ Վարշակիի ջերմուկք անունով ջերմուկ մը կայ :

Շիրակ : Բարեբեր գաւառ մըն է : Գլխաւոր քաղաքն է Անի : Դենի նաեւ Երազգաւորք , Որմտանի , Արգինայ եւ այլն գեղերը :

Վանանդ : Գլխաւոր քաղաքն է Կարս , ուր տասներորդ դարուն պզտիկ Թագաւորութիւն մը սկսաւ եւ ըսուեցաւ Թագաւորութիւն Կարուց : Միւս քաղաքներն ու գեղերն են Զարիշատ Բ . Իջւանից գիւղ , Ողմու գիւղ , Գրապաշտ Գ . Երեւել դաշտ եւ այլն :

Արագածոտն : Արագած լեռան քովերն ըլլալուն համար այսպէս անուանեցաւ : Իր աւաններն ու գեղերն են Աղաք . Ա . Կուաշ . Ա . Օշական . Գ . Թաւլին Գ . Վժան . Գ . Եղիվարդ Գ . եւ այլն :

Ղակատք : Հոս է Կողբ գեղը :

Մասեաց ռոն: Այրարատ լեռան քովերն է: Իր գեղերուն մէջ անուանի է Ակոռի գեղը:

Կողովիտ: Մասեաց ռոն ու Ծողկոտն գաւառներուն սահմանակից է: Գլխաւոր տեղերն են Գարեն, կամ Գարեննից բերդ, Արծափ Գ. Բագարան եւ այլն: Աս գաւառին մէջ շինուեցաւ Արշակաւանը, որուն պատմութիւնը Տէս Գիրք Բ. Գլ. ԻԱ.

Նիգ: Բջնի. Բ. Փառաժնակերտ. Գ:

Կոտայք: Գլխաւոր քաղաքն է Երիւան: Գեղերն Այլաբերից գիւղ, Ովայից գիւղ, Չազ եւ այլն:

Մազազ: Բերդկունք կամ Գիւղ բերդկաց. Կա- կաղղց գիւղ:

Գուին: Ունի համանուն գլխաւոր քաղաք, ու Մարակերտ քաղաքը: Աս գաւառին մէջն է Շարուրայ գաշան ու Խոսրով Բ.ին տնկած երկու անտառներն՝ որոնք Խոսրովակերտ ու Տաճար մայրի կ'անուանուէին:


Այրարատ գաւառին մէջն էին Վաղարշապատ, Արտաշատ եւ Արմաւիր քաղաքները: Նոյնպէս Ընջեն կամ Արգեանս, Արած, ու Որկովի գեղերը: Գար- ձեալ Անահտայ Երազամոյն կամ Երազացոյց ըսուած մեհեանն Արտաշատ քաղքին մօտ:

Աս համառօտ Աշխարհագրութիւնը գլխաւորաբար Մովսէս Խորենացիին Աշխարհագրութենէն առինք, մանաւանդ նահանգաց ու գաւառաց անուններն, անոնց բա- ժանմունքն ու բերքերն: Ամէն մէկ գաւառին քաղաքներն, ու գեղերն որոնք որ մեր պատմագրաց մէջ յիշուած էին ու տեղերնին ալ որոշուած, նոյն գաւառին մէջ գրինք: Իսկ որոնց որ միայն նահանգը յայտնի էր նոյն նահանգին մէջ գրինք ըսելով՝ Աս նահանգին քաղաքները, Գեղերն, եւ այլն են . . . :

Հոս յիշուած բերքերն, ինչպէս յայտնի է, միայն հին ժամանակաւաններն են, որոնց շատերը հիմա չկան, մշա- կութեան պակասութեան համար: Շատ գաւառներ ալ նոր բերքեր ունին, որոնք ետքէն սկսուած են մշակուիլ, ինչ- պէս ծխախոտը, տեղ տեղ ձիթենին եւ այլն:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Էջ.	ՏՈՂ.		
25.	25.	յանձանք . . .	յանցանք .
64.	11.	Գնթ ունի . . .	Գնսունի .
148.	33.	Վարդան . . .	Վահան .
151.	7.	"	"
163.	2.	Սմբատ . . .	Սահակ .
"	6.	"	"
"	25.	"	"



ԳԻՐԻՔ ԸՌԱՋԻՆ

ՀԱՅԿԸՐԱՆՑ ՏԷՐՈՒԹԻՒՆԸ

ԸՌԱՋԻՆ զբերնիս կը պատմէ Հայոց տէրու-
թեան կանգնուելուն պատմութիւնն ու զանիկա կան-
գնողին եւ իր սերնդոցն ա յաջորդացը գործքերը,
որոնք Հայաստան շինութիւններով զարդարեցին, ա-
նոր սահմաններն ընդարձակեցին, օտար թշնամեաց
դէմ պատերազմներ մղեցին, եւ զանազան կարգերով
երկիրը պայծառացուցին, եւ մինչեւ աս ցեղին բո-
լորովին տէրութենէ զրկուիլը կը հասցընէ: Անկէ ետեւ
նաեւ մինչեւ Երկրորդ Հարստութեան (Արշակունեաց)
սկիզբը՝ Հայաստան կառավարող կուսակալաց գործ-
քերը կարգաւ կը դնէ:

Աս պատմութեան առաջին ու զլիսաւոր Աշէ-րը
Մովսէս Խորենացիին Հայոց Պատմութիւնն է, զորն
որ Սահակ Բագրատունի իշխանին խնդրելովը գրեց,
իրեն զլիսաւոր առաջնորդ առնելով Մար Աբաս Կա-
տինային Գիրքը: Մար Աբաս Վաղարշակին՝ Հայոց
առաջին արշակունի թագաւորին հրամանաւը Նինուէի
թագաւորական դիւանէն Հայոց առաջին Հարստու-
թեան պատմութիւնն հանած Հայաստան բերած էր
եւ թագաւորական դանձատան մէջ կը պահուէր:
Աս պատմութեան ստուգութիւնը ցուցնելն աւելորդ
կը համարինք. արդէն իր գրուելուն եզանակն ու

պարագաներն իրեն հաւատարիմ վիպ եւ հաստատուն ապացոյց կրնան ըլլալ: Խորենացիէն ետեւ կու գան Դիողորոս Արկիւրացին ու Պապիրիոս, որոնք գլխաւորաբար Հայաստանին կուսակալաց պատմութիւնը մեզի կ'աւանդեն. քսենոփոն՝ որն որ Փոքր Աիւրոսին ատենը Յունաց զօրքով Պարսկաստան գնաց, եւ ի դարձին Հայաստանէն անցնելով՝ Հայոց ընտանեկան զեանքը տեսաւ ու զանիկա իր Աիւրոսի արշաւանք ըսուած գրքին մէջ կը նկարագրէ: Գարձեայ Աիւրոսի խրատ ըսուած գրքին մէջ Տիգրան Աին եւ անոր հօրն Էրեւանդ Աին պատմութիւնը կը գնէ, թէպէտ եւ Խորենացոյցն պատմութենէն բոլորովին տարբեր, ինչպէս պիտ'որ տեսնենք: Աս պատմագիրներէն զատ՝ ուրիշ շատ պատմագիրներ, ինչպէս Հերոդոտոս, Յովսէպոս, Յուստինոս եւ այլն, տեղ տեղ մեզի օգնական եղան:

Գ Լ ՈՒ Խ Ա

Հ Ա Յ Կ

Ա. Հայկ Բարեւունէն Հայաստան կը դառնայ եւ հոն Հայոց տերութիւնը կը հիմնէ (2350 քրիստոսէն յառաջ): Բ. Բէլ Հայկին պատգամ կը խաւրէ որ գայ իրեն հնազանդի, Հայկ կը մերժէ ու Բէլին հետ պատերազմելով՝ զանիկա կը սպաննէ: Գ. Պատերազմէն ետեւ Հայկին ըրած գործքերը մինչեւ իր մահը:

Ա. ԿՈՅ նահապետին սերունդն Ասորեստանի կողմերը գաղթած ատեննին՝ իրենց անուան յիշատակը մշտնջենաւոր թող տալու համար ամբարտաւան խորհուրդ մը խորհեցան, ծայրը մինչեւ ամպերն հասնող աշտարակ մը շինել, որով կը յուսային որ նաեւ երկրորդ ջրհեղեղէ մ'ալ կրնան ազատիլ: Երբ որ աս խորհուրդն՝ իրենց բաւական բարձրացած աշտարակը կործանելով ու լեզունին խառնակելով գլուխ չէլաւ, անոնց գլխաւորներուն միտքն երկրորդ ամբարտաւա-

նահան խորհուրդ մ'ինկաւ՝ այսինքն ամենն իրենց ձեռքին տակը նուաճելով՝ բոլորին վրայ բացարձակ եւ առանձին տէր բլլալ : Անմիջապէս աշտարակին դաշտը պատերազմի դաշտի փոխուեցաւ , գործավարները մէյմէկ զինուոր եղան , եւ բաճի ու բրչի տեղ նեւ ու նիղակ առնելով՝ զանազան կողմնակցութիւններ բաժնուած՝ իրարու հետ ստոսիկ պատերազմ մը սկսան ընել : Աս գլխաւորներուն մէջէն Ներբովզ կամ Բէլ անունով քաջ ու հզօր իշխանը , (Նոյ նահապետին Քամ որդւոյն թոռան որդին) ամենէն աւելի զօրացաւ , շատերուն յաղթեց եւ ինքը զինքը թագաւոր հրատարակելով՝ բոլոր նոյն գաղթականութիւնն իրեն հնազանդեցուց : Բայց ասոնցմէ Հայկ արի ու հաստարագուկ իշխանը , (Նոյին Յաբէթ որդւոյն թոռան որդին) որն որ իր սակաւաթիւ կողմնակիցներովը միապետել ուղղներուն գէմ երկայն տանն պատերազմ մղած էր , երբ որ Բէլին զինուց յաջողութիւնը տեսաւ , արդէն յառաջագոյն անոր բռնաւորութեանը տեղեակ բլլալով՝ չուզեց անոր հնազանդիլ , այլ իր որդիքն ու թոռունքն եւ անոնց բնտանիքը՝ 300 հոգւոյ չափ , նաեւ իրեն հետ միաբանած մարդիկը ժողովեց գէպի հիւսիսային կողմերը դնաց , եւ լերան մը մօտ դաշտի մէջ բնակեցաւ , ուր յառաջուրնէ մնացած մարդիկ կային : Հայկ աս մարդիկներն իրեն հնազանդեցընելով՝ հոն գեղ մը շինեց եւ իր պաղմաս թոռանը՝ Արմենակին որդւոյն յանձնեց , զանիկա նոյն տեղերուն կողմնապահ դնելով . իսկ ինքը գէպի հիւսիսային արեւմտեան կողմերը յառաջ դնաց ու լեւենագաշտի մը վրայ բնակութիւնն հաստատեց , որուն անունը Հարք գրաւ . գեղ մ'ալ շինեց եւ իր անուամբը Հայկաշէն անուանեց : Հոս ալ յառաջուրնէ մնացած քիչոր մարդիկ գտաւ , որոնք ինքնակամ իրեն հնազանդեցան :

Բ. Բէլ աս ժամանակս իր թագաւորութիւնը Բաբելոնի մէջ հաստատելով՝ իր որդիներէն մէկը

քանի մը մտադով Հայկին խաւրեց որ դայ իսկն հնա-
 գանդի ու խաղաղութեամբ ազգի. «Յուրա ու սասած
 երկիրներ գայեր բնակեր և, ըսաւ, և կու ըսու յուրա
 հպարտութիւնդ մեկդ թող աւար և երկիրներուս
 մէջ ուզած կողմի բնակե», : Հայկ առ պատգամաւոր-
 ներուն իստա պատասխան մը տալով ևս դարձուց :
 Ասոր վրայ Բէլ սաստիկ բարկանալով հրաման տուաւ
 որ զօրքը ժողովուի, և շատ մը Հայկին վրայ քաղց :
 Երբ որ Աղաճնոսն երկիրը մօտեցաւ, անիկա իր մտ-
 դիկները ժողովեց և ճամբայ ելաւ Հայկին քովն եր-
 թալաւ. բայց իրմէ շատաջանոր այսպիսի պատգամով
 սուրհանդակ մը խաւրեց. «Գիտցած ըլլաա ո՞վ մեծդ
 դիւցազանց, որ Բէլ անհամար արի հսկաներով ու
 քաջ պատերազմաց զօրքով վրտդ կու գայ. ևս անոր
 իմ երկիրներս մօտենալն իմացածիս պէս, ամէն բանս
 ժողովեցի ու ըսու քովդ կու գամ, ուստի ինչ որ
 պիտ'որ ընես շատով մտածե», : Հայկ առ լուրն առա-
 ծին պէս առանց շփոթելու իր քիչսոր զօրքը ժողովեց
 և թշնամեցն դէմ սկսաւ երթալ, ու լճի մը (Բղնա-
 նեաց կամ Աւանայ ծովին) քով հասնելով զօրքը կար-
 գի գրաւ և քիչ մը հանգիստ տալէն ետեւ անոնց առ
 կարճ բայց քաջալերիչ խօսքը խօսեցաւ. «Թշնամեցն
 զօրքին հետ զարնուելու սկսելուս պէս, ըսաւ, ջա-
 նանք որ անոնց բռնաւոր իշխանին կեցած կողմը
 սաստիկ զօրութեամբ բախենք, և՛ կամ քաջութեամբ
 մեռնինք և միայն մեր ինչքն ու ստացուածքն անոր
 թողունք, և կամ զանիկա զարնենք սպաննենք,
 զօրքը ցրուենք և յաղթութեան փառքն ստանանք», :
 Ետքը բանակը յառաջ շարժեց, և բարձր լեռանց
 մէջ շիտակ դաշտի մը վրայ յարմար դիրք մը բռնած՝
 պատրաստ կեցաւ : Հոն Հայերն աշուրնին վերցուցին
 տեսան որ Բէլ գլուխն ամուր երկաթէ սաղաւարտ,
 կարծքն ու կոնակը կարծր պղնձէ տախտակներ,
 թեւերն ու ոտուրներն անդձեռի գրահով պատած,
 մէջ ձեռքն ահագին վահան մը բռնած, միւս ձեռ-

քը խոշոր նիզակ մը, իր բանակին առջեւն անցեր լեռնէն վար կ'իջնայ: Հայկ անմիջապէս իր կարգադրութիւններն բրաւ զօրքն երեքանկիւնի ձեւով իր երկու կողմը շարեց. աջ կողմն իր Արմենակ, խառ ու Մանաւազ սրգիքը կեցուց, իսկ Ազգմանն եւ իր սրգիքներուն քաջերէն երկու հոգի ալ ձախ կողմը դրաւ, որոնք ճարտար սուր շարժող ու կորովի ազեղնուոր էին: Բարեբոնի թագաւորը միտքը հաստատուն դրած էր որ Հայկ իրեն դէմ գնելու չկրնար յանդերձնիլ, այլ իր ահագին բանակը տեսածին պէս անմիջապէս պիտ'որ հնազանդի. ասոր համար իր զօրքը լերան վրայ թողուց եւ ինքն անանց քաջերէն գունդ մը զատած՝ հեռն առաւ ու դէպ ի Հայոց գունդը սկսաւ յառաջ գալ: Բայց Հայոց քաջ առաջնորդն՝ որուն խորհուրդը Բէլին խորհրդէն շատ տարբեր էր, շուտ մ'իւր զօրքին պատերազմն սկսելու նշան առաւ, որոնք սասաիկ զօրութեամբ թշնամուցն վրայ յարձակելով՝ իրենց պնդակազմ բազուկներովը շատ հսկաներ զարկին գետինը ձգեցին: Բէլ աս անակնկալ զիպուածին վրայ այլայլած ու շփոթած՝ թէպէտ եւ քիչ մը ժամանակ Հայոց դէմ դրաւ, բայց ականելով որ վտանգն երթալով կը մեծնայ, սկսաւ ետ քաշուիլ եւ իջած լերան վրայ ելել, որպէս զի բարբ բանակն առնու եւ երկրորդ անգամ Հայկական գնդին հետ զարնուի: Հայկ անոր միտքն իմանալով յառաջ վազեց, անոր մօտ հասաւ, լարեց իր լայնալիճ ազեղը եւ այնպիսի ուժգնութեամբ մը նետեց՝ որ նետը թռաւ գնաց Բէլին կուրծքի պղնձէ տախտակը ծակեց ու կռնկէն դուրս ելաւ: Հոն Բէլ մեռած շնչասպառ գետինը փռուեցաւ. իսկ իր զօրքն իրենց առաջնորդն այսպիսի եղանակաւ կորսնցրնելով՝ ցիւր ու ցանն եղած փախան, եւ պատերազմին դաշար հարուստ աւարով Հայոց թող առին:

Բէլին մեր իշխաններէն սպաննուելուն նաեւ Արիւղենոս պատմագիրն ալ կը վկայէ, միայն մեռցընողին անունը Հայկ

գնելու տեղ Արմենակ գնելով: «Արայ Գեղեցիկ, կ'ըսէ, Արամայ որդին (էր), Արամ Հարմային, Հարմայ Գեղամին, Գեղամ Ամասիային, Ամասիա Արմայիսին, Արմայիս Արմենակին՝ որն որ Բէլին հակառակ եղաւ եւ զանիկա սպաննեց»:

Գ. Հայկ սա պատերազմը յաղթութեամբ գրախ տանելէն ետեւ, ճակատին տեղը քաղաք մը շինեց եւ անունը Հայք դրաւ, ուսկից բոլոր նոյն գաւառին անունն ալ Հայոց ձոր անուանեցաւ. իսկ Բէլին մեռած տեղը Գերեզմանք անուանեց, եւ հրաման տուաւ որ անոր մարմինը զմռսեն ու Հարք գաւառը տանին բարձր տեղ մը թաղեն, որպէս զի սա երեւելի յաղթութեան անմահ յիշատակարանն ըլլայ: Անկէ ետեւ նորէն Հարք գաւառը դարձաւ, ու Կաղմասին պատերազմին աւարներէն շատ բան ու շատ մ'ալ իր ծառաններէն տալով՝ իր երկիրը խաւրեց: Այսպէս մեր ազգին տէրութիւնը հաստատելով ու կարգաւորելով՝ շատ տարիներ կառավարելէն ետքը մեռաւ, ու բոլոր ազգն իր Արմենակ որդւոյն յանձնեց:

Աս Հայկին անունովը մեր ազգը Հայ ու մեր երկիրը Հայաստան անուանեցաւ:

ԳՒՂՈՒԻՐ

ԱՐՄԵՆԱԿԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՐՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Դ. Արմենակ Արագած լեռան քովերը շինութիւններ կ'ընէ ու հոն կը վախճանի (2000 քր. Յառ.): Ե. Արմայիս Արմաւիր քաղաքը կը շինէ. իր Շարա որդին Շիրակ գաւառը կը խրկէ: Զ. Ամասիա հօրը կը յաջորդէ, Փառախոտ ու Տոլակերտ քաղաքները կը շինէ: Է. Գեղամ Գեղաբունի գաւառը շինուածներով կը զարդարէ ու Գեղամի քաղաքը կը շինէ: Ը. Հարմայ (1350 քր. Յառ.):

Դ. ԱՐՄԵՆԱԿԷՆ մինչեւ Հարմայ հինգ իշխան իրարու յաջորդեցին, որոնք զանազան շէնքերով Հայաստանը շէնցընելու ջանացին:

Արմենակ իր խոս ու Մանուակ եղբայրներն ու Մանուակին Բաղ¹ որդին Հարք գաւառը թող տալով՝ բոլոր իր մարդիկներովը դէպ ի արեւելեան Տիւսիսային կողմերը գնաց, ու լեռներով պատած դաշտի մը մէջ շատ շէնքեր շինեց, եւ ան լերանց ամենէն մեծին անունն իր անուամբն Արագած անուանեց, իսկ իր շինած շինուածներուն անունն Ոսն Արագածու : Հոն շատ տարի ազգը կառավարելէն ետքը մեռաւ, եւ իրեն յաջորդեց իր Արմայիս որդին :

Ե. Արմայիս նոյն տեղերը բնակելով մեծ գետի մը քով քաղաք մը շինեց եւ իր անուամբն Արմաւիր անուանեց. նոյն գետին անունն ալ իր Արաստ թռուանն անունովը Երասխ դրաւ : Իսկ իր Շարայ որդին՝ որն որ շատ որդիներ ուներ ու շատակեր ալ մէկն էր, ան տեղերուն մօտ բերրի դաշտ մը խտրեց. ասոր անուամբն ան գաւառը Շիրակ անուանեցաւ : Արմայիս ասկէ ետքը շատ տարիներ ալ ազգը խնամեց ու մեռաւ իրեն յաջորդ թողլով իր Ամասիա որդին :

Շարային շատակերութիւնը Հայոց մէջ առակ եղած էր ու միշտ կը յիշուէր : Խորենացին (Գիրք Ա. Գլ. 12) կ'ըսէ թէ իր ժամանակը գեղացիք շատակերներուն կ'ըսեն եղեր, «Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն» :

Զ. Ամասիա երեք որդի ունեցաւ, Գեղամ, Յուլակ, Փառոխ. ասոնք երբ որ չափահաս եղան, իր հեան առած հարաւային կողմերը գնաց, ու բարձր լերան մը մօտ իրարմէ մէկ օրուան ճամբայ հեռու երկու քաղաք շինեց եւ մէկը Փառոխին միւսը Յուլակին տուաւ : Ասոնք հոն բնակելով իրենց անուամբը մէկը Փառախոտ ու միւսը Յուլակերտ անուանեցին : Ան բարձր լերան անունն ալ Ամասիա իր անուամբը Մասիս անուանեց : Ետքն Արմաւիր դառնալով քիչ ատենէն մեռաւ :

¹ Ասոնցմէ ելան Խոռխոռ Բզնունեաց եւ Որդունեաց ուռնեաց, Մանուակեանց, Նախարարութիւնները :

Է · Ասոր յաջորդեց իր Գեղամ որդին՝ որն որ իր Հարմայ որդին Արմաւրին մեջ թող տալով, գեղ ի արեւելեան հիւսիսային կողմերը ընի մը քով գնաց, ու նոյն անգիրը շէնքեր շինելով ու բնակիչներ դնելով իր անուամբը Գեղարունի անուանեց, նոյնպէս լինճն ալ Ծով Գեղամայ. հոն եղող լեբան անունն ալ Գեղ գրաւ: Հասեղս ծնաւ իր Սիսակ որդին՝ որն որ յազմանգամ ու քաջ մարդ մ'եղաւ: Ասոր իր ինչքերէն շատ բան ու շատ ալ ծառաներ տալով՝ բնակելու անդ որոշեց Գեղամայ ծովէն մինչեւ Արասի գետին հոսանքը: Ան անգիրը Սիսակ շատ շինութիւններ բնակչով՝ իր անուամբը Սիւնիք անուանեց որն որ նաեւ Սիսական բտուցաւ. ասկից սկսաւ Սիւնեաց մեծ Նախարարութիւնը: Գեղամ ասկէ ետքը Գեղաքունեաց կողմերը դառնալով՝ Գեղ լեբան քով ամուր անդ մը քաղաք մը շինեց եւ անունը Գեղամի գրաւ: Ասոր վրայ շատ տարիներ ապրելէն ետքը մեռաւ եւ իր Հարմայ որդւոյն պատուիրեց որ Արմաւիր բնակի:

Ը · Հարմայ իր հօրը յաջորդելով՝ շատ տարիներ ազգը կառավարելէն ետքը, ակրութիւնն իր Արամ որդւոյն յանձնեց ու մեռաւ:

Գ Լ ՈՒ Ի Գ

Ա Ր Ա Մ

Թ. Արամ Տորը կը յաջորդէ (1300 Գր. Յառ.), Մարաց Նիւքար իշխանին զէմ պատերազմի կ'ելլէ եւ զանիկա կը սպաննէ: Ժ. Արամին Նիւտսին հետ թշնամանալը: ԺԱ. Ասորոց Բարշամ իշխանը Հայաստան կը մտնէ, Արամ անոր հետ կը զարնուի ու կը յաղթէ, զինքն ալ կը մեռցընէ: ԺԲ. Արամին Հայաստանին արեւմտեան կողմերը Պայտազիս իշխանին վրայ ըրած յաղթութիւնը, տիրած երկիրներն եւ իր մահը:

Թ. ԱՐԱՄ մեր քաջ եւ անուանի Ազգապետներէն մէկն եղաւ, մինչեւ իր քաջութիւններուն համար օտար ազգերը մեր ազգն անոր անուամբն Արամեան¹ կ'անուանեն ու մեր երկիրն Արամաստան²:

Իր հայրենեացը սաստիկ սէր ունենալով՝ աւելի կ'ուզէր մեռնիլ, քան թէ անսնել որ օտար մարդիկ իր ազգին եւ արենակիցներուն տիրեր են: Եւ որովհետեւ իր չորս կողմի ազգերը Հայաստան կը նեղէին, յիսուն հազարի չափ քաջ զօրք ժողովեց եւ անոնց վրայ քալեց: Ամենէն յառաջ Նիւքար Մագէս անու-

1 Յոյնք մեր ազգը կ'անուանեն Ἀρμένιος, Արմենիոս, ու Լատիններն՝ Armenus, Արմենիոս:

2 Ուրիշ ազգաց հին պատմագիրները Հայաստանին Արմենիոս կոչուելուն զանազան պատճառներ կու տան: Ասոնց մէջէն Ստրաբոն կ'ըսէ թէ Արմենիոս անունն Արմենիոս անուամբ մէկէ մը ելած է, որն որ Յաստինի կողքիս երթալու ատենն իրեն ընկեր էր: Աս բանս Յուստինոս Լատին պատմագիրն ալ կը հաստատէ ասանկ ըսելով. «Պետք չէ լուր թեամբ անցնիլ անանկ մեծ թագաւորութիւն մը (Հայոց թագաւորութիւնը) որուն մե-

ծութիւնը Պարթեւաց երկրէն զատ ամէն թագաւորութիւններէն աւելի է:... Աս թագաւորութիւնն Արմենիոսէն Յաստին թեոսղացիին ընկերներուն մէկէն հաստատուեցաւ»: Ասկէ ետքը կ'ըսէ. «Արմենիոս թեոսղացին Յաստինի զօրապետներէն մէկն, ան ամէն մարդիկներն՝ որոնք զՅաստին կորսընցընելով՝ անդին անդին ցրուած կը պարտէին, ժողովեց եւ անոնցմով Արմենիան հիմնեց: Պատմ. Փիլիպ. Գիրք ԽԲ. ԳԼ. 2. 3: Ասոնցմէ զատ ուրիշ պատմագիրներ զանազան պատճառներ յառաջ կը բերեն, զորոնք հոս գննելն աւելորդ կը համարենք:

նով Մարայ իշխանին հետ զարնուեցաւ, որն որ Հայաստանին մէկ մասին վրայ յարձակելով՝ երկու տարի շափ իրեն հարկատու ըրած էր: Արամ իր զօրքովը զեռ շուսցած յանկարծ անոր վրայ յարձակեցաւ, բոլոր զօրքը ջարդեց, զինքն ալ բռնեց Արամաւր բերաւ. ու հրամայեց որ ճակատէն երկաթէ գամով մը պարսպին աշտարակին ծայրը գամեն, որպէս զի ամէն անցնողներն ու հոն եկողները տեսնեն: Անոր երկիրներուն մէկ մասին ալ տիրեց ու Սիւնեաց ցեղին յանձնեց:

Ժ. Աս տաւններու՝ Նինոս Բարեւալացոյ թագաւոր եղաւ, ու պատճառով իւրեն երէն իմանալով որ զԲէլ իր նախահայրը մեռցրնողը Հայկն էր, յարմար առիթ մը կը փնտռէր բոլոր Հայկայ ազգն ու որդիքը ջնջելու: Բայց որպէս զի չկարծուի որ Հայերէն վախնալուն համար աս բանս ըրաւ, աս խորհրդէն ետ կեցաւ, եւ Արամն իր երկրորդն անուանեց: Այսպէս կ'աւանդէ մեզի Մար Աբաս Նինոսին Արամին հետ թշնամանալուն պատճառն՝ եւ անոնց հաշտուելուն պատմութիւնը: Իսկ Գիողորոս Սիկիլացին (Գիւրք Բ. Գլ. 1.) նոյն պատմութիւնը քիչ մը տարբեր կը դնէ: Նինոս, կ'ըսէ, աշխարհակալութեան բազմացող ու պատերազմասէր թագաւոր մ'ըլլալով, շատ երկիրներու տիրելէն ետքն, ահագին զօրութեամբ Հայաստան մտեցաւ, քանի մը քաղաք առաւ ու քանդեց, որով ուրիշ քաղաքներուն վրայ մեծ ահ ձգեց: Բարզանէս¹ Հայոց թագաւորը զիմնալով որ Ասորեստանեայց զօրութեանը դէմ դնելու չափ զօրութիւն չունի, ընծաներով Նինոսին առջեւն ելաւ, եւ ինքը զինքն անոր ամէն հրամանները կատարելու պատրաստ ընծայեց: Ասոր վրայ Նինոս Հայաստանէն դուրս ելաւ, պայման դնելով որ Հայոց թագաւորը միշտ իրեն հետ

1 Գիողորոս Արամն այսպէս կ'անուանէ Յունաց պատմագիրներուն սովորութեանը

համաձայն, որոնք շատ անգամ ասիական անուանները կը փոխեն ու տարբեր կը գրեն:

բարեկամ ըլլայ եւ զօրքով ու պաշարով իր ար-
շաւանքներուն օգնէ :

ԺԱ. Արամ Մարաց իշխանը մեռցրնելէն ետքն ,
իր զէնքն Ասորուոց Բարշամ¹ իշխանին վրայ դար-
ձուց , որն որ Հայաստանին մէկ մասը նուաճած էր
ու շատ հարկ առնելով կը նեղէր ու կ'արշաբէրէր :
Չարկաւ կոտորեց անոր զօրքն ու մնացածն Ասորես-
տան փախուց . իսկ Բարշամն Արամին զինակիրները
մեռցուցին : Ասոր երկրին մէկ մասն Արամ իր տակն
առնելով՝ կազմուսին ցեղին յանձնեց :

ԺԲ. Երբ որ Հայաստանին արեւելեան ու հա-
րաւային կողմերը խաղաղացան , Արամ իր զօրքովը
դէպ ի արեւմտեան կողմը գնաց : Հոն Պայապիս քա-
ղեայ անուէնով մէկն իրեն դէմ պատերազմի ելաւ՝
որն որ Սեւ ծովէն մինչեւ Միջերկրական ծով բռնած
էր : Արամ զարկաւ յաղթեց , ու զինքն ալ մինչեւ
Միջերկրական ծովուն կղզիներուն մէկը փախուց , եւ
անոր երկիրներուն մէկ մասը նուաճելով՝ բնակչացը
վրայ պարտք դրաւ որ Հայերէն սորվին ու խօսին , եւ
իր ցեղէն Մշակ անուէնով մէկը նոյն տեղերուն կուսա-
կալ դրաւ . իր զօրքէն ալ տասը հազար անոր տուաւ
ու Հայաստան դարձաւ : Աս Մշակ կուսակալը նոյն
տեղը քաղաք մը շինեց եւ իր անուամբը Մշակ անուա-
նեց . բայց Յոյները չկրնալով արտաբերել՝ Մաժաք
կ'ըսէին , որն որ ետքը կեսարիա անուանեցաւ : Աս
տեղին անունը Յոյներն Առաջին Հայք դրին . ետքն
Արամ նոյն կողմերը շատ անբնակ տեղեր բնակիչներ
դրաւ , որոնք Երկրորդ , Երրորդ ու Չորրորդ Հայք
անուանեցան :

Աս ամէն գործքերն ու քաջութիւններն ընելէն
ետքը շատ տարիներ ալ ապրելով՝ մեռաւ , եւ իրեն
տեղն անցաւ իր որդին Արայ Գեղեցիկ :

¹ Աս Բարշամն Ասորիներն պաշտեցին : Ասոր անուէնովն
իր քաջութեանցը համար աս- Ասորուոց երկիրը Բարշամ
նուաճներուն կարգը դրին ու ալ անուանեցաւ :

ԺԳ. Համիրամ Ասորեստանի թագուհին Արային զեմ պատերազմի կ'ելէ. Արայ կը յազթուի ու պատերազմին մէջ կը մեռնի: ԺԿ. Հայերն Արային մահուան վրէժն առնելու համար նորէն պատերազմի կը պատրաստուին, Համիրամ զոնոր կը հանդարակեցնէ: ԺԵ. Համիրամ Հայաստանի մէջ բաղաբ կը շինէ:

ԺԿ. ԱՐԱՅ Նինոսին մեռնելէն քանի մը տարի յառաջ իր հօրը յաշորդելով, սկսաւ խաղաղութեամբ Հայաստանը կառավարել: Բայց երբ որ Համիրամ Ասորեստանի գահն երաւ, Արային զեղեցկութիւնը լսելով, անոր շատ բնծաներով մարդ խաւրեց՝ որ գայ իրեն հետ ամուսնանայ ու Նինոսին երկիրներուն վրայ ալ թագաւոր բլլայ: Արայ աս բանս յանձն չառաւ: Համիրամ շատ անգամ նորէն մարդ խաւրեց որ զանիկայ համոզէ իր ուզածը կատարելու, բայց անկարելի եղաւ: Ատոր վրայ սասաիկ բարկանալով՝ ժողովեց բոլոր զօրքն ու Հայաստան Արային վրայ եկաւ, բայց չէ թէ զանիկայ մեռցնելու կամ անոր մեաս հասցընելու համար, այլ որպէս զի վախցընէ եւ իր ուզածը կատարել աայ: Եկաւ հասաւ Այրարատ լեռան քովը գաշտ մը, ուր Արայ իր զօրքովն անոր զեմ պատերազմի ելաւ: Համիրամ իր զօրապետներուն պատուիրած էր որ Արային մեաս հասցընելէն զգուշանան. բայց առաքինի իշխանն իր առաքինութեանն եւ միանգամայն իր երկրին վրայ եղած անիրաւ յարձակման համար արգար բարկութեամբ բորբոքած, իր բանակին գլուխն անցաւ եւ սասաիկ զօրութեամբ թշնամոյն հետ զարնուեցաւ, եւ անոնց սրին պատահելով՝ դիւցազնական մահուամբ մեռաւ, իր քաջութեանն ու մեծանձնութեանը յիշատակն անմահ թողլով: Մարդ խրկեց Համիրամ որ

երթման Արային զին մեռածներուն մէջ փնտռեն, եւ զանիկա պալատին մէկ կողմը զնել տուա :

ԺԳ. Հայերն իրենց իշխանին մահուանը վրէժն տանելու համար նորէն ժողվուեցան, ու Շամիրամոյ գլխ պատերազմի ելան : Բայց անիկայ զանոնք խաղաղօրնելու համար բաւ թէ իմ աստուածներս Արային վերբերր պիտ'որ լլեն որ կենդանացրնեն . կը յուսար ալ որ կրնայ կախարդութեամբ ողջնցրնել . բայց երբ որ մարմինը հասեցաւ, հրամայեց որ փոսի մը մէջ նետեն ու վրան ծածկեն, եւ իր սիրելիներէն մէկն Արային տեղը դներով, ձայն հանեց որ աստուածները զանիկայ լլեցին ու կենդանացուցին : Հայերն առ բանս լսելով՝ պատերազմէն ետ կեցան :

ԺԵ. Ասկէ ետքը Շամիրամ Հայաստանին հարաւային կողմերը դնաց, ու Աննայ ծովուն արեւելեան զին գեղեցիկ քաղաք մը շինեց, մեծ մեծ քարաշէն պալատներով, ընդարձակ ճամբաներով ու պարտէզներով . մէջն ալ շատ մարդ բնակեցուց եւ իրեն ամառուան տեղ բրաւ . քաղքին քովն ալ կարծր ժայռէ բլրի մը վրայ բերդ մը եւ ժայռերուն մէջ փորուած սենեակներ շինեց : Նոյն քարերուն վրայ զանազան յիշատակարաններ փորել տուա ¹, նոյնպէս Հայաստանին շատ տեղերն արձաններ կանգնեց ու վրան յիշատակարաններ գրել տուա : Աս ժամանակէն ետեւ մինչեւ Պարոյրին թագաւորելը Հայաստան Ասորեստանեայց նահանգներէն մէկն եղաւ, եւ անոր իշխաններն իբրեւ կուսակալ Ասորեստանի թագաւորաց հնազանդութեան տակ երկրին կ'իշխէին :

¹ Աս սեպածեւ գրերով մինչեւ հիմա Անին բերդին գրուած յիշատակարանները վրայ անարատ մնացած են :

Գ Լ Ո Ւ Խ Ե

Կ Ա Ր Դ Ո Ս Է Ն Մ Ի Ն Չ Ե Ի Ս Կ Ա Յ Ո Ր Դ Ի Ո Յ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

ԺԶ. Կարդոս կամ Արայեան Արայ Շամիրամէն Հայաստանի իշխան կը դրուի: Պատերազմի մէջ կը մեռնի: ԺԷ. Ընուշաւան Կարդոսին կը յաջորդէ: ԺԸ. Անուշաւանին յաջորդները: Քանանացւոց իշխան մը Հայաստան կու գայ: Զարմայր Տրովադայի պատերազմը կ'երթայ (1200): Ատրեստանի Սենքերիմ թագաւորին որդիքը Հայաստան կը փախչին:

ԺԹ. Շ Ա Մ Ի Ր Ա Մ իր Արային վրայ ունեցած սիրոյն համար անոր Կարդոս որդին Հայաստանի իշխան դրաւ, անուէն ալ փոխեց ու հօրն անուամբն Արայ անուանեց: Աս Կարդոսը պատերազմի մէջ մեռաւ: Վասն զի Զրադաշտ մագ Մարաց իշխանն՝ որուն Շամիրամ ամառները Հայաստան եկած ատեն Ատրեստանն ու Նինուէն կը յանձնէր, բանէ մը բարկանալով՝ իր թագուհւոյն դէմ պատերազմի ելաւ. Կարդոս Շամիրամին օգնութեան գնաց ու պատերազմին մէջ զարնուեցաւ ինկաւ:

ԺԽ. Կարդոսին մեռնելէն ետքն, իր որդին Անուշաւան՝ որն որ շատ իմաստուն ու ճարպիկ տղայ մըն էր, շատ ժամանակ Նինուասայ քով իբրեւ գերի անարգութեամբ մնաց. ետքը բարեկամներուն օգնութեամբը Հայաստանին մէկ մասին վերակացու դրուեցաւ: Քիչ մը ժամանակ ասանկ մնալէն ետեւ բոլոր իր հայրենեացն երկիրներուն իշխանութիւնն առաւ:

Անուշաւանը Սոս ալ կ'անուանուէր, որովհետեւ Արմենակայ Արմաւիրին քովերը տնկած Սոսիներուն ն լիրուած էր: Հայերը շատ ժամանակ աս սոսիները սուրբ բան մը կը համարէին, եւ անոնց տերեւներուն շարժումէն հմայութիւններ կ'ընէին:

ԺԼ. Անուշաւանէն ետեւ շատ իշխաններ իրարու յաջորդեցին. բայց միայն անոնցմէ մէկ քանիին գործքերուն վրայ քիչ մը ծանօթութիւն ունինք:

Պարէա .

Ըրբակ .

Օլաւան .

Փառնաս . Ասոր ժամանակները քանանացիք Յե-
սուէն յաղթուելով՝ ասդին անդին ցրուեցան , որոնց
մէջէն քանանիդէս անունով մեծ իշխան մ'ալ Հայ-
աստան եկաւ , որուն ցեղէն յառաջ եկաւ Գնթունեաց
'Նախարարութիւնը :

Սուր .

Հաւանակ .

Վաշտակ .

Հայկակ . Բաբելացւոց Բեղղքոս Բ . թագաւորին
ատենն էր , ու խոովութեան մը մէջ մեռաւ :

Ըմպակ .

Ընակ .

Շաւարշ .

'Նորայր .

Վստասկար . (կամ Վստաս . կար .)

Գոռակ .

Հրանտ .

Ընձաք .

Գղակ .

Հաւրոյ .

Օլարմայր . Ասիկա Տրովպայի պատերազմին ա-
տենն էր : Ասորեստանեայց Տելտամնոս թագաւորէն
Եթովպացի զօրաց հետ Տրովպայի Պրիամնոս թագաւո-
րին օգնութեան խրկուեցաւ , եւ հոն պատերազմի
մէջ 'նկաւ :

Պերճ .

Ըրբուն .

Հոյ .

Յուսակ .

Կայպակ .

Սկայորգի . Ասոր ատենն Ասորեստանեայց Սենե-
քերիմ թագաւորին որդիքն Ազրամել (Արգամոզան)

ու Սանասար Հայրերնին մեղացին ու Հայաստան
փախան, զորոնք Սիւլայրդին շատ պատուով ընդու-
նեցու եւ իրենց բնակութեան տեղ տուաւ: Ասնց-
մէ ելան Արծրունեաց ու Գնունեաց Կախարարու-
թիւնները:

Գ Լ Ո Ւ Խ Թ

Պ Ա Ր Ո Յ Ր, Մ Ի Ն Չ Ե Ի Տ Ի Գ Ր Ա Ն Ա.

ԺԹ. Պարոյրին թագաւորելը (620 — 600): Ի. Հրաչեայ
Հրէից Շամբաթ իշխանը Հայաստան կը բերէ (600 — 590),
Իր յաջորդները:


ԺԹ. ՀԱՅԱՍՏԱՆ Արային մեանելէն ետքն իր ան-
կախութիւնը կորսնցընելով՝ Ասորեստանեաց տէրու-
թեան նահանգներէն մէկն եղած էր, եւ նոյն միջա-
կին մէջ մնաց, մինչեւ աս տէրութիւնը կործանե-
լով՝ դարձեալ իր ինքնիշխանութիւնը ձեռք ձգեց:
Վասն զի Կիւրքսար Ա. Մարաց թագաւորն Ասորես-
տանեաց Մարգանարալ (Սարահոս) թագաւորին դէժ
պատերազմի ելելով՝ Հայոց Պարոյր իշխանն ալ՝ որն
որ նոյն ժամանակը Հայաստան կը կուսակալէր, իրեն
օգնութեան կանչեց, խոստանալով որ յաղթու-
թիւնը կատարելէն ետքը զինքը Հայոց թագաւոր կը
պսակէ: Պարոյր՝ որ արդէն Ասորեստանեաց լուծը
թօթափելու առիթ կը փնտռէր, սիրով ու յօժարու-
թեամբ: Մարաց թագաւորին հետ միացաւ ու միաբան
Նինուէն՝ Ասորեստանի մայրաքաղաքն առին եւ անոնց
թագաւորութիւնը ջնջեցին: Անկէ ետեւ Կիւրքսար
Պարոյրը թագով պսակեց եւ Հայոց տէրութեան
դահը նստեցուց:

Խորենացւոյն պատմութեան աս տեղը շիւթութիւն մը
կայ, որով նաեւ ժամանակագրական կապն ալ եղծած է:
Վասն զի ինքը Խորենացին մեր Սիւլայրդի իշխանն Աս-
րեստանեաց Սենեքերիմ թագաւորին ժամանակակից կը
դնէ, որն որ Քրիստոսէն 720 — 650 տարի յառաջ էր. իսկ

Պարոյրը՝ Սկայորգույն որդին ու յաջորդը կը գնէ Մարաց Վարրակէս իշխանին ժամանակակից, որուն սաները Քրիստոսէն 900 — 850՝ տարի յառաջ կ'իյնայ . նոյնպէս Պարոյրին յաջորդը Հրաչեան կը գնէ. Բարեկացոյ ոչ Նարուբուզանսար թագաւորին ժամանակը՝ որն որ Քրիստոսէն 600 տարի յառաջ թագաւորեց : Աս պատմութեամբ Պարոյրը Սկայորգիէն՝ իր նախորդէն 180 տարի յառաջ կու գայ, իսկ Հրաչեան Պարոյրէն 300 տարի ետքը :

Աս շիւթութեան պատճառն իմացընելու համար հարկ է ծանուցանել որ հին պատմագրաց մէջ Ասորեստանեաց ակութեան ջնջուելուն վրայ անմիաբանութիւն կայ : Ոմանք կը գնեն թէ Մարաց Վարրակէս իշխանն եղաւ անոր կործանիչը . իսկ ոմանք՝ որոնց նաև Ս . Գրոց պատմութիւնն ալ բարբոսի միաբան է, անոր ջնջուիլ Մարաց Արարատը Ա . թագաւորին ձեռքովն եղաւ, կ'ըսեն, որն որ Քրիստոսէն 630 տարի յառաջ էր : Արդ Խորենացույն պատմութեանն ազէկ միա գնելու ըլլանք, յայտնի կը տեսնենք որ աս պատմագիրն աս երկու հակառակ պատմութիւններն իրարու հետ խառնէր է, այսինքն Սկայորգույն ու Հրաչեային պատմութեանը մէջ՝ երկրորդ եղանակաւ պատմողներուն, կամ թէ ըսենք նոյն իսկ Մար Արատին հետեւէր է . իսկ Պարոյրին պատմութեանը մէջ առաջին պատմութեան հեղինակներուն : Նոյն իսկ Խորենացին իր գրքին մէջ աս բանս գրեթէ յայտնի կը խոստովանի, որովհետև Պարոյրին պատմութիւնը գնեւէն ետքը կ'աւելցընէ . « Բայց թէ որ ոմանք աս բաներս ուրիշ աեսակ կը պատմեն, մի զարմանար, զասն զի, ինչպէս վերը մեղադրելով ծանուցինք, մեր առաջին իշխաններն ու թագաւորներն իրենց զորքերը գրել տալու անփոյթ եղան, եւ միայն վերջի ժամանակներն ասանք գրի անցան, : Մենք, կ'ըսէ, աս պատմութիւնն Ասորեստանեաց ու Պարսից զիւաններէն հանեցինք : Ասով կը ցուցընէ որ աս մասին (Պարոյրին պատմութեանը) մէջ օտար ազբիւր՝ եւ չէ թէ Մար Արատն իրեն առաջնորդ ունեցած է : Մենք աս շիւթութիւնը գիւրաւ կրնանք պարզել եւ ժամանակազրական խոստորումն ուղղել, թէ որ պատմութեանն իր բողոքովն երկրորդ կարծիքն ունեցող պատմագրաց, աս աջինէն աւելի հաստատուն եւ ընդունելի պատմութեանը հետ միաբանենք, եւ ըսենք թէ Պարոյր Արարատին չէ թէ Վարրակէսն օչնականն էր : Ասով Սկայորգին՝ Սենեքերիսի տէրն էր : Նարուբուզանսարին թէ իշխանակից կը մնան, որն որ աս պատմութեանն Ասորէն յայտնի կ'ըսեն :

21459-60



չէր, այլ կամ անոնց երկուքին ալ ժամանակները պէտք էր փոխել, եւ կամ անոնց գործքերն ուրիշ իշխանաց ընծայել:

Ի. Պարոյրին մեռնելէն ետեւ, անոր թագաւորութեանն յաջորդեց Հրաչեայ՝ որն որ պայծառ երեսու հրային աչուրներ ունենալուն համար այսպէս կոչուեցաւ: Ասոր ժամանակը Նաբուքոդոնոսոր Բաբելոնաց թագաւորն Երուսաղէմն առաւ եւ Հրէից շատերը գերեց, որոնց մէջէն Հրաչեայ Շամբաթ աւուռնով մեծ իշխան մ'անկէ ինդրեց առաւ ու մեծ պատուով Հայաստանին հիւսիսային կողմերը բնակեցուց: Աս Շամբաթին ցեղէն յառաջ եկաւ Բագրատունեաց մեծ Նախարարութիւնը:

Հրաչեային յաջորդեցին

Փառնուաս.

Պաճոյճ.

Արունակ.

Փառոս.

Հայկակ.

Հայկակին յաջորդեց Երուանդ Առաջին: Մար Աբաս ինչպէս ասկէ յառաջ նստող հինգ թագաւորաց, նոյնպէս ասոր ալ գործքերէն ամենեւին բան մը չյիշէր. բայց ասոր անուանը քով սակաւակեաց անունն աւելցրնելով՝ կը ցուցնէ որ Երուանդ եւ ոչ ժամանակ ունեցած է յիշատակաց արժանի գործք մը գործելու: Իսկ Գսենափոն Յոյն պատմիչը Աիւրոսի Խրատ անուն գրքին մէջ, Աիւրոս Մեծին գործքերը պատմելու ատեն, ասոր եւ իր որդւոյն Տիգրանին վրայ երկայն պատմութիւններ կը դնէ, որոնք Մար Աբասին պատմութեան հէաւ ամենեւին չեն միաբանիր: Ասոնց վրայ հետեւեալ գլխոյն վերջերը կը խօսինք:

Գ Լ ՈՒ Ի Ե Լ

Տ Ի Վ Բ Ա Ն Ա

ԻԱ. Տեղբան հօրը կը յաջորդէ եւ Հայաստանը ծաղկեցը-
նելու ձեռք կը զարնէ (570): ԻԲ. Աշխատակ Մարտի Թա-
գաւորին Տեղբանին վրայ տեսած երազը: ԻՎ. Աշխատակ
Տեղբանին քոյրն իրեն կնութեան կ'առնու եւ անոր ձեռքովը
կը ջանայ Տեղբանը դատաւանել: ԻԲ. Տեղբանին Աշխատակին
հետ ըրած պատերազմը. Աշխատակին մահը (565): Հայաստան
բերուած Մարտի գերիները: Տեղբանին Արարիկին ըրած
օգնութիւնը:

ԻԱ. ՏԻՎԲԱՆ հօրը գահն ելածին պէս, իմաստու-
թեան ու քաջութեան գործքերու ձեռք զարնելով՝
Հայաստանին կերպարանքը բոլորովին փոխեց եւ անոր
նոր պայծառութիւն ու կենդանութիւն մը տուաւ:
Տեսնելով որ իր հայրենի երկիրները չորս կողմանէ
թշնամիք յափշտակեր են, բոլոր փոյթն ու մտա-
դրութիւնը բանակը կարգաւորելու դարձուց. ձիաւո-
րաց զնդերը շատցուց, զօրաց մէկ մասը զբաժնով ու
վահանով ամբարցուց, եւ անոնց գլուխն անցած, շէ-
թէ միայն շուտ մը օտարաց յափշտակած սեղերն
տուաւ, այլ նաեւ Հայաստանին սահմանէն դուրս ել-
լելով՝ նոր երկիրներու ալ տիրեց, եւ փոքր Ասիայի
մէջ բնակող Յունաց մէկ մասն իր ձեռքին տակ
նուաճեց: Անկէ ետեւ իր տերութիւնը հարստացը-
նելու փոյթ տարաւ, եւ իր իմաստուն կարգադրու-
թիւններովը քիչ ժամանակուան մէջ սսկի, արծաթ
եւ ուրիշ ամէն տեսակ պատուական բաներ սկսան
Հայաստան զեղուլ, ու բոլոր երկիրն ամէն բանի
առատութիւն մ'ունեցաւ: Աս բաներուս համար
իրաւամբ Հայոց վիպասաններն իրենց գեղեցիկ երգե-
րուն մէջ սա խարտեաշ, զուարթագէժ եւ յաղթ-
անդամ գիւցաղին քաջութիւնն ու իմաստութիւնը
գովեցին եւ մինչեւ երկինք բարձրացուցին:

Ի՛նչ Բայց Տիգրանին ամէն զորքքէն աւելի երեւելին եւ իր փառքն աւելցնողն՝ իր Մարայ Աշգահակ թագաւորին հետ բրած պատերազմն եղաւ : Ասան զի Աշգահակ միշտ վախի մէջ բլլալով՝ որ իր թուր Արբաս՝ թագաւորութիւնն իր ձեռքէն պիտ'որ յափշտակէ, երբ որ լսեց թէ Տիգրան Արբասին հետ բարեկամութեան դաշինք դրելու է, վախն աւելի սասակացաւ . ասոր համար միշտ կը մտածէր որ հնարքով մ'առ երկուքին բարեկամութիւնն արէ : Աս վախի ու մտածմանց մէջ եղած ատենը, զարհուրելի երազ մը տեսաւ, զորն որ իր գլխուն գալուշարիքին գաշակա թիւն մը համարելով՝ անմիջապէս առանց լուսնալուն սպասելու իր խորհրդականները կանչեց եւ հառաչելով անոնց պատմեց : «Քունիս մէջ, ըսաւ, ձիւնով ու սառուցով պատած լեռան մը քով անձանթ երկիր մը գացած էի, սրուն համար կ'ըսէին թէ Հայաստանն է : Աս լեռան գագաթը նայելու ատենս՝ տեսայ որ հան կին մը երեք չափահաս մարդիկ ծնաւ : Ասոնցմէ մէջն ասիւծի վրայ հեծաւ ու գէպ ի արեւմուտք վազեց . երկրորդն ինձի վրայ նստած՝ հիւսիսային կողմն արշաւեց . իսկ երրորդն ահագին վիշապի մը վրայ հեծած՝ մեր տուրութեան վրայ յարձակեցաւ : Աս միջոցիս մէջ ես իմ պալատիս վրայ աստուածներուն զոհ կը մատուցանէի . մէյ մ'ալ տեսայ որ վիշապին վրայ հեծնողը մօտիկնալով՝ կ'ուզէր կուռքերը կործանել : Ազգեցի մէջ մտայ եւ ան քաջին հետ երկայն ատեն պատերազմեցայ, եւ երկուքնիս ալ իրար վերաւորեցինք . բայց ինչ օգուտ . վերջապէս ես ինկայ : Ուստի քունս աչքէս փախաւ, ու վախէս սաստիկ քրանեցայ . վասն զի ասիկայ ուրիշ բան չինչանակեր, բայց եթէ Տիգրան Հայոց թագաւորին մեր վրայ ընելու յարձակումը, : Աս երազը պատմելէն ետքն, ամէն խորհրդականներուն հարցոյց թէ ինչ եղանակաւ կրնանք Տիգրանը բռնել կամ սպաննել, խոստանալով որ ով

որ աս բանիս հնարք մը գտնէ, զանիկա իր թ ա գ աւ ու
բակիցը կ'ընէ :

Ի Կ . Ա մէն մէկը մէյովեկ բան ըսելէն ետքը , ինքն
ալ իր մտածածն անոնց յայտնեց . աս բանիս ուրիշ
յարմար միջոց չեմ գտներ , ըսաւ , բայց միայն աս
որ Տիգրանին քոյրը Տիգրանուհին ինծի կին առնում :
Ասով մէջերնիս ընտանութիւն կը մտնէ ու մտքեր-
նիս դրածնիս կրնանք դիւրաւ կատարել : կամ իր
բարեկամներն ստիով ու պատիւներ խոստանալով՝
կ'սրանք ու զինքը մեռցընել կու տանք , եւ կամ
անոր մեծամեծ իշխաններն ու կուսակալներն իրմէ կը
բաժնենք , եւ այնպէս զանիկայ տկար աղաւ մը պէս
կը բռնենք : Աս խորհրդին ամէնն ալ հաւանեցան ,
ու շուտ մ'իրենցմէ մէկն ընծաներով ու նամակով
մը Տիգրանին խտրեցին : Նամակին մջ Աշգահակ
Տիգրանէն կը խնդրէր որ իր քոյրն իրեն կնութեան
տայ , որպէս զի , կ'ըսէր , ասով մէջերնիս հաստատուն
սէր ու բարեկամութիւն ըլլայ , որով երկուքներնուս
տէրութիւնն ալ թշնամիներէն ապահով կը մնայ :
Տիգրան աս բանս յանձն առաւ , եւ իր քոյրը թա-
գաւորական հանդէսով Աշգահակին խտրեց , որն որ
իր մտքին մջ ունեցած նենգութեանը համար , զանի-
կա իր կիներուն առաջինն ըրաւ . եւ ամէն բան անոր
կամքովը կ'ընէր . ամէնուն ալ հրամայեց՝ որ անոր
հնազանդին : Աս ասանկ ընելէն ետքը սկսաւ կա-
մայ կամայ իր սրտին նենգութիւնն անոր յայտնել .
Քու եղբայրդ Տիգրան , ըսաւ , իր Զարուհի կնջմէն
գրգռուելով , քու տիկնութեանդ ու փառքիդ վրայ
կը նախանձի եւ կ'ուզէ զիս մեռցընել , որպէս զի Զա-
րուհին Մարտց ալ թագուհի ըլլայ . ուստի կամ եղ-
բայրդ մէկ եղանակաւ մը պիտ'որ մեռցընես , եւ կամ
բոլոր աշխարհքիս առջեւը խայտառակ պիտ'որ ըլլաս :
Բայց աս խօսքերուն մջ աս ալ ըսաւ թէ , թէ որ իմ
ուզածս չես կատարեր , զքեզ մեռցընել կու տամ :
Տիգրանուհին իր խոհեմութեամբն Աշգահակին կա-

մայր համաձայն պատասխան մը տուաւ, բայց շուտ մը հաւատարիմ՝ մարդիկներու ձեռքով՝ անոր միտքը Տիգրանին իմացուց :

ԻԴ. Աշգահակ վատահ բըլարով որ Տիգրանու հին էր կամքը պիտ'որ կատարէ, Տիգրանին մարդ խաւրեց եւ հրաւիրեց որ երկու տերութեանց սահմանակից տեղ մը դայ՝ հարկաւոր բանի մը վրայ խորհելու համար : Տիգրան անոր կանչելուն վախճանը գիտնալով՝ շուտ մը Հայոց, Արաց եւ Աղուանից զօրքը մոլովեց եւ Մարաստանին վրայ քալեց : Մարաց թաղաւորն աս անակնկալ յարձակմանէն շիտթեցաւ եւ ուրիշ ճար չգտնելով՝ ինքն ալ զօրքն առած Տիգրանին դիմացն ելաւ : Բայց Տիգրան հինգ ամիսի չափ պատերազմն ուշացուց, որպէս զի քոյրը Մարաստանէն ազատելու միջոց մը գտնէ : Երբ որ աս բանս յաջողեցաւ, յարձակեցաւ զարկաւ Աշգահակին բանակը. Մարերը քաջութեամբ Հայոց յարձակմանը դէմ դրին եւ երկայն ատեն պատերազմն անորոշ մնաց : Նոյն տաքութեան ատենը վազեց Տիգրան Աշգահակին վրայ, եւ այնպիսի ուժով մ'իբր ահագին նիզակն անոր կուրծքին զարկաւ՝ որ կարծր երկաթէ զրահը ջրի պէս ծակեց եւ ներս անցուց, ու դուրս քաշած ատենն անոր թոքին մէկ մասն ալ նիզակին հետ մէկտեղ դուրս հանեց : Աս գործքը պատերազմին վերջ տուաւ, ու Մարաց զօրքը վախչելու ստիպեց : Բայց Տիգրան միայն յաղթութեամբ գոհ չըլլալով՝ Մարաստանին ներքին կողմերը մխեցաւ, եւ ուզեց Աշգահակին արքունեացն աւարներովն իրեն փառաւոր գործքին մշտնջենաւոր յիշատակարան կանգնել : Անոյ՛ Աշգահակին առաջին կինը, ըստ Գողթնական երգերուն՝ Ահշապաց մայրը, եւ 10,000 էն աւելի թագաւորական ցեղէ մարդիկ եւ ուրիշ գերիներ Հայաստան բերուեցան, ու Մասիս լեռան արեւելեան զողմն՝ Երասխ գետին քով Տամբատ, Ռոկիսոլայ, Գրաթգոյնք ու Արանջունիք ըսուած տեղերը գետնեցեցան. մէկ մասն

ալ Խրամ, Զուղայ ու Խոշակունիք աւաններուն մէջ դրուեցան: Աստեցմէ յառաջ եկաւ Մուրացան կամ Մարտազուց բառած մեծ Նախարարութիւնը:

Հայոց թագաւորը յաղթանակաւ Հայաստան դառնալով, իր քոյրը Տիգրանուհին Տիգրանակերտ՝ իր շինած աւանը խրկեց, եւ անոր գաւառին մուտքն իրեն սոճիկ կապեց: Անկէ ետեւ Աիւրոս Մեծ Պարսից թագաւորին զօրքով օգնութեան դնաց եւ անոր հետ մէկտեղ Բարեկայացոց թագաւորին եւ անոր դաշնակցացը դէմ մեծամեծ պատերազմներ մղեց. նաեւ Աիւրոսին Բարեկունն առած ատենն՝ անոր օգնականն ու գործակից եղաւ, ինչպէս 100 տարիի չափ յառաջ Արեւմտա մարգարէն Բարեկունի կործանումը մարգարէացած ատենը, յայտնի գուշակած էր որ Հայոց թագաւորն ալ անոր կործանիչներէն մէկը պիտ'որ ըլլայ¹:

Ինչպէս նախընթաց դիտոյն մէջ ըսինք, Քսենոփոն յոյն պատմիչը Տիգրանին եւ անոր հօրն Երուանդին վրայ Մար Արաքին պատմութենէն բոլորովին տարբեր պատմութիւն մը կը պատմէ: Մենք հին ու նոր հեղինակաց մէջ Քսենոփոնին ամբողջ պատմութեանն ստուգութեանը վրայ եղած վէճն ու կարծիքները մէկզի թող տալով՝ եւ անոր միայն աս մասին վրայ դատաւորան ընելով, կրնանք ըսել թէ աս պատմութիւնն իր ստուգութեանն երաշխաւորութիւն մը չունի, մանաւանդ թէ, ինչպէս պիտ'որ ատեններ, նոյն իսկ իր պարագաներն իրեն վաւերականութիւնը կառկածելի կ'ընեն. ուստի կրնանք հաստատութեամբ կարծել որ Քսենոփոն ստիկա հաւատարիմ աղբիւրէ առած չէ, այլ Պարսից ու Մարաց մէջ իր ժամանակը պատմուած աւանդութիւններէն բաղած է: Ասոր հակառակ Մար Արաքին պատմութիւնն իր աղբիւրներէն զատ իրեն հաստատուն վկայ ունի Մարաց բազմաթիւ գերութիւնը՝ զորն որ Տիգրան իրբեւ իր Աշոհակին վրայ ըրած յաղթութեան անեղծ յիշատակարան, Հայաստան բերաւ ու հաստատեց,

¹ Առէք նշան ի վերայ երկրի (Բարեկայացոց), փող հարբէր թագաւորութեանցն եւ Առանապէս գնդին: Երեւիցէք ի վերայ գորայ գունդու: Պատուէր տուք յինէն Այրբարբէր թագաւորութեանցն եւ Առանապէս գնդին: Երեւիցէք ի վերայ գորայ գունդու: միա ԾԱ. 27:

եւ շատ դարեր Հայոց երգիչներն իրենց երգերուն մէջ Տի-
 գրանին քաջութիւններուն հետ ասոնց Հայաստան գալուն
 պատմութիւնն ալ պահէցին : Աս երկու պատմութեանց
 վրայ այսչափ տեղեկութիւնը բաւական համարելով՝ հիմա
 քօենտօնին բուն պատմութիւնը յառաջ բերելու կը դառ-
 նանք : Արդ աս պատմագիրը նախ կը գնէ թէ Երուանդ՝
 Տիգրանին հայրն Աշդահակին հետ պատերազմ ըրած ու
 յաղթուած ըլլալով՝ անոր տուրք տալու եւ պատերազմի
 ստեն զօրքով օգնելու խոստում ըրած էր : Բայց Աշդահա-
 կին մահուանէ ետքն, անոր Կիարսար որդւոյն թագաւո-
 րութեան ժամանակը, երբ որ Քարեղացոց թագաւորն
 ամէն կողմէն Մարաց տէրութիւնը կը նեղէր, Հայոց թա-
 գաւորը յարմար առիթ գտաւ եւ տուրք ու զօրք տալը
 զադրեցուց : Ասիկէ ետքը պատմութիւնն այսպէս յառաջ
 կը տանի . Կիարսար Քարեղացոց դէմ պատերազմի ելլելու
 պատրաստութիւն տեսնելով, Կիւրոսն՝ իր քրոջն որդին իր
 բանակին զօրապետ դրաւ : Ասիկա երբ որ Պարսից զօրքով
 Կիարսարին քովն եկաւ եւ իմացաւ որ Հայոց թագաւորը
 հարկ ու զօրք տալը զադրեցուցեր է, թագաւորէն խնդրեց
 որ զինքն անոր վրայ խաւրէ, խոստանալով որ ասանց
 դժուարութեան զանիկա իրեն առաջինէն աւելի հաւատա-
 րիմ ընտրեկամ կ'ընէ : Կիարսար աս բո՛նիս հաւանածին պէս
 Կիւրոս զօրքին կէսը Քրիստոսոսա զօրապետին հետ Հայաս-
 տանին ան լեւան վրայ խաւրեց, ուր Հայոց թագաւորը
 դրօշն իր վրայ թշնամի յարձակած ասէն իր ընտանիքովն
 ու գանձովը կը փախչէր կ'ապաւինէր, եւ պատուիրեց որ
 անտառներուն մէջ պահուրախ ու քանի մը պզտիկ խմբեր
 խաւրէ որոնք աւազակաց պէս՝ պատահած մարդիկներնուն
 վրայ յարձակին ու վախցընելով փախցընեն . որպէս զի հոն
 զօրք կեցած ըլլալը Հայոց թագաւորը չիմանայ : Իսկ ինրը
 զօրաց մնացած մասն առած՝ Հայաստանին սահմանն եկաւ,
 իրեւ. թէ որս կ'ուզէր ընել, ինչպէս շատ անգամ ըրած
 էր, եւ անմիջապէս Երուանդին գետզան խրկեց, պահան-
 ջելով որ շուտով հարկն ու զօրքը հետն առած իր քովը
 գայ : Հայոց թագաւորն աս յանկարծական գէպքէն զար-
 հուրած, իր ընտանիքն ու պզտիկ որդին լեւանց վրայ խը-
 կեց, եւ ինքն սկսաւ զօրքը պատրաստել . բայց լսելով որ
 Կիւրոս մօտեցեր է, ամէն բան թող տուաւ ու քիչ մարդով
 ըլլի մը վրայ փախաւ . իսկ իր ընտանիքն ու որդին լեւան
 վրայ ելլելուն պէս Քրիստոսոսին զօրաց ձեռքն ինկան :
 Կիւրոս ան ատեն Երուանդին փախած ըլլալը պաշարեց

եւ անոր իմաց ըրաւ որ վար իջնայ ու պարագ տեղ սովէն ու ծարաւէն շնեղութի : Թագաւորն՝ սրովհետեւ ուրիշ ազատելու ծար մը չունէր, բլբէն իջաւ ու Վիւրոսին քովն եկաւ : Այն ժամանակը Տիգրան՝ իր երէց որդին, որն որ ուրիշ տեղ մը գացած էր, հոն հասաւ, եւ հայրն ու բոլոր թագաւորական ընտանիքը գերութեան մէջ տեսնելով՝ սկսաւ լալ ու ողբալ . իսկ Վիւրոս զանիկա տեսածին պէս «Աղէկ ատեն եկար, ըսաւ, որ հորդ վրայ ըլլալու դատաստանը ըսես» :

Ասկէ ետքը Պարսից, Մարաց եւ Հայոց իշխանները ժողովեց, նաեւ Երուանդին ընտանիքն ալ կանչեց, եւ երբ որ ամէնն եկան, սկսաւ Հայոց թագաւորին հետ այսպէս խօսիլ . «Նախ քեզի իրատ կու տամ որ, ըսաւ, դատաստանի մէջ սուտ չխօսիս, վասն զի ստութիւնը յանձաւորը գթութեան անարժան կ'ընէ, որուն Հայոց թագաւորը պատասխան տուաւ . ինչ որ կ'ուզես հարցուր, ես քեզի ճշմարիտը կ'ըսեմ . թող ճշմարտութեան համար ինչ որ ըլլայ նէ ըլլայ : Ան ատենը Վիւրոս սկսաւ հարցընել . Գուն իմ մօրս հօրն՝ Աշղահակին հետ պատերազմ չըրի՞ր եւ անկէ յաղթուելով հարկ ու զօրք տալ չխոստացար . արդ հիմա ինչու հարկը չես վճարեր ու զօրք չես տար : Ազատութեան բողջացի, ըսաւ Հայր . Ուրեմն, ըսաւ Վիւրոս, ծառայ չըլլալու համար պէտք է կռուիլ : Բայց դուն ըսէ ինձի, թէ որ քու իշխաններէդ մէկը յանձանք մ'ընելու ըլլայ, զանիկա իր իշխանութեան մէջ թող կու տաս, թէ անոր տեղ ուրիշ մը կը դնես . եւ թէ որ անիկա շատ ստացուած ունենայ, իրեն կը թողուս որ զանոնք վայելէ, թէ ձեռքէն կ'առնուս : Իշխանութենէ կը հանեմ, պատասխանեց, եւ ամէն ինչքերը կ'առնում : Իսկ եթէ իմանալու ըլլաս որ քեզի դէմ ապրտամբեր եւ թշնամուոյն կողմն անցեր է, ինչ կ'ընես . կը բռնեմ կը սպաննեմ, ըսաւ թագաւորը : Աս խօսքերը ըսելով Երուանդին ընտանիքն՝ սկսան լալ ու վայնասուն մը հանել, ստոյգ համարելով որ թագաւորն այսպէս իր բերնով իր մահապարտ ըլլալուն վճիռը տալով՝ թէ ինքն եւ թէ իրենք պիտ'որ սպաննուին : Վիւրոս անոց հրամայեց որ լռեն, եւ նորէն թագաւորին դառնալով՝ թող քու իրաւունքդ այնպէս ըլլայ, ըսաւ, բայց ինձի ինչ իրատ կու տաս . սպաննել թէ ազատել :

Երբ որ թագաւորը տարակուսած՝ լուռ ու պապանձեալ կեցաւ . եւ չէր գիտեր որ ինչ պատասխան տայ, Տիգրան մէջ մտնելով՝ ցուցուց Վիւրոսին որ եթէ իր

Հայրն սպաննելու ըլլայ, Մարտց սերսովեան մե՛ շիտակը հասցրնէ. ասոր հակառակ թէ որ անոր շնորհք բնէ՛ զինքը կը վասարկի եւ անկէ ետեւ իրեն ու թագաւորութեան մշտնջենաւոր հաւատարիմ գաշնակիցն ու օղնականր կ'ըլլայ: Կիւրոս՝ որ արդէն աս բանին կը բայձար, Տիգրանին աս խօսքերը բաւական երաշխաւորութիւն համարեցաւ ու Հայոց թագաւորն ազատ թողուց, միայն անկէ 1500 տաղանդ եւ 24,000 զօրք առաւ, որոնց զօրավար Տիգրանն եղաւ: Ասկէ ետքը Հայոց ու Քաղզէացոց (Խաղտեաց) մէջ եղած մշտնջենաւոր պատերազմը գաղթեցուց, Քսենոփոն Կիւրոսի խրատ, Գիրք Բ. ԳԼ. 4. եւ Գիրք Գ. ԳԼ. 1 — 3:

Գ Լ Ո Ւ Խ Ը

ՏԻԳՐԱՆԻՆ ՅԱԶՈՐԳՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ Վ Ա Հ Ի

Ի՛. Վահագնին գործքերն (520) եւ իրեն յաջորդոց ելխանները: Ի՛Զ. Հայաստանին մէկ մասը Պարսից իշխանութեան տակ: Տերիբազ կուսակալը (405): Ի՛Է. Վահէ եւ Հայկազանց իշխանութեան քննութիւնը (330):

Ի՛. ՏԻԳՐԱՆ ԵՐԷՔ ՍՐԳԻ ՈՆԵՐ, ԲԱՐ, ՏԻՐԱՆ ՈՒ ՎԱՀԱԳՆ. ասոնց մէջէն Վահագնը հօրը տեղն անցաւ, եւ այնչափ քաջութիւններ գործեց որ Հայրը զինքը զից կարգը դրին ու Վրաստանի կողմերն արձանը կանգնելով պաշտեցին: Իր վրայ շատ երգեր ալ շինեցին, որոնց մէջ կը պատմէին թէ վիշապներու հետ կռուեր ու յաղթեր է, եւ Հերակլէոսին նման շատ քաջութիւններ ըրեր է: Ասոր ցեղէն յառաջ եկաւ Վահնունեաց կամ Վահունեաց Նախարարութիւնը:

Խորենացին Վահագնին վրայ շինուած երգերէն աս կըտորը յառաջ կը բերէ, զորն որ մինչեւ իր ժամանակն երգիչները նուագարաններով կը նուազէին, եւ ինքն ալ անոնց երգելը լսած էր:

Երկներ երկին եւ երկիր,

Երկներ եւ ծիրանի ծով.

Երկն ի ծագուն ունէր զկարմրիկ եղեգնիկն:

Ընդ եղեգան փոց ծուխ երաներ .

Ընդ եղեգան փոց բոց երաներ .

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազեր (վազեր խորտեաշ
պատանեկիկ) .

Նա հուր հեր ուներ .

Ապա թէ բոց ուներ մուրուս

Եւ ազիւնքն էին արեգակունք :

Սա հազանին յաջորդեց իր որդին Առաւան .
Առաւանէն ետեւ որդւոց որդի յաջորդեցին Ներսէհ,
Զարեհ, Արմուգ, Բագամ, Վան, որոնց գործքերուն
եւ որչափ տանն իշխեցնուն վրայ մեր պատմագիրնե-
րուն մջ տեղեկութիւն մը չենք գտներ :

ԻՉ . Բայց Յունաց ժամանակակից պատմագիր-
ներէն Հերոդոտոս ու Քսենոփոն մեղի կ'աւանդեն որ
անոնց ժամանակը Հայաստանին մէկ մասը Պարսից
նահանգներուն մէկն եղած էր, ուր Արտաշէս Ուշե-
ղին թագաւորութեան տակնը կը կուտակալէր Տե-
րիբազ նախարարը, որուն համար Քսենոփոն կ'ըսէ
թէ Պարսից երէւելի իշխաններէն մէկն էր, եւ թա-
գաւորին քովը գտնուած տակնն՝ իրմէ ուրիշ չէր
կրնար գտնիկա ձի հեծցընել : Աս նահանգը տարուէ
տարի Պարսից թագաւորին աւուրքի տեղ 20,000 իր
դեղեցիկ ձիերէն կու տար, որոնք փոքր կազմած
մ'ունէին, բայց արտաքոյ կարգի աշխոյժ բլալնուն
համար Պարսկաստանի մջ շատ յարգի էին :

Քսենոփոն Արտաշէս Ուշեղին թագաւորութեան տակնը
յունական զօրքով Պարսկաստանէն ետ դառնալով եւ Հայ-
աստանին առ մասէն անցնելով, Հայոց իրենց ըրած ընդու-
նելութեան եւ անոնց ընտանեկան վիճակին վրայ քանի մը
տեղեկութիւններ կու տայ : Յունական բանակն երկայն
տանն ձիւներու մջէն ճամբայ ընէլէն ետեւ, յոգնած
անօթի՝ Հայոց աւան մը հասան, որուն տները դեանի տակ
էին եւ անոնց դռները հորի բերաններու նման նեղ ու
խորունկ, բայց ներսի կողմերը բաւական ընդարձակութիւն
ունէին : Անասնոց մտնելու տեղերը փոսեր էին, իսկ մար-
դիկ սանդուխներով վար կ'իջնային : Տներուն մջ կողմ
մ'անասնոց ախոռներ էին, ուր կային այծ, ոչխար, եզ, հա-

եւ անոնց ձագերն, որոնք ամէն տեսակ ճարակով կը սնանէին: Մէկ կողմն ալ համբարանոցներ շինուած էին՝ որոնք ցորենով, գարիով ու գանազան տեսակ բանջարներով լեցուն էին: Հոն կար նաեւ գարիէ հանուած տեսակ մը գինի (գարեջուր), որն որ մէջ բաժակներու մէջ լեցուած կը պահուէր, ու անորները՝ ճարաւած ատեննին բաժակներուն քովը դրուած եղեղներով անկէ կը խմէին: Աս բնակչիքը, կ'ըսէ Քսենոփոն, մէջը ջուր շխառնուած՝ շատ գորաւոր է եւ վարժողներն ախորժելով կը խմեն:

Նոյն գիշերն աւանապետը Քսենոփոնը սեղանի հրաւիրեց եւ աղէկ ընդունելու թէ՛ւն ըրաւ. իսկ յոյն զօրքն եւ ուրիշ զօրապետները նոյն աւանին տներուն մէջ բաժնուեցան եւ ամէն տեսակ ուտելիքի առատութիւն գտան: Երկրորդ օրը Քսենոփոն աւանապետին հետ Քերիսոփոս զօրապետին գնաց, եւ ամէն անցած տեղը գեղացիք զինքը սեղանի կը հրաւիրէին եւ առջեւը խոզի, գառնուկի, ուլի, հորթի ու հաւու միս, եւ առատ ցորենի ու գարիի հաց կը հանէին, եւ իրենց բարեկամութիւնը յայտնելու համար, կը բռնէին գինւոյ բաժակներուն քովը կը տանէին որ խմէ: Երբ որ Քերիսոփոսին քովն եկաւ, զանիկա ալ սեղանի վրայ գտաւ: Հոն Հայոց պատանիներն իրենց ազգային զգեստներովը սեղանին կը ծառայէին, որոնց հետ յոյն կոչնականները նշանով կը խօսէին: Երկու զօրապետներն իրար ողջունելէն ետեւ, թարգմանի ձեռքով աւանապետին պարսկերէն նոյն գաւառին անունն հարցուցին: Անիկա պատասխան տուաւ թէ հոս Հայաստան է. ետքը հոն գտնուած ձիու երամակներուն համար հարցուցին թէ ինչ բանի համար կը սնուցանէք, որոնց ձերունին պատասխանեց. Ասոնք թագաւորական տուրքի տեղ կը դարմանենք: Քսենոփոն զանիկա իր ընտանեացը քովը բերաւ, որովհետեւ յոյները նոյն աւանը մտածնուն պէս անոր որդիքն եւ ինն օր յառաջ ամուսնացած աղջիկը թռնած քովերնին պահած էին: Հոն աւանապետն ամէն յոյն զօրապետներուն մէյմկ ձի պարգեւեց:

Ութերորդ օրը Յունաց բանակը նոյն աւանապետն իրեն առաջնորդ առած՝ ճամբայ ելաւ: Քսենոփոն անոր ընտանիքն իրեն դարձուց, միայն մէկ չափահաս որդին Եպիսթենէս Ամիհիպոլետեցւոյն յանձնեց որ պահէ, որպէս զի աւանապետն իրենց աղէկ առաջնորդութիւն ընէ: Աս ձերունին ձիւնապատ ճամբաներուն մէջէն զանոնք կը տանէր. բայց երբ որ երեք իջեւան յառաջ դացին եւ ամենեւին գեղի

չհանդիպեցան, քերիսօփոս՝ յառաջապահ գնդին զօրապետն սկսաւ կասկածիլ որ առաջնորդը դիտմամբ գիրենք անչէն տեղերէն կը տանի, ասոր համար սաստիկ բարկացած՝ անոր յանդիմանութիւն տուաւ: Եւեր աւանապետը կ'ըսէր թէ աս կողմերս գեղ չկայ, բայց յոյն զօրապետն անոր խօսքին չհաւատալով՝ զանիկա աղէկ մ'ալ ծեծեց. ան ալ նոյն գիշերը գաղտուկ փախաւ, իր որդին Յունաց ձեռքը թող տալով՝ որուն Եպիսթենէս շատ սէր կապեց եւ հետը Յունաստան տարաւ:

Իէ. Վ անին յաջորդեց իր որդին Վահէ՛ որն որ Աղեքսանդր Մեծին դէմ 40,000 հետեւակ ու 7000 ձիաւոր Պարսից Գարեհ թագաւորին օգնութեան խաւրեց: Գարեհին յաղթուելէն ետքն Աղեքսանդր Հայաստանին ալ տիրեց: Վահէ փորձ փորձեց Մակեդոնացւոց լուծը վըայէն նետելու, բայց չկրցաւ յաջողընել. ինքն ալ Աղեքսանդրէն սպաննուեցաւ: Իր մահուամբը Հայկազանց տիրող ցեղն եւ անոր հետ մէկտեղ նաեւ Հայոց տէրութիւնն ալ դադրեցաւ: Անկէ ետեւ երբեմն օտարազգի եւ երբեմն ազգային իշխաններ 180 տարի՝ մինչեւ Հայոց թագաւորութեան երկրորդ Հարստութեան ժամանակը, Հայաստան կառավարեցին:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Կ Ր Ի Ս Ը Կ Ա Լ Ը Ն Ե Բ Ը

ԻԸ. Միհրան Հայոց կուսակալ կը դրուի (330) : Նեոպաղարմեսու Հայաստանի կուսակալութիւնը կ'առնու : Է. Սեւեպին հետ կը պատերազմի և անկի կը սպաննուի : ԻԹ. Արղասարգ հայ իշխանն և անկէ ետև Արասուայ Հայաստանին գերին իշխանութիւնը ձեռք կը ձգեն : Լ. Արասուէս՝ Մեծ Հայոց ու Զահրան Փոքր Հայոց և Ծոփաց կուսակալ կը դրուին : Արասուէս Արասուա քաղաքը կը շինէ : Սեւեպացիներէն կ'ազատամբի : Մ. Արասուայ կուսակալն և Հայաստանին Պարթեաներէն առնուիլը (150) :

ԻԸ. ԱՂԱՔՍԱՆԻՐ Մեծ՝ Հայաստանին տիրելէն ետքը, հոն Միհրան անուճով իշխան մը կուսակալ խաւրեց՝ որն որ 6 տարիի շափ նոյն իշխանութիւնը վարեց : Բայց Աղէքսանդրին մահուանէ ետև, երբ որ անոր զօրապետները բոլոր անոր տիրած երկիրները մէջերնին բաժնեցին, Հայաստան ալ Նեոպաղարմեսու իշխանին տրուեցաւ :

Ասոր ժամանակը Պերդիկկաս Մակեդոնացուց մեծ իշխանը Վապագովկիայի Արիարաթ թագաւորին դեմ պատերազմի ելաւ և զանիկա բռնեց սպաննեց. երկիրներն ալ Եւմենէս իշխանին յանձնեց : Բայց Արիարաթին սրգին՝ որն որ նոյնպէս Արիարաթ կը կոչուէր, քիչ մարդով Հայաստան փախաւ :

Նեոպաղարմեսու հպարտ ու խռովասէր մարդ մ'ըլլալով՝ Հայաստան սկսաւ խռովել և ժողովրդեան նեղութիւն տալ. Մակեդոնացուց տերութեան ալ որոնց իշխանութեան տակն էր, հպատակութիւն չէր ցուցընէր : Պերդիկկաս երբ որ աս բանս իմացաւ, Եւմենէսին յանձնեց որ Հայաստան խաղաղցընէ և Նեոպաղարմեսուը կարգի բերէ. անիկա ալ շատ ջանք ըրաւ որ բանը խաղաղութեամբ լմնցընէ, բայց բոլոր ջանքը պարապի ելաւ : Ան ատենը զօրքով Հայաստանի կուսակալին վրայ գնաց և անոր յաղթեց :

Նէսպաղամէսս Եւմենէօին թշնամիներուն քովը փախաւ եւ զանոնք գրգռելով՝ նորէն անոր դէմ պատերազմի ելաւ, բայց դարձեալ յաղթուեցաւ ու Եւմենէօսին ձեռքովն սպաննուեցաւ :

ԻԹ. Նէսպաղամէսին յաջորդեց Արդուարդ Հայ իշխանը՝ զորն որ, ինչպէս նաեւ իր յաջորդը, Յունաց պատմագիրները թաղաւոր կ'անուանեն : Ասիկա Պերդիկիկասին ու Եւմենէօսին մեռնելէն ետքը Վապաւրովկացւոց թաղաւորին սրբւոյն Արիարաթին՝ որն որ Հայաստան կը կենար, օգնական զօրք առաւ որ երթայ Հօրը թագաւորութեան աիլէ : Արքայսրդին աս զօրաց օգնութեամբը Մակեդոնացւոց Ափիւնասս զօրապետին յաղթեց, զանիկա սպաննեց եւ Հօրն աթոռ նստաւ :

Արդուարդին յաջորդն եղաւ Արտաւազ կամ Արտաւազան իշխանն, ըստ Պոլիբիոսի Ատրպատականի թաղաւորը, որուն դէմ Անաիոքոս մեծ Սելեւկացւոց (Ատորւոց) թագաւորը պատերազմի ելաւ. բայց Արտաւազ առանց զարնուելու անոր հնազանդեցաւ :

Լ. Արտաւազին մեռնելէն ետքն, Անաիոքոս Հայաստանին կուսակալութիւնն երկու բաժնեց. Մեծ Հայոց վրայ Արտաշէս անուենով իշխան մը դրաւ, իսկ Փոքր Հայք ու Ծովիաց գաւառը Զահրան կամ Զատրիասէս իշխանին յանձնեց : Աս ատեններս Աննիրազ Վարքեդոնացւոց զօրապետն Հռոմայեցիներէն յաղթուելով՝ Անաիոքոսին քովը փախաւ, եւ երբ որ Հռոմայեցիք Անաիոքոսին ալ յաղթեցին եւ ստիպեցին որ Աննիրազն իրենց ձեռքը տայ, զօրապետը զինքն ապահով չսեպելով՝ Հայաստան Արտաշէսին քովն եկաւ, եւ անոր շատ օգտակար խորհուրդներ տալէն ետեւ, Արտաշատ քաղաքն ալ շինել տուաւ, որուն ձեւն ինքը առաւ եւ շինողներուն վերակացութիւն դրաւ :

Արտաշէս Անաիոքոսին ները մտնելն իրեն առիթ առած՝ անկէ ապստամբեցաւ ու Հռոմայեցւոց հետ

դաշինք զնելով՝ ինքը զինքը թագաւոր անուանեց. թայց 12 տարի ետքը Անտիոքոս Կոլիվան զօրքով իր վրայ գալով՝ դարձեալ նուաճեց ու հետզհետէ գեցուց: Ասկէ ետին Արտաշէս զինքը Փոքր Հայոց կուսակալին վրայ դարձուց, ուզելով անոր երկիրներն ալ իր տակը նուաճել: Չահրան անոր դէմ զնելու անկարող բլալով՝ շատ բնձաններով եւ որդիներէն մէկը պատանդ տալով՝ զանիկա հաճեցուց որ պատերազմէն ետ կենայ: Բայց իր մահուանէն ետին, երբ որ Արիարաթ Ասպագովկոցուոց թագաւորն անոր որդին Միհրբուզանը Փոքր Հայոց իշխան դնելու կը պատրաստուէր, Արտաշէս անոր խորհուրդ տուաւ որ Միհրբուզանն սպաննէ. ետ ալ, ըսաւ, Չահրանին միւս որդին կը սպաննեմ եւ անոր երկերները մէջերնիս կը բաժնենք: Արիարաթ աս անզգամութեան գործքը յանձն չառաւ եւ Միհրբուզանին՝ հօրը իշխանութիւնը տուաւ:

ԱԱ. Արտաշէս երկայն ատեն Հայաստան կառավարելէն ետեւ խաղաղութեամբ մեռաւ իրեն յաջորդ թողլով իր որդին Արտաւադդն, որուն ժամանակը Պարթեւներն Հայաստանի տիրեցին եւ Հայոց թագաւորութիւնը նորէն կանգնեցին:



ԳԻՐԻՔ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐՇ ԼԿՈՒՆԵՆԵՑ ԹԵԳՆԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՆԵՅՈՑ թագաւորութեան երկրորդ անգամ կանգնիչն Արշակ Մեծ Պարթեւեաց թագաւորն եղաւ, որն որ Ասորոց Սելեւկեան թագաւորներուն ձեռքէն մեծամեծ յաղթական պատերազմներով Ասիային մեծ մասին հետ Հայաստանն ալ առնելով՝ հոն իր Աղարշակ եղբայրը թագաւոր դրաւ, որպէս զի իր ընդարձակ տէրութիւնն աղէկ կառավարուի եւ պայծառանայ, եւ միանգամայն աս երկրորդ թագաւորութիւնն արտաքին թշնամեաց յարձակման դէմ իրրեւ թումբ մ'ըլլալով՝ Պարթեւաստանը միշտ ապահով մնայ: Բայց ուզելով որ աս երկու տէրութիւնն, այսինքն Պարթեւացն ու Հայոցն իրարու հետ անբաժին կապակցութիւն մ'ունենան, ստակ տպելու իրաւունքը Պարթեւաց թագաւորներուն պահեց, եւ Հայոց թագաւորութիւնը Պարթեւաց թագաւորութեան երկրորդն անուանեց:

Ես ցեղին՝ որն որ իր հաստատչին անուամբն Արշակունի ըսուեցաւ, թագաւորութեան սկիզբները Հայաստան իր վերջին աստիճանի պայծառութեանն հասաւ, սահմաններն ընդարձակեցան, զինուորութիւնը ծաղկեցաւ, քաղաքականութիւնն յառաջացաւ եւ երկիրը հարստութեամբ լեցուեցաւ: Բայց աս

պայծառութիւնն երկրոյն ասնն շիրտ շարունակել-
 զանապան մեծամեծ պատերազմներ եւ օտար թշնա-
 մեաց անդադար յարձակումներ թէպէտ եւ ազգին
 փառքն աւելցուցին եւ զանիկա անուանի բրին, բայց
 միանդամայն սասաիկ ալ յազնեցընելով՝ մեծ վնաս
 տուին եւ երկրին սահմանացն ամփոփուելուն պատ-
 ճառ եղան : Աս ժամանակիս մէջ ծագեցաւ ճշմա-
 րիտ կրօնի լուսաւորութիւնն եւ հեթանոսութեան
 մութիւն փարատեց, որով նաեւ քաղաքականութիւնն
 ալ նոր կենդանութիւն մ'առաւ : Բայց յանկարծ
 օտարաց յարձակումները նորոգուելով՝ եւ ներքին
 խռովութիւններն եւ երկպառակութիւնը յաճախե-
 լով, աս երեւելի փոփոխութենէն յուսացուած օգուտ-
 ներուն մեծ արգելք եղան, եւ վերջապէս աս ցեղին
 թագաւորութեան վերջին մահարեւը հարուածը տուին :

Աս երկրորդ գրքին առաջին ու գլխաւոր Աղբիւրն
 ալ Մովսէս Խորենացիին պատմագրութիւնն է. բայց
 ասոր ամէն մասը նոյն սասիճանի հաստատութիւն
 եւ ստուգութիւն չունի, որովհետեւ պատմագիրն աս
 տեղւոյն պատմութիւնը զանազան տեղերէ ժողոված
 է, որոնք իրարմէ աւելի կամ պակաս վաւերականու-
 թիւն ունին : Վաղարշակին եւ Արշակ Աին պատմու-
 թեան մէջ ժամանակակից եւ ականատես պատմագրի
 (Մար Աբասին) կը հետեւի, ուստի եւ կատարեալ
 հաստատուն ու ստոյգ կրնայ համարուիլ : Անկէ ետեւ
 զանազան յոյն հեղինակներու եւ դիւաններու կը դիմե-
 եւ անոնցմէ իր պատմութիւնը կը քաղէ մինչեւ իր
 ժամանակն, այսինքն Խոսրով Գին ասեւր. ասոր
 հոմար աս մասին մէջ աեղ աեղ ժամանակագրական
 խտտորուժ եւ նաեւ պատմութեան մէջ պակասութիւն
 կը նշմարուի, մանաւանդ Հայոց Հռոմայեցւոց հետ
 ունեցած յարաբերութեանց եւ բրած պատերազմ-
 ներուն պատմութեան մէջ, որոնց վրայ աս երեւելի
 պատմագիրն՝ անսարակոյս ազդիւրի պակասութեան
 համար, շատ հարեւանցի կ'անցնի : Իսկ իր ժամանա-

կին պատմութիւնն, այսինքն Խոսրով Գ.էն մինչեւ Արշակունեաց թագաւորութեան զազարումը, բոլորովին ճշմարիտ եւ ստոյգ է, վասն զի ինքն սա մասն իբրեւ ժամանակակից եւ ականատես մկայ կը պատմէ: Խորենացիէն ետքը պէտք էինք մեր Երկրորդ զրքին մէջ բովանդակած պատմութեան զլիաւոր ազրիւր Փառասոս Բուզանդացին դնել, թէ որ անոր պատմութեան արտաքոյ կարգի չափազանց պարագաներն եւ բոլոր ընթացքին մէջ Խորենացւոյն պատմութեան բոլորովին աննմանութիւնն՝ իր ստուգութիւնն ու վաւերականութիւնը կասկածելի չընէին: Երկրորդ ազգային ազրիւրն Ազատանդեղոսն է, որն որ Խոսրով Մեծին ու Տրդատին պատմութիւնն եւ Հայոց դարձը կը պատմէ. անկէ ետքը Զենաբ ասորին՝ որ նոյնպէս Տրդատին եւ Ս. Գրիգոր Լուսաւորչին գործքերուն մէկ մասը կը պատմէ: Օտարազգի պատմագրաց մէջէն սա մասին ազրիւր եղսղներն են Աիկերոն, Սարաբոն, Յովսէպոս, Գիոն Աասիոս, Պլուտարքոս եւ Ապպիանոս, որոնք զլիաւորաբար Տիգրան Բ.ին եւ անոր սրդին Արտաւազդ Ա.ին գործքերը կը պատմեն. բայց ասոնց պատմութեանցը մէջ տեղ տեղ անվաւերական ու անստոյգ մասեր եւ չափազանց պարագաներ կը գտնուին, ինչպէս պատմութեան կարգին մէջ պիտ'որ տեսնենք: Ասոնցմէ զատ շատ պատմագիրներ ալ կան, որոնք միայն քանի մը մասնական դէպքերու մէջ մեզի օգնական եղան, ինչպէս Լիւիոս, Փղորոս, Եւտրոպիոս, Վելլեյոս, Ամմիանոս, Հերովդիանոս եւ այլն: Աս պատմագրաց կարգը կրնանք դնել նաեւ Տակիտոս Հռոմայեցիին ալ՝ որն որ իր Տարեգրութեանցը մէջ Արտաւազդ Ա.ին բռնուելէն ետեւ Հայաստանի վրայ իշխող նոր թագաւորներու եւ անոնց գործքերուն պատմութիւն մը կը շարէ, որոնց եւ ոչ նշմարանքը մեր ազգային պատմագիրներուն մէջ կը գտնուի. ուստի սա մատենագիրն սա նոր պատմութեան իբրեւ առաջին ու զլիաւոր ազրիւրն է: Տակիտոսին սա նոր

պատմութիւնը նաեւ Գիտն Կաստիտին, Յովսէպոսին, Փղորոսին, Ալէլէյոս Պատարկուլոսին, Սերատոս Ռոփոսին եւ ուրիշ քանի մ'օտարազգի պատմագիրներուն մէջ ալ կը գտնուի, բայց ասոնց պատմածք միայն քանի մը մասնակիան ղէպքերը են: Աս պատմութեան ինչ աստիճանի ստուգութիւն ու վաւերականութիւն ունենալը պատմութեան կարգին մէջ պիտ'որ քննենք:

Գ Լ ՈՒ Խ Ա

Ա Ա Ղ Ա Բ Շ Ա Կ

Ա. Վարդաշակ թագաւորական գահը կը նստի (150) եւ Մար Աբասին ձեռքովը Հայկազանց պատմութիւնը դրել կուտայ: Բ. Մորփիւղիկէս իշխանին ղէմ պատերազմի կ'ելլէ ու կը յաղթէ: Գ. Թագաւորութիւնը կարգի կը դնէ: Նախարարաց ամէն մէկուն մշակ երեւելի պաշտօն կուտայ: Օրէնք կը դնէ որ թագաւորական ցեղին բնակութիւնն Հաշտանից գաւառն ըլլայ: Դ. Իր բրած շինութիւններն եւ իր մահը (128):

Ա. ՎԱԿԱՐՇԱԿ թագաւորական գահն ելլելուն պէս՝ իրեն աւանդուած ընդարձակ երկիրը՝ որն որ մէկ կողմանէ Կովկասեան լեռներէն մինչեւ Պաղեստին, միւս կողմանէ Արլպատական նահանգէն մինչեւ Փոքր Ասիա կը տարածուէր, բարեկարգելու եւ պայծառացընելու ձեռք զարկաւ: Միջագետաց Մծբին քաղաքն իրեն արքայանիստ քաղաքն ըրաւ, եւ առաջին գործքն եղաւ փնտռել թէ Հայոց ազգն ու Հայաստան գտնուող նախարարներն եւ իշխաններն ուսկից յառաջ եկած են. եւ երբ որ Հայաստանի մէջ ասոնց վրայ գրուած տեղեկութիւն մը չգտաւ, Մար Աբաս Կատինա անուանով խելացի ու գիտուն մարդ մը նամակով մ'իր եղբօրը խաւրեց, եւ աղաչեց որ թող տայ անոր Նինուէի գիւանին մէջ Հայոց ազգին ու նախարարութեանցը վրայ տեղեկութիւններ փնտռուել: Մար Աբաս զնաց նամակն Արշակին տուաւ,

որն որ իր եղբորն այսպիսի խելացի բողձանք մ'ու-
նենալուն վրայ ուրախանալով՝ հրամանատարաւ որ
դէսանը բանան ու Մար Աբասին թող տան գրքերը
քննելու : Մար Աբաս մտաւ գիւսնն ու հոն հին
գրքերէն Հայկազանց ցեղին պատմութիւնը գտաւ , ու
յունարէն եւ ասորերէն գրելով՝ Վաղարշակին բերաւ ,
որն որ շատ ուրախութեամբ ընդունեցաւ ու հրա-
մայեց որ իր գանձին մէջը պահեն . սն պատմութեան
մէկ մասն ալ արձաններու վրայ փորել տուաւ :

Բ . Ասկէ ետքը ժողովեց Վաղարշակ իր երկրին
զօրքն ու Մորփիւղիկէս իշխանին դէմ դնաց : Աս
Մորփիւղիկէսը Վապադովկիայի իշխան ըլլալով՝ դեռ
Մակեդոնացւոց իշխանութեանը հաւատարիմ մնացած
էր , անոր համար սն կողմերուն զօրքերը ժողոված՝
Վաղարշակին դէմ իբրեւ Մակեդոնացւոց թշնամի
պատերազմ բացած էր : Արբ որ երկու բանակ իրարու
մօտիկցան , շատ օրեր գիմայէ գիմայ ամրացած կեցան :
Մէյ մ'ալ յանկարծ Հայերը Մորփիւղիկէսին վրայ
յարձակեցան , ուստի սն ալ կամաւ կամ ակամայ իր
զօրքը պատերազմի պատրաստեց . եւ որովհետեւ զօ-
րաւոր մարդ մըն էր եւ երկաթէ ամուր զրահ հագած ,
վազեց զարկաւ առջեւն եղողներն ու շատ մարդ
սպաննելով՝ կը ջանար մինչեւ Վաղարշակին կեցած
տեղը հասնիլ ու զանիկա ալ սպաննել : Բայց շուտ մը
Հայոց քաջ ու կարիճ իշխանները վրան հասան ու
զարկին զինքը մեռցուցին . իր զօրքին ալ այնպէս
ջարդ մը տուին որ բոլոր դաշտն արեան հեղեղով
ծածկուեցաւ . ասով բոլոր սն երկիրներն ալ Վաղար-
շակին տակը նուաճեցան :

Գ . Պատերազմը ըմբնալէն ետքը Վաղարշակ սն
գաւառները կարգի գրաւ , ու Հայաստան դարձաւ :
Հոն ալ նահանգներու ու գաւառներու վրայ կուսա-
կալներ դնելով՝ Մծբին եկաւ եւ սկսաւ բոլոր թա-
գաւորութիւնը կարգաւորել : Նախ Բաղարատ իշխա-
նին թագաւորին դուռը թագ դնելու իշխանութիւնը

տուտ, որովհետեւ ամենէն յառաջ անիկայ իր կողմն անցած եւ իրեն օգնութիւն բրած էր, եւ անոր Թագազիր եւ Ասպետ պատուանունը տուաւ. իր ջեղն ալ իր անունովը Բագրատունի անուանեց: Ասկէ զատ Հայաստանին ուրիշ նախարարութեանց ամէն մէկուն մէյմէկ պաշտօն որոշեց: Երկու հոգւոյ ալ պաշտօն տուաւ որ մէկերնին՝ Թագաւորն անիրաւ բան մ'ըրած ստենն, իրաւունքն եւ արդարութիւնը գրով իրեն յիշեցրնէ. իսկ միւսն՝ երբ որ Թագաւորը յանձաւորները պատժելու անհօգութիւն բնէ, անոր միաբը ձգէ վրէժխնդրութիւն բնէ: Մարաց նախարարութիւնն ալ՝ որն որ Տիգրանին Մարաստանէն բերած գերիներէն յառաջ եկած էր, իր Թագաւորութեան երկրորդն ըրաւ: Խորհրդի, գործքերու ու զբօսանաց ժամանակները սահմանեց: Հրաման տուաւ որ քաղաքացիք զեզացիներէն պատուական համարուին, անոնք ալ զեզացիներուն հետ սիրով ու եղբօր պէս վարուին: Եւ որովհետեւ ինքը շատ որդիներ ունէր, պատշաճ շտեպեց որ ամենն ալ իր քովը բնակին. անոր համար միայն անդրանիկ որդին Արշակն իր քովը պահեց, որպէս զի իր Թագաւորութեանը յաջորդէ, եւ անոր որդին Արտաշէսը՝ զորն որ շատ կը սիրէր, վասն զի զօրաւոր ու աշխոյժ սղայ մին էր, եւ պզտիկուց կը ցուցրնէր թէ ետքն ինչ մեծամեծ գործքեր պիտ'որ բնէ. իսկ միւս որդիները Հաշտենից գաւառը խաւրեց որ հոն բնակին, ան գաւառին զեզերն իրենց աալով ու Թագաւորական գանձէն ալ սուսնձին մուտք կապելով: Աս բանս Արշակունի Թագաւորաց մէջ օրէնք մ'եղաւ, եւ միշտ Թագաւորին միայն մէկ որդին իր քովը կը մնար ու միւսները Հաշտենից գաւառը կը բնակէին:

Գ. Աս բարեկարգութիւններէն զատ Ազգարշակ շատ քաղաքներ ու գեղեր ալ շինեց, ու Շամիրամայ քաղաքը (Վանը) նորոգել տուաւ: Արմաւրի մէջ ալ արեղական, լուսնի եւ իր նախնեացն արձաններ կանգնեց, ու Բագարատ իշխանը շատ սախպեց որ Հրէից

կրօնը թողու եւ անոնց երկրպագութիւն ընէ . բայց անիկայ յանձն չառաւ . Ապղարչակ ալ թող տուաւ որ իր կրօնը պաշտէ : Այսպիսի քաջութիւններով ու կարգապահութիւններով 22 սարի թաղաւորելէն ետքը՝ Մծբինի մջ մեռաւ , եւ իրեն յաջորդեց իր անգրանիկ որդին Արշակ Ա :

Գ Ա Ս Ի Խ Բ

Ա Ր Շ Ա Վ Ա .

Ե . Արշակ Պոնտացոց զէմ պատերազմի կ'ելէ ու կը յաղթէ (126) : Պոնտոսի ծովին քով կանգնած քարէ արձանն ու նիզակն անոր մէջ խոթելը : Զ . Բագրատունեաց նախարարներուն՝ կրօնի համար տուած շարչարանները :

Ե . ԱՐՇԱՎ իր հօրը նման քաջութեամբ եւ իմաստութեամբ 13 սարի թաղաւորեց , Հայաստանի մէջ շատ բարեկարգութիւններ ընելով : Պոնտացոց զէմ՝ ալ պատերազմի ելաւ ու յաղթեց , եւ հոն Սեւ ծովին եզերքն արձան մը կանգնեց եւ իր նիզակն՝ որուն ջուրը զեռուններու (օձերու) արեամբը արուած էր , ուժով մ'ան արձանին զարներով՝ խորունկ ներս խոթեց : Աս արձանը Պոնտայիք շատ ժամանակ սաստուածներէ շինուած բանի մը պէս պաշտեցին : Բայց երբ որ Արատշէս Արշակին որդին անոնց զէմ պատերազմի ելաւ , բարկանալով՝ զանիկա ծովը նետեցին :

Զ . Արշակ Բագրատունիները շատ շարչարեց որ Հրէից կրօնը թողուն ու կուռք պաշտեն , բայց անոնք յանձն չառնելով՝ երկու հողի սպաննուեցան : Իսկ միւսները յանձն առին միայն շաբաթ օրերն որո՞ր ու պատերազմի երթալ , եւ թէ որ տղայ ունենան՝ չթրփատել , որովհետեւ կին չունէին : Արշակ ալ հրաման հանեց որ նախարարներն ամենեւին անոնց կին չտան , թէ որ թրփատութիւնը թող տարու դաշինք չդնեն :

Գ Լ ՈՒ Ի Խ Գ

Ա Ր Տ Ա Շ Է Ս Ա

Է. Արտաշէս Տօրը կը յաջորդէ (115) ու Պարթեւաց թագաւորէն նախագահութիւնը կը յափշտակէ: Իր Տիգրան որդին իր ձեռքին տակ Հայոց թագաւոր կը դնէ: Ը. Իր արշաւանքներն ու յաղթութիւններն եւ իր մահը (90):

Է. ԱՐՏԱՇԷՍ Տօրն աթոռը նստելուն պէս՝ իր պզտիկուց ցուցուցած քաջութիւնն ու բարձր միտքը սկսաւ գործածել Հայոց փառքն աւելցընելու եւ անբութիւնն ընդարձակելու: Նախ եւ յառաջ Պարթեւաց Արշական թագաւորէն նախագահութիւնը յափշտակեց, վասն զի՝ ինչպէս վերը ըսինք, մինչեւ իր ժամանակը Հայոց Արշակունի թագաւորները Պարթեւաց թագաւորութեան երկրորդն էին. Արտաշէս՝ Պարթեւաց թագաւորն երկրորդ ըրաւ եւ ինքը նախագահ եղաւ, որուն Արշական չկրնալով դէմ դնել, յանձն առաւ. ուստի՝ իր որդին Տիգրանը Հայոց եւ Արշականը Պարթեւաց կամ Պարսից վրայ իր տակը թագաւոր դրաւ: Բոլոր ստակները միայն իր պատկերովն սկսաւ տպել, Պարսկաստանի մէջ ալ իրեն առանձին պալատ շինեց: Եւ որպէս զի Տիգրան զինուորական արուեստին մէջ աղէկ կրթուի, Հայկազանց Գեղամ իշխանին ցեղէն Վարաժ անունով մէկու մը յանձնեց որ անոր զէնք գործածել սորվեցընէ, ու զանիկա թագաւորական որսոց վրայ դրաւ, որուն անուամբն իր ցեղը Վարաժ՝ունիք անուանուեցաւ: Իր Արտաշամայ աղջիկն ալ Միհրդատին՝ Վրաց բզեշխին կնութեան տուաւ, ու կովկասու լեռներուն եւ Սեւ ծովին կողմերն իրեն յանձնեց:

Ը. Ատքն անհամար զօրք ժողովեց ու դէպի արեւմուտք քալեց, ուզելով բոլոր Եւրոպային տիրել: Բոլոր Փոքր Ասիային իշխաններու յաղթեց, եւ անոնց երկիրներն իր տակը նուաճեց, ուր քանի մը կռոց

արձաններ դանելով՝ Հայաստան խաւրեց որ Արմաւրի մէջ կանգնեն : Անկէ հազարաւոր նաւերով Յունաստան անցաւ եւ անոր մեծ մասին տիրեց . անկից ալ քանի մը կռոց արձաններ Հայաստան խաւրեց : Բայց երբ որ կ'ուզէր աւելի յառաջ երթալ , զօրացր մէջ խռովութիւն մը ծագեցաւ , ու սկսան իրար ջարդել : Արտաշէս աս խռովութենէ վախնալով՝ փախչելու ատեն , զօրքը զինքն ալ զարկին սպաննեցին , 25 տարի մեծամեծ յայլմութիւններով թագաւորելէն ետքը :

Յունաց քանի մը պատմագիրներն Արտաշէսին վրայ շատ գովութեամբ կը խօսին , ու կը հաստատեն թէ նաեւ Արիւսոս Աւագացոց թագաւորը բռնողն ասիկա բլլայ : Բայց աւելի հին պատմագիրներ կ'ըսեն թէ Աիւրոս Պարսից թագաւորը բռնեց զԱրիւսոս , որն որ աւելի հաւանական է . նախ որ աս ետրինը պատմողներէն ոմանք Արտաշէսէն շատ յառաջ են , եւ երկրորդ որ Աւագացոց թագաւորութիւնն արդէն Աղէքսանդր Մեծին ատենը վերցուած էր : Ասկից յայտնի է որ Արիւսոսը բռնողն Արտաշէսն էր ըսողներն , անոր Աւագացոց երկրին տիրելն եւ ուրիշ զանազան յաղթութիւնները պատմելու ատեն , շիտթելով՝ յառաջագոյն եղած պատերազմին (այսինքն Աիւրոսին Աւագացոց հետ ըրածին) պարագաներն Արտաշէսին պատերազմներուն տուած են : Բայց թէպէտ եւ Արտաշէսին զԱրիւսոս բռնելն ստոյգ չըլլայ , աս հաստատուն եւ ստոյգ է որ Աւագացոց բոլոր երկիրներուն տիրեց , մանաւանդ թէ բոլոր Յունաստանն իր տակն առաւ . ուստի իրաւամբ Յունաց պատմիչները զանիկա Աղէքսանդրէն վեհ եւ ամէն երեւելի աշխարհակալներէն զօրաւոր ու քաջ համարեցան : Բայց ափսոս որ անոր գործքերը պատմող պատմիչներուն միայն Քիւրանիին մէյմէկ պզտիկ կտորները Խորենացոյն մէջ կը յիշուին , իսկ բուն ամբողջ գրքերը դեռ գտնուած չեն :

Ասոնց մէջէն միայն Եւագարոսին խօսքը դնենք , որն որ Արտաշէսին զօրացը շատութեանը վրայ այսպէս կը գրէ . «Աղէքսանդրին Գարեհին հետ ըրած պատերազմն Արտաշէսինին քովը շատ պզտիկ է , որովհետեւ անոնց զօրքն հանած փոշիէն ցորեկուան լոյսը քիչ մ'ազօտացաւ . իսկ Արտաշէսին զօրքը նեա նետելով արեգական լոյսը խտւարեցուցին , ու կէս օրուան ատենը գիշերի դարձուցին : . . . Ասոր համար հեղեղները գետերուն ջուրը չկրցան շատցը-

նեւ, վասն զի իր զօրքը խմելով կը քիչցընէին, որոնց խիւն խմանալու համար հօրի եղաւ շափել, համբերն անկորելի բըլարուն, :

Աս զօրաց շատութիւնն այնչափ էր, որ Խորենացին կ'ըսէ թէ Արտաշէս հրաման տաւած էր որ իրենց բազմութեանը նշան մը թող տալու համար՝ բանակած տեղերնին ամեն զինուոր մէկ կողմ մը մշտմէկ քար նետէ, ասով ան տեղը ահագին բլուր մը կը ձեւանար :

Գ Լ ՈՒ Խ Գ

Տ Ի Գ Բ Ա Ն Բ

Թ. Տիգրան Հայաստան յարձակող Յունաց գէմ կ'երթայ եւ զանոնք կը վռնակ (90) : Ժ. Հօրն Հայաստան խաւրած կուռքերուն մեհեաններ կը շինէ. Վահուճիք քրմութենէ կը ձգէ ու Բաղրասունիները կուռք շարունընուն համար կը շարչարէ : ԺԱ. Միհրդատ՝ Տիգրանին բեռայրը Հռոմայեցւոց գէմ պատերազմի կ'ելլէ (88). Տիգրան ալ անոր օգնութեան զօրք կը խաւրէ : Հայերն Հռոմայեցւոց Մանիոս զօրապետին կը յաղթեն : Ասորիք Տիգրանն իրենց թագաւոր կ'ընարեն (88) : ԺԲ. Կոստաս ու Ղուկուղղոս Հռոմայեցի զօրապետները մեծ բանակով Միհրդատին գէմ կը խրկուին : Միհրդատ Կոստասին կը յաղթէ, եւ Կիւզիկոս քաղքին քով Ղուկուղղոսէն կը յաղթուի : Գայլ գետին քով Միհրդատ Ղուկուղղոսին կը յաղթէ : Միհրդատ իր զօրացն ապստամբութենէն եւ Հռոմայեցւոց յարձակումէն նեղը մոնելով՝ Տիգրանին կ'ապաւինի : ԺԳ. Ղուկուղղոս Տիգրանէն կը խնդրէ որ Միհրդատն իր ձեռքը տայ : Տիգրան Պաղամսիս քաղաքը կ'առնու եւ Կղէսպատրա թագուհին կը սպաննէ : Իր Պաղեստին բաժն աշաւանքն ու բերած Հրեայ գերիները : Վայկունին սպաննուիլը : Տիգրան չուզէր Միհրդատը Հռոմայեցւոց ձեռքը տալ եւ անոնց գէմ պատերազմի կը պատրաստուի : Տիգրանակերտին բռնէ եղած պատերազմը (70), Հայոց յաղթուիլն եւ քաղքին առնուիլը : Ասորիք Տիգրանէն կ'ապստամբին (67 — 63) : ԺԴ. Տիգրան Արտաշատ քաղքին մօտ Ղուկուղղոսին հետ կը զարնուի եւ անոր կը յաղթէ : Ղուկուղղոս Մծբին քաղաքը կ'առնու : ԺԵ. Տիգրան ու Միհրդատ Հռոմայեցւոց վրայ յաղթութիւններ կ'ընեն. Ղուկուղղոս կ'ուզէ Տիգրանին հետ նորէն զարնուիլ, զօրքը կ'ապստամբին եւ շէն ուղեր կ'առուիլ : ԺԶ. Հռոմայեցիք Ղուկուղղոսին տեղը Պամպոս

գործակեան չայց ու Միհրդատին զեմ կը խաւրեն՝ որն որ Միհրդատին հետ պարնուելով կը յազմէ : ԺԷ : Տեղբանին որդին հօրմէն կ'ապստամբի եւ Պամիկոսը Հայաստան կը խաւթէ : Տեղբան Պամիկոսին հետ հաշտութիւն կ'ընէ : Միհրդատին մահը : ԺԸ : Արատու Հռոմայեցւոց մեծ իշխանն Հայց ու Պարթեւաց վրայ կու գայ : ԺԹ : Երկու թագաւորը կրաստին զեմ գորք կը խաւրեն . Արատու կը յազմուի ու ձեռք կ'ընարով կը սպաննուի : Ի . Արատուս գործակեան Հայց ու Պարթեւաց զեմ կը գնէ . Տեղբան Բարզափրան՝ Ռշտունաց նախարարը Հռոմայեցւոց վրայ կը խրկէ : Բարզափրան Հռոմայեցւոց բանակը կը ցրուէ : Երուսաղէմ կ'առնու եւ Հրէից Հիւրիանոս բաժանայապետը վերի կը բռնէ : Տեղբանին մահը : ԻԱ . Բենդիկիոս գործակար Հայերն Ասորւոց երկրէն կը վճնակ . Հայերն ու Պարթեւները նորէն կը միանան եւ Հռոմայեցւոց կը յազմեն : Անանիոս Հայաստան կը մանկ ու Համշտո քաղաքը կ'առնու :

Խ . Տ Ի Գ Բ Ա Ն իր բրած մեծամեծ պատերազմներու վն ու յազմութիւններովը հայ ազգն աշխարհըիս երևելի ազգերուն կարգը խաթեց, ու Հայաստանը վերջին պայծառութեան հասցուց : Արդէն իր հօրը կենդանութեան ատենը Հայաստանի վրայ թագաւոր զրուած ըլլալով, երբ որ անոր մահը ընց եւ իմացաւ որ գորքը ցրուեր է ու Յոյները Հայաստանի վրայ կ'արշաւեն, նորէն գորք ժողովեց եւ անոնց վրայ գնաց, ու զարկաւ փախուց . եւ որպէս զի նորէն չապստամբին, Ասպազովկիան ու բոլոր Փոքր Ասիան իր քեռայրը Միհրդատին յանձնեց, եւ անոր քովը շատ գորք թող տալով՝ Հայաստան դարձաւ :

Տեղբանին վրայ արտաքին պատմադիրները շուրջովին տարբեր կը խօսին, որոնց մէջէն Ստրաբոն յայն մտանաւորին այսպէս կ'ըսէ : «Արտաշիասէն (զորն որ Սելեւկացիք Հայց վրայ կուսակալ դրած էին) ծնաւ Տեղբան, եւ ան տեղն՝ ուր որ բուն Հայաստան կը կոչուի՝ Ժառանգեց, որուն սահմանն է Մարտատան, Աղուանք, Վիքր ու մինչեւ Ազգիս եւ Եւբրինոս ծովին քովն եղող Ասպազովկիա կը հասնի : Զարիազրէն ծնաւ Արտանէս Ծափացի . . . զորն որ Տեղբանն նուածեց, ու բոլոր անոր երկիրներուն տիրեց : Աս Տեղբանին բախար շատ փոփոխութիւն ունեցաւ : Յա-

ուսջ Պարթեւաց քովը պատանդ էր, բայց ետքը Հայաստանին մէկ մասն անոնց տալով՝ ազատեցու ու Հայաստան դարձաւ, եւ զօրանալով՝ չէ թէ միայն տուածներն ետ առաւ, այլ նաեւ Պարթեւաց Նինուէ եւ Արբելլա գաւառներն ասպատակեց: Ատրպատականն ու Կորդուացիներն ալ իր տակն առաւ: Նաեւ Եփրատէն անդին անցնելով՝ Միջագետքին, Ասորոսց ու Փիւնիկէին տիրեց: Այնչափ բարձրացաւ որ քաղաք մ'ալ չիւնեց, որուն անունը Տիգրանակերտ դրաւ, եւ Յունաց աստուերկու քաղաքներէն՝ զորոնք ինքը քանդած էր, մարդիկներ բերաւ հոն բնակեցուց: Ասոր պէս կը պատմեն նաեւ Յուստինոս Գիրք ԼԸ. 3. եւ Ապոլինոս:

Ժ. Տիգրան Հայաստան հասածին պէս ուզեց նախ հօրը Յունաստանէն խաւրած կուռքերուն մեհեաններ շինել: Բայց Յոյն քուրմերն՝ որոնք կուռքերուն հետ Հայաստան եկած էին, շուզելով Հայաստանին ներսի կողմերն երթալ, ըսին թէ աստուածները հոս կ'ուզեն մնալ: Տիգրան ալ անոնց հաւանեցաւ, եւ Արամազդայ պատկերն Անիի մէջ, Աթենասինը՝ Թիլն աւանին մէջ, Արտեմիսինն Երիզա, Իփեստոսինը Բագայառինջ գեղն եւ Ափրոդիտէսինն Աշտիշաա Վահագնին (Հերակլէսին) քովը կանգնել տուաւ: Վահունիներուն՝ Հերակլէսին արձանն իրենց երկիրը տանելուն համար բարկանալով՝ քրմութենէ ձգեց ու գեղերնին ձեռքերնէն առաւ: Աս մեհեանները շինելէն ետքն, ամէն նախարարներուն հրամայեց որ կուռք յարգութիւն ընեն ու զոհ մատուցանեն. Բագրատունիք աս բանս յանձն չառին, անոր համար Ասուդ անունով իշխանի մը լեզուն կտրել տուաւ, որովհետեւ կուռքերն անարգեց: Բայց միւս Բագրատունիք յանձն առին զոհուած ու խողի միս ուտել, անոր համար Տիգրան զանոնք չչարչարեց, միայն զօրպատութեան պատիւը ձեռքերնէն առաւ:

ԺԱ. Աս ատեններս Միհրդատ Տիգրանին քեռայրն սկսած էր մեծամեծ յաղթութիւններ ընել եւ իր երկիրն ընդարձակել: Բայց երբ որ Կապադովկիային

ալ տիրեց եւ իր որդին Արիարաթն անոնց վրայ թագաւոր դրաւ, Կապադովկացիք Հռոմայեցիներէն օգնութիւն խնդրեցին, որոնք եկան Արիարաթը փախուցին ու Կապադովկացւոց թագաւորներուն ցեղէն Արիոբարզան անունով մէկն անոնց թագաւոր դրին: Աս պատճառաւ Միհրդատ Հռոմայեցւոց դէմ պատերազմի ելաւ, Տիգրանէն ալ օգնութիւն խնդրեց: Տիգրան անոր դունդ մը զօրք խաւրեց, որոնք երթալու առնն ճամբան Հռոմայեցւոց Մանիսս զօրապետին պատահեցան, որն որ 40,000 հետեւակով ու 4,000 ձիաւորով Միհրդատին վրայ կ'երթար. զորնուեցան անոր հետ ու 10,000 հոգի սպաննեցին, 300 ալ դերի բռնեցին ու Միհրդատին բերին, զորոնք Միհրդատ անվիջապէս ազատ թողուց: Իսկ Մանիսս՝ որն որ Պերդաման փախած էր, բռնուեցաւ, ու շատ խայտառակ տանջանքներէն ետքը՝ Միհրդատ բերնէն հալած ոսկի լեցընել տուաւ եւ այնպէս մեռցուց: Հռոմայեցիք Սիլզա զօրապետը բոլոր զօրաց վրայ սպարապետ դնելով՝ Միհրդատին դէմ խաւրեցին, որն որ քանի մը անգամ անոր հետ պատերազմելէն ետեւ, հաշտութիւն ըրաւ: Բայց Սիլզային մեռնելէն ետքը նորէն պատերազմ սկսաւ: Միհրդատ Տիգրանին հրեշտակ խաւրեց որ Կապադովկիայի վրայ երթայ. ան ալ գնաց բոլոր ան գաւառին տիրեց ու 20,000 մարդ առաւ Հայաստան բերաւ:

Այն տարիներն Ասորիք (Սելեւկացիք) իրենց մէջի խռովութիւններէն ձանձրացած՝ ուրիշ զօրաւոր թագաւորի մը ձեռքին տակ կ'ուզէին մտնել. ուստի շատ խորհուրդ ընելէն ետքը Տիգրանն իրենց թագաւոր ընտրեցին, որն որ գնաց իր զօրքովը բոլոր Ասորւոց թագաւորութեանը տիրեց: Հոն գտաւ Ասորւոց Բարշամինա շատուածին արձանն ու Հայաստան խաւրեց:

ԺԲ. Հռոմայեցւոց ծերակոյտը Կոստասս ու Ղուկուղոս զօրապետները մեծ բանակով Միհրդատին դէմ խաւրեց: Միհրդատ նախ Կոստասին վրայ գնաց

Եւ անոր զօրքին աղէկ ջարդ մը տաւ, զինքն ալ մնացած զօրքովը մինչեւ Քաղկեդոն փախցուց, եւ հոն նաւահանդատին մէջ Հռոմայեցւոյ 60 նաւը բռնեց, մէջինները բոլոր ջարդեց: Աս պատերազմը Հռոմայեցւոյ բանակը շատ տկարացուց, որովհետեւ 14,000 ի չտի մարդ ինկան 5,000 ալ գերի բռնուեցան: Ասկէ ետքը Միհրդատ Արիկոն քաղաքը պաշարեց. բոլոր որպէս զի Ղուկուղլոս չիմանայ, զիշեր տան քաղաքին վրայ գնաց: Ղուկուղլոս՝ որն որ նոյն տեղերուն մտէր, երբ որ Արիկոնին պաշարուիլը լսեց, շուտ մը 30,000 հետեւակով ու 2500 ձիաւորով քաղաքին օգնութեան հասաւ, եւ իմանալով որ Միհրդատ 300,000 զօրք ունի, միտքը դրաւ որ չզարնուի, այլ անոր բանակին կերակուրը կտրելով՝ նեղը ձգէ: Երբ որ իր բանակը հեռուանց տեսնուեցաւ, Միհրդատայ զօրքը զանիկա քաղաքացւոյ ցուցնելով՝ ըսին թէ անիկա Հայոց ու Մարաց զօրքն է, զորոնք Տիգրան մեզի օգնութեան խաւրեց. ասով քաղաքացիք աւելի եւս զարհուրած ինչ ընելիքնին չէին զիտեր: Բայց Արքեղայոս՝ Միհրդատին զօրապետներէն մէկը գաղտուկ Հռոմայեցւոյ կողմն բլլալով՝ Գեմնակս անունով մարդ մը խաւրեց ու քաղաքացւոյ իմացուց որ ան բանակը Ղուկուղլոսին բանակն է. ասով քաղաքացիք հոգի առին եւ սկսան քաջութեամբ դէմ դնել:

Երբ որ այսպէս պաշարումն երկնցաւ, իրօք Միհրդատին զօրաց կերակուրը պահսեցաւ. ուստի Ղուկուղլոսին բերդ մը պաշարելու զբաղած տանըր, յարմար տանն դատաւ, ու բոլոր ձիաւորները խաւրեց որ կերակուր դանեն: Ղուկուղլոս աս բանս իմանալուն պէս, անոնց վրայ յարձակեցաւ, շատերը ջարդեց, շատ ալ գերի բռնեց: Ասոր վրայ Միհրդատ ստիպուեցաւ ետ քաշուիլ, ուստի ինքը նաւ մտաւ ու զօրքն ալ ցամաքէն սկսան դէպ ի Պոնտոսին կողմերն երթալ, որոնց վրայ Ղուկուղլոս յարձակելով շատ մարդ մեռցուց: Անկէ յառաջ գնաց եւ սկսաւ Միհրդատին եր-

կիրեներն ասպատակել աստնց երեւելի պատերազմ մ'ընելու : Ասոր վրայ զօրքն սկսան տրանջել թէ ինչն պատերազմ չենք ըներ որ քաղաքներ սահանք եւ աւարենք . զորնք հանդարտեցրնելու համար Ղուկուզզոս այսպէս խօսեցաւ : «Անոր համար պատերազմը կ'ուշացրնեմ, որպէս զի անիկայ (Միհրդատ) նորէն զօրք ժողվէ ու մեր վրայ գայ, չէ թէ փախչի եւ անահագին անասպատներուն ու Ասիական լեռներուն ասպաւինի : Գարձեալ Արբիւնիայէն (Միհրդատին տեղէն) շատ հեռու չէ Հայաստան՝ ուր որ խաղաղ կը նստի Տիգրան Արքայից արքան, որուն զօրութիւնը շատ մեծ է . փասն զի Պարթեւաց ձեռքէն Ասիան առած է . Յունաց քաղաքներուն բնակիչները Մարաստան տարաւ . բոլոր Ասորոց ու Պաղեստինին աւերած է . Սելեւկացւոց թագաւորներն սպաննած՝ եւ աստնց կանայքն ու որդիքը դերի բրած է : Աս Տիգրանը Միհրդատին ազգականն ու փեսան է, որն որ անտարակոյս մեզի դէմ պատերազմ կը բանայ, թէ որ Միհրդատ անոր դիմելու ըլլայ, ան ատենը մենք շատ վտանգի մէջ կ'իյնանք : . . . Այսին զի մեզի շատ դիւրին է Առքիսացւոց ու Ասպաղովկացւոց հետ պատերազմիլ՝ որոնց շատ անգամ յաղթած ենք, քան թէ Հայոց ու Մարաց հետ» : Բայց որպէս զի զօրքն զբաղեցրնէ, դնաց Ամիսոս քաղաքը թէթեւ մը պաշարեց, ու Մուրենասը հոն թող տալով ինքը Միհրդատին վրայ դնաց, որն որ 40,000 հետեւակով ու 4,000 քաջ ձիաւորով նորէն իրեն դէմ կու գար : Հասան իրարու Գայլ դեպին քովն ու շիտակ դաշտի վրայ սկսան զարնուիլ, ուր Միհրդատին ձիաւորները Հռոմայեցւոց յաղթեցին ու ետ վռնեցին, եւ զՊոմպոնիոս (Պոմպէոս) աննց ձիաւորներուն զօրապետը սաստիկ վիրաւորած դերի բռնեցին : Ասոր վրայ Ղուկուզզոս վախցաւ շիտակ տեղ պատերազմելու, որովհետեւ Միհրդատին ձիաւորները շատ քաջ էին, անոր համար լեռնային տեղեր քաշուեցաւ : Միհրդատ

քանի մ'անգամ ալ Հոռոմայեցւոյ հետ զարնուեցաւ, բայց չկրցաւ բան մ'ընել. իր զօրացը մէջն ալ խոսվութիւն ելաւ, որոնք իշխաններէն ու զօրապետներէն շատերն սպաննեցին. աս խոսվութեան ատեն Հոռոմայեցիք ալ վրանին յարձակեցան : Միհրդատս նեղը մտնելով՝ սկսաւ փախչիլ, ու տեսնելով որ Հոռոմայեցիք իրեն շատ մօտիկներ են, իր գանձը կրսղ ջորիներէն մէկն անոնց առջեւը խաւրեց . հոռոմայեցի զօրքն ասիկա տեսածնուն պէս Միհրդատին ետեւէն իյնալը թողուցին եւ սկսան գանձն աւար առնուլ եւ իրարու հետ կռուիլ : Ասով Միհրդատ փախչելու ատեն ունենալով՝ Հայաստան եկաւ ու Տիգրանին ապաւինեցաւ : Բայց Տիգրան բարկանալով՝ եւ ոչ անոր երեսն ուղեց տեսնել :

ԺԳ. Ղուկուղըս երբ որ լսեց թէ Միհրդատ Տիգրանին քովն է, իր սագրն Ապպիանոս Անտիօք խաւրեց, որպէս զի Տիգրանէն խնդրէ որ Միհրդատն իր ձեռքը տայ : Աս ատեններս Աղէսպատրոս թագուհին՝ որն որ Պտղոմայիսի մէջ կը թագաւորէր, Ասորոց ու Փիւնիկեցւոց քանի մը քաղաքները Տիգրանէն ապաստմբեցուցած էր, անոր համար Տիգրան ալ գնաց զանոնք նուաճեց, Պտղոմայիս քաղաքն ալ առաւ ու Աղէսպատրան բռնեց սպաննեց, անկէ Պաղեստինի վրայ գնաց ու Հրէիցմէ շատ գերի առաւ, բայց Աղէքսանդրիա դշտն՝ որն որ նոյն ատենը Հրէից թագաւորութիւնը կը վարէր, շատ ընծաներ տալով Տիգրանն հաշտեցուց եւ ետ դարձուց : Տիգրան դարձաւ եկաւ Հայաստան ու Հրէից գերիներն Արմաւրի ու Աարդգէսին շինած աւանին մէջ տեղաւորելէն ետքը, Այլիուն բռնաւորին վրայ գնաց, որն որ իր զօրքովն ամուր լերանց վրայ ապաստանած՝ Հայաստան կը խռովէր : Տիգրան գնաց զանիկայ բուր իր մարդիկներովն սպաննեց, որուն անուամբն ան լեռները Այլիունիք կոչուեցան : Ապպիանոս աս միջոցիս Անտիօք գալով, երբ որ Տիգրանը հան չգտաւ,

Պատրիարքապետն ունենալով՝ ան կողմի քաղաքներն՝ անկէ ապրտամբեցուց եւ իր կողմը քաշեց, որոնց մէջ նաեւ Կորդուաց Զարուէն իշխանն ալ. «Վասն զի, կ'ըսէ Պուլտարքոս, Յոյներուն շատ ծանր կու գար Հայոց տակը մնալ, մանաւանդ առ թագաւորիս (Տիգրանին) ատենն, որն որ իր գեղեցիկ բախտովը հարտացած՝ կը կարծէր որ չէ թէ միայն ամէն բողձալու բաներն ունի, այլ ան ամէն բաներն իրեն համար միայն եղած են: Արովհետեւ, կ'ըսէ, քիչէ ստելով, քանի զնայ մեծցաւ ու զօրացաւ, եւ շատ ապգերու տիրեց: Պարթեւներն ալ՝ զորոնք ուրիշ ինքաւոր մը չկրցաւ յաղթել, յաղթեց ու նուաճեց. բոլոր Միջագետքը Յոյներով լեցուց, Կիլիկիայէն ու Կապադովկիայէն բերելով: Արանաբնակ Արարացիներուն ալ իրենց սովորութիւնը փոխել տուաւ, ու վրաններնէն հանելով՝ իրեն մօտ բնակեցուց եւ անոնց ձեռքովը վաճառականութիւն սկսաւ ընել: Ասոնցմէ զատ շատ թագաւորներ իրեն քովը կը ծառայէին, բայց անոնցմէ չորսը միշտ իր քովը կը պահէր իբրեւ թիկնապահ, որոնք անոր ձիով գացած ատենը քովէն քայելով կ'երթային, եւ գահը նստած կամ հրաման խաւրած ատենն առջեւը կը կենային»:

Տիգրան երբ որ Անտիոք դարձաւ, Ապպիանոս անոր առջեւն ելաւ եւ ըսաւ. Ղուկուղլոս կը խնդրէ որ Միհրդատն իր ձեռքը տաս, ապա թէ ոչ պատրաստ եղիր պատերազմի. որուն Տիգրան պատասխանեց թէ ամենեւին Միհրդատը չեմ տար, եւ թէ որ ասոր համար Հռոմայեցիք ինծի դէմ պատերազմի ելլեն, պատրաստ եմ դէմ դնելու: Աս պատասխանով Ղուկուղլոս ետ խաւրեց: Ան ատենը Ղուկուղլոս շուտ մը պատերազմի պատրաստուեցաւ. Տիգրան ալ Միհրդատին 10,000 ձիաւոր զօրք տուաւ ու Պոնտոսի կողմերը խաւրեց: Ղուկուղլոս իմանալով որ Միհրդատին ու Տիգրանին միտքը Կիլիկիայի վրայ յարձակիլ է, ինքն աճապարեց ու Ծոփաց գաւա-

ոին վրայէն Հայաստան մտաւ, եւ քանի մը փոքր պատերազմներ բնելէն ետքն՝ եկաւ Տիգրանակերտը սաստիկ պաշարեց, մտածելով որ անտարակոյս ասով Տիգրան կը ստիպուի իր վրայ գալու։ Բայց Միհրդատ միշտ հրեշտակներ խաւրելով Տիգրանը կը յորդորէր որ ամենեւին Ղուկուղղոսին հետ չզարնուի, այլ ջանայ որ ձիաւոր զօրքով անոր բանակին կերակուրը կտրէ։ Աս բանիս Տիգրան խկզբան հաւանեցաւ, բայց երբ որ իր զօրքը բոլոր ժողովուեցան, ալ շուղեց սպասել, այլ ելաւ Ղուկուղղոսին վրայ գնաց. իրմէ յառաջ 6,000 ձիաւոր խաւրեց Տիգրանակերտ, որոնք եկան Հռոմայեցւոց բանակը զարկին ձղբեցին ու քաղաքը մտան, եւ շատ պատուական բաներ առին Տիգրանին բերին։

Ղլուտարքոս կը պատմէ թէ Տիգրանին շատ զժուարը կու գար որ մինակ Ղուկուղղոսին հետ պիտ'որ պատերազմի, չէ թէ բոլոր Հռոմայեցւոց զօրապետներուն հետ մեկտեղ։ Եւ աս խորհուրդը հպարտութեան խորհուրդ չէր, կ'ըսէ, որովհետեւ հետը շատ թագաւորներ եւ անհամար հետեւակ ու ձիաւոր զօրք ունէր։ Աս զօրաց թիւն ինքն այսպէս կը դնէ. 150,000 հետեւակ զօրհաւոր, 20,000 աղեղնաւոր ու պարսաւոր, 55,000 ձիաւոր, որոնց 17,000ը զօրհաւոր էին. 35,000 ալ կամուրջ ձգող, ճամբայ բացող, անտառ կտրող, եւ ուրիշ աս տեսակ բաներու ծառայող. ամենը մեկտեղ 260,000։ Ասոնց մէջ կային գլխաւորաբար հայք, անոնցմէ զատ Մարք, Աբարացիք, Ադարեհացիք, Ասրպատականցիք, Վիրք, Աղուանք, Բարեւացիք եւ ուրիշ զանազան Հայոց տակն եղող ազգեր։ Ուրիշ պատմագիրներ աս զօրաց թիւն աւելի շատ կը դնեն. Ապպիանոս կը դնէ 250,000 հետեւակ ու 50,000 ձիաւոր, իսկ Եւտրոպիոս 600,000 զօրհաւոր ձիաւոր ու 100,000 սասնաւոր էր կ'ըսէ. բայց ասիկա շատ չափազանց կ'երեւայ։

Ղուկուղղոս Տիգրանին մտենային իմանալով՝ իր զօրապետներուն հետ խորհուրդ ըրաւ եւ Մուրենաս զօրապետը քիչ մը զօրքով Տիգրանակերտին քովը թող տալով, ինքը բոլոր բանակովն անոր դէմ գնաց։ Տիգրան Հռոմայեցւոց զօրքին քիչ-չարութիւնը տես-

նելով՝ բաւ, «Թէ որ ասոնք զեւսպան են, խիստ շատ են, իսկ եթէ պատերազմելու զօրք են, շատ քիչ են», աւ բսելով՝ զօրքը կարգի դնելու փոյթ չըբաւ եւ անհոգ կեցաւ : Ան ատենը Ղուկուղըս յանկարծ սկսաւ Հայոց վրայ յարձակիլ : Շփոթեցաւ Տիգրան, բայց շուտ մը զօրքը ձակատեցուց եւ սկսան երկու կողմ իրարու հետ զարնուիլ : Հոն Հայոց բանակը շկրցաւ Հռոմայեցւոց սաստիկ յարձակմանը դէմ դնել, եւ սկսաւ ցրուիլ ու ետ քաշուիլ . Տիգրան ալ ամուր տեղ մը քաշուեցաւ եւ սկսաւ ցրուած բանակը քովը ժողվել : Պլուտարքոս կ'ըսէ թէ աս պատերազմին մէջ Հայոց կողմանէ 100,000 էն աւելի հետեւակ ու ձիաւորներուն ալ մեծ մասը (25,000 էն աւելի) մեռան . իսկ Հռոմայեցւոց կողմանէ միայն հինգ հոգի մեռան 100 ալ վիրաւորեցան : Աս պատմութիւնը հին ժամանակուան առասպելներուն կարգը կրնայ գրուիլ : Ուրիշ պատմագիրները մեռածներուն թիւը միայն 5,000 կը դնեն :

Ղուկուղըս աս յաղթութենէն ետքը դարձաւ Տիգրանակերտը նորէն սաստիկ պաշարեց, ու մէջի Յունաց մատնութեամբն առաւ : Քաղքին մէջ շատ հարստութենէ : զատ 8,000 քանքար տպուած ստակ գտաւ : Հոն շատ յոյն դերասաններ ալ գտնուեցան՝ զօրոնք Տիգրան իր շինել տուած մեծ ու փառաւոր թէատրոնին համար զանազան կողմերէն բերել տուած էր . Ղուկուղըս զանոնք ալ առաւ իր յաղթութեան հանդէսներուն գործածելու համար : Անկէ Կորդուաց նահանգը գնաց, ու Չարուէն Կորդուաց նախարարին յուղարկաւորութեան հանդէսը շատ փառաւորութեամբ կատարեց . որովհետեւ աս Չարուէն Ապպիանոսին գրգռելովը Տիգրանէն ապստամբած ու Հռոմայեցւոց կողմն անցած էր, անոր համար Տիգրան զինքը մեռցրնել տուած էր :

Աս ատենս Սելեւկացիք Տիգրանէն ապստամբեցան, ու Ղուկուղըսին օգնութեամբն Անտիոքոս

Աօխացին իրենց թագաւոր դրին 18 կամ 14 տարի
Հայոց տակը մնալէն ետեւ :

ԹԳ. Ղուկուղզոս Կորդուաց գաւառէն ելելով
սկսաւ Հայաստանի սահմաններն սապատակել, որպէս
զէ զՏիգրան նորէն իրեն հետ զարնուելու ստիպե-
լը յուսար որ մէկ պատերազմաւ մ'ալ անոր զօրու-
թիւնը բոլորովին կը տկարացընէ եւ անկէ ետքը
կրնայ բոլոր Հայաստանին տիրել : Բայց երբ որ տեսաւ
որ Տիգրան իր վրայ չէգար, միտքը դրաւ որ երթայ
Արտաշատ մայրաքաղաքը պաշարէ. ուստի բոլոր բա-
նակովն սկսաւ Հայաստանին ներսի Կողմերն երթալ :
Ան ատենը Տիգրան ալ անոր դէմ ելաւ, եւ Արածանի
գետին մօտ անոր հասնելով բանակը դրաւ եւ սկսան
երկու կողմն ալ սաստիկ զարնուիլ : Իսկզբան Հռո-
մայեցւոց ձիաւորները Արաց դնդին վրայ յարձակե-
ցան, որն որ երկայն ատեն քաջութեամբ անոնց դէմ
դրաւ, բայց երբ որ հետեւակներն ալ վրայ հասան,
ալ չկրցաւ դիմանալ եւ սկսաւ ցրուիլ ու փախչիլ .
Հռոմայեցւոց ձիաւորներն անոնց ետեւէն ինկած կը
հալածէին : Տիգրան առ բանս տեսածին պէս, իր քաջ
ձիաւորները Հռոմայեցւոց վրայ խաւրեց . Ղուկուղզոս
ասկէ վախնալով շուտ մ'իր ձիաւորներուն նշան բրաւ
որ ետ դառնան ու Հայոց ձիաւորներուն հետ զար-
նուին : Աս ձիաւորաց կռուին մէջ Հռոմայեցւոց կողմը
տկարանալու սկսաւ : Ղուկուղզոս շուտ մը վահանաւոր
զօրաց գունդն առած ձիաւորներուն օգնութեան հա-
սաւ : Հայոց ձիաւորներն անմիջապէս ետ դարձան ու
փախչիլ ձեւացուցին . եւ երբ որ Հռոմայեցիք սկսան
անոնց ետեւէն իյնալ ու հալածել, Հայերն իրենց
սաստիկ նետերը դէպ ի ետեւնին Հռոմայեցւոց վրայ
տեղալով անոնցմէ շատերն սպաննեցին, շատերն ալ
չարաչար վիրաւորեցին, իրենք առանց մնաս մը կրե-
լու : Ասան զի, ինչպէս Դիոն Կասսիոս կը պատմէ,
Հայոց ձիաւորները Հռոմայեցւոց ձիաւորներէն քաջ
էին, եւ անոնց նետերն այնպէս սաստիկ կը վիրաւո-

րէին որ զարնուողները կամ անմիջապէս կը մեռնէին, կամ ամենեւին չէին բժշկուեր: Որովհետեւ անոնց ծայրերը կրկին էին, մէկը հաստատուն ու բունին վրայ, իսկ երկրորդը շարժական եւ առաջին սրաքին վրայ մտցուած. ուստի թէ որ նետը վէրքէն հանուելու ըլլար, աս շարժական սրաքը մարմնոյն մէջը կը մնար, ու վէրքն ամենեւին չէր բժշկուեր: Ղուկուղղոս տեսնելով որ իր բանակը շատ տկարացաւ, միանգամայն կերակուրն ալ պակսեցաւ, ստիպուեցաւ մնացած զօրքովն ետ քաշուիլ, եւ եկաւ Միջագետքին Մծբին քաղաքը պաշարեց: Տիգրան թէպէտ եւ աս բանս իմացաւ, բայց քաղքին օգնութեան հասնելու փոյթ չըրաւ. վասն զի սաստիկ ամուր եւ գրեթէ անառիկ քաղաք մին էր, զորն որ երկու սաստիկ լայն պարիսպ ու խորունկ փոս մը կը պատէր: Ղուկուղղոս բոլոր ամառն աշխատեցաւ, զանազան հնարքներ բանեցուց, բայց չկրցաւ բան մ'ընել. անոր համար քաղաքացիք սկսան անհոգ կենալ: Բայց ձմերուան սկիզբը, գիշեր մը՝ երբ որ երկինք թուխ ամպերով պատած՝ սաստիկ անձրեւ կը թափէր ու կ'որոտար, պարսպին պահապաններն ալ տներու մէջ քաշուած էին, իր զօրքին հրամայեց որ սանդուխները պարսպին մօտեցնեն ու վեր ելնեն. ասանկով առաջին պարսպին տիրեց: Իսկ Գուր Տիգրանին եղբայրն՝ որն որ Մծբին քաղաքապետն էր, Ղուկուղղոսէն երդում առնելով որ իրեն չմնասէ, անձնատուր եղաւ, ու բոլոր քաղաքն անոր ձեռքը տուաւ:

Պլուտարքոս՝ որն որ միշտ կը ջանայ զՂուկուղղոս յաղթող ցուցնել եւ անոր յաղթուիլը ծածկել, աս պատերազմին պատմութիւնն ալ բոլորովին տարբեր կը պատմէ: Ղուկուղղոս, կ'ըսէ, Տիգրանին բանակին հետ զարնուեցաւ, եւ դիւրաւ մը յաղթեց ու փախուց, եւ անոր ետեւէն ինկած սկսաւ հալածել. բայց երբ որ Հայաստանին ներսի կողմերը գնաց, ուր որ մեծամեծ անտառներով ծածկուած էին, ամէն տեղ ձիւնով պատած ու ճամբաները նեղ, իր զօրքն սկսան սաստիկ նեղութիւն քաշել, անոր համար

խոսված թիւն հանեցին եւ շուգեցին ալ յառաջ երթալ . ուստի ինքն ալ ստիպուեցաւ ետ դառնալ : Նոյնպէս Մծբինին համար կ'ըսէ թէ դիւրաւ ու յիշ ժամանակուան մէջ առնուեցաւ :

Ժե . Բայց Ղուկուզըս Մծբինն առնելու զբաղած ատենը Տիգրան Հայաստանին արեւմտեան կողմերն երթալով՝ Հռոմայեցւոց տիրած շատ երկիրները նորէն առաւ , եւ Փաննիոս զօրապետին զօրքը զարկաւ . Միհրդատն ալ Պոնտոսի կողմերը խաւրեց , որն որ դնաց Փոքր Հայաստանի ու Պոնտոսի մէջ գտնուող Հռոմայեցիներուն շատերը՝ յանկարծ վրանին յարձակելով ջարդեց , շատերն ալ պատերազմով յաղթեց ու հալածեց , եւ շատ գաւառներու տիրեց : Ան կողմերը պատահեցաւ Հռոմայեցւոց Փաբիոս զօրապետին՝ զորն որ Ղուկուզըս Պոնտոսը պահպանելու համար թող տուած էր . զարնուեցաւ անոր հետ ու զօրացը մեծ մասը ջարդեց . բայց խառնուրդին ատենը Միհրդատին ծունկը պարսաքարով մը՝ աչքին քսվել ալ նետով մը վիրաւորուելով , իր զօրքը պատերազմը դադրեցուց . այսպէսով մնացած Հռոմայեցիներն ազատեցան , Փաբիոս ալ կրցաւ փախչել : Միհրդատին վերքերն Ակարացի բժիշկներուն զարմանովը շուտ մը բժշկուելով , նորէն բանակը կարգի դրաւ ու Տրիարիոս զօրապետին դէմ դնաց , որն որ Փաբիոսին տեղն անցնելով՝ նոր զօրքով իր վրայ կու գար : Ղուկուզըս սս ժամանակս իր զօրացն ապստամբութեանը պատճառաւ , Աորդուաց գաւառին մէջ անգործ կեցած է . բայց երբ որ լսեց թէ Տիգրան շատ տեղեր իրենց ձեռքէն առեր է , Միհրդատ ալ Փաբիոսին յաղթեր՝ Տրիարիոսին դէմ կ'երթայ , յորդորեց իր զօրքն ու Հռոմայեցւոց բանակին օգնութեան հասնելու աճապարեց : Տրիարիոս լսելուն պէս որ Ղուկուզըս իրեն մօտիկցեր է , ուզեց փութալ ու Միհրդատին հետ զարնուիլ , որպէս զի յաղթութեան փառքը միայն իրեն ըլլայ . ուստի դեռ չըւսցած անոր վրայ յարձակեցաւ : Պատերազմն եր-

կայն ատեն հաւասար մնաց, վասն զի երկու կողմն
 ալ քաջութեամբ կը կռուէին. բայց ետքը Միհրդատին
 զօրքը սաստիկ յարձակում մ'ընելով՝ յաղթող
 եղաւ ու Հռոմայեցւոց բանակը ցիր ու ցան բրաւ
 անոնցմէ մէկ մասը աղմուտ փոսի մը մէջ մղեց, ուր
 անօթիութենէ շատերը մեռան. միւս մասին ալ
 ետեւէն ինկած սաստիկ կը հալածէր: Աս միջոցիս
 հռոմայեցի հարիւրապետ մը՝ որն որ եղանակաւ մը
 Միհրդատին բանակը մտած էր, եւ նոյն ատենն անոր
 քովէն կ'երթար, իր սրովն անոր ազգրին ուժով մը
 զարկաւ ու սաստիկ վիրաւորեց: Շուտ մը վրայ հա-
 սան Միհրդատին քովինները, հարիւրապետն սպան-
 նեցին, եւ զինքն առին բանակին ետեւի կողմը տա-
 րին. զօրաց ալ հրաման խաւրեցին որ ետ դառնան:
 Զօրքը թագաւորին վիրաւորուիլն իմանալուն պէս
 արտամած ու խռոված եկան անոր շորս կողմը ժողվուե-
 ցան. բայց Տիմոթէոս բժիշկը շուտ մը վէրքին արիւնը
 դադրեցրնելով՝ ամենուն սիրտը հանդարտեցուց: Երբ
 որ Միհրդատ հանգչեցաւ, զօրքը պատերազմէն ետ
 դարձնողները սաստիկ յանդիմանեց, եւ անմիջապէս
 Հռոմայեցւոց բանակին տեղը քալեց՝ զորն որ անոնք
 թող տուած փախած էին: Հոն 7,000 մեռածներուն
 մէջ գտնուեցաւ 2½ հազարապետ եւ 150 հարիւրա-
 պետ. այսչափ իշխան մէկէն Հռոմայեցիք երբեք
 կորսնցուցած չէին: Քիչ մը ետքը Ղուկուղոս վրայ
 հասաւ, եւ եղածն իմանալով շատ արտմեցաւ. եւ
 լուր առնելով որ Տիգրան ալ շատ զօրքով դէպ ի նոյն
 կողմերը կու գայ, միտքը դբաւ որ անիկա Միհրդատին
 հետ չմիացած՝ զիմացն երթայ ու զարնուի: Բայց իր
 զօրացը մէջէն Փեմբրիանեան կամ Վաղերեան գնդին
 զինուորներն՝ որոնք զինուորութենէ ազատած եւ ետքը
 նորէն բռնուած էին, ապստամբեցան եւ սկսան ցրուիլ:
 Ղուկուղոս շատ ջանաց զանոնք համոզելու որ քիչ
 մ'ալ կենան, բայց ճար չեղաւ. ետքը միւս զօրաց
 ազաչելովը խօսք տուին որ ան ամսուն ալ կը մնան,

բայց պահանջեցին որ ձմերուան սկիզբը զինուորու-
թեանէ ազատին ու տեղերնին երթան: Ղուկուղղոս
յանձն առաւ ու զանոնք քովը պահէր, բայց պատե-
րազմի չհաննեց: Աւստի Տիգրան առանց արգելքի
նորէն Ապագոզովիան առաւ. Միհրդատ ալ իր եր-
կիրներուն սիրեց եւ սկսաւ նորէն մեծնալ: Աս միջո-
ցիս Միհրդատ Մարաց թագաւորն՝ որն որ Տիգրանին
փեսան եւ անոր զօրացը մէկ մասին զօրավարն էր,
ասդին անդին ցրուած Հռոմայեցի գնդերուն վրայ
յարձակելով՝ շատ մարդ ջարդեց:

Ժ.Զ. Աս ամէն դժբախտութիւնները Հռոմ լած-
նուն պէս շատ այլայլեցան, ու Աիկերոն ժողովրդեան
գեղեցիկ ու զօրաւոր ճառ մը խօսեցաւ, որուն մէջ աս
պատերազմին մեծութիւնը ցուցնելէն ետքը, յոր-
դորեց ու համոզեց որ պէտք է զՂուկուղղոս փոխել,
եւ անոր տեղը Պոմպէոսը զօրապետ դնել: Ասոր վրայ
Ծերակոյտն անմիջապէս հրովարտակ գրեց ու զՊոմ-
պէոս ամէն ասիական զօրաց վրայ զօրավար բրաւ: Աս
հրովարտակը Պոմպէոս առածին պէս, ժողովեց բոլոր
զօրքն ու Միհրդատին վրայ գնաց, որն որ ամուր
լերան մը վրայ բանակը դրած կեցած էր: Երբ որ զա-
նիկա ան ամուր տեղէն հանելու հնարք մը կը փնտռէր,
Միհրդատ ինքն իրեն հոնկից քաշուեցաւ, որովհետեւ
անջուր տեղ մ'ըլլալով՝ զօրքը շատ կը նեղուէին:
Պոմպէոս անմիջապէս գնաց նոյն տեղը բռնեց, եւ
հոն եղող ծաղիկներէն ու պարարտ խոտէն մակաբե-
րելով որ լերան մէջը շատ աղբիւրներ պիտ'որ ըլլան,
հորեր փորել տուաւ եւ ստուգիւ առատ ջուր գտաւ:
Ետքը գնաց Միհրդատին բանակը պաշարեց. բայց
անիկայ պաշարման քառասունուհինգերորդ օրը բոլոր
զօրքովը փախաւ. Պոմպէոս ալ ետեւէն ինկաւ, ու
գիշեր ատեն անոր հասնելով բանակը դրաւ: Միհրդա-
տին զօրքն անմիջապէս Հռոմայեցւոց դիմացը ճակա-
տեցան ու պատրաստ կեցան. եւ որովհետեւ լուսինը
գիշերը լուսաւորած էր, առտուան չսպասեցին, այլ

սկսան զարնուիլ : Քիչ մը ասէն պատերազմէլէն ետ-
քը , Հռոմայեցիք Միհրդատին բանակը սաստիկ յար-
ձակմամբ մը ցրուեցին ու փախցուցին . Միհրդատ ալ
800 ձիաւորով փախաւ , եւ եկաւ Տիգրանին ապաւի-
նեցաւ : Բայց Տիգրան զինքը շընդունելով՝ Արլքիս
փախաւ :

Պուտարբոս (Ի վարս Պոմպէոսի) կը պատմէ թէ՛ որով-
հետեւ նոյն գիշերը լուսինը Հռոմայեցւոց ետեւի կողմն էր ,
եւ մտնելու ալ մօտիկցած էր , անոնց շուքերն երկըննալով՝
մինչեւ թշնամեաց բանակը կը հասնէին : Ասկէ Միհրդատին
զօրքը խաբուեցան եւ նետով պատերազմելու տեղ , Հռո-
մայեցիք մօտ եկած կարծելով՝ նիզակնին անոնց շուքն
վրայ սկսան նետել , եւ այսպէս պարապ տեղ կ'աշխատէին :

ԺԻ . Պոմպէոս աս պատերազմէն ետքը Տիգրա-
նին որդւոյն Տիգրան Փոքրին առաջնորդութեամբը
Հայաստան մտաւ , ու քանի մը քաղաքներ առաւ :
Աս Տիգրան Փոքրն իր հօրմէն ապստամբած ու Պար-
թեւաց Արտաշէս (Արշէզ) թագաւորին դիմած եւ
անոր հետ մէկտեղ հօրը դէմ պատերազմի ելած էր .
բայց երբ որ յաղթուեցաւ , նեղը մտնելով՝ Պոմ-
պէոսին քովն եկաւ ու զանիկա Հայաստան խոթեց :
Տիգրան չուզեց Պոմպէոսին հետ պատերազմիլ , եւ
որովհետեւ անոր քաղցր բնութիւնն ու հեզութիւնը
լսած էր , անձամբ անոր բանակն եկաւ խաղաղութեան
դաշինք դնելու համար : Պոմպէոս պատուոյ համար
անոր դիմացը հազարապետներ ու ձիաւորաց մեծեր
խաւրեց , որոնք առին Տիգրանն իրեն բերին : Պոմպէոս
զանիկա իր քովը գահը նստեցուց , Տիգրան Փոքրն
ալ միւս կողմը : Հոն հաշտութեան վրայ խօսելով ,
Տիգրան Եփրատին անդիի կողմի երկիրները , Աիւլի-
կիային ու Աապադովկիային մէկ մասն ու Գաղատիան
Հռոմայեցւոց թողուց : Ետքը Պոմպէոս զինքը սեղանի
հրաւիրեց եւ հոն որդին իրեն հետ հաշտեցուց , ու
խնդրեց որ զանիկա Ծոփաց գաւառին թագաւոր եւ
իրեն յաջորդ ընէ : Տիգրան աս խնդիրքն ընդունեցաւ .

Պոմպէտին ալ 6,000 քանքար պարզեւ ըրաւ, սակե-
րաս ամէն մէկ հազարապեաին տասնական հազար
զրամ կամ մէյակէ քանքար, հարիւրապետներուն հա-
զաւ սկան զրամ, իսկ ամէն մէկ զօրքին կէս կէս մնաս
կա՛ր 150 տկան զրամ բաշխեց:

Ըս Տիգրանը, կ'ըսէ Ապպիանոս (Վասն Պատերազ .
Միհր.) իր երեք որդիներէն երկուքը մեռցուցած էր, առա-
ջինն՝ որն որ իրմէ ապստամբեցաւ, պատերազմի մէջ. իսկ
երկրորդն՝ որսի մէջ իր ձիէն ինկած ատեն իրեն չօղնելուն՝
ու թագը զլնէն առնելով իր գլուխը դնելուն համար,
Երրորդն ալ՝ որն որ Տիգրան Փօքրն էր, հօրը ցուցուցած
սիրոյն համար անկէ պակի պարզեւ առած էր. բայց քիչ
մը ետքն ան ալ ապստամբեցաւ:

Պոմպէտոս Տիգրանին հետ հաշտուելէն ետքը,
թող տուաւ Միհրդատն ու բոլոր զօրքովն Ասորւոց եւ
Արաբացւոց կողմը գնաց: Միհրդատ երբ որ կը սկսէր
նոր յազթութիւններով իր երկիրներուն տիրել, իր
զօրապետներուն շատերն ապստամբեցան. իր որդին
Փառնակէս ալ իրեն դէմ ելաւ ու թագաւորեց, եւ
իր կողմն անցնող զօրքով հօրը հետ սկսաւ պատե-
րազմիլ: Միհրդատ նեղը մտնելով՝ բերդի մը մէջ փա-
խաւ. եկան որդւոյն զօրքն սկսան բերդին հետ կռուիլ
ու մէկ կողմէն ներս մտնել: Տեսաւ Միհրդատ որ որ-
դւոյն ձեռքէն ապատելու ճար չկայ, ուզեց ազա-
տութեամբ մեռնիլ, ուստի բոլոր ընտանեացը թոյն
խմցրնելէն ետքն՝ ինքն ալ խմեց, եւ սրով ալ
զինքը վիրաւորեց ու մեռաւ: Պոմպէտոս Միհրդատին
մահը լսելուն պէս շատ ուրախացաւ, ու բոլոր զօ-
րացն աւետիս տուաւ, եւ քիչ մը ետքն ինքը Հռոմ
երթալով՝ իր տեղը Գաբիանոս զօրապետն Ասորւոց
կողմի բանակին վրայ դրուեցաւ:

Միհրդատին մահուանէ ետքը Տիգրան նորէն
Հռոմայեցւոց դէմ զէնք առաւ եւ Ասորւոց կողմը
Գաբիանոսին վրայ քալեց: Բայց Գաբիանոս Տիգ-
րանին հետ զարնուելու չհամարձակելով՝ Եփրատին

քովէն քաշուեցաւ ու գէպ ի Եգիպտոս գնաց, եւ անոր հետ գաղտուկ հաշտութիւն ընելով՝ Փնջր Միհրդատը՝ Միհրդատին որդին՝ զգին որ Հռոմայեցիք բռնած էին, անոր տուաւ:

ԺԼ. Աստեանները Հռոմայեցւոց ընդարձակ տէրութիւնն երեք մեծ իշխաններ, այսինքն Յուլիոս Կեսար, Պոմպէոս ու Կրասոս մէջերնին բաժնեցին: Ասոնց մէջէն Կրասոս՝ ագահ մարդ մ'ըլլալով, արեւելեան կողմերն առաւ, եւ միտքը դրաւ որ Հայոց ու Պարթեւաց վրայ արշաւէ եւ անոնց երկրին հարուստ աւարներովը հարստանայ. եւ աս բանիս, ինչպէս որ Պլուտարքոս կ'ըսէ, Ղուկուղոսին գէնքին ան կողմերն ունեցած յաջողութենէն՝ շատ կը յորդորուէր, կարծելով թէ արեւելեան աղգաց յաղթելը շատ դիւրին է. բայց իրօք տեսաւ որ, կ'ըսէ Պլուտարքոս, Ղուկուղոսին ըրած յաղթութիւնները չէ թէ իր թշնամիներուն վատութենէն էր, այլ իր արտաքոյ կարգի պատերազմական հմտութենէն:

Կրասոս անհամար զօրքով եկաւ նախ Ասորիք ու շատ քաղաքներու տիրեց. անկէ գնաց Երուսաղէմն առաւ ու տաճարին բոլոր գանձերն ու հարստութիւնները կողոպտեց: Հոն Ասիայի կողմերէն ալ բիրուոր զօրք ժողվելով՝ ահագին զօրութեամբ Պարթեւաց վրայ քալեց: Տիգրան Հայոց թագաւորը, իսկզբան կ'ուզէր Հռոմայեցւոց կողմը բռնել եւ զօրքով ալ անոնց օգնութիւն ընել. բայց երբ որ իմացաւ որ Կրասոս կ'ուզէ իր երկիրներուն ալ տիրել, Պարթեւաց Արշէզ (Արտաշէս) թագաւորին հետ հաշտութիւն ըրաւ, նախագահութիւնը նորէն անոր տալով, եւ այնպէս երկուքը միաբան զօրքերնին ժողված՝ Կրասոսին դէմ ելան: Արշէզ բոլոր զօրաց վրայ սպարապետ դրաւ Սուրէն քաջ իշխանը, Պարթեւաց թագաւորներուն թագադիրը:

ԺԹ. Կրասոսին բանակն Ասորոց անապատէն սկսաւ յառաջ երթալ, եւ գիշերանց մինչեւ Բաղիս

գետին եզերքը հասա : Զօրապետներն իրեն խորհարդ տուին որ նոյն գիշերը հոն զօրքը հանգչեցրնէ, եւ երկորդ օրը թշնամեաց բռնակն աղէկ մը լրտեսելն ետքն անոնց վրայ երթայ : Արասոս անոնց շանսաց, այլ անմիջապէս զօրքը գետէն անգին անցուց, եւ քիչ մ'ալ յառաջ գացածին պէս, Պարթեւաց բանակը տեսնուեցաւ . բայց անոնց զօրքը շատ քիչ կ'երեւային, որովհետեւ Սուրէն զանոնք ետելէ ետել շարած ըլլալով, դիմացէն նայողը քիչ մը բան կը տեսնէր : Երբ որ բանակներն իրարու մօտեցան, Պարթեւները սաստիկ աղաղակաւ Հռոմայեցւոց վրայ յարձակեցան եւ սկսան նիզակով պատերազմիլ . բայց տեսնելով որ անոնց դնդերը սաստիկ խիտ կեցած ըլլալով՝ չեն կրնար նիզակով անոնց փնաս հասցընել, ետ քաշուեցան ու կամացուկ մ'անոնց չորս կողմը պաշարելով՝ սկսան ամէն կողմէն իրենց մահաբեր նետերն անոնց վրայ թափել, որով Հռոմայեցւոց մեծ կոտորած ըրին : Արասոսին զօրքը քանի մ'անգամ Հայոց ու Պարթեւաց վրայ յարձակում ըրաւ, բայց նեղը մտնելով՝ ետ քաշուեցաւ, որովհետեւ աս երկու ազգաց ձիաւորները մասնաւոր կրթութիւն մ'ունէին որ վրանին յարձակում եղած ատեն՝ անմիջապէս կռնակներն կը դարձրնէին ու փախչիլ կը ձեւացընէին, եւ իրենց սաստիկ նետերը դէպ ի ետելներն նետելով՝ զիրենք հալածողները կը սպաննէին . աս ճարտարութիւնն հոս Արասոսին զօրքին դէմ ալ գործածեցին եւ անոնց մեծ ջարդ մը տուին :

Արասոս տեսնելով որ թշնամեաց նետերուն դէմ դնելն անկարելի է, զօրքին հրաման տուաւ որ որչափ որ կրնան՝ իրենց վահաններովն իրենք զիրենք պաշտպանին, մինչեւ որ Հայոց ու Պարթեւաց նետերը լմրնայ, եւ անկէ ետքն իրենք անոնց վրայ յարձակում ընեն : Բայց երբ որ տեսաւ որ թշնամին իր հետն անհամար ուղտերով նետ ունի, եւ որուն որ կը պակսի՝ անկէ կ'առնու, ուրիշ՝ ճար

չդանելով, իր քաջ որդւոյն՝ Պոպղէս Կրասոսին հրաման խաւրեց որ ամենայն զօրութեամբ ինչն ամեաց հետ զարնուի: Արի երիտասարդն անմիջապէս հօրը հրամանին հնազանդեցաւ, եւ իր դումարտակովը Պարթեւեաց վրայ յարձակեցաւ: Անոնք ուղեւով զինքը Հռոմայեցւոց բուն բանակէն բաժնել, եւ զարձան եւ սկսան փախչիլ. Պոպղէոս ալ սկսու զանոնք հալածելով յառաջ երթալ. բայց յանկարծ Պարթեւեւերն ու Հայերն ետ զարձան ու Հռոմայեցւոց աղէկ ջարդ մը տուին, Պոպղէոսն ալ վիրաւորեցին, որն որ տեսնելով՝ որ թշնամեաց ձեռքը պիտ'որ իյնայ, իր զինակրին հրաման տուաւ որ զինքն սպաննէ. իր քովն եղող իշխաններն ու զօրապետներն ալ իրենք զիրենք մեռցուցին: Պարթեւեւերը Պոպղէոսին գունդը բոլորովին ջնջելէն ետքն, անոր գլուխը կտրեցին ու հետերնին տուած Կրասոսին վրայ քալեցին, եւ կտրած գլուխը Հռոմայեցւոց ցուցուցին: Ասով անոնց մէջ սաստիկ լքում ու վհատութիւն մ'ինկաւ: Կրասոս շատ զօրաւոր ու քաջալերիչ խօսքերով անոնց քիչ մը սիրտ տուաւ, եւ կարգի դնելով՝ նորէն թշնամւոյն հետ սկսաւ զարնուիլ. բայց անոնց ձիաւորներուն նետերէն նորէն ջարդ մը կերաւ, մինչեւ որ գիշերը վրայ հասնելով պատերազմը դադրեցաւ: Կրասոս տեսաւ որ իր բանակը սաստիկ տկարացած՝ ալ պատերազմ ընելու կարողութիւն չունի, անոր համար նոյն գիշերն ետ քաշուեցաւ ու Կարրաս (Խառան) քաղաքն եկաւ:

Սուրէն ուղեւով Կրասոսը բռնել, Կարրաս մարդ խաւրեց, որպէս զի իմանայ որ անիկա հոն է թէ չէ, որոնք եկան քաղաքացւոց ըսին թէ Սուրէն կ'ուզէ Կրասոսին հետ խօսիլ ու հաշտութիւն ընել: Կրասոս աս բանիս վրայ շատ ուրախացաւ, եւ ատեն որոշեց որ իրարու հետ տեսնուին ու խօսակցին: Աս խորամանկութեամբ Սուրէն ստուգեց որ Կրասոս հոն է, եւ անմիջապէս բոլոր զօրքն հոն բերաւ ու քաղաքը

պաշարելով՝ Հռոմայեցիներուն հրամայեց որ Արասոսն ու Կասսիոս մեծ զօրապետը կապած իր ձեռքը տան : Հռոմայեցիք ասոր վրայ շատ պլայլեցան ու մտքերնին դրին որ գիշերանց փախչին, որովհետեւ Պարթեւները գիշեր ատեն պատերազմելու սովորութիւն չունէին : Բայց իրենց առաջնորդին խարդախութեամբը սխալ ծամբաներէն երթալով՝ մինչեւ առաու Պարթեւաց բանակին մօտերը պաշտեցան, եւ առաու ըլլալուն պէս Պարթեւներն ու Հայերը վրանին հասան : Սուրէն Հռոմայեցւոց մօտիկնալով՝ խոտացաւ Արասոսին հետ հաշտութիւն ընել . ան ատեն զօրքը զԱրասոս ստիպեցին որ երթայ անոր հետ հաշտութեան վրայ խօսի . անիկայ Պարթեւաց խարդախութիւնն իմացած ըլլալով՝ շէր ուզեր երթալ, բայց ետքն ստիպուելով՝ քանի մ'իշխան հետն առած դէպ ի Պարթեւաց բանակն սկսաւ յառաջանալ : Սուրէն երբ որ տեսաւ որ Արասոս ստքով կուգայ, անոր փառաւոր զարդարուած ձի մը խաւրեց : Պարթեւ ծառաներն եկան զանիկա հեծցուցին ու ձին վազընելով սկսան տանիլ : Հոկտախանոս ու Պետրոսնիոս՝ Արասոսին քովն եղող մեծ զօրապետները ձին բռնեցին եւ կ'ուզէին արգելուլ, Պարթեւներէն մէկն ալ սպաննեցին . ասով մէջերնին կռիւ մը բացուեցաւ ու Պարթեւները բոլոր Արասոսին քովի մարդիկները զարկին սպաննեցին, որոնցմէ մէկն ալ Արասոսը մեռցուց ու գլուխն եւ աջ ձեռքը կտրեց Սուրէնին բերաւ :

Արասոսին աս արշաւանքին ու պատերազմին մէջ Հռոմայեցւոց կողմէն 20,000 հոգի մեռաւ, 10,000 ալ գերի բռնուեցաւ : Սուրէն Արասոսին գլուխն ու ձեռքը Հայաստան խաւրեց, վասն զի ան ժամանակն Արշէզ Պարթեւաց թագաւորը հոն եկած էր, ուր Տիգրանին ազդիկն իր Բակուր որդւոյն կին առնելով՝ մեծ հանդիսութեամբ հարսնիք կ'ընէր : Աս հարսնիքին մէջ Արասոսին գլուխն հասնելով՝ Արտաւազդ

Հայոց թագաւորն՝ որն որ հօրը բարձակից էր, ու Պարթեւեաց թագաւորն անոր վրայ յունարէն լեզուով ողբերգութեան հանդէս ալ ընել տուին: Արովհետեւ, կ'ըսէ Պլուտարքոս (ի վարս Արասոսի) երկու թագաւորներն ալ այսպիսի բաներու հմտութիւն ունէին. մանաւանդ Արտաւազդ Հայոց (Հայաստանի) թագաւորը, որն որ շատ Ողբերգութիւններ շինած, եւ շատ Պատմութիւններ ու ճառեր գրած է, որոնցմէ ոմանք, կ'ըսէ, մինչեւ հիմա կան:

Հայերն ու Պարթեւները Արասոսին յաղթելով՝ անոր Երուսաղէմի տաճարէն եւ ուրիշ շատ քաղաքներէն ժողոված անհամար գանձերը ձեռք ձգեցին:

Ի. Արասոսէն ետքն եկաւ Հայոց ու Պարթեւեաց դէմ՝ Աասսիոս զօրապետն, եւ Եփրատին անդիի կողմը բանակը դնելով՝ թող չտուաւ անոնց որ գետն անցնին եւ Ասորոց երկիրն ասպատակեն: Աս ժամանակս Միհրդատ Փոքր՝ Մեծ Միհրդատին որդին՝ զորն որ Տիգրան Հռոմայեցիներէն առած էր, ապստամբեցաւ. որովհետեւ Տիգրան կասկածելով որ անիկայ իր քրոջը տղան (Միհրդատին որդին) չէ, իրեն իշխանութիւն մը չէր տուած. ան ալ բարկանալով՝ գնաց Հռոմայեցւոց կողմն անցաւ ու Աեսարին դիմեց եւ Մաթաք քաղաքը նորոգելով եւ ընդարձակելով՝ անոր պատուոյն համար անունը Աեսարիա դրաւ: Տիգրան իր հիւանդութեանը պատճառաւ չկրցաւ անձամբ Հռոմայեցւոց դէմ երթալ, եւ ուզելով ալ զանոնք սաստիկ մեծ զօրութեամբ մ'իր սահմաններէն բոլորովին վռնտել, Պարթեւեաց Արշէզ թագաւորէն օգնութիւն ուզեց: Արշէզ անոր շատ զօրք օգնութեան խաւրեց՝ իր Բակուր որդւոյն զօրավարութեամբը: Տիգրան բոլոր Հայոց ու Պարթեւեաց զօրքին վրայ սպարապետ դրաւ Բարզափրան Ռշտունեաց նախարարն եւ Հռոմայեցւոց վրայ խաւրեց, հրաման տալով որ Ասորոց ու Պաղեստինացիներուն հետ հաշտութիւն ընէ: Գնաց Բարզափրան Հռոմայեցիները զարկաւ ու կէսը քա-

ղաքներու կէտը նաւերու մէջ փախցուց եւ սկսաւ դէպ ի Պաղեստին յառաջ քալել: Երբ որ ան կողմերը մօտիկցաւ, իր առջեւն ելաւ Անտիգոնոս՝ Արիստոբուղոսին որդին ու խոստացաւ որ, եթէ զՀիւրկանոս Հրէից թագաւորութենէն հանէ, եւ զինքն անոնց թագաւոր դնէ, իրեն 1000 քանքար ոսկի կու տայ: Հիւրկանոս Հրէից քահանայապետն ու թագաւորը երբ որ լսեց որ Բարզափրան Հռոմայեցիները փախուցեր է, եւ առանց արգելքի յառաջ կու գայ, ինքն ալ անոր հետ հաշտութիւն ըրաւ: Բարզափրան Գնէլ Գնթաւի իշխանն՝ Հայոց թագաւորին տակառայեալը ձիաւորաց գումարտակով մը Երուսաղէմ խաւրեց, իբրեւ թէ խաղաղութիւնն հաստատելու համար, բայց միտքն ան էր որ գաղտուկ Անտիգոնոսին օգնէ: Գնէլ ձիաւորները քաղքէն դուրս թողուց եւ միայն 500 հոգի հետն առած ներս մտաւ, ու նենդութեամբ Հիւրկանոսին խրատ տուաւ որ անձամբ Բարզափրանին երթայ խաղաղութիւնն հաստատելու համար, խոստացաւ ալ որ ինքն ալ բարեխօս կ'ըլլայ: Հիւրկանոս Բարզափրանէն երդում ուզեց որ իրեն շնորհէ, ան ալ Հայոց ու Պարթեւաց կուռքերուն եւ թագաւորներուն վրայ երդում ըրաւ: Ասոր վստահանալով Հիւրկանոս Եփեսիպոն գեղը Բարզափրանին եկաւ. անիկա ալ առերես անոր պատիւ ցուցուց, բայց քիչ մը ետքը յանկարծ ելաւ հոնկից գնաց, ու զօրքին ապսպրեց որ զանիկա բռնեն Անտիգոնոսին ձեռքը տան: Գնէլին ալ հրաման խաւրեց որ Հերովդէսն ալ ձեռք ձգէ. ան ալ շատ հնարքներ բանեցուց որ բռնէ, բայց չկրցաւ. վասն զի անիկա գիշերանց Երուսաղէմէն փախաւ Հռոմ գնաց: Ասկէ ետքը Հայոց զօրքն Երուսաղէմ մտան Անտիգոնոսը հոն թագաւոր դրին. եւ Հերովդէսին հոն թող տուած ինչքերն՝ որոնք 300 քանքարէն աւելի էին՝ առին, Հիւրկանոսն ալ նորէն բռնեցին կապեցին եւ հետերնին առած՝ եկան

Մարիսսա հարուստ քաղաքն ու բոլոր ան գաւառներն ասպատակեցին, եւ շատ Հրեայ դերի բռնած՝ Տիգրանին բերին: Տիգրան Բարզափրանին հրաման տուաւ որ Հրեաները Վան քաղքին մէջ տեղաւորէ: Ասկէ ետքը երկու տարի ալ ապրելով՝ մեռաւ, 53 տարի՝ մեծ փառքով եւ երեւելի յաղթութիւններով թագաւորելէն ետքը:

ԻԱ. Իսկ Հերովդէս Հռոմ՝ երթալով եւ իր Հռոմայեցւոց ունեցած հաւատարմութիւնը ցուցնելով, Անտոնիոսէն բոլոր Հրէաստանի վրայ թագաւոր դրուեցաւ, ու Վենդիդիոս զօրապետը Հռոմայեցի զօրքով հետն առած Հրէաստան եկաւ, որպէս զի Հայոց հետ պատերազմի, եւ զԱնտիգոնոս թագաւորութենէ մերժէ: Վենդիդիոս եկաւ Հայերն Ասորիքէն փախցուց, ու Սիզոն զօրապետը զօրքով Եփրատին մօտ թող տուաւ որ անոնց դէմ դնէ, եւ ինքն Երուսաղէմ Անտիգոնոսին վրայ դնաց: Հայերը նորէն Պարթեւաց հետ միանալով՝ Սիզոնին վրայ յարձակեցան եւ անոր զօրքին սաստիկ ջարդ մը տուին, զինքն ալ Վենդիդիոսին քովը փախցուցին: Անտոնիոս աս բանս լսելուն պէս, ժողովեց բոլոր Հռոմայեցւոց զօրքն եւ անձամբ Հայաստանին վրայ եկաւ, Շամշատ քաղաքն առաւ եւ Սովսիոս զօրապետին յանձնելով որ Հերովդէսին օգնէ եւ Երուսաղէմն առնու, ինքն Եգիպտոս դնաց: Սովսիոս սաստիկ քաջութեամբ պատերազմելով՝ Երուսաղէմն առաւ, Անտիգոնոսը բռնեց սպաննեց, եւ զՀերովդէս Հրէից թագաւոր դրաւ:

Ի Խորենացին Տիգրանին բերութիւն ունի: Աս ժամանակաց տարբերութիւնը խորենացւոյն պատմութեան ուրիշ տեղերն ալ յաճախ կը կարութենէն 20 տարի տար-

նակաց տարբերութիւնը խորենացւոյն պատմութեան ուրիշ տեղերն ալ յաճախ կը նշմարուի:

Գ Լ Ո Ւ Խ Ե

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Գ Ե .

ԻՖ . Արտաւազդ հօրը դահը կը նստի (36) . Հռոմայեցւոց հետ Պարթեւաց փրատա թագաւորին դէմ կը միարանի : Հոկտաւեանսին խորհրդովը Հռոմայեցւոց օգնելէն ետ կը կենայ : ԻԳ . Անտոնիոս Հայաստան կ'արշաւէ , զԱրտաւազդ կը բռնէ (33) եւ Եգիպտոսի Վղէոսպատրա թագուհւոյն ձեռքը կուտայ : Արտաւազդին սպաննուիլը (31) :

ԻՖ . ԱՐՏԱԻԱՋԳԻ հօրը մահուանէն ետքը բոլոր Հայոց տէրութեան վրայ թագաւոր եղաւ , եւ անմիջապէս իր եղբայրներն ու քուրերն ԱղիոՎիտ եւ Աբերանի դաւառները խաւրեց , հոնտեղի թագաւորական կալուածներն իրենց պարգեւելով , եւ անոնց առանձին մուտք ալ կապեց :

Նոյն ժամանակներն Անտոնիոս Հռոմայեցւոց մեծ իշխանը Պարթեւաց փրատա թագաւորին դէմ պատերազմի ելաւ , որուն հետ Արտաւազդ դաշինք դնելով՝ 13,000 զօրքով անոր օգնութեան եկաւ : Բայց Հոկտաւեանսու իշխանն՝ Անտոնիոսին իշխանակիցն , ուղեւով որ Անտոնիոս Պարթեւներէն յաղթուի , գաղտուկ զԱրտաւազդ յորդորեց որ անոր չօգնէ , որուն Արտաւազդ հաւանելով՝ պատճառաւ մը զօրքն առաւ Հայաստան դարձաւ : Անտոնիոս Հռոմայեցւոց զօրքովը շատ անգամ Պարթեւաց հետ զարնուեցաւ , բայց չկրցաւ անոնց յաղթել , եւ ինքը շատ վնաս կրեց . ուստի ստիպուեցաւ ետ դառնալ եւ եկաւ Հայաստան ձմերեց : Հռոմայեցիք կարծելով թէ Արտաւազդին իրենց չօգնելուն համար աս դժբախտութիւնը գլուխնին եկաւ , վասն զի կ'ըսէին , թէ որ անիկա մեզի օգնելու ըլլար , Հայոց զօրքը Պարթեւաց հետ պատերազմելու եղանակը գիտնալով՝ անտարակոյս կը յաղթէինք , զԱնտոնիոս շատ ստիպեցին որ անկէ վրէժ առնու : Բայց անիկա տեսաւ որ իր տկարացած բանակովը չկրնար Հայոց յաղթել , միանգա-

մայն Արտաւազգին երկրին ալ կարօտ է, վասն զի իր զօրաց ապրուստան անկէ կը գտնէր, ամենեւին յանձն չառաւ նոյն ատենն անոր մնաս հասցընել:

ԻԳ. Չմեռն անցնելուն պէս ելաւ Եգիպտոս գնաց, եւ ուզեց Արտաւազգէն վրէժ առնուլ. բայց յայտնի թշնամութիւն ցուցընելու վախնալով, որպէս զի չըլլայ թէ զանիկա իրեն դէմ պատերազմի գրգռէ, անոր Գելլիոս անունով իշխան մը խաւրեց, ու խարդախութեամբ խնդրեց որ իր ազջիկն իրեն Աղէքսանդր որդւոյն կնութեան տայ, որպէս զի կարող ըլլայ աս առթով զինքը բռնել եւ սպաննել: Արտաւազգ խարդախութիւնն իմանալով՝ չուզեց անոր ուզածը կատարել: Անտոնիոս նորէն բարեկամական նամակներ խաւրելով՝ եւ շատ զօրքով ալ Հայաստան գալով, վերջապէս Արտաւազգը հաւանեցուց որ իր քովը գայ: Այսպէսով զանիկա բռնեց, եւ հետն առած Հայաստանին ամէն բերդերն եւ ամրոցներն՝ որոնց մէջ թագաւորական գանձերը պահուած էին, պարտցուց, որպէս զի ան գանձերն ալ ձեռք ձգէ, բերդապահներուն ըսելով որ ձեր թագաւորը գերի բռնած չեմ, այլ իր անձին ու երկրին օգտին համար ստակ կ'ուզեմ ժողովել: Բայց երբ որ բերդերուն պահպանները մտիկ չըրին ու գանձերը շտուին, Անտոնիոս զԱրտաւազգ ոսկիէ շղթայի զարկած՝ Եգիպտոս տարաւ, եւ աւար առած գանձերովն Եգիպտոսի Կղէսպատրա թագուհւոյն պարգեւեց, եւ աս բանիս յիշատակին համար ստակ մը տպել տուաւ, որուն մէկ կողմն իր գլուխը կայ առջեւը Հայոց թագաւորական թագը դրուած, եւ չորս կողմը գրուած է՝ ԱՆՏՈՆԻՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ ՆՈՒԱՃԵԱԼ¹. Իսկ միւս կողմը Կղէսպատրային պատկերը:

Արտաւազգ քիչ մը ատեն Եգիպտոս մնալէն ետքը, Կղէսպատրա զինքը գլխաւել տուաւ, որուն առանձին թագաւորութիւնը 4 տարիի չափ տեւեց:

¹ Antonius, Armenia devicta.

ԱՐՏԱՒԱԶԴԻՆ ՅԱԶՈՐԴՆԵՐՆ ԸՍՏ
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՄԱԳՐԱՅ

ՀՈՒՄԱՅԵՑԻՈՅ եւ Յունաց պատմագիրներն Արտաւազդ Ա.էն ետքը Հայաստանի վրայ տիրող թագաւորաց պատմութիւն մը մեզի կ'աւանդեն՝ որոնց, ինչպէս վերը համառօտիւ յիշեցինք, ոչ անուններն եւ ոչ գործքերուն փոքր նշմարանքը մեր ազգային պատմագիրներուն մէջ կը գտնուին: Ասոնք իրենց թագաւորներուն աթոռն Արտաշատ քաղաքը կը դնեն եւ անոնց գործքերն ու պատերազմներն եւ իրարու յաջորդութիւնը կարգաւ կը պատմեն: Իսկ մեր պատմագիրները զանոնք բոլորովին անյիշատակ թողլով՝ մի եւ նոյն ժամանակի մէջ Մծբին կամ Եդեսիա նստող զատ անուններով Հայոց թագաւորաց պատմութիւն մը կը գրեն, անոնց յաջորդութիւնն, ըրած գործքերն ու պատերազմներն, իրենց ժամանակն Հայաստան պատահած փոփոխութիւններն եւ երեւելի դէպքերը կը շարեն, որոնք օտարազգի պատմագրաց յիշած թագաւորներուն գործքերուն հետ եւ ոչ փոքր նմանութիւն մ'ունին: Արդ աս երկու աննման պատմութիւններն իրարու հետ միաբանելու համար կամ պէտք ենք անոնցմէ մէկը բոլորովին սուտ եւ անհիմն համարիլ, եւ կամ ըսելու ենք որ մի եւ նոյն ժամանակուան մէջ Հայաստան երկու տեղ զատ զատ իրարմէ անկախ թագաւորութիւն ունեցած է, որոնց մէկուն պատմութիւնն օտարազգի հեղինակները մեզի կ'աւանդեն, եւ երկրորդինը մեր ազգային պատմագիրները:

Իսկ թէ որ երկու պատմութեան ալ ամէն մէկ մասերուն իրարու հետ ունեցած կապին ու յարաբերութիւններուն, եւ մանաւանդ զանոնք հաստատող վկայութիւններուն աղէկ միտ դնելու ըլլանք, ոչ պատմութիւններէն մէկը կրնանք ուրանալ, եւ ոչ ալ

Թագաւորութիւնն երկու բաժնիւ : Օտարազգի հեղինակաց պատմութիւնք շէնք կրնար անսոյգ համարիլ, որովհետեւ ասոնցմէ ոմանք պատմած դէպքերնուն ժամանակակից կամ շատ մտաւոր բլլալէն զատ, իրենց ստուգութեանը հաստատուն վիաներ ունին իրենց յիշած Հայ Թագաւորներուն անուամբը տպուած ստակներն՝ որոնք մինչեւ հիմա կեցած են, եւ իրենց վրայի պատկերներովը՝ պատմուած դէպքերը կը ներկայացընեն : Եւ ոչ ալ մեր ազգային պատմազրաց աւանդածը կրնանք բոլորովին ուրանալ, վասն զի ասիկա ամբողջ Հայոց պատմութեան հետ անբաժին կապակցութիւն մ'ունի եւ իբրեւ մեր պատմութեան շղթային միջին օղերն է որ երկու ծայրերն իրարու հետ կը միացընէ, այնպէս որ եթէ ասիկա թող տրուի, ամբողջ կապը կը քայքայի եւ առաջինները վերջինէն կը բաժնուին : Երկրորդ՝ աս պատմութեան գլխաւոր եւ էական դէպքերուն եւ պարագաներուն մէջ ամէն աս ժամանակին պատմութիւնը գրող ազգային հեղինակներն՝ իրարու հետ բոլորովին կը միաբանին, որն որ պատմութեան ստուգութեանը մեծ հաստատութիւն մըն է : Եւ երրորդ աս պատմութիւնն ալ առաջինին պէս իրեն հաստատուն վիաներ ունի ազգին մէջ պահուած աւանդութիւններն եւ իրեն յիշած Թագաւորներուն անուամբն անուանած քաղաքներն ու տեղերը՝ որոնք Հայաստանի մէջ նոյն Թագաւորներէն շինուեցան ու դարերով անեղծ մնացին :

Իսկ մի եւ նոյն ժամանակ երկու Թագաւորութիւն դնելու ամենեւին հիմ չունինք, վասն զի աս երկու աննման պատմութեանց հեղինակներէն եւ ոչ մէկն ասոր վրայ ակնարկութիւն մը կ'ընէ, այլ մանաւանդ երկու կողմն ալ յայտնի կը ցուցընեն որ Հայաստանի նոյն ժամանակուան Թագաւորութիւնը մի միայն էր. օտարազգի պատմագիրներն իրենց դրած Թագաւորներուն իշխանութիւնը՝ գործքերն ու պա-

տերազմները Հայաստանին ամէն կողմի կը տարածեն, նոյնպէս մեր պատմագիրներն ալ Մծրին եւ Եղեփա նստող թագաւորներուն իշխանութիւնը մինչեւ Հայաստանին հիւսիսային ծայրը կը հասցընեն:

Մենք սա պատմութիւններուն իրարու պոչափ աննմանութիւնն ու զանոնք միաբանելը գրեթէ անկարելի ըլլալը տեսնելէն ետեւ, յանդուզն դարձր Մըրած կ'ըլլայինք, թէ որ ջանայինք երկուքն իրարու հետ խտնել ու թէ մէկուն թէ միւսին պարզութիւնը պզտորել: Ուստի երկու պատմութիւնն ալ իրենց հեղինակներէն մեզի աւանդուածին պէս սնարատ պահելու համար, նախ օտարազգի պատմագիրներունը զատ զլից մէջ առանձին կը դնենք, եւ անկէ ետեւ ազգային մատենագրաց պատմութիւնը յառաջ կը տանինք: Գուցէ ապագայ ժամանակն ասոնց վրայ նոր լուսաւորութիւն մը կուտայ եւ երկուքն իրարու հետ միաբանելու հնարքը կը ցուցնէ:

ԻԻ. Անտոնիոս իր Աղեքսանդր որդին Հայոց թագաւոր կը գնէ (33): Արտաշաս (Արտաշէս) Արաւազգին երեց որդին՝ Տօրը կը յաջորդէ (33.) Հռոմայեցւոց դէմ պատերազմի կ'ելլէ, կը յաղթուի ու Պարթեւաց երկիրը կը փախչի: Պարթեւաց թագաւորին օգնութեամբը նորէն Հայաստան կը դառնայ. Մարաց թագաւորին պատերազմաւ կը յաղթէ ու թագաւորութիւնը ձեռք կը ձգէ: ԻԵ. Արտաշաս կը սպաննուի (21) եւ իրեն կը յաջորդէ Տիգրան՝ իր եղբայրը (20): Տիգրան Փոքր եւ իր քոյրն Երատոյ թագաւորական դահլը կ'ելլեն: (5 Բր. Յ.) Հռոմայեցիներէն կը մերժուին եւ իրենց տեղն Արաւազգ իշխանը թագաւոր կը դրուի: Տիգրան Պարթեւաց օգնութեամբը զԱրտաւազգ կը վանտէ ու թագաւորութիւնը նորէն կ'առնու (2 Բ. Յ.): ԻԶ. Օգոստոս կայսրը Մարաց թագաւորին Արիորարզան որդին Հայոց թագաւոր կը գնէ (1 Բրիտոսէն Ետքը): ԻԿ. Արտաւազգ՝ Արիորարզանին որդին Տօրը կը յաջորդէ. Հայերը զինքը կը մերժեն ու Տիգրան անունով իշխան մը թագաւոր կը գնեն: Երատոյ թագուհին նորէն Հայաստանի գահը կը նստի: Պարթեւաց Վրոնն թագաւորը Հայոց թա-

գաւորութիւնը եւք ձգելու ետեւ կ'ըլլայ (15 ք. Ե.) . Տիրեր կայսրը Գերմանիկոս զորավեան ձեռքովը Պոնտոսի Պոլեմոն թագաւորին չ'ստն որդին Հայոց թագաւոր կը դնէ (18) : Ի՞նչ . Չենոնին մահը, Պարթեւաց թագաւորին որդւոյն Արշակին Հայոց թագաւորելը : Միհրդատ վրաց թագաւորին եղբայրը ՂԱրշակ մեռցրնել կու տայ եւ Հայոց թագաւորութիւնն ինքը կ'առնու : Իր Պարթեւաց հետ ըրած պատերազմն ու յաղթութիւնը : Միհրդատին եղբորը սպան Հռադամիզդ իրեն դէմ կ'ելլէ, զինքը կը սպաննէ եւ թագաւորութիւնը կը յափշտակէ (45) : Ի՞նչ . Վաղարշ (Վոզրգէս) Պարթեւաց թագաւորը Հայաստան կ'արշաւէ եւ իր Տրդատ եղբայրը Հայոց թագաւոր կը դնէ : Հռադամիզդ կը փախչի . Չենորիա թագուհին կը բռնուի : Լ . Ներոն կայսրը Կորնուդոն զորավեարը Պարթեւաց դէմ կը խաւրէ . Հռոմայեցիք Պարթեւներուն կը յաղթեն, Տրդատը կը վաճնտեն ու Տիգրան իշխանը գահը կը նստեցրնեն (55) : Պարթեւաց Մոնեսէս զորավեան Հռոմայեցւոց վրայ կու գայ ու Տիգրանը Տիգրանակերտին մէջ կը պաշարէ : Պետոս Հռոմայեցւոց զորավեարը Հայաստան պաշտպանելու կը խրհուի, Վաղարշ անոր կը յաղթէ ու բոլոր Հայաստանէն դուրս կ'ելլու կը ստիպէ : ԼԱ . Հռոմայեցւոց ու Պարթեւաց տարու հետ հաշտուիլը, Տրդատին Հռոմ երթալն ու Նեոն Հայոց թագաւոր պսակուիլը (61—62) : Տրդատին մահը (70—71) :

Ի՞նչ . ԱՆՏԻՍՏԻՆՍ ՂԱՐՏԱՆԱՊԳ բռնելէն ետեւ Հայաստանին ամէն կողմը նուաճեց, որուն մէկ մասը Պոնտոսի Պոլեմոն թագաւորին տուաւ, արեւելեան կողմերը Մարաց թագաւորին պարգեւեց, իսկ մնացած մասին վրայ իր Աղէքսանդր որդին թագաւոր դրաւ : Բայց Հայոց զօրքն սա օտարազգի թագաւորին հնազանդիլ չուղէլով՝ Արտաւազդին մեծ որդին Արտաշան իրենց թագաւոր անուանեցին : Ասիկա գահն ելածին պէս Անտոնիոսին դէմ պատերազմի ժամաւ, եւ անկէ յաղթուելով՝ Պարթեւաց թագաւորին քովը փախաւ, ուր քիչ մը ժամանակ մնալէն հողքն, երբ որ Անտոնիոսն ու Հոկաւախանոս իրարու դէմ պատերազմ ընելու զբաղած էին, Պարթեւաց օգնութեամբը նորէն Հայաստան դարձաւ ու տիրեց .

Մարաց թագաւորը՝ զի աշխարհն որ Հռոմայեցւոց դաշնակից էր եւ անոցմէ Հայաստանի պահապանն ու պաշտպանն դրուած էր, պատերազմէի էլաւ, անոր յաղթեց ու Մարաստանն իր իշխանութեան տակն տուաւ: Այսպէս թագաւորութիւնն հաստատելով՝ Հայաստանի ու Մարաստանի մէջ պահուած ամէն Հռոմայեցիները սրէ անցուց:

ԻՆ. Բայց հազիւ կրցաւ քանի մը սարի թագաւորութիւնը վարել. վասն զի իր ազգականները զինքն ապահնեցին, եւ Օգոստոս Հոկտախանսս կայսրմէ խնդրեցին ու Արտաւազդին Տիգրան որդին՝ որն որ Հռոմ կը կենար, իրենց թագաւոր դնէ: Կայսրն անոնց խնդիրը կատարեց եւ իր Տիբեր որդեգրին ձեռքովը զՏիգրան գահը նստեցուց. բայց ասոր թագաւորութիւնն ալ շատ կարճ տեւեց: Իրեն յաջորդեց իր որդին Տիգրան Փոքր իր Երատոյ քրոջը հետ, զորոնք Հռոմայեցիք մերժեցին եւ Արտաւազդ անունով իշխան մը թագաւորեցուցին. բայց ժողովուրդն անոր վրայ դո՛հ չըլլալով՝ զարկին սպաննեցին ու Պարթեւաց օգնութեամբը Տիգրանը նորէն գահը նստեցուցին. Հայաստան գանուող Հռոմայեցւոց ալ դէմ էլան ու շատերը ջարդեցին: Տիգրան երկրորդ անգամ ալ չկրցաւ երկայն ատեն թագաւորութիւն ընել, որովհետեւ ժողովրդեան անհաճոյ ըլլալով՝ վռնտուեցաւ:

ԻԶ. Աս բաներուս լուրն երբ որ Օգոստոս կայսրն առաւ, շուտ մ'իւր Վայիոս սրդեգիրը մեծ բանակով Հայաստան խաւրեց որ Հայոց ու Պարթեւաց հետ խաղաղութիւն ընէ ու խռովութիւնները կարգի դնէ: Եկաւ Վայիոս ամէն բան կարգաւորեց եւ Մարաց թագաւորին յաղթանդամ ու զօրաւոր սրդին Արիւբարդանը Հայոց թագաւորութեան գահը նստեցընելով՝ ետ դարձաւ: Բայց Արտազերից բերդին քովէն անցած ատենն, Ադդոն՝ նոյն բերդին իշխանը, կամ ըստ Փլորոսի՝ Գոմնէս Արտաշատ քաղքին

քաղաքսպեան՝ իրեն հետ խօսելու պատրուակով քոյն եկաւ, ու սրովը գարկաւ սաստիկ վիրաւորեց, եւ ինքը բերդին մէջ մտաւ ամրացաւ: Հասնայեցիք սաստիկ պատերազմաւ բերդն առին ու չորս կողմը կրակի առին. Ազգոն՝ որպէս զի թշնամւոյն ձեռքը չէյնայ, ինքը զինքը կրակին մէջ նետեց ու մեռաւ:

ԻԷ. Արիւրարդանին յաջորդեց իր որդին Արտաւազդ, զորն որ Հայերը մերժեցին՝ եւ անոր տեղն Օդոստոս Հայոց թագաւորներուն յեղէն Տիգրան անուշով մէկը թագաւորեցուց: Ասոր մեռնելէն ետքն Երատոց թագաւորին երկրորդ անգամ գահ էլաւ, բայց Հայերը կին թագաւորի վարժած չըլլալով՝ զինքը վաճակեցին, ու ժամանակ մ'անաւրուսչ մնալէն ետեւ, երբ որ Անոնն Պարթեւաց թագաւորն իր աթոռէն մերժուելով՝ Հայաստան եկաւ, Հայ իշխանները զինքն իրենց թագաւոր բնարեցին. բայց Արտաւան՝ որն որ Անոնին տեղը Պարթեւաց թագաւոր դրուած էր, անոր դէմ պատերազմ սպասնայով եւ Հռոմայեցիք ալ չկրնալով Հայոց օգնել, Սիլանոս Ասորուց Հռոմայեցի իշխանը զանիկա իր քովը կանչեց եւ Հայաստան գարձեալ առանց թագաւորի մնաց: Տիբեր կայսրն առ բանիս լուրն առածին պէս, Գերմանիկոս իշխանը զօրքով Հայաստան խաւրեց որ Հայոց թագաւոր մը դնէ, որն որ եկաւ Հայ իշխաններուն խնդրելովը Պոնտոսի Պողեմոն թագաւորին Զենոն որդին Արտաշատ քաղաքին մէջ թագաւոր պսակեց, որուն անունը Հայերը փոխեցին եւ Արտաշէս դրին:

ԻԸ. Ասոր մահուանէ ետքն Արտաւան իր Արշակ որդին Հայոց թագաւորական գահը նստեցուց. բայց Միհրդատ՝ Արաց թագաւորին եղբայրը Տիբեր կայսրէն հրաման բնդուներով որ երթայ Հայաստանն առնու եւ հոն թագաւորէ, Արշակին իշխաններուն կաշառք տուաւ եւ անոնց ձեռքովը զանիկա սպաննեց: Անկէ ետքն ինքը զօրքով Հայաստան արշաւեց, Արտաշատ

բազմաբն առաւ ու թագաւորեց: Արտաւան իր սրբ-
ւոյն մահուանը վրայ սատոխի բարկացած՝ միւս սր-
բին Որոգէսը մեծ բանակով մը Միհրդատին վրայ
խաւրեց որ զանհիւս Հայաստանէն վաճառ: Միհրդ-
ատ իր ու վրայ սահմանակից ազգերէն ժողոված
զօրքովը Պարթեւաց դէմ ելաւ եւ անոնց բանակը
ցրուեց: Բայց աս յաջողութենէ ետքն ալ չկրցաւ
թագաւորութեան մէջ հաստատուն մնալ. վասն զի
իւր եղբորորդին Հրազամիլը հօրմէն գրգռուելով՝ ու-
ղեց իր ձեռքէն թագն յափշտակել, եւ աս վախ-
ճանաւ իրեն դէմ պատերազմի ելաւ. Միհրդատ
յաղթուելով՝ Գառնի (Գառնէաս) բերդը Հռոմայե-
ցւոց քովը փախաւ: Հրազամիլը եկաւ բերդը պա-
շարեց եւ երկայն ատեն պատերազմելով՝ չկրցաւ
առնուլ. ան ատեն նենգութիւնը ձեռք առաւ եւ
կաշառով Հռոմայեցի զօրապետը հաւանեցուց որ
Միհրդատին խորհուրդ տայ իր քովը գալու եւ հաշ-
տութիւն ընելու: Միհրդատ աս նենգութենէն խա-
բուեցաւ ու Հռազամիլիին բանակը դնաց, որն որ
անմիջապէս զինքն սպաննել տուաւ:

ԻԹ. Բայց Հրազամիլը աս զիւրաւ ստացած
թագաւորութիւնը չկրցաւ հանդիստ վայելել. վասն
զի նոյն ժամանակը Վաղարշ (Վաղարէս) Պարթեւաց
թագաւորն անհամար զօրքով Հայաստան արշաւեց,
զինքն անկէ վաճառեց եւ ամէն կողմ նուաճելով՝ իր
Տրդատ (Տիրիդատէս) եղբայրը հոն թագաւորեցուց:
Քիչ մը ետքը Պարթեւաց զօրքին պաշարը պակսելով
եւ ձմեռն ալ սաստկանալով՝ Վաղարշ իր եղբորը հետ
Հայաստանէն քաշուեցաւ: Աս բանիս լուրն Հրազա-
միլը առածին պէս նորէն Հայաստան դարձաւ ու թա-
գաւորութիւնն առաւ, եւ սկսաւ ժողովուրդն առաջի-
նէն աւելի նեղել ու տառապեցրնել, որոնք չկրնալով
գիմանալ, միաբան զէնք առին անոր վրայ յարձակեցան
որ սպաննեն: Թագաւորն հազիւ իր Զենոբիա կնոջը
հետ կրցաւ կատղած ժողովրդեան ձեռքէն պրծիլ

ու դէպ ի Արաստան փախչիլ : Ճամբան Զէնոբիա ճամբորդութեան տասն ապանքներէն սաստիկ յոգնելով ու նեղուելով, որովհետեւ գիշեր ցորեկ շարունակ առանց ամենեւին հանգչելու յառաջ կ'երթային, Հրազամիզդին աղաչեց որ զինքը մեռցընէ, որպէս զի զիրենք հալածողներուն ձեռքը չիյնայ. ան ալ դաշոյնով մը զլծաղուհին վիրաւորեց եւ Երասխ գետին մէջ նետեց : Քայց զետին ջուրը զինքը ծանծաղ տեղ մը տարաւ ձգեց, ուր հովիւները զանիկա գտնելով՝ վէրքը պատեցին ու դարմանեցին, եւ անունն ու ո՛վ բլլաւն իմանալով՝ Արտաշատ քաղաքը տարին : Նոյն ժամանակը Տրդատ Պարթեւաց զօրքով նորէն Հայաստան դարձաւ ու թագաւորութիւնն առաւ :

Լ. Պարթեւաց Հայաստան գրաւելուն լուրը Հռոմ՝ հասածին պէս, Ներոն կայսրը Կորբուզոն մեծ իշխանին հրաման տուաւ որ շուտով երթայ զանոնք Հայաստանէն հանէ : Եկաւ Կորբուզոն Տրդատին զօրքը զարկաւ, Արտաշատ քաղաքն առաւ ու կրակի տուաւ. անկէ դարձաւ Տիգրանակերտին վրայ, եւ անոր ալ արեւելով՝ Տիգրան Կապադովկացի իշխանն՝ Արքեղայոս թագաւորին ազգականը՝ զորն որ Ներոն Հռոմէն Հայոց թագաւորութիւնն առնելու համար խաւրած էր, դահր նստեցուց : Աշղարշ աս ատեններս Արկանաց ազգին հետ պատերազմելու զրաղած բլլալով՝ չէր կրցած կզրօրն օգնութեան հասնիլ. բայց երբ որ լսեց թէ անիկա թագաւորութենէ բոլորովին մերժուեր՝ եւ տեղը Տիգրանը թագաւորեր է, սաստիկ բարկացաւ, մանաւանդ երբ որ լուր առաւ որ Տիգրան Ատրպատական յարձակեր է եւ կ'ասպատակէ. եւ շուտ մը Պարթեւաց նախարարները ժողովելով՝ անոնց առջեւը Տրդատին գլուխը թագ դրաւ եւ Հայոց թագաւոր անուանեց, ու Մոնեսէս զօրապետը մեծ բանակով մ'անոր հետ Հայաստան խաւրեց որ զանիկա նորէն դահր նստեցընէ : Կորբուզոն Պարթեւաց արշաւանքին լուրն առնելով՝ վերուզանոս Սեւերոս ու Արկաիոս

Իողանաս զօրապետներն երկու Լեզկոնով Տիգրանին օգնութեան խաւրեց, որն որ Տիգրանակերտին մէջ ամրացած էր. իսկ ինքը բոլոր բանակովն Եփրատին ելէրքը կեցաւ որ Ասորիք պաշտպանէ: Մոնեօէս եկաւ Տիգրանակերտը սաստիկ պաշարեց եւ երկայն ատեն զարկաւ, քանի մ'անդամ ալ բերդին վրայ յարձակում ըրաւ, բայց չկրցաւ առնուլ: Նոյն ժամանակը Կորբուզն Կասպերիոս հարիւրապետը Աաղարշին խաւրեց, որն որ ուրիշ բանակով մը Մծբին քաղքին առջեւը հասած էր, եւ առաջարկեց որ պատերազմը դադրեցնեն, եւ իրարու հետ խօսելով՝ խնդիրը խաղաղութեամբ լմնցնեն. Աաղարշ առ առաջարկութիւնն ընդունեցաւ եւ խօսակցութիւնն ալ սկսուեցաւ, բայց առաջարկուած պայմաններուն վրայ չկրնալով իրարու հետ միաբանիլ, նորէն երկու կողմն ալ զէնք առաւ: Կայսրը Հայաստանին պաշտպանութեան համար Պետոս զօրապետը նոր բանակով մը հոն խաւրեց, որն որ եկաւ քանի մը դաւառներ ասպատակեց եւ անկէ ետքը զօրքը զանազան տեղեր տարածելով՝ Կայսեր նամակ գրեց որ պատերազմը յաղթութեամբ լմնցուցինք: Իսկ Աաղարշ՝ որովհետեւ Կորբուզնին բանակն Եփրատին եզերքը բռնած ըլլալով՝ չէր կրնար Ասորիք արշաւել, բոլոր զօրութիւնը մէկտեղ բերաւ եւ յանկարծ Պետոսին վրայ յարձակեցաւ, անոր քիչուր զօրքը զարկաւ ու ցրուեց եւ ստիպեց որ իրեն հետ դաշինք դնէ ու բոլոր զօրքովն Հայաստանէն դուրս ելլէ:

ԼԱ. Պարթեւաց թագաւորն առ յաղթութիւնը կատարելէն ետեւ, Հռոմ նամակ մը գրեց, որուն մէջ իր ըրածները կարգաւ կայսեր կը ծանուցանէր եւ կ'առաջարկէր որ՝ որպէս զի պատերազմը վերջանայ, Տրդատին Հայոց թագաւոր ըլլալուն հաւանութիւն տայ, միայն թէ անիկա նախ Հռոմայեցւոց բանակն երթայ եւ կայսերական պատկերին առջեւը թագաւոր պսակուի: Աս նամակը զՆերոն շատ խռովեց, վասն

զի պետտանն նամակը՝ զէպքերն իրեն ըլլորովին տարբեր ծանուցած էր. ո ստի շուտ մը պարթեւ պատգամաւորներուն հետ եկող հռոմայեցի հարիւրապետն իրեն կանչեց եւ անկէ տեղեկանալով որ ստուգիւ Հռոմայեցիք բոլորովին Հայաստանէն ելեր են, ձերակոյտը խորհրդի ժողովեց եւ որոշեց որ նորէն Պարթեւաց դէմ պատերազմ սկսուի. Արբուզոնն ալ նոյն պատերազմին զօրավար դրաւ :

Աս քաջ զօրապետը թէպէտ եւ կայսեր հրամանն առածին պէս, թ շնամին զարնելու ամէն պատրաստութիւնները տեսաւ ու ճամբայ ելաւ, բայց ինչիւրն առանց պատերազմի լմնցընելու բաղձալով, երբ որ Ազգարշէն ալ աս բանիս համար իրեն հրեշտակ եկաւ, սիրով բնդունեցաւ եւ ինքն ալ անոր քանի մը հարիւրապետ խաւրեց, եւ իրարու հետ անձամբ խօսելով՝ տեղ ու ժամանակ որոշեց : Նոյն օրը Տրդատ փառաւորութեամբ Հռոմայեցւոց բանակն եկաւ, ուր Արբուզոնին հետ խօսակցելով՝ որոշեցին որ ինքն անձամբ Հռոմ երթայ ու Ներոնէն թագաւոր պօսկուի : Տրդատ շուտ մը ճամբորդութեան ամէն պատրաստութիւնները տեսնելով՝ շատ իշխաններով ու հարիւրաւոր ծառաններով կայսերական քաղաքը գնաց, ուր Ներոն զինքը մեծ հանդէսով Հայոց թագաւոր պսակեց եւ Հայաստան խաւրեց : Հոն Տրդատ Գ տարի խաղաղութեամբ թագաւորելէն ետեւ վախճանեցաւ :

Հոս կը դադրի օտարազգի պատմագրաց Հայոց վրայ պատմած շարունակեալ պատմութիւնն : Ասկէ ետքն անոնցմէ ոմանք Հայաստանի թագաւորներուն մէկքանիին միայն անուններն ու քանի մը գործքերը վեր ի վերոյ կը յիշեն, զորոնք մննք հաստեղծ յիշելը զանց առնելով՝ մեր ազգային պատմագիրներուն պատմութիւնն յառաջ տանելու կը դառնանք :

Գ Լ ՈՒԽ Լ

Ա Ր Շ Ա Մ

ԼԲ. Արշամին գահ ելլելն (33 ֆ. 8.) եւ Հռոմայեցւոց հետ հաշտութիւն ընելը: ԼԳ. Ենանոս Բագրատունեաց իշխանը զՀիւրկանոս Պաղեստին կը խրկէ. Արշամ զինքը կը պատժէ: Ենանոս հաւատքը կ'ուրանայ ու Հայաստանի վերակացու կը դրուի: ԼԴ. Արշամին Հերովդէսին հետ թշնամանալն եւ իր մահը (3 ֆ. 8.):

ԼԲ. ԱՐՇԱՄ՝ Տիգրան Մեծին Արտաշէս եղբորն որդին, Արտաւագդին բռնուելէն ետքն իշխաններուն ու զօրաց ընտրելովը թագաւորական գահն ելաւ: Ասոր թագաւորութեան առաջին տարին Պարթեւաց Արշէզ թագաւորը մեռնելով՝ որն որ միշտ Հռոմայեցւոց դէմ Հայոց օգնական կ'ըլլար, իր որդին ու յաջորդն Արշաւիր մանուկը չկրցաւ իրեն օգնել, ուստի ինքն ալ երկիրը շուտով խաղաղընելու համար Միջագետքէն ու Փոքր Հայսց կողմերէն հարկ տալ խոստանալով՝ Հռոմայեցւոց հետ հաշտութիւն ըրաւ:

ԼԳ. Աս ժամանակս Ենանոս Բագրատունեաց նախարարը, Հրէից Հիւրկանոս քահանայապետը՝ զորն որ Բարզափրան բռնած Հայաստան բերած էր, գաղտուկ թող տուաւ որ իր երկիրն երթայ: Արշամ աւ բանիւ վրայ սաստիկ բարկանալով՝ զԵնանոս բռնել տուաւ. ան ալ որպէս զի պատժէն ազատի, թագաւորին ըսաւ թէ Հիւրկանոս իր ազատութեանը համար 100 քանքար ստակ խոստացաւ, եւ յանձն առաւ որ ինքն այնչափ ստակ թագաւորին վճարէ, յուսալով որ Հիւրկանոսէն կրնայ առնուլ: Արշամ ատեն որոշեց. Ենանոս շուտ մ'իր եղբայրներէն մէկը Հիւրկանոսին խաւրեց որ անկէ ստակ ուզէ. բայց որովհետեւ Հերովդէս զանիկա մեռցուցած էր, յոյսը պարապի ելաւ: Ուստի երբ որ որոշուած ատենն

եկաւ ու չկրցաւ վճարել, [Թագաւորը զինքը պատուէն ձգեց ու բանա զնել տուաւ: Ան ատենը Գն[թու]նեաց Զօրա նախարարն ալ անոր վրայ [Թագաւորին ամբաստանութիւն ըրաւ [Թէ Անանոս ուզեց քեզմէ ապստամբիլ, եւ ջանաց որ զիս ալ իրեն հետ միաբանէ ու Հերովդէսէն մեր բուն երկրին (Հրէաստանի) մէջ մեզի տեղ ուզենք, եւ երթանք հոն բնակինք: Բայց ինձմէ յոյսը կտրելով՝ աս բանիս համար զՀիւրկանոս [Թող տուաւ: Արշամ՝ ասոնց հաւասարելով՝ հրամայեց որ Անանոսին զանազան տանջանքներ տան ու բոլոր անոր ընտանիքն եւ ազգականներն սպաննեն, եթէ յանձն չառնու հրէութիւնը [Թողուլ ու կուռք պաշտել: Ենանոս երբ որ իր ազգականներուն մէկուն սպաննուիլն եւ իր որդւոցը տանջանքին տեղը բերուիլը տեսաւ, իր կիներուն յորդորելովը յանձն առաւ բոլոր ցեղովը կուռք պաշտել, եւ այսպէս նորէն իր պատուոյն մէջ հաստատուեցաւ: Բայց Արշամ անոր վրայ չվատահանալով՝ զինքը Միջագետքէն հեռացընելու համար Հայաստան խաւրեց, եւ անոր վերակացութիւնն իրեն յանձնեց:

ԼԴ. Արշամ ասկէ ետքը Հերովդէսին հետ [Թշնամացաւ, որովհետեւ անիկա շատ շինութիւններ ընելէն ետեւ, ուզելով Անտիոք քաղաքն ալ՝ որուն ճամբաները ցեխով եւ աղտեղութեամբ լեցուն էին, մաքրել, Արշամէն շատ գործաւորներ խնդրեց որ աս բանիս օգնեն: Արշամ յանձն չառաւ տալու, եւ զօրք ժողովեց որ Հերովդէսին դէմ գնէ: Հռոմ ալ մարդ խաւրեց ու կայսրմէ խնդրեց որ զինքը Հերովդէսին իշխանութենէն ազատ ընէ: Բայց կայսրը չէ [Թէ մինակ զանիկա ազատ չըրաւ, այլ նաեւ բոլոր Ասորիքն ու Փոքր Ասիան ալ անոր յանձնեց. Հերովդէս ալ ան տեղերուն զանազան ազգերէն շատ զօրք ժողովելով, Արշամ վախցաւ, եւ անոր ուղածը կատարեց, եւ քիչ մը ետքը մեռաւ 30 (20) տարի [Թագաւորութիւն ընելէն ետքը:

Պ Լ Ի Ի Ի Բ

Ա Բ Գ Ա Բ

ԱԵ. Աբգարին թագաւորելը (Յ Գ. Յ.), եւ Հայոց բարեփոխին Հռոմայեցւոց հարկատու ըլլալը: Աբգարին Հերովդէսին հետ ըրած պատերազմն եւ անոր յաղթելը: ԱԶ. Աբգար կ'ուզէ Հռոմայեցիներէն ապստամբիլ. Եդեսիա քաղաքը կը նորոգէ եւ աթոռը հոն կը փոխէ: Պարթեւաց թագաւորին եւ անոր եղբայրներուն մէջ ծագած խռովութիւնը խաղաղորդելու համար Պարթեւաստան կ'երթայ: ԱԿ. Արարացւոց Արեա թագաւորին՝ Հերովդէս շորտրգապեան դէմ օգնութեան զօրք կը խաւրէ: Քրիստոսի ըրած հրաշքներուն լուրն առնելով՝ անոր նամակ կը գրէ: Քրիստոս անոր պատասխան կու տայ եւ իր պատկերը կը խրկէ: ԱԸ. Թադէոս առաքելին Եդեսիա գալն ու զԱբգար բժշկելը. Եդեսացւոց Քրիստոսի հաւատալը: Աբգար Քրիստոսի համար Տիբեր կայսեր ու Պարթեւաց եւ Նինուէի թագաւորներուն նամակներ կը գրէ: Իր մահը (34 Քրիստոսէն ետքը):

ԱԵ. ԱՐՇԱՄԻՍ յաջորդեց իր որդին Աբգար, որուն թագաւորութեան երրորդ տարին Հայերը բուրրովին Հռոմայեցւոց հարկատու եղան: Վասն զի Օգոստոս կայսրը հրաման հանեց որ ամէն տեղ աշխարհագիր ընեն. ուստի Հռոմայեցւոց հարկահանները Հայաստան ալ եկան ու հարկ տուող երկիրներուն կարգը խոթեցին: Իրենց հետ բերին նաեւ կայսեր պատկերն ու բոլոր Հայոց մեհեաններուն մէջը դրին. Հերովդէս ուզեց որ իր պատկերն ալ Հայոց մեհեաններուն մէջ կայսեր պատկերին քովը դրուի. բայց Աբգար ամենեւին յանձն չառաւ: Հերովդէս սաստիկ բարկանալով, Աբգարէն վրէժ առնելու համար Գերմանացի ու Թրակացի զօրքերուն՝ որոնք Պարթեւաց երկիրն ասպատակելու կ'երթային, հրամայեց որ Հայոց երկիրն մէջէն անցնին եւ աւրշարկեն: Երբ որ Աբգար ասոր ալ դէմ կեցաւ ու թող չտուաւ, Հերովդէս աւելի եւս կատղելով՝ յայտնի պատերազմ բացաւ. եւ որովհետեւ ինքն իր սաս-

տիկ հիւանդութեանը պատճառաւ չէր կրնար անձամբ զօրավարել, իր եղբորորդին անթիւ զօրքով Աբգարին վրայ խաւրեց: Ան ալ եկաւ Միջագետք ու Բուզնան՝ Հայոց զօրքին կեցած դաւառն Աբգարին պատահեցաւ, ու պատերազմելով յաղթուեցաւ, ինքն ալ պատերազմին մէջ մեռաւ. իսկ մնացած զօրքը ցրուեցան ու փախան:

ԼԶ. Աս ատեններս Օգոստոս կայսրը մեռնելով՝ Տիբերիոս անոր տեղն անցաւ, եւ իր որդեգիրը Գերմանիկոս կեսարութեան պատիւ առնելով՝ Աբգարին եւ Արշաւրին պատգամաւորութեան համար Հռոմ խաւրած իշխաններն անարդեց ու չարչրկեց, Աբգարին Հերովդէսին եղբորորդւոյն հետ բրած պատերազմին ու զանհկա սպաննելուն համար: Աբգար աս բանս լսածին պէս սաստիկ բարկացաւ, ու միտքը դրաւ որ Հռոմայեցւոց հարկ տալը դադրեցընէ. ուստի աս փախճանաւ Եդեսիա քաղաքը նորոգեց եւ ամրացուց, եւ աթոռը Մծբինէն հոն փոխեց. հոն տարաւ նաեւ իր Նաբոգ, Բէլ, Բաթնիքաղ ու Թարաթա կուռքերը, մեհեաններուն ամէն գրքերն ու բոլոր դիւանը: Բայց ապստամբութիւնը յառաջ չգնաց, վասն զի նոյն ատեն Արշաւիր Պարթեւաց թագաւորը մեռնելով՝ եւ անոր որդւոցը մէջ յաջորդութեան համար խռովութիւն ելլելով՝ Աբգար զօրքն առաւ Պարթեւաստան գնաց զանոնք խաղաղցընելու համար: Երբ որ հոն հասաւ, տեսաւ որ Արտաշէս Արշաւրին մեծ որդին թագաւորեր է. բայց որովհետեւ կ'ուզէր որ իր որդիքն իրեն յաջորդեն, միւս եղբայրները Կարէն ու Սուրէն յանձն չէին առնուր, եւ զօրքին մէկ մասն ասոնց կողմը մէկ մասն ալ Արտաշէսին կողմն բլլալով՝ բոլոր Պարթեւաց երկիրը սաստիկ խռովութեան մը մէջ էր: Աբգար զանոնք խաղաղաց եւ իրարու հետ հաշտեցուց, ու կարգ դրաւ որ Արտաշէս իր ցեղովը թագաւորէ, իսկ միւս եղբայրներուն ցեղերն իրենց անուամբը կոչուին Սու-

րենի Պահչաւ, Կաշենի Պահչաւ, ու քարերնուն ցեղն ալ Սպահապետի Պահչաւ, ու Պարթեւաց նախորարնբրուն ամենէն մեծը համարուին. եւ թէ որ Արատաշէսին ցեղին մէջ որոս ժառանգ չմնայ, թաղաւորութիւնն իրենց անցնի: Աս այսպէս հաստատելով եւ ամենէն երդում առնելով՝ դաշանց թագմբ հետն առաւ. Հայաստան դարձաւ, բայց սաստիկ հիւանդութենէ մը բռնուած:

Ահ. Երբ որ իր տեղը հասաւ, լսեց որ Հռոմայեցիք իր Պարթեւաստան երթալուն համար՝ վրան կասկածի գացեր են, կարծելով թէ անոնցմէ օգնութեան զօրք առնելու համար զնաց որպէս զի իրենց դէմ պատերազմի ելլէ: Ուստի շուտ մ'անոնց գործակալներուն դեսպան խաւրեց, որ իր հոն երթալուն պատճառն իմացընէ. բայց անոնք դեսպաններուն խօսքին չհաւատացին, վասն զի Աբգարին թըշնամիները՝ մանաւանդ Հերովդէս չորրորդապետը միշտ Հռոմայեցիներն անոր դէմ կը գրողէին: Աբգար սս բանիս վրայ նեղացած՝ Հերովդէսէն վրէժ առնելու համար Արաբացոց (Պատրիացոց) Արեւ թագաւորին՝ որն որ Հերովդէսին դէմ պատերազմի ելած էր, Խոսրան Արծրունին Հայոց զօրքով օգնութեան խաւրեց, որոնք գացին անոր զօրքին հետ զարնուեցան ու աղէկ ջարդ մը տուին:

Նոյն տարին Հռոմայեցիք Ասորոց երկրին վրայ Մարինոս իշխանը վերակացու դրին: Աբգար իր Պարթեւաստան երթալուն պատճառն անոր իմացընելու համար: Մար Իհար Աղձնեաց իշխանը, Շամշապրան Ապահունեաց նախարարն եւ Անան իր հաւատարիմ սուրհանդակն անոր խաւրեց, զորոնք Մարինոս շատ պատուով ընդունեցաւ եւ պատասխան տուաւ որ ամենեւին հոգ չընեն, միայն թէ տուած հարկերնէն ետ չկենան: Աս իշխաններն անկէ երուսաղէմ գացին զՅիսուս տեսնելու համար, որովհետեւ անոր բրած երեւելի հրաշքները լսած էին: Հոն զՔրիստոս

աշխույժին տեսնելով՝ եկան Աբգարին պատմեցին : Աբգար Քրիստոսին բրած Տրաշքիները բեւելն պէս , հաւատաց որ անկեա ճշմարիտ Աստուած պիտ'որ ըլլայ . եւ որովհետեւ եօթը տարի յառաջ Պարթեւաց երկիրն ստացած հիւանդութենէն դեռ բժշկուած չէր , անոր աղաչանաց նամակ մը գրեց որ գայ ու զինքը բժշկէ , եւ Անան սուրհանգակին եւ ուրիշ քանի մը մարդիկներուն ձեռքովն Երուսաղէմ խաւրեց , որոնք եկան զՔրիստոս գտան եւ Անդրէաս ու Փիլիպպոս առաքեալներուն ձեռքովը նամակն անոր տուին : Բայց Քրիստոս Լզդեսիա երթալը յանձն չառաւ , միայն Աբգարին նամակին պատասխան խաւրեց , որուն մէջ կը խոստանար որ իր համբառնալէն ետքն աշակերտներէն մէկը կը խաւրէ որ զինքը բժշկէ եւ իրեն եւ իր հպատակներուն ճշմարիտ հաւաքը սորվեցնէ : Աս նամակն՝ եւ անոր հետ մեկտեղ Քրիստոսի գաստաւուակի վրայ նկարուած կենդանագիրն Անան սուրհանգակը թագաւորին բերաւ :

Աբգարին Քրիստոսի գրած նամակն աս է . «Աբգար Արշամին որդին աշխարհքի իշխան , Փրկիչ ու Բարերար Յիսուսին՝ որն որ Երուսաղէմի մէջ երեւցար , Ողջոյն :

Քու անունդ եւ քու առանց դեղի եւ արմատներու բրած բժշկութիւններդ լսեցի : Վասն զի , ինչպէս որ կ'ըսեն , դուն կոյրերուն աչքը կը բանաս , կաղերը կը քալեցընես , բորոտները կը սրբես , սատանաները կը հանես , եւ երկայն ատեն հիւանդութիւն ունեցողները կ'առողջացընես . նա եւ մեռածներն ալ կը յարուցանես : Երբ որ աս ամէն բան լսեցի , միաքս դրի որ դուն կամ Աստուած ես որ երկինքէն իջած աս բաներս կ'ընես , եւ կամ Աստուծոյ Որդի ես : Ուստի քեզի գրեցի եւ աղաչեցի որ գաս եւ իմ հիւանդութիւնս բժշկես : Լսեցի ալ որ Հրեաները քու վրայ արտունջ կ'ընեն ու կ'ուզեն զքեզ չարչարել . ես պզտիկ ու գեղեցիկ քաղաք մ'ունիմ , որն որ երկուքներնուս ալ բաւական է , :

Իսկ Քրիստոսի խաւրած պատասխանն աս է :

«Երանի անոր՝ որն որ զիս չէ տեսած եւ ինձի կը հաւատայ . վասն զի ինձի համար գրուած է թէ ով որ զիս կը տեսէ , ինձի պիտ'որ չհաւատայ , իսկ որոնք որ չեն տեսած ,

անոնք պիտ'որ հաւատան ու փրկուին: Կսկ ան բանին հաւատար որ գրած եւ թէ քեզի դամ, պետք է որ եւ ինչ գործքի համար որ հոս խաւրուած եմ, զանիկա կատարեմ եւ երբ որ կը կատարեմ, զիս խրկողին բոլր պիտ'որ համբառնամ: Համբառնալն ետրը քեզի աշկերաններէս մէկը կը խաւրեմ որ քու ցաւերդ լծըշէ, ու քեզի եւ քու հպատակներուդ կեանք պարզեւէ»:

ԱՐ. Քրիստոսի համբառնալէն ետքն, իր պատուիրելովը Թովմաս առաքեալ զԹաղէոս՝ Քրիստոսի եօթանասուչուերկու աշակերաններէն մէկն Եղեսիա Աբգարին խաւրեց, որ զանիկա բժըշկէ ու քրիստոնէութիւնը քարոզէ: Թաղէոս եկաւ Բաղրատունեայ ցեղէն Տուբիա անունով իշխանի մը տունը, որն որ Արշամին Բաղրատունիները չարչարած աւենն՝ անոր քովէն փախած էր ու հրէութիւնը չէր ուրացած, եւ զանիկա քրիստոնեայ ընելով՝ մկրտեց: Թաղէոսին գալուն լուրը բոլր քաղքին մէջ տարածուելով՝ Աբգար ալ լսեց եւ իմացաւ որ Քրիստոսի աշակերան է՝ զորն որ խոստացած էր խաւրել. ուստի շատ մը մարդ խաւրեց եւ իր պալատը կանչել տուաւ: Երբ որ Ս. Թաղէոս Աբգարին խոցը կը մանէր, թագաւորն անոր երեսին վրայ սաստիկ պայծառութիւն մը տեսնելով՝ առջեւն ինկաւ երկրպագութիւն բրաւ: Քովի իշխաններն՝ որոնք Աբգարին տեսածը չէին տեսներ, ասոր վրայ շատ զարմացան: Թաղէոս թագաւորին ու բոլր քաղաքացիներուն ճշմարիտ հաւատքը քարոզեց, եւ Աբգարին վրայ ձեռք դնելով՝ զանիկա առողջացուց. նոյնպէս Աբգիւռ մեծ իշխանն ու բոլր քաղքին հիւանդները բժըշկեց: Ասով բոլր քաղաքացիք Քրիստոսի հաւատացին ու մկրտուեցան. Աբգար հրաման տուաւ որ ամէն մեհեանները զոցոփն ու կուռքերն եղէգով ծածկուին: Թաղէոս առաքեալը զԱղդէ՝ թագաւորին խոյր շինողն Եղեսիայի եպիսկոպոս ձեռնադրեց, եւ ինքն Աբգարէն հրովարտակ առած՝ Հայաստան անոր քեւորդւոյն Սանատրուկին քովը դնաց՝ զորն որ Հայաստանին ու զօրաց վրայ

զբաժնէր, որպէս զի սնոր այ Քրիստոսի հաւատքը քարոզէ, եւ քիչ ժամանակուան մը սնոր եւ իր իշխաններէն շատերուն ալ քրիստոնէութիւնը ստեղծեցուց ու մկրտեց:

Արդար ասկէ ետքը Տիբեր կայսեր երկու նամակ զրեց, աղաչելով սնոր որ զՔրիստոս խաչող Հրեաները պատժէ, եւ հրաման տայ որ ամէն տեղ համարձակ զՔրիստոս պաշտեն. միանգամայն խնդրեց որ Պիղատոսին տեղն Երուսաղէմ ուրիշ դատաւոր մը խաւրէ: Նամակ մ'ալ Ասորեստանի Ներսէս թագաւորին, եւ ուրիշ նամակ մը Պարթեւաց Արտաշէս թագաւորին խաւրեց, յորդորելով զանոնք որ Քրիստոսի հաւատքն ընդունին: Բայց դեռ աս նամակներուն պատասխանը չառած, ինքը սրբութեամբ վախճանեցաւ 38 տարի թագաւորելէն ետքը:

Պրոկոպիոս վեցերորդ գարուն յոյն պատմիչը (Վասն Պարսկական պատերազմին Գիրք Բ. 12.) աս Արգարին վրայ այսպիսի պատմութիւն մը կը պատմէ: Արգար, կ'ըսէ, որն որ իր ժամանակուան մարդիկներուն ամենէն իմաստունն էր, Օգոստոս կայսեր հետ դաշինք գնելու համար Հռոմ գնաց: Եւ երբ որ առաջին անգամ կայսեր հետ խօսեցաւ, Օգոստոս սնոր վրայ այնչտի սէր կապեց որ շէր ուզէր քովէն բաժնել: Արգար միշտ իր հայրենիքը դառնալու բազմալով, երբ որ շատ անգամ կայսրմէ հրաման ուզեց եւ ջնդուեցաւ, այսպիսի հնարք մը մտածեց: Քանի մը տեսակ որսի անասուններ բռնեց եւ ամէն մէկուն բռնուած տեղէն քիչ մը հող առաւ քաղաք բերաւ: Եւ որ մը, երբ որ կայսրը կրկէս գացած էր, ան հողերը կրկէսին զանազան կողմերը տարածել տուաւ եւ անասուններն ազատ թող տուաւ, որոնց ամէն մէկը շուտ մը վազեց իր երկրին հողին վրայ գնաց: Օգոստոս աս բանիս վրայ շատ զարմացաւ եւ հայրենեաց սիրոյն բնական բան մ'ըլլալուն համոզուելով՝ Արգարին հրաման տուաւ որ իր տեղն երթայ:

ԱՆԱՆՈՒՆ • ՍԱՆԱՏՐՈՒԿ

ԼԹ. Անանուն հօրը կը յաջորդէ (35) ու կուոց մեհանները նորէն կը բանայ: Աղղէ եպիսկոպոսին մահը: Խ. Սանատրուկ Արզարին քեռորդին Հայաստանի մէջ կը թագաւորէ (35) . քրիստոնէութիւնը թող կու տայ ու Ս. Թաղէոս առաքեալն եւ իր Սանդուխտ աղջիկը կը նահատակէ: Սանատրուկին Միջագետք արշաւելն, Անանունին մահն եւ Արզարին որդւոցն սպաննուիլը: ԽԱ. Մծբին քաղքին նորոգուիլը. Սանատրուկին մահը (65):

ԼԹ. ԱՅԳԱՐ՝ մեանելուն պէս Հայոց թագաւորութիւնն երկու բաժնուեցաւ . վասն զի իր որդին Անանուն Եդեսիայի մէջ թագաւորեց, իսկ Սանատրուկ իր քեռորդին Հայաստանի մէջ: Անանուն շուտ մը կուստունները բացաւ, եւ Աղղէին հրաման խաւրեց որ իրեն ալ թագ շինէ, ինչպէս յառաջ հօրը կը շինէր, որուն Աղղէ պատասխան տուաւ թէ ես քրիստոսի երկրպագութիւն չընող գլխան թագ չեմ շիներ: Ասոր վրայ Անանուն բարկանալով իր զինակիրներէն մէկը խաւրեց որ զանիկա սպաննէ. ան ալ գնաց անոր եպիսկոպոսական աթոռը նստած՝ ժողովրդեան քարոզ տալու ատենը՝ սրով ոտուրները կտրեց, սրով սուրբ եպիսկոպոսը հոգին աւանդեց:

Խ. Իսկ Սանատրուկ Հայաստան թագաւորելէն ետքը, նախարարներէն վախնալով՝ քրիստոնէութիւնը թողուց. Թաղէոս առաքեալն ալ Շաւարշան գաւառին մէջ մեռցուց. նոյնպէս իր Սանդուխտ աղջիկը քրիստոնէութեան մէջ հաստատուն կենալուն համար սպաննել տուաւ: Եւ ուզելով բոլոր Հայոց թագաւորութիւնը ձեռք ձգել, Բագրատունեաց եւ Արծրունեաց նախարարներուն ձեռքովը շատ զօրք ժողովեց, որպէս զի զԱնանուն վաճառէ ու Միջագետքն ալ աւանտ: Բայց դեռ աս պատրաստութիւնը տեսած ատենն, Անանուն՝ երբ որ օր մ'իր պալատին մէջ մար-

մորէ սիւն մը կանգնել կու տար; եւ ինքը վարը կեցած՝ գործավարներուն ինչպէս ընելիքնին կը ցուցնէր, սիւնը բանողներուն ձեռքէն իյնալով՝ իր ստուշները կտարեց ու մեռցուց: Ասոր վրայ Եղեռացիք Սանատրուկին մարդ խաւրեցին եւ խոստացան որ քաղաքն ու գանձն իր ձեռքը կու տան, միայն թէ իրենց հաւատքին չըպչի: Սանատրուկ յանձն առաւ, բայց ետքը խօսքը չպահեց. եւ որպէս զի իր թագաւորութեանը մէջ հաստատուն մնայ, Աբգարին բոլոր որդիքը սրէ անցուց, աղջիկներէն զատ, զորոնք Հաշտենից դաւառը խաւրեց: Իսկ զՀեղինէ՝ Աբգարին կինը Միջագետաց թագուհի ըրաւ ու խառան քաղաքը խաւրեց, անոր ձեռքովն Աբգարէն շատ բարիքներ ընդունած ըլլալուն համար: Բայց անիկա քրիստոնէայ ըլլալով՝ շուղեց կուսպաշաններուն մէջ կենալ, անոր համար Երուսաղէմ գնաց, ու մեծ սովին ատենը քաղաքացւոց շատ օգնութիւն ըրաւ:

ԽԱ . Սանատրուկ Միջագետքն առնելէն ետքը երեւելի գործք մը չըրաւ. միայն Մծբին քաղաքն՝ որուն մեծ մասն երկրաշարժէ մը փլաւ, նորոգեց ու փառաւորցուց. իր արձանն ալ քաղքին հրապարակին մէջ կանգնեց, ձեռքը դրամ մը բռնած, ուղեւով նշանակել թէ քաղաքը շինելու համար բոլոր գանձս լինցաւ, եւ մինակ ասիկա մնաց: Եւ որ մը սրսի ատեն ըստ պատահման փորին նետ մը գալով՝ մեռաւ, 30 տարի թագաւորելէն ետքը:

Խորենացին Սանատրուկին համար կը պատմէ թէ տղայութեան ատենն՝ երբ որ իր մօրն Աւդէին հետ Հայաստան կ'երթար, Կորդուաց լեռներուն մօտ սաստիկ մրրիկ մ'եղլելով՝ զամէնը ցրուեց. իսկ ինքն իր Սանոտ դայեկին հետ երեք օր երեք գիշեր ձեան տակը մնաց, մինչև որ խնդրակներն եկան գտան: Եւ որովհետեւ փնտռողներուն հետ ճերմակ շուն մ'ալ կար, իր վրայ առասպել մը շինեցին թէ աստուածներէն խաւրուած հրաշլի անասուն մը զինքը պահեց: Աս դէպքէս առեալ, կ'ըսէ Խորենացին, իրեն Սանատրուկ անունը դրին, այսինքն Սանոտայ տալքը:

Գ Լ ՈՒ Խ Ժ

Ե Ր ՈՒ Ա Ն Գ Ի

ԽԲ. Երուանդ թագաւոր կ'ընտրուի (65) ու Սահարուկին որդիները կը սպաննէ: Սմբատ Բագրատունին Արտաշէս մանուկը՝ Սանատրուկին որդիներէն մէկը, Պարթեւաց երկիրը կը փախցընէ: ԽԳ. Երուանդ զԱրտաշէս ձեռք ձգելու ետեւէ կ'ըլայ. Միջագետքը Հռոմայեցոց կու տայ, եւ ինքն աթոռը Հայաստան կը փոխադրէ: Երուանդաշատ, Բագարան եւ Երուանդակերտ քաղաքներուն շինուիլը: ԽԴ. Սմբատ Պարթեւաց թագաւորին օգնութեամբը զԱրտաշէս Հայաստան կը բերէ, Երուանդ անոր դէմ պատերազմի կ'ելլէ: Ախուրեան գետին քով եղած պատերազմն, Երուանդին յաղթուիլը: ԽԵ. Երուանդաշատին առնուիլն, Երուանդին մահը (85):

ԽԲ. ՍԱՆԱՏՐՈՒԿԻՆ Թագաւորութեան յաջորդեց Երուանդ անունով իշխան մը՝ որն որ Արշակունի կնոջ մը որդի էր: Ասիկա որովհետեւ յալթանդամ ու քաջ մարդ մըն էր, Սանատրուկ զինքը շատ գործքերու գործածեց, որոնց ամէնն ալ ազէկ կատարելով՝ մեծ պատուոյ հասաւ, եւ մինչեւ ամէն նախարարներուն առաջինն եղաւ. եւ իր առատաձեւ նութեամբն ու քաղցր բնութեամբն ամենուն սիրտն իրեն քաշեց: Ուստի երբ որ Սանատրուկ մեռաւ, բոլոր նախարարները միաբանեցան ու զինքը թագաւոր դրին. բայց առանց Բագրատունի իշխան մը զինքը պսակելու, ինչպէս որ Արշակունի թագաւորաց կարգն ու սովորութիւնն էր:

Երուանդ թագաւորութիւնն առածին պէս Սանատրուկին որդիներէն՝ որոնք թագաւորութեան օրինաւոր ժառանգն էին, վախնալով՝ ամէնն ալ մեռցընել տուաւ: Բայց անոնց մէջէն Արտաշէս անունով պզտիկ տղայ մ'իր ստնտուն առաւ Հեր գաւառը հովուաց քովը փախցուց, եւ շուտ մը Սպեր գաւառը մարդ խաւրեց եւ անոր դայեակին՝ Սմբատ Բագրատ

առնիին խնայուց : Ամբաս իւր Ամբաստանոյչ ու Ամբաստուհի ազջիկները Բայրերոյ ամուր բերդին մէջ դրաւ , ու զաւնդ մ'ալ քաջ մարդիկ բերդին պահպանութեան համար թող տալով , ինքն իր կնոջն ու քանի մը մարդիկներու հետ զԱրտաշէս փնտռելու զնաց : Երուանդ երբ որ աս բանս լսեց , մարդ խաւրեց որ Ամբասն եւ Արտաշէսը գտնենն ու բռնեն . ասոր համար Ամբաս արքայորդւոյն հետ երկայն ատեն դաշտերու ու լեռներու վրայ հովուաց քով ծպտեալ պարտեցաւ որպէս զի ձեռք չէյնայ , մինչեւ որ յարմար ատեն զանկելով՝ Պարթեւաց Գարեհ թագաւորին քովը զնաց : Եւ որովհետեւ Գարեհ Ամբասին քաջութիւնը գիտէր , զինքը շատ սիրով ընդունեցաւ , եւ Պարթեւաց զօրազուխներուն կարգը դրաւ , ու Մարաստանի Բատ ու Ողոմն գաւառներն իրեն բնակելու տեղ սահմանեց . զԱրտաշէս ալ իր տղոցը մէջ դրաւ :

ԽԳ . Երուանդ գիտնալով որ քանի որ Արտաշէս կենդանի է , իր թագաւորութիւնը հաստատուն չի կրնար մնալ , շատ ջանաց որ զանիկա ձեռք բերէ : Պարթեւաց թագաւորին շատ ընծաներով մարդ խաւրեց ու խնդրեց որ զԱրտաշէս իր ձեռքը տայ , ըսելով թէ Ինչո՞ւ համար Ամբասէն խաբուելով մար հովուի մը աղան իրբեւ Սանատրուկին որդին ինծի գէմ կը սնուցանես : Կոյնպէս Ամբասին ալ մարդ խաւրեց թէ Ինչո՞ւ ստնառին խօսքին հաւատալով՝ մարին որդին առեր կը պահես . բայց Ամբաս անոր խիստ պատասխան մը խաւրեց . անոր համար Երուանդ Բայրերդի վրայ զօրք խրկեց , որոնք բերդին պահպաններն սպաննեցին ու Ամբասին երկու աղջիկները բռնեցին , զորոնք Երուանդ Անի բերդին մէջ պահել տուաւ : Եւ որպէս զի Հռոմայեցիք երբ որ հարկաւոր ըլլայ իրեն օգնեն , բորը Միջագետքն անոնց տուաւ , Հայաստանէն ալ աւելի հարկ տալ սկսաւ . եւ ինքը զնաց Արմաւիր՝ Հայկազանց հին թագաւորանիստ քաղաքը բնակեցաւ : Բայց որովհետեւ Երասխ գետը նոյն քա-

ղաքէն հեռացած ըլլալով՝ քաղաքացիք ջրի նեղու-
 թիւն կը քաշէին, եւ միանգամայն ինքը միշտ վախի
 մէջ ըլլալով՝ կ'ուզէր շատ ամուր տեղ մը բնակիլ,
 ասոր համար Արմաւրին արեւմտեան կողմն՝ Երասխ
 գետին քով ըլլի մը վրայ Երուանդաշատ քաղաքը
 շինեց եւ ամուր պարսպով պատեց. քաղքին մէջտեղը
 բարձր պարսպով ու պղնձէ դռներով միջնաբերդ մ'ալ
 շինեց եւ աթոռն հոն փոխեց: Աս միջնաբերդն եւ-
 լելու համար երկաթէ սանդուխներ շինել սուաւ,
 որոնց վրայ որոգայթներ կային, եւ թէ որ չգիտցող
 մը գաղտուկ ելլել ուզէր, անոնց մէջ կը բռնուէր:
 Քաղաքը լմնալէն ետքն՝ Երուանդ Արմաւրէն բոլոր
 զարդերն եւ ուրիշ ամէն բան հոն բերել սուաւ, բայ
 ի կուռքերէն, որոնց համար Երուանդաշատէն 40 մղն
 հեռու՝ Ախուրեան գետին քովը Բագարան պզտիկ
 քաղաքը շինեց, ու բոլոր կուոց արձանները հոն կան-
 դնել տալով՝ իր Երուազ եղբայրն անոնց քրմապետ
 դրաւ: Ասոնցմէ զատ գեղեցիկ քաղաք մ'ալ շինեց
 Երուանդակերտ անունով, ու Ծննդոց անտառը տնկել
 սուաւ, մէջն որսի անասուններ աճեցընելու համար:

ԽԳ. Երուանդ աս գործքերու զբաղած ատեն,
 Սմբատ Պարթեւաց թագաւորէն օգնական զօրք ա-
 ռած, զԱրտաշէս՝ որն որ արդէն չափահաս եղած
 էր, թագաւորեցընելու համար Հայաստան կը բերէր:
 Որովհետեւ աս քաջ զօրապետը Պարթեւաց երկիրը
 մեծամեծ քաջութիւններ ընելով՝ պարթեւ նախա-
 րարներուն շատ հաճելի եղաւ, որոնք թագաւորին
 աղաչեցին որ անոր արժանաւոր պարգեւ մը տայ:
 Թագաւորն ըսաւ. Գացէք հարցուցէք թէ ինչ
 կ'ուզէ. նախարարներն ալ պատասխան տուին. Սմբատ
 ուրիշ բանի չիբաղձար բայց միայն որ զԱրտաշէս իր
 հօրն աթոռը նստեցընես, ուսկից որ Երուանդ զինքը
 զրկած է: Դարեհ աս բանիս հաւանելով՝ Պարթեւաց
 զօրքին մէկ մասը Սմբատին ձեռքը սուաւ որ երթայ
 արքայորդին զահը նստեցընէ: Երուանդ Սմբատին

գալ Աւաի գաւառին մէջ լսելուն պէս, նախարարնե-
րուն մէկ մասը հոն թողուց որ ան կողմը պահպանեն,
եւ ինքն Երուանդաշատ քաղաքը գնաց, Հայոց, Արաց
ու Կապադովկիայի զօրքերը ժողվելու համար. Միջա-
գետքէն ալ շատ զօրք բերել տուաւ. եւ որովհետեւ
գարնան ատեն էր, շուտ մ'ամէն կողմանէ սաստիկ
շատ զօրք ժողվուեցան: Երուանդայ քովն եկաւ Ար-
գամ Մուրացանոց նախարարն ալ շատ արիւղաւոր զօր-
քով, վասն զի Երուանդ երկրորդական գահը՝ զորն
որ Տիգրան Մուրացանոց նախարարներուն ձեռքէն
առած ու Միհրդատին տուած էր, նորէն անոնց
դարձուց:

Իսկ Սմբատ իր բանակովն եկաւ Աւաի գաւառը,
հոն բոլոր ան կողմի նախարարներն իրենց զօրքովն իր
կողմն անցան: Միւս նախարարներն աս բանս լսել-
նուն պէս, իրենք ալ սկսան մտածել որ Երուանդը
թողուն ու Սմբատին կողմն անցնին: Սմբատ Արտա-
շէսին հետ մէկտեղ Աւաիէն դէպ ի Գեղամայ ծովին
կողմերը քալեց, որովհետեւ Երուանդին բանակն ան
կողմերն Երուանդաշատէն 300 մղոն հեռու՝ Ախու-
րեան գետին քովն էր: Երուանդ երբ որ Սմբատին
մօտենալը լսեց, զօրքը բանակէն դուրս հանեց ու
դաշտին վրայ ճակատեցուցած կեցաւ: Բայց Սմբատ
անոր զօրքին շատութիւնը բանի տեղ չդրաւ, միայն
Արգամ նախարարէն քիչ մը վախնալով, որովհետեւ
քաջ մարդ մըն էր ու շատ զօրք ունէր, Արտաշէսին
կողմանէ անոր մարդ խաւրեց եւ երդմամբ խոստացաւ
որ եթէ զԵրուանդ թողու ու մէկդի երթայ, իրեն
չէ թէ միայն անոր տուածները կու տայ, այլ նաեւ
շատ ուրիշ պարգեւներ ու պատիւներ ալ կը շնորհէ:
Երբ որ Սմբատին զօրքն ալ Երուանդին բանակին
դիմացը շարուեցան, Արգամ իր զօրքովն Երուանդէն
զատուեցաւ ու մէկդի գնաց: Ան ատենը Սմբատ փո-
ղերը զարնել տուաւ եւ իր զօրքը յառաջ քշեց. նոյն
միջոցին Երուանդին քովն եղող բոլոր Հայ նախա-

լարներն իրենց զօրքովը Սմբատին կողմն անցան : Իսկ Արաց գունդը թէպէտ եւ իսկզբան սաստիկութեամբ մը Սմբատին զօրացը վրայ յարձակեցաւ, բայց շուտ մը յաղթուեցաւ ու փախաւ. նոյնպէս Երուանդին ուրիշ զօրքերն ալ ու Միջագետաց գունդը սաստիկ ջարդ մը կերան ու ցրուեցան : Աս սաստիկ պատերազմին ատենը քանի մը Տաւրացի մարդիկ՝ որոնք մահէրնին աչքերնին առած, Երուանդին խօսք տուած էին որ զԱրտաշէս մեռցընեն, անոր վրայ վազեցին որ զարնեն : Շուտ մ'անոնց դէմ ելաւ Գիսակ քաջ իշխանը՝ Արտաշէսին ստնառին որդին եւ անոնց ամէնն ալ սպաննեց. բայց իր դէմքին կէսն ալ սրով կտրուելով՝ ինկաւ մեռաւ :

ԽԵ. Երուանդին զօրքը յաղթուելէն ու ցրուելէն ետքը, ինքն ալ իր ձիովը փախաւ, ու ճամբան տեղ տեղ ձին փոխելով՝ սաստիկ շուտութեամբ Երուանդաշատ եկաւ. Սմբատ ալ պզտիկ գնդով մ'անոր ետեւէն ինկած՝ գիշեր ատեն մինչեւ Երուանդաշատին առջեւը հալածեց : Արտաշէս նոյն գիշերը բոլոր իր զօրքովն Երուանդին բանակը մտաւ եւ անոր վրանին մէջ բնակեցաւ : Առտու ըլլալուն պէս՝ հրամայեց որ մեռելները թաղեն, եւ որովհետեւ Արգամին զօրքն իր կողմն անցած՝ եւ ան գիշերը նոյն բանակին մէջ մեռելներուն վրայ բանակած էին, նոյն դաշտին անունը Մարաց մարդ դրաւ. իսկ պատերազմին տեղն Երուանդավան անուանեց : Անկից բոլոր զօրքովն Երուանդաշատին վրայ քալեց, ուր որ Սմբատ առաջին գիշերը հասած ու դռները բռնած էր : Քաղքին առջեւը հասածին պէս, հրամայեց որ բոլոր զօրքը Մար անապատուան, որն որ կը նշանակէ Մարն եկաւ, որովհետեւ Երուանդ զԱրտաշէս անարգած ու Մար անուանած էր : Երբ որ զօրքը քաղքին հետ սկսան պատերազմիլ, մէջիններն անձնատուր եղան ու դռները բացին. Արտաշէսին զօրքը ներս մտաւ, եւ անոնցմէ մէկն Երուանդը գտնելով՝ վաղրով մը զար-

կաւ գլուխը ջախջախեց եւ բղկը ցրուեց : Այսպէս մեռաւ Երուանդ 20 ասորի թագաւորելէն ետքը , որուն Արտաշէս փառաւոր շիրիմ մը շինել տուաւ Արշակունի կնոջ որդի ըլլալուն համար :

Աս Երուանդը սասաիկ դաժան նայուածք մ'ունէր , անոր համար վրան առասպել մը կը պատմէին թէ իր ծառաներն ամէն օր առտուանց կանուխ իրեն առջեւը կարծր ժայռի կտորներ կը բերէին կը բռնէին , որոնց Երուանդ նայելուն պէս կտոր կտոր կ'ըլլային :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ա

Ա Ր Տ Ա Շ Է Ս Բ .

ԽԶ . Արտաշէս դահը կը նստի (85) եւ իրեն թագաւորելուն օգնական ըլլողներուն պարզէններ ու պատիւներ կու տայ : Սմբատին ձեռքովը զԵրուազ սպաննել կու տայ : Պարթեւաց թագաւորին ընծաներ կը խաւրէ : Արտաշատ քաղաքը կը նորոգէ եւ աթոռը հոն կը հաստատէ : ԽԷ . Աւանաց թագաւորը Հայաստան կը յարձակի . Արտաշէս անոր կը յաղթէ եւ անոր Սաթինիկ աղջիկն իրեն կնութեան կ'առնու : ԽԸ . Արտաւազդին (Արտաշէսին որդւոյն) եւ Արգափն մէջ ծագած դժտութիւնն , Արգափն սպաննուիլը : ԽԹ . Աւանաց երկրին խռովութիւնը . Սմբատին զօրքով հոն խաւրուիլը : Ծ . Կասպից ազգերը կ'ապստամբին , Արտաշէս Սմբատն անոնց վրայ կը խրկէ . Սմբատ զանոնք կը հնազանդեցընէ ու Չարգմանոս թագաւորը գերի բռնած՝ Հայաստան կը բերէ : Արտաւազդին Սմբատին հետ թշնամանալը : ԾԱ . Արտաշէս Հռոմայեցւոց հարկ տալը կը դադրեցընէ . Սմբատ Հայաստանի վրայ եկող Հռոմայեցւոց կը յաղթէ : Տրայիանոս կայսեր զօրքով Ասիա գալն , Արտաշէսին նորէն Հռոմայեցւոց հնազանդիլը : ԾԲ . Արտաշէսին ըրած բարեկարգութիւնները : ԾԳ . Իր մահն (126) եւ յուղարկաւորութեանը հանդէսը :

ԽԶ . ՍՄԲԱՏ յաղթութիւնը կատարելէն ետեւ մտաւ թագաւորական գանձատան մէջէն Սանատրուկին թագը գտաւ , եւ Արտաշէսին գլուխը դնելով՝ զանիկա Հայոց թագաւորեցուց , որն որ թագաւորու-

Թիւնն առածին պէս, Պարթեւաց զօրքերուն առատ պարգեւ տուաւ եւ իրենց տեղը խաւրեց: Արգամին ալ երկրորդական գահը տալէն զատ, նաեւ յակինթ քարերով զարդարուած պսակ, երկու ականջներուն գինգ ու մէկ ոտքին կարմիր կօշիկ պարգևեց. հրաման ալ տուաւ որ սսկիէ գգալ, պատառաբաղ եւ բաժակ գործածէ, որոնք մեծ պատուոյ նշաններ էին: Նոյնպէս Սմբատին ալ մեծամեծ պարգևներ տալէն զատ, անոր աստիճանն ալ մեծցուց, ու բոլոր Հայոց զօրքին վրայ սպարապետ դրաւ, որովհետեւ Բագրատաունի նախարարները յառաջագոյն միայն զօրաց արեւմտեան մասին վրայ զօրապետ էին. նաեւ բոլոր Հայոց տէրութեան գործակալներն եւ իր արքունեացը գործքերն անոր յանձնեց: Գիսակին Ներսէս որդին՝ իր հօրը քաջութեանը համար, որովհետեւ, ինչպէս վերը պատմեցինք, զինքը մահուանէ ազատած էր, նախարարաց կարգն անցուց, եւ ան ցեղին անունը Գիմաքսեան դրաւ, Գիսակին՝ զինքն ազատելու ատեն դէմքին կէսին կարուելուն յիշատակին համար: Տուր անունով մարդու մը ցեղին ալ նախարարութեան պատիւ տուաւ, եւ անոր տասնուհինգ որդւոցը մէջէն երէցը գլուխ դրաւ. վասն զի աս Տուրն Երուանդին Թագաւորութեան պատեն՝ անոր շատ ընտանի ըլլալով, բոլոր անոր խորհուրդներն ու պատրաստութիւնները կ'իմանար ու գաղտուկ Սմբատին կ'իմացընէր, անոր համար Երուանդ զինքն սպաննել տուած էր: Աս նախարարութիւնը Տուրին անուամբը Տրունիք կոչուեցաւ: Ետքը զՍմբատ Բագարան խաւրեց որ Երուանդին Երուազ եղբայրը մեռցընէ: Սպարապետը զնոց զանիկա բռնեց ու վիզը քար մը կապելով գետ նետել տուաւ. անոր տեղը զՄոգպաշտէ Արտաշէսին սիրելին՝ որն որ մոգի մը աշակերտ ըլլալուն համար այսպէս կ'անուանէր, քրմապետ դրաւ, եւ Երուազին բոլոր ինչքը 500 ծառաներովը մէկտեղ, նոյնպէս մեհենին շատ հարստութիւններն առաւ Արտաշէսին

բերաւ : Ան ալ բոլոր ծառաները Սմբատին պարզեւեց . իսկ բերած հարստութիւններուն վրայ ինքն ալ իր գանձէն շատ բան տւելցրնելով , հրամայեց որ Գարեհ Պարթեւաց թագաւորին բնծայ տանի , զինքն այնչափ առեն հողալուն եւ իրեն բրած օգնութեան համար : Սմբատ Այրարատ լերան քով Բազարան անուանով քաղաք մը շինեց եւ Երուսղին ծառաները հոն տեղաւորեց , եւ ինքը գանձն առած՝ Գարեհին զնաց : Արտաշէս ասկէ ետքն Արտաշատ քաղաքը նորոգեց ու զարդարեց , եւ ամթուր հոն փոխեց : Երուանդաշատին ամէն զարդերը՝ զորոնք Երուանդ կէս մը Արմաւրէն բերած կէս մ'ալ նորէն շինած էր , նոյնպէս Երուանդին Արմաւրէն Երուանդաշատ բերած Հրէից դերիները հոն փոխադրեց : Քաղքին մէջ մեհեան մ'ալ շինել տուաւ եւ ամէն կուռքերը Բազարանէն հոն բերել տուաւ :

Խորենացին Հայոց Ախպասաններէն առած կը պատմէ թէ Արտաշէս Արտաշատ քաղաքը նոր շինեց . բայց արտաքին պատմիչներն , որոնց մէջէն ոմանք Արտաշէսէն յառաջ են , կ'ըսեն թէ Արտաշէս կուսակալը շինեց աս քաղաքը Անի-բաղին առաջնորդութեամբ : Ուստի յայտնի կ'երեւայ որ Հայոց վիպասաններուն ըսածը նորոգութեան համար է , չէ թէ բոլորովին նորէն շինութեան համար :

ԽԻ . Լ^ա ատեններս Ալանաց թագաւորը կովկասու լեռներուն բնակչացը հետ միաբանելով՝ եւ Արաց կէսն ալ իր կողմը քաշելով՝ շատ զօրքով Հայաստան յարձակեցաւ : Արտաշէս ալ բոլոր Հայոց զօրքը ժողովեց , անոր դէմ՝ զնաց , եւ Հայաստանին սահմանին վրայ անոր հետ զարնուեցաւ : Ալանները յաղթուեցան եւ ետ քաշուելով՝ կուր գետէն անդին անցան ու գետին եզերքը բանակնին դրին . Արտաշէս ալ իր բանակը գետին ասդիի եզերքը դրաւ : Բայց որովհետեւ Հայերն Ալանաց թագաւորին որդին բռնած էին , անոր համար թագաւորն ուղեց Արտաշէսին հետ հաշտութիւն ընել , ու խոստացաւ որ

ինչ բան որ սեղէ տայ, եւ մէջերնին դաշինք զնեն որ մէջ մ'ալ Ալանները Հայոց սահմանը չյարձակին ու չասպատակեն: Բայց երբ որ Արտաշէս յանձն շատաւ անոր որդին ետ տարւաւ, ազուն քոյրը Սաթինիկ զեափն քովն եկաւ ու թարգմանի ձեռքով Արտաշէսին խաւացի խօսքեր խօսելով՝ համոզեց որ իր եղբայրն ազատ թող տայ: Արտաշէս անոր իմաստուն խօսքերը լսելով՝ զեափն քովը զնաց զանիկա տեսաւ, եւ ուզեց իրեն կին առնուլ. ուստի Սմբատին իր կամքը յայանեց: Սմբատ շուտ մ'Ալանաց թագաւորին մարդ խաւրեց ու խնդրեց որ Սաթինիկն Արտաշէսին կնութեան տայ, եւ ասով մէջերնին խաղաղութիւն ու հաշտութիւն ըլլայ եւ իր որդին ալ ազատի. ան ալ հաւանեցաւ եւ ազնիկը խաւրեց:

Հայոց Ախպասաններն՝ որոնք Արտաշէսին բոլոր գործքերն իրենց գեղեցիկ երգերուն մէջ կ'երգէին, անոր զՍաթինիկ իրեն կին առնելուն պատմութիւնն այսպիսի այլարանութեամբ կը պատմէին:

Հեծաւ արի արբայն Արտաշէս ի Սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գեան,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Նոյնպէս հարսանեաց հանդէսին համար այսպէս կ'երգէին.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշէսի.
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինիկանն:

Խորենացին աս երգը զնելէն ետքը, մեկնութիւնն ալ այսպէս կու տայ. Արովհետեւ, կ'ըսէ, Ալանաց քովը կարմիր կաշին շատ յարգի էր, Արտաշէս Ալանաց թագաւորին Սաթինիկին համար շատ ոսկիէն զատ շատ ալ Լայքա տուաւ (որն որ տեսակ մը՝ կաշի ներկելու կարմիր ներկ է). աս է երգին մէջ Ասկէօղ շիկափոկ պարան ըսածը: Իսկ հարսնիքին համար ըսածնին աս էր որ Հայոց թագաւորներուն սովորութիւնն էր իրենց հարսնիքին ատենը ստակ նետել, թագուհիներուն ալ մարգարիտ:

ԽԸ. Իրապէս սա Սաթիինիկէն շատ որդիներ ունեցաւ, որոնց առաջինն էր Արտաւայգ : Ասիկա էր որ շափաճաս եղաւ, հոգարս աղայ մ'ըլլալով, ուզեց Արգամին ձեռքէն երկրորդութեան պատիւը յափըտակել, անոր համար իր հօրն ամբաստանութիւն բրաւ թէ Արգամ կ'ուզէ թագաւոր ըլլալ : Արապէս սա բանիս հաւատարմով՝ անոր տուած պատիւն տուաւ եւ Արտաւայգին տուաւ : Ասիկէ քիչ մը ետքն Արապէս Արգամին քովը կերակուր ուտելու գնաց. հոն կերակրի ասուն իր որդիքը կասկածի երթալով՝ որ Արգամ կ'ուզէ զթագաւորը նենգութեամբ սպաննել, խռովութիւն հանելցին եւ զանիկա շարչըրկեցին : Արապէս ստատիկ այլայլած՝ Արտաշատ եկաւ, եւ իր Մածան որդին զուճարտակով մը խաւրեց որ անոր պալատն այրէ, ցեղը սրէ անցընէ եւ ինչքը գրաւէ : Բայց երկու տարի ետքը նորէն ինչքերն իրեն տուաւ : Իսկ Արտաւայգ երկրորդութեան պատիւն Արգամին ձեռքէն առնելէն ետքը, նաեւ անոր Նախիջեւանի մջ եւ Երասխ գետին քովերն ունեցած բոլոր կալուածներն ալ յափշտակեց : Արգամին որդին ալ ասոր չկրնալով դիմանալ, անոր դէմ պատերազմի ելաւ. բայց Արտաւայգ անոր յաղթեց ու թէ զինքը թէ զԱրգամ բոլոր ցեղովն սպաննեց. միայն քանի մը հոգի Արտաշէսին քովը փախչելով՝ կրցան մահուանէ ազատիլ :

ԽԹ. Եւրբ որ Արապէս Հայաստանը կարգի դնելու զբաղած էր, լուր առաւ որ Ալանաց թագաւորը (Սաթիինիկին հայրը) մեռեր է, եւ ուրիշ մարդ մ'անոր ակթուր յափշտակելով՝ անոր որդին վաճառեր է : Հոս մը զՄմբատ քաջ սպարապետը Հայոց զօրքով Ալանաց երկիրը խաւրեց, որպէս զի ան բռնաւորը վաճառէ ու Սաթիինիկին եղբայրը հօրը տեղ թագաւորեցընէ : Մմբատ գնաց զանիկայ փախուց եւ արքայորդին հօրն ակթուր նստեցուց. անոր թշնամիներուն երկիրն ասպատակեց եւ արշտըրկեց, եւ շատ գերի

առաւ Հայաստան բերաւ : Արտաշէս հրամայեց անոր որ ան գերիները Շաւարշան դաւաար բնակեցնէ . եւ որովհետեւ անոնց բուն տեղն Արտաշ կը կոչուէ , անկէ ետքը Շաւարշան դաւաարն ալ Արտաշ անուանեցաւ :

Ծ . Սմբատին Հայաստան դառնալէն յիշ մը ետքը Արտաշէս զինքը զօրքով Կասպից ծովին քովը բնակող ազգերուն վրայ խաւրեց : Որովհետեւ նոյն ժամանակը Պարթեւաց Արշակ թագաւորը մեռնելով՝ մեր Արտաշէս թագաւորն անոր որդին եւ իր անուանակիցն Արտաշէս թագաւոր դրաւ : Բայց Պատիժահար դաւաարին բնակիչները , նոյնպէս Կասպից ծովին մօտ բնակող ազգերը չուզէցին անոր հնազանդել , եւ զէնք առած դէմ ելան : Արտաշէս Սմբատը խաւրեց որ զանոնք նուաճէ , ինքն եօթն օր անոր հետ երթալով : Սմբատ դնաց իր քաջութեամբն ամենուն յաղթեց ու հնազանդեցուց . բայց Կասբից երկիրն այրեց , կործանեց եւ Արտաշէս բերած գերիներէն աւելի գերի առաւ , անոնց Չարդմանոս թագաւորն ալ մէկտեղ եւ Հայաստան բերաւ : Աս մեծ քաջութեան գործքին համար Արտաշէս Գողթն գաւառին թագաւորական կալուածներն ու բոլոր պատերազմին աւարը Սմբատին պարգեւեց : Արտաւաղդ ասոր վրայ սաստիկ նախանձելով՝ ուզեց զՍմբատ մեռցնել . բայց իր խորհուրդը յայտնուեցաւ , զորն որ Արտաշէս ալ լսելով՝ շատ խռովեցաւ : Ասոր վրայ Սմբատ իր կամքովն սպարապետութենէ հրաժարեցաւ , եւ Հայաստանին հարաւային կողմերը դնաց . Արտաշէս հրամայեց անոր որ Տմորիք (Կորդրիք) գաւառը բնակի . ան ալ բոլոր գերիներն Ալիի մէջ տեղաւորեց , եւ ինքը Տմորիք քաշուեցաւ : Արտաւաղդ Սմբատին երթալէն ետքն իր բաղձացած սպարապետութեան իշխանութիւնն հօրմէն առաւ : Ասոր վրայ իր եղբայրներն սկսան նախանձիլ . անոր համար Արտաշէս իր որդիքն այսպէս կարգադրեց : ԶԱրոյր՝ որն որ շատ խելացի

մարդ մըն էր, աէրութեան Հաղարապետ դրաւ, ու բողոք արքունեաց զորքերն անոր յանձնեց, Մաժանն ալ քրմապետ ըրաւ: Իսկ զօրքը շորս մաս բաժնեց. արեւելեան մասին վրայ՝ Արտաւաղդը դրաւ, արեւմբտեանը Տիրանին յանձնեց, հարաւայինը Սմբատին տուաւ ու հիւսիսայինը Չարեհին: Աս Չարեհ թէպէտ եւ որսորդութեան մէջ քաջ ու ճարտար էր, բայց պատերազմի մէջ այնչափ քաջութիւն չունէր: Արաց Քարձամ թագաւորն աս բանս գիտնալով, յանկարծ անոր վրայ յարձակեցաւ ու բռնեց Կովկաս լեռանց մէջ բանտ դրաւ: Բայց Արտաւաղդ ու Տիրան Սմբատին հետ անոր վրայ դացին՝ զարկին նուաճեցին, Չարեհն ալ բանտէն ազատեցին:

ԾԱ. Արտաշէս լսելով որ Հռոմի կողմերը խռովութիւն կայ, Հռոմայեցւոց հարկ տալը դադարեցուց: Անոնք ղինքը նուաճելու համար, Հայաստանին վրայ զօրք խաւրեցին, որոնք եկան Փոքր Հայաստանին կողմերը Տիրանին հետ զարնուեցան՝ յաղթեցին եւ մինչեւ Բասեն գաւառին ընդարձակ դաշտերը հալածեցին: Հոն վրայ հասան Արտաւաղդ եւ իր միւս եղբայրը հիւսիսային եւ արեւելեան զօրքերով, եւ նորէն թշնամւոյն հետ սաստիկ զարնուեցան, բայց իրենք ալ բան մը չկրցան ընել ու վտանգի մէջ ինկան: Աս միջոցիս Սմբատ քաջ զօրապետը հարաւային դնդով հոն հասաւ, եւ իր պատերազմական հմտութեամբը զօրքը Հռոմայեցւոց դէմ ճակատեցրնելով՝ զարնուեցաւ յաղթեց, եւ մինչեւ Կապադովկիայի կողմերը հալածեց: Աս յաջողութենէն համարձակութիւն առած Հայերն ու Պարթեւները միաբանեցան Հռոմայեցւոց երկիրները յարձակեցան եւ ասպատակեցին. Եգիպտացիք ու Պաղեստինացիք ալ ասոնց հետեւեցան, ու Հռոմայեցւոց հարկ տալը դադարեցուցին: Ասոնք զսպելու համար Տրայիանոս կայսրն ահագին բանակով մը Ասիա անցաւ եւ նախ Եգիպտացւոց ու Պաղեստինի վրայ դնաց եւ զանոնք նուա-

Տէրէն ետքը՝ Պարթեւաց վրայ, քաղց: Արտաշէս աս
բանս լսելուն պէս շատ մը շատ բնձաներով անոր
զիմացը գնաց, եւ առաջին տարիներուն հարկերն ալ
զարգք որ չէր տաւ, բոլոր հասարակութեամբ անոր
հետ հաշտութիւն բրաւ. առանկով Հայաստան Հաւ-
մայեցւոց յարձակմանն ազատ մնաց: Տրայիանոս
Պարթեւաց հետ պատերազմելէն ետքը զարձաւ եկաւ
Ասորիք: Հին անոր քովը գնաց Մաթան՝ Արտաշէսին
որդին եւ իր եղբարցը վշայ ամբաստանութիւն բրաւ,
բակրով թէ, Աթէ զԱրտաւազդն ու Տէրանք քշել
չասա ու Հայոց զօրքը Զարեհին չշանձնես, հարկերը
չես կրնար զիւրաւ առնուլ: Աս բանս անոր համար
բրաւ, որովհետեւ Արտաւազդին յիս պահած էր անոր
Սմբատին (իր գայեակին) բրած անիրաւութիւններուն
համար. Տիրանն ալ կ'ուզէր զօրապետութենէ ձգել
որպէս զի ինքը թէ քրմապետ թէ արեւմտեան զօրաց
զօրապետ ըլլայ. բայց Տրայիանոս անոր խօսքը մտիկ
չբրաւ: Արտաւազդ ու Տիրան աս բանս իմանալով
որսի առեն զինքն սպաննեցին, ու տարին Բագաւանի
մէջ թաղեցին:

ԾԲ. Արտաշէս ասիկէ ետքն սկսաւ Հայաստանը
թէ ուսման թէ արուեստի եւ թէ մշակութեան մէջ
ծաղկեցրնելու փոյթ տանիլ: Գեղերուն եւ ազարակ-
ներուն սահմաններն իրարմէ որոշել տուաւ. սահմա-
նազրուխներն ալ ճշգիւ որոշելու համար, հրաման
տուաւ որ խոշոր շորեքիւսի քարեր շինեն ու մէջ
տեղը խորունկընելով՝ սահմանազրուխներն՝ երկրի մէջ
թաղեն, ու անոնց խորունկցուած տեղերուն մէջ գետ-
նէն քիչ մը բարձր քառակուսի քարեր անկեն: Օտար
երկիրներէն շատ գաղթականութիւններ բերաւ ու
Հայաստանի մէջ բնակեցուց: Երկրագործութիւնն ալ
այնչափ յառաջ տարաւ որ իր առենը Հայաստանի մէջ
ամենեւին չգործուած երկիր չմնաց. վասն զի Հայերն
յառաջագոյն երկրագործութեան այնչափ փոյթ չէին
տաներ, իրենց հասարակ ու սիրական կերակուրը

մտեղէն ըլլալուն համար, այլ ոչխար, եղ եւ ուրիշ ասոնց նման անասուններ աճեցրնելու ետեւէ էին. անոր համար ալ շատ բերրի տեղեր անգործ ու խաւսան մնացած էին: Ասիկէ զատ Հայաստանին լճերուն ու գետերուն վրայ նստապնայութիւն ու ձկնորսութիւն հաստատեց: Վարձեալ շաբաթներուն, ամիսներուն ու տարեաց շրջանը կարգի դրաւ, որովհետեւ իրմէ յառաջ Հայերն առանձին տարւոյ եւ ամիսներու կարգ չունէին, այլ ուրիշ ազգերունը կը գործածէին:

Ասոր թագաւորութեան ատենն Արեաց երկրէն Մանու անունով Հրեայ իշխանի մը ցեղին՝ զորն որ Արշակ Պարթեւաց թագաւորը հան տարած էր, մէկ մասը Հայաստան եկաւ, եւ Արտաշէսէն նախարարաց կարգը դրուեցաւ, որուն անունն Ամասունի ըսուեցաւ: Նոյնպէս Սաթրապի թագաւորացն ազգականներն՝ որոնք անոր հետ Հայաստան եկած էին, նախարարաց կարգն անցան եւ Առուեղեանք անուանեցան:

ԾԳ. Արտաշէս Հայաստանն այսպէս ծաղկեցրնելէն ու կարգաւորելէն ետքն, Ազրիանոս կայսեր զօրացը հետ Պարթեւաստան գնաց: Որովհետեւ նոյն ատենները Հրեայք Ազրիանոսէն ապստամբեցան, որոնց դէմ՝ կայսրն անձամբ գալով՝ զիրենք նուաճելէն ետքն՝ Ասորեստանի կողմերը Պարթեւաց վրայ մեծ բանակ մը խաւրեց. մեր Արտաշէսին ալ՝ որն որ Հռոմայեցւոյ կողմն էր, հրաման խաւրեց որ իր բանակին հետ Պարթեւաց երկիրն երթայ: Հոն Արիստոն Փեղզացի քարտուղարը Սոհունդ ըսուած տեղն Արտաշէսին պատահելով՝ անոր մեռնիլն եւ յուզարկաւորութեան հանդէսը տեսաւ, ու տեղն ի տեղը գրեց: Արտաշէս Մարանդ գաւառին Բակուրակերտ աւանին մէջ հիւանդացաւ, եւ Աբեղեան ցեղին Աբեղոյ նախարարն՝ որն որ շողքորդ մարդ մըն էր, իր ուղեւորելիքի յա գեղն՝ Արտեմիս չաստուածին մեհեանը խաւրեց, որպէս զի անկէ իրեն համար առողջութիւն եւ երկայն կեանք խնդրէ: Բայց դեռ անիկա ետ չգար-

ձած՝ Արտաշէս մեռաւ : Իրեն թագման հանդէսը շատ փառաւորութեամբ բրին . դապաղը ոսկիէ էր , անկողինը բեհեզէ , ոսկեով բանուած զգեստ հագած , գլուխը թագ , ոսկիով դործուած զէնքերն իր դիմացը դրուած . չորս կողմն իր որդիքն եւ ազդականները կեցած էին , անոնց քովը բոլոր թագաւորական պաշտօնեաներն ու նախարարներն իրենց զնդերովը . նոյնպէս բոլոր զօրքն իրենց զէնքերովը պատերազմի երթալու պէս շարուած . առջեւէն պղնձէ փող հնչեցրնելով , եւ ետեւէն սեւ հագուած լալկաններ , անոնց ետեւէն ալ ժողովրդեան բազմութիւնը կ'երթար : Այսպիսի փառաւոր հանդէսով տարին թաղեցին , որուն զերեզմանին քովն իր սիրելի կիներէն , հարձերէն ու ծառաներէն շատերն իրենք զիրենք մեռցուցին : Արտաշէսին թագաւորութիւնը 41 տարի տեւեց :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ի

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Գ Բ .

ԾԴ . Արտաւազդին թագաւորելն ու մահը (130) :
 ԾԵ . Իր վրայ պատմուած առասպելները :

ԾԴ . ԱՐՏԱԻԱՋԳԻՒՆ Արտաշէսին մեծ որդին հօրը գահը նստաւ , եւ անմիջապէս իր եղբայրներն ու քուրերն Այրարատէն Աղիովիտ եւ Առբերանի գաւառները վճնտեց . միայն իր Տիրան եղբայրը քովը պահեց թագաւորութեան յաջորդ ըլլալու համար , վասն զի ինքն որդի չունէր : Թագաւորելէն քիչ մը ետքն՝ օր մը ձիով որսի գնաց , ու ճամբան վրան շփոթութիւն ու խելացնորութիւն մը գալով , ձիովն ասդին անդին սկսաւ երթալ գալ , ու խորունկ փոսի մը մէջ ինկաւ կորսուեցաւ : Ասոր վրայ Գողթան երգիչներն իրենց երգերուն մէջ կը պատմէին թէ՛ Արտաշէսին մահուան ատենը շատ մարդիկ անոր սիրոյն

Համար իրենք զիրենք մեռցընելով՝ Արտաւազդին դժուարն եկաւ, ու հօրը դէմ քանքատելով ըսաւ . Գուն՝ երթալու ատենդ բոլոր աշխարհք հետդ տարիր, ես աւերակներուն ի՞նչպէս թագաւորեմ . անոր համար Արտաշէս զինքն անիծեց եւ ըսաւ թէ Որսի ելած ատենդ զքեզ քաջերը բռնեն ու Մասիս լեռը տանին . հոն մնաս եւ ամենեւին լոյս չտեսնես :

Եթէ դու յորս հեծցիս
Յագատ ի վեր ի Մասիս,
Չքեզ կալցին քաջք
Տարցին յագատ ի վեր ի Մասիս :
Անդ կացցես, եւ զլոյս մի տեսցես :

ԾԵ . Հին ատենուան հայ պառւաններն ալ կ'ըսէին թէ Արտաւազդ այրի մը մէջ շղթայով կապուած կեցած է, եւ երկու շուն միշտ շղթան կը կրծեն որ վրթի, եւ Արտաւազդ ելայ աշխարհքիս վերջ տայ . բայց դարբիններուն սալի վրայ երկաթ ծծեծելու ձայնէն, կ'ըսէին, շղթաները նորէն կը զօրանան : Ասոր համար քրիստոնէութեան ատենն ալ միամիտ դարբինները կիրակի օրերը քանի մը անգամ ուռը սալին կը զարնէին որպէս զի Արտաւազդին շղթաները զօրանան : Ոմանք ալ կ'ըսէին թէ ասիկա ծնանելուն պէս Աժդահակին ցեղին, այսինքն Մուրացան նախարարութեան կանայքը զինքը կախարդեցին . իսկ Գողթան երգիչները կ'ըսէին թէ աս կանայք զԱրտաւազդ դողցան ու տեղը սատանայ մը դրին . անոր համար Արտաշէս զանոնք շատ չարչարեց :

Գ Լ Ո Ւ Խ Ե Ժ Գ

Տ Ի Ր Ա Ն Ե .

ԾՁ. Տիրան եղբորը տեղը կը թագաւորէ (130). Եւ Անտանիոս Պիոս կայսրն իրեն թագ ու ծիրանի կը խրկէ (138): Անձեւացեաց Երախնաւու նախարարը թագաւորութեան Երկրորդը կ'ընէ: Աթուր Զրմէս աւանը կը փոխէ, ու ձիւնի բռնուելով կը մեռնի (151):

ԾՁ. ԱՐՏԱԵԱԶԴԻՆ յաջորդեց իր եղբայրը Տիրան, որուն Անտանիոս Պիոս կայսրը թագաւորական թագ ու ծիրանի խաւրեց, եւ ասոր յիշատակին համար մասնաւոր ստակ մը ապել տուաւ վրան Տիրանին եւ իր պատկերը՝ ձեռքը Տիրանին ուսին վրայ դրած, եւ այսպէս գրուած ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ ՏՈՒԵԱԼ¹: Աս Տիրան յիշատակի արժանի գործք մը չըրաւ, այլ որսի ու զբօսանաց մէջ կեանքն անցուց: Իր առեւը Հաշտենից դաւառին մէջի թագաւորական ցեղը բազմացած ըլլալով՝ ու բնակելու տեղերնին քիչ գալով, եկան իրմէ տեղ խնդրեցին. ան ալ հրաման տուաւ որ անոնց մէկ մասն երթայ Աղիովիտ եւ Առքերանի դաւառներուն մէջ թագաւորական երկիրները բնակի: Անձեւացեաց ցեղէն Երախնաւու անունով քաջ ու բարի իշխանին ալ՝ որն որ Արտաւազդին կիներէն մէկն իրեն կին առած էր, երկրորդականութեան պատիւը տուաւ, Արտաւազդին բոլոր ինչքն անոր պարգեւեց, ու զանիկա արեւելեան զօրաց զօրապետ ըրաւ: Իր Երանեակ ազգիկն ալ Տրդատ Բագրատունիին տուաւ:

Իսկ ինքը գնաց Եկեղեաց դաւառին մէջ Զրմէս աւանը բնակեցաւ, եւ 21 տարի թագաւորութիւն ընելէն ետքն, օր մը ճամբան ձիւնի բռնուելով մեռաւ:

Խորենացին Տիրանին մահուան վրայ միայն այսչափ կ'ըսէ. Ե- Բ- Ե- Ի Զանապարհի յեան հիւսիսայ խաւաւ. Ճամբան մեռաւ հիւսիսային ձիւնի բռնուելով. գուցէ կ'ուզէ ըսել,

¹ Rex Armeniis datus.

ձիւնին ցրտութենէն սառելով : Բայց Խորենացոյն մեկերկու ձեռագիր օրինակներուն մէջ փոխանակ Չեան հիւսիսայն, Չեան հիւսիսայն գրուած ըլլալով, ոմանք կարծեցին թէ Տիրանին վրայ լերանց վրայէն խոշոր ձիւնակոյր կամ հիւսիսայն կ'ինկած եւ զանիկա մեռցուցած ըլլայ : Բայց Խորենացոյն աւելի շատ եւ ընտիր ձեռագիրներուն մէջ վերը դրածնուս պէս ըլլալուն համար աս պատմութիւնը տարակուսական կը մնայ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Տ Ի Գ Բ Ա Ն Գ .

ԾԷ . Տիգրանին թագաւորելը (151) եւ Պարթեւաց թագաւորին հետ Հռոմայեցոց դէմ՝ ելլելը : Սեւերիանոս՝ Վապագոզկիայի իշխանին Հայաստան արշաւելն ու յաղթուիլը : ԾԸ . Տիգրան՝ Փոքր Ասիայի կողմերը կը բռնուի . Գոսկիոս վերոս զինքը կ'ազատէ ու Հայաստան կը իրկէ : Տիգրան իր Մաժան եզրօրը գերեզմանին վրայ բազին շինել կու սայ :
Իր մահը (193) :

ԾԷ . ՏԻՐԱՆԻՆ ՄԵՆԵԼԷՆ ԵՄԵՆ իր պզտիկ եղբայրը Տիգրան թագաւորեց : Ասոր օրերը Պերոզ Պարթեւաց թագաւորը Հռոմայեցոց երկիրները յարձակեցաւ ու շատ տեղերու տիրեց : Տիգրան ալ անոր հետ միարմանեցաւ եւ սկսաւ պատրաստութիւն տեսնել որ Փոքր Ասիա Հռոմայեցոց վրայ յարձակի : Սեւերիանոս՝ Վապագոզկիայի իշխանն աս բանս լսելուն պէս, զից պատգամ հարցուց որ արդեօք Հայոց դէմ ելլէ թէ չէ, եւ Աղեքսանդր քուրմին տուած իրեն համար նպաստաւոր պատգամէն քաջալերուելով՝ Հռոմայեցի զօրքը ժողովեց ու Հայաստան՝ Հայոց ու Պարթեւաց վրայ գնաց : Բայց Ոթրիատ հայական ու պարթեւական բանակներուն զօրաւարն անոր դէմն ելլելով՝ զարկաւ բոլոր զօրքը ջարդեց . ինքը Սեւերիանոս ալ պատերազմին մէջ զարնուեցաւ մեռաւ :

Աղեքսանդրին տուած պատգամն աս է, զորն որ Գուկիանոս Շամշատացին նոյն Սուա իղձին (Ποσειδομόντος) վարդին մէջ յառաջ կը բերէ :

Πάρθους Ἀρμενίους τε θοῶν ὑπὸ δουρὶ δαμάσσοις
 Νοστήσοις Ρώμην, καὶ Θύμβριδος ἀγλαὸν ὕδωρ,
 Στέμμα φέρον προτάφοισι μεμυγμένον ἀκτίνοοισι.

Զ Պարթեւս եւ զՀայս վաղ հարցես նիղակաւ .
 Դարձցիս ի Հռոմ եւ ի Տիրերեայ ջուրս պաղպաղունս .
 Պսակ ընկալցի բոցածածանչ քո ճակատ :

Բայց Սեւերիանոսին մեռնիլը լսելուն պէս՝ Աղեքսանդր
 աւ պատգամը մեհենին դիւանէն ջնջեց եւ անոր տեղն
 այսպէս գրեց :

Μή σὺ γ' ἐπ' Ἀρμενίους ἐλάαν στρατόν, οὐ γὰρ ἄμεινον,
 Μή σοι θηλυχίτων τις ἀνήρ τόξου ἄπο λογρόν
 Πότμον ἐπιπροΐεις, παύσῃ βιότοιο φάους τε.

Մի վարեր զորս ի Հայաստան քանդի չէ բարւոք .
 Մի քեզ այր կանացահանդերձ ի տիուր նեւե
 Մահ արձակեալ՝ արասցէ վախճան կենացդ լուսոյ :

ԾԸ. Տիգրան աւ յաղթուածենէն ետեւ իր բա-
 նակին գլուխն անցած դէպ ի Փոքր Ասիա յառաջ
 քալեց, ուր նոյն կողմերն իշխող Թագուհի մը զինքը
 բռնեց բանա դրաւ : Նոյն ժամանակը Ղուկիոս Աբրոս՝
 Մարկոս Արեղիոս կայսեր գահակիցը Հայոց ու Պար-
 թեւաց վրայ դառով՝ երբ որ իմացաւ որ Տիգրան բռ-
 նուեր է, զանիկա ազատեց ու Հայաստան խրկեց . իր
 ազգականներէն Ռոփի անուշով աղջիկ մ'ալ անոր
 կնութեան տուաւ եւ աւ բաներուս յիշատակին հա-
 մար քանի մը ստակ տպել տուաւ :

Աս ստակներն՝ որոնցմէ մինչեւ հիմա թէ՛ ոսկիէ թէ՛ ար-
 ծաթէ եւ թէ՛ պղնձէ շատ կը գտնուին, քանի մը տեսակ
 են, որոնք իրենց վրայի գրուածքովն եւ երկրորդ կողման
 պատկերներովն իրարմէ կը տարբերին : Առհասարակ ամե-
 նուն առաջին կողմը դրոշմած է Ղուկիոսին գլուխը, եւ
 անոր շրջանակը գրուած է ՂՈՒԳԻՈՍ ՎԵՐՈՍ ՀԱՅՍԿԱՆ
 (LUCIUS VERUS ARMENIACUS) . Իսկ երկրորդ կողմերն՝
 ոմանց վրայ կայսրը բարձրաւանդակի մը վրայ նստած, քովը
 երկու կամ երեք հոգի, եւ Հայոց թագաւորին գլուխը
 թագ կը դնէ, ու շրջանակն աւ գրուածը կայ . ԹԱԳԱՆՈՐ
 ՀԱՅՈՑ ՏՈՒՆԱԼ (REX ARMENIIS DATUS) : Ոմանց
 վրայ կայսրը ձի հեծած, ետեւն երկու զինուոր, ու ձիուն

ոտուրներուն տակը գրուած ՀԱՅԱՍՏԱՆ (ARMENIA) . եւ ասոնցմէ զատ զանազան պատկերներ : Ղուկիոսին աս բրած գործքին համար նաեւ Մարկոս Արեղիոս կայսրն՝ անոր գահակիցը ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ ՏՈՒԵԱԼ վերնա- գրով ստակ տպել տուաւ :

Տիգրան Հայաստան գալուն պէս Ռոմին թողուց , եւ անկէ ունեցած չորս որդիներն՝ իրենց մօրն անուամբ բը Ռոմիսեան անուանելով՝ նախարարաց կարգը դրաւ , որպէս զի Արշակունի չանուանուին : Ասկէ զատ զինքն ազատելու համար պատերազմողներուն ու քաջութիւն ընողներուն ցեղէն շատ պզտիկ նախարարութիւններ հաստատեց : Իր եղբօրը Մաթան քրմապետին գերեզմանին վրայ բազին մը շինել տուաւ , որպէս զի հոն եղած զոհերէն անցաւորներն եւ օտարները կերակրին եւ անոր քովերը բնակին : Եւ 42 տարի թագաւորելէն ետքը մեռաւ , եւ իրեն յաջորդեց իր որդին Վաղարշ :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ե

Վ Ա Ղ Ա Ր Շ

ԾԹ . Վաղարշ գահը կը նստի (193) ու Վաղարշաւան աւանն եւ Վաղարշապատ քաղաքը կը շինէ : Վնասեպ Սուրհայ՝ խազրաց ու Բասլաց թագաւորն Հայաստան կ'արշաւէ , Վաղարշ անոր կը յաղթէ ու պատերազմին մէջ կը մեռնի (213) : Կ . Իր հաստատած տօնը :

ԾԹ . Վ Ա Ղ Ա Ր Շ իր հօրը թագաւորութիւնն առածին պէս Բասեն գաւառին մէջ Մուրց գետին երասխ խառնուելու տեղն ուր որ ինքը՝ մօրն Այրաբատ երթալու ատենը ծնած էր , մեծ աւան մը շինեց , եւ իր անուամբը՝ Վաղարշաւան անուանեց : Նոյնպէս Վարդգէսին շինած աւանն ամուր պարսպով պատեց եւ անունը Վաղարշապատ դրաւ : Երբ որ Սեպտիմիոս Սեւերոս կայսրը զօրքով Ասիա եկաւ , եւ կ'ուզէր Հայ-

աստան ալ յարձակիլ, Վաղարշ անոր շատ բնձաներ խտրելով՝ բարեկամութիւն հաստատեց, եւ այսպէս Հայաստանը պատերազմէն ազատ պահեց: Բայց շատ շանցաւ հարկ եղաւ ուրիշ թշնամեց մը գեմ գէնք աւնուլ: Վասն զի խաղրաց ու Բասալաց ազգերն իրենց Վնասեպ Սուրհասպ անուն թագաւորին առաջնորդութեամբ ճորայ կապան կամ Ալանաց դուռն քսուած կապանէն անցնելով, Կուր գետին ասդիի կողմն եկան, եւ սկսան Հայաստանին սահմանն աւրել եւ ապակաշնել: Վաղարշ շատ զօրքով անոնց վրայ գնաց եւ աղէկ ջարդ մը տալէն ետքն՝ ետեւնէն ինկած մինչեւ ճորայ կապանէն անդին հալածեց: Հոն անոնք նորէն ճակատեցան եւ սկսան Հայոց հետ զարնուիլ, զորոնք Հայերը դարձեալ յաղթեցին ու փախուցին. բայց աս պատերազմին մէջ Վաղարշ նետով մը զարնուեցաւ մեռաւ, 20 տարի թագաւորելէն ետքը:

4. Վաղարշ Հայոց տարեգլխոյն, այսինքն Նաւասարդին առաջին օրը կուոց պատուոյն համար մեծ տօն մը հաստատեց, որն որ ամէն տարի նոյն օրը Բագաւանի մէջ՝ իր հօրեղբորը Մաթան քրմապետին գերեզմանին վրայ փառաւոր հանդիսութեամբ կը կատարուէր: Աս հանդիսութեան ատենը շատուածներուն պատուոյն համար եղջերուներ կը վազըրնէին:

Գ Լ ՈՒ Խ Ժ.Օ.

Խ Ո Ս Ի Ո Վ Մ Ե Օ

ԿԼ. Խոսարով հօրը կը յաջորդէ (213), Խազրաց ու Բասւլաց դէմ պատերազմի կ'ելլէ ու կը յաղթէ: Թէոկրիտոս Հռոմայեցւոց զօրապետն Հայաստանի վրայ կու գայ. Խոսարովին զօրքն անոր կը յաղթէ: ԿԲ. Արտաշէր Սասանեանին Պարթեւաց Արտաւան թագաւորէն ապստամբիլը (241), Խոսարովին Արտաւանին օգնութեան երթալը: Արտաւանին մահը. Խոսարովին Արտաշէրին վրայ բրած յաղթութիւնները: Կարենեանց Վեհսաճան նախարարը կ'ուզէ Հայաստան գալ, Արտաշէր զանիկա բոլոր ընտանիքովը կը սպաննէ: Խոսարով նորէն Արտաշէրին դէմ պատերազմի կ'ելլէ, անոր կը յաղթէ ու մինչև Հնդկաստան կը փախցընէ: ԿԳ. Անակին Հայաստան գալն ու Ս. Գրիգոր Լուսաւորչին ծնանիլը (257): Անակ զԽոսարով կը սպաննէ (261), եւ բոլոր իր ցեղը կը ջնջուի:

ԿԱ. ԽՈՍԱՐՈՎ՝ Վաղարշին որդին հօրը տեղը թագաւորեց, եւ անոր մահուանը վրէժն առնելու համար Խազրաց ու Բասւլաց դէմ պատերազմի ելաւ, ու ճորայ կապանէն անդին անցնելով՝ զանոնք զարկաւ յաղթեց ու հարիւրին մէկ հոգի պատանդ առաւ. հոն իր տէրութեանը նշան յունարէն գրով արձան մը կանգնելով՝ Հայաստան դարձաւ: Ասիկէ ետքը Հայոց վրայ եկաւ Թէոկրիտոս զօրապետն անհամար զօրքով՝ զորն որ Անտոնիոս Կարակապղա կայսրը խաւրած էր Հայաստանը բոլորովին Հռոմայեցւոց տակը նուաճելու համար: Հայոց զօրքը Հռոմայեցիները զարկին ու սաստիկ ջարդ մը տուին, մնացածներն ալ իրենց զօրապետովը մէկտեղ փախուցին:

Գիտն Կասսիոս (առ. Յովհան. Քսիփիլինեայ) Անտոնիոս Կարակապղաին պատմութեան մէջ կը պատմէ թէ Կասսիոսը Պարթեւաց վրայ երթալու տուն, երբ որ Միջագետք հասաւ, Եդեսիային Արգար թագաւորը նենգութեամբ իրեն կանչեց ու բռնեց, եւ անոր երկիրներուն տիրեց: Հայոց թագաւորն ալ որն որ նոյն ատեններն իր որդւոցը հետ գտնուածն ունէր, բարեկամութեան նամակով մ'իրեն

կանչեց զինքն իր որդւոցը հետ հաշտեցնելու պատրուակաւ, եւ անոր հետ ալ Աբգարին պէս վարուեցաւ: Բայց Հայերն աւելի ուզեցին զէնք առնուլ ու պատերազմի ելլել, քան թէ Անտոնիոսին հնազանդիլ:

ԿԲ. Խոսարովին թագաւորութեան քսանուութեւ ընդ տարին Պարթեււաց երկիրը մեծ խռովութիւն մը ծագեցաւ. վասն զի Սասհր դաւառէն Արտաշիր անունով պարսիկ իշխան մը Պարսից շատ նախարարներն իրեն հետ միաբանելով, Արտաւան թագաւորէն ապստամբեցաւ: Արտաւան զանիկա նուաճելու համար իր կողմն եղող զօրքը ժողվեց եւ անոր վրայ գնաց, բայց յաղթուեցաւ ու պատերազմի մէջ մեռաւ: Արտաւանին մեռնելէն ետքը Պարսից նախարարները զԱրտաշիր թագաւոր դրին, որուն հետ միաբանեցան նաեւ Պարթեւաց Սուրենեան ու Սպահապետի Պահլաւ ըսուած ցեղերը: Խոսարով աս խռովութիւնները լսելով, որովհետեւ ինքն ալ Արշակունի ըլլալով՝ Արտաւանին ազգական էր, շուտ մը զօրք ժողվեց ու Պարթեւաստան գնաց, անոր օգնելու համար. բայց երբ որ Ասորեստան հասաւ, լսեց որ Արտաշիր զԱրտաւան մեռցուցեր եւ անոր տեղը թագաւորեր է: Ասոր վրայ շատ բարկացած ու տրամած՝ Հայաստան դարձաւ, եւ անմիջապէս սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել. Հայաստանէն, Վրաստանէն եւ Աղուաններէն շատ զօրք ժողվեց, Հինաց եւ անոնց սահմանակից ազգերէն ալ անհամար զօրք բերել տուաւ. նաեւ Եգիպտոսէն ու Պոնտոսի կողմերէն ալ Փիլիպպոս կայսեր հրամանովը բիւրաւոր զօրք իրեն օգնութեան եկան, եւ այսպիսի ահագին պատրաստութեամբ Արտաշիրին վրայ գնաց, մինչեւ Տիզբոն յարձակեցաւ ու բոլոր Պարսից երկիրներն աւրեց եւ ապականեց, Արտաւանին մահուան վրէժն առնելու համար: Ասկէ ետքը Պարթեւաց երեք նախարարներուն մարդ խարեց որ գան իրեն հետ միանան ու զԱրտաշիր վռնտեն, եւ իրենց մէջէն մէկը թագաւոր դնէ,

որպէս զի Թագաւորութիւնն իրենց ցեղին մէջ մնայ, բայց անոնցմէ երկուքը մտիկ չբրին, միայն Վեհաճաճան Կարենեան ցեղին նախարարը հաւանեցաւ, եւ իր ընտանիքովը դէպ ի Հայաստան եկաւ: Արտաշիր աս բանս իմանալուն պէս մեծ գունդ մ'առած՝ անոր ետեւէն հասաւ ու բոլոր ընտանիքովն սպաննեց. միայն զՊերողամաս՝ Վեհաճաճանին որդին իր դայեակը փախուց: Քիչ մը ժամանակ ետքը Խոսրով նորէն ահաբիւն պատրաստութեամբ Արտաշիրն վրայ գնաց, եւ անոր յաղթելով՝ մինչեւ Հնդկաստան փախուց:

ԿԳ. Արտաշիր Խոսրովին ձեռքէն Հնդկաստան փախչելով՝ եւ Թագաւորութիւնը նորէն ձեռք ձգելու ուրիշ ճար չգտնելով, բոլոր իր նախարարները կանչեց եւ անոնց մեծամեծ պարգեւներ ու պատիւներ խոստացաւ, թէ որ կարող ըլլան եղանակաւ մը Խոսրովը մեռցնել: Աւելի Պարթեւ նախարարները կը յորդորէր, ըսելով թէ դուք Խոսրովին ազգական ըլլալով՝ կրնաք անոր երեսանց բարեկամ ձեւանալ, ու դիւրութեամբ մեռցնել. եւ թէ որ աս բանս ընելու ըլլաք, ըսաւ, ձեզի Թագաւորական պատիւու տամ եւ իմ երկրորդս կ'ընեմ: Աս բանս Պարթեւաց Սուրենեան ցեղին Անակ նախարարը յանձն առաւ, ուստի Պարսից Թագաւորէն ապստամբած ձեւացրնելով, իր եղբայրն եւ ընտանիքը հետն առած՝ դէպ ի Հայաստան փախաւ. Պարսից զօրքն ալ անոր ետեւէն ինկան եւ սկսան առ երեսս հալածել, մինչեւ որ Անակ Հայաստանին Կորդուաց քաւառը մտաւ: Խոսրով Անակայ գալը լսելուն պէս, կարծելով թէ Կարենեան ցեղն է, շուտ մը գունդ մը զօրք խաւրեց, որոնք քացին զանիկայ Ուտի գաւառին խաղխաղ քաղաքը բերին, որն որ Հայոց Թագաւորներուն ձմեռոցն էր: Խոսրով Անակը շատ պատուով ընդունեցաւ եւ իր Թագաւորութեան երկրորդն ըրաւ, ու բոլոր ան ձմեռն ուրախութեամբ անցուցին: Իսկ դարունն սկսելուն պէս Խաղխաղէն Վաղարշապատ

դարձան, ուր որ Անակին կինն մզո՛հի՛ Ս. Գրիգոր
Լուսաւորիչը ծնաւ, որուն Սոփիա անունով քրիս-
տոնեայ կին մը սանսաւ եղաւ:

Խոսքով միաքր զնելով նորէն Պարսից երկիրը
յարձակիլ, սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել:
Աս բանս երբ որ Անակ իմացաւ, իր Պարսից թագա-
ւորին տուած խոստումը յիշեց, եւ ջանաց որ պատե-
րազմը չսկսած զխոսքով սպաննէ. ուստի օր մը երբ որ
ինքն եւ իր եղբայրը թագաւորին հետ որսի գացած
էին, զանիկայ իր եղբօրը հետ նախարարներէն հեռու
տարաւ, իբրեւ թէ իրեն գաղտուկ բան մ'ըսելու
համար, եւ երկուքը մէկէն յանկարծ սուրերնին
քաշեցին զարկին Խոսքովին ու չարաչար վիրաւորե-
ցին, եւ իրենք ձիերնին վազընելով՝ սկսան փախչիլ:
Հայոց նախարարներն աս բանս իմանալուն պէս
անոնց ետեւէն ինկան, Երասխ գետին քովն անոնց
հասան՝ բռնեցին եւ երկուքն ալ անմիջապէս գետը
նետեցին ու խղզեցին: Խոսքով զեռ չմեռած հրաման
տուաւ որ Անակին բոլոր ցեղը սրէ անցնեն: Բուր-
դար Սոփիային այրն աս հրամանը լսելով, գնաց
Ոգո՛հին քովէն Ս. Գրիգորն աւաւ իր կնոջը տուաւ,
եւ անոր հետ մէկտեղ Կեօարիա փախաւ. նոյնպէս
Ս. Գրիգորին Սուրէն եղբայրն իր դայեակները Պարս-
կաստան փախուցին. իսկ Անակին մնացած ընտանիքը
թէ արք եւ թէ կանայք բոլոր սպաննուեցան: Խոս-
քով այսպիսի եղանակաւ մեռաւ 48 տարի թագաւո-
րելէն ետքը:

Գ Լ ՈՒ Խ ԺԿ

Խ Ո Ս Բ Ո Վ Ի Ն Մ Ա Հ ՈՒ Ա Ն Է Ն Մ Ի Ն Չ Ե Ի Տ Բ Գ Ա Տ Ի Ն Թ Ա Գ Ա Ե Ի Ո Ր Ե Լ Ը

ԿԳ. Արտաշիր Հայաստանի կը տիրէ (261): Հայ նախարարները Յունաց երկիրը կը փախչին: Արտաւազդ Մանգակունին զՏրդատ Խոսրովին որդին՝ Հռոմ կը փախցընէ: ԿԵ. Արտաշիրին Հայաստանի մէջ ըրածները: ԿԶ. Ս. Գրիգոր Լուսաւորիչը Կեսարիա կը սնանի ու Տրդատին ծառայութիւն ընելու համար Հռոմ կ'երթայ: ԿԷ. Տրդատին Հռոմ ըրած քաջութիւնները:

ԿԳ. **ՎՅՅՅ** նախարարները Խոսրովին սպաննուելէն ետքն իրենց զօրքը ժողովեցին, եւ Փոխզիայէն քիչ մը Յունաց զօրք ալ բերել տալով՝ Պարսից գէմ դնելու պատրաստուեցան. Հռոմ Վաղերիանոս կայսեր ալ մարդ խաւրեցին եւ եղածն խմայընելով՝ անկէ օգնութիւն խնդրեցին: Բայց որովհետեւ նոյն ատենները հիւսիսային ազգերը Հռոմայեցւոց երկիրը յարձակած էին, Վաղերիանոս անոնց հետ պատերազմելու զբաղած ըլլալով՝ չկրցաւ Հայոց օգնել. քիչ մը ետքն ալ ինքը մեռաւ ու Կլաւդիոս եւ Արեղիանոս շուտ շուտ իրարու յաջորդեցին, որով Հայերն եւ ոչ անոնցմէ կրցան օգնութիւն գանել: Ուստի Արտաշիր անհամար զօրքով Հայաստան եկաւ, Փոխզայի զօրքը փախուց եւ շատ կողմերուն տիրեց. իսկ Հայ նախարարներէն շատերը Յունաց երկիրը փախան, որոնց մէջէն Արտաւազդ Մանգակունեաց նախարարը Խոսրովին որդին Տրդատն առաւ Հռոմ կայսեր քովը փախուց: Քիչ մը ետքը Տակիտոս կայսր ըլլալով՝ Արտաշիրին գէմ պատերազմի ելաւ, բայց յաղթուեցաւ եւ բան մը չկրցաւ ընել. իսկ Պրոքսոս իր յաջորդն անոր հետ հաշտութիւն ընելով՝ երկիրները մէջերնին բաժնեցին: Ասանկով Արտաշիր Հայաստանին մեծ մասին տէր եղաւ. փախած նախարարներն եւ դարձուց, եւ

ամուր բերդերու մէջ եղածները մար իջեցուց . բայց Ամատունեաց Օտայ նախարարն՝ որն որ Խոսրովին Խոսրովիդուխտ աղջիկն ու բոլոր Թագաւորական գանձն առած Անի բերդը մտած էր , ամենեւին Արտաշին մտիկ չըրաւ ու բերդէն չելաւ . եւ որովհետեւ Անի սաստիկ ամուր եւ անառիկ բերդ մըն էր , Արտաշիր չկրցաւ պատերազմաւ ալ առնուլ : Մանդակունեաց ցեղը բոլորովին ջնջել տուաւ , իմանալով որ անոնց դուինն Արտաւազգ՝ Խոսրովին որդին փախուցեր է . բայց Տաճատ Աշոցայ իշխանն Արտաւազգին քոյրերէն մէկն առաւ Կեսարիա փախուց , եւ անոր հետ ամուսնացաւ :

ԿԵ . Ասկէ ետքն Արտաշիր Հայաստանի մէջ զանազան կարգաւորութիւններ ըրաւ . բոլոր Արշակունեաց ցեղը նորէն Այրարատ նահանգը բնակեցուց , եւ յառաջուան պէս իրենց Թագաւորական գանձէն ուճիկ կապեց : Հրամայեց որ Բագաւանին մէջի կրակատան կրակը միշտ վառուած պահուի , եւ ուրիշ կուռքերուն ալ պատիւ տրուի . միայն Վաղարշակին կանգնած արձանները կոտրել տուաւ : Արտաշէս Բ.ին սահմանադրուիւններու վրայ տնկել տուած քարերը նորոգեց եւ իր անուամբն Արտաշիրական անուանեց : Հայաստանին տուրքերն ալ սրոշեց , եւ Պարսից ուրիշ դաւառներուն պէս հոն պարսիկ վերակացու մը դրաւ :

ԿԶ . Աս ժամանակս Ս . Գրիգոր Լուսաւորչին դայեակը զինքը Կեսարիա կը խնամէր , զորն որ քիչ մը մեծնալուն պէս դասատուն տուաւ , ուր յունարէն եւ ասորերէն , միանգամայն բրիստոնէական հաւատքին հարկաւոր եղած բաները սորվեցաւ : Եւ երբ որ չափահաս եղաւ , Գաւիթ անունով բարեպաշտ մարդ մ'իր Մարիամ աղջիկն անոր կնութեան տուաւ : Ս . Գրիգոր անկէ երկու զաւակ ունենալէն ետքն՝ որոնց առաջինը Վրթանէս եւ երկրորդն Արիստակէս անուանեց , Մարիամին հաւանութեամբն անկէ բաժնուեցաւ . ինքն ելաւ Հռոմ՝ Տրդատին քովը գնաց , որպէս զի

անոր ծառայութիւն ընելով՝ իր հօրն ըրած սպանութեանը հատուցում մ'ընէ. իսկ Մարիամ Արիստակէսին հետ կուսանաց վանք մը գնաց. Արթանէան ալ դայեակներուն քովը մնաց:

Կէ. Նոյնպէս Արտաւազդ Մանդակունին զՏրդատ Հոռոմ դարմանեց ու մեծցաց, եւ Լիկիանոս անունով կոմսի մը քով դրաւ: Տրդատ իր սաստիկ զօրութեամբն եւ ձի հեծնելու ու զէնք գործածելու մէջ ունեցած արտաբոյ կարգի յաջողակութեամբը Հոռոմայեցւոց մէջ շատ մեծ անուն ստացաւ: Շատ անգամ Յունաց Աղիմպիական խաղերուն մէջ կը մտնէր ու մեծ յաղթութիւններ կ'ընէր: Մէկ անգամ մը մէկ ձեռքովն երկու վայրենի ցուլերուն եղջիւրներէն բռնելով՝ քաշեց փրցուց եւ զանոնք սպաննեց: Օր մ'ալ ձիւնթացին մէջ ուրիշի մը հետ կառք վազընելու մրցութիւն ընելու ատեն, հակառակորդին ճարտարութեամբը Տրդատ կառքէն վար ինկաւ: Ասոր վրայ սաստիկ բարկանալով՝ վազեց հակառակորդին կառքին ետեւէն այնպէս ուժով բռնեց՝ որ ալ ձիերը չկրցան յառաջ երթալ. աս բանս ամէն տեսնողներուն մեծ զարմանք պատճառեց: Դարձեալ երբ որ Կարոս կայսրն Արտաշիւն դէմ պատերազմի ելաւ, եւ Տրդատ ալ անոր բանակին հետ դացած էր, կայսրը յաղթուեցաւ ու զօրքը ցրուեցան. բայց Տրդատին ձին վերաւորած ըլլալով՝ եւ չկրնալով փախչողներուն հետ երթալ, իր բոլոր զէնքերն ու ձիուն վրայ եղածները կունակն առած՝ լողալով Եփրատէն անցաւ եւ Հոռոմայեցւոց բանակն եկաւ:

Աս պատերազմին մէջ Կարոս եւ իր որդին Կարիանոս սպաննուեցան. քիչ մը ետքն ալ Նումերիանոս՝ որն որ կայսր դրուած էր՝ սպաննուելով, անոր տեղը Դիոկղետիանոս դրուեցաւ, որուն օգնութեամբը Տրդատ Հայաստան դարձաւ եւ հօրը թագաւորութիւնն առաւ:

Գ Լ Ս Ի Խ Ժ Բ

S I F U S

ԿԸ. Տրդատ Գթայ թագաւորին հետ մենամարտութիւն կ'ընէ եւ անոր կը յաղթէ: Գիոկղետիանոսէն թագաւոր կը պակասուի ու Հռոմայեցոց զօրքով Հայաստան կը խրկուի (286):

ԿԹ. Տրդատ Կեսարիա կու գայ, Հայոց նախարարները կը ժողովէ եւ անոնց հետ Հայաստան կը մտնէ: Օտայ նախարարը տէրութեան հազարապետ եւ Արտաւազդ Մանգակունին սպարապետ կը դնէ: Ս. Գրիգոր Լուսաւորիչը քրիստոնէութեան համար կը շարշարէ եւ Արտաշատին խոր վերապը նետել կու ապ (287): Հ. Պարսից զօրքը Հայաստանէն կը վաճառէ եւ ինքն անոնց երկիրը յարձակելով՝ շատ տեղերու կը տիրէ: Քրիստոնէից դէմ երկու հրովարտակ կը հանէ: ՀԱ. Ս. Հռիփսիմեան կուսանաց Հայաստան գալն եւ անոնց նահատակուիլը (300—301): ՀԲ. Տրդատ ու բոլոր իշխանները կը դիւահարին. Աստուծոյ յայանութեամբը Ս. Գրիգոր վերապէն կը հանուի (301), անոր ձեռքովը դիւահարները կը բժըշկուին, ու Ս. Հռիփսիմեանց վկայարաններ կը շինուին. կուսքերը կը կործանին ու բոլոր Հայերը քրիստոնէութիւնը կ'ընդունին: ՀԳ. Տրդատ զՍ. Գրիգոր Եպիսկոպոս ձեռնադրել կու ապ (302). Ս. Գրիգոր Տարօն գաւառին մէջ մեծ պատերազմով Գեմեար ու Գիսանէս շատուածներուն արձանները կը կործանէ: ՀԴ. Տրդատին մկրտուիլը եւ Ս. Արիստակէտին եպիսկոպոս ձեռնադրուիլը (317): ՀԵ. Բասլաց Գեղաեհոն թագաւորը Հայաստան կ'ապագատակէ, Տրդատ անոր դէմ զօրք կը խաւրէ, ու Ս. Գրիգորին հետ Հռոմ Կոստանդիանոս կայսեր այցելութեան կ'երթայ (318—319): ՀԶ. Շապուհ Պարսից թագաւորն Հիւսիսային ազգերը Հայոց դէմ կը դրդուէ: Սղկունեաց իշխանը կ'ապատամբի. Տրդատ Մամիզուն Ճենացիին ձեռքովը զանիկա կը սպաննէ: ՀԷ. Տրդատին Հիւսիսականաց դէմ բրած պատերազմն եւ Բասլաց թագաւորն սպաննելը: Արտաւազդ Մանգակունեոյն մահը: ՀԸ. Տրդատ Պարսկաստան կը յարձակի եւ Արարկատականին մեծ մասին կը տիրէ: ՀԹ. Ս. Արիստակէս Նիկիոյ ժողովքը կ'երթայ. Կամսար իշխանը կը մկրտուի ու կը վախճանի: Զ. Ս. Գրիգոր Մանեայ այրը կը քաշուի (332) եւ հոն կը վախճանի (333): Իր որդին Ս. Արիստակէս հայրապետական աթոռը կը նշաւի (333): Զորքով Հայոց իշխանը Ս. Արիստակէսը կը

սպաննէ (340), եւ անոր տեղը Ս. վրթանէս կաթողիկոս կ'ըլայ: Տրդատ թագաւորութենէ կը հրամարի ու նախաբարներէն թռնոյ կը սպաննուի (342): ՉԱ. Տրդատին մահուանէ ետքը Հայաստան պատահած խռովութիւնները. Սանատրուկին Փայտակարանի մէջ թագաւորին եւ Ազնեաց Բակուր բղէշին սպառամբիլը:

ԿԸ. ԼԵՏԱՆԻՎ Պարսից թագաւորը 26 տարի Հայաստանի վրայ տիրեց ու մեռաւ, եւ իրեն յաջորդեց իր որդին Շապուհ: Ասոր թագաւորութեան առաջին տարին Վթաց թագաւորն անհամար զօրքով Հռոմայեցւոց երկիրն արշաւեց, եւ Գիսկղեաթիանոսին այսպիսի պատգամ խաւրեց. Եկաւ, փոխանակ իրարու հետ պատերազմ ընելու եւ պարագ տեղ իրարու զօրքը ջարդելու, ես ու դուն իրարու հետ մենամարտութիւն ընենք, եւ թէ որ ես քեզի յաղթեմ, բոլոր Յոյներն ինձի հնազանդին, իսկ թէ որ դուն ինձի յաղթես, մենք ամենքնիս ալ քեզի հարկատու ըլլանք: Գիսկղեաթիանոս աս բանիս վրայ շատ այլայլեցաւ, որովհետեւ ինքը տկար ըլլալով՝ չէր յուսար որ կարող ըլլայ Վթաց թագաւորին յաղթել. ուստի անմիջապէս ամէն կողմ հրաման խաւրեց՝ որ բոլոր զօրապետներն իրենց զօրքն առած իր քովը գան, որպէս զի անոնց հետ խորհուրդ ընէ աս բանիս ճարը հողալու համար: Աս հրամանն ամէն զօրապետներն առնելով՝ շատ մը զօրքերնին առին կայսեր քովն եկան. Վիկիանոս կաման ալ, որուն քովը Տրդատն էր, իր դնդովը հոն եկաւ: Քայց գիշեր ատեն քաղքին առջեւը հասնելուն համար, դռները դոյզտան, ուստի հարկ եղաւ որ քաղքին դրան քովը նեղ ճամբաներու մէջ կենան: Հոն սպասելու ատեննին ձիերուն խոտ հարկաւոր ըլլալով՝ ասդին անդին սկսան փնտռել, ու տեսան որ քաղքին մէկ կողմը պատերուն ներսի դին շատ խոտ կայ. բայց տեղին բարձրութեանը համար մէկը չկրցաւ վեր ելլել: Տրդատ յառաջ անցաւ, եւ նոյն պատէն վեր ելլելով՝

խուրձ խուրձ խոտեր զօրաց մէջ նեւեց. նաեւ համարարին պահապաններն ալ ու շատ էշեր (կամ շներ) պատին անդիի կողմէն զօրաց մէջ նեւեց ու վար իջաւ : Լիկիանոս Տրդատին այսպիսի սաստիկ զօրութիւնը տեսնելով՝ շատ զարմացաւ :

Առտուանց կանուխ քաղքին դռները բացուեցան ու զօրքը ներս մտաւ. զօրապետներն ալ կայսեր քովը ժողվուեցան՝ որն որ անոնց Գթաց թագաւորին պատգամը պատմեց : Ան ատեն Լիկիանոս կայսեր ըսաւ. Տէր արքայ, ամենեւին հոգ մ'ըներ, վասն զի իմ գունդիս մէջ Հայոց թագաւորին ցեղէն Տրդատ անունով մէկը կայ, անիկա կրնայ դիւրաւ աս գործքը կատարել, եւ Տրդատին առջի իրիկուան ըրածն անոր պատմեց : Գիողղետիանոս անմիջապէս հրաման տուաւ որ զՏրդատ առջեւը կանչեն, եւ անոր կայսերական զգեստ հագցուց, կայսերական նշաններով զարդարեց, եւ ամենուն հրատարակել տուաւ որ անիկա կայսրն է, ու Գթաց թագաւորին հրեշտակ խաւրելով՝ ըսաւ որ վաղը իրարու հետ մենամարտինք : Երկրորդ օրը Տրդատ կայսերական զօրաց զլուխն անցած՝ ձին վազցընելով Գթաց բանակին մօտիկցաւ, որուն մէջէն իր գէմն ելաւ անոնց թագաւորն եւ սկսան իրարու հետ կռուիլ : Տրդատ թագաւորին վրայ յարձակելով՝ իր սաստիկ ուժովն ու քաջութեամբը զանիկա բռնեց կաշկանդեց ու Գիողղետիանոսին առջեւը բերաւ : Այսպէս սաստիկ ուրախացած, ուղեց Տրդատին մեծ հատուցում մ'ընել. եւ երբ որ իմացաւ որ անիկայ Հայոց թագաւորին սրդին է, անոր թագաւորական զգեստ հագցուց, զլուխը թագ դրաւ եւ շատ զօրքով Հայաստան խաւրեց որ երթայ իր հօրը թագաւորութիւնն առնու :

ԿԹ. Տրդատ եկաւ Աեսարիա քաղաքն, ուր շատ Հայոց նախարարներ իր քովը ժողվուեցան. անկէ նախարարներուն հետ Հայաստան մտաւ, ուր որ Օտայ Ամատունեաց նախարարը բոլոր թագաւորական

գանձն եւ իր (Տրդատին) Խոսրովիգուխաւ քոյրը՝ զորոնք Անի բերդին մէջ պահած էր, իրեն բերաւ : Տրդատ անոր աս հաւատարմութեանը փոխարէն, զինքը Հայոց տէրութեան Հազարապետ բրաւ . իսկ Արտաւազդ Մանգակունին իր ազատիչը՝ բոլոր Հայոց զօրքին վրայ սպարապետ գրաւ . զՏաճատ Արտաւազդին քուայրն ալ Աշոցայ նախարար բրաւ : Ետքն եկան Եկեղեցայ դաւառն Երիզա գեղին մէջ Անահիտ շաստուածոյն զոհեր մատուցին, ու Գայլ գետին քովը բանակեցան կեցան : Հոն Տրդատ Ս. Գրիգորին հրաման տուաւ որ Անահիտ պսակ ու կանանչ ոստեր ընծայ տանի, բայց անիկա՝ որովհետեւ քրիստոնեայ էր, յանձն չառաւ աս կռապաշտական գործքն ընելու : Ան ատեն թագաւորն սկսաւ թէ քաղցրութեամբ եւ թէ պատիժներ ու տանջանքներ սպառնալով Ս. Գրիգորն ստիպել որ քրիստոնէութիւնը թողու ու կռոց երկրպագութիւն ընէ . եւ երբ որ տեսաւ որ անիկա ամենեւին իր խօսքը մտիկ չընէր, սկսաւ սաստիկ եւ անտանելի տանջանքներով զանիկա տանջել, այսինքն մարմինը կրակով այրելով, վրան հալած կապար լեցընելով, երկաթէ քերիչներով քերելով, ոտուրներուն տակը մեծ գամեր գամելով եւ այնպէս քալեցընելով, երկաթէ շինուած փուշերու մէջ պառկեցընելով եւ ուրիշ ասոնց նման անտանելի տանջանքներով, որոնց ամենուն Ս. Գրիգոր Աստուծոյ օգնութեամբ քաջութեամբ դիմացաւ, եւ ամենեւին յանձն չառաւ թագաւորին կամքը կատարելու : Տրդատ երբ որ կ'ուզէր նորէն պատիւներ խոստանալով՝ եւ թէ որ անով չըլլայ, աւելի սաստիկ տանջանքներով Ս. Գրիգորը ստիպել որ քրիստոնէութիւնը թողու, Տաճատ Աշոցայ նախարարն՝ որն որ Աեսարիա բնակած ըլլալով՝ Ս. Գրիգորը տեսած եւ անոր սով ըլլալն իմացած էր, Արտաւազդ սպարապետին իմացուց որ Գրիգոր Անակին՝ Տրդատին հայրը մեռցընողին որդին է . ան ալ շուտ մը թագաւորին

պատմեց : Տրդատ առ բանս իմանալուն պէս հրահան տուաւ որ Ս . Գրիգորին ձեռուրներն առ տարները կապեն , ու տանին Արտաշատ բերդին մէջի խոր վիրապը նեաեն (որն որ մահապարտներու համար շինուած օձերով լեցուն տեղ մըն էր ,) որ հոն մեանի : Ս . Գրիգոր ա՛ն վիրապին մէջ տասնուհինգ տարիի շափ մնաց , եւ քրիստոսեայ կին մ'Աստուծոյ յայտնութեամբն ամէն օր նոյն տեղը հաց մը կը նեաւր ու զանիկա կը կերակրէր :

Հ . Տրդատ քիչ մը ատեն Գայլ գետին քովը կենպէս ետքը , քովը ժողվուած Հայոց ու Հռոմայեցեաց զօրքով՝ Պարսից Հայաստանի մէջ եղող զօրքին վրայ յարձակեցաւ եւ զանոնք հալածելով՝ բոլոր Հայաստանին տիրեց : Երկրորդ տարին բուն Պարսից երկիրն արշաւեց եւ շատ անգամ անոնց յաղթեց : Պարսից զօրքը Տրդատին զօրութիւնն ու հաղած զրահին ամբութիւնն իմանալով , անգամ մը պատերազմի ատեն անոր ձին սաստիկ վիրաւորեցին՝ որն որ դաւէն վար ինկաւ եւ Տրդատն ալ իրեն հետ մկհակ գետինը ձգեց : Տրդատ անմիջապէս վեր ցածքեց , յարձակեցաւ թշնամեաց վրայ , եւ անոնցմէ շատերն սպաննելով՝ մէկուն ձին առաւ հեծաւ , ու պատերազմը յառաջ տարաւ : Անգամ մ'ալ ինքը կամաւ ձիէն վար իջաւ ու սուրը ձեռքը՝ թշնամեաց փղերուն մէջը մտաւ , կարգերնին շփոթեց եւ խռովեց : Այսպիսի քաջութիւններով Պարսկաստանին ու Ասորեստանին շատ կողմերուն տիրելով՝ մինչեւ Տիգրոսէն անդին յարձակեցաւ :

Տրդատին առ քաջութիւններուն համար Հայոց մէջ առաւել մը պէս կ'ըսէին «Իբրեւ զսէպն Տրդատ՝ որ սիգալովն աւերեաց զԹումբս գետոց , եւ ցամաքեցոյց իսկ է սիգալ իւրում զյարձանս ծովուց» . Սէպ Տրդատին պէս՝ որն որ իր սէպ քալուածքովը գետերուն թումբերն աւրեց ու ծովուն յարձանքները չորցուց :

Անիէ դարձաւ Հայաստան եկաւ , եւ Սմբատ Բագրատունին խաւրեց որ Աշխաղար իշխանին Աշխէն

աղջիկն իրեն կնութեան բերէ, եւ զանիկա Արշակունի գրել տալով, գլուխը թագ զնել տուաւ ու ծիրանի հագցուց, եւ իրեն կին առաւ: Ատքն երկու հրովարտակ հանեց, որոնց մէջ ամէն նախարարներուն եւ իշխաններուն կը պատուիրէր որ կոոց պաշտօնը միշտ կատարելու հոգ տանին, եւ հրաման կու տար որ իր տէրութեան մէջ ուր որ քրիստոնեայ գտնեն՝ որոնք կուռքերը պաշտել յանձն չառնուն, անմիջապէս բռնեն չարչարեն ու մեռցնեն:

ՀԱ. Աս ատեններս Գիողղետիանոս կայսրն ուզելով իրեն կին մ'առնուլ, ամէն կողմ պատկերահաններ խաւրեց որ ուր որ թագուհի ըլլալու արժանի աղջիկներ գտնեն, պատկերնին նկարեն եւ իրեն բերեն: Աս պատկերահաններէն ոմանք Հոռոմ քաղքին մօտ կուսանաց վանք մը գտան, ուր շատ քրիստոնեայ աղջիկներ իրենք զիրենք Աստուծոյ նուիրած ու կուսութիւն ուխտած՝ ճգնութիւն եւ աղօթք կ'ընէին. բռնութեամբ ներս մտան եւ անոնց մէջէն Հռիփսիմէ անունով կուսին հաւնելով՝ պատկերը նկարեցին Գիողղետիանոսին տարին: Կայսրն ալ անոր հաճեցաւ, ուստի ամէն իշխաններուն հրաման խաւրեց որ շուտով հարսնիքի գան եւ իրենց ընծաները բերեն: Գայիանէ՝ վանքին Աբբասուհին աս բանս իմանալուն պէս, իրենց ըրած կուսութեան ուխտը հաստատուն պահելու համար, բոլոր վանքին կուսանքները ժողովեց, Հռիփսիմէն ալ մէկտեղ, եւ Հռոմայեցւոց երկրէն փախաւ եկաւ Հայաստան՝ Աաղարշապատ քաղքին քով այգիի մը հնձանին մէջ բնակեցաւ. եւ որովհետէ, կուսանքներէն մէկն ապակիէ ուլունք շինել գիտէր, անով իրենց ամէն օրուան ապրուստին ստակը կը գտնէին: Գիողղետիանոս երբ որ լսեց թէ Հռիփսիմէն իր ընկերներովը փախեր է, ամէն կողմ մարդ խաւրեց որ զանոնք փնտռեն, եւ իմանալով որ անոնք դէպ ի արեւելեան կողմերը գացեր են, Տրդատ թագաւորին թուղթ մը խրկեց, որուն մէջ եղածը պատմելէն ետքը, կ'ա-

դաշէր որ գանոնք իր տէրութեան մէջ փնտռել սայ, եւ թէ որ գանելու ըլլայ, Հռիփսիմէն զատ ամէնն սպաննէ, իսկ զանիկա իրեն խաւրէ. բայց թէ որ անոր հաճի, իր քովը պահէ եւ իրեն կին առնու: Տրդատ աւ թուղժն առածին պէս, ամէն տեղ փնտռել տուաւ, եւ երբ որ քանի մ'օրէն Ս. Առնոնք զանուեցան, հրամայեց որ անոնց եղած տեղը զինուորներով պաշարուի, ու պալատէն շատ փառաւոր զարդեր եւ զգեստներ խաւրեց որ Հռիփսիմէին հագցընեն եւ իրեն բերեն, վասն զի կ'ոգէր զանիկա իրեն կին առնու: Հռիփսիմէ ամենեւին յանձն շտաւ թագաւորին պալատն երթալ. ան ատեն Տրդատ իր ծառաներուն հրաման տուաւ որ երթան զանիկա բռնութեամբ բերեն: Ծառաներն եկան Ս. Այսր քաշկուտելով մինչեւ պալատը տարին ու թագաւորին խուցը խոթեցին. նոյն ժամանակը հարսնիքին հանդէսն սկսաւ կատարուիլ: Բայց Հռիփսիմէ ամենեւին մէկ եղանակաւ մը թագաւորին հետ ամուսնանալը յանձն շտաւ, եւ Աստուծոյ օգնութեամբը զօրացած, անոր հետ մինչեւ կէս գիշեր կուտայաւ. յաղթեց ու պալատէն դուրս փախաւ, եւ գրան արջեր ժողվուած բազմութիւնն ալ ձղքելով՝ մինչեւ իր բնկերներուն բնակարանն եկաւ: Հոն Աստուծոյ իրեն բրած օգնութիւնն անոնց պատմելէն ետքն, աւելի հետու տեղ մը գնաց եւ սկսաւ Աստուծոյ դոհութիւն մատուցանել: Ան միջոցին թագաւորին հրամանաւր դահիճները ջահերով եկան զինքը բռնեցին ու լեզուն կտրեցին, զոմինք չորս ցցի կապեցին, կրակով այրեցին եւ աշուրները հանեցին. ետքը կտոր կտոր բրին: Նոյնպէս անոր բնկերներէն 32 հոգի ալ որոնք Ս. Առնին մարմինն առնելու եւ թաղելու եկած էին, օրով սպաննեցին. մէկ հոգի մ'ալ հնձանին մէջը մեռցուցին: Իսկ երկրորդ օրը Ս. Գայիանէն եւ ուրիշ երկու կուսանք սատարիկ տանջանքներով սպաննեցին:

ՀԲ. Այ օր ետքը Տրդատ մեծ հանդէսով որսի
 երթալու ատեն, երբ որ կառքով Աշղարշապատին
 գննէն գուրս կ'ելէր, Աստուծոյ պատիժը վրան հա-
 սառ ու դիւահարեցաւ. կերպարանքն ալ խոզի կեր-
 պարանքի փոխուեցաւ ու զնաց վայրենի խողերու մէջ
 խառնուեցաւ. եւ թէպէտ ուզեցին զանիկա քաղքին
 մէջ արգելալ, բայց չկրցան անոր սաստիկ ուժին
 դէմ դնել: Կոյնուկէս քաղքին մէջ ամէն իշխաններն
 ու հասարակ մարդիկ զիւահարեցան ու սաստիկ կը
 սանջուէին: Ան ատեն Տրդատին Խոսրովիդուխտ
 քրոջն որն որ թէպէտ կոսպաշտ, բայց բարի աղջիկ
 մըն էր, գիշերը հրեշտակ մ'երեւցաւ եւ ըսաւ. Թէ
 որ բժրշկուիլ կ'ուզէր, պէտք էք զԳրիգոր Արտա-
 շատին վերապէն հանել, եւ անոր ձեռքով ձեր տան-
 ջանքներէն կ'ազատիք: Խոսրովիդուխտ առ բանս նա-
 խարարներուն պատմեց, բայց անոնք խեղճան չհաւա-
 տացին, կարծելով թէ ան ալ դիւահարեր է եւ ասանկ
 բան կը խօսի. վասն զի անկարելի կը համարէին որ
 Ս. Գրիգոր 15 տարի ան վերապին մէջ կենդանի մնա-
 ցած ըլլայ: Բայց երբ որ նոյն տեսիլքն երեք անգամ
 կրկնուեցաւ, սպառնալով որ թէ որ Գրիգորը չհա-
 նեն, ուելի սաստիկ պատիժներ պիտ'որ կրեն, ան
 ատեն Օտայ Ամասունեաց նախարարն Արտաշատ
 խաբէցին որ երթայ նայի: Օտայ զնաց ու վերապին
 մէջ չուան մ'երկնցրնելով՝ պոռաց. Գրիգոր թէ որ
 կենդանի էս դուքս եկուր, վասն զի քու Աստուածդ
 հրամայեց որ գքեզ ասկից հանենք: Ս. Գրիգոր
 ոտք ելաւ ու չուանը շարժեց. ան ատեն զանիկա
 դուրս հանեցին եւ ուրախութեամբ առին Աշղար-
 շապատ բերին: Երբ որ քաղքին մօտիկցան, Տրդ-
 դատ եւ ուրիշ դիւահարած նախարարներ փրփրա-
 լով եւ իրենք զիրենք խածնելով Ս. Գրիգորին առ-
 ջեւն եկան: Ան ալ Աստուծմէ խնդրելով՝ զանոնք
 քիչ մը հանգստացուց: Ետքը Հռիփսիմեան կուսանաց
 զզաննուած տեղերը տեղեկանալով՝ զնաց տեսաւ որ

մարմինն անապական մնացեր է. շուտ մը ժողովեց անոնց բնակած հնձանը տարաւ, եւ ամէն մէկն իր զգեստին մէջ պատելով՝ հոն տեղաօրեց, ու բոլոր նոյն զիշերը Հայոց դարձին համար Աստուծոյ աղօթք բրաւ: Երկրորդ օրն ամէն նախարարները թագաւորին հետ մէկտեղ եկան Ս. Գրիգորին ազաչեցին որ իրենց բրածին թողութիւն տայ, եւ ճշմարիտ հաստիք ստրկեցնէ: ան ալ 66 օր քրիստոնէական հաստիքն անոնց քարոզեց: Անկէ ետքը Հախիսիմեանց համար երեք վկայարան սկսաւ շինել. Տրդատ Ս. Գրիգորին ազաչեց որ գտնէ ձեռուքներն ու ոտուքները բժրշկուին որ կարող բլայ ինքն ալ վկայարաններուն շինուելուն օգնել. եւ երբ որ անոր աղօթքովը բժրշկուեցան, եօթն օր ճամբայ ընելով Մասիս լեռն ելաւ եւ անկէ ութը հատ խոշոր քարեր կռնակն առաւ բերաւ: Վկայարանները լմրնալէն եւ Ս. Կուսանաց մարմիններն անոնց մէջ տեղաւորուելէն ետքը, Ս. Գրիգոր ամէն զիւրահարները ժողովեց եւ Աստուծոյ աղօթք ընելով՝ զանոնք բժրշկեց. Տրդատին խոզի կերպարանքն ալ թափեցաւ եւ իր առաջին կերպարանքը դարձաւ, եւ շուտ մը Ս. Գրիգորին հետ Հայաստանին կուսուցները կործանեց եւ ամէն կողմ քրիստոնէութիւնը տարածեց:

ՀԳ. Երբ որ սկսաւ ամէն տեղ քրիստոնէութիւնը ծաղկիլ, Աստուծոյ յայտնութեամբը Տրդատ Ս. Գրիգորը 16 մեծ նախարարներով կեսարիա խաւրեց ու Ս. Ղեւոնդ արքեպիսկոպոսէն եպիսկոպոս ձեռնադրել տուաւ: Ս. Գրիգոր անկից Ս. Յովհաննէս մկրտչին մարմնոյն մէկ մասն եւ Ս. Աթանազիոսին ամբողջ մարմնը, շատ ալ քահանաներ ու կրօնաւորներ հետն առած՝ Հայաստան Հարք դաւառին կողմերն եկաւ: Հոն իրեն հետ եղող նախարարներն իմացուցին որ Տարօն դաւառին մէջ Գեմետր ու Գիսանէս կուռքերը գեռ մնացած են, եւ շատ մարդիկ զանոնք կը պաշտեն: Ս. Գրիգոր անկէ Տարօն եկաւ որ ան երկու կուռքերն

ալ կործանէ: Բայց քանի մը քուրմեր անոր գալուն
 պատճառն իմանալով՝ զիշերանց գացին մեհենին բո-
 լոր հարստութիւնները գեանի տակ ծածուկ տեղեր
 պահեցին, եւ ուրիշ քուրմերուն իմացուցին որ վաղը
 Գիտանէսն ու Գեմեար պիտ'որ կործանին: Արձան
 քրմապետն սա բանս լսելուն պէս, իր Գեմեար որդին՝
 400 ալ զինեալ քուրմեր հետն առած՝ եկաւ Ս.
 Գրիգորին եղած տեղը բլրի մը վրայ պահուրտե-
 ցաւ, եւ սպասեց որ ուրիշ իր կողմնակիցներն ալ
 քովը ժողովուին: Իսկ Ս. Գրիգոր քանի մ'իշխաննե-
 րով եւ 300ի չափ զինուորով՝ Արձանին պահուրտած
 բլուրը գնաց, առանց բան մը գիտնալու, եւ անոնց
 եղած տեղը մտախնայուն պէս Արձան ու Գեմեար
 պատերազմի փողերը զարկին ու վրան յարձակեցան:
 Նախարարները յանկարծակիի եկան, եւ շուտ մը Ս.
 Գրիգորն ու հետն եղող քահանաներն Ողկան բերդը
 փախուցին. բայց երբ որ իմացան որ Արձանին զօրքը
 մինակ 400 հոգի է, վրան յարձակեցան եւ սկսան
 զարնուիլ: Կռուին սաստկացած ատենն Անգեղ տան
 իշխանը զԱրձան սրով սպաննեց. ան ատեն ամէն
 քուրմերը 5000ի չափ՝ հոն վազեցին եւ նախարարնե-
 րուն քիչոր զօրքը բլրէն վար քշեցին, ու չորս
 կողմը պաշարելով սկսան ջարդել: Անգեղ տան իշ-
 խանը քուրմերուն գունդը ճզքեց ու նորէն բլրին
 վրայ ելաւ, Գեմեար՝ Արձանին որդին ալ անոր ե-
 տեւէն, եւ հոն իրարու դիմաց ճակատեցան. բայց
 գիշերը վրայ հասնելով՝ չկրցան զարնուիլ: Երկրորդ
 օրն երկու կողման ալ նոր օգնութիւն հասաւ եւ սկսան
 սաստիկ զարնուիլ. պատերազմին ատենը Հաշտե-
 նից իշխանն օրն որ քուրմերուն ցեղէն էր, իր 700
 զօրքովը նախարարաց գնդէն բաժնուեցաւ, ու քուր-
 մերուն կողմն անցած՝ սկսաւ թագաւորական զօրքը
 ջարդել: Բայց Սիւնեաց իշխանն անոր վրայ յարձա-
 կելով՝ բանակէն բաժնեց հեռու տարաւ, ու բռնեց
 գլուխը կտրեց: Արձանեաց նախարարն ալ Աշտիշատ

քաղքին Մեսապէս քրմապեան եւ Արձանին Կեմար սրդին սպաննեց : Կեմար մեռնելուն պէս պատերազմը բոլորովին դադրեցաւ . ան ատեն Ս . Գրիգոր Աղկան բերդէն ելաւ եւ Ս . Յովհաննէս Մկրտչին մասունքները հեան առած՝ կոոյ արձաններուն քովն եկաւ , ուր շուտ մը ստասնաներն սկսան հալածուիլ . ոմանք ալ սկսան քուրմերը տանջել : Ս . Գրիգոր զանսեր բժրշկեց , ու կուռքելը կործանել տալով՝ անոնց տեղն եկեղեցի մը շինեց եւ Ս . Յովհաննէսին նշխարքներուն մէկ մասը հոն դրաւ : Անկից գնաց Աշախաթին մէջ եղող երեք մեհեաններն , այսինքն Վահեփահեան (Վահագնի) , Աստղեան ու Ոսկեմօր ոսկեծին դիք ըստած կուռքին մեհեաններն՝ որոնք դեռ մնացած էին , կործանելու համար . եւ խաչով մ'անոնց վրայ խաչակնքելուն պէս՝ բոլորովին գետնի հաւասար եղան : Անոնց տեղն եկեղեցի մը շինեց , եւ մկրտութեան աւագան դնելով՝ ամէն իրեն հետ եղող նախարարներն ու զօրքը , նաեւ նոյն գաւառին բնակիչներէն ալ 190,000 հոգի , մկրտեց :

ՀԳ . Տրդատ երբ որ լուր առաւ որ Ս . Գրիգոր Կեսարիայէն դարձեր է , շատ իշխաններով Բագաւան քաղաքը զանիկա դիմաւորելու գնաց : Հոն Ս . Գրիգոր ամենուն երեսուն օր պաք պահել տալէն ետքն՝ Եփրատ գետին մէջ Տրդատը , բոլոր թագաւորական ընտանիքն ու նախարարներն , եւ ուրիշ 150,000 ի չափ մարդիկ մկրտեց . մկրտութեան ատեն ջրին վրայ լուսեղէն սիւն մը ծագեցաւ , վրան լուսեղէն խաչով մը . գետին ջուրն ալ կեցաւ եւ սկսաւ դէպ ի ետ երթալ : Ետքը եօթն օր ալ նոյն տեղը կենալով՝ իր քովի քահանաներուն ու պաշտօնեաներուն գործակցութեամբը չորս միլիոնէն աւելի մարդ մկրտեց : Եւ որպէս զի մալորութիւնը շուտով Հայոց մէջէն վերնաց ու քրիստոնէութիւնն աղէկ հաստատուի , թագաւորին խորհուրդ տուաւ որ ամէն գաւառ գասատուններ դնէ : Տրդատ անոր խորհուրդը շատ սիրով կա-

տարեց, եւ շատ արագ ժողովել տարով, ըստ մեծի մասին քուրմերուն արարը, նոյն դասատուներուն մէջ բաժնեց՝ որ աստուածային եւ արտաբրին զիտութիւններ սորվին, եւ անոնց ամենուն թագաւորական գանձէն առատ ուճիկ կապեց: Աս դասատուներուն ոմանց մէջ յունարէն, ոմանց մէջն ալ ասորերէն կը սորվեցընէին: Ս. Գրիգոր Հայաստանին զանազան կողմերուն համար տասուերիւ եպիսկոպոս, ալ ձեռնադրեց, որոնց մէջէն Աղբիա՛նոս անունով մէկն իր տեղը թող տարով՝ ինքը շատ անգամ կ'երթար լեռներու վրայ ճգնութիւն կ'ընէր. միայն երբեմն երբեմն կու գար հաւատացեալներուն պցելութիւն կ'ընէր, եւ անոնց հարկաւոր եղած բաները կը հոգար: Բայց Տրդատ ու բոլոր ժողովուրդը բաղձալով իրենց հոգեւոր հայրը միշտ քովերնին ունենալ, անոր շատ աղաչեցին որ իրենցմէ չՏեռանայ. եւ երբ որ անիկա յանձն չառաւ, թագաւորը Տաճատ Աշոցայ նախարարէն տեղեկանալով որ Ս. Գրիգոր կեսարիա երիւ որդի ունի, շուտ մը մարդ խաւրեց ու զանոնք բերել տուաւ, որոնց մէջէն Ս. Գրիգոր զՍ. Արիստակէս՝ իր տեղը կաթողիկոս ձեռնադրեց, եւ անկէ ետքն ինքն աւելի եւս ճգնութիւն ընելու սկսաւ:

Հե. Աս ատենները Տրդատին լուր եկաւ որ Հոռմայեցւոց կոստանդիանոս կայսրն ալ քրիստոնեաց եղեր է, եւ ամէն կուսպաշտ կայսրներուն յազթելով՝ քրիստանէութիւնը կը պայծառացընէ: Ուզեց երթալ անոր ուրախակից բլլալ եւ բարեկամութեան գաղնիք դնել. ուստի Ս. Գրիգորը, Ս. Արիստակէսն եւ Ագբիանոս եպիսկոպոսն, իշխաններէն ալ չորս Բղէշլաներն, Անգեղ տան, Մոկաց, Սիւնեաց, Ռշաունեաց, Խոռխոռունեաց ու Բազրատունեաց նախանարներն, եւ ուրիշ շատ մեծամեծ իշխաններ, 70,000 ալ զօրք հետն առած՝ վաղարշապատէն ճամբայ ելաւ: Հազիւ թէ Ապահոնեաց գաւառը հասաւ, լսեց որ Բասրաց Գեղուհոն թագաւորը վրաստանն արշաւեր

Վրաց թագաւորը մինչեւ Կարին վաճառեր, եւ անկից 48,000 գերի առեր տարեր է: Նոյն ժամանակը Վրաց թագաւորին հրեշտակներն ալ եկան, եւ եղածը պատմելով՝ իրմէ օգնութիւն խնդրեցին: Տրդատ Ապահունեաց իշխանը 30,000 զօրքով անմիջապէս Վրաց օգնութեան խաւրեց, որն որ գնաց Գեղուհները զարկաւ ու գերիներուն մէկ մասն ազատեց. անոր իշխաններէն երեք հոգի եւ 4000 ի չափ ալ զինուոր գերի բռնեց, եւ Աղձնեաց իշխանը 4000 զօրքով սահմանապահ թող տալով՝ թագաւորին քովն եկաւ:

Ասկէ ետքը Տրդատ Ապահունեաց գաւառէն ճամբայ ելաւ, եւ շատ քաղաքներէն անցնելով եւ փառաւոր ընդունելութիւն գտնելով, Հոռոմ հասաւ: Կոստանդիանոս կայսրն իր փառաւոր հիւրը շատ պատուով ընդունեցաւ, եւ մէջերնին բարեկամութեան դաշինք դրին. նոյնպէս Ս. Գրիգոր ալ Ս. Սեղբեստրոսէն եւ ամէն եկեղեցականներէն եւ աշխարհականներէն շատ մեծ պատիւ գտաւ, իր սրբութեանն եւ քրիստոսի համար քաշած չարչարանքներուն համար:

ՀԶ. Տրդատին Հոռոմ եղած ատենը, Շապուհ Պարսից թագաւորն՝ ուրիշ կողմերն ունեցած պատերազմները լմնցուցած ըլլալով՝ միտքը դրաւ որ Հայաստան յարձակի եւ նորէն իր տակը նուաճէ: Աս մտքով բոլոր Հիւսիսային ազգերուն հետ խօսք դրաւ՝ որ անոնք միաբան Հայաստանին հիւսիսային կողմն արշաւեն, ինքն ալ իր զօրքովն ուրիշ կողմանէ յարձակի եւ դիւրաւ մը բանը լմնցընեն: Հայոց նախարարներուն մէջէն ալ Սղկունեաց Սղուկ նախարարն իր կողմը վաստակեցաւ: Բայց դեռ պատրաստութեան հետ եղած ատենը՝ Տրդատ Հայաստան դարձաւ, եւ Շապուհին միտքն իմանալով՝ ժողովեց բոլոր Հայոց զօրքն եւ նախ Հիւսիսականաց վրայ գնաց: Իսկ Սղուկ վախնալով՝ Տարօն գաւառին Ողկան բերդը մտաւ ամբացաւ, եւ նոյն կողմերը կը խռովէր: Տրդատ ուզելով զանիկա ձեռք ձգել, նախարարներուն խոստացաւ որ

ով որ Սղուկը բռնէ իրեն բերել, բոլոր անոր կալուածները բռնողին կը պարզուէ : Մամգուն ճենաստանցին աս բանս յանձն առաւ, եւ Տրդատէն ապստամբած ձեւացրնելով՝ Տարօն գաւառն եկաւ, ու Սղուկին իմացուց որ Տրդատին իրեն բրած անարգանայր Համար անկէ ապստամբած եւ եկած է իրեն հետ միանալու : Սղուկ զանիկա սիրով ընդունեցաւ, ու քանի մ'որ անոր հաւատարմութիւնը փորձելէն ետքը, թող տուաւ որ բերդը մտնէ : Մամգուն միշտ երեսանց բարեկամութիւն ցուցնելով՝ որ մը որսի ատեն նետով զարկաւ զՍղուկ սպաննեց, եւ բոլոր անոր ցեղը սրէ անցուց, որոնցմէ միայն երկու հոգի փախան ազատեցան, եւ շուտ մը թագաւորին իմացուց. ան ալ հրովարտակ գրեց եւ ամբողջ Տարօն գաւառը Մամգունին պարզուեց :

Աս Մամգունը ճենաց (Չինիմալինի) թագաւորին մեծ նախարարներէն զէկն էր : Վրան ամբաստանութիւն մ'ըլլալով՝ թագաւորը հրամայեց որ զանիկա մեռցընեն. բայց Մամգուն բանն իմացաւ, եւ իր ընտանիքովը Պարսից Արտաշիր թագաւորին քովը փախաւ : Ճենաց թագաւորն Արտաշիրն մարդ խաւրեց եւ խնդրեց որ Մամգունն իր ձեռքը տայ, եւ երբ որ շտուաւ, անոր դէմ պատերազմի ելաւ : Բայց նոյն ատենն Արտաշիր մեռնելով՝ անոր որդին Շապուհ Մամգունը քշելու պէս Հայաստան իր գործակալներուն խաւրեց. ճենաց թագաւորին հետ ալ հաշտութիւն ըրաւ : Եւ երբ որ Տրդատ Հայաստան եկաւ եւ Պարսից զօրքն անկէ վռնտեց, Մամգուն անոնց հետ չգնաց, այլ Տրդատին քովն եկաւ եւ ինքը զինքն անոր տուաւ : Թագաւորն ալ զանիկա նախարարներուն կարգը դրաւ, իր ցեղն իրեն անուամբը Մամգունեան կամ Մամիկոնեան անուանելով :

Հէ. Տրդատ Սղուկին սպանման լուրն առնելէն ետքը բանակը յառաջ քշեց եւ Հիւսիսականաց զօրացը հասնելով՝ անոնց դէմ ճակատեցաւ : Հազիւ թէ երկու կողմն իրարու հետ սկսան զարնուիլ, յարձակեցաւ թշնամեաց բանակը ճղքեց, եւ անոնցմէ շատերը զարկաւ սպաննեց : Բասլաց թագաւորն աս

բանս տեսնելուն պէս, իր կաշիով պատած չուանն հանեց եւ Տրդատին վրան վազելով՝ ետեւի կողմէն անոր վրայ նետեց, եւ աջ թեւին անցուց, որովհետեւ Տրդատ ձեռքը վերցուցած էր մէկուն սրով զարնելու համար, եւ սկսաւ քաշել. բայց չկրնալով զանիկա շարժել, չուանին ճութը ձիուն վիզը պլեց, եւ կ'ուզէր ձիուն զօրութեամբը թափաւորը ձիէն վար ձգել եւ սպաննել: Տրդատ անոր շարժելու ատեն թող չտուաւ, այլ անմիջապէս ձախ ձեռքովը չուանը բանելով՝ ուժով մը քաշեց Բասւլաց թագաւորն իր առջեւը բերաւ, եւ սրովն անոր զարկածին պէս, կէս մէջքէն երկու կտրեց, ձիուն գլուխն ալ մէկտեղ, ու գետինը ձգեց: Հիւսիսականաց զօրքն աս բանս տեսնելով՝ երեսնին դարձուցին ու փախան. Հայերն ալ ետեւնէն ինկած՝ մինչեւ Հոնաց երկիրը հալածեցին. ուր Տրդատ անոնցմէ պատանդներ առնելով՝ հաշտութիւն բրաւ ու Հայաստան դարձաւ: Աս պատերազմին մէջ Հայոց կողմէն ալ շատ մարդ ինկաւ. շատ ալ իշխաններ մեռան՝ որոնց մէջ նաեւ Արտաւազդ Մանգակունի սպարապետը:

Աս պատերազմին պատմութիւնը Ձենուր ասորին՝ որն որ Տրդատին ժամանակը Հայաստան եպիսկոպոս էր, այսպէս կը պատմէ:

Տրդատ քիչ մը ատեն Հռոմ մնալէն ետքը, Հայաստան դարձաւ, եւ եկաւ Պալունեաց գաւառին Կուառս գեղը նստաւ հանգիստ առնելու համար: Երբ որ գիշեր մը եպիսկոպոսներն ու քահանաները գիշերային պաշտօնը կը կատարէին, եւ թագաւորն ալ իշխաններուն հետ հոն եկած էր, յանկարծ գեղին շորս կողմն ահագին դղբորիւն մը լսուեցաւ, ու պատերազմի փող սկսաւ զարնուիլ: Վասն զի Գեղաեհոն Բասւլաց թագաւորն Աղձնեաց իշխանին 60,000 դահեկան տալով՝ զանիկա իր կողմը վասարկած՝ եւ անկէ խօսք առած էր որ Տրդատը բռնէ իր ձեռքը տայ. աս վախճանիս համար ինքն ալ 58,000 զօրք ժողվեց եւ եկաւ յանկարծ Կուառս գեղը պաշարեց: Հայոց նախարարները շուտ մը զօրքերնին ժողվեցին եւ ուզեցին Գեղաեհոնին հետ զարնուիլ, վասն զի գիշերը լուսնով

լուսաւորուած էր. թայց Տրդատ թող շտուաւ, այլ իր 30,000 զօրքէն 6,000ը այգիներու մէջ խաւրեց որ պահուարտին, 6,000 ալ Արձան ըսուած բլրին վրայ խրկեց՝ որ հոն 7 արան դնեն. 4,000 մ'ալ թշնամեաց ուրիշ կողմ մ'այգիներու մէջ պահուարտել տուաւ: Աս երեք գնդերուն զօրապետներուն պատուիրեց որ իրեն միտ դնեն, եւ ամենեւին թշնամեոյն շերեւան, սրպէս զի չլլայ թէ անոնք երեսանց փախչիլ ձեւացընելով՝ զիրենք մեջերմին առնուն ու ջարդեն: Տրդատ աս կարգադրութիւնն քրած ատեն, Սիւնեաց զինուորներէն մէկը թշնամիներէն գերի մը բռնեց, եւ անկէ տեղեկացան որ թշնամեոյն միտքը զՏրդատ բռնել է, եւ անոնց զօրացը թիւը 58,000:

Առաու ըլլալուն պէս, Տրդատ քովէ կողդ զօրքով ուղեց Արձան բլրին վրայ ելլել, եւ թշնամիներէն 6,000 հոգւոյ պատահելով՝ որոնք կ'ուզէին զինքն արգելաւ, զարկաւ զանոնք ճիւղեց եւ բլրին վրայ ելաւ. ան ատեն պահուարտը գնդերէն մէկը յանկարծ գուրա ելաւ եւ ան 6,000ին վրայ յարձակելով՝ անոնցմէ 700ը սպաննեց, մնացածը ցրուեց: Կոյնպէս պահուարտող 4,000ն ալ Կուարու գեղին վրայ եկող թշնամեաց վրայ յարձակեցաւ, եւ այդեքործներէն օգնութիւն գտնելով՝ շատերը ջարդեց: Գեղաբահոն աս պատերազմներուն մէջ 4,000էն աւելի մարդ կորսընցընելով՝ մնացած զօրքովը Հաշտենից գաւառը քաշուեցաւ ու Տրդատին նամակ խաւրեց թէ Եկու վաղը իրարու հետ պատերազմինը ու բանն որոշուի: Տրդատ նամակին պատասխան չտուաւ, այլ երկրորդ օրն իր 30,000 զօրքն առաւ Հաշտենից գաւառը գնաց, ու Մուշեղամարդ զաշտին վրայ թշնամեաց զիմացը ճակատեցուց: Բանակին աջ թեւին վրայ Սիւնեաց իշխանը դրաւ, իսկ ձախ թեւն Անգեղ տան իշխանին տուաւ. չորս Բղեշիաներն ալ իրեն թիկնապահ քրաւ: Երբ որ սկսան զարնուիլ, Տրդատ Գեղաբահոնին վրայ վազեց, եւ երկայն ատեն երկուքն իրարու հետ կռուելէն ետքը, Գեղաբահոն տեսնելով որ կը տկարանայ, հանեց իր չուանն ու Տրդատին վրայ նետելով՝ անոր աջ թեւն ու վիզը կապեց, այնպէս որ Տրդատ ալ չկրցաւ թեւը շարժել: Ան ատեն ձին վազցուց ու Գեղաբահոնին հասաւ, եւ սրովն անոր ձախ ուսին զարկածին պէս, զանիկա երկու կտոր քրաւ, անոր հետ մէկտեղ ձիուն գլուխն ալ կտրեց վար ձգեց. Սիւնեաց իշխանն ալ թշնամեաց աջ թեւին զօրապետին հետ զարնուեցաւ եւ անոր գլուխը կտրեց: Ասկէ ետքն ամէն գունդ մէկտեղ յարձակում բրին եւ մինչեւ արեւուն մտնելը թշնամեաց սաստիկ ջարդ տուին:

Երկրորդ օրը Գեղուեհնին մնացած զօրքը նորէն ժողովուեցան եւ Հայոց գնդին վրայ յարձակելով՝ սկսան ջարդել . իսկ անոնց սպարապետն ուրիշ զօրապետներուն հետ խօսք դրաւ որ Տրդատին վրայ յարձակին ու բռնեն, եւ իրօք ալ յարձակեցան ու բիչ մնաց որ բռնէին . բայց Մեհնունեաց քաջ գունդ մը վրայ հասաւ եւ ազատեց : Ասոր վրայ Տրդատ բարկացած՝ սպարապետին վրայ վազեց որ սպաննէ, բայց ձախ թեւը ծանր վիրաւորուեցաւ . որուն վրայ աւելի եւս բարկանալով՝ սրովն ուժով մը զարկաւ անոր գլուխը երկու կտոր բրաւ : մնացած զօրքին ալ ետեւէն ինկած մինչեւ Հարք գաւառը հալածեց, եւ դարձաւ Արձան բլուրն եկաւ : Ետքը մեռնողները համրել տալով իմացաւ որ Հայոց կողմանէ 1080 հոգի մեռեր է, իսկ թշնամիներէն 15,000էն աւելի :

Գեղուեհնին զօրքին մնացորդն երբ որ Հարք գաւառը հասան, նոյնտեղաց նախարարն անոնցմէ 1000 հոգւոյ չափ սպաննեց . նոյնպէս Վրաստանի մէջ ալ շատ տեղեր ջարդուեցան, այնպէս որ 58,000էն միայն 6,000 հոգի իրենց գաւառը կրցան դառնալ : Տրդատ տեղեկանալով որ աս պատերազմին պատճառն Աղձնեաց իշխանն է, զանիկա բռնել տուաւ, եւ կ'ուզէր ոտուրներն ու ձեռուրները կտրել տալ . բայց Ս . Գրիգոր թող չտուաւ, այլ բրաւ որ զանիկա պատուէն հանէ ու Հայաստանէն դուրս տեղ մը քէ :

ՀԸ . Աս պատերազմը լմրննալէն ետքը Տրդատ Շապուհին դէմ ալ պատերազմի պատրաստուեցաւ . իր իշխաններէն չորսն՝ այսինքն Միհրան Վրաց թագաւորն ու Գուգարացոց Բդեշխը, Բագարատ Բագարատունի ասպետը, Վահան Ամատունին եւ Մանածիհր Ռշտունին զօրաց վրայ զօրապետ դրաւ, եւ սպասեց որ Հռոմայեցոց զօրքն ալ գայ, որովհետեւ կոտտանդիանոս կայսրն ալ Պարսից դէմ պատերազմ բացած էր : Երբ որ անոնք Ասորեստան հասան ու Շապուհին հետ զարնուելով յաղթեցին, Տրդատ ալ իր զօրքովը Պարսկաստանին հիւսիսային կողմերն արշաւեց եւ շատ տեղերու տիրեց : Աս պատերազմին ատենը կամ սար՝ Պերոզամատին որդին իր ընտանիքովը Տրդատին քովն եկաւ :

Շապուհ Հոռոմայեցւոց եւ Հայոց զօրքէն շատ նեղը մանելով՝ Կոստանդիանոս կայսեր աղաչեց ու հաշտութիւն ըրաւ եւ անոր հետ դաշինք դրաւ: Նոյնպէս Տրդատին հետ ալ մասնաւոր դաշինք դրաւ ու հաշտուեցաւ: Ան ատեն Տրդատ իր Պարսից ձեռքէն առած Թաւրէժ կամ Երկրորդ Եկրատան քաղաքին մէջ պահապան զօրք եւ իր իշխաններէն մէկը վերահացու դրաւ ու Հայաստան դարձու: և

ՀԹ. Ասկէ ետքը Կոստանդիանոս Տրդատին հրովարտակ խաւրեց որ Ս. Գրիգորն առած՝ Նիկիա քաղաքը գայ, որովհետեւ Արիոս հերետիկոսապետին դէմ նոյն քաղաքին մէջ ժողովք մը պիտ'որ ըլլար. բայց Տրդատ վախնալով որ չըլլայ թէ ինքը Հայաստանէն հեռացած ատեն, Շապուհ առիթ գտնէ ու դաշինքն աւրելով՝ նորէն Հայաստան յարձակի, ժողովքի չգնաց. նոյնպէս Ս. Գրիգոր ալ գիտնալով որ ժողովքին եպիսկոպոսներն իրեն քաշած չարչարանքներուն համար զինքը պիտ'որ պատուեն, չուզեց երթալ, այլ իրենց տեղը Ս. Արիտակէսը խաւրեցին՝ որն որ Կեսարիայի Ղեւոնդ արքեպիսկոպոսին հետ Նիկիա գնաց, եւ հոն միւս եպիսկոպոսաց հետ ուղղափառ հաւատքը դաւանելով, ժողովքին կանոններն առաւ Հայաստան դարձաւ: Ս. Գրիգոր ան կանոններուն վրայ քանի մը բան ալ իր կողմանէ աւելցուց, Հայոց եկեղեցւոյն զգուշութեանը համար: Անկէ ետքը Կամսար իշխանն իր բոլոր ընտանիքովը մկրտեց, որուն կնքահայր Տրդատ եղաւ, եւ ասոր համար անոր Շիրակ գաւառն եւ ուրիշ շատ կալուածներ պարգեւեց: Բայց Կամսար մկրտուելէն եօթն օր ետքը վախճանեցաւ, որուն տեղը թագաւորն անոր մեծ որդին Արշաւիրը նախարար դրաւ եւ ուրիշ երկիրներ պարգեւեց: Ասոր ցեղին անունը հօրն անուամբը Կամսարական ըսուեցաւ. իսկ իր առած երկիրներն՝ որոնք յառաջագոյն Երասխաձոր կ'ըսուէին, Արշաւիր իր անուամբն Արշարունիք անուանեց:

2. Ս. Գրիգոր կամարը մկրտելն ետև չայաստանին հոգեւոր կառավարութիւնը բարձրովին Ս. Արիստակէսին յանձնեց, եւ ինքը զնայ Մանեայ այրն, ուր անդադար ձգնութեան եւ աղօթքի հետ եղաւ, մինչև որ սրբութեամբ վախճանելով՝ հրեշտակաց կարգը դասեցաւ: Իր մարմինը հովիւները գտան ու նոյն անդը թաղեցին, եւ ժամանակ մ'անյայտ մնալն ետքը, Գառնիկ անունով ձգնաւորի մը յայտնուեցաւ եւ Մանեայ այրէն թորդան բերուեցաւ: Իսկ Ս. Արիստակէս եօթը տարի կաթողիկոսութիւն ընելն ետքն, Արքեղայոս՝ Չորրորդ Հայոց իշխանն անոր տուած յանդիմանութիւններուն համար սաստիկ բարկացած ըլլալով՝ օր մը Ծափաց գաւառին մէջ անոր պատահեցաւ ու սրով մեռցուց, եւ ինքը փախաւ: Ս. Արիստակէսին սարկաւազներն անոր մարմինն առին ու թիլն աւանը բերին թաղեցին: Ասոր յաջորդեց իր մեծ եղբայրը Ս. Վրթանէս:

Տրդատ Ս. Գրիգորին մահուանէ ետքը նախարարներն ու ժողովուրդն օրէ օր քրիստոնէութեան եւ աստուածպաշտութեան մէջ յառաջ երթալու համար թէ խօսքով եւ թէ գործքով կը յորդորէր. բայց տեսնելով որ անոնք իրեն մտիկ չեն ըներ եւ հաւաքի ալ այնչափ սէր չունին, ինքն ալ թագաւորութիւնը թողուց եւ գնաց Մանեայ այրը ձգնութիւն ընելու: Նախարարներն ետևէն մարդ խաւրեցին որ գայ թագաւորութիւնը նորէն առնու, խոստանալով իր ուզածները կատարել. բայց երբ որ յանձն չառաւ, գաղտուկ անոր թոյն խմցուցին ու մեռցուցին 56 տարի թագաւորելէն ետքը:

2Ա. Տրդատ մեռնելուն պէս, Հայաստան սաստիկ խռովութիւն ինկաւ. Բզնունեաց, Մանաւազեանց եւ Որդունեաց նախարարութիւններն իրարու հետ պատերազմելով՝ իրարու ցեղերը ջնջեցին: Արշակունեաց ցեղէն Մանատրուկ անունով իշխան մը՝ զորն որ Տրդատ Ս. Վրթանէսին որդին Ս. Գրիգորիս կա-

Թողիկոսին հետ Փայտակարան խաւրած էր , հոն
ինքնագլուխ թագաւորեց , եւ Ս . Գրիգորիար ձիւ մը
պոչ կապելով ու վազընելով՝ սպաննեց . որուն մար-
մինն իր սարկաւազներն առին Փոքր Սինիք բերին
եւ Ամարաս աւանին մէջ թաղեցին : Նշնպէս Բակուր
Աղձնեաց իշխանն ալ ապստամբեցաւ , եւ ուղեց ինք-
նագլուխ իր երկիրներուն տերել . ասոր համար Որմիզ
Պարսից թագաւորէն ալ օգնութիւն ուզեց : Աս ամէն
խռովութիւնները տեսնելով միւս նախարարները , Ս .
Վրթանէսին քովը ժողովուեցան խորհուրդ ըրին , եւ
իրենց մէջէն Մար Ծոփաց իշխանն եւ Գագ Հաշտե-
նից նախարարը շատ բնծաներով կոստանդիանոսին
որդին կոստանդ կայսեր խաւրեցին , եւ անկէ խնդրե-
ցին որ իրենց օգնէ եւ Տրդատին որդին Խոսրովը թա-
գաւորեցընէ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Խ Ո Ս Ր Ո Վ Բ .

2Բ . Խոսրով թագաւոր կը պսակուի (343) . Սանատրուկ
ապստամբը Հայաստանէն կը վռնտուի : 2Գ . Մանածիհը
Բակուր բռնիկին կը յաղթէ ու զանիկա կը սպաննէ : Իր
Ս . Յակոբ Մծրնայ Հայրապետէն նզովուիլն ու մահը :
2Դ . Գուին քաղքին շինուիլը . Հիւսիսական ազգաց Հայաս-
տան արշաւելն ու յաղթուիլը : Խոսրովին մահն (352) եւ
անոր Տիրան որդւոյն կոստանդնուպոլիս երթալը : 2Ե . Շա-
պուհ իր Ներսէհ եղբայրը զօրքով Հայաստան կը խրկէ . Ար-
շաւիր կամարական անոր դէմ կ'ելլէ ու կը յաղթէ :

2Բ . ԿՈՍՏԱՆԻ կայսրը Հայոց խնդիրքը լսելով՝
Անտիոքոս իր պալատին վերակացուն շատ զօրքով
Հայաստան խաւրեց , իրեն թագ ու ծիրանի տալով
որ երթայ Խոսրովին հագցընէ , եւ զանիկա թա-
գաւորեցընէ : Անտիոքոս եկաւ զԽոսրով հօրը գահը
նստեցուց . Տրդատին դրած չորս զօրապետներն ալ
իրենց իշխանութեան մէջ հաստատեց , որոնցմէ Բագ

գարատ ասպետն արեւմտեան գնդին վրայ դրաւ , Միհրան Գուգարաց բզեշխը հիւսիսային զօրաց վրայ , վահան Ամատունին արեւելեան զօրաց եւ Մանածիհր Ռշտունին հարաւային զօրաց վրայ , եւ ամէն մէկուն իր զօրքը տալով՝ զՄանածիհր իր եւ Յունաց Արիկիտացի զօրքովն Ասորոց ու Միջագետաց կողմերը խաւրեց , վահան Ամատունին ալ արեւելեան զօրքով եւ Յունաց Գաղատացի գնդովն Ատրպատականին սահմանը խրկեց որ Պարսից Հայաստան արշաւելն արգելու : Իսկ ինքը մնացած յոյն զօրքերով՝ Բագարատ ասպետն ու Միհրան բզեշխն ալ իրենց գնդերովը հետն առած , Աղուանք՝ Սանատրուկ ապստամբին վրայ գնաց . ան ալ վախնալով՝ Փայտակարան քաղաքը Պարսից զօրքով լեցուց , եւ ինքը Պարսից Թագաւորին քովը փախաւ : Անտիոքոս ապստամբներուն երկիրն ասպատակեց եւ ետ դարձաւ , եւ Հայաստանին հարկերը ժողվելով՝ կայսեր գնաց :

29. Մանածիհր Ռշտունին ալ Աղճնիք՝ Բակուր բզեշխին վրայ գնաց եւ անոր յաղթելով՝ բռնեց սպաննեց . իսկ անոր Հեշա որդին Խոսրովին խաւրեց : Աղճնեաց նահանգին ու Միջագետաց բնակիչները թէ զօրքերն եւ թէ անմեղ մարդիկներն անխնայ ջարդեց եւ շատ գերի առած՝ որոնց մէջ նաեւ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին սարկաւազներէն ու թը հոգի , ետ դարձաւ : Ս. Յակոբ Մանածիհրին ետեւէն հասաւ ու յորդորեց որ բռնած անմեղ մարդիկն ազատ թողու , բայց Մանածիհր թագաւորը պատճառ բերելով՝ չուզեց թողուլ : Ան ատեն Ս. Յակոբ թագաւորին դիմեց , որուն վրայ Մանածիհր բարկացած՝ նոյն գաւառին մարդիկներուն գրգռելովն՝ անոր ու թը սարկաւազները ծովը նետել տուաւ : Երբ որ աս բանս Ս. Յակոբ լսեց , արդար բարկութեամբ բորբոքած՝ իր տեղը դարձաւ , եւ բարձր լեռան մը վրայ ելելով՝ ուսկից որ Ռշտունեաց գաւառը կը տեսնուէր , թէ զՄանածիհր եւ թէ անոր գաւառն անիծեց : Անմի-

ջապէս Աստուծոյ պատիժը վրան եկաւ : որովհետեւ Մանաճիհը սաստիկ ցաւերով մեռաւ եւ իր գառաւին պողբերութիւնն ալ դադրեցաւ : Բայց Ս . Յակոբին փախճանելէն ետքը Մանաճիհըին ժառանգ որդին անոր գերեզմանն երթալով՝ եւ լալով ու զըջմամբ Սուրբին աղաչելով՝ աս պատիժներէն ազատեցաւ :

29. Երբ որ Հայաստանին ամէն կողմը խաղաղացաւ, Խոսրով զբոսանաց եւ որսորդութեան հետ եղաւ . քանի մ'ալ շինութիւններ ըրաւ, այսինքն Ազատ դեաին քովն անտառ մը անկել տուաւ մէջն որսի անասուններ շաացրնելու համար, եւ իր անուամբը Խոսրովակերտ անուանեց . Գուին քաղաքն ալ շինեց եւ ակժուռ հոն փոխեց : Բայց ասոնց շինուելու ատենը՝ Հիւսիսային ազգերը Սանատրուկ սպստամբին զրգուելովը 20,000 զօրքով նորէն Հայաստան արշաւեցին, եւ Միհրանին զօրացը հետ զարնուելով՝ յաղթեցին, զինքն ալ սպաննեցին . անկէ եկան Աշաղարշապատ քաղաքը պաշարեցին : Ան ատեն Բազարատ ասպետն եւ Ահհան Ամատունին իրենց զօրքովն անոնց վրայ գացին եւ զարկին փախուցին . եւ ինչպէս Հայոց սովորութիւնն էր, ամենեւին անոնց նետ նետելու ատեն թող չտալով՝ սաստիկ հալածեցին, ու մինչեւ Օշական բտուած տեղը քշեցին : Հոն թշնամիները նորէն ժողովուեցան ու Հայոց հետ զարնուեցան, բայց դարձեալ յաղթուեցան . իրենց զօրապետն ալ՝ որն որ զօրաւոր մարդ մին էր՝ Ահհան Ամատունին Աստուծմէ օգնութիւն խնդրելով՝ նիլալով զարկաւ սպաննեց . ասկէ ետքը թշնամիք ստիպուեցան փախչիլ ու ցրուիլ : Հայերը յաղթանակաւ դարձան եկան Ծոփաց դաւառն, ուր Բազարատ Ահհան Ամատունիին ըրած քաջութիւնը թագաւորին պատմեց : Խոսրով աս քաջութեան փոխարէն Օշականը՝ (պատերազմին տեղը) Ահհանին պարգեւեց . Միհրանին տեղն ալ Գարջոյլ Խոսխոտունեաց նախարարը հիւսիսային զօրաց զօրապետ դրաւ : Եւ երբ

որ իմացաւ որ Շապուհ Պարսից թաղ աւ որը լծնամեաց
 հետ իրեն դէժ միաբաներ է, անոր հետ աւրուեցաւ,
 եւ առաժ քիչ մը հարկը կայսեր տալով՝ անկէ Պար-
 սից դէժ դնելու համար օգնութեան զօրք առաւ:
 Բայց քիչ մը ստեն կարն ինքը մեռաւ եւ Անիի մէջ
 իր հարցը գերեզմանը թաղուեցաւ Գ տարի թագաւոր-
 ութիւն ընելէն ետքը. եւ անմիջապէս Ս. Արթա-
 նէս կաթողիկոսն ամէն նախարարները ժողովեց, եւ
 անոնց մէջէն Արշաւիր Կամսարականը Հայաստանի
 վերակացու դնելով՝ ինքը Խոսրովին որդին Տիրանն
 առաւ Կոստանդնուպոլիս՝ կայսեր գնաց, որպէս զի
 զանիկա հօրը աւելը թագաւոր դնել տայ:

Ձե. Շապուհ Խոսրովին մեռնիլն եւ անոր որդ-
 ւոյն կայսեր երթալը լսելուն պէս, կարծելով թէ
 Հայերն անտէր մնացեր են, իր Ներսէս եղբայրը շատ
 զօրքով Հայաստան խաւրեց որ զանոնք նուաճէ, որով-
 հետեւ կ'ուղէր զանիկա Հայոց թագաւոր դնել: Ներ-
 սէս եկաւ Հայաստան Մուսղ դաշտին վրայ Արշաւիր
 Կամսարականին զօրացր պատահեցաւ, եւ անոնց հետ
 զարնուելով ու չարաչար յողթուելով՝ փախաւ իր եր-
 կիրը գնաց: Հայերը՝ թէպէտ եւ իրենց կողմանէ ալ
 շատ նախարարներ մեռան, Պարսիկները վաճառելով՝
 Հայաստանը պահեցին, մինչեւ որ Տիրան եկաւ եւ
 հօրն իշխանութիւնն առաւ:

Գ Լ ՈՒ Խ Ի

Տ Ի Բ Ա Ն Բ

29. Տիրան հօրը կը յաջորդէ (353), ու Պարսից հետ հաշտութիւն կ'ընէ: Ս. Վրթանէս կը վախճանի եւ Ս. Յուսիկ կաթողիկոս կը դրուի (356 — 357): Տիրան Յուլիանոս ուրացողին Պարսից գէմ՝ օգնութեան զօրք կու տայ. Ս. Յուսիկն ու Գանիէլ Տերուսին կը սպաննէ: 29. Զօրայ Ռշտունին՝ Յուլիանոսին հետ դացող զօրաց զօրապետն, անոր քովէն Հայաստան կը դառնայ. Տիրան Յուլիանոսին հրամանաւը զանիկա մեռցրնել կու տայ եւ բոլոր ցեղը կը քնջէ: 29. Շապուհ զՏիրան խաբէութեամբ իրեն կը կանչէ եւ աչուրններն հաննել կու տայ (364):

29. ՏԻՐԱՆ. Հայաստան դառնալուն պէս Պարսից հետ հաշտութիւն բրաւ, եւ խաղաղութեամբ կեանք կ'անցընէր. եւ սրովհետեւ Շապուհ Յունաց վրայ պատերազմի ելլելու միաք ունէր, աս խաղաղութիւնն երկայն ատեն պահեց: Նաեւ երբ որ Հիւսիսային ազդերը նորէն Հայաստան յարձակեցան, Տիրանին օգնելով՝ զանոնք վռնակց: Տիրանին թագաւորութեան շրջորդ տարին Ս. Վրթանէս կաթողիկոսը վախճանեցաւ, ու Թորդան գեղը թագուեցաւ, որուն յաջորդեց իր որդին Ս. Յուսիկ:

Ինչպէս Կոստանդ կայսեր մեռնելէն ետքը Հայաստանին խաղաղութիւնն ալ աւրուեցաւ. որովհետեւ Կոստանդին յաջորդեց Յուլիանոս Ուրացողն եւ ան միջապէս զօրք ժողվելով՝ Պարսից վրայ քալեց ու մինչեւ Եփրատ գետին քովը հասաւ: Պարսից զօրքն Եփրատին կամուրջը փրցուցին, եւ թող չէին տար որ Յոյները դիմաց անցնին: Տիրան աս բանս լսելուն պէս, վախցաւ որ Յուլիանոս Հայաստան կը մտնէ. ուստի անոր բարեկամութիւն ցուցրնելու համար, զօրք ժողվեց եւ անոր քովն եկաւ, ու Պարսիկներն Եփրատին քովէն վռնակելով՝ Յունաց զօրքն անդին

անցուց. ասոր վրայ Յուլիանոս իրեն շատ պատի-
րբաւ: Բայց Տիրան շուղելով անոր հետ մէկտեղ պա-
տերազմի երթալ, աղաչեց որ զինքը հետը չտանի.
Յուլիանոս յանձն առաւ, բայց զօրք ու պատանդ ու-
ղեց, ան ալ իր երրորդ որդին Տրդատան եւ իր անդրա-
նիկ որդւոյն տղան Տիրիթը պատանդ տուաւ, զունդ
մ'ալ զօրք Զօրայ Ռշտունեայ նախարարին՝ Հայոց հա-
րուային գնդին զօրապետին հրամանին տակ: Յուլիա-
նոս պատանդներն առնելէն ետքը Տիրանը թող տուաւ
որ Հայաստան երթայ, իր տախտակի վրայ նկարուած
պատկերն՝ որուն վրայ նաեւ սատանաներու պատկեր-
ներ ալ կային, անոր տալով՝ որ եկեղեցւոյն մէջ
կախէ: Տիրան առաւ պատկերը Ծովաց գաւառը
բերաւ, եւ կ'ուզէր իր ձեռքովը թագաւորական եկե-
ղեցւոյն մէջ կախել. բայց Ս. Յուսիկ կաթողիկոսը
վրայ հասաւ, եւ քաշեց պատկերն անոր ձեռքէն
առաւ գետինը զարկաւ, ու կոխկռտելով կտոր կտոր
ըրաւ, իմացընելով անոր որ Յուլիանոսին միաքն
ասով սատանաներուն երկրպագութիւն ընել տալ է:
Բայց Տիրան վախնալով որ եթէ Յուլիանոս իր պատկե-
րին եղած անարգանքը լսելու ըլլայ՝ զինքը կը մեռ-
ցընէ, հրաման տուաւ որ Ս. Յուսիկը սաստիկ ծեծեն,
որն որ նոյն ծեծին տակ հոգին աւանդեց, եւ մարմինն
առին Թորդան իր հօրը թագուած տեղը տարին
թաղեցին: Տիրանին աս գործքին համար Գանիէլ
ծերունի քահանան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչին աշա-
կերտներէն մէկն, անոր վրայ անէծք կարգաց. ասոր
համար թագաւորը զանիկա ալ խղզել տուաւ, եւ
նախարարներուն խնդրելովը Փառներսեհ անունով
մէկը կաթողիկոս դրաւ:

2Է. Ս. Յուսիկին սպաննուիլն եւ նախարարաց
թագաւորին դէմ ըրած տրտունջն երբ որ Զօրայ իշխա-
նը լսեց, զօրքը յորդորեց որ այնպիսի անօրէն թա-
գաւորի մը չհնազանդին, եւ ան ուրացողին քովէն
հեռանան, եւ անոնց ամէնն իրեն հետ միաբանելով՝

դարձաւ եկաւ Հայաստան, Տմբիբ դաւաւր կեցաւ որ տեսնէ թէ միւս նախարարներն ինչ կ'ընեն: Բայց Յուլիանոս Տիրանին մարդ խաւրեց ու հրամայեց որ Զօրան բոլոր ցեղովն սպաննէ, ապա թէ ոչ, բոսա, եւս դառնալու ասենս քեզմէ սաստիկ վրէժ կ'առնում: Թագաւորը սաստիկ վախնալով Հայր ներքինապետը Զօրային խաւրեց եւ երդում բնելով որ իրեն ամենեւին մնաս մը չընէր, իր քովը կանչեց: Զօրայ թէ պէտ եւ չէր ուզեր երթալ, բայց որովհետեւ զօրքը քովէն ցրուած էին, ստիպուեցաւ երթալ, եւ Տիրանին հրամանաւ բոլոր ցեղովն սպաննուեցաւ. միայն իր եղբորորդիներէն մէկը դայեակները փախուցին եւ ազատեցին: Կրեն տեղը Սաղամութ Անճապ իշխանը հարաւային զօրաց զօրապետ դրուեցաւ:

28. Յուլիանոս Պարսից հետ զարնուելով եւ սպաննուելով՝ զօրքն եւս դարձան. Շապուհ ալ ետեւնէն ինկաւ ու հալածեց: Երբ որ Հայաստանին կողմերն եկաւ, Տիրանին բարեկամութեամբ թուղթ գրեց եւ իրեն կանչեց, իբրեւ թէ հարկաւոր բանի մը վրայ խորհուրդ բնելու համար: Տիրան խաբուելով՝ անմիջապէս ելաւ գնաց, զօրն որ Շապուհ իր զօրացն առջեւը սաստիկ յանդիմանելէն ետքն, աչուրները հանել տուաւ, որուն թագաւորութիւնը 11 տարի տեւեց:

ԳՆՈՒԽ ԻԸ

Ա Ր Շ Ա Կ Ի

2Թ. Շապուհ զԱրշակ Տիրանին տեղ թաղաւոր կը շնէ (364) : Վաղնատանոս կայսրն Արշակին Տրդատ եզրայրը մեռցընել կու տայ եւ Հայոց վրայ զօրք կը խաւրէ : Ս. Ներսէս կաթողիկոսը զԱրշակ կայսրն հեռ կը հաշտեցընէ : Գնէլ Տրդատին որդին հիւպատոսութեան պատիւ կ'առնու . Տիրիթին գրգռութեամբն Արշակ անոր հեռ կը թշնամանայ եւ աս պատճառաւ իր հայրը մեռցընել կու տայ : Գ. Ս. Ներսէսին բրած բարեկարգութիւնները . Գնէլին սպաննուիլը : ԳԱ. Արշակ Շապուհին հեռ հաշտութիւն կ'ընէ . Տիրիթն ու Վարդան Մամիկոնեանն սպաննել կու տայ : ԳԲ. Շապուհ Տեղբանակերտը կը պաշարէ , Հայերն անոր կը յաղթեն : ԳԳ. Արշակաւանին շինուիլն , Արշակին ու նախարարաց մջ ծագած խռովութիւնն ու նոյն աւանին կործանիլը : ԳԴ. Տեղբանակերտին երկրորդ անգամ պաշարուիլն եւ առնուիլը : ԳԵ. Արշակ Աբաց զօրքով նախարարաց դէմ պատերազմի կ'ելլէ , Ներսէս համարական Հայոց զօրքով անոր դէմ կ'ելլէ : Ս. Ներսէս՝ զԹաղաւորը նախարարներուն հեռ կը հաշտեցընէ . անոր Պապ որդին Կոստանդնուպոլիս պատանդ կը առնի , եւ ինքը կայսրն հրամանաւը կ'արտորուի : ԳԶ. Արշակ նախարարներն սպաննել կու տայ : ԳԷ. Շապուհ Արշակին վրայ զօրք կը խաւրէ : Արշակ նեղը մտնելով Պարսկաստան կ'երթայ ու հոն կ'արգելուի : Հայ նախարարները Պարսից զօրքը Հայաստանէն կը վռնտեն : ԳԸ. Մերուժան Արծրունիին Պարսից զօրքով Հայաստան գալն . Արտազերից բերդին առնուիլը . Փառանձեմ թագուհւոյն բռնուիլն եւ սպաննուիլը :
 Արշակին մահը (382) :

2Թ. Շ ԱՊՈՒՀ Տիրանը կուրացընելէն ետքը՝ վախնալով որ Հայերն իրեն դէմ կ'ելլեն եւ Յունաց վրայ երթալուն արգելէք կ'ըլլան , անոր Արշակ որդին հօրը տեղը թագաւորեցուց , որպէս զի Հայոց սիրտը շահին նախարարներէն ալ պատանդներ առաւ , եւ Վահան Ամատունիին տեղն՝ իր սիրելին Վաղնիակ Սիւնեաց իշխանն արեւելեան զօրաց զօրապետ դրաւ , ու Հայաստանն անոր յանձնեց : Բայց նոյն ժամանակը Հիւ-

սխալին աղգերը Պարսկաստան արշաւելով՝ Շաւուհ
 ստիպուեցաւ զօրաց մեծ մասովն անոնց դէմ երթալ .
 ան ատեն Վաղենաթանուս կայսրն անոր Յունաց կող-
 մերը մնացած քիչնոր զօրքին վրայ բանակ մը խաւրեց ու
 վաւոտեց : Արշակին ալ թուղթ խաւրեց ու յորդորեց
 որ Պարսիկները թողու, եւ իր զօրացը հետ միանալով՝
 անոնց դէմ պատերազմի . բայց Արշակ անոր նամակին
 եւ ոչ պատասխան տուաւ, ու հրեշտակները պարապ
 ետ խաւրեց : Կայսրն աս բանիս վրայ սաստիկ բարկա-
 նալով՝ Հայոց պատանդներուն մէջէն Արշակին Տրդատ
 եղբայրը մեռցրնել տուաւ, եւ Թէոդոս զօրապետը
 շատ զօրքով Հայաստանի վրայ խաւրեց : Արշակ ասկէ
 զարհուրեցաւ եւ Ս. Ներսէսը՝ Ս. Յուսիկին թուռն,
 որն որ Փառներսէհին տեղը կաթողիկոս եղած էր,
 Թէոդոսին խաւրեց, եւ ամէն հարկերը՝ շատ ալ բնծայ
 տալով՝ կայսեր հետ հաշտուեցաւ : Ս. Ներսէս կայսեր
 աղաչեց եւ բոլոր պատանդներն ալ առաւ, եւ անոր
 ազգականներէն Ողիմպիադա անունով աղջիկ մ'ալ
 Արշակին կնութեան բերաւ :

Կայսրը զՏրդատ պարապ տեղ մեռցրնելուն հա-
 տուցում մ'ընելու համար, անոր Գնէլ որդւոյն հիւ-
 պատաստութեան պատիւ տուաւ, եւ շատ ալ ստակ
 պարգեւեց : Գնէլ եկաւ Կուաշ աւանը, Տիրանին՝ իր
 կուրացած հաւուն քովն, որն որ իր Տրդատ որդւոյն
 մահուանը վրայ սաստիկ ցաւելով՝ բոլոր իր ինչքերն ու
 կալուածները Գնէլին տուաւ, եւ պատուիրեց որ միշտ
 Կուաշ աւանը բնակի : Հոն Գնէլ Սիւնեաց ցեղէն Փա-
 ռանձեմ անունով կին մ'առաւ ու թագաւորական
 հանդէսով հարսնիք բրաւ . ամէն նախարարներուն ալ
 առատ պարգեւներ տուաւ, որոնք իր վրայ շատ սեր-
 ունեցան եւ իրենց որդիքն իրեն քովը տուին : Տիրիթ՝
 Գնէլին հօրեղբայրն՝ որն որ միշտ անոր փառքին վրայ
 կը նախանձէր, աս բանէս առիթ առնելով՝ թագա-
 ւորին ամբաստանութիւն բրաւ թէ Գնէլ կ'ուզէ զքեզ
 մեռցրնել եւ ինքը թագաւոր ըլլալ . ասոր նշան աս է

որ, ըստ, անիկա Այրարատ՝ թագաւորական կալուածներու մէջ կը բնակի, եւ բոլոր նախարարներն իր կողմն են. առ բանս նաեւ Աւարդան Մամիկոնեան թագաւորին զինակիրը՝ Տիրիթին սիրելին հաստատեց: Արշակ ալ հաւատալով՝ Գնէլին հրաման հաւրեց որ Այրարատէն երթայ եւ Ազիովիտ ու Ասբերանի բնակի, ինչպէս որ Արշակունի իշխաններուն սովորութիւնն էր, որուն Գնէլ անմիջապէս հնազանդեցաւ: Բայց Տիրան ասոր վրայ նեղացաւ եւ Արշակին սաստիկ յանդիմանութիւն մը խաւրեց. ան ալ Տիրանին սենեկապետներուն հրաման խաւրեց որ զանիկա խղզեն, որուն մարմինը նոյն Կուաշ աւանին մէջ թաղուեցաւ:

Ղ. Ս. Ներսէս կաթողիկոսն առ ժամանակս Հայաստան զանազան կարգաւորութիւններ ընելու զըզաճ էր: Յունաստանէն դառնալուն պէս նախ եպիսկոպոսաց ժողովք մ'ընելով՝ քանի մը հարկաւոր կանոններ հաստատեց: Ամէն գաւառներու մէջ աղքատանոցներ ու հիւանդանոցներ շինել տուաւ եւ ապրուստ չունեցող ու հաշմ եւ բորոտ մարդիկներն անոնց մէջ դրաւ, որոնց ամէն մէկուն համար մասնաւոր մուտք կապեց, եւ իր խաղ սարկաւազն անոնց վրայ տեսուչ դրաւ: Գեղերու մէջ ալ օտարանոցներ շինել տուաւ, որպէս զի ճամբորդներն ու պանդուխտները բնակելու տեղ ունենան. շատ ալ կրօնաւորաց վանքեր ու յունարէն եւ ասորերէն սորվեցընելու դասատուներ շինեց: Ասոնցմէ զատ նախարարաց մէջէն իրարու մերձաւոր ազգականներուն հետ ամուսնանալու եւ մեռելոց վրայ կոծ ընելու սովորութիւնը վերցուց:

Արշակ Գնէլին հետ քիչ մը ատեն հաշտուած մնալէն ետեւ, Տիրիթին գրգռելովը շնչին պատճառաւ մը նորէն անոր հետ թշնամացաւ: Վասն զի օր մը որսի երթալով՝ երբ որ սաստիկ շատ կենդանի որսաց եւ սկսաւ ասոր վրայ պարծիլ, Տիրիթ ու Աւարդան ըսին թէ Գնէլ առ օրերս իր կալուածնե-

բուն մէջ ասկէ շատ աւելի որս որսաց: Արշակ ան-
միջապէս Գնէլին հրամանն խաւրեց որ իրեն որսի տեղ
պատրաստէ, եւ ինքն ալ շուտ մ'ելլաւ գնաց որ
իր հրամանը չկատարուած գտնելով՝ կարող ըլլայ
Գնէլը պատժել: Բայց երբ որ որսին տեղն հասաւ ու
չափէ դուրս որսի առատութիւնը տեսաւ, աւելի եւս
նախանձելով՝ նոյն որսին ատենը Վարդան զինակիրին
հրամայեց որ նետով զարնէ զԳնէլ սպաննէ. ան ալ
շուտ մը թաղաւորին հրամանը կատարեց: Արշակ
կեղծաւորութեամբ բրածը ծածկել ուզելով՝ անոր
մարմինը մեծ հանդէսով թաղել տուաւ ու շատ
տրամութիւն ցուցուց: Բայց բանը ծածուկ չմնաց,
այլ ամէն մարդ իմացաւ. նաեւ Ս. Ներսէսին ականջն
ալ հասնելով՝ զԱրշակ անիծեց, եւ շատ օրեր սուգ
բրաւ: Արշակ ասոր վրայ զղջալու տեղ, յանդգնեցաւ
Փառանձեմը՝ Գնէլին կինն իրեն կնութեան առաւ,
ուսկից Պապ անունով տղայ մ'ունեցաւ: Աս Փա-
ռանձեմն ամպարիշտ քահանայի մը ձեռքով Հաղոր-
դութեան խորհրդին մէջ թոյն խառնել տալով՝
Ողիմպիադային՝ Արշակին առաջին կնոջը կերցուց ու
մեռցուց. նոյնպէս Վաղինակ Սիւնեաց նախարարն
սպաննել տուաւ եւ անոր տեղն իր հայրն Անտիոք
գնել տուաւ:

ՂԱ. Ը Դապուհ թէպէտ եւ Արշակին այնչափ տարի
իրեն հարկ չտալուն վրայ բարկացած էր, բայց հիւսի-
սային ազգաց հետ պատերազմ ունենալով՝ չկրցաւ
բան մ'ընել: Իսկ երբ որ ան պատերազմը լմնցաւ,
սկսաւ պատրաստուիլ որ Հայաստան արշաւէ: Արշակ
անոր հետ նորէն հաշտութիւն ընելու համար Տի-
րիթն ու Վարդանը Պարսկաստան խաւրեց, որոնց
խօսքին Դապուհ անսաց, որովհետեւ Յունաց վրայ ալ
երթալու միտք ունէր, ու հաշտութիւն բրաւ. միայն
խնդրեց որ Արշակ Հայոց զօրքովն իրեն հետ մէկտեղ
Յունաց վրայ երթայ: Արշակ Յունաց հետ թշնա-
մանալ չուզելով՝ զանազան պատճառներ բերելով՝

միայն պղախի գունդ մը զօրք անոր օղնութեան տուաւ : Տիրիթին ու Աարդանին ալ բարկացաւ, իբրեւ թէ անոնք Յունաց ատելութիւն ունենայնուն համար, զՀապուհ առ բանիս յորդորած ըլլան, եւ ծանր խօսքերով զանոնք նախատեց, որուն շկրնալով գիմանալ, ելան Հապուհին քովը դացին: Բայց Ասասկ Աարդանին եղբայրը թաղաւորին հրամանաւն անոնց ետեւէն հասաւ ու բռնեց երկուքն ալ սպաննեց:

ՂԲ. Ասկէ ետքը Հապուհ իր զօրքովը Յունաց վրայ քալեց. եւ երբ որ Տիգրանակերտ քաղքին առջեւը հասաւ ու կ'ուզէր ներս մտնել, Անտիոք (Անդովկ) Սիւնեաց նախարարը՝ Տիգրանակերտին քաղաքապետը, քաղքին դռները դոցել տուաւ, եւ ս'չ Հապուհին հրեշտակ խաւրեց, ս'չ ալ անոր խաւրածոներն ընդունեցաւ: Հապուհ սաստիկ կատաղած՝ հրաման տուաւ որ քաղքին հետ զարնուին. բայց Հայերը սաստիկ քաջութեամբ պատերազմելով՝ Պարսից աղէկ ջարդ մը տուին, որոնք ստիպուեցան ետ քաշուիլ, եւ եկան Մծրին քաղաքը քիչ մը հանգիստ առնելու համար: Հապուհ ուզեց նորէն Տիգրանակերտին վրայ յարձակում ընել, բայց Յունաց հետ պատերազմիլ հարկ ըլլալով՝ թող տուաւ յառաջ քալեց, ու Տիգրանակերտցիներուն նամակ գրեց եւ խմացուց որ սարածներնուն վրէժը Յունաց պատերազմէն դառնալէն ետքը պիտ'որ առնու:

ՂԳ. Հաղիւ թէ Պարսից զօրքը Հայաստանին սահմանէն հեռացաւ, Արշակին ու նախարարաց մեջ մեծ խռովութիւն ծագեցաւ. վասն զի Արշակ Արշակաւան անունով աւան մը շինել տուաւ, եւ ուզելով որ շուտ մը նոյն աւանը բնակիչներով լեցուի, հրաման հանեց որ ս'վ որ դայ հոն բնակի, վրան ամենեւին դատաստան չըլլայ: Անմիջապէս ամէն կողմէն չարագործ, մարդասպան, դող եւ աւազակ մարդիկ հոն թափեցան ու դատաստանէ պատեցան: Նախարարներն՝ որոնց շատերուն ծառաներն իրենց ինչքերը

յափշտակած կամ դողցած՝ Արշակաւան փախած էին , շատ անգամ թաղաւորին բողբ բրին որ ան հրամանը ջնջէ , բայց անիկա ամենեւին մօտիկ չըրաւ : Ան տաւն անոնք ալ Շապուհին դիմեցին , որն որ Յունաց պատերազմը լմընցընելուն պէս , իր զօրապետներէն մէկը դունդ մը հայ զօրքով Հայաստան խաւրեց , որպէս զի զԱրշակ բռնէ . բայց Արշակ յառաջագոյն իմանալով՝ կռուիս լերանց կողմը փախաւ : Պարսիկ զօրապետն եկաւ նախարարներուն օգնութեամբն Անի ամրոցին տիրեց , եւ մէջի թաղաւորական գանձերն առաւ . նսեւ թաղաւորաց սկիւրները գերեզմանէն հանեց՝ որ Պարսկաստան տանի . բայց նախարարները ձեռքէն առին եւ Աղք աւանը թաղեցին : Ասկէ ետքն ամէն նախարար իր զօրքն առած՝ Արշակաւանին վրայ յարձակեցան ու մէջիններն անխնայ ջարդելով՝ աւանն ալ կործանեցին . միայն կաթնակեր տղաքն ողջ պահեցին , եւ իբրեւ գերի մէջերնին բաժնեցին . բայց նոյն ժամանակը Ս . Ներսէս վրայ հասաւ եւ ան տղաքը նախարարներուն ձեռքէն առնելով՝ որթերու մէջ տեղ մը կրէլ տուաւ , որոնք ետքը մեծնալով ու շատնալով՝ Որթք կոչուեցան :

ԳՊ . Շապուհին զօրացը մէկ մասը Հայաստանին հիւսիսային կողմը դործելու տաւն , ինքն ալ մնացած զօրքովը Տիգրանակերտին վրայ եկաւ . քաղաքացիք դարձեալ դռները դոցեցին , եւ պարսպին վրայէն պռուացին . Մէկզի գնա ասկից , Շապուհ , որպէս զի քեզի առաջին անգամէն աւելի վնաս չհասցընենք . ան ալ պատասխան տուաւ . Ո՛վ քաջ Հայեր , այնպէս քաղքի պարսպին մէջ քաշուիլ եւ սպառնալիքներ ընելը կանանց գործք է . եթէ քաջ էք , եկէք արձակ դաշտի վրայ իրարու հետ կռուինք : Ետքը դարձաւ յոյն գերիներուն ըսաւ . Թէ որ ձեր քաջութեամբն

1 Փաստոս Բուզանդացին զգմանը չկրցան բանալ , սակայն պատմ թէ Պարսիկները տիկ ամուր շինուած ըլլալուն Սանատրուկ թաղաւորին գեհամար :

աս քաղաքն առնում՝, ամենքնից ալ ազատ կ'ընեմ՝, Պարսիկ զօրաց ալ հրաման տուաւ որ քաղաքին չորս կողմը պատեն, ու պարսպին վրայ եղողները նետով զառնեն: Յոյն զինուորները սաստիկ բռնութեամբ էշ բռուած պարիսպ փլցրնելու մեքենաները քաղաքին պատերուն ծօռեցուցին եւ սկսան փլցրնել. դռներուն ալ կրակ տուին եւ այրեցին: Ան ատենը ըստ Պարսից զօրքը ներս յարձակեցան եւ բնակիչներն անխնայ ջարդեցին: Շապուհ սղջ մնացածներէն շատ գերի առաւ ու Պարսկաստան դարձաւ, եւ իր Հայաստան եղող զօրապետին հրաման խաւրեց որ Սիւնեաց ցեղը բոլորովին ջնջէ:

ՂԵ. Շապուհ Հայաստանէն երթալուն պէս, Արշակ Վրացմէ օգնութիւն առած՝ եկաւ իր կողմն ըլլող Հայերն ալ ժողովեց, եւ նախարարաց դէմ պատերազմի ելաւ, Արշակաւանին վրէժն առնելու համար: Անոնք ալ Ներսէհ Կամսարականին առաջնորդութեամբ ժողովուեցան եւ իրեն հետ սաստիկ զարնուեցան, բայց ոչ մէկ կողմն եւ ոչ միւս կողմը յաղթութիւնն ստացաւ: Նոյն ժամանակը Յունաց Կայսրն ալ Արշակին վրայ զօրք խաւրեց, անոր իրեն դէմ Պարսից օգնութիւն ընելուն համար: Արշակ ինքը զինքն երկու թագաւորներու թշնամի եւ նոյն իսկ իր նախարարներուն ատելի տեսնելով՝ Ս. Ներսէսին հրեշտակներ խաւրեց եւ աղաչեց որ մէջ մանէ եւ հաշտութիւն ընել տայ, խոստանալով որ բոլոր ըրածներուն վրայ կ'ապաշխարէ եւ իր ընթացքը կը փոխէ. նախարարներէն շատերն ալ առ բանիս համար անոր շատ աղաչեցին. նոյնպէս եպիսկոպոսներն ալ աղաչեցին որ իր վիճակն երեսի վրայ չ'ընդուն: Ս. Ներսէս անոնց խօսքին անսալով՝ մէջերնին մտաւ, եւ նախարարները թագաւորին հետ հաշտեցուց. միայն Մերուժան Արծրունի եւ Վարդան Մամիկոնեան անոր մտիկ չ'ըրին, եւ ելան Շապուհին քովը դացին: Ետքը Յունաց Թէոդոս զօրապետին զնայ եւ աղաչեց որ Հայաստա-

նին մեա չհասցրնէ, այլ հարկն ու թագաւորին Պապ որդին, նոյնպէս նախարարաց որդիները պատանդ առած ետ դասնայ: Թեոդոս հաւանեցաւ եւ ամէն պատանդներն առաւ կայսեր քովն եկաւ. իրեն հետ բերաւ Ս. Ներսէսն ալ, որուն ձեռքովն Արշակ կայսեր նամակ մը խուրեց, իր Յունաց դէմ բրածնելուն պատճառը ցուցրնելու համար: Բայց Վաղէս կայսրն ո՛չ աս թուղթը կարդաց, ո՛չ ալ զՍ. Ներսէս իր առջեւը հանել տուաւ, այլ հրամայեց որ զանիկա աքսորեն եւ պատանդները սրէ անցրնեն: Արիստեան աղանդաւորներն աս հրամանը լսելուն պէս Ս. Ներսէսին քովն եկան եւ ըսին. Թէ որ մեր աղանդն ընդունիս, Մակեդոն (Ասատանդնուպոլսին նոյն ատենուան շարափաւ եպիսկոպոսը) գրեղ կ'ազատէ. բայց Ս. Ներսէս յանձն չառնելով՝ աքսորուեցաւ. իսկ Պապ եւ միւս պատանդները մահուան վախէն յանձն առին ու Մակեդոնին միջնորդութեամբն ազատեցան: Ս. Ներսէս նաևով աքսորուելու ատեն, անբնակ կղզի մը քով նաւը ցամաք զարկաւ ու կոտորեցաւ. ուստի ութն ամիս քանի մը հոգևով նոյն տեղը մնաց, եւ Ասաուծոյ խնամքովը ծովուն ալիքներուն ամէն օր դուրս նետած ձկերովը կը կերակրէր:

ԳՁ. Ս. Ներսէսին Հայաստանէն հեռացած ատենն, Արշակ իր ոխը նախարարներէն սկսաւ հանել, եւ շատերն սպաննել տուաւ. Ներսէս հրամարականին ցեղն ալ բոլորովին ջնջեց, բայց Սպանդարատ՝ անոր եղբորորդին (Արշաւրին որդին) իր ընտանիքովը Յունաստան փախաւ ազատեցաւ: Ետքը հրամայեց որ սպաննուած հրամարականներուն ինչքերն իրենց սայլերովն Արմաւիր բերեն. սայլորդները ճամբան մարդու ոտիներ տեսնելով՝ հարցուցին տեղեկացան որ իրենց տէրերնունն է, եւ ժողվեցին թաղեցին: Թագաւորն երբ որ աս լսեց, հրամայեց որ ան սայլորդներն ալ բռնեն կախեն, որովհետեւ ինքը հրամայած էր որ հրամարականաց մարմինները չթաղուի: Նոյն

ասենք խաղ՝ Բազրեւանդայ կախկոտութիւնը՝ զորն որ Ս. Կերօն Հայաստանէն երթալու ասենն իր անզը դրած էր, վրայ հասաւ, եւ արդէն նախարարայ մահուանը վրայ սաստիկ բարկացած ըլլալով՝ Արշակին աղէկ յանդիմանութիւն մը տուաւ. ան ալ հրամայեց որ զանիկա բռնեն ու ասնին քարկոծեն, բայց Ապահանեաց իշխանները՝ խաղին տաղըները, սուրերնին քաշեցին ու զանիկա բռնողները զարնելով՝ ձեռքերնէն առին իրենց երկիրը ասրին:

Ա. Արբ որ Պարսից Հիւսիսական ազգաց հեռուներցած պատերազմը լմնցաւ, Շապուհ Արանաոզան Պարթեւ իշխանն՝ Արշակին ազգականը շատ զօրքով Հայաստան խաւրեց: Նախարարներէն շատերն Արշակին բարկացած ըլլալով՝ զանիկա թող տուին Շապուհին քովը գացին, եւ անկէ շատ պատիւ գտնելով ետ դարձան: Արշակ նեղը մտած՝ Պարսից զօրապետին մեծամեծ բաներ խոստանալով աղաչեց որ իրեն քիչ մը ասեն թող տայ որ Յունաց երկիրը փախչի, եւ կը յուսար որ Արանաոզան իր ազգականն ըլլալով՝ աս բանս կ'ընէ: Բայց անիկա պատասխան տուաւ. Թէ որ դուն մեր ազգականներուն՝ (կամնարականներուն) որոնք քու հաւատքդ ունին եւ քու քովդ կը բնակին, չենայեցիր, ես ինչպէս քեզի խնայեմ որ կրօնքով քեզմէ զատ ու բնակութեամբ ալ հեռու եմ. եւ ինչպէս քու անստոյգ խոստումներուդ յուսալով՝ իմ թագաւորէս գտած ստոյգ բարիքներս կորսնցընեմ: Աս պատասխանիս վրայ Արշակին ճարը հատած՝ ելաւ Շապուհին դնաց, որն որ զանիկա քովը պահեց եւ ստիպեց որ Փառանձեմն ու նախարարներուն կիներն ալ Պարսկաստան գան: Նախարարներն երբ որ իմացան որ Շապուհ իրենց կիներն ալ կ'ուզէ, անոր միտքն հասկըցան, անոր համար ամէնը զօրքերնին ժողոված՝ Հայաստանի մէջ կեցող Պարսից գունդին վրայ յարձակեցան ու վռնտեցին, եւ իրենք ընտանիքնին առին Յունաստան փախան: Իսկ Փառանձեմ

շատ ուրիշ մարդիկներով թագաւորական գանձն առաւ Արտաղերից բերդը մտաւ ամրացաւ, եւ Կոստանդնուպոլիս իր Պապ որդւոյն մարդ խաւրեց որ շուտով օգնութեան հասնի :

ՂԸ. Շ ապուհ ասոր վրայ նեղանալով՝ Արշակին ոտուրները շղթայով կապած՝ Անյոյշ բերդը խաւրեց, եւ Մերուժան Արծրունի ու Վարդան Մամիկանեան ուրացող նախարարները մեծ բանակով մը Հայաստան խաւրեց, որոնք եկան Արտաղերից բերդը սասաիկ նշաշարեցին, եւ թէպէտ պատերազմաւ չկրցան առնուլ, բայց մէջինները Պապին գալուն շուղելով սպասել, իրենց կամքովն անձնատուր եղան ու դռները բացին : Պարսից զօրքը ներս մտան եւ ամէն դանձերն առին, բերդին մէջի մարդիկներն ալ Փառանձեմին հետ մեկտեղ առին Ասորեստան տարին ու ցցի հանելով մեռցուցին : Ետքը Շ ապուհին հրամանաւր շատ քաղաքներուն բերդերը փլցուցին, եւ Հայաստան եղող Հրէից դերիներէն շատերը Պարսկաստան տարին : Արշակ Անյոյշ բերդին մէջ աս ամէն շարիքները լսելով՝ ինքը զինքը մեռցուց, որուն թագաւորութիւնը 18 տարի տեւեց :

Խորենացին Արշակ Բ.ին թագաւորութիւնը 30 տարի կը դնէ, որն որ ստոյգ ժամանակագրութեան հետ չմտաբանիր : Վասն զի Արշակ Յուլիանոս Ուրացողին մահուանէն անմիջապէս ետքը (364ին) դահն էլաւ, եւ մինչեւ Թէոդոս Մեծ կայսեր երրորդ տարին (382) ուստի եւ միայն 18 տարի թագաւորեց :

Պ Լ ՈՒ Խ Ի Ք

Պ Ե , Պ

ՂԾ . Մերուժան Արծրունիին նորէն Հայաստան գալն եւ հոն ըրածները : Ճ . Պապ Կոստանդնուպոլսէն Հայաստան կու գայ Թաղաւորութիւնը կ'առնու (382) եւ Պարսից զօրքը Հայաստանէն կը վ'նակ : ՃԱ . Չերաւ դաշտին մէջ ելլած պատերազմը , Պարսից յաղթուիլն ու Մերուժանին սպաննուիլը : ՇԲ . Պապին անկարգ կեանքը , ՂՍ . Ներսէս սպաննելն ու կայսրմէ ապստամբիլը : Իր բռնուիլն ու գլխատուիլը (388) :

ՂԹ . ԼՐԱՆԿԻՆ մահուանէ ետքը Շապուհ Մերուժան Արծրունիին նորէն զօրքով Հայաստան խաւրեց , իր Որմզդուխա քոյրն ալ անոր կնութեան տուաւ , եւ խոստացաւ որ եթէ նախարարները նուաճէ եւ Հայերը Պարսից աղանդը դարձնէ , զինքը Հայոց թագաւոր կ'ընէ : Մերուժան եկաւ Հայաստան , եւ սկսաւ նախ զանազան պատճառներով եպիսկոպոսներն ու քահանաները բռնել Պարսկաստան խաւրել : Ասիկէ զատ ամէն Հայաստանի մէջ գտնուող յունարէն գրքերն այրել տուաւ եւ սաստիկ արգելեց որ ամենեւին յունարէն չսորվին , այլ միայն պարսկերէն , որպէս զի Յունաց հետ հաղորդութիւն չունենան : Փախած նախարարներն ալ ետ դարձրնել ուզելով՝ անսնցմէ շատերուն Հայաստան մնացած կիները բռնեց բերդերու մէջ դնել տուաւ :

Ճ . Ս . Նէղոսէ՝ զորն որ Թէոփոս կայսրը թագաւորելուն պէս աքսորքէն դարձուցած էր եւ պատուով իր քովը կը պահէր , Հայաստանին ողորմելի վիճակն եւ Արշակին մեռնիլն իմանալուն պէս , կայսեր աղաչեց որ Հայոց օգնէ ու Պապը թագաւորեցընէ : Թէոփոս հաճեցաւ եւ Տերենտիանոս զօրապետը շատ զօրքով Պապին հետ Հայաստան խաւրեց որ զանիկա իր հօրն աթոռը նստեցընէ : Ս . Ներսէս ամէն Յուն-

աստան եղող նախարարներն ալ ժողովեց եւ Պապին հետ Հայաստան բերաւ : Յունաց զօրքն եկան նախարարաց զօրքին հետ մէկտեղ Մերութանը վաւրնատեցին, եւ Հայաստան Պարսից ձեռքէն սպասեցին : Բայց Մերութան փախչելու ատենը բերդերուն պահպաններուն հրաման խաւրեց որ նախարարաց կիները բերդերուն պարիսպներէն կախեն :

ՃԱ . Պայտեր Հայերուն ըրած օգնութիւնն եւ Մերութանին Հայաստանէն վաճառելը Շապուհին ահանջը հասնելուն պէս, ամէն կողմ հրաման խաւրեց որ բոլոր Պարսից զօրքը Մերութանին օգնութեան երթան, եւ Հայաստան նորէն առնուի . Պապ ու Տերենտ ալ անմիջապէս աս հրամանը կայտեր իմացուցին : Թէնդոս Ազգէ կամսին հրաման ատու որ անմիջապէս Յունաց զօրքը՝ նաեւ քաղաքներուն պահպաններն ալ ժողովէ, եւ Պապին օգնութեան երթայ : Եկան երկու բանակ Չիրաւ դաշտին վրայ իրարու դիմաց ճակատեցան, ուր Հայերուն մէջէն քաջ ձիւորներ՝ Սմբատ Բագրատունի սպարապետին առաջնորդութեամբը պատերազմն սկսելէն յառաջ բանակէն դուրս ելան, որոնց դիմացը Պարսից կողմէն ալ քաջեր ելլելով՝ սկսան իրարու հետ կռուիլ : Եւ երբ որ Պարսիկները նեղը կը մանէին ու կը սկսէին փախչիլ, Հայերը շուտ մ'անոնց ետեւէն կը հասնէին ու նիզակով շատերը կը սպաննէին . իսկ երբ որ իրենք նեղը մանելով ետ կը փախչէին, շուտ մը Յունաց վահանակիր զօրքին մէջը կը մանէին եւ անվաս կաշատէին : Վասն զի Գորգոնոս Յունաց հետեւակներուն զօրապետը՝ վահանակիրները բանակին առջեւը շարած եւ ճակատը պարսպի պէս ամրացուցած էր : Ս . Ներսէս բուն պատերազմն սկսելու ատենը Նպատ լերան վրայ ելաւ, եւ ձեռուրներն երկինք վերցուցած՝ սկսաւ Աստուծոյ աղօթք ընել եւ օգնութիւն խնդրել, մինչեւ որ պատերազմը լմրնցաւ : Պատերազմին սկիզբներն արեգակը Հայոց դիմացն ըլլալով՝ քիչ մը

նեղութիւնն կը քաշէին, վասն զի չէին կրնար համար-
 ձակ նայիլ . բայց քիչ մը ետքն անկ մ'եկաւ արեւը
 ծածկեց. Պարսից դէմ ալ սաստիկ հով մ'եկաւ եւ զա-
 նանկ կը նեղէր: Կռուին սաստիկացած ատենը Սպան-
 դարատ Կամսարահանը թշնամեաց բանակին կենդ-
 բանը կեցող մեծ լամբի մը վրայ յարձակեցաւ, որուն
 մէջն էր Շերդիր Ղեկաց թագաւորը. զարկաւ խամբը
 ճղքեց ու Շերդիրն սպաննեց, քոյիկներն ալ զրուեց
 փակուց. Մուշեղ՝ Վասակ Մամիկոնեանին որդին ալ
 Աղուանից Ուռնայր թագաւորը վերաւորեց: Այսպիսի
 քաջութեամբ Հայոց եւ Յունաց զօրքը Պարսից աղէկ
 ջարդ մը տալէն՝ եւ անոնց մեռելներովը դաշար լեցը-
 նելէն ետքը, մնացածները փախուցին եւ մինչեւ Պար-
 սկաստան հալածեցին: Բայց Սերուժանին ձին վերա-
 ւորած ըլլալով՝ չկրցաւ շուտով փախչիլ, որուն ետե-
 ւէն հասաւ Սմբատ սպարապետն ու բռնեց. եւ մտա-
 ծելով որ թէ որ սղջ բանակը տանելու ըլլայ, Ս. Ներ-
 սէս զանիկա կ'աղատէ, նոյն ատուան մօտ եղող
 վրանաբնակներուն քովը տարաւ, եւ ատեսաւ որ եր-
 կաթէ շամիրաւով միս կը խորովէին. առաւ շամիրաւը
 պտակի ձեւով կըրցուց, եւ կրակի մէջ կարմրցընելով,
 Սերուժանին գլուխը դրաւ, ըտելով. Ար պտակեմ
 զքեզ Սերուժան, որովհետեւ Հայոց թագաւոր ըլլա-
 լու ետեւէ էիր. եւ ես ասպետ ու թագադիր ըլլա-
 լովս պէտք է որ իմ հայրենական պաշտօնս ի գործ
 դնեմ: Այսպէսով մեռաւ անօրէն իշխանն եւ Հայ-
 աստան Պապին իշխանութեան տակ նուաճեցաւ:

ՃԲ. Պատեցիւզմը յմրննալէն ու Հայաստան հանդ-
 չելէն ետքը, Ս. Ներսէս նախարարները ժողովեց եւ
 նախ Պապը յորդորեց որ շարութիւններէ եւ անի-
 բաւութենէ հեռու կենայ, եւ քրիստոնէի վայել
 կեանք անցընէ. նախարարներն ալ խրատեց որ թա-
 գաւորին միշտ հաւատարիմ մնան: Պապ Ս. Ներսէ-
 սին խրատին մտիկ ըրաւ, եւ ամէն նախարարներուն
 իր հօրմէն կրած վնասներուն հատուցում ըրաւ:

Սպանդարատ Վամնարահանին ալ, իբրեւ իր Ղեկաց
 Թագաւորը մեռցընելուն հատուցում, Շիրակ եւ
 Արշարունիք գաւառները նորէն տուաւ: Բայց քիչ մը
 ետքն անպիտան ու գարշելի գործքեր սկսաւ ընել,
 որոնց համար Ս. Ներսէսէն յանդիմանուելով՝ անոր
 գաղտուկ թոյն լամյուց ու մեռցուց, եւ թիւն աւա-
 նին մէջ թաղել տուաւ: Անոր տեղը Շահակ անու-
 նով մէկը կաթողիկոս դրաւ, առանց Աեսարիայի արք-
 եպիսկոպոսին ձեռնադրել տալու, ինչպէս որ մին-
 չեւ նոյն Ժամանակը սովորութիւն էր: Ասկից զատ
 երբ որ լսեց որ Յունաստան խռովութիւն կայ, ուզեց
 կայսրմէ ապստամբիլ. սա վախճանաւ Տերենտ գորա-
 պետը Հայաստանէն վաճառեց եւ սկսաւ պատերազմի
 պատրաստութիւն տեսնել: Բայց կայսրը Տերենտին
 օգնութիւն խաւրելով՝ հրամայեց որ նորէն Հայաստան
 դառնայ ու Պապը բռնէ: Տերենտ եկաւ յանկարծ
 Հայոց զօրացը վրայ յարձակելով՝ շատերը ջարդեց,
 մնացածը ցրուեց ու Պապը բռնեց. բայց անոր ազա-
 չանքին լսելով՝ հոն չմեռցուց, այլ շղթայով կապած
 կոստանդնուպոլիս խաւրեց, ուր կայսրը զանիկա
 սակրով մեռցընել տուաւ 7 տարի թագաւորութիւն
 ընելէն ետքը:

Գ Լ ՈՒ Խ Ի Գ

Վ Ե Բ Ե Զ Գ Ե Տ

ՃԳ. Թեոդոս կայսրը Վարազդատան Հայոց թագաւոր կը դնէ (391): ՃԴ. Վարազդատ կայսրմէ կ'ապստամբի ու Պարսից թագաւորին հետ դաշինք կը դնէ: Իր Կոստանդնուպոլիս երթալն ու Թուղիս կղզին արսորուիլը (394):

ՃԳ. ԹԻԼՈՒՈՍ՝ Պապին տեղն Արշակունեաց ցեղէն Վարազդատ անունով մէկը Հայոց թագաւոր դրաւ: Եւ Վարազդատը՝ նախարարներուն Շապուհին վախէն Յունաստան փախած տանն, անոնց հետ մէկտեղ դնաց, եւ քաջ ու զօրաւոր երիտասարդ մ'ըլլալով՝ հոն շատ քաջութիւններ գործեց. շատ անգամ Ողիմպիական խաղերու մէջ առիւծներ մեռցուց եւ ուրիշ յաղթութիւններ բրաւ: Նոյնպէս անգամ մը Յունաց զօրքին հետ Ղանգուարաց (Ղանգորարացոց) դէմ պատերազմի երթալով, թշնամիներէն հինգ հոգի վրան վազեցին. Վարազդատ անոնց դէմ ելաւ եւ ամէնն ալ սրով սպաննեց: Ուրիշ անգամ մ'ալ թըշնամեաց բերդի մը վրայ դնաց, եւ տասնուեօթը հոգի իրարու ետեւէ նետով զարկաւ մեռցուց ու բերդէն վար ձգեց:

ՃԴ. Երբ որ թագաւորութիւնն առած Հայաստան կու գար, Գարանազեաց գաւառին մէջ քանի մ'ասորի աւազակներու պատահեցաւ, եւ ետեւէն ինկաւ որ բռնէ. բայց անոնք փախան Եփրատին մէկ նեղ տեղէն՝ հոն դրուած զերանին վրայէն անդին անցան, ու գերանը գետին մէջ նետեցին. Վարազդատ դետեզերքն հասնելով՝ ու փայտը չգտնելով՝ ուժով մը ցաթքելուն պէս, քսանուերկու կանգուն լայն գետէն անդին անցաւ եւ աւազակներուն հասաւ, որոնք սարսափած՝ ղէնքերնին նետեցին եւ անձնատուր եղան: Բայց թագաւորութեան մէջ հաստատուելէն ետքը, չուզելով Յունաց զօրապետներուն հրամանին տակն

բլաւ, Շապուհին մարդ խաւրեց ու խնդրեց որ իր աղջիկներէն մէկն իրեն կնութեան տայ, եւ ինքն ալ Հայաստանը Յունաց իշխանութենէն հանէ եւ իրեն տայ: Յունաց զօրապետներն անմիջապէս աս բանը կայտեր իմացուցին. ան ալ հրաման խաւրեց որ զՎարազդատ բռնեն իրեն խրկեն: Վարազդատ յուսարով որ կրնայ ինքը զինքն արդարացընել, իր կամքովը կայտեր գնաց. բայց Թէոդոս զանիկա եւ ոչ իր առջեւը հանել տուաւ, այլ շղթայով կապած Թուղիս (Իսլանտ) կղզին քշել տուաւ:

Փաւստոս Բուզանդացին իր պատմութեան գրքին մէջ Խոսրով երկրորդին ժամանակէն մինչեւ Վարազդատին թագաւորութեան վերջը կը պատմէ. բայց բոլորովին զատ եզանակաւ ու պարագաներով ըլլալուն համար, հարկ կը համարինք հոս համառօտ մը գնել. աս միայն ծանուցանելով՝ որ աս պատմութիւններն այնչափ հաստատուն չեն երեւար, նախ մեր պատմութեան կարգին համաձայն չըլլալուն, եւ երկրորդ՝ մէջը շատ արտաբոյ կարգի չափազանց պարագաներ ըլլալուն համար:

Փաւստոս (Գ. Դպր. ԳԼ. ԺԱ.) Ս. Ներսէսին արտօրուիլը պատմելէն ետքը, կ'ըսէ թէ Երբ որ Արշակ Հայոց թագաւորն աս բանս իմացաւ, սաստիկ բարկանալով, իր Վասակ զօրապետին հրաման տուաւ որ զօրք ժողովէ եւ երթայ Յունաց երկիրն ասպատակէ. ան ալ անմիջապէս 260,000 զօրք ժողովեց եւ մինչեւ Անկիւրիա քաղաքը յարձակեցաւ, աւրեց սպականեց, եւ այսպէս վեց տարի շարունակ Յունաց երկիրն ասպատակելով՝ շատ աւարներ առաւ:

Ասկէ ետքը (ԳԼ. Խ.) կը պատմէ որ Շապուհին եւ Յունաց մէջ պատերազմ՝ բացուելով, Արշակ մտքը գրաւ որ ան կողմին օգնէ, որ կողմն որ զինքը նախ օգնութեան կանչէ, եւ աւելի կը բաղձար Յունաց օգնել. բայց անոնք զինքը բանի տեղ չգրին ու չկանչեցին: Իսկ Շապուհ իրեն դեսպան խաւրեց եւ աղաչեց որ գայ իրեն օգնէ, ըսելով թէ ստոյգ գիտեմ որ եթէ դուն ինձի օգնելու ըլլաս, յաղթութիւնը կը ստանամ: Ան ատեն Արշակ Հայոց զօրքը ժողովեց եւ գնաց առանձին՝ առանց Պարսից բանակին սպասելու Յունաց հետ զարնուեցաւ, յաղթեց եւ անոնց անհամար զօրքը բոլորովին ջարդեց ու մէկ հոգի*մ'ալ

ողջ լծողուց: Շապուհ աս բանին վրայ սաստիկ ուրախանալով՝ Արշակին հետ մշտընջենաւոր սէր հաստատելու համար, ուզեց իր քոյրն անոր կնուծեան տալ: Բայց Սիւնեաց Անդոզկ իշխանին խորամանկութեամբն աս սէրն աւրուեցաւ. որովհետեւ Փառանձեմ Անդոզկին աղջիկն՝ Արշակին կինն ըլլալով, մտածեց որ անիկա ուրիշ կին առնելու ըլլայ, իր աղջիկը կ'անարգուի. ուստի նախաբարներուն ստակ կերցընելով՝ եւ պարսիկ իշխաններէն մէկն ալ կաշառով վաստըկելով՝ Արշակին ստուծեամբ ըսաւ թէ Շապուհ կ'ուզէ զքեզ մեռցընել. աս բանս միւս նախարարներն ու պարսիկ իշխանն ալ հաստատեցին: Արշակ հաւատալով՝ բոլոր զօրքն առաւ գիշերանց Շապուհին քոզէն գնաց. եւ աս պատճառաւ Հայոց ու Պարսից մէջ թշնամութիւն ծագելով՝ 34 տարի անդադար իրարու հետ պատերազմ ըրին, եւ միշտ Հայերը Վասակ Մամիկոնեան սպարապետին հրամանատարութեամբը յաղթող եղան: Աս պատերազմներուն մէջ Բուզանդացւոյն հաշուով՝ Հայերը Պարսիկներէն 25 միլիոնէն աւելի մարդ ջարդեցին, վասն զի Պարսից թագաւորը Հայոց վրայ 20էն աւելի զօրապետ խաւրեց, կ'ըսէ, ոմանք 800,000 1,000,000, ոմանք ալ 4 միլիոն, մինչեւ 5 միլիոն զօրքով՝ զորոնք Հայերը 40—50,000ով բոլորովին կը ջարդէին եւ հոգի մ'ալ ողջ թող չէին տար: Բայց ետքը նախարարները պատերազմէն ձանձրացած՝ զԱրշակ ստիպեցին որ Շապուհին երթայ ու անոր հետ հաշտութիւն ընէ. ան ալ սկիսայ ելաւ գնաց եւ հոն արգելուեցաւ:

Շապուհ մոգերուն հարցուց որ եթէ Արշակն իր երկիրը խաւրէ, նորէն իրեն դէմ թշնամութիւն պիտ'որ ընէ թէ չէ. անոնք ալ աս նշանը տուին. Հայաստանէն քիչ մը հող ու ջուր բերել տուր, ըսին, ու վրանիդ յատակին կէսն ան հողը տարածէ, ջուրն ալ վրան ցանէ, եւ Արշակն առան հողին վրայ կեցուր, նայէ քեզի հետ ինչպէս կը խօսի. թէ որ խորտալով եւ սպառնալիքներով խօսի, գիտցիր որ Հայաստան երթալուն պէս նորէն քեզի դէմ պատերազմի կ'ելլէ. իսկ թէ որ հեղուծեամբ ու բարեկամի պէս կը խօսի, քեզի հետ բարեկամութիւնը հաստատուն պիտ'որ պահէ: Շապուհ ըսաւ մը մոգերուն ըսածը կատարեց, եւ Արշակն առաւ Հայաստանի հողին վրայ տարաւ. հոն անիկա սկսաւ մեծամեծ սպառնալիքներ ընել՝ ըսելով թէ ես Պարսիկներէն մեզի բրածներուն վրէժը պիտ'որ առնու՞մ ու թագաւորին ցեղը բոլորովին պիտ'որ ջնջեմ, եւ այլն: Ետքը բուն

երկրին հողին վրայ բերաւ, որ Արշակ խոնարհութեամբ եւ աղաչելով կը բօսէր. բանի մ'անգամ պարտէր փորձելէն ետին, իմացաւ որ եթէ Հայաստան երթայ, նորէն իրեն դէմ թշնամութիւն պիտ'որ ընէ, անոր համար շղթայով կապած՝ Անյոյշ բերդը խաւրեց. Վասակ սպարապետն ալ որն որ Արշակին հետ Պարսկաստան գացած էր, սպաննել տուաւ:

Արշակին Անյոյշ բերդն եղած ստեներ, գուշանաց թագաւորը Շապուհին դէմ պատերազմի ելաւ եւ անոր զօրքերուն շաւ ջարդեց. պատերազմին մէջ Շապուհ ալ թշնամիներէն պաշարուեցաւ ու մեծ վտանգի մէջ ինկաւ. բայց Արշակին Դրաստամաս անուն ներքինապետն՝ որն որ Պարսից բանակին մէջն էր, շատ քաջութեամբ պատերազմելով՝ զանիկա ազատեց: Թագաւորն անոր աս գործին հատուցում մ'ընել ուզելով, ըսաւ անոր. Ինչ որ կ'ուզես իզմէ խնդրէ. Դրաստամաս հրաման խնդրեց որ երթայ զԱրշակ օր մը միայն շղթաներէն արձակէ ու հանդէսցընէ, եւ ինչիրքն ընդունելով՝ զնաց Անյոյշ բերդն: Արշակին շղթաները քակեց ու փառաւոր զլեւասներ հապցուց եւ հանդէսցուց, առջեւն ալ զանազան պառուշներով ու զինուով սեղան մը դրաւ որ ուտէ ու խմէ: Արշակ երբ որ քիչ մը շահկէկ զինի խմելով՝ գինովցաւ, առջեւը գրուած կերակրոյ դանակն առաւ, ու Վայ ինծի որ աս խեղճութեան մէջ ինկած եմ ըսելով՝ կուրծքը խոթեց ու մեռաւ: Դրաստամաս աս բանիս վրայ սաստիկ տրամած՝ ցածքից նոյն դանակն առաւ, եւ անով ինքը զինքը մեռցուց:

Արշակին բռնուելէն ետքը, Մուշէղ՝ Վասակ սպարապետին որդին՝ Յունաց կայսրէն օգնութիւն խնդրեց. ան ալ Պապը Հայոց թագաւոր դրաւ, ու Տերենտ զօրապետը 600 բիւր (6 միլիոն) զօրքով Հայաստան խաւրեց, որոնց հետ Հայերն ալ միացան ու Մուշէղին սպարապետութեամբը Հայաստան եղող պարսիկ զօրքերը բռնորովին ջարդեցին: Շապուհ նորէն երկու անգամ ալ անհամար զօրքով Հայոց վրայ եկաւ, բայց յաղթուեցաւ ու փախաւ:

Հայաստան Պարսից ձեռքէն ազատելէն ետքը, Պապ սկսաւ գէշ գործքեր ընել, որոնց համար Ս. Ներսէսէն յանդիմանուելով՝ անոր թոյն խմցուց ու մեռցուց: Ասկէ զատ Յունացմէ ալ պաղեցաւ, եւ ուզեց Պարսից թագաւորին հետ հաշտութիւն ընել ու հարկն անոր տալ: Կայսրն աս բանս իմանալով՝ Տերենտ զօրապետին հրաման խաւրեց որ զՊապ սպաննէ: Տերենտ օր մը զանիկա սեղանի հրաւ-

րեց, եւ ուրախուածեամբ ուտելու խմելու ատեն, հան կե-
ցող զինուորներուն՝ որոնց յառաջագոյն ինչ ընելիքնին
ըսած էր, նշան տուաւ, որոնք սրով զարկին Պապին սպան-
նեցին: Վայսրը Պապին անզ Վարազդատը թագաւոր
դրաւ, որն որ իր դայեկին՝ Բաս Սահառունիին զրգուելովը՝
զՄուշեղ մեռցընել տուաւ եւ սպարապետութիւնը նոյն
Բասին տուաւ: Մանուէլ Մուշեղին որդին՝ որն որ նոյն
ժամանակը Պարսկաստան էր, իր հօրը մահը լսելով՝ Հայ-
աստան եկաւ, եւ առանց թագաւորին հրամանին՝ սպարա-
պետութիւնն առաւ, զօրք ժողովեց ու Վարազդատին մարդ
խաւրեց եւ ըսաւ որ շուտով Հայաստանէն ելլէ երթայ.
Թագաւորն ալ իրեն հրաման խրկեց որ ինքն երթայ,
ու մահ սպառնացաւ թէ որ հնազանդելու չըլլայ: Ան
ատեն Մանուէլ իր զօրքովը Վարազդատին դէմ պատե-
րազմի ելաւ, անոր յաղթեց ու Յունաց երկիրը վճնտեց,
ուր մինչեւ իր մահը մնաց. Բասն ալ պատերազմին մէջ
բռնեց եւ սպաննեց: Ասկէ ետքը Պարսից թագաւորին հետ
հաշտութիւն ըրաւ, որն որ Սուրէն անունով պարսիկ իշ-
խան մը Հայաստանի վրայ մարզպան դրաւ: Բայց քիչ մը
ետքը Մերուժան Արծրունիին խարդախութեամբը Մանուէլ
Սուրէնին զօրքը ջարդեց ու զինքն ալ Հայաստանէն վճըն-
տեց. նաեւ երեք անգամ իր վրայ խաւրուած Պարսից
զօրքին յաղթեց: Չորրորդ անգամ Շապուհ զՄերուժան
անհամար զօրքով Մանուէլին վրայ խրկեց. բայց Մանուէլ
անոր ալ յաղթեց, ու Մերուժան Սիւնեաց Բարիկ իշխա-
նէն՝ Մանուէլին նիզակակցէն սպաննուեցաւ: Ասկէ ետքը
պատերազմը դադրելով՝ Մանուէլ Պապին Արշակ որդին
թագաւորեցուց, եւ անոր Վաղարշակ եղբայրն ալ թա-
ղաւորին երկրորդն ըրաւ,

Ահաւասիկ աս է Փաւստոս Բուզանդացիին պատմու-
թեան համառօտութիւնն, որուն ինչ աստիճանի ստու-
գութիւն ունենալն ամէն կարգացող կրնայ իմանալ:

Գ Լ Ո Ւ Ի Ի Ի Կ

Ա Ր Շ Ա Կ Գ . Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Կ Ի . Խ Ո Ս Ր Ո Վ Գ .

ՃԵ . Արշակին ու Վաղարշակին թագաւորելը (392) : Հայաստանին Պարսից եւ Յունաց մէջ բաժնուիլն . Արշակին Յունաց մասն երթալն ու Խոսրով Գին Պարսից մասին թագաւոր դրուիլը (396) : ՃԶ . Քանի մը նախարարներ Արշակին գանձը կը յափշտակեն ու Խոսրովին քովը կը փախչին : ՃԷ . Երկու թագաւորաց մէջ եղած պատերազմն , Արշակին յաղթուիլը : Իր հիւանդութիւնն ու մահը (399) :

ՃԸ . ԹՎԱՌԴՈՍ կայսրը Վարապղատին տեղը Պապին երկու որդիքն՝ Արշակն ու Վաղարշակը Հայոց թագաւոր դրաւ , մտածելով որ եթէ երկու թագաւոր ըլլայ , երկուքը մեկտեղ ապստամբելու չեն միաբանիր , եւ անոնց մայրն իր քովը պահելով՝ զիրենք յոյն զօրքով Հայաստան խաւրեց , որոնք եկան Պարսից հետ քաջութեամբ պատերազմեցան ու յաղթեցին , եւ Հայաստանին տիրեցին : Բայց Վաղարշակ նոյն տարին մեռաւ :

ԹՎէՊՈՍին մեռնելէն ետքը Շապուհ անոր Արկադ որդւոյն հետ դաշինք դրաւ եւ Միջագետքն ու Հայաստանը մէջերնին բաժնեցին : Արշակ չուզելով հեթանոս թագաւորի տակ մնալ , Այրարատը՝ Հայոց թագաւորներուն բնակած գաւառը թողուց ու Յունաց մասը գնաց . նաեւ Պարսից մասին մէջ երկիր ունեցող նախարարներն իրենց ընտանիքովն անոր հետ գացին : Ասոր վրայ Շապուհ նեղացաւ եւ Արշակին թուզթ գրեց թէ Ինչու իմ մասիս նախարարները տարիր . ան ալ պատասխան տուաւ թէ նախարարները չուզելով պարսիկ զործակալի տակ մնալ , ինծի հետ եկան . ուստի թէ որ քու մասդ ալ ինծի յանձնելու ըլլաս , ամէն բան կարգի կը մանէ , եւ ես հարկը հաւատարմութեամբ քեզի կու տամ . իսկ թէ որ չես ուզեր ինծի տալ ու նախարարներն իրենց կամքովն ետ կը

դառնան, ես չեմ՝ արդելուր: Հապուհ սա բանս լելլով՝ իր մասին վրայ Արշակունեաց ցեղէն Խոսրով անունով մէկը թագաւոր դրաւ. իր մասին նախարարներուն ալ նամակ դրեց որ իրենց տեղը դառնան, ծանուցանելով որ ով որ չգայ, իր կալուածներն արքունիք պիտ'որ առնուի: Նախարարներն երբ որ լսեցին որ Պարսից մասին մէջ ալ Արշակունի թագաւոր դրուեր է, ելան իրենց երկիրները գային, քանի մ'Արշակին հաւատարիմ նախարարներէն զատ, որոնց երկիրները Խոսրով Հապուհին հրամանաւն արքունիք առաւ: Բայց քանի մը Յունաց մասին մէջ կալուած ունեցող նախարարներ ալ կային, որոնք Խոսրովին քովը կ'ուզէին երթալ, բայց մէջերէն միայն Սահակ Բագրատունի ասպետը կրցաւ երթալ. իսկ միւսները՝ Սուրէն Խոսրոսունի, Վահան Աւաւեղեան եւ Աշխադար Գիմաքսեան, Արշակին զօրքէն արդելուելով՝ ուրիշ յարմար առթի սպասեցին:

ՃԶ. Խոսրով Սահակ ասպետին դալուն վրայ շատ ուրախացաւ, եւ իր զօրացը վրայ սպարապետ դրաւ: Գիշ մը ետքը վերը յիշուած՝ Խոսրովին երթալ ուզող երեք նախարարները յարմար ատեն մը գտնելով՝ Արշակին գանձը յափշտակեցին եւ ուզեցին Խոսրովին տանիլ: Բայց Սամէլ Մամիկոնեան՝ Արշակին հաւատարիմ նախարարը, շատ զօրքով անոնց ետեւէն հասաւ, որոնք ուրիշ ճար չգտնելով՝ Մանանաղի գաւառին ամուր պրերուն մէջը մտան: Սամէլ շատ աշխատեցաւ որ ներս մտնէ, բայց անկարելի եղաւ, վասն զի չորս կողմը քարաժայռներով պատած ու վերի կողմանէ ալ սաստիկ գահավէժ տեղ մըն էր: Ուստի Արշակին իմացընելով՝ երկաթապատ սնտուկներ շինել տուաւ, որոնց մէջ մէյմէկ մարդ դրած՝ շղթայով վերէն պրին առջեւն իջեցուց, որ հոն մէջի մարդիկները դուրս ելլեն եւ պրին հետ պատերազմին. բայց աս ալ օգուտ չըրաւ, վասն զի պրին վերի կողմը դուրս ցցուած խոշոր ժայռ մ'ըլլալով՝ սնտուկներն

անկից շատ հեռու կը մնային : Սամել աս զորք-
քին զբաղած աստեն՝ Սմբատ Բագրատունին Խոսրովին
զորքովն ըստ պատահման հան եկաւ . որովհետեւ
տեւ նոյն ժամանակը վանանդայիք Խոսրովէն ապրա-
տամբելով՝ երկու թագաւորին երկիրներն ալ կ'առ-
պատակէին, որոնց վրայ Խոսրով՝ Սմբատը խաւրեց,
որն որ զանոնք նուաճեց, շատերը ջարդեց մնացած-
ներն ալ մինչեւ Մանանդեաց գաւառը հալածեց :
Հոն Արշակին զօրքը տեսնելով ու պատերազմին պատ-
ճառն իմանալով՝ աւազակները թողաց եւ անոնց վրայ
յարձակեցաւ փախուց, եւ նախարարներն ու դանձն
այրէն հանեց Խոսրովին տարաւ : Խոսրով զանձին
մէկ մասը Շապուհին խաւրեց, եւ անոր հրամանովն
իր քովն եկող նախարարներուն կարուածներ տուաւ :

ՃԼ. Արշակ Խոսրովին դեսպան խաւրեց ու պա-
հանջեց որ իր դանձն ետ տայ, եւ երբ որ անիկայ մտիկ
չըրաւ, ժողովեց իր զօրքն եւ անոր վրայ գնաց . Խոսրով
ալ շուտ մ'իր զօրքովն Արշակին դէմ գնաց որ անոր իր
երկիրը մանելու թող չտայ, բայց անիկա արդէն մտած
եւ մինչեւ Երեւել գաշտը յառաջ եկած էր : Հոն
երկու բանակ իրարու հետ սաստիկ զարնուեցան, Ար-
շակին զօրքն յաղթուեցաւ եւ իր սպարապետը Գարա
Սինեաց իշխանը մեռաւ . մնացած զօրքն ալ սկսան
փախչիլ, որոնց ետեւէն ինկաւ Սմբատ ասպետն ու
ոսաստիկ հալածեց : Գազաւոն Արամարական՝ որն որ
Արշակին կողմն եղող իշխաններէն մէկն էր, փախչելու
ատեն շատ անգամ ետ դառնալով եւ զիրենք հալա-
ծողները ցրուելով՝ Արշակին ատեն տուաւ որ փախչի
ու ձեռք չիյնայ : Աս պատերազմէն քիչ մը ետքն Ար-
շակ Եկեղեցաց գաւառին մէջ հիւանդացաւ ու մեռաւ,
բոլոր Հայոց վրայ 5 տարի, իսկ կէս մասին վրայ
երկուք ու կէս տարի թագաւորելէն ետքն, որուն
մեռնելէն ետեւ Յոյներն իրենց մասին վրայ թագաւոր
չդրին, այլ Յոյն կոմսերու ձեռքով կը կառավարէին :

Գ Լ ՈՒ Խ Ի Ե

Խ Ո Ս Բ Ո Վ Գ . Ա Ռ Ա Ն Զ Ի Ն

ՃԸ . Խոսքով բոլոր Հայոց թագաւորութիւնը կ'առնու :
ՃԹ . Ս . Սահակը կաթողիկոս կը դնէ . Շապուհին հետ կը
թշնամանայ եւ անոր զօրքէն կը բռնուի (400) : Շաւարշ
կամնարական ու Պարզեւ Ամասունի կ'ուզեն Խոսքովն ազա-
տել , բայց չեն կրնար յաջողցնել :

ՃԸ . ՅՈՒՆԱՅ մասին մէջ եղող նախարարները
տեսնելով որ կայսրն իր մասին վրայ թագաւոր չգրաւ ,
չուզեցին առանց թագաւորի մնալ , անոր համար
Գաղաւոն կամնարականին ձեռքովն՝ որն որ իրենց մէջ
պատուով ամենէն մեծն էր , Խոսքովին թուղթ գրե-
ցին եւ յայտնեցին որ կը բաղձան իր քովը գալ . միայն
խնդրեցին որ Նախ՝ իրենց իրեն դէմ՝ ըրած պատե-
րազմին համար թողութիւն տայ . Երկրորդ՝ իրենց կա-
լուածները նորէն ետ տայ , եւ Երրորդ՝ Յունաց մասին
մէջ ըլլող նախարարներուն պաշտպանութիւն ընելու
խոստում տայ , որ Յոյներն անոնց կալուածները չյա-
փրշտակեն : Աս խնդիրները Խոսքով սիրով ընդունե-
ցաւ , եւ միանգամայն անոնց ուրիշ պարգեւներ ալ
խոստացաւ . ուստի Գաղաւոնին առաջնորդութեամբն
ամէնն ալ ելան Խոսքովին դացին . մէջերնէն միայն
Սամէլ Մամիկոնեան՝ Խոսքովին նախարարաց գրած
թուղթն ու նախարարաց գրածին ալ օրինակն առաւ
կայսեր գնաց . որովհետեւ իր հայրն ու մայրը հա-
ւատքնին ուրանալուն համար մեռցուցած ըլլալով՝
Պարսից մասը գալու կը վախնար : Խոսքով բոլոր նա-
խարարներն իր իշխանութեան տակ առնելէն ետքն ,
Արկազ կայսրէն խնդրեց որ Յունաց մասն ալ իրեն
յանձնէ , եւ խոստացաւ որ ան մասին հարկն ալ իրեն
կու տայ : Արկազ վախնալով որ թէ որ աս խնդիրը
չընդունելու ըլլայ , Հայերը կը միաբանին եւ բռնու-
թեամբ իր մասը կ'առնուն Պարսից կու տան , Խոսքովին

ուզածը կատարեց, եւ այնպէս Խոսրով բոլոր Հայոց վրայ առանձին թագաւոր եղաւ :

ՃԹ . Խոսրովին թագաւորութեան չորրորդ տարին Ապուրակէս կաթողիկոսը վախճանեցաւ, որուն տեղ թագաւորը զՍ . Սահակ՝ Ս . Կերսէսին որդին դրաւ : Աս սուրբն իր հայրական խնամքովն ու հոգեւոր բարեկարգութիւններովը՝ Հայաստանը ծաղկեցրնելու, եւ քրիստոնէութիւնն ու բարեպաշտութիւնն օրէ օր յառաջ տանելու շատ փոյթ տարաւ : Աս բաներուս օգնական ունեցաւ Մեսրոպ անունով սուրբ եւ իմաստուն մարդ մը, որն որ թագաւորական քարտուղար էր, բայց Հայոց թագաւորութեան տկարանալու եւ իյնալու սկսած ատենը Գողթն դաւառը քաշուած՝ ձգնութիւն կ'ընէր, եւ շատ հրաշքներով՝ նոյն դաւառին եւ Սիւնեաց նահանգին մէջ յառաջուրնէ մնացած հեթանոսները դարձուցած էր : Շապուհ երբ որ իմացաւ որ Խոսրով Արկադին հետ բարեկամացեր՝ եւ առանց իր հրամանին Ս . Սահակը կաթողիկոս դրեր է, շատ բարկացաւ, ու մարդ խաւրելով՝ ըրածը յանդիմանեց եւ շատ սպառնալիք ըրաւ : Ասոր վրայ Խոսրով նեղացած՝ անոր խիստ պատասխան մը խաւրեց, եւ անմիջապէս Արկադ կայսեր հետ խօսեցաւ որ իրեն օգնէ, եւ ինքն ալ Հայաստանին Պարսից մասն իրեն տայ : Հայ նախարարներէն ոմանք առ բանս գաղտուկ Շապուհին իմացուցին, որն որ իր Արտաշէր որդին շատ զօրքով Խոսրովին վրայ խաւրեց : Թագաւորը տեսնելով որ Արկադ իրեն օգնել չուզեր, եւ ուրիշ օգնական մ'ալ չկրնալով գտնել, ճարը հատած՝ ելաւ Արտաշին քովը գնաց : Արտաշիւր զանիկա թագաւորութենէ ձգեց, ամէն անոր դրած նախարարները՝ նաեւ Ս . Սահակն ալ իրենց իշխանութենէ հանեց, եւ Հայաստանի մէջ մեծ գունդ մը զօրք թող տալով՝ Խոսրովն ու Գազաւոն Ամասարականը հետն առած Տիգրոն գնաց : Շաւարշ՝ Գազաւոնին եղբայրն եւ Պարգեւ՝ Ամատունեաց իշխանն ուղելով իրենց

Թագաւորը դերութենէ տղատել, զի զինաւորով յանկարծ Արտաշին զորացը վրայ յարձակեցան, բայց Խոսրով ամուր շղթաներով կապուած ըլլալուն համար չկրցան ազատել, եւ պարսիկ զօրքին հետ սասաիկ զարնուելով՝ Շաւարշ ու Պարզեւին որդիք Յանուկէ պատերազմին մէջ մեռան, իսկ Պարզեւ դերի բռնուելուցաւ: Արտաշիր հրամայեց որ անոր մարմին հանեն եւ միշտ Խոսրովին առջեւը դնեն: Խոսրով 5 ասորի թագաւորներէն ետքը շղթայով կապուած Անյոշ բերդը դրուեցաւ:

Գ Լ ՈՒ Խ Ի Օ

Վ Ռ Ա Մ Շ Ա Պ ՈՒ Հ

ՃԺ. Առամշապուհին թագաւոր դրուելը (400). Ս. Սահակին Պարսից թագաւորին երթալը. Համազասպ Մամիկոնեանին Հայոց սպարապետ դրուելը: ՃԺԱ. Հայոց գրին գիւար (404 407):

ՃԺ. ԱՐՏԱՇԻՐ Խոսրովին տեղն անոր Առամշապուհ եղբայրը թագաւոր դրաւ, որն որ տէրութիւնը շատ խելքով եւ իմաստութեամբ կառավարեց, եւ Պարսից թագաւորին կամքէն դուրս չըլլելով՝ անոր սիրելի եղաւ: Երբ որ Սահակ Բագրատունի սպարապետը մեռաւ, Ս. Սահակ թագաւորին ազաչեց որ Համազասպ Մամիկոնեանն՝ իր Սահականոյշ աղջկանն այրն, անոր տեղ սպարապետ դնէ, բայց Առամշապուհ յանձն չառաւ առանց Պարսից թագաւորին հրամանին անոր խնդիրքը կատարել: Ան առեն Ս. Սահակ իրմէ յանձնարարական թուղթ առած՝ Արտաշին զնաց, որն որ հօրը տեղը Պարսից թագաւոր եղած էր, եւ անկէ շատ պատուով ընդունուելով՝ ամէն ուզածներն առաւ. նաեւ խնդրեց որ Կամսարականաց եւ Ամատունեաց ցեղերուն թողութիւն տայ, եւ անոնց երկիրները՝ զրոնք արքունիք առած էր, եւ դարձրնէ:

Արտաշիր աս խնդրին ալ հաճեցաւ, եւ Վռամշապուհին հրովարտակ խաւրեց որ Ս. Սահակին ամէն ուղղածները կատարէ. միայն Կամարակոնաց եւ Ամասունեաց ցեղերուն իրենց առաջին աստիճանը չապ, այլ ամէնի ստորին աստիճանի նախարարներուն կարգը դնէ. իսկ Համազասպին աստիճանը մեծցընէ:

ՃԺԱ. Քիչ մը ժամանակ ետքն Արտաշիր մեռաւ եւ անոր յաջորդեց Վռամ, որն որ Վռամշապուհին հետ բարեկամութիւնը հաստատուն պահեց: Ասոր թագաւորութեան սկիզբները Յունաց մէջ խռովութիւն մը ծագեցաւ, եւ զօրքն սկսան թէ իրարու եւ թէ Պարսից հետ պատերազմիլ: Վռամ Հայոց թագաւորին յանձնեց որ Միջագետք երթայ եւ աս խռովութիւնը դադրեցընէ. Վռամշապուհ իր իմաստութեամբն ամէն բան կարգի դրաւ, բայց հոն քարտուղար չունենալով շատ նեղութիւն կը քաշեր: Հարէլ անունով ասորի քահանայ մ'աս բանիս ճար մը հողալու համար թագաւորին քովն եկաւ ու խոստացու որ Գանիէլ անունով եպիսկոպոսի մը գործակցութեամբը Հայոց լեզուին գիր գտնէ: Վռամշապուհ աս բանիս հոգ չունեցաւ, եւ դարձաւ Հայաստան եկաւ. բայց երբ որ տեսաւ որ Ս. Սահակ, Ս. Մեսրոպ եւ բարեկարգ եպիսկոպոսները ժողովուրդ են եւ հայերէն գիր գտնելու կ'աշխատին, Հարէլին ըսածն անոնց պատմեց, եւ անոնց աղաչելովը՝ Վահրիճ Խաղունին Միջագետք խաւրեց որ երթայ ան գրերը սորվի: Վահրիճ գնաց աղէկ մը սորվեցաւ եւ անոնց օրինակն ալ հետն առած՝ Ս. Սահակին ու Մեսրոպին բերաւ, որոնք առին անմիջապէս սկսան տղոց սորվեցընել. բայց մէկ երկու տարի փորձելէն ետքը, տեսան որ ան գրերը հայերէն լեզուի չեն ծառայեր: Ս. Մեսրոպ ելաւ անձամբ Գանիէլ եպիսկոպոսին գնաց, եւ առաջինէն աւելի բան մը չկրնալով գտնել, ուրիշ բանի մը յոյն իմաստուններու գնաց, յուսալով որ անոնց օգնութեամբը կրնայ կատարեալ Հայոց լեզուին յար-

մար գիր մը հնարել. բայց երբ որ յոյր պարապի ելաւ, աղօթքով Աստուծոյ գիմեց, եւ նոյն աղօթքին ատենը տեսիլք մը տեսաւ, որուն մէջ ձեռք մը հայերէն գրերն իր առջեւը գրեց, եւ անոնց զօրութիւնն իր մտքին մէջ տպաւորուեցաւ: Ուստի աղօթքը ըմբնալուն պէս, Հռովմանոս անունով յոյն դպրի մը հետ իր տեսած գրերը ձեւի խոթեց եւ առաւ Հայաստան բերաւ, ու Վռամշապուհին հրամանովն ամէն Պարոնից տակ եղող Հայաստանի գաւառներուն մէջ դասատուներ բացաւ եւ նոյն գրերը արդոց սորվեցուց: Բայց Յունաց մասին մէջ չկրցաւ սորվեցընել, որովհետեւ Թէոդոս Փոքրը, Արկադ կայսեր յաջորդն, իր մասը Վռամշապուհին չյանձնեց, այլ յոյն գործակալներով կը կառավարէր, որոնք թող չէին տար որ Հայերը յունարէնէն զատ լեզու սորվին: Ս. Մեսրոպ նաեւ Վրաց եւ Աղուանից երկիրներն ալ զնաց եւ անոնց ալ գիր հնարեց:

ԳՂՈՒԽ ԻԷ

Խ Ո Ս Ր Ո Վ Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ա Ն Գ Ա Մ
Ո Ւ Շ Ա Պ Ո Ւ Հ Պ Ա Ր Ս Ի Կ

ՃԺԲ. Վռամշապուհ կը մեռնի (421), Խոսրով Գ. Երկրորդ անգամ Հայոց թագաւոր կը նստի: Խոսրովին մահը (421):
ՃԺԳ. Շապուհ պարսկին թագաւոր գրուիլը: Հայոց նախարարները Հայաստան գտնուող պարսիկ զօրաց զէմ պատերազմի կ'ելեն ու կը յաղթեն: ՃԺԴ. Ս. Սահակ Յունաց մասը կ'երթայ. իր թողը Վարդան Մամիկոնեան կայսրմէ Հայոց սպարապետ կը դրուի:

ՃԺԲ. ՎՂՈՒՄՇԱՊՈՒՀ 21 տարի թագաւորելէն ետքը մեռաւ. եւ որովհետեւ իր որդին դեռ 10 տարուան ըլլալով՝ թագաւորութիւն ընելու բաւական չէր, Ս. Սահակ Յաղկերտին զնաց եւ աղաչեց որ զԽոսրով՝ որն որ նոյն ժամանակը շղթաներէն արձակուած՝ Անյոյշ բերդը կը կենար, նորէն Հայոց թագաւոր

ւոր դնէ : Յազկերտ անոր խնդիրը կատարեց եւ Խոս-
րովը Հայաստան խաւրեց , որն որ գալու ասուն Յազ-
կերտէն խնդրեց որ Գազաւոն Ամնարականին որդին
Հրահատն ալ Հայաստան խաւրէ . Բայց անիկայ դեռ
Հայաստան չհասած՝ ինքը մեռաւ , տարի մը թաղա-
ւորութիւն ընելէն ետքը :

ՃԺԳ . Յազկերտ ուզելով բոլոր Հայերը Պարսից
աղանդը դարձնել , Խոսրովին տեղ հայ թաղաւոր
չգրաւ , այլ իր որդին Շապուհը թաղաւորեցուց , որ-
պէս զի Հայոց նախարարները միշտ անոր քովը մանե-
լով ելլելով՝ եւ Պարսից տօները տեսնելով , միանդա-
մայն Պարսից հետ խնամութիւն ընելով՝ իրենց աղան-
դին ընտանեանն եւ զիւրութեամբ զանիկա ընդունին :
Հայերը՝ նոյն ասունն իրենց սպարապետը Համազասպ
Մամիկոնեան մեռած ըլլալով , չկրցան ժողովուիլ ու
Շապուհին դէմ դնել . ուտտի անիկա եկաւ մտաւ
Հայաստան , իրեն հետ բերաւ նաեւ Հրահատ Ամ-
սարականն եւ ուրիշ Պարսկաստան եղող հայ իշխան-
ները : Բայց նախարարներուն ամենեւին չկրցաւ հա-
ճելի ըլլալ , այլ միշտ անոնցմէ կ'անարգուէր ու կը
նախատուէր , եւ այսպէս անարգութեամբ և տարի
թաղաւորութիւն ընելէն ետքը , լսելով թէ հայրը
հիւանդացեր է , շուտ մը Պարսկաստան գնաց , իր
տեղակալին սպասքելով որ բոլոր հայ իշխանները բռնէ
Պարսկաստան բերէ : Բայց նախարարները ներսէս
ճիծրակացի իշխանն իրենց զօրապետ դրին , ու զօր-
քերնին ժողվելով՝ Պարսից գունդին հետ սաստիկ
զարնուեցան , շատերը ջարդեցին , մնացածը փախու-
ցին , որոնց զօրադուխն ալ Ապրտամ Սպանդուհին
սպաննեց . անկէ ետքն իրենք ամուր տեղեր քա-
շուեցան : Ասով երկիրն անտէրունչ մնալով՝ սկսաւ
ապականիլ , եւ հարկերն ալ նուազեցան :

ՃԺԳ . Այն ժամանակը Վրամ Յազկերտին տեղը
թաղաւորեց , եւ Հայոցմէ վրէժ առնելու համար անոնց
վրայ զօրք խաւրեց ու շատ վնաս հասցուց : Ս . Սահակ

աս ամէն չարիքները տեսնելով՝ Էլլա Յունաց մասը զնաց, ուր որ նոյն ատենը խաղաղ էր. բայց հոն աղէկ բնդուներու թիւն չգտաւ, անոր համար զՍ. Մեսրոպ եւ իր Վարդան թողը Կոստանդնուպոլիս խաւրեց ու կայսրմէ խնդրեց որ իր գործակալներուն հրաման տայ՝ որ Յունաց մասին մէջ Հայերէն սորվեցրնելը չարզելուն: Կայսրը հրովարտակ մը գրելով՝ իր գործակալներուն պատուիրեց որ Ս. Սահակին արգելէ չքնեն. Վարդանին ալ սպարապետութեան պատիւ տուաւ, իսկ Ս. Մեսրոպ Ատտիկոս Կոստանդնուպոլիս արքեպիսկոպոսէն քահանայ ձեռնադրուեցաւ: Թէոդոս իր Անատոլ զօրապետին ալ հրաման խաւրեց որ Հայաստանի մէջ քաղաք մը շինէ, մէջը Յունաց պահապան զօրք պահելու համար. ան ալ Կարին դաւառը Թէոդուպոլիս քաղաքը շինեց եւ ամուր պարսպով ու փոսերով պատելով՝ մէջը Յոյն զօրք դրաւ:

Գ Լ ՈՒ Խ Ի Ը

ԱՐՏԱՇԷՍ Գ. ԿԱՄ ԱՐՏԱՇԻՐ

ՃԺԵ. Հայոց նախարարներուն Պարսից թագաւորին հետ հաշտուիլն եւ Արտաշէսին գահ նստիլը (427): ՃԺԶ. Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին Հայաստանն ուսմամբ ծաղկեցընելու համար ըրած ջանքը: ՃԺԷ. Արտաշէսին անկարգ կեանքը, թագաւորութենէ մերժուիլն եւ Արշակունեաց ցեղին թագաւորութեան վերնալը (433):


ՃԺԵ. Վ ՌԱՄ տեսնելով որ Հայաստան անտէր մնացեր է, եւ հարկերն օրէ օր կը քիչնան, եւ գիտնալով ալ որ մինչեւ որ նախարարներուն հետ հաշտութիւն չընէ, Հայաստան չի կրնար նուաճել, Սմբատ Բագրատունի իշխանին ձեռքովն ուզեց հաշտութիւն ընել: Ան ատեն նախարարները Ս. Սահակը կանչեցին որ գայ զիրենք միաբանէ, որպէս զի կարող ըլլան միաբան Ղուամին հետ հաշտութիւնը հաստատել: Ս.

Սահակ եկաւ Այրարատ գաւառն՝ ամէն նախարարները քովը ժողովեց, ու Սմբատն եւ իր թուր վարդան սպարապետը վաւամիս խաւրեց, որն որ հաշտութիւնն հաստատելով՝ վաւամշապուհին որդին Արտաշէսը թագաւորեցուց, անունն ալ փոխեց Արտաշէր դրաւ :

ՃԺԶ. Ըն ատեն Ս. Մեսրոպ ան, Յունաց մասին մէջ հայերէն սորվեցընելէն՝ եւ ամէն գաւառ իր աշկերաններէն վարպետ դնելէն ետքը, Պարսից մասը Ս. Սահակին քովն եկաւ, եւ անոր հետ խորհուրդընելով՝ Հայաստան թէ հոգեւոր եւ թէ արտաքին գիտութեամբ ծաղկեցընելու համար, իրենց աշկերաներուն մէջէն քանի մը հոգի՝ որոնց գլխաւորներն էին Եղնիկ, Կորիւն, Յովսէփ Պաղնեցի, Ղեւոնդ, Յովհանն եւ Արծան՝ Կոստանդնուպոլիս, քանի մը հոգի ալ Եղեսիա խաւրեցին, որպէս զի Ս. Հարց գործքերը հայերէն թարգմանեն ու բերեն. իսկ պրզտիկ աշկերաններէն ալ մէկ քանին՝ որոնց երեւելիներն էին Մովսէս Խորենացին, Գաւիթ Անյաղթ, Մամբրէ, եւ այլն, Աղեքսանդրիա խրկեցին որ ուսում սորվին :

ՃԺԷ. Բայց Հայաստան աս ամէն ջանքին եւ աշխատութեան պտուղը դեռ վայելելու չսկսած, մեծ թշուառութեան մէջ ինկաւ, իր թագաւորութիւնը կորսնցընելով : Վասն զի Արտաշէր իր երիտասարդական մնութիւններուն հետեւելով՝ ամէն տեսակ անկարգութիւններն սկսաւ կատարել. ասով ամէն նախարարներուն ատելի եղաւ, որոնք եկան Ս. Սահակն ալ կանչեցին որ իրենց հետ միանայ, եւ երթան Պարսից թագաւորին Արտաշէրն ամբաստանեն, եւ խնդրեն որ զանիկա թագաւորութենէ հանէ, եւ Հայոց վրայ Պարսիկ իշխան մը դնէ : Ս. Սահակ աս բանս ամենեւին յանձն չառաւ, եւ շատ խօսքերով անոնց ցուցուց որ աս գործքն ինչ գէշ ու վնասակար է, եւ որչափ վնասակար հետեւութիւններ կ'ունենայ, թէ որ զիրենք բոլորովին հեթանոս Պարսից իշխա-

նախնեան ասկ ձգելու ըլլան: Բայց նախարարներն
անոր մտիկ չբրին, եւ կարծելով՝ որ Ս. Սահակ կ'ազե-
րանն երկնցընել, որպէս զի իրենց խորհարդը թագա-
ւորին յայտնէ, միտքսնած՝ Պարսից թագաւորին գա-
ցին, իրենց հետ Սուրմակ անուանով չար քահանայ մ'ալ
տարին, եւ լ'է Արտաշէրը լ'է Ս. Սահակն ամբաստա-
նելուն: Առամ նախարարաց ամբաստանութիւնը լսե-
լով Արտաշէրն ու Ս. Սահակն իրեն կանչեց, եւ առա-
ջինէն թագաւորութիւնն ու Ս. Սահակէն կաթողիկո-
սութիւնն առաւ, եւ երկուքն ալ Պարսկաստան արդե-
լեց: Ասկէ ետքը նախարարներուն շատ պարգեւներ
տուաւ, եւ թագաւորի տեղ Աեհմիհըշապուհ անու-
նով Պարսիկ մարդպան մ'անոնց հետ Հայաստան խաւ-
րեց, Սուրմակն ալ կաթողիկոս դրաւ: Արտաշէր 6
տարի թագաւորութիւն ընելէն ետքն, առ եղանա-
կաւ իր՝ եւ իրմով Արշակունեաց ցեղին թագաւորու-
թիւնը բոլորովին կորսնցուց:



ԳԻՐԻՔ ԵՐՐՈՐԴ

ՄԵՐՕՊԵՆՆԵՐՆ ԵՒ ՈՍՏԻԿԵՆՆԵՐԸ

ԱՐԸԱԿՈՒՆԵԱՅ ցեղին թագաւորութիւնն իր վերջին թագաւորին (Արտաշէս Գ.ին) անկարգ վարքը, նախարարաց անոր դէմ ունեցած անխորհարգ ատելութիւնն ու Պարսից նենգաւոր դարանակալութիւնը բոլորովին ջնջեցին եւ անհետ ըրին, եւ անոնց տեղ Մարգպան (գաւառակալ) անունով պարսիկ իշխաններ Հայաստանին կառավարութիւնը ձեռք առին: Ասոնց ժամանակն աս անտէրունչ երկիրը թշուառութեան ու տառապանաց ասպարէզ մը դարձաւ. վասն զի Պարսից թագաւորներն Հայոց տէրութիւնը ձեռք ձգելէն ետեւ, անոնց կրօնին դէմ ալ յայանի պատերազմ բացին, որպէս զի զանիկա ալ ջնջելով՝ ամբողջ ազգն իրենց մէջ ընկղմեն ու բոլորովին կորսնցընեն, եւ այսպէս զանիկա իրենց հետ մշանջենաւոր եւ անբաժին կապով մը կապեն. եւ աս վարսճանին հասնելու համար՝ ամէն տեսակ անգթութիւն, ապականութիւն, աւեր ու կործանում ի դործ դրին: Բայց Հայոց մեծ մասն իր առաջին կորստովը խրատուած ըլլալով, եւ մանաւանդ իր կրօնասիրութեան եռանդէն յորդորուելով ու մղուելով, իր հոգեւից առաջնորդներուն հետ մէկտեղ բոլոր զօրութեամբ աս երկրորդ դարանակալութեան դէմ զինեցաւ. եւ թէպէս

իր մեջին ալ իրեն հակառակորդներ եւ արդեւ զդէտքներ ելան, ի վերայ այսր ամենայնի կարող եղաւ իր կրօնին թշնամւոյն վրայ փառասոր յազթանակ ւ անգնել, եւ կրօնն անարատ պահել: Աս առաջին վնթորիկն անցնելէն ետեւ, Պարսից տէրութեան Հագարացոց (Մահմետական Արաբացոց) տակը նուաճուելովն՝ Հայաստան ալ անոնց ձեռքն անցաւ, եւ անոնց Ոստիկաններէ՛ կառավարուելու սկսաւ, որոնց ժամանակը տառապանքն ու թշուառութիւնները նորէն սաստկացան, մինչեւ որ Բագրատունեաց ցեղն արքունական գահն ելլելով՝ երկրին մեծ մասը քիչ մը ժամանակ աս նեղութիւններէն ազատեց:

Աս մասին պատմութեան Ազբէրնէրն են, Եղիշէ վարդապետը՝ (Ե. դարուն մէջ) որն որ Վարդանանց պատերազմին մէջը գանուելով՝ Գաւթի Մամիկոնեանին խնդրելովն անոր պատմութիւնը գեղեցիկ ճարտարախօսութեամբ գրեց: Ղազար Փարպեցի՝ (Ե.) որն որ Վաւաճապուհին ատենէն սկսելով՝ մինչեւ Վահան Մամիկոնեանին մարզպանութեան ժամանակին պատմութիւնը գրեց, որոնց մեծ մասին ինքն ականատես եղած էր: Յովհան Կաթողիկոս (Թ—Ժ.) Ոստիկանաց պատմութիւնը մեզի կ'աւանդէ. Սամուէլ երէց (ԺԲ.), որուն ժամանակագրութեան մէջ Մարզպանաց ու Ոստիկանաց կարգն եւ անոնց համառօտ պատմութիւնը կը բովանդակի: Նոյնպէս Յովհան Մամիկոնեան (Է.), Ասողիկ (Ժ.), Թովմա Արծրունի (Ժ.), Վարդան (ԺԳ.), Աիրակոս Գանձակեցի (ԺԳ.), եւ այլն իրենց գրքերուն մէջ աս ժամանակին պատմութեան շատ մասերը կ'աւանդեն: Աս ազգային պատմագիրներէն զատ քանի մը յոյն պատմագիրներ ալ, ինչպէս Զոնարաս, Աեդրենոս, Եւագրիոս, Մենանդր եւ այլն, մեր աս գրքին՝ գլխաւորաբար Հայոց եւ Յունաց կամ Պարսից եւ Յունաց մէջ Հայոց պատճառաւ եղած դէպքերուն պատմութեանն առաջնորդ լեղան:

Գ Լ ՈՒ Խ Ը

Յ Ը Զ Կ Ե Ր Տ Ի Ն Հ Ը Յ Ո Ց Գ Ի Մ՝ Հ Ը Ն Ա Ծ՝
Հ Ա Լ Ա Ծ Ա Ն Ք Ի Ն Ս Կ Ի Զ Բ Ը

Ա. Բրքիչոյն ու Շմուէլին կաթողիկոսութիւնը. Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին մահը (440): Յովսէփ Պաղնեցիին կաթողիկոս դրուելը: Բ. Յագիերտ Պարսից թագաւորը քրիստոնէից դէմ հալածանք կը հանէ, Հայոց նախարարներէն շատերը Պարսկաստան կ'արգելու: Ասում ու Մանածի՛հր իշխաններուն նահատակուելը: Գ. Գենշապուհին Հայաստան գալն ու հոն ըրածները: Միհրնեթուհի Հայոց նամակ կը գրէ, եւ հայ եպիսկոպոսներն անոր պատասխան կու տան: Գ. Հայաստանին երեւելի նախարարները Պարսկաստան կը կանչուին ու հաւատքնին ուրանալ յանձն շառնելնուն համար կը բանտարկուին:

Ա. Վ Ե Հ Մ Ի Հ Բ Հ Ա Պ Ո Ւ Հ մարդկանը բոլոր իր իշխանութեան ժամանակը խաղաղութեամբ կառավարեց, ու Հայաստան հանգիստ պահեց. բայց Սուրմակ չար կաթողիկոսն իր փառամոլութեամբն եւ ըրած անկարգութիւններովն՝ առ խաղաղութեան վրդովելուն պատճառ եղաւ. անոր համար նախարարները զինքը՝ տարի մը կաթողիկոսութիւն ընելէն ետքը վճնտեցին: Վ. ամ Սուրմակին տեղ Բրքիչոյ ասորին գրաւ, բայց ան ալ իր ըրած յափշտակութիւններուն պատճառաւ նախարարաց հաճելի չըլլալով՝ Վ. ամէն ուրիշ կաթողիկոս մը խնդրեցին. ոմանք ալ ուղեցին որ Ս. Սահակ նորէն կաթողիկոս գրուի: Թագաւորն երկու կողման ալ կամքը կատարելու համար, Շմուէլ ասորին կաթողիկոս գրաւ, միայն հարկերն ու դատաստաններն եւ ուրիշ աշխարհական բաները հոգալու համար. Ս. Սահակն ալ Հայաստան խաւրեց որ միայն հոգեւոր բաներու հոգ տանի, եւ որոնց համար որ Շմուէլ հաւանութիւն տայ, ձեռնադրէ: Շմուէլ եկաւ Հայաստան եւ սկսաւ փոքր պատճառներու համար եպիսկոպոսաց կալուածները յափշտակել. շատերն

ալ իշխանութենէ ձգեց, եւ հինգ տարի առ եղանակաւ կաթողիկոսութիւն ընելէն ետքը մեռաւ: Անտառն նախարարները Ս. Կահակին գացին՝ որն որ Բաղրէւանդ գաւառը քաշուած կը կենար, եւ իրենց բրածին վրայ թողութիւն խնդրելով՝ աղաչեցին որ նորէն կաթողիկոսութիւնը յանձն առնու. բայց անիկա ամենեւին յանձն չառաւ, եւ իր Հայաստանին ապագայ վիճակին վրայ տեսած տեսիլքն անոնց պատմեց: Ասիկէ ետքը քանի մը տարի ալ ապրելով՝ Բլուր գեղին մէջ իր ծննդեան օրը վախճանեցաւ, որուն մարմինը Տարօն գաւառն Աշտիշատ գեղին մէջ թաղեցին: Աւելցնելով ամիս ետքն ալ Ս. Մեսրոպ Վաղարշապատ քաղքին մէջ վախճանեցաւ եւ Օշական գեղը թաղուեցաւ, որուն մեռած տան վրայ լուսեղէն խաչ մ'երեւցաւ, եւ յուզարկաւորութեան ատենը նոյն խաչը դագաղին վրայէն մէկտեղ գնաց, մինչեւ որ սուրբ մարմինը գերեզման դրուեցաւ: Ս. Մեսրոպին մահուանէ ետքը Յովսէփ Պաղնեցի քահանան՝ անոր աշկերտներէն մէկն, ինչպէս որ սուրբը պատուիրած էր, կաթողիկոս դրուեցաւ, որն որ եկեղեցականաց եւ աշխարհականաց մէջ մտած քանի մ'անկարգութիւններուն դարման մ'ընելու համար, իր իշխանութեան եօթներորդ տարին՝ Շահապիվան եկեղեցական ժողովք մ'ըրաւ եւ ան անկարգութեանց դէմ քսան կանոն հաստատեց:

Բ. Առամ Պարսից թագաւորին յաջորդեց իր որդին Յազկերտ Բ. որն որ Հայաստանին հանգիստն ու խաղաղութիւնը բոլորովին սակն ու վրայ բրաւ: Որովհետեւ Յունաց դէմ պատերազմի ելլելով ու անոնց յաղթելով, եւ նաեւ ուրիշ կողմերն ունեցած պատերազմներն ալ յաջողութեամբ լմրնցընելով, այնչափ հպարտացաւ որ յանդգնեցաւ կրօնի դէմ ալ պատերազմ բանալ, եւ քրիստոնէութիւնն աշխարհքիս վրայէն բոլորովին ջնջել ուզեց: Յազկերտին՝ աս խորհուրդն ի գործ դնելու յորդորոզներուն գլխաւորը,

Պարսից մտքերէն զառ, Միհրներսէ՛հ՝ Պարսից տէրութեան հազարապետն էր, որն որ սրգէն շատոնց առիթիր փնտռէր քրիստոնէից դէմ հալածանք հանելու եւ զանոնք Պարսից ազանդը դարձընելու . բայց Յունաց կայսրմէ վախնալով իր խորհուրդն ի գործ դնելու չէր համարձակեր : Հիմա Պարսից Յունաց վրայ ըրած յաղթութենէն համարձակութիւն առած, եւ նաեւ Միւնեաց ցեղէն Ղարազվազան անունով ուրացեալ նախարարէ մը գրգռուած, զթագաւորը յորդորեց որ իր տակն եղող քրիստոնէաները Պարսից ազանդը դարձընէ, որպէս զի ասով, ըսաւ, աստուածներուն քեզի տուած այնչափ յաղթութիւններուն փոխարէն հաճոյական գործք մ'ըրած ըլլաս : Յազկերտ անմիջապէս ամէն Պարսիկ իշխաններուն ու մոզպէսներուն հետ խորհուրդ ըրաւ թէ ինչ եղանակաւ աս բանս սկսին ու կատարեն, եւ որոշուեցաւ որ թագաւորը Հոնաց դէմ պատերազմ բանայ, եւ բոլոր իր իշխանութեան տակն եղող քրիստոնէաներէն ալ զօրք ժողված՝ իրենց իշխաններովը մէկտեղ պատերազմի տանի, որպէս զի իշխաններն ու զօրքը հեռանալով՝ մնացած ժողովուրդը կարող չըլլայ իր հրամանին դէմ դնել : Շուտ մ'ամէն կողմ հրովարտակներ խրկուեցան, որ ամէն իշխան իր զօրքն առած Պարսկաստան գայ . աս հրովարտակը Հայաստան ալ գալով՝ նախարարները զօրքերնին առին Յազկերտին գացին, որոնց հետ Պարսից զօրքն ալ միացած՝ Հոնաց վրայ գացին եւ երկու տարի շարունակ պատերազմեցան, բայց բան մը չկրցան ընել : Պատերազմին լմրննալէն ետքը Յազկերտ ամէն ազգաց զօրքերը տեղերնին խաւրեց, եւ անոնցմէ ուրիշ զօրք բերել տուաւ . այսպէս եօթը տարի շարունակեց, եւ աս եօթը տարուան միջոցին մէջ իր քովն եկող քրիստոնէայ նախարարներն՝ ստակ, պատիւ եւ իշխանութիւն խոստանալով՝ յորդորեց որ Պարսից ազանդը դառնան : Բայց տեսնելով որ անոնք ամենեւին յանձն չեն առնուր, յայտնի հրաման հանեց որ իր իշխանու-

Թեան տակ եղող ամէն քրիստոնէսները հաւատքնին թողուն, եւ արեղական ու կրակի երկրպագութիւն ընեն: Իսկ իր քովն եղող քրիստոնէայ զօրքը նորէն Հնաց դէմ պատերազմի տարաւ, զորոնք ճամբան շատ չարչարեց, թռչակնին քիչ տալով, պատուաւոր իշխանները նախատելով եւ զանոնք հեթանոսներուն առջեւն անարգ ցուցնելով: Պատերազմէն դառնալէն ետեւ, թող չտուաւ որ անոնք իրենց երկիրն երթան, այլ սկսաւ նորէն զանազան տանջանքներով ստիպել որ հաւատքնին ուրանան: Ատոմ Գնունի ու Մանաճիհր Ռշտունի իշխանները Յազկերտին բրածները տեսնելով՝ զօրքերնին առին ու Հայաստան փախան. բայց Պարսից զօրքն անոնց ետեւէն հասաւ ու զամէնը ջարդեց, որոնք Քրիստոսի սիրոյն համար առանց դէմ զնելլալ իրենք զիրենք Պարսից ձեռքը տուին ու մարտիրոս եղան:

Գ. Յազկերտ Հայոց նախարարները Պարսկաստան արգելելէն զատ, Գենշապուհ պարսիկ իշխանը Հայաստան խաւրեց, որպէս զի բոլոր իր իշխաններէն զրկուած ազգն ալ իր կամացը խոնարհեցընելու աշխատի: Եկաւ Գենշապուհ գրսէն խաղաղութիւն ցուցընելով՝ կամաց կամաց սկսաւ Հայաստանին ներքին կապերը քակել. մնացած նախարարներուն մէջ խռովութիւն ձգեց, եկեղեցիներու վրայ հարկ դրաւ, կրօնաւորները ցրուեց, հարկերը կրկնապատիկ շատցուց, որպէս զի ասոնցմով Հայաստան տկարացընէ: Բայց երբ որ աս բաներս ամենեւին Հայերն իրենց կրօնէն խախտելու օգուտ մը չըրին, մոգպետին խորհրդովը Միհրնեբսէհ անոնց գլխաւորներուն նամակ մը գրեց, որուն մէջ նախ Պարսից դարձելի աղանդը մեկնելէն ետքը, քրիստոնէական սուրբ կրօնին խորհուրդներն իբրեւ սուտ եւ անպիտան բաներ կը ցուցընէր, եւ հրամայեց որ կամ աս նամակին ամէն խօսքերուն մէկիկ մէկիկ պատասխան տան, եւ կամ ելլեն Պարսից դուռը գան: Ս. Յովսէփ կաթողիկոսն աս նամակն առածին պէս, Հայաստանին

Եպիսկոպոսներէն 17 երեւելիները, շատ ալ հոգե-
լից քահանաներ Արտաշատ քաղաքը ժողովեց, եւ
անոնց հետ խորհուրդ ընելով՝ նախարարաց հաւա-
նութեամբը Միհրանեանին զօրաւոր պատասխան մը
գրեց, որուն մէջ Պարսից ազանդին սառութիւնն եւ
անպիտանութիւնն, ու քրիստոնէական հաւատքին
տուրբ ու ճշմարիտ հաւատք ըլլալը յայտնի ու հա-
մարձակ ցուցուց, եւ նամակն աս խօսքով վերջա-
ցուց: «Աս տուրբ հաւատքին վրայ մենք ամենքնիս
ալ, մեծէն մինչեւ պզտիկ հաստատուն կեցած ենք,
եւ պատրաստ ենք անոր համար նաեւ մեր կեանքն
ալ տալու»:

Գ. Աս պատասխանն երբ որ Յազկերտին եւ բոլոր
Պարսից իշխաններուն առջեւը կարդացուեցաւ, թէ-
պէտ եւ շատերը Հայոց համարձակութեանն եւ ան-
երկիւղ իրենց հաւատքը պաշտպանելուն վրայ զար-
մացան, բայց թաղաւորը սաստիկ կատղեցաւ, ու մոզ-
պետին խորհրդովը հայ նախարարներուն երեւելիներն
իրեն կանչեց, որոնք էին՝ Վասակ Սիւնեաց իշխանն,
որն որ Վէհմիհրապուհին տեղ Հայոց մարզպան
դրուած էր¹, Ներշապուհ Արծրունի, Արտակ Ռշտու-
նի, Գաղիշոյ Խոսխոռունի, Վարդան Մամիկոնեան
Ս. Սահակին թուր՝ Հայոց սպարապետը, Արտակ
Մոկացի, Մանէճ Ապահունի, Վահան Ամատունի,
Գիտ Վահեւունի եւ Շմաւոն Անձեւացի: Ասոնք թէ-
պէտ եւ Յազկերտին միտքը գիտէին, բայց որովհետեւ
շատերնուն ազգականները Պարսկաստան նեղութեան
մէջ էին, յուսալով որ իրենց երթալովը կրնան զա-
նոնք ազատել, ելան դացին, ծամբայ՝ ելլէին յառաջ
Ս. Յովսէփ կաթողիկոսին՝ հաւատքներնուն վրայ հաս-
տատուն կենալու խոստում տալով: Յազկերտ անոնց

1 Վասակին մարզպանու- կը յիշեն, բայց անոր երբ
թեան իշխանութիւն ունե- եւ ինչպէս աս իշխանութեան
նալը թէպէտ եւ երկու ժա- հասնելուն վրայ յայտնի յի-
մանակակից պատմագիրներ, շատակութիւն չեն ըներ:
եղիչէ եւ Ղազար Փարպեցի

ուժըրտեան բնդունելութիւնը՝ շրնելն դատ, անոնց հետ յանցաւորի պէս վարուեցաւ, ու հրամայեց որ երկրորդ օրն առջեւը զան : Կախարարներն որոշուած ժամանակին Պարսից իշխաններուն ու մուգերուն հետ թաղաւորին առջեւը դացին, որն որ անոնց հետ բարկութեամբ խօսելով, բաւ, թէ որ վաղը ինձի հետ աղեգական երկրպագութիւն չէք ըներ, ամենքնիդ ալ սաստիկ տանջանքներու կը մատնեմ, ու ձեր երկիրն անհամար զօրք խաւրելով՝ ընտանիքնիդ եւ բաւոր ձեր ազգը կը ջնջեմ : Անոնք իրենց մինչեւ նոյն ժամանակն ըրած հաւատարիմ ծառայութիւնները Յազկերտին առջեւը դնելով՝ ջանացին անոր բարկութիւնն իջեցընել, բայց երբ որ տեսան որ անիկա մտիկ չընէր, իրենք ալ բացայայտ ըսին որ մենք մեր սուրբ հաւատքն ամենեւին թող չենք տար, ուստի ինչ տանջանք որ կ'ուզես մեզի տուր : Աս պատասխանին վրայ Յազկերտ սաստիկ բարկութեամբ բորբոքած, հրաման տուաւ որ ամէն հայ նախարարները նախատանօք իր առջեւէն մեկդի տանին. դահճապետին ալ հրամայեց որ զանոնք զգուշութեամբ բանտարկուածի պէս իրենց բնակարաններուն մէջ պահէ : Կախարարները շատ ջանացին, ու Պարսիկ իշխաններուն շատ ստակ տուին որ կարող ըլլան ազատիլ ու տեղերնին երթալ, բայց անոնցմէ օգնութիւն մը չգտնելով՝ իրենք զիրենք Աստուծոյ յանձնեցին եւ անոր օգնութեանն ապաւինեցան :

1 Յառաջագոյն սովորութիւն էր որ, երբ որ Հայոց իշխաններէն մեկը գործքը մը համար Պարսկաստան կ'երթար, Պարսից թագաւորն անոր դիմացը մարդ կը խաւրէր, ու Հայաստանին եւ իրեն

ինչպէս ըլլալը կը հարցընէր. նաեւ անոր հոն գալուն համար շնորհակալ կ'ըլլար եւ յառաջագոյն ըրած ծառայութիւններուն համար իրեն գովութիւն կու տար :

Գ Լ ՈՒ Ի Ի Ի

Ն Ե Խ Ա Ր Ա Ր Ե Ր Ը Ց Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Գ Ա Ռ ՈՆ Ա Լ Ի Ն ՈՒ Վ Ա Ս Ա Կ Ի Ն Ը Ր Ա Ծ Ն Ե Ր Ը

Ե. Հայոց նախարարներն երեսանց հաւատքնին կ'ուրանան ու Հայաստան կը դառնան : Զ. Հայաստանի եպիսկոպոսներն ու բացեալ նախարարներուն դէմ դնելու կը պատրաստուին : Վասակ Սիւնեաց իշխանը հաւատքը սրտանց կ'ուրանայ, եւ Հայաստան կրակապաշտութիւն տարածելու ետեւէ կ'ըլլայ : Է. Հաւատքնին պահող նախարարներն ու բացեալներէն կը բաժնուին, անոնց դէմ պատերազմի կ'ելեն ու կը յաղթեն, Վասակն ալ կը բռնեն : Վասակ քրիստոնէութիւնը հաստատուն պահելու սուտ երգում ընելով՝ ազատ թող կը արուի :

Ե. ՅԱԶԿԵՐՏ նախարարները Պարսկաստան արգելելով՝ զօրք կը պատրաստէր որ զանոնք հետու տեղեր քշէ, ու Հայաստանի սպառնացած չարիքներն ի գործ դնելու սկսի : Պարսիկ իշխաններէն մէկն՝ որն որ ծածուկ քրիստոնէայ էր, աս բանս իմանալուն պէս, եկաւ նախարարներուն պատմեց, եւ անոնց խորհուրդ տուաւ որ երեսանց թագաւորին ուղածը կատարեն, մինչեւ որ Պարսկաստանէն ազատին եւ իրենց երկիրն երթան. անկէ ետքը նորէն համարձակ սկսին իրենց կրօնը պաշտել, որպէս զի ասով, ըսաւ, ձեր աղքն եւ ընտանիքն ուրացութենէ ազատէք, որոնք առանց իշխանի մնացած, չեն կրնար թագաւորին դէմ դնել, եւ ի հարկէ Պարսից աղանդը կ'ընդունին : Ասոր վրայ բոլոր հայ նախարարները ժողովուեցան ու Արաց եւ Աղուանից իշխաններն ալ կանչելով՝ խորհուրդ ըրին եւ որոշեցին որ դրսանց թագաւորին կամքը կատարեն, մինչեւ որ իրենց երկիրն երթան. Վարդան Մամիկոնեան սպարապետն ալ՝ որն որ խկզբան աս ուրացութեան սատիկ դէմ կը դներ, շատ ստիպելով եւ աւետարանի վրայ երգում ընելով՝ որ հաւատքնին հաստատուն կը պահեն եւ միշտ իրեն հետ միաբան կը

մնան եւ իրեն կը հնազանդին, վերջապէս իրենց հետ միաբանեցին, եւ անմիջապէս թագաւորին ծանուցին որ պատրաստ ենք քու կամքդ կատարելու : Յազկերտ արտաքոյ կարգի ուրախացած, շուտ մ'ամէն իշխաններուն իրենց առաջին պատիւը տուաւ եւ ամէն մէկուն առատ պարգեւներ ալ շնորհեց, եւ հետերնին գունդ մը զօրք, 700էն աւելի ալ մոզ ու մէկ մոզպետ մը դրած՝ Հայաստան խաւրեց, որպէս զի Հայոց Պարսից աղանդը արժեցընեն . պատուէր տուաւ որ ամէն եկեղեցիները կործանեն ու կրակատուններ շինեն, եւ քրիստոնէութեան յիշատակը Հայաստանին մէջէն բոլորովին ջնջեն : Բայց Գուգարաց Աշուշայ բղեշխն ու Վասակ Սինեայ իշխանին Բաբելի եւ Ամիրներսեհ որդիները պատանդի պէս իր քովը պահեց, որպէս զի չըլլայ թէ նախարարներն իրենց խոստումը չպահեն :

Զ. Նախարարներուն քովն եղող քահանաներն, անոնց ուրացութեան վրայ սաստիկ տրտմած եւ միանգամայն արդար բարկութեամբ բորբոքած՝ անոնցմէ բաժնուեցան, եւ մէջերնէն մէկն իրենցմէ յառաջ Հայաստան խաւրելով՝ եղածն իմացուցին : Հայաստանին եպիսկոպոսներն ու քահանաները նախարարաց ուրացութիւնը լսելնուն պէս, խորհուրդ ըրին եւ որոշեցին որ ամենայն զօրութեամբ անոնց դէմ դնեն ու թող չտան որ Հայաստան մտնեն, ամենեւին առանց խնայելու ո՛չ ազգականի, ո՛չ եղբօր, ո՛չ հօր . ուստի աս մտքով արք եւ կանայք զէնք առին, զրահ հազան ու պատրաստուեցան :

Իսկ նախարարները Պարսից զօրքին ու մոգերուն հետ Տրէ (Նոյեմբեր) ամսոյն մէջ Հայաստան հասնելով՝ Անդղ գեղը բանակեցան . եւ ամիսի մը չափ հանգիստ կենալէն ետքը, կիրակի օր մը մոզպետը մոգերուն հետ եկեղեցի մը գնաց եւ կ'ուզէր կործանել : Ս . Ղեւոնդ քահանան՝ որն որ ուրիշ շատ եկեղեցականներով նոյն եկեղեցւոյն մէջ պաշտօն կը կատարէր, մոգերուն դէմ ելաւ եւ թող չտուաւ .

ժողովուրդն ալ հաստ դասադասներով անոնց վրայ յարձակեցան եւ ազէկ մը ծեծելով ու զլուխնին պատառելով՝ վռնտեցին : Ասոր վրայ մոզպետը զարհուրեցաւ, եւ Հայոց հաւատքին հաստատութեան փորձն աչքովը տեսնելով՝ զանոնք մոլորեցրնելէն բուրովին յոյսը կտրեց . ուստի Ալասակ մարզպանն իրեն կանչելով՝ սաստիկ յանդիմանութիւն մը տալէն ետքն, ըսաւ, Թէ որ դուն ալ մեր կրօնն ընդունիլ չես ուզեր, բացայայտ ըսէ, ես մեծ մոզպետին ու Միհրաներսեհին կը դըրեմ՝ որ թագաւորը համոզեն զձեզ ձեր հաւատքին մէջ թող տալու, որպէս զի ձեր երկիրը շապականի եւ հարկերը չպակսին : Բայց անորէն Ալասակն՝ որն որ փառասիրութեան եւ իր Պարսկաստան մնացած որդւոցը սիրոյն համար հաւատքը սրտանց ուրացած էր, մոզպետը շատ խօսքերով հանդարտեցրնելու ջանաց, եւ Միւնեաց նահանգէն շատ զօրք ժողովելով՝ իր բանակը զօրացուց, որպէս զի կարող ըլլայ թագաւորին հրամանը բռնի կատարել տալ, եւ սկսաւ կէս մը ստրկով, կէս մը պատիւներ ու պարգեւներ տալով՝ իր կողմը մարդ վաստակիլ : Եւ որպէս զի ամէն կողմ կրակապաշտութիւնը շուտով տարածուի, նախարարաց տները մոզեր բաժնեց :

Է. Եպիսկոպոսներն երբ որ Ալասակին ըրած շարութիւնները տեսան, ճարտարութեամբ մը Հայոց բանակին ուրացեալներն ու հաւատքնին պահողներն իրարմէ բաժնեցին . ետքը խորհրդի ժողովուրցան, եւ Արդան սպարապետը բոլոր ուխտապահ իշխաններով կանչեցին եւ ըսին . Թէ որ Ալասակին ըրածներուն դուք ալ հաւան էք, նախ զմեզ մեռցուցէր, եւ ետքն ուղածնիդ ըրէք . իսկ թէ որ հաւան չէք, շուտով անոր շարութիւններուն վրէժն առէք : Նախարարները միաբերան Աստուած վկայ կանչելով հաստատեցին որ իրենք անոր ըրածներուն ամենէին հաւանութիւն չունին, եւ անմիջապէս պատրաստուցան որ ուրացեալներուն վրայ երթան եւ անոնց

բրաժ շարութիւններուն վերջ տան : Կէջերնէն Զոն-
դազան անունով սեպուհ մ'իրենց հետ միաբանիլ
չուզեց, ասոր համար բռնեցին քարկոծեցին, որն որ
ամենուն վրայ շատ մեծ ազդեցութիւն բրաւ : Ասկէ
ետքն երեք գունդ բաժնուած, մէկը դէպ ի արեւելք,
միւսն արեւմտեան կողմն, իսկ երրորդը դէպ ի հիւսիս
քալեց, որոնք Ասասկին բանակը մէջերնին առին ու
սաստիկ ջարդեցին. շատ երեւելի իշխաններ ալ ձեռք
ձգեցին ու բերդերու մէջ դրին. նոյնպէս Ասասկին ալ
բռնեցին, բայց անիկա եպիսկոպոսաց ոտքն իյնա-
լով եւ երգմամբ խոստանալով՝ որ անկէ ետքն ալ
հաւատքի դէմ բան մը չընէր ու քրիստոնէութիւնը
հաստատուն կը պահէ, նորէն ազատ թող տրուեցաւ :

Ասասկին գունդը ցրուելէն ետքը, նախարարնե-
րուն զօրքը Պարսից բռնած Հայաստանի բերդերուն
վրայ գացին, եւ զանոնք առնելով մէջինները սրէ ան-
ցուցին, ամէն կողմ մոգերը կէս մը ջարդեցին, կէս մը
ժախտեցին ու կրակատունները կործանեցին. եւ աս
ամէն պատերազմներու մէջ Ասասուած ալ իր օգնու-
թիւնը Հայոց գնդին վրայ յայանի կը ցուցընէր, մին-
չեւ անգամ մը երկու թշնամեաց բերդ անոնց առ-
ջեւը յանկարծ կործանեց, որով ան կողմի կրակա-
պաշտ բնակիչները, ձեռքովն իրենց կրակատուն-
ներն այրեցին ու քրիստոնէայ եղան :

ԱՂՈՒՆԵՒՅ ԵՐԿՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Ը. Պարսից զօրքն Աղուանից երկիրը կը յարձակին. Աղուաններն Հայոցմէ օգնութիւն կը խնդրեն: Ասամ Գնունին կուտանդնուպոլիս կ'երթայ կայսրմէ օգնութիւն խնդրելու համար: Թ. Վարդան Աղուանից օգնութեան կ'երթայ (450). Վասակ նորէն նենգութիւն ընելու կը սկսի: Ժ. Խաղկապ քաղաքին մօտ եղած պատերազմը, Պարսից յաղթուիլը: ԺԱ. Վարդան Աղուանից բերդերը Պարսիկներէն կ'առնու. հեթանոսութեան նշանները նոյն երկրէն բոլորովին կը ջնջէ եւ Հոնաց թագաւորին հետ դաշինք կը դնէ:

Ը. ՀԱՅԱՍՏԱՆ իր բարեպաշտ իշխաններուն քաղութեամբը կուպաշտութեան դէմ յաղթութիւններ կատարած ատենը, Հոնաց կողմն եզոյզ Պարսից զօրքն իրենց Սեբուխտ զօրապետին հետ Աղուանից երկիրն արշաւեցին, եւ սկսան եկեղեցիները կործանել, ու շատ մարդիկ բռնութեամբ իրենց աղանդը դարձուցին: Աղուաններն՝ որոնք տկար ազգ մ'ըլլալով՝ չէին կրնար Պարսից դէմ դնել, անմիջապէս իրենց տէրութեան հազարապետն եւ եպիսկոպոս մը Հայաստան խաւրեցին, եւ եղածներն իմացուցին: Հայոց իշխաններն աս բաներս լսելով՝ անոնց խորհուրդ տուին որ քիչ մը ատեն Պարսիկները խաղցրենն մինչեւ որ իրենք հնարք մը գտնեն, ու մէջերնին ժողովք ընելով՝ Գնունեաց Ասամ իշխանը՝ Ս. Յովսէփ կաթողիկոսին ու բոլոր Հայոց եպիսկոպոսներուն եւ իշխաններուն կողմանէ գրուած նամակով մը Թէոդոս կայսեր խաւրեցին, որուն մէջ Պարսից չարութիւններն եւ իրենց մինչեւ նոյն ժամանակն անոնց դէմ՝ ըրածները պատմելէն ետքը, կ'աղաչէին որ ինքն ալ իրենց օգնէ, եւ թող չտայ որ եկեղեցիները հեթանոսներէն անարգուին ու քրիստոնէութիւնը ջնջուի: Աս նամակին ամէն հայ իշխանները, նաեւ Վասակ Սիւնեաց իշխանն ալ իրենց կնիքը կոխած էին:

Թեև որոշ Հայոց նամակը կաշղալով՝ յօժարեցուսնոնց օգնութիւն խրկել. բայց դեռ պատրաստութիւն տեսած ասեմնն, իր կենացը վերջը հասաւ, որով ամէն բան աւրուեցաւ: Ասան զի իր յաջորդը Մարկիանոս՝ իր զօրապետներուն խորհրդովը Պարսից հետ դաշինք դրաւ եւ Հայոց օգնելէն բոլորովին ետ կեցաւ:

Թ. Հայերը թէպէտ եւ աս կողմանէ ունեցած օգնութեան յայտերնին ալ պարապի ելաւ, ամենեւին չէրան, այլ Աստուծոյ օգնութեանն ապաւինած՝ իրենց զօրքն երեք դունդ բաժնեցին. առաջինը Ներշապուհ Արծրունի իշխանին տուին եւ Ատրպատականի կողմը խաւրեցին որ Հայաստանին սահմանը պահպանէ, ու Պարսից ներս յարձակիլն արգելէ. երկրորդ դունդը Աարդան սպարապետին հետ Աղուանք յարձակող Պարսից վրայ խաւրեցին. իսկ երրորդը Ասասկ Սիւնիին ձեռքը յանձնեցին: Ասասկ՝ որն որ բոլոր սրտով Պարսից աղանդն ընդունած էր, թէպէտ եւ երեսանց ինքը զինքը քրիստոնեայ կը ցուցնէր, իր մտքին համաձայն նախարարներն իր քովը պահեց, եւ անմիջապէս Պարսից զօրապետին մարդ խաւրելով՝ ըսաւ թէ Ահաւասիկ Հայոց դունդն երեք բաժնեցի. մէկն իմ ձեռքիս տակն է, որուն թող չեմ տար ձեզի վնաս ընելու. երկրորդն Ատրպատականին սահմանը հեռացուցի, իսկ երրորդը՝ զորն որ Աարդան հետն առած քու վրագ կը բերէ, պզտիկ ու քիչւոր դունդ մըն է, ամենեւին մի վախնար, դիմացն ել եւ անտարակոյս կը յաղթես:

Թ. Մերուխտ Ասասկին աս խօսքերէն քաջալերուած՝ զօրքն առաւ եւ կուր գետէն ասդին անցնելով՝ մինչեւ Խաղխաղ քաղքին առջեւը յառաջացաւ. հոն Աարդանին զօրացը պատահելով՝ անոնց դիմացը ձակատեցաւ: Աարդան սպարապետն ալ իր զօրքը թշնամուցն դիմացը շարեց. բանակին աջ թեւն Արշաիր կամնարականին տուաւ, եւ անոր օգնական Գիմաքսեան Մուշ սեպուհը, ձախ թեւին վրայ դրաւ

Խորէն Խոռխոռունին, որուն օգնական տուաւ Հմայեակ Գիմարսեանն. իսկ իւրը բանակին կենդանոց կեցաւ : Զարնուելու նշանը տրուածին պէս՝ Հայերը սաստիկ քաջութեամբ թշնամոյն վրայ յարձակեցան, շատերը ջարդեցին, մնացածը ցրուեցին ու մինչեւ գետը հալածելով՝ անոնց մեծ մասը ջրին մէջ մղեցին ու խղզեցին : Ամենէն աւելի Արշաւիր Կամսարականն եւ անոր օգնական Մուշ սեպուհն առ պատերազմին մէջ քաջութեամբ կռուեցան, որոնք թշնամիներէն շատ մարդ ձեռքովին սպաննեցին. բայց զանոնք հալածելու աւտեննին, ճախճախոռտ տեղ մը պատահելով՝ ձիերնին տղմին մէջ մտան, ու չկրցան յառաջ երթալ. նոյն միջոցին թշնամիք վրանին հասան ու Մուշ սեպուհը զարկին սպաննեցին¹. իսկ Արշաւիր ձիէն վար ցաթքելով՝ անոնց վրայ վազեց ու շատերը մեռցուց, որոնց մէջ նաեւ Վուրկ քաջ իշխանը՝ Լինաց թագաւորին եղբայրն, ու մնացածը փախուց : Նոյն ատենը Վարդան սպարապետը տեսաւ որ քանի մը Պարսիկ իշխաններ գետին վրայէն նաւով կը փախչին. անմիջապէս Արշաւիր Կամսարականն ետեւնէն խաւրեց, որն որ գնաց գետեզերքէն ամէն նաւավարներն եւ իշխանները զարկաւ սպաննեց : Պարսիկներն այսպէս չարաչար յաղթուելով՝ ողջ մնացողներն անտառներու մէջ ու լեռներու վրայ փախան, որոնց ամէնն ալ Հայոց զօրքերը բռնեցին եւ սպաննեցին, այնպէս որ անոնց գունդը բոլորովին ջնջուեցաւ, եւ հազու թէ մէկ հոգի մը ձիով գետէն անցնելով՝ կրցաւ իրենց բուն բանակն երթալ եւ իրենց պատահած դժբախտութեան գոյժը տալ :

ԺԱ. Ասկէ ետքը Հայոց զօրքը Պարսից բանակին հարուստ աւարները ժողվեցին, եւ կուր գետէն ան-

¹ Եղիշէ ժամանակակից բազմներուն մէջ Հայոց կողմէն Մուշ սեպուհէն զատ աւտեննին մարդ մը չմեռաւ, կը պատմէ որ առ ամէն պատե-

դին անցնելով՝ ամէն Աղուանից բերդերը՝ զորոնք Պարսիկները բռնած էին, պատերազմու առին, բոլոր մոգերը ջարդեցին, ու կրակատունները կործանեցին: Աղուանից նախարարներն՝ որոնք ամուր լեռներու վրայ փախած էին, Հայոց զօրքին բրած յաղթու թիւնները տեսնելով՝ եկան անոնց հետ միացան, ու միաբան զացին ճորայ պահակը՝ կործանեցին, ու Հոնաց եւ անոնց սահմանակից ազգերուն հետ դաշինք գրին որ իրենք ալ Պարսից դէմ ելլեն ու Հայոց օգնեն:

Գ Լ Ո Ւ Խ Գ

Վ Ա Ս Ա Կ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը Ր Ա Ծ Ն Ե Ր Ը

ԺԲ. Վասակ Հայաստանը խռովելու եւ ապականելու կը սկսի. Վարդան սպարապետն Աղուանից երկրէն կը դառնայ եւ Սիւնեաց երկիրը կ'ասպատակէ: Պարսից թագաւորը նենգութեամբ Հայերը հանդարտեցընելու կ'աշխատի, եւ չկրնալով յաջողընել, անոնց վրայ զօրք կը խաւրէ: ԺԳ. Վասակին նենգաւոր կարգադրութիւնները: ԺԴ. Վարդան թըշնամույն դէմ ելլելու կը պատրաստուի. Առանձար սեպուհը Պարսից ասպատակներուն կը յաղթէ:

ԺԲ. Վ Ա Ս Ա Կ Սիւնեաց իշխանը Վարդանին Աղուանից երկիրն բրած յաղթութեան վրայ ամենեւին տեղեկութիւն չունենալով, սկսաւ նորէն իր սրտին մէջ ծածկուած չարութիւնը յայտնել ու Հայաստան սակն ու վրայ ընել: Շատ ամուր բերդեր կործանեց, գեղերն այրեց, ու խտապահ նախարարներուն ընտանիքը բռնեց իր երկիրն (Սիւնեաց) բերդերուն մէջ դրաւ, եկեղեցիները փլցուց ու քահանաները բանտ դրաւ: Աս ամէն շարեաց գոյժը Հայերն անմիջապէս Վարդան սպարապետին հասցուցին, եւ անոր ծանուցին որ Վասակին

Ի Ասիկա Կովկաս լեռանց տուած էր, Հոնաց Պարսկաստանն յարձակիլն արգելելու տիկ ամուր բերդ մըն էր, զորն համար: որ Պարսից թագաւորը շինել

հետ շատ ուրիշ նախարարներ ալ միաբանած են, իսկ Ատրպատականի կողմն եղող զօրքն ուխտապահներուն հետ միաբան է : Վարդան առանց խուսկերու շատ մը զօրքը ժողովեց ու ճամբայ ելաւ, եւ երկու օրուան մէջ Հայաստան հասաւ, ան ժամանակն որ Վասակ Հայոց զնդին Աղուանից երկիրն բրածնեբուն լուրն առած ըլլալով՝ սաստիկ շիտթութեան մէջ ինչպէս էր. որն որ երբ որ Վարդանին գալն ալ լսեց, ամէն բռնած գերիներն ու յափշտակած հարստութիւնները թող տալով՝ զիշերանց փախաւ իր երկիրը զնաց : Բայց որովհետեւ ձմեռը հասած էր, եւ Վարդան բաւական պաշար չունենալով՝ չէր կրնար բոլոր զօրքը մեկտեղ պահել, անոնց մեծ մասը տեղերնին խաւրեց, եւ հրաման տուաւ որ գարնան նորէն իր քովը ժողովուին : Իսկ քովը պահած զօրքէն շատ զնդեր Սիւնեաց երկիրը խաւրեց, որոնք շատ տեղեր ասպատակեցին, եւ ուրացեալներն այնչափ նեղը ձգեցին՝ որ ուրիշ կերակուր չկրնալով գտնել, սատկած իշու ու ձիու միս սկսան ուտել : Եպիսկոպոսներն երբ որ աս խեղճութիւնները տեսան, ժողովողեան պատուէր տուին որ բոլոր քաղոց ամիօք պաք պահեն եւ Աստուծոյ ազաչեն որ իրենց ողորմի ու օգնէ : Եւ որպէս զի Պարսից թագաւորին սիրան ալ շարժեն որ բրած չարիքներէն ետ կենայ, գերի բռնուած Պարսիկ մ'առջեւնին կանչեցին, եւ եղած վնասներն ու Վասակին բրածները մէկիկ մէկիկ անոր պատմելով՝ Պարսկաստան խաւրեցին որ երթայ Յաղկերտին առջեւը զնէ : Յաղկերտ երբ որ աս մարդէն Հայաստանին խեղճ վիճակն իմացաւ, դրսէն քիչ մը փոխուիլ ցուցուց. անմիջապէս ամէն չարչարանքի մէջ եղող քրիստոնէաներն ազատեց, ու հրաման տուաւ որ համարձակ իրենց կրօնը պաշտեն. քահանաներուն պատուէր խաւրեց որ եկեղեցիներուն մէջ իրենց պաշտօնն անխափան կատարեն. Հայաստան ալ հրովարտակ մը խրկեց, եւ ամենուն ընդհանուր թողութիւն եւ քրիստոնէութեան

Թեան կատարեալ ազատութիւն տուաւ : Աս ամէն բաներուն վախճանը Հայերը հանդարտեցընել էր , որպէս զի անկէ ետքը կարող ըլլայ զիւրութեամբ իր կամքը կատարել : Բայց երբ որ տեսաւ որ անոնք աս խարէական խոստմունքներով ու շնորհքներով չխաբուեցան ու հաստատուն կեցան , ան ատեն ետքի փորձի ձեռք զարկաւ , այսինքն զէնքի զօրութեամբ ուղեց Հայերը նուաճել եւ իր ուզածը բռնի կատարել տալ . ուստի աս վախճանաւ մեծ բանակ մը եւ շատ փղեր պատրաստել տուաւ , որոնց վրայ Միհրներսէճ իշխանը զօրապետ դնելով՝ Հայաստան խաւրեց :

ԺԳ. Եկաւ Միհրներսէճ Փայտակարան քաղաքը բանակը դրաւ , եւ զՎասակ իրեն կանչելով՝ բոլոր զործքն անոր յանձնեց : Աս անօրէն իշխանն անմիջապէս նախարարներուն մէջէն իրեն կողմն եղողներն իրենց զօրքովը քովը ժողվեց , որոնց գլխաւորներն էին , Տիրոց Բագրատունի , Արտակ Ռշտունի , Գազիշոյ Խոռխոռունի , Գիտ Վահէուունի , Մանէճ Ապահունի , Արաէն Գաբեղեան , Ներսէճ Ուրծացի , Ընջիւղ Ակէացի , Վարազշապուհ Պալունի , եւ ասոնցմէ զատ շատ ուրիշ իշխաններ ու սեպուհներ : Բոլոր Սիւնեաց նահանգին բնակիչները Պարսից աղանդը դարձուց եւ անոնցմէ մեծ դունդ մը ժողվեց : Աս բաներս ընելէն ետքն ամէն կողմ նամակներ գրեց , ու ստութեամբ ամենուն հրատարակեց որ Թագաւորը քրիստոնէութեան ազատութիւն շնորհեց . բանի մը չար եւ անպիտան քահանաներու ձեռքով ալ միամիտ ժողովուրդը խաբեց : Եւ որպէս զի Հինք կարող չըլլան Հայոց օգնել , անոնց սահմանն անհամար Պարսից զօրք խաւրել տուաւ . Միհրներսէճին ալ Վարդանին զօրութեանը վրայ ճիշդ տեղեկութիւն տուաւ , որն որ ամէն բան իմանալէն ետեւ իր զօրքը Մուշկան Նիսալաւուրտ իշխանին յանձնելով՝ Հայոց վրայ խաւրեց :

ԺԷ. Իսկ Վարդան սուրբ զօրապետը , Թէպէտ եւ Թշնամույն ահագին զօրութիւնն եւ իր ակարութիւնը

կը տեսնէր, բայց բոլոր յոյսն Աստուծոյ վրայ դրած
 ըլլալով՝ պատրաստուեցաւ որ անոնց դէմ ելլէ: Աւտաի
 իրեն հետ միաբանած նախարարներն ու զօրքն՝ որոնց
 թիւը 66,000 էր, Արասաշատ քաղաքը ժողովեց, ուրա-
 ցեալ նախարարներուն տեղ՝ ամէն մէկուն ազգական-
 ներէն անոնց ցեղերուն վրայ նոր իշխաններ դրաւ, եւ
 անկէ յառաջ անցնելով՝ Արասազու գաշտին վրայ
 բանակը կեցուց: Հոն եկան նաեւ Ս. Յովսէփի կաթո-
 ղիկոսն եւ Ս. Ղեւոնդ քահանան ուրիշ շատ քահա-
 նաներով եւ եկեղեցականներով՝ որպէս զի իրենք ալ
 աս հոգեւոր պատերազմին գործակից ըլլան: Սպա-
 րապետը զօրքը կարգի դնելէն ետքն, անոնց յոր-
 դորական խօսք մը խօսեցաւ, որ Աստուծոյ սիրոյն
 եւ իրենց հաւատքին պաշտպանութեան համար քա-
 ջութեամբ պատերազմին, եւ անոնց առատ ուժիկ
 բաժնելով՝ կ'ուրախացնէր: Նոյն ատենը յանկարծ լուր
 հասաւ որ Պարսից զօրքը Հեր եւ Զարեւանդ գաւառ-
 ները հասեր բանակնին դրեր են, եւ անոցմէ շատ
 ասպատակ գնդեր ասդին անդին կ'երթան աւար կ'առ-
 նուն ու կ'աւրջարկեն: Վարդան անմիջապէս Առանձար
 Ամատունի քաջ սեպուհը 2000 զօրքով ասպատակնե-
 րուն վրայ խաւրեց, որն որ գնաց քաջութեամբ զար-
 կաւ, անոնցմէ շատերը ջարդեց, մնացածն իրենց բուն
 բանակը փախուց, եւ ինքը յաղթանակաւ ետ դար-
 ձաւ: Աս փոքր յաղթութեան վրայ Հայոց զօրքն
 աւելի եւս հոգի առին եւ արիացան եւ աներկիւղ
 պատերազմելու պատրաստուեցան:

Գ Լ ՈՒ Խ Ե

Վ Ա Ր Գ Ա Ն Ը Ն Ց Պ Ե Տ Ե Բ Ը Զ Մ Ը

ԺԵ. Վարդան Տղմուշ գեորն քովը Պարսից Տեա կը զար-
նուի եւ խառնուորդին մէջ կը մեռնի (451): ԺԶ. Պասե-
րազմին մէջ մեռնողներուն թիւը:

ԺԵ. ՄԻԼԲԱՆԵՍԸ նախարարներուն տեսած պա-
տրաստութիւնը՝ Վասակին ու Պարսից զօրապետին
սիրար վախ ձգեց, անոր համար սկսան նորէն խորհա-
կան խոստմունքներու ձեռք զարնել, որպէս զի զանանք
իրարմէ բաժնեն եւ դիւրաւ յաղթեն. բայց երբ որ
տեսան որ նախարարներն իրենց խօսքերուն մտիկ չեն
ըներ, ան ատեն իրենք ալ բոլոր զօրութիւննին մէկ-
ատեղ բերին, եւ անոնց վրայ քալեցին: Պատերազմին
առաջին իրիկունը Ս. Ղեւոնդ Ս. Յովսէփին հրամա-
նովը՝ զօրաց հոգեւից ճառ մը խօսեցաւ. առտուան դէմ
պատարագ մատուցուեցաւ եւ ամէնը հաղորդութիւն
առին, չմկրտուածներն ալ մկրտուեցան: Ասկէ ետքն
սպարապետը նախարարներուն հետ պատերազմական
խորհուրդ ընելով՝ զօրքը չորս դունդ բաժնեց եւ Տրդ-
մուտ գետին քով թշնամեցն դիմացը ճակատեցուց:
Առաջին զնդին վրայ զօրապետ դրաւ Ներշապուհ
Արծրունին եւ անոր օգնական Մոկաց իշխանն ու
Միհրջապուհ Մարդպետը, եւ ճակատին կենդրոնը
կեցուց. երկրորդ դունդն աջ թեւը դրաւ, որուն զօ-
րապետութիւնը խորէն խոստումնին տուաւ, եւ
անոր օգնական Ներսէս Բաջբերունին. երրորդ դունդն
ալ թաթուլ Վանանդացիին եւ անոր օգնական Տա-
ճատ Գնթունիին հրամանին տակ, պահեստի համար
ճակատին ետեւը կեցուց. իսկ ինքն Արշաւիր Կամա-
րական եւ Փափաք Առաւելենեան իշխաններուն եւ
իր Համազասպեան եղբորը հետ՝ չորրորդ դունդարտակով
ճախ թեւը կեցաւ, որուն դիմացն ուրացեալ Սիւնեաց
գունդը կեցած էր, եւ նշան տուաւ որ զարնուելու

սկսին: Հայոց զօրքը սաստիկ քաջութեամբ իրենցմէ չորեքպատիկ աւելի թշնամոյն ու կատաղի փղերուն վրայ յարձակեցան, և Տղմուտ գետէն անդին անցնելով՝ սկսան զանոնք ջարդել: Այն ժամանակը վարդան սպարապետը տեսաւ որ ձախ թեւը տկարանալու սկսեր է. անմիջապէս բոլոր զօրութեամբ նոյն թեւին հետ պատերազմող Պարսից աջ թեւին վրայ ինկաւ, և զանիկա խորտակելով՝ փղերուն ետեւը փախուց. ստոր վրայ թշնամոյն ճակատին կարգը շփոթեցաւ, և շատերն սկսան ցրուիլ ու փախչել: Մուշկան Ախալաուրաւ իր բանակին քայքայիլը տեսածին պէս, իր քովն եղող պահեստի զնգերն ու փղերն առած՝ վարդանին գումարտակին վրայ յարձակեցաւ, և զանիկա ամէն կողմանէ պաշարեց, ուր Ս. վարդան երկայն ատեն քաջութեամբ բիւրաւոր թշնամոյն գէմ պատերազմէն ետքը՝ զարնուեցաւ ինկաւ, և մարտիրոսութեան պսակն ընդունեցաւ: Իսկ միւս զնգերը մինչեւ արեւուն մտնելը պատերազմեցան և յաղթութիւնն անորոշ մնաց. բայց որովհետեւ սպարապետին կորսնցուցած էին, և չկար մէկն որ գլուխ ըլլար և զիրենք կառավարէր, զիչեր եղածին պէս սկսան ասդին անդին ցրուիլ, և անասիկ բերդերու և ամուր գաւառներու մէջ մտան ամրացան:

ԺԶ. Աս պատերազմին մէջ նահատակուող իշխաններն են՝ վարդան Մամիկանեան սպարապետէն զատ, Խորէն Խոռխոռունի, Արտակ Պալունի, Տաճատ Գնթունի, Հմայեակ Գիմարսեան, Ներսէ՛ Քաջբուսունի, վահան Գնունի, Արսէն Ընծայեցի, Գարեգին Արուանցատեան և իր երկու եղբայրներն. սասոնցմէ զատ 285 ալ հասարակ զինուոր. 740 հոգի ալ ասդին անդին ցրուածներէն կամ բերդերու մէջ ապաւինածներէն ձեռք ինկնէ և սպաննուեցան, որոնց ամէնուն մէկտեղ թիւն՝ իշխաններն ալ մէկտեղ 1036 հոգի: Իսկ Պարսից կողմէն մինակ պատերազմին մէջ 3544 հոգի մեռան, որոնցմէ 9 հոգի մեծ իշխաններ էին:

Գ Լ ՈՒ Խ Թ Թ

Ն Տ Ր ՈՐ Մ Ի Զ Գ Մ Ե Բ Զ Պ Ա Ն Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Գ Ա Լ Ը

ԺԷ. Վասակ Հայաստանի բերդերն առնելու կ'աշխատի. շատ տեղեր կ'ապականէ եւ Ս. Յովսէփ կաթողիկոսն ու Ս. Ղեւոնդ քահանան կը բռնէ: Հայ նախարարները զանազան տեղ Պարսից կը յաղթեն ու Հոնաց թագաւորն անոնց դէմ կը հանեն: Ատրորմիզդ իշխանը Հայաստանի մարզպան կը դրուի: ԺԸ. Ս. Յովսէփ ու Ս. Ղեւոնդ Պարսկաստան կը խրկուին. Հայոց նախարարները Յազկերաին կ'երթան. Վասակ իր ըրած շարութիւններուն համար մահապարտաց բանտը կը դրուի ու հոն շարաշար կը մեռնի (452):

ԺԹ. ՍՈՒՇԿԱՆ պատերազմին այսպէս վախճան առնենալուն վրայ շատ տրտմեցաւ, եւ չէր գիտեր ինչ ընէ. բայց Վասակ զինքը քաջալերելով՝ խորհուրդ տուաւ որ ժողովուրդը՝ քրիստոնէութեան ազատութիւն խոստանալով խաբէ ու նուաճէ, իսկ բերդերը պատերազմաւ առնու եւ մէջի զօրքերը հնազանդեցնէ: Պարսիկ զօրապետն աս խորհրդեան անսաց, եւ զՎասակ հետն առած՝ նախ ամուր բերդի մը վրայ դնաց, ուր որ գունդ մը հայ զօրք եւ շատ քահանաներ ապաւինած էին, եւ սաստիկ պատերազմեցաւ, բայց մէջիններն աղէկ պաշտպանելով՝ բան մը չկրցաւ ընել. ուստի նորէն սուտ խոստումներ սկսաւ ընել: Ան ատեն Բակ անունով մէկը պարսպին վրայ ելաւ եւ Վասակին ըրած խաբէութիւններն ու վնասներն երեսը զարնելով՝ նոյն գիշերը 700 հօգի հետն առած՝ ելաւ դնաց: Իսկ ներսը մնացողներուն կերակուրը հատնելով՝ անձնատուր եղան, որոնցմէ Վասակ 213 հօգի անմիջապէս սպաննել տուաւ: Բայց Ս. Յովսէփ կաթողիկոսն ու Ս. Ղեւոնդ, ուրիշ քանի մ'եկեղեցականներու հետ՝ Վասակին ըրածներուն դէմ Յազկերաին բողոքեցին, անոր հա-

մար Մուշկան թող շտուաւ որ զանոնք ալ սպաննեն, այլ երկու սուրբերը ծեծել տուաւ ու բռնեց քովը պահեց, իսկ միւս քահանաները տեղերնին խաւրեց: Նոյնպէս ուրիշ ամուր բերդերն ալ՝ Պարսկաստանէն նոր զօրք բերել տալով՝ սաստիկ պաշարեց ու զարկաւ, բայց մէջինները զիրենք ալէկ պաշտպանելով՝ ամէն տեղ թշնամւոյն չարաչար յաղթեցին, անոնց մեծ մասը ջարդեցին, մնացածը փախուցին: Ասոր վրայ Ասսակ սաստիկ բարկացաւ, եւ սկսաւ բերդ չունեցող տեղերն ասպատակել, գեղերն այրել, մարդիկները ջարդել ու գերի տանիլ:

Տմորեաց գաւառն ամրացած հայ նախարարներն աս ամէն շարիքները լսելուն պէս, ալ չուզեցին անգործ կենալ, այլ զօրքերնին առած՝ դուրս ելան ու Պարսից երկիրը յարձակեցան. շատ գաւառներ ասպատակեցին, քաղաքները կողոպտեցին եւ այրեցին, ու մարդիկը գերի բռնած՝ իրենց ամրոցները բերին: Նոյնպէս Խաղտեաց Պարսար լեռներուն վրայ եղող իշխաններն, ուր Հմայեակ Ս. Աարդանին եղբայրը գլուխ եղած՝ ցրուած զինուորները քովը ժողված էր, երբ որ տեսան որ Պարսիկներն արձակ համարձակ ամէն կողմ կը յարձակին ու կրցած տեղերնին կը թալլեն, կ'այրեն, եւ եկեղեցիները կը կործանեն, իրենք ալ միաբան իրենց ամրութիւններէն դուրս ելան ու ցրուած Պարսիկներէն շատ մարդ սպաննեցին, եւ աս կուրսներուն մէջ միայն Հմայեակ իշխանը շատ քաջութիւններ բնելէն ետքը զարնուեցաւ մեռաւ. իսկ միւս զօրքերը փախչող թշնամիներուն ետեւէն ինկան ու հալածեցին, եւ շատ տեղեր ասպատակներէն մաքրեցին: Ասոր վրայ Պարսիկները վախցան եւ ասդին անդին յարձակելէն դադրեցան: Իսկ Արցախի անտառներուն մէջ ապաւինած հայ զօրքը Հոնաց թագաւորին դեսպան խաւրեցին եւ իրենց թշուառ վիճակն անոր իմացրնելով՝ խնդրեցին որ ինքն ալ դրած դաշինքին համաձայն Պարսից դէմ ելլէ: Թագաւորն անմիջապէս

ահագին բանակ մը կազմեց ու յանկարծ Պարսից երկիրն արշաւեց. շատ գաւառներ այրեց, կործանեց ու մարդիկը ջարդեց ու գերեց, որով Յազկերտ շատ նեղն ինկաւ ու շփոթեցաւ, մանաւանդ երբ որ իր Հայաստանի բանակին կրած մեծ վնասին լուրն ալ առաւ: Ուստի աս ամէն չարեաց շուտով վերջ մը տալու համար, բոլոր իր զօրքը Մուշկան Նիսալաւուրտին հրամանին տակ Հոնաց դէմ խաւրեց, Հայոց վրայ ալ Ատրորմիղդ իշխանը մարզպան դրաւ, հրաման տալով որ ամէնուն հետ սիրով վարուելով՝ երկիրը խաղաղցընէ:

ԺԸ. Եկաւ Ատրորմիղդ եւ Հայոց խաղաղութեան աւետիսը բերաւ. եպիսկոպոսներուն ու քահանաներուն պատուէր խաւրեց որ իրենց պաշտօնը կատարեն. միայն Ս. Յովսէփ կաթողիկոսը, Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսը, Ս. Ղեւոնդ քահանան եւ ուրիշ քանի մը քահանաներ շղթայով կապած՝ Յազկերտին խաւրեց: Հրաման տուաւ որ գոցուած եկեղեցիները բացուին, ամէն մարդ իր կրօնը համարձակ պաշտէ, բռնութեամբ ուրացածներուն հրամայեց որ նորէն իրենց առաջին հաւատքը դառնան. խոստացաւ ալ որ հարկերը կը թեթեւցընէ, եւ Հայաստան կեցող Պարսից զօրքը քիչցուց: Աս ամէն բան տեսնելով փախչող եկեղեցականներն եւ աշխարհականներն, իրենց տեղերը դարձան. իսկ բերդերու մէջ ամրացած կամ հեռու տեղեր գացած նախարարներն երբ որ տեսան որ Հայաստան խաղաղացաւ, Ատրորմիղդին իմացուցին որ կ'ուզեն Յազկերտին երթալ, եւ անոր հետ Հայաստան էրգի խոթելու համար անձամբ խօսիլ, եւ եղած վնասներուն պատճառն անոր իմացընէլ: Մարզպանն անոնց թաղաւորին կողմանէ նամակներ խաւրեց եւ երգմամբ հաստատեց որ ամենեւին իրենց վնաս մը չհասնիր. ասով նախարարները քիչ մը վստահութիւն ունեցան եւ ելան Յազկերտին դացին: Բայց Ղասակ անոնցմէ յառաջ Պարսկաստան երթալով ամէն բան իր ուղածին պէս պատ-

մեց, որուն թագաւորը պատասխան տուաւ թէ երբ որ քրիստոնեայ իշխաններն ալ հասնին, քննախնայ երկու կողմանէ ալ կը լսեմ ու դատաստան կ'ընեմ: Ուստի երբ որ իշխանները Պարսից դուռը հասան, Յագկերտ Միհրնէրսեհին յանձնեց որ ամէն կլամբաներն ու պատահած չարիքներուն պատճառներն աղէկ մը քննէ: Միհրնէրսեհ դատաստանի նստաւ, որուն մէջ Աստակին ամէն բրածներն, սաղին անդին Պարսից դէմ օգնութիւն խնդրելու համար գրած նամակները, խարէութեամբ այնչափ անմեղներուն մահուան եւ քաղաքներուն ու գեղերուն կործանման պատճառ բլլալն երեւան ելաւ: Ան ստան թագաւորին հրամանովը բոլոր պատիւներէն հանուեցաւ եւ անտրդութեամբ մահապարտներուն բանար դուռեցաւ, ուր սաստիկ հիւանդութենէ մը բռնուելով՝ բոլոր անդամները լուծուեցան ու փտակեցան, եւ մարմինն որդնոտեցաւ. եւ այսպէս չարաչար մահուամբ մեռնելով՝ իր ազգին հասցուցած թշուառութիւններուն սոսկալի պատիժն առաւ:

ԳՆՆՈՒՆ Է

ՎԵՒՈՆԳԵԱՆԾ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆԸ

ԹԹ. Յազկերտ նախարարները շղթայի կը գարնէ, եւ կապեալ քահանաներուն հետ Նիւշապուհ քաղաքին մէջ կը բանտարկէ: Ղեւոնդեանք Նիւշապուհին քով կը նահատակուին (454): Իրենց մարմիններուն վրայ երեւցած տեսիլն եւ անոնց քրիստոնէից ձեռքն անցնիլը: Ի. Նախարարաց կրած նեղութիւններն. իրենց բանտէն ազատիլն ու Հայաստան դառնալը (461):

ԹԹ. ՅԱԶԿԵՐՏ ամէն իր քովն եկող հայ նախարարներն՝ որոնց երդմամբ խոստացած էր որ ամենեւին մնաս չհասցընէր, շղթայով կապել տուաւ, եւ կապեալ քահանաներուն հետ Նիւշապուհ քաղաքը բանտարկեց: Աս բանիս վրայ Բէլ անունով քրիստոնեայ Հոն մը շատ արտմեցաւ եւ անմիջապէս գնաց Քուշանաց թագաւորին Հայոց Պարսիկներէն կրած նեղութիւններն եւ նախարարներուն խեղճ վիճակը պատմեց: Թագաւորը Պարսիցմէ աս ըրածներնուն վրէժէն առնելու համար, անոնց երկիրն արշաւեց, Յազկերտին զօրացը մեծ մասը ջարդեց, շատ գաւառներն ասպատակեց ու գերեց գերփեց. ասոր վրայ Պարսից թագաւորը շատ նեղը մտաւ եւ խորին տրտմութեան մէջ ինկաւ: Բայց անօրէն մոգերն անոր տրտմութիւնը փարատելու համար ըսին թէ աս գլուխդ եկած չարեաց պատճառը քրիստոնեաներն են, զորոնք ողջ պահելովդ աստուածները քեզի դէմ բարկացան եւ աս պատիժը տուին. ուստի թէ որ քովի քրիստոնեաներդ մեռցընելու ըլլաս, աստուածները կը հաշտուին, ու թշնամիներուն կրնաս յաղթել: Անօրէն թագաւորն ասոր հաւատալով՝ անմիջապէս իր բանակին մէջ եղող Սամուէլ եւ Աբրահամ քահանաները նահատակել տուաւ. Գենշապուհ իշխանն ալ Նիւշապուհ խաւրեց որ հոն բանտարկուած քահանա-

ները մեռցրնէ : Գենշապուհ նոյն տեղը հասնելով՝ լսեց որ քաղքին երեւելի մոգպետը՝ քրիստոնէից վրայ ծագած երկնաւոր լոյսը տեսեր՝ ու քրիստոնէաց եղեր է . շուտ մ'աս բանս թագաւորին իմացուց եւ անոր հրամանովը զանիկա հեռու տեղ մը քշեց ու խորունկ փոսի մը մէջ նետել տուաւ : Ետքը բնատարկեալներն՝ որոնք էին Ս. Յովսէփ կաթողիկոսը , Ս. Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը , Ս. Ղեւոնդ , Ս. Մուշէ , Ս. Արսէն քահանաներն եւ Քաջաջ սարկաւազը , քաղքէն հեռու անապատ տեղ մը տարաւ եւ տանջելով նահատակից : Եւ որպէս զի քրիստոնէաներն անոնց սուրբ մարմինները չգողնան , քովերին պահապաններ դնել տուաւ : Բայց երեք օր ետքը գիշերատեն սուրբերուն մարմնոյն նետուած տեղն ահագին որսոման ձայներ սկսան ելլել , ու պահապաններն սկսան տանջուիլ , որոնք սարսափած՝ թող տուին փախան : Ասոնց մէջ ծածուկ քրիստոնէաց մ'ալ ըլլալով՝ միւսներուն փախչելէն ետեւ դնաց ուրիշ 10 քրիստոնէաց ալ կանչեց եւ անոնց հետ սուրբերուն մարմինները ժողվեց , զատ զատ մաքուր լաթերու մէջ պլեց եւ բերաւ կապուած նախարարներուն եւ ուրիշ քրիստոնէաներուն բաժնեց :

Ի. Իսկ առաքինի նախարարներն երկայն ատեն բանտին վիշտերն Աստուծոյ սիրոյն համար համբերութեամբ քաշեցին , մինչեւ որ Շղոմշապուհ իշխանն՝ որն որ անոնց ազնուական բնութիւնը տեսնելով՝ վրանին շատ սէր կապած էր , շատ ետեւէն իյնալով եւ պարսիկ իշխանները միջնորդ բռնելով՝ Յազկերար հաւանեցուց ու հրաման առաւ որ զանոնք բանտէն հանէ , եւ իրենց պատիւը նորէն տուաւ . թագաւորական գանձէն ալ ամենուն ռոճիկ կապեց : Քիչ մը ետքը Յազկերար զանոնք առջեւը բերել տուաւ , եւ սիրով խօսելով՝ խոստացաւ որ ամէնն ալ իրենց երկիրը խաւրէ : Բայց աս խոստումը դեռ չկատարած՝ ինքը մեռաւ եւ իրեն յաջորդեց իր պզտիկ որդին Պերոզ ,

որն որ զանազան պատերազմներու եւ խռովութիւններու պատճառաւ հինգ տարի ալ զանոնք Պարսկաստան պահեց, եւ իր թագաւորութեան վեցերորդ տարին ամէնը մէկտեղ պատուով իրենց երկիրը խաւրեց . Ատրվշնասպ պարսիկ իշխանն ալ Հայոց մարդպան անուանելով՝ իրենց հետ մէկտեղ Հայաստան խրկեց .

Բարեպաշտ նախարարներն իրենց ցանկալի հայրենիքը գալով՝ զանիկա բոլորովին փոխուած եւ խեղճ վիճակի մը մէջ գտան : Ամէն կողմ՝ կռապաշտութիւնն ուրացեալ իշխաններուն եւ Պարսից մեծերուն ձեռքովը տարածուած ու հաստատուած էր, իսկ քրիստոնէութիւնը գրեթէ կորսուածի պէս : Ժողովուրդն եւ ուրացեալ նախարարներն իրենց առաջին քաջութենէն թուլացած՝ միայն աշխարհային զբօսանքներու հետ կ'ըլլային, այնպէս որ նոյն իսկ Պարսիկներն սկսած էին Հայերը նախատել՝ վատ եւ անպիտան ազգ անուանելով : Աս բաներն առաքինի նախարարներուն սրտին մեծ ցաւ եղաւ, եւ սկսան միաբան աշխատիլ ու ջանալ որ քրիստոնէութիւնը նորէն պայծառացնեն, եւ մեղկացած ազգին նոր հոգի ու նոր եռանդ մը տան :

Գ Լ Ո Ւ Խ Ը

Վ Ա Հ Ա Ն Մ Ը Մ Ի Կ ՈՒՆ Ե Ա Ն Ե Ի Ի Բ Պ Ա Ր Ս Ի Ց Դ Է Մ Ը Բ Ա Ծ Պ Ա Տ Ե Բ Ա Ջ Մ Ն Ե Բ Ը

ԻԱ. Վահան Մամիկոնեանին Հայաստան գալն, եւ իր վրայ եղած ամբաստանութիւնները սուտ հանելու համար հաւատքն ուրանալը: ԻԲ. Քրիստոնեայ նախարարները կրօնի պաշտպանութեան համար Պարսից դէմ կ'ելլեն, Վահան ալ անոնց հետ կը միանայ: Ատրվէնասպ մարզպանն Հայաստանէն կը փախչի. Սահակ Բագրատունին Հայոց մարզպան ու Վահան սպարապետ կը դրուի (481): ԻԳ. Ատրվէնասպ Հայոց վրայ կու գայ, Վահան իր Վասակ եղբայրն անոր դէմ կը խաւրէ: ԻԴ. Ակոռի գեղին քովը Վասակ Պարսից հետ կը զարնուի ու կը յաղթէ: ԻԵ. Վահան բոլոր նախարարները կը հրաւիրէ որ գան իրեն հետ միանան ու միարան Պարսից դէմ ելլեն: ԻԶ. Ատրներսէճ իշխանը զօրքով Հայոց վրայ կու գայ, Վահան անոր դէմ կ'ելլէ ու կը յաղթէ: ԻԿ. Պարսից Վրաստան յարձակիլը, Վահանին Վրաց օգնութեան երթալն եւ անոնց թագաւորին խաբէութեամբն յաղթուիլը: Սահակ Բագրատունին եւ Վասակ՝ Վահանին եղբօրը մահը: ԻԸ. Վահան Տայոց դաւառը կը քաշուի, Միհրան Պարսից զօրապետը կ'ուզէ անոր հետ հաշտութիւն բնել: ԻԹ. Երկու Վրաց խաբէութեամբը Հայոց զօրքին մէկ մասը Վրաստան կ'երթայ: Լ. Չարմհր Հազարաւուխա Հայոց դէմ կը խըկուի. Վահան Դուին քաղքին մտա անոր կը յաղթէ ու խաղաեաց կողմերը կը քաշուի: Շապուհ Միհրանեան Հայաստանի մարզպան կը դրուի (482—483): ԼԱ. Շապուհ Վահանը բռնելու կ'աշխատի. Վահան Երիզա գեղին քով անոր կը յաղթէ: Շտեայ գեղին կռիւը, Վահանին արտաքոյ կարգի արիութիւնը: Գրիհոն Սիւնիին մահը: ԼԲ. Պերողին մեռնին եւ Շապուհին Պարսկաստան երթալը:

ԻԱ. Վ Ա Հ Ա Ն Մ Ա միկոնեան Ս. Վարդան սպարապետին Հմայեակ եղբօրը մեծ սրգին էր. տղայութեան ատենն իր եղբայրներուն հետ Պարսից ձեռքն ինկաւ, բայց Գուգարաց Աշուշայ բղէշին միջնորդութեամբն ազատելով՝ Վրաց երկիրը մեծցաւ, եւ իր բարեպաշտ մօրմէն աղէկ քրիստոնէի կրթութիւն

առաւ : Երբ որ Հայաստանին խռովութիւնները քիչ մը դադրեցան ու նախարարները Պարսկաստանէն ետ դարձան, Վահան ալ Հայաստան եկաւ, եւ իր քաջութեամբն ու իմաստութեամբը Պարսից տէրութեան մեծամեծ ծառայութիւններ բնելով՝ ամէն Պարսիկ իշխաններուն եւ նոյն իսկ Պերոզ թագաւորին սիրելի եղաւ : Ուրացեալ նախարարներն՝ որոնք միշտ կը ջանային քրջատոնեայ իշխանները ջնջել, Վահանին նախանձելով՝ զանիկա թագաւորին աչքէն հանելու համար վրան ամբաստանութիւն բրին որ կը ջանայ Հայերն ապստամբեցընել : Վահան աս ամբաստանութիւնը սուտ հանելու համար, ելաւ Պարսկաստան գնաց հաւատքն ուրացաւ, ու թագաւորէն շատ պատիւ ու պարգեւներ առաժ՝ Հայաստան դարձաւ : Բայց նոյն օրէն խղճէն սաստիկ տանջուելով եւ խորին տրտմութեան մէջ իյնալով՝ հնարք մը կը մտածէր որ նորէն քրիստոնէութեան դառնայ :

ԻԲ. Նոյն ատենները Վրաց Վախթանկ թագաւորը Պարսիցմէ ապստամբեցաւ, ու Վրաստան մեծ խռովութեան մէջ ինկաւ : Հայոց բարեպաշտ իշխաններն՝ որոնք նոյն ժամանակը Պարսից զօրքին հետ Աղուանք պատերազմի գացած էին, աս բանս յարմար առիթ համարելով՝ մտքերնին դրին որ Հայաստան դառնալուն պէս՝ իրենք ալ Պարսից ու զիրենք անարգող ուրացեալներուն դէմ ելլեն եւ Հայաստանին մէջէն կռապաշտութիւնը բոլորովին ջնջեն, եւ կամ իրենք ալ իրենց հարցն ու հաւերուն պէս քրիստոնէութեան համար կեանքերնին տան : Պատերազմը լմննալէն ետեւ, եկան Շիրակ գաւառը բանակնին դրին, եւ մէջերնէն քանի մը հոգի անմիջապէս գացին Վահան Մամիկոնեանին իրենց խորհուրդը յայտնեցին : Վահան իսկզբան չուզեց անոնց հետ միաւ բանիլ, բայց երբ որ տեսաւ որ միայն քրիստոնէութեան պաշտպանութեան համար կ'ուզեն աս բանիս ձեռք զարնել, անոնց հաւանեցաւ. նոյնպէս շատ

ուրիշ բարեպաշտ նախարարներ ալ աս խորհուրդը լսելով՝ անոնց հետ միաբանեցան, եւ խօսքերնին հաստատուն պահելու համար ամէնն ալ աւետարանին վրայ երգում ըրին: Բայց մէջերնէն Վարդապուհ Ամատունի իշխանը գիշերանց զազաւելի Ատրվշնասպ մարդպանին գնաց եւ Հայոց խորհուրդը յայտնեց: Մարդպանն ու բոլոր պարօիկ եւ ուրացեալ հայ իշխաններն՝ որոնք Շիրակ գաւառն էին, աս բանէս շատ վախցան եւ առտուանց կանուխ անկէ ելան սկսան փախչիլ. միաբանեալ նախարարներն անոնց ետեւէն ինկան, բայց չկրցան հասնիլ. միայն անոնց բոլոր ձիերն ու Գաղիչոյ Խոռխոռունի ուրացեալ իշխանը հասան բռնեցին ու Գուին բերին: Ետքը լսելով որ մարդպանն իշխաններուն հետ Արտաշատ բերդաքաղաքը փախեր ապաւիներ է, գային նոյն տեղը պաշարեցին. բայց մէջերնէրը գիշերանց բերդէն ելան Ատրպատականի կողմերը փախան: Ան տտեն նախարարները Սահակ Բագրատունի առպետը Մարդպան դրին, Վահանն ալ սպարապետ եւ Պարօից հետ պատերազմելու պատրաստուեցան:

ԻԳ. Ուրացեալ նախարարներն Ատրվշնասպին խորհուրդ տուին որ գեւ Հայերը Վրաց հետ չմիացած, եւ Հոնաց զօրքը՝ զորն որ Վախթանի բերել պիտ'որ տար, չհասած, ինքն աճապարէ ու Հայոց վրայ երթայ զարնէ, որպէս զի առանց մեծ դժուարութեան կարող ըլլայ անոնց ապստամբութիւնը զսպել եւ նորէն նուաճել: Մարդպանն աս խորհրդին անսաց եւ անմիջապէս Ատրպատականին կողմէն 7000 զօրք ժողվելով՝ եկաւ Երասխ գետին եզերքը Նախիջևանին դիմացը կեցաւ: Սահակ Բագրատունին եւ Վահանն ասոր լուրն առածնուն պէս, Աստուծոյ ապաւինած՝ քովերնին եղող քիչոր զօրքէն 400 հօգի ընտրեցին, նախարարներէն ալ Վասակ՝ Վահանին եղբայրը, Բաբգէն՝ Սիւնեաց իշխանն եւ ուրիշ քանի մը մեծ իշխաններ, եւ թշնամուոյն դէմ խաւրեցին, որոնք եր-

Թալէն յառաջ եկեղեցին մտնելով՝ Աստուծոյ օգնութիւնը խնդրեցին, եւ առանց վախի ճամբայ ելան ու Վարազկերտ գեղը հասան: Հոն լուր առին որ Թշնամին գետէն սազին անցեր է. Վասակ յառաջապահ գնդին զօրապետն՝ ուզելով անոնց զօրութիւնը լրտեսել, իր գունդն առած՝ գիշերանց մինչեւ Առուակք գեղը յառաջացաւ. բայց առտուան մօտ Ատրվշնասպալ իր զօրքովը յանկաձծ նոյն գեղը գալով՝ Վասակ իր գնդովը մեծ վտանգի մէջ ինկաւ: Աս քաջ իշխանն իր զօրքն ազատելու համար, Ատրվշնասպին մարդ մը խաւրեց եւ ըսաւ որ Հայոց կողմանէ քեզի խաւրուած եմ հարկաւոր բան մ'ըսելու համար, որն որ ձեզի շատ օգտակար է. իր զօրքին ալ հրաման տուաւ որ քիչ քիչ գեղէն ելլեն Հայոց բանակն երթան: Նոյն միջոցին ինքը Պարսից բանակն աղէկ մը լրտեսեց, եւ երբ որ բոլոր իր զօրքը գեղէն ելան, Ատրվշնասպին խօսելու համար իրեն խաւրած Պարսիկներուն ըսաւ. Զիս ձեզի խաւրող չկայ, ես միայն ձեր զօրութիւնը դիտելու համար եկած էի ու տեսայ որ ամենքնիդ ալ վատ եւ անպիտան մարդիկ էք: Աս ըսելով ձին վազցուց Հայոց բանակն եկաւ, եւ յորդորեց որ Թշնամոյն բազմութենէն ամենեւին չվախնան, այլ քաջութեամբ պատերազմին:

Ի Գ. Հայ իշխանները Վասակին խօսքերէն շատ քաջալերուեցան, եւ խորհուրդ ընելով որոշեցին որ ապահովութեան համար լերանց մօտ տեղ մը կենան, որպէս զի Թէ որ յաղթուելու ըլլան, լեռներն իրենց ապաւէն ըլլայ. աս վախճանաւ Ակոռի գեղն եկան բանակնին դրին: Երկրորդ օրն առտուանց Աստուծոյ աղօթք ընելէն եւ անոր օգնութիւնը խնդրելէն ետեւ, զօրքը չորս գունդ բաժնեցին. առաջին գունդը Վասակ Մամիկոնեանին եւ Բաբկէն Սիւնիին հրամանին տակ, ճակատին կենդրոնը կեցաւ. աջ Թեւն երկրորդ գնդին հետ Ատոմ եւ Առաստոմ Գնունի իշխանները կեցան, ձախ Թեւին գնդին ալ Գարջոյլ Խոսխոռունին զօրա-

պէս գրուեցաւ . իսկ չորրորդ գունդը Ներսէճ ու Հրահատ կամաբարկան իշխաններուն հրամանին տակ, պահեստի համար ձակատին ետեւի կողմը կեցաւ, որպէս զի որ գունդն որ տկարանայ, անոր օգնութեան հասնի . այսպէս աս պղտիկ բանակը բարձր տեղւոյ մը վրայ ձակատած՝ պատրաստ կեցաւ : Պարսիկներն եւ ուրացեալ իշխաններն իրենց զօրքովը նոյն տեղը գալով՝ երբ որ Հայոց քիչըտրութիւնը տեսան, կարծեցին որ անոնք խելքերնին կորսնցուցած՝ մեռնելու եկեր են, եւ անմիջապէս անոնց վրայ յարձակեցան : Նոյն ժամանակը Գարջոյլ ձախ թեւին զօրապետն իր գընդովը թշնամեաց կողմն անցաւ . իսկ մնացած Հայերը սաստիկ քաջութեամբ զարնուելով՝ թշնամեաց շատ մնաս տուին, Ատրվշնասպն ալ ուրիշ քանի մը պարսիկ եւ ուրացեալ իշխաններով զարկին սպաննեցին . ասով Պարսից գունդը շփոթեցաւ եւ սկսաւ ցրուիլ ու փախչիլ . Հայոց զօրքն անոնց ետեւէն ինկան եւ սկսան հալածել : Գարջոյլ Խոռխոռունին իր գնդովն եւ ուրիշ պարսիկ գումարտակով մը կամացուկ մը Հայոց գնդին ետեւի լերան վրայ ելաւ եւ ուզեց յանկարծ անոնց ետեւն առնուլ . բայց հայ զինուորներէն մէկը տեսնելով՝ պահեստի գնդին իմացուց, եւ անմիջապէս Ներսէճ ու Հրահատ իրենց զօրքին մէկ մասովն անոնց վրայ յարձակեցան ու վռնտեցին : Պատերազմը կատարեալ լմննալէն ետքն՝ Առաստոմ Գնունին Սահակ մարզպանին եկաւ եւ յաղթութեան աւետիսը տուաւ . ան ատեն Յովհան Մանգակունի կաթողիկոսն ամէն իշխաններն առաւ եկեղեցին տարաւ, եւ Աստուծոյ շնորհակալութեան ազօթք մատոյց . անկէ ետքն ամէն մարդ իր տեղը գնաց ձմեռն անցընելու համար :

ԻՆ՝ Ահա՛ն սպարապետը վախթանիկին հրեշտակ խաւրեց որ իր խոստմանը համեմատ Հոնաց զօրքը բերել տայ, որպէս զի դարնան միաբան Պարսիկները գարնեն ու վառնան . անիկա զանազան խաբէական խօսքերով ժամանակ կ'անցընէր, եւ ետքը 300 Հոնաց

զօրք ասդիկն՝ անդիկն ժողովեց Հայաստան խաւրեց . բայց քիչ մը ետքը զանոնք ալ ետ կանչեց : Սպարապետը Հայոց ուրիշ նախարարներուն ալ հրաւեր խաւրեց որ զան իրեն հետ միանան եւ հաւատոյ պաշտպանութեան համար անհաւատներուն դէմ դնեն . բայց շատերը մտիկ չըրին . միայն Յովհան Անձեւացի սեպուհն եւ Ներսէճ Երուանդունի՝ ուրիշ հաւատացեալ ու բարեպաշտ մարդիկներով ու զինուորներով Վահանին հրաւերն ընդունեցան եւ ելան անոր գալու : Սեւուկ Անձեւացեաց նախարարն եւ Յովհան Մոկաց իշխանն ուղելով զասոնք արգելել որ չէրթան , զօրքերնին առին եւ անոնց ետեւէն հասան . բայց բարեպաշտ իշխաններն անոնց յաղթեցին , զօրքերնուն մեծ մասը ջարդեցին , Յովհան Մոկաց իշխանն ալ Ներսէճ Երուանդունիէն սպաննուեցաւ , եւ իրենք յաղթանակաւ սպարապետին քովն եկան :

Ի Զ. Պարնան՝ Պարսից թագաւորն Ատրնեբսէճ իշխանն անհամար զօրքով Հայոց վրայ խաւրեց , որոնց հետ միացաւ նաեւ Սիւնեաց Գդիհոն իշխանն ալ իր զօրքովը : Վահան ալ շուտ մ'իր զօրքը պատրաստեց , եւ Յովհան կաթողիկոսն ալ հետն առած՝ Հեր ու Զարեւանդ գաւառները Պարսից դէմ դնաց , որպէս զի հոն զարնուի եւ թող չտայ որ անոնք Հայաստանին ներսի կողմերը քալեն : Պատերազմին առաջին իրիկունը կաթողիկոսը բոլոր զօրքին Աստուծոյ օգնութիւնը խնդրելու համար մասնաւոր աղօթք ընել տուաւ , եւ յորդորական խօսք մը խօսեցաւ : Երկրորդ օրն արեգակը ծագածին պէս սպարապետը զօրքը կարգի դնելով՝ թշնամեցն դիմացը ձակատեցուց . կենդրոնը շատ ձիաւորով Սահակ Բաղրատունին կեցուց . աջ թեւը Բարշղ (Բարսեղ) Վահեւունիին յանձնեց , որուն քովն օգնական դրաւ Բաբելէն Սիւնի , Ատոմ Գնունի եւ Փափակ Պալունի իշխանները . ձախ թեւին վրայ ալ Ներսէճ ու Հրահատ կամսարական իշխանները զօրապետ դրաւ . իսկ ինքը Վրէն Վանանդաւ

ցիին հետ բոլոր ճակատին աջ թեւը կեցաւ : Զարնուելու սկսելէն յառաջ Պապ Արտակունին ամէն գնդին զօրապետներուն խաւրեց եւ պատուիրեց որ իրենք կամաց կամաց յառաջ քալեն, մինչեւ որ ինքն իր կողմանէ սկսի զարնուիլ. եւ երբ որ կը տեսնեն որ իր կողմի թշնամին տկարանալու կը սկսի, իրենք ալ բոլոր զօրութեամբ յարձակին : Բայց Պարսիկներն ամէն կողմէն մէկտեղ զարնուելու սկսելով՝ Հայոց գնդերուն սպասելու թող չտուին, եւ անոնց աջ թեւն ետ մղեցին ու փախուցին : Վահան աս բանս տեսածին պէս իր օգնականին՝ Վրէն Վանանդացիին հրաման տուաւ որ աջ թեւին օգնութեան հասնի, բայց անիկա այլայլած՝ պատասխան տուաւ. Աս միջոցիս ինծի մի ապաւինիր, վասն զի ես հիմա բան մը չեմ կրնար ընել : Ան ատեն սպարապետն երեսը խաչ հանեց, եւ իր գնդին առջեւն անցած՝ երկու Աամարական իշխաններուն հետ արծուի պէս թշնամոյն վրայ յարձակեցաւ, որոնք չկրնալով դիմանալ, իրենց ճակատին կենդրոնը փախան : Վահան հոն ալ ետեսնէն հասաւ եւ շատերը ջարդեց. Վին իշխանն ալ որն որ իր գնդովն երկայն ատեն քաջութեամբ Հայոց գէմ կը դնէր, նիզակով զարկաւ սպաննեց. նոյնպէս Ներսէհ Աամարական Ատրվշնասպ մեծ իշխանը զարկաւ մեծցուց, ասոնցմէ զատ շատ ուրիշ իշխաններ ալ, որով Պարսից գունդը շփոթեցաւ եւ սկսաւ փախչիլ. Վահանին զօրքն ալ սկսան զանոնք հալածել : Բարշղ Հայոց աջ թեւին զօրապետն երբ որ թշնամոյն փախչիլ տեսաւ, ինքն ալ իր ցրուած զօրքը ժողվեց եւ սկսաւ զանոնք հալածել՝ մինչեւ որ բոլորովին Հայաստանին սահմաններէն դուրս հանեցին. ասկէ ետքն իրենք թշնամոյն հարուստ աւարները ժողվեցին ու բանակը դարձան : Աս մեծ յաղթութեան ուրախութեան ժամանակը՝ Հայոց գնդին ուրիշ մեծ ուրախութիւն մ'ալ ծագեցաւ, որովհետեւ Վահանին Վարդ եղբայրն՝ որն որ Պարսկաստան շղթայով կա-

պու.ած բանտի մէջ էր, յանկարծ իրենց մէջը տեսան : Աս իշխանն Աստուծոյ օգնութեամբն իր կապանքնէրէն արձակուած եւ ամէն իր ծառաներուն հետ առանց պահապաններուն խմանալուն բանտէն ելած Հայաստան եկած էր : Հայերն Աստուծոյ իրենց բրա՛ յայտնի օգնութիւններուն համար անոր շնորհակալութեան աղօթքներ ու հանդէսներ ընելով՝ Ծաղկոտն զաւառը դարձան, որ քիչ մը հանգչին :

Ի՛յ. Այն ժամանակը յանկարծ Ալախթանկէն դեսպան եկաւ ու պատմեց որ Պարսից Միհրան զօրապետն անհամար զօրքով Արաց երկիրը յարձակեցաւ, եւ թագաւորը չկրնալով անոր դէմ ելլել, Հայաստանին սահմանակից լեռները փախաւ ապաւինեցաւ. ուստի շուտով օգնութեան հասէք : Ահհան՝ որովհետեւ Հայերը Արաց հետ դաշինք դրած էին, եւ աւետարանին վրայ երգում ընելով՝ խօսք տուած էին անոնց օգնելու, իր զօրքն առաւ Արաստան գնաց, ու լերանց վրայ բանակը դրաւ : Իսկ Ալախթանկ խաբէութեամբ Ահհանին բաւ թէ Հննաց զօրքն ալ մեզի օգնութեան եկած գաշտի վրայ բանակած են, եւ չեն ուզեր լերանց վրայ դալ, ուստի պետք է որ մենք անոնց քովն երթանք եւ միաբան թշնամին զարնենք : Սպարապետը թէպէտ եւ Ալախթանկին խաբէութիւնները գիտէր, բայց ըրած երդմանը համար աս բանս ալ յանձն առաւ եւ լեռներէն դաշտն իջաւ : Քանի մ'օր ետքը Պարսից անհամար զօրքը Հայոց բանակին մօտիկցան եւ Առը գետին անդիի կողմը կեցան : Պատերազմին առաջին իրիկունը Ահհանին քովի իշխաններէն մէկքանին Միհրանին գաղտուկ մարդ խաւրեցին ու խոստացան որ պատերազմին ատենն իրենց զօրքովն իր կողմն անցնին : Երկրորդ օրը Ահհան իր գունդը թշնամւոյն զիմացը շարեց, աջ թեւին վրայ Բարշը Ահհեւունին ու Սատն Գաբեղեանը հրամանատար դրաւ, ձախ թեւը Արաց թագաւորին յանձնեց, իսկ ինքն երկու պամարական իշխաններուն հետ կենդրոնը

կեցաւ, իր քովն ալ Սահակ ասպետը կեցուց: Զարնուելու սկսելնուն պէս՝ Վահան իր գնդովն իր դիմացի թշնամին սաստիկ յարձակմամբ մը մղեց ու փախուց, եւ շատերը կուր գետէն անդին վաւրնաց, շատ ալ մեծ իշխաններ սպաննեց. նոյնպէս Վասակ՝ սպարապետին եղբայրը՝ սաստիկ քաջութեամբ թշնամին կը զարնէր: Բայց նոյն միջոցին ձախ թեւը կեցող Վրաց ու Հայոց զօրքն երեսնին դարձուցին եւ սկսան փախչիլ, եւ՝ Հայերը փախան, գլուխներնուդ ճարը հոգացէք, պռալով, միւս յազլթող զնդերն ալ շփոթեցին: Ան ատենը Վահան ալ ետ քաշուեցաւ ու փախչողներուն ետեւէն գնաց: Պարսիկները Հայոց ու Վրաց ետեւէն ինկան եւ անոնցմէ շատ մարդ ջարդեցին: Աս դժբախտ պատերազմին մէջ Հայոց գունդը մեծ կորուստ ունեցաւ. իշխաններուն մէջէն Սահակ ասպետ մարդպանն եւ սպարապետին Վասակ եղբայրը մարտիրոսական մահուամբ մեռան, որոնց երեսը պատերազմէն յառաջ սաստիկ լուսաւորուելով՝ իրենց երջանիկ վախճանին հասած բլլալը շատերուն յայտնուեցաւ. Բաբկէն Սիւնիին վիրաւորեցաւ, եւ Հրահատ Կամարականն ու Յաղղ Սիւնի սեպուհը գերի բռնուեցան:

ԻԸ. Վահան Տայոց ամուր տեղերը քաշուեցաւ ու ցրուած զօրքն ամէն կողմէն քովը ժողվեց: Պարսից զօրապետն ալ բոլոր զօրքովն անոր ետեւէն ինկաւ, եւ պատգամաւոր մը խաւրելով՝ ըսաւ. Ինչո՞ւ համար քութագաւորիդ դէմ ելեր ես, եկու նորէն հնազանդէ եւ ապստումբութիւնը մէկդի թող տուր. ես թագաւորին միջնորդ կ'ըլլամ եւ զանիկա քեզի հետ կը հաշտեցընեմ, ըրածներուդ համար ալ կատարեալ թողութիւն կ'առնում: Բայց սպարապետն անոր խիստ պատասխան մը խաւրեց, անոր առջեւը դնելով թէ ինչպէս Պարսից թագաւորը Հայոց կրօնը ջնջելու կ'աշխատի, տուած խոստումները չիպահէր, չար եւ անպիտան մարդիկներն իշխանութեան կը հասցընէ,

որոնք Հայաստան տակն ու վրայ կ'ընեն ու կ'ապահանեն: «Ասոնցմէ զատ, բայ՝, ձեր թագաւորը զՀայերը միշտ կը նախատէ վատ ու մեղկ ազգ անուանելով. աս խօսքը լսելը մեզի մեռնելէն աւելի ծանր է: Մենք երկու անգամ քանի մը հարիւր հոգւով ձեր երէք չորս հազարին դէմ ելլելով՝ ու յաղթելով, ձեզի մեր ինչպէս ազգ ըլլալը ցուցուցինք. իսկ աս անգամ չէ թէ ձեր քաջութենէն յաղթուեցանք, այլ մեր զօրացն անմիաբանութենէն: Հիմա որովհետեւ կ'առաջարկես որ նորէն ձեզի հնազանդինք, իմ ալ ձեզի ընելու առաջարկութիւնս աս է. թէ որ քրիստոնէութեան կատարեալ ազատութիւն կու տաք եւ ամէն կրակատունները, մոգերն եւ ուրիշ կռապաշտութեան նշանները բոլորովին Հայաստանէն կը ջրնջէք, անպիտան իշխաններն իշխանութենէ կը հանէք, եւ անոնց տեղ աղէկներն ու բարերարները կը դնէք, ձեզի կը հնազանդինք. իսկ թէ որ ասոնք ընել յանձն չէք առնուր, մենք ալ մտքերնիս դրած ենք մինչեւ վերջին շունչերնիս, ձեզի դէմ դնելու»: Միհրան աս խօսակցութեան մէջ եղած ատենը, թագաւորէն հրաման եկաւ որ Պարսկաստան դառնայ. ան ալ շուտ մը բոլոր զօրքովը՝ բռնած Հրահատ ու Յաղղ իշխաններն ալ շղթայով կապած հետն առաւ ճամբայ ելաւ. բայց Հրահատ իր Ներսէս եղբօրն աղօթքովը Պարսից ձեռքէն ազատեցաւ, իսկ Յաղղ սեպուհը նահատակեցաւ:

Իթ. Միհրանին երթալէն ետքը Վահան սպարապետը Վաղարշապատ եկաւ, եւ հոն մայր եկեղեցւոյն մէջ Աստուծոյ շնորհակալութեան հանդէս բարանկէ Գուին դնաց ձմեռն անցընելու համար: Բայց յանկարծ Վրաց կողմէն երկու խաբեբայ մարդիկ եկան եւ պատմեցին որ Սահակ Բագրատունի մարզպանն եւ Վասակ՝ Վահանին եղբայրը մեռած չեն, այլ վերադարձ ինկած ըլլալով՝ սողալով անտառի մը մէջ մտան պահուբտեցան, եւ հիմա թշնամին ետեւնէն ինկած

է որ ձեռք ձգէ, ուստի շուտով օգնութեան
 չասէք: Շատերն աս խաբէական խօսքին հաւա-
 տացին եւ կ'ուզէին որ անմիջապէս Հայոց զունդը
 Վրաստան երթայ եւ ան երկու իշխաններն ազա-
 տէ, մանաւանդ նոյն իշխաններուն ընտանիքը շատ
 ետեւէ կ'ըլլային: Սպարապետը շատ աշխատեցաւ
 եւ յայանի ցուցուց որ աս բանս սուտ ու խաբէա-
 կան է, բայց երբ որ չկրցաւ համոզել, ըսաւ անոնց.
 Ահաւասիկ զօրքը ձեր ձեռքն է, ինչպէս որ կ'ուզէք
 բռէք, միայն թէ դիտցած ըլլաք որ զօրութիւննիս
 բաժնելը մեզի շատ մեծ վնասներու պատճառ կ'ըլ-
 լայ: Ան ատեն Մուշեղ Մամիկոնեան սեպուհին գունդ-
 մը զօրք տուին ու Վրաստան խաւրեցին, զօրոնք ան
 երկու խաբէբաները զանազան սուտ պատճառներով
 բոլոր ձմեռն ասդին անդին պտըտցուցին:

Լ. Զմեռը հազիւ թէ անցաւ եւ գարնան գեղե-
 ցիկ օրերն սկսան, Զարմիհր Հազարաւուխտ Պարսից
 զօրավարը բիւրաւոր զօրքով յանկարծ Հայաստան
 մտաւ եւ Երասխ գետէն անցնելով՝ Արտաշատ քա-
 ղաքն եկաւ, ուր ուրացեալ նախարարներուն մատ-
 նութեամբն իմանալով՝ որ Հայոց գնդին կէսը Վրաս-
 տան գացած է եւ Վահանին քովը քիչ զօրք կայ,
 երկրորդ օրը ճամբայ ելաւ ու Դուինի վրայ քալեց:
 Վահան ամենեւին առանց շփոթելու իր քիչնոր զօր-
 քովը Պարսից դէմ ելաւ եւ անոնց մէկ կողմը զար-
 նելով՝ մաս մը բուն բանակէն բաժնեց եւ շատերը
 Զարդեց, եւ անցաւ Խաղտեայ կողմն ամուր տեղ մը
 գնաց կեցաւ: Նոյն ատենը Մուշեղ սեպուհն՝ որն որ
 բոլոր ձմեռը Վրաստան ասդին անդին թափառած էր,
 Հայաստան դարձաւ, եւ եղածն իմանալով՝ ինքն ալ
 Վահանին քովը գնաց: Զարմիհր բոլոր զօրութեամբ
 Վահանին ետեւէն ինկաւ. ճամբան շատ բերդեր կոր-
 ծանեց ու շատ ալ արիւն բրաւ, եւ լսելով որ Վա-
 հան ԅունաց մասին մէջ Վարայրվարդի գեղն է, շուտ
 մը հոն գնաց, բայց որովհետեւ սպարապետն անկից

դացած էր, դարձաւ Քասէն գաւառն եկաւ: Հոն իրեն թագաւորէն հրովարտակ մ'եկաւ, որուն մէջ կը ծանուցանէր որ ինքը Հեփթագներուն դէմ պատերազմի պիտ'որ երթայ, եւ կը հրամայէր որ Շապուհ Միհրանեանը Հայաստանի մարզպան դնէ, եւ ինքը Վրաստան երթայ, Վախթանկը կամ բռնէ կամ մեռցընէ: Զարմիհը Շապուհին մարզպանութեան իշխանութիւնը տալէն ետքը՝ Սիւնեաց Գդիհոն ուրացող իշխանն ալ անոր օգնական դրաւ եւ ինքն ելաւ դնաց:

ԼԱ. Լս նոր զօրապետը զՎահան ձեռք ձգելու համար անդադար անոր ետեւէն ինկաւ եւ ամէն կողմ զօրք խաւրեց. իսկ սպարապետն՝ որովհետեւ քովը քիչ զօրք ունենալով՝ չէր կրնար անոր դէմ ելլել, անոր ասդին անդին ցրուած զօրքերուն վրայ կը յարձակէր եւ շատերը կը ջարդէր: Շապուհ տեսնելով՝ որ իր զօրքն օրէ օր կը քիչնայ, Գդիհոն Սիւնիին խորհրդովը բոլոր զօրութիւնը մէկտեղ բերաւ ու Վահանին վրայ քալեց՝ որն որ քիչ մը հանգիստ առնելու համար Երիզա գեղը դացած էր, եւ անոր մօտ բանակը դրաւ: Վահան անմիջապէս զօրքն առաւ գեղէն դուրս ելաւ, Երիզայի գեղացիներն ալ ժողովեց ու գիշերանց Պարսից բանակին վրայ եկաւ, գեղացիներուն ձեռքը մէյմէկ վահան տուած՝ իր զօրքին առջեւը շարեց որպէս զի ապահով բլլան, եւ հրաման տուաւ որ ամէնը մէկտեղ սկսին թշնամեաց բանակին վրայ նետ նետել: Պարսիկներն աս անակնկալ յարձակմանէ շփոթելով ու սարսափելով՝ կարծեցին թէ թշնամին իրենց բանակը կոխեր է, եւ սկսան իրար ջարդել: Հայերը քիչ մը ժամանակ այսպէս Պարսիկները խռովելէն ետեւ, անվնաս դարձան Շտեայ գեղն եկան գիշերուան մնացած մասն անցուցին: Երկրորդ օրը Շապուհ մնացած զօրքն առած՝ կատաղաբար նոյն գեղին վրայ եկաւ. սպարապետը՝ թէպէտ եւ շատ քիչ զօրք ունէր, բայց Աստուծոյ օգնութեանն ապաւինելով՝ զանոնք կարգի դրաւ ու թշնամւոյն դիմացը շարեց:

Հազիւ թէ զարնուելու պիտ'որ սկսեին, մէյ մ'ալ տեսաւ որ իր զօրքին մեծ մասն երեսնին դարձուցեր կը փախչին եւ քովը միայն քանի մ'իշխանն եւ 40ի չափ զինուոր մնացեր են, բայց անոնք ալ միւսներուն փախչելը տեսնելով՝ զարհուրած էին : Մեջերսն էին իրեն ըսաւ . Տէր միտ դիր, նայէ վիճակնիս . սպարապետն արիւթեամբ մը պատասխան տուաւ . Հիմա ալ միտ դնելու ատեն չէ, ես յոյս չէ թէ մարդու ալ Աստուծոյ վրայ դրած եմ . աս ըսելով՝ երեսը խաչ հանեց ու թշնամեաց դնդին վրայ յարձակեցաւ, քովի մարդիկներն ալ իրեն հետեւեցան : Պարսից զօրագլուխն աս խելքէ դուրս դորձքին վրայ ապշած եւ այլայլած, շուտ մը Գդիհանին մարդ խաւրեց որ իր գնդովը դայ որ Վահանը մեջ առնուն ու բռնեն . ան ալ ուրախութեամբ վազեց եկաւ : Բայց Աստուծոյ ապաւինած քաջերը 2000—3000 թշնամին աներկիւղ զարկին, անոնցմէ շատերը մեռած գետինը փռեցին, ու ջրի պէս ճղքեցին դուրս ելան, իրենցմէ միայն 4 հոգի կորսնցընելով . նաեւ Գդիհան ուրացող իշխանն ալ չարաչար վիրաւորեցին, որն որ քանի մը օր ետքը հոգին փչեց, եւ շատ ատեն առանց վախի Պարսից դնդին քովէն անոնց հետ յառաջ գացին : Վահանին աս արասքոյ կարգի դորձքը Պարսից զօրքն այնչափ զարհուրեցուց որ բոլորովին լքան ու վհատեցան, եւ Հայոց նայելու ալ չէին համարձակիր, կ'ըսէ Ղազար Փարպեցի ժամանակակից պատմիչը, կարծելով թէ անոնք հին դիւցազուններէն կամ բնութենէ վեր մարդիկ են, զորոնք տեսնելն ալ մեծ վտանգներ կը բերէ : Իսկ Սիւնեաց զօրքն՝ իրենց իշխանին մեռնելէն ետքը տեղերնին ցրուեցան : Շապուհ զօրապետն ալ Վահանին յաղթելէն բոլորովին յոյսը կտրելով՝ Բաստան դուռաւր քաշուեցաւ :

ԼԲ. Երբն ժամանակը Պարսկաստանէն դեսպան մ'եկաւ եւ իրեն դոյժ բերաւ որ Պերոզ բոլոր զօրութեամբ Հեփթաղներուն դէմ պատերազմի դնաց, եւ

անոնցմէ յաղթուելով՝ զօրքը ջնջուեցաւ, ինքն ալ սպաննուեցաւ. ուստի անմիջապէս քովի զօրքն առաւ Պարսկաստան գնաց: Ասոր երթալէն ետքը Վահան սպարապետն իր ուխտակից իշխաններովը Վաղարշապատ քաղաքը գնաց եւ հոն մայր եկեղեցւոյն մէջ Աստուծոյ շնորհակալութեան մեծ հանդէս կատարեց. եւ որովհետեւ նոյն եկեղեցին շատ հինցած էր, նորէն շինել տուաւ ու զարդարեց: Անկէ իր ընկերներուն հետ Գուին քաղաքը գնաց եւ խաղաղ ու հանգիստ կեանք կ'անցընէր:

Գ. Լ Ս Ի Խ Թ

Ա Ն Գ Ե Կ Ա Ն Ի Ն Ե Ի Վ Ա Հ Ա Ն Ի Ն Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

ԼԳ. Վաղարշ Պարսից թագաւոր կը գրուի, եւ Վահանին հետ հաշտութիւն ընելու համար Նիխոր իշխանը Հայաստան կը խաւրէ: Վահանին Նիխորին երթալն ու հաշտութեան համար պահանջած պայմանները: Իր Պարսկաստան երթալն ու թագաւորին հետ հաշտութիւնն հաստատելը: ԼԳ. Անգեկան իշխանն Հայոց մարզպան կը գրուի, եւ անոր խորհրդովը Վաղարշ մարզպանութեան իշխանութիւնը Վահանին կու տայ (485):

ԼԳ. ՊԱՐՍԻՑ նախարարները Պերոզին տեղն անոր Վաղարշ եղբայրը թագաւոր դրին, որն որ հեղ ու խաղաղասէր ըլլալով՝ գահն ելլելուն պէս իր իշխանութեան տակն եզրղ երկիրներուն խռովութիւնը դադրեցընելու ձեռք զարկաւ, եւ նախ Հայաստանէն սկսելով՝ Նիխոր Վճնասպդատ իշխանը հոն խաւրեց որ երթայ ինչ եղանակաւ որ ըլլայ Վահանին հետ հաշտութիւն ընէ. բայց հրաման ալ տուաւ որ հետը շատ զօրք ալ տանի, որպէս զի չըլլայ թէ Հայերը հաշտութիւնը յանձն չառնուն, եւ իրեն վնաս հասցընեն: Նիխոր Հայաստանին Հեր գաւառն եկաւ, եւ անկէ Վահանին երկու մեծ իշխան խաւրեց, իմացընելով

որ թագաւորը զինքը խրկած է Հայոց հետ հաշտութիւն ընելու եւ նորէն խաղաղութեամբ իրեն հնազանդեցրնելու համար: Ապարապետը բոլոր իր սխտակից իշխանները ժողվեց, եւ պատգամաւորներուն հրահայեց որ անոնց առջևը Նիխորին պատգամը զրուցեն: Երկրորդ օրը հայ իշխաններուն հետ խորհուրդ ընելով, եկող պարսիկ իշխաններուն աս պատասխանը տուաւ: «Մենք շատ պատճառներու համար ձեր թագաւորին դէմ ելած ենք, որոնց ամենք՝ թէ որ թագաւորին հետ անձամբ խօսելու առիթ ըլլայ, կը յայտնեմ: Բայց հիմա ձեզմէ որ զմեզ հաշտեցրնելու եկած էք, աս երեք բանն իրբեւ հաշտութեան հիմ կը պահանջեմ. հասի մեր կրօնին բոլորովին ազատութիւն պիտ'որ տաք եւ կուսպաշտութեան նշանները Հայաստանէն պիտ'որ վերցրնէք. Հայերն ամենեւին հաւատքնին փոխելու պիտ'որ չտախպէք. մեկու մը հաւատքի համար իշխանութիւն պիտ'որ չտաք: Երկրորդ՝ չար եւ անպիտան մարդիկներն իշխանութեան պիտ'որ չհասցընէք, այլ միայն արժանաւորներն, եւ որոնք որ երկրին պայծառանալուն փոյթ ու ջանք ունին: Երրորդ՝ թագաւորն ամէն եղած ամբաստանութիւններուն շուտ մը պիտ'որ չհաւատայ, այլ ինքն անձամբ ազէկ մը պիտ'որ քննէ եւ արդար դատաստան ընէ: Թէ որ աս բաները յանձն կ'առնաք եւ զրով ու թագաւորին կնքովը կը հաստատէք որ միշտ հաստատուն կը պահէք, մենք ալ ձեզի հետ կը հաշտուինք եւ նորէն ձեզի կը հնազանդինք. իսկ թէ որ չէք ուզեր յանձն առնուլ, մտքերնիս հաստատուն դրած ենք որ մինչեւ վերջին շունչերնիս ձեզի դէմ դնենք, եւ աւելի կ'ուզենք մեռնիլ քան թէ ձեզի ծառայել»:

Ապարապետը պատգամաւորներուն աս խօսքերը խօսելէն ետքն՝ իր քովի իշխաններէն հինգ հոգի անոնց հետ Պարսից զորապետին խաւրեց: Նիխոր զանոնք շատ սիրով ընդունեցաւ ու սեղանի հրաւիրեց,

Եւ պատգամաւորներէն Վահանին պահանջածները լսելով՝ շատ հաճեցաւ, եւ շուտ մ'անոր նամակ մը գրեց, խոստանալով որ ամէն ուղածները կը կատարէ. զինքն ալ հրաւիրեց որ իր քովը գայ եւ իրարու հետ բ'ընաչ' խօսին: Ասոր վրայ սպարապետը յոր զօրքովն Արտաղ գաւառը գնաց եւ Նիխորին պատգամաւոր խաւրելով ըսաւ. Որպէս զի ես քու քովդ գամ, պէտք ես ինծի քանի մը պարսիկ իշխաններ խաւրել, որոնք հոս իմ մարդիկներուս քովը կը կենան մինչեւ որ իրարու հետ խօսինք ու բաժնուինք: Զօրապետը Վահանին իմաստութեանը վրայ զարմացած՝ ութը մեծ իշխաններ խաւրեց, զորոնք սպարապետն իր հաւատարիմ մարդիկներուն յանձնեց՝ պատուիրելով որ պատուով պահեն, եւ ինքը զօրքին մեծ մասը հետն առաւ Նիխորին գնաց: Երբ որ անոր կեցած գեղը մօտիկցաւ, հրաման տուաւ որ պատերազմի փողերն սկսին զարնել. ասկէ Պարսիկներն այլայլեցան, կարծելով թէ Վահան խաբէութեամբ եկած է իրենց հետ զարնուելու: Նիխոր անոր երկու իշխան խաւրեց եւ ըսել տուաւ թէ Ինչու համար Պարսից սովորութեան գէմ բան կ'ընես, (որովհետեւ միայն Պարսից սպարապետը փող զարնելով բանակը կը մտնէր): Վահան ալ պատասխան տուաւ. Նախ դուն զիս Պարսից հնազանդեցուր, անկէ ետքը ես ալ Պարսից սովորութիւնը կը պահեմ, վասն զի առանց քեզմէ սորվելու ձեր աերութեան սովորութիւնն ու կարգը գիտեմ: Ասկէ ետքը Նիխորին քովն եկաւ, որն որ իրեն շատ պատուով ընդունելութիւն բրաւ, եւ իր ամէն խնդրածները կատարելու հաստատուն խոստում տալով՝ իրարմէ բաժնուեցան եւ Վահան Գուին դարձաւ: Իսկ Նիխոր՝ որովհետեւ նոյն ժամանակը Պերսզին Զարեհ որդին Վաղարշին գէմ ելած էր եւ կուգէր թագաւորութիւնն անոր ձեռքէն յափշտակել, իր զօրքովը Պարսկաստան կանչուեցաւ, որն որ երթալու ատեն Վահանէն խնդրեց որ Հայոց զօրքին

մէկ մասն ալ թագաւորին զգնութեան խաւրէ : Սպաւ-
րապետը վրէն Վանանդացիին եւ իր եղբորորդւոյն
Գրիգոր Մամիկոնեանին գունդ մը զօրք սուլաւ ու
Պարսկաստան խաւրեց, որոնք շատ քաջութեամբ
պատերազմելով՝ թագաւորին թշնամիներուն յաղթե-
ցին : Քանի մ'որ ետքը Վահան ալ իր ուխտակից
նախարարներն ու զօրքին մնացած մասը հետն առած՝
Վաղարշին գնաց, որուն թագաւորը շատ պատիւ բրաւ
եւ ամէն ուղածները կատարեց, ու զանոնք իր կնքովը
կնքուած հրովարտակով մը հաստատեց . նաեւ զինքը
Մամիկոնեան ցեղին նախնորք եւ բոլոր Հայաստանի
զօրաց վրայ նպարտագետ դրաւ : Նոյնպէս ուրիշ նա-
խարարներուն ալ պատիւներ ու պարգեւներ սուլաւ
եւ փառքով Հայաստան խաւրեց, որոնք եկան նախ
Վաղարշապատու մայր եկեղեցւոյն մէջ շնորհակա-
լութեան հանդէս բրին եւ անդքատաց առատ ողոր-
մութիւն բաժնեցին եւ անկէ դարձան Գուին քու-
ղաքն եկան :

ԼԴ . Հայաստան այսպէս ամէն կողմանէ բոլորո-
վին խաղաղանալով՝ Անգեկան իշխանը թագաւորէն
մարդպան դրուեցաւ : Ա՞ իշխանն իր իշխանութեան
ժամանակը Վահանին բրած խնամուն կարգադրու
թիւններն եւ ամէն ձեռք զարկած գործքերը յաջո-
ղութեամբ կատարելը տեսնելով, անոր վրայ մեծ
համարում ունեցաւ ու շատ սէր կուպեց : Եւ երբ որ
հարկաւոր գործքի մը համար Պարսկաստան գնաց,
Վահանին բրած գործքերը թագաւորին առջեւը
պատմելով՝ անոր ըսաւ թէ Հայաստան աղէկ ծաղկե-
ցրնելու եւ խաղաղութեամբ պահելու համար, պէտք
է Վահանը մարդպան դնել : Վաղարշ իսկ առաջար-
կութեան հաճեցաւ եւ հրովարտակ մը գրելով՝ անոր
մարդպանութեան իշխանութիւն տուաւ : Վահան աւ
հրովարտակն առածին պէս բոլոր իր ուխտակից նա-
խարարներովն եկեղեցին գնաց, ժողովրդեան բազ-
մութիւնն ալ ամէն կողմանէ հոն վազեցին, եւ շնոր-

հակադրութեան վառատոր աօն կատարեցին. Յովնան
կաթորելոսն ալ ժողովուած բազմութեան զեղեցիկ
յորդորական ճառ մը խօսեցաւ :

Գ Լ Ա Ի Խ Ժ

Վ Ա Ր Գ Ի Ե Ն Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ո Թ Ե Ն Ե Ն Մ Ի Ն Զ Ե Ի
Վ Գ Լ Ե Ն Ճ Ի Հ Բ Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

ԼԵ. Կառատ Պարսից թագաւորը Հայերը Պարսից աղանգը
դարձրնելու համար Հայաստան զօրք կը խաւրէ. Վահան
անոնց դէմ կ'ելլէ ու կը վռնտէ: ԼԶ. Վահանին մահն եւ
իր Վարդեղբորը մարզպան ըլլալը (510): Բուրդան Վարդին
տեղ մարզպան կը դրուի (513): Հոնք Հայաստան կ'արշաւեն
ու Մժէժ Գնունիէն յաղթուելով կը փախչին: Մժէժ Հայոց
մարզպան կ'ըլլայ (514—518): ԼԿ. Գենշապուհին մարզպա-
նութիւնը. Հայոց թուականին հաստատուելը (551): Վշնաս
Վահրամին, Վարազդատին ու Սուրէնին մարզպանութիւնը
(552—564): Սուրէն Հայերը նեղելու կը սկսի, Վարդան
Մամիկոնեան զանիկա կը սպաննէ: ԼԸ. Խոսրով Պարսից
թագաւորը Հայաստան կ'արշաւէ, Վարդան անոր դէմ կ'ելլէ
ու կը յաղթէ: Խոսրով Հայերը կը նուաճէ եւ Վշոն Ճիհր
իշխանը մարզպան կը դնէ (578): ԼԹ. Եւերսես իշխանին,
Մուշեղ Մամիկոնեանին ու Սմբատ Բագրատունիին Պար-
սկաստան ըրած քաջութիւնները:

ԼԵ. Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն 8 տարիի չար խաղաղութիւն
եւ հանգստութիւն վայելելէն ետեւ, նոր քաղաքային
խռովութեան փոթորիկ մը զինքը պատեց եւ ամէն
բան տակն ու վրայ ըրաւ: Վասն զի Կառատ Պարսից
թագաւորը մտերուն զրգուելովը Հայոց դէմ նարէն
հալածանք հանեց, եւ Հայաստան շատ զօրք ու մոզեր
խաւրեց, որոնք եկան ասդին անդին կրակատուններ
չ'ենցին: Վահան Մամիկոնեան մարզպանն՝ որն որ
այնչափ տարի կրակապաշտութիւնը ջնջելու համար
Պարսից դէմ պատերազմ ըրած էր, սա բաներս
տեսնելուն պէս, աստուածապաշտ նախարարները

ժողովեց ու Պարսից զէմ ելաւ, զօրքերն ու մոգերը ջարդեց եւ կրակատունները կործանեց: Կաւատ սաստիկ բարկացած՝ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Հայաստան արշաւէ, բայց իր իշխաններն ապստամբելով՝ զինքն աթուէն վար առին: Քիչ մը ետքը Կաւատ թագաւորութիւնը նորէն ձեռք ձգեց, եւ ուզելով Յունաց դէմ պատերազմի ելլել, Հայոց հետ հաշտութիւն բրաւ:

ԼԶ. Վահան 25 տարիի չափ Հայաստան կաւաւարելէն ետեւ վախճանեցաւ, եւ իր Վարդ եղբայրը մարդպան եղաւ. բայց իր իշխանութեան երրորդ տարին Կաւատ զինքը մարդպանութենէ ձգեց, եւ Բուրղան պարսիկը մարդպան դրաւ: Ասոր ժամանակը Հոնաց զօրքը Հայաստան արշաւեցին ու շատ դաւառներ ասպատակելով՝ մինչեւ Սասուն դաւառը հասան. հոն Մժէժ Գնունի քաջ իշխանն իր զօրքովն անոնց դէմ ելաւ եւ աղէկ ջարդ մը տալով փախուց: Կաւատ Մժէժին աս քաջութիւնը լսելով՝ զանիկա Բուրղանին տեղ Հայոց Մարդպան դրաւ, որն որ 30 տարի Հայաստան խաղաղութեան մէջ պահեց:

ԼԷ. Մժէժին մահուանէ ետքը Խոսրով Պարսից թագաւորը Գենշապուհ իշխանը մարդպան դրաւ: Ասոր իշխանութեան առաջին տարիները Մովսէս Բ. կաթողիկոս եղաւ, որն որ աթոռն ելածին պէս առաջին փոյթն եղաւ Հայոց Տոմարը նորոգել ու կարգի դնել. աս վախճանաւ Գուին քաղաքը ժողովք մը ժողովեց, ուր շատ գիտուն մարդիկներ կանչեց եւ անոնց գործակցութեամբը Տոմարը կարգաւորելէն ետեւ, Հայոց թուական մ'ալ հաստատեց, որն որ Քրիստոսի 551 թուականէն կը սկսի: Ասկէ ետքը տեսնելով որ Գենշապուհ նորէն Հայոց հաւատքը փոխելու կ'աշխատի եւ ժողովրդեան բռնութիւն կ'ընէ, Խոսրով թագաւորին աղաչանաց թուղթ մը գրեց, որուն մէջ Վաղարշ թագաւորին Հայոց հաւատքին ազատութեանը համար տուած հրովարտակն անոր յի-

չեցուց: Խոսքով աս աղաչանքի թուղթը կարգալով՝ Դենշապուհը փոխեց, եւ անոր տեղը վշնաս վահրամ իշխանը դրաւ, որուն յաջորդեց վարադատ, անոր ալ Սուրէն՝ Խոսքովին ազգականներէն մէկը: Աս անգութ իշխանն սկսաւ նորէն Հայերը չորչարել եւ զանոնք Պարսից ազանդը դարձրնելու աշխատիլ. իշխաններուն հետ ալ իշխամանալով՝ անոնց մէջէն Մանուէլ Մամիկոնեանն սպաննեց: Վարդան՝ Մանուէլին եղբայրն՝ որն որ արդէն Սուրէնին ըրածներէն սաստիկ դառնացած էր, իր եղբօրն սպաննուելուն վրայ աւելի եւս բարկանալով՝ Յունաց կայսեր հրեշտակ խաւրեց եւ անկէ Պարսից դէմ օգնութիւն խնդրեց, խոստանալով որ անկէ ետեւ Հայերը Պարսից տուած հարկերնին իրեն կու տան: Վայսրը Հայոց հրեշտակները շատ սիրով ընդունեցաւ եւ երգամօք խոստացաւ անոնց օգնել: Վարդան աս խոստման վրայ վստահացած՝ նախարարներն ու զօրքն Արտաշատ քաղաքը թողլեց, յանկարծ Սուրէնին վրայ յարձակեցաւ, եւ զանիկա բոլոր Պարսից իշխաններովն ու զօրքովն սպաննեց, ամէն մոգերը սրէ անցուց, եւ Հայաստան կայսեր յանձնեց:

ԼԸ. Խոսքով աս բանս լսելով՝ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Յունաց եւ Հայոց դէմ ելլէ, բայց իր իշխանները զինքը համոզեցին որ բանը խաղաղութեամբ լինցընէ. ուստի Յունախնոսին դեսպան խաւրեց ու խնդրեց որ հաշտութիւն ընեն: Բայց երբ որ կայսրն անոր դրած պայմանները, մանաւանդ Հայաստան նորէն Պարսից տալը յանձն չտուաւ, Խոսքով անհամար զօրքով վարդանին վրայ եկաւ, իսկ Յուստինոս Հայոց օգնելու ամենեւին փոյթ չըրաւ: Վարդան թէպէտ ուրիշ կողմանէ օգնութիւն չունէր, ի վերայ այսր ամենայնի իր պզտիկ զնդովը թշնամուցն դէմ ելաւ, եւ նախ անոնց բանակն աղէկ մը լրտեսելով՝ իր զօրքն երէք մաս բաժնեց, մէկը դարանի դրաւ, երկրորդը ձախ կողմը խաւրեց, իսկ եր-

բորզն ինքն առած աջ կողմը կեցաւ, եւ երկրորդ օրն առտուանց կանուխ սաստիկ զօրութեամբ Պարսից վրայ յարձակեցաւ, որոնք դեռ կարգի մտնելու վրայ էին: Անոնք իսկզբան շփոթեցան ու խռովեցան, բայց ետքը կարգի մտնելով՝ կատաղաբար սկսան պատերազմիլ եւ երկայն ատեն յաղթութիւնն անորոշ մնաց: Նոյն ժամանակը դարանը մտած հայ գունդը մէկէն դուրս ելաւ, եւ արդէն յողնած թշնամին այնպէս մը զարկաւ որ այլ չկրնալով դիմանալ՝ ցրուեցաւ ու փախաւ: Խոսրով Հայոց վրայ աւելի մեծ բանակ մը խաւրեց Վարհամ՝ զօրապետին հրամանին սակ. բայց Հոյ նախարարներուն մէջ երկպառակութիւն ծագելով՝ Վարդան չկրցաւ զանոնք միաբանել եւ նորէն թշնամւոյն դէմ ելլել, անոր համար ընտանիքն առաւ Յուստինոսին քովը դնաց եւ անկէ օգնութիւն խնդրեց: Կայսրը Մարկիանոս զօրավարին հրաման տուաւ որ շուտով Յունաց զօրքն առնու չայոց օգնութեան երթայ, որուն հետ Վարդան ալ եկաւ, եւ երկայն ժամանակ Պարսից հետ կռուեցան, բայց վերջապէս Խոսրով յաղթող եղաւ ու Հայաստանի նորէն տիրեց. եւ որպէս զի Հայոց սիրտը շահի, անոնց հետ քաղցրութեամբ սկսաւ վարուիլ. ասդին անդին ցրուածներուն եւ ամուր տեղեր փախածներուն ալ հրաման խաւրեց որ տեղերնին դառնան եւ ամէն մարդ խաղաղութեամբ իր ստացուածքը վայելէ, եւ Վղոն Ճիհր իշխանը մարզպան դրաւ:

ԼԹ. Խոսրովին մեռնելէն ետքն՝ անոր յաջորդն Որմիզդ դարձեալ Յունաց դէմ պատերազմի ելլելով՝ Հայաստան նորէն իր հանգիստը կորսնցուց, մինչեւ որ Մօրիկ (Մաւրիկիոս) հայազգի քաջ իշխանը Յունաց կայսր ընտրուելով՝ պատերազմներուն վերջ տուաւ ու խաղաղութիւնն հաստատեց: Ասոր ժամանակը զԽոսրով Բ. առաջին Խոսրովին թոռն՝ որն որ Որմիզդին տեղը թագաւոր դրուած էր, իր իշխանները վճռեցին. Խոսրով Մօրիկ կայսեր դիմեց եւ անկէ

օգնութիւն խնդրեց : Կայսրը ներսեւ հայ իշխանք Յունաց բանակով անոր օգնութեան խաբեց , որոն հետ միացան նաեւ Մուշեղ Մամիկոնեան Հայաստանին Յունաց մասին իշխանն եւ Սմբատ Բագրատունի սպարապետն իրենց զօրքովն , եւ գացին սասաիկ քաղութեամբ Խոսրովին թշնամիներուն հետ պատերազմեցան , անոնց յաղթեցին եւ զանիկա նորէն իր աշտուր նստեցուցին :

ԳՆՈՒԽ ԺԸ

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ԴԱԻԹ ՍԱՀԱՌՈՒՆԻ

Խ. Սմբատ Բագրատունին Հայաստանի մարզպան կը դրուի (592) : Իր Հեփթաղներուն դէմ ըրած քաջութիւնները : ԽՂ. Դաւիթ Սահառունիին մարզպանութիւնը (600) : Տարօն գաւառին մէջ եղած պատերազմները :

Խ. ԽՈՍՐՈՎ Բ. երեք հայ իշխաններուն քաղութեամբ թագաւորութիւնը նորէն ձեռք ձգելով՝ անոնց շատ պարգեւներ եւ մեծ պատիւ տուաւ , մանաւանդ Սմբատ Բագրատունիին , որուն արտաքոց կարգի քաղութեանը համար զինքը Պարսից սպարապետ ըրաւ . եւ երբ որ անիկայ իր ուրիշ թշնամիներն ալ բոլորովին նուաճեց , զինքը Հայաստանի ու Վրկանի կողմերուն մարզպան դրաւ : Սմբատ իշխանութիւնն առածին պէս իր երկիրներուն այցելութեան ելաւ եւ Վրկանից շուառն երթալով տեսաւ որ հոն շատ դերի տարուած Հայեր կան , որոնք իրենց ազգային լեզուն բոլորովին մոռցեր են . շուտ մը Հայաստանէն վարպետներ բերել տուաւ , եւ անոնց հայերէն սորվեցուց . Հաբէլ անունով քահանայ մ'ալ անոնց եպիսկոպոս դրաւ :

Խոսրով նորէն Հեփթաղներուն եւ ուրիշ թըշնամիներուն դէմ պատերազմի ելլելով՝ Սմբատն իր

զօրքին սպարապետ դրաւ, որն որ իր քաջութեամբն առնուն յաղթեց, Հեփթաղաց թագաւորին հետ ալ երկու անգամ մենամարտութիւն ըրաւ եւ զանիկա սպաննեց: Աս յաղթութիւններէն ետեւ զեւ Հայաստան չբարձած՝ Տիգրան քաղքին մէջ հիւանդացաւ ու վախճանեցաւ, որուն իշխանութիւնը 8 տարի տեւեց:

ԻԱ. Սմբատին տեղը Դաւիթ Սահառունի՝ հայ իշխանը մարզպան դրուեցաւ: Ասոր իշխանութեան առաջին տարին Մօրիկ կայսրն իր զօրքէն սպաննուեցաւ եւ անոր յաջորդեց Փոկաս զօրապետը: Խոսրով իր բարերարին սպաննուիլը լսածին պէս 140,000 զօրքով Յունաստան արշաւեց անոր մահուան վրէժն առնելու համար, եւ Հայաստանէն անցնելու ատենը Մուշեղ Մամիկոնեանին ալ հրաման խաւրեց որ ինքն ալ իր զօրքովն Յունաց երկիրն արշաւէ: Մուշեղ Պարսից դէմ սաստիկ ատելութիւն ունենալով՝ թագաւորին հրամանին չհնազանդեցաւ, եւ սկսաւ իր դաւառը (Տարօն) ամրացընել: Խոսրով ասոր վրայ շատ բարկացաւ եւ Յունաց երկիրն անպատակելէն ետքն, երբ որ դարձաւ Հայաստանին կարին քաղաքն եկաւ, իր Միհրան՝ քեռորդին 30,000ով Մուշեղին

1 Աս իշխանին վրայ մեր պատմագիրները շատ շփոթ կը խօսին. Ստեփանոս Ասողիկ եւ կիրակոս կ'ըսեն թէ Պարսից Խոսրով թագաւորը զանիկա մարզպան դրաւ, եւ նոյն իշխանութեան մէջ 30 տարի մնաց: Իսկ Յովհանն կաթողիկոս եւ Վարդան կ'ըսեն թէ Հերակլ կայսրէն կիւրապազատ դրուեցաւ եւ միայն 3 տարի նոյն իշխանութիւնը վարեց: Աս իրարու ներհակ պատմութիւններէն եւ միանգամայն ժամանակին կարգէն յայտնի կ'երեւայ որ Դաւիթ նախ Պարսից թագաւորէն

մարզպան դրուելով՝ 23 տարի չափ Հայաստան կառավարելէն ետեւ, նոյն իշխանութենէ ելած, եւ քանի մը տարի ետքը Հերակլ զինքը կիւրապազատ դրած է: Նոյն պէս Դաւիթին յաջորդներուն վրայ ալ զանազան եղանակաւ կը խօսին, ոմանք աս ոմանք ուրիշ մը, ոմանք աւելի ոմանք պակաս իշխան, նաեւ անոնց իշխանութեան տարիներն ալ իրարու անհամաձայն կը դնեն: Մենք ասոնց մէջէն որչափ որ կարելի էր ճշմարիտ ու հաւանական երեւցածը քաղելով գրինք:

վրայ խաւրեց, որ լանիկա նուածէ: Եկաւ Միհրան Տարօն մտաւ եւ Արձան բլրին վրայ բանակը գրաւ. անկէ 8000 հոգի հետն առած Մեղաթինն եւ Ասաեղօն բերդին վրայ դնաց. Մուշեղ ալ Գայլ Աւհան իշխանն անոր դէմ խաւրեց, որն որ զանազան հնարքներով ու խարդախութեամբ անոր զօրքը ջարդեց, զինքն ալ սպաննեց: Մուշեղին մահուանէ ետքը Աւհան 88 տարուան ծերունին Մամիկօնեան ցեղին նախարար եղաւ, եւ իր Սմբատ որդւոյն հետ խոսորովին նորէն Տարօնի վրայ խաւրած 30,000 զօրքին յաղթեց ու փախուց, եւ ինքը նոյն տարին վախճանելով՝ Սմբատ անոր տեղն անցաւ, որն որ դարձեալ Պարսից Ախիթանկ զօրապետին յաղթեց ու զանիկա սպաննեց: Ախիթանկէն ետեւ խոսորով Տիգրան զօրապետը 20,000ով Սմբատին վրայ խրկեց, բայց ան ալ յաղթուեցաւ եւ սպաննուեցաւ: Սմբատին յաջորդեց իր որդին Աւհան՝ որն որ թէպէտ եւ Մամիկօնեան ցեղէ էր բայց Կամսարական կ'անուանուէր: Ասոր ապէն 18 տարի Տարօն հանգիստ մնայէն ետեւ Պարսից Աւրգուհր զօրապետը 50,000 զօրքով նորէն հսն արշաւեց: Աւհան Աստուծոյ օգնութեանն ապաւինած՝ իր Տիրան որդւոյն հետ անոր դէմ ելաւ եւ սաստիկ քաջութեամբ պատերազմեցաւ, զօրապետն սպաննեց, զօրքին ալ մէկ մասը ջարդեց մնացածը փախուց. անկէ ետքը Պարսից Տարօն յարձակիլը դադրեցաւ:

Գ Լ ՈՒ Խ Ժ Բ

ՎԱՐԱԶՏԻՐՈՑ ՄԱՐԶՊԱՆԸ . ԴԱՒԻԹ ,
ՎԱՐԱԶՏԻՐՈՑ , ՀԱՄԱԶԱՍՊ ԵՒ ԳՐԻԳՈՐ
ԿԻՒՐԱՊԱՂԱՏՆԵՐԸ

ԽԲ . Վարազաիրոցին մարզպանութիւնը (623) . Դաւիթ Սա-
հառունին կիւրապաղատ դրուիլը (632) : ԽԳ . Հագարացիք
Հայաստան կը յարձակին ու Դուին քաղաքը կը գերփեն :
ԽԴ . Ներսէս Գին կաթողիկոս ընտրուին (640) եւ վա-
րազաիրոցին ու Սմբատին կիւրապաղատ դրուիլը : ԽԵ . Հա-
գարացւոց եւ Յունաց Հայաստան ըրած արշաւանքները .
Համազասպ Մամիկոնեանին կիւրապաղատութիւնն ու Հայոց
իշխաններուն Հագարացւոց հնազանդիլը : ԽԶ . Գրիգոր Մա-
միկոնեանին Հայաստանի վերակացու դրուիլը (659) , Խզըաց
դէմ ըրած յաղթական պատերազմն եւ իր մահը : Յունաց
Հայաստան արշաւելն եւ ետ քաշուիլը . Հագարացւոց բոլո-
րովին Հայաստանի տիրելը (693) :

ԽԲ . ԴԱՒԻԹ Սահառունին մարզպանութեան
23 երորդ տարին Վարազաիրոց Բագրատունին՝ Սմբատ
մարզպանին որդին , անոր տեղը մարզպան դրուեցաւ ,
որն որ 8 տարի իշխանութիւնը վարելէն ետքն՝
իմանալով որ Ատրպատականին Ռոստոմ իշխանը
զինքն սպաննելու ետեւէ է , ընտանիքն առաւ Յու-
նաց Երկիրը փախաւ , որուն տեղը Հերակլ կայորը
Դաւիթ Սահառունին կիւրապաղատ դրաւ : Բայց
հազիւ թէ երեք տարի անցաւ , իշխաններն ու զօրքն
իրեն դէմ ելան ու վռնտեցին , եւ իրենք սկսան
իրարու հետ հակառակութիւն ընել եւ Հայաստանը
խռովել : Միայն Թէոդորոս Ռշտունի բարեպաշտ ու
քաջ իշխանն իր զօրքովը խռովութիւնները դադրե-
ցնելու կ'աշխատէր , եւ Հայաստան յարձակող ար-
տաքին թշնամիներուն դէմ կը դնէր :

ԽԳ . Աս խռովութեանց ժամանակը , յանկարծ
Հագարացւոց 18,000 զօրքն Ապարահման իշխանին
հրամանին տակ Ատրեւտանին կողմէն Հայաստան

մասն, եւ դիմացնին ելլող մը շգտնուելով՝ ամէն կողմ՝
աւրեցին, յափշտակեցին եւ մինչեւ Տարօն անարգել
յարաջ եկան: Տիրան Մամիկոնեան՝ Վահան Վամ-
սարականին որդին, Հայոց իշխաններուն հրեշտակներ
խաւրեց եւ զանոնք յորդորեց որ դան ժողովին եւ
աս նոր թշնամին իրենց երկրէն դուրս վաճառեն: Երբ
որ անոնք մտիկ չըրին, ինքն Աստուծոյ ապաւինած՝
իր 8000 զօրքովը թշնամւոյն դէմ ելաւ ու սաստիկ
քաջութեամբ պատերազմեցաւ. բայց իր կողմանէ,
Սահուռ Անձեւացին թշնամեաց կողմն անցնելով՝ իր
գունդը տկարացաւ ու թշնամւոյն բազմութենէն պա-
շարուեցաւ, եւ երկայն ատեն պատերազմելէն ետքը
զարնուեցաւ ինկաւ, զօրքն ալ ջարդուեցան: Հա-
գարացիք անկէ մինչեւ Գուին յառաջ քալեցին, պա-
շարմամբ քաղաքն առին, այրեցին, ջարդեցին եւ
35,000 հոգի գերի առած տեղերնին դարձան:

ԽԳ. Հագարացիք Հայաստանէն քաշուելուն պէս
նախարարները ժողովուեցան եւ վախճանած Եզր կա-
թողիկոսին տեղը՝ Ներսէս Գ. Տայոց եպիսկոպոսը
կաթողիկոս դրին, որն որ ամէն ճգամբ ազգին խեղ-
ճութեան դարման տարաւ, շատ կործանած տեղեր
շինել տուաւ, եւ Վարազտիրոց Բագրատունին՝ որն
որ կայսրմէ ապստամբած եւ անոր քովէն Հայաստան
փախած էր, նորէն անոր հետ հաշտեցուց եւ Հայոց
կիրապալատ դնել տուաւ: Քիչ մը ետքը Վարազ-
տիրոց մեռաւ, եւ անոր տեղը կայսրը՝ Ներսէս կա-
թողիկոսին խնդրելովն՝ անոր Սմբատ որդին դրաւ.
Թէտդորոս Ռշտունէիէն ալ սպարապետութեան իշ-
խանութիւն տուաւ, եւ այսպէս երկիրը քիչ մը հան-
գիստ ու խաղաղութիւն գտաւ:

ԽԵ. Բայց աս խաղաղութիւնը շատ երկայն
չտեւեց. որովհետեւ աս ժամանակները Հագարացիք
սաստիկ զօրանալով՝ Պարսից եւ Ասիայի ուրիշ թա-
գաւորութիւններուն վրայ յարձակեցան եւ իրենց իշ-
խանութեան տակը նուաճեցին. անկէ արեւմտեան

կողմը դառնալով՝ բոլոր զօրութեամբ Հայաստան մտան շատ գաւառներու օտրեցին ու մտրդիկը ջարդեցին : Հայ նախարարները տեսնելով որ ահապին թըշնամույն դէմ դնելու՝ բաւական զօրութիւն չունին, Յունացմէ ալ օգնութիւն գտնելու յոյս չկայ, Հաղարացւոց ամիրապետին հրեշտակներ խաւրեցին, եւ խոստացան որ անկէ ետքն իրեն կը հնազանդին : Աստանդին կայսրն սա բանս լսածին պէս սաստիկ բարկացաւ, եւ զօրքն առած Հայաստան արշաւեց, միտքը դնելով որ բոլոր Հայերը ջնջէ. բայց Ներսէս կաթողիկոսին աղաչանքովը նորէն հաշտուեցաւ, եւ իր զօրքէն Հայաստան պահապան դնելով՝ ետ դարձաւ : Ասոր վրայ Հաղարացիք նորէն Հայաստան յարձակեցան, ամէն կողմէն Յունաց զօրքերը վաճակեցին, երկիրը նուաճեցին, եւ իշխաններուն կիներն ու որդիքը գերի առած՝ վրանին ալ սաստիկ սուրբ դրած ետ դարձան : Նախարարներն սա սուրբին ծանրութենէն շատ նեղութիւն քաշելով՝ դարձեալ կայսեր դիմեցին եւ անոր հպատակեցան, որն որ Ներսէս կաթողիկոսին խնդրելովը Համազասպ Մամիկոնեանը կիւրապաղատ դրաւ : Ամիրապետն երբ որ Հայոց իրմէ ապստամբիլը լսեց, բոլոր անոնցմէ առած պատանդները (1775 հոգի) սպաննել տուաւ, եւ կը պատրաստուէր որ Հայաստան արշաւէ. բայց իր զօրացը մէջ մեծ խռովութիւն ծագելով՝ զինքն ալ սպաննեցին եւ երկայն ատեն իրարու հետ կռուեցան, մինչեւ որ Մաւի կամ Մաւիէ զօրապետը խռովութիւնները դադրեցուց եւ ամիրապետ եղաւ : Հայերը վախնալով որ Հաղարացիք դարձեալ իրենց վրայ կը յարձակին, եւ Յունաց ալ ատնութիւն ունենալով՝ նոր ամիրապետին հրեշտակ խաւրեցին եւ անոր հպատակեցան :

ԽԶ. Համազասպ կիւրապաղատն իր իշխանութեան երրորդ տարին վախճանեցաւ, որուն տեղ ամիրապետը Ներսէս կաթողիկոսին խնդրելովը Գրիգոր Մամիկոնեանը Հայաստանի վերահացու դրաւ : Աս

բարեպաշտ իշխանն Երկէոր միշտ խաղաղ ու հանգիստ պահէլու ջանաց, եւ շատ շինութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ: Երբ որ Խազրաց զօրքը բազմութեամբ Հայաստան արշաւեցին, Գրեգոր իր զօրքովն անոնց դէմ ելաւ ու յաղթեց, բայց ինքն ալ թշնամիներէն վիրաւորուելով մեռաւ, եւ անկէ ետքը քանի մը տարի Հայաստան գարձեալ խռովութեան մէջ մնալէն ետեւ, Աշոտ Բագրատունի Բիւրատեան իշխանն սկսաւ երկրին քիչ մը խնամ տանիլ: Աս խառնակութեան ժամանակը Յոյները նորէն բիւրաւոր զօրքով Հայաստան արշաւեցին, շատ դաւաւներ ասպատակեցին ու կրակի տուին, մարդիկներն անխնայ ջարդեցին. քիչ մը ետքն ալ Հազարացիք հարաւային կողմէն Հայաստան մտան, շատ տեղեր ասպատակեցին, բերդերը կործանեցին եւ Աշոտ իշխանն սպաննեցին: Ասոր վրայ Յուստինիանոս կայսրն անձամբ Յունաց բանակին գլուխն անցած Հայաստան եկաւ, ամէն կողմանէ թշնամիները վռնտեց, երկիրն իր իշխանութեան տակն առաւ, ամէն իշխանները նուաճեց, եւ որպէս զի նորէն չապստամբին, անոնց որդիները պատանդ առաւ, Ներսէս կամնարականը Հայաց պատրիկ դրաւ, եւ իր զօրքէն 30,000 Հայաստան պահապան թող տալով՝ կոստանդնուպոլիս գարձաւ: Բայց տարիէ մը Յունաց զօրքը Հայաստանէն բոլորովին քաշուեցան եւ ալ ետ չդարձան. անկէ ետեւ Հազարացիք բոլոր երկիրն իրենց տակը նուաճեցին եւ հազարացի իշխաններուն ձեռքովը կը կառավարէին:

Գ Լ ՈՒ Խ Ժ Գ

Ա Բ Դ Լ Լ Ա Յ Ի Ն Ս Ս Ե Ի Կ Ա Ն ՈՒ Թ Ե Ն Է Ն Մ Ի Ն Չ Ե Ի Ե Ջ Ի Տ Բ .

ԽԷ. Աբդուայ (Ապաուլաս) Հայաստանի ոստիկան կը դրուի (694). Սմբատ Բիւրատեան Յունաց հետ կը միարանի եւ Հազարացւոց զօրքը կը ջարդէ: Մոհմաա զօրապետը Հայոց վրայ կու գայ, Ներսէս Կամնարականէն կը յաղթուի եւ Սահակ կաթողիկոսին միջնորդութեամբը հաշտութիւն կ'ընէ: ԽԸ. Կոշտին (704) Վլիթին (717) ոստիկանութիւնն եւ անոնց բրաճները: ԽԹ. Մոհմաա: Աբդուազիզ, Մրուան եւ Եզիա իրարու ետեւէ Հայոց ոստիկան կը դրուին (727—758): Սմբատ Բազբատունիին պատրիութիւնը (760) եւ Սիւլէյմանին (767) ու Պէքիբին ռաթիկանութիւնը: Սմբատին սպաննուիլը: Ծ. Հասանին ոստիկանութիւնը, Հազարացւոց զօրքին Հայաստան սպառնալիքն ու Հայոց իշխաններուն անոնց դէմ բրաճները: Եզիտին ոստիկան դրուիլը (786) եւ Հայոց իշխանները նուաճելը: Յունաց իշխանութեան տակն եղող Հայոց ապստամբիլը:

ԽԻ. ՅՈՏԵՆԲԸ Հայաստանէն երթալուն պէս, Հազարացւոց ամիրապետն Աբդուայ անունով անգութ իշխան մը զօրքով հոն խաւրեց, զինքը Հայոց ոստիկան անուանելով, որն որ եկաւ բոլոր երկիրը նուաճեց, Սահակ կաթողիկոսն եւ ամէն իշխանները բռնեց շղթայով կապած Գամասկոս խրկեց, եկեղեցիներուն զարդերը կաշուպատեց, եւ ազգը սաստիկ տառապանաց մէջ ձգեց: Բայց քիչ մը ետքը Գամասկոս խրկուած իշխաններուն մէջէն Սմբատ Բիւրատեան Բազբատունի իշխանը փախաւ Հայաստան եկաւ, եւ ազգին խեղճութիւնը տեսնելով՝ Յուստինիանոս կայսրմէ օգնութիւն խնդրեց Հազարացիները Հայաստանէն վռնտելու համար: Կայսրը՝ Լեւոն իշխանը մեծ բանակով մը Հայոց օգնութեան խաւրեց, որուն հետ Սմբատ ալ իր ժողոված զօրքովը միանալով՝ Հազարացւոց զօրքը բոլորովին ջարդեցին: Ասոր վրայ ամիրապետը Մոհմաա (Ոգբայ) զօրապետը խաւրեց որ

Հայերը նուսձէ՛. բայց անիկա երբ որ վանանդ դաւառը հասաւ, Ներսէ՛՛ համարակա՛նը գէմն ելաւ ու զօրքին աղէկ ջարդ մը տալով փախուց: Մոհմատ նորէն սուելի շատ զօրք ժողվեց եւ կատաղաբար Հայաստան մտաւ, միտքը դնելով որ բոլոր Հայերը սրէ անցընէ: Սահակ կաթողիկոսն առ բանիս լուրն առնելով՝ Գամասկոսէն ճամբայ ելաւ որ Մոհմատին քովն երթայ եւ անոր բարկութիւնն իջեցընէ. բայց ճամբան հիւանդանալով՝ աղաչանքի թուղթ մը գրեց եւ ինքը վախճանեցաւ: Երբ որ Մոհմատ անոր մարմնոյն քովն եկաւ, ինչպէս որ Յովհան կաթողիկոս կը պատմէ, կաթողիկոսն ողջի պէս ձեռքը շարժելով՝ նամակը զօրապետին առաւ եւ զանիկա հաշտեցուց:

ԽԸ. Տարի մ'ետքը կոշմ զօրապետը Հայոց ոստիկան եղաւ, որն որ ամէն հայ իշխաններն ու զօրքը խաբէութեամբ նախիջեւան ժողվեց, ու զէնքերնին ձեռքերնէն առնելով՝ ամէնն ալ եկեղեցւոյն մէջ խոթեց եւ այրեց. ասիկէ ետքն իր զօրքն ամէն տեղ ապատակեցին, Գուին քաղաքն ալ առին ու բնակիչներուն շատերը ջարդեցին, եւ շատ գերի առած Գամասկոս տարին:

Կոշմին ոստիկանութեան 13երորդ տարին՝ անոր տեղն եկաւ Վլիթ ոստիկանն, որուն ժամանակը Յովհան Իմաստասէր կաթողիկոս եղաւ: Աս եռանդնատ հայրապետն իր արտաքին վարմունքովն ոստիկանին եւ նոյն իսկ ամիրապետին սիրելի ըլլալով՝ անոնցմէ շատ պատիւ գտաւ եւ բոլոր իր կաթողիկոսութեան ժամանակը Հայաստան հանգիստ պահեց:

ԽԹ. Վլիթին ոստիկանութեան 10երորդ տարին, իր տեղն եկաւ Մոհմատ անպիտան ու խոռվարար իշխանն՝ որն որ 4 տարի ազգը շարջարելէն ետեւ, ամիրապետէն կանչուեցաւ եւ իր տեղն Աբդլազիզը դրուեցաւ: Ասոր ալ յաջորդեց Մրուան իշխանն՝ որուն ժամանակը Հայաստան շատ հանգիստ գտաւ: Ասիկա Աշոտ Բագրատունին իրեն գործքերուն օգ-

նական սուտ, զանիկա իշխանաց իշխան անուանելով. եւ երբ որ Հագարացոց մէջ խռովութիւն ծագելով՝ ամիրապեան սպաննուեցաւ, եւ ինքը Հայոցմէ եւ ուրիշ ազգերէն զօրք ժողված՝ խռովութիւնը դադրեցնելու գնաց, Հայաստանին կառավարութիւնը բարձրովն Աշոտին յանձնեց: Բայց քանի մը տարիէն Մրուան՝ որն որ ամիրապետ նստած էր, մեռնելով՝ անոր յաջորդը Հայաստան Եզիտ ոստիկանը խրկեց: Նախարարներն աս ոստիկանին դրած սաստիկ սուբբին ու ժողովրդեան հասցուցած չարութեան համար շատ նեղացան, եւ ուզեցին ամիրապետէն ապստամբիլ. եւ որովհետեւ Աշոտ Բագրատունին դէմ կը գնէր, եւ զանոնք կը յորդորէր որ պարապ անդ նստէն խռովութեան եւ արիւնհեղութեան պատճառ չըլլան, Գաւիթ եւ Գրիգոր Մամիկոնեան իշխաններն՝ որոնք արդէն յառաջագոյն Աշոտին դէմ թշնամութիւն ունէին, զանիկա բռնեցին եւ աշուրները հանեցին: Բայց ետքն իրենք ալ տեսնելով որ ապստամբութեամբ չեն կրնար բան մ'ընել, իրենց խորհրդէն ետ կեցան:

Եզիտ Չաարի ետքը Պաղտատ կանչուելով՝ Սմբատ Բագրատունին Հայոց պատրիկ դրաւ, որուն իշխանութեան Յերոսդ տարին, Սիւլէյման իշխանն ոստիկան դրուեցաւ. ասոր ալ յաջորդեց Պէքիր՝ որն որ Հայոց շատ նեղութիւն սուտ. աս պատճառաւ շատ կողմերն սաք ելան եւ Հագարացոց զօրքը ջարդեցին: Պէքիր Միջագետաց Մուսի իշխանէն զօրք բերել տալով՝ ապստամբները դարձեալ նուաճեց՝ Սմբատ պատրիկն ալ բռնուեցաւ եւ սպաննուեցաւ:

Ծ. Պէքիրէն ետքն եկաւ Հասան ոստիկանն՝ որն որ Հայաստանին խեղճութիւնը վերջին տտիճանի հասցուց. հարուսաներուն ինչքը յափշտակեց, եւ ամէն կողմ ասպատակ խաւրելով՝ քաղաքներն ու գեղերը թալլեց: Մուշեղ Մամիկոնեան իր զօրքովն աս ասպատակներուն դէմ ելաւ եւ անոնց մեծ մասը ջարդեց ու ցրուեց. ուրիշ նախարարներն ալ ասկէ

որտ առած՝ եկան իրենց զօրքովը (5000 հոգի) Մուշեղին հետ միացան եւ Հագարացիներէն բոլորովին ապստամբեցան : Բայց անոնք 30,000ով Մուշեղին հետ միաբանածներուն վրայ յարձակելով՝ 3000 հոգի Մուշեղն ալ մէկտեղ սպաննեցին, մնացածը ցրուեցին, եւ սկսան դարձեալ երկիրն ասպատակել. Հայ իշխաններն ալ զարհուրած ամուր տեղեր քաշուեցան : Միայն Աշոտ Մասիկը Բաղրատունի իշխանն իր Շապուհ եղբօրը հետ աս ասպատակներուն դէմ ելլելով՝ կրցաւ քանի մը գաւառ անոնց յարձակմանէն ազատ պահել, Վասպուրականին կողմերն ալ Սահակ, Համազասպ եւ Մերուժան իշխաններն իրենց զօրքովը թշնամիները վանելով՝ նոյն նահանգը հանգիստ պահեցին : Աս խառնակութիւնը հինգ վեց տարի անդադար շարունակեց, մինչեւ որ Հարոն Հագարացւոց ամիրապետ եղաւ եւ Եղիա ստիկանը զօրքով Հայաստան խաւրեց, որն որ եկաւ ամէն իշխանները դարձեալ նուաճեց, ու Վասպուրականին երեք նախարարները բռնելով՝ ստիպեց որ հաւատքնին սրանան. անոնցմէ երկուքը Սահակ եւ Համազասպ յանձն չառին ու նահատակեցան. իսկ Մերուժան հաւատքն ուրանալով իր տեղը գառնալու ատեն, Գաւիթ Մամիկոնեան ճամբան վրան հասաւ ու զարկաւ սպաննեց :

Աս ատենները Յունաց իշխանութեան տակ եզող Հայերը կայսրմէ ապստամբեցան, եւ քանի մ'անգամ անոր զօրքին յաղթեցին. բայց ետքը մէջերնին երկպառակութիւն ծագելով՝ յաղթուեցան ու նուաճեցան, որոնցմէ շատերն ալ Հագարացւոց իշխանութեան տակը մտան :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Խ Ո Ւ Զ Ի Մ Ա, Հ Ո Լ, Ա Պ Ո Ւ Ս Է Թ

Ծ Ա. Խուզիմա (792) ու ՀՈԼ (803) ոստիկան կը ղրուին: Աեւադա Պարսիկն ոստիկանութիւնը ձեռք ձգելու համար Հոլին դէմ կ'ելլէ: ՀՈԼ ետ կը կանչուի եւ Բագարատ Բագրատունին Հայաստանի վերակացու կը դրուի: Ծ Բ. Բարան Պարսիկն պատճառաւ Հայաստանի մէջ եղած պատերազմը. Ապուսէթ ոստիկանին Հայաստան գալը. Բագարատին բռնուիլն եւ Սասունցիներուն զԱպուսէթ սպաննելը (849): Ծ Գ. Բուխայ զօրապետին Հայաստան գալն եւ ըրած աւերն ու սպանութիւնները. նախարարներուն բռնուիլն ու գերի տարուիլը:

Ծ Ա. Խ Զ Ի Տ Ի Ն ոստիկանութեան Դներդպ սարին Խուզիմա իշխանն անոր ակեղ ոստիկան դրուեցաւ, որն որ 10 տարի կառավարելէն ետքը մեռաւ, եւ իրեն յաջորդեց ՀՈԼ ոստիկանը: Բայց Աեւադա անունով Պարսիկ իշխան մը Բագրատունեաց նախարարութեանէն կին առած ըլլալով՝ Սմբատ Բագրատունի սպարապետը, Սիւնեաց Սահակ իշխանն եւ ուրիշ շատ նախարարներ իրեն հետ միաբանեց, եւ զօրք ժողոված՝ Հոլին դէմ ելաւ որ զանիկա վռնտէ եւ ինքը Հայաստանին իշխան ըլլայ: Ոստիկանն՝ որովհետեւ անոր դէմ գնելու բաւական զօրութիւն չունէր, հայ իշխաններուն հրեշտակ խաւրեց եւ ըսաւ. Թէ որ ինձի հնազանդիլ չէք ուզեր, պատերազմէն ետ կեցէք եւ թող տուէք որ խաղաղութեամբ տեղս երթամ. կաթողիկոսն ալ մէջ մտաւ ու շատ յորդորեց որ խաղաղին, բայց երբ որ Աեւադա մտիկ չըրաւ, ՀՈԼ 2000 քաջ զօրքով յանկարծ անոր բանակին վրայ յարձակեցաւ, շատերը ջարդեց՝ որոնց մէջ նաեւ Սահակ Սիւնի իշխանն ալ. իսկ Աեւադա ու Սմբատ հազիւ փախան եւ ազատեցան: Ասկէ ետքն եկաւ Դաւիթ կաթողիկոսին հայ իշխաններուն ըրածին համար քանքատեցաւ, եւ անոր միջնորդութեամբը Սմբատին

հետ հաշտուեցաւ, եւ Հայաստան 15 տարի խաղաղութեամբ կառավարելէն ետեւ, ամիրապետէն կանչուելով՝ Բագարաւ Բագրատունին Հայոց պատրիկ դրուեցաւ:

ԾԲ. Բագարատին իշխանութեան չորրորդ տարին, Բաբան անունով Պարսիկ մ'ուղեւով Պարսից թագաւոր ըլլալ եւ զանոնք ամիրապետին իշխանութենէն ազատ ընել, զօրք ժողովեց եւ Հագարացիներէն ապստամբեցաւ. քանի մ'անգամ ալ անոնց յաղթեց: Ետքը Հայաստան Սիւնեաց դաւառն եկաւ եւ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Հայերն ալ իրեն հնազանդեցրնէ, ու անոնց հետ մէկտեղ ամիրապետին դէմ դնէ: Ամիրապետն սա ապստամբին դէմ ահագին բանակ մը խաւրեց, որուն հետ Սմբատ սպարապետին զօրքն ալ միանալով՝ անոր հետ վարնուեցան ու յաղթեցին. զինքն ալ Սմբատին Սահլ որդին բռնեց Հագարացոց Ափշին զօրապետին բերաւ: Զօրապետը Սահլին սա քաջութեանը համար շատ պարգեւներ տուաւ, եւ երբ որ ամիրապետին քովը գնաց՝ զանիկա շատ դովեց, նոյնպէս անոր հօրը Սմբատին ըրած օգնութիւնն ու քաջութիւնները պատմեց, իսկ Բագարատը սաստիկ վար զարկաւ եւ ամիրապետին աչքէն հանեց: Քիչ մը ետքն ամիրապետն ուրիշ կողմանէ ալ անոր վրայ զանազան ամբաստանութիւններ լսելով՝ Ապուսէթ իշխանն ոստիկան ըրաւ ու զօրքով Հայաստան խաւրեց որ Բագարատը բռնէ եւ իրեն խրկէ: Եկաւ ոստիկանը Տարօնի մէջ զանիկա բռնեց ու շղթայով կապած՝ ամիրապետին խաւրեց 10 տարի պատրիկութիւն ընելէն ետքը: Սասունցիները (Տարօն դաւառին սահմանակից) սա բանիս վրայ սաստիկ բարկացան, եւ մէջերնին միաբանելով՝ յանկարծ Ապուսէթին վրայ յարձակեցան ու բռնեցին սպաննեցին, քովն զօրքն ալ ցիր ու ցան ըրին:

ԾՎ. Ամիրապետան ուս բանիս լուրն առածին պէս իր ծառաներուն մէջէն Բուխա անունով անդութ եւ արինեկրակ մարդն անհամար զօրքով Հայաստան խաւրեց որ Աւուսէթին մահուան վրէժն առնու, հրաման տալով որ ամէն հայ իշխանները բռնէ իրեն խաւր, ժողովրդեան մէջէն երիտասարդները մահմետական աղանդը դարձնէ, իսկ մնացածները սրէ անցընէ: Բուխա իրեն յանձնուած դործքն արապոյ կարգի անդթութեամբ կատարեց. նախ Տարօն գաւառն եկաւ ու Բաղարատին Աշոտ ու Գաւիթ որդիները բռնեց շղթայի վարկաւ, եւ զօրքն ամէն կողմ ջրուեց որ ասպատակեն, որոնք քաղաքներուն ու գեղերուն բնակիչներն անխնայ ջարդեցին, եւ ուղածնին բռնեցին իրենց զօրապետին տարին: Անկից Ասպուրական նահանգն անցաւ, ուր Աշոտ Արծրունի պատրաստուեցաւ որ դէմ դնէ. բայց երբ որ տեսաւ որ ուրիշ իշխանները չեն միաբանիր, ելաւ իր ընտանիքովը Բուխային դնաց, որն որ անմիջապէս զանիկա շղթայով կապեց եւ անոր գաւառներն ալ ասպատակեց: Սըմբատ սպարապետը Բուխային աս ըրածները տեսնելով եւ վախնալով որ իրեն ալ վնաս կը հասցընէ, շատ բնձաներով անոր դնաց, եւ անոր առաջնորդ եղաւ, որպէս զի հաճելի ըլլայ: Անորէն զօրապետը Գուին քաղաքն եկաւ, եւ զօրքն ամէն կողմ տարածեց, որոնք գաւառները թալեցին, շատ մարդ ջարդեցին եւ երիտասարդները գերի բռնած Բուխային բերին. շատ բերդերու ալ՝ որոնց մէջ իշխաններն ապաւինած էին, սաստիկ պատերազմով տիրեցին եւ իշխանները բռնեցին: Բուխա բռնուած գերիներն ստիպեց որ հաւատքնին ուրանան, որոնցմէ շատերը յանձն չառնելով՝ սաստիկ տանջանքներով մարտիրոս եղան. ոմանք ալ տանջանքներուն չկրցան դիմանալ եւ հաւատքնին ուրացան: Ասիկէ ետքը բոլոր բռնուած իշխաններն առաւ ամիրապետին տարաւ. Սմբատ սպարապետն ալ իրեն կանչեց եւ խոստանալով որ ամիրապետն իրեն

Հաւատարմութեան համար մեծ պատիւ ու շատ պար-
 փեներ պիտ'որ տայ, հաւանեցուց որ իրեն հետ գայ :
 Բայց երբ որ իշխանները շղթայով կապուած ամիրա-
 պետին առջեւն ելան, հրամայեց որ զանոնք բանտ
 դնեն . Սմբատն ալ կապել տուաւ ու միւսներուն հետ
 բանտարկեց եւ ստիպեց որ հաւատքնին ուրանան :
 Ոմանք յանձն առին եւ ազատեցան, քանի մը հոգի
 ալ նահատակեցան . իսկ Սմբատ հաւատքին վրայ հաս-
 տատուն կենալով՝ բանտին մէջ վախճանեցաւ, ասոր
 համար Խոզառովանող անուանեցաւ :

ՊԵՏԱՌՈՒԹԻՒՆ

Ն Ե Յ Ո Ց



ԳԻՐԻ ԶՈՐՐՈՐԴ

ԲԵԳՐԱՏՈՒՆԵՆՅ ԹԵԳԵՒՈՐՈՒԹԻՒՆԵՐ

ԱՅՍԱՍԱՆԻՆ կրած վերջին գառն ու սաստիկ հարուածն, որն որ իր ամբութիւններուն մեծ մասն ապականեց, բնակիչներէն շատերն սղառեց եւ իր գլխաւոր իշխաններն իրմէ յափշտակեց, զինքն արտաքոյ կարգի լքման ու վհատութեան մէջ ձգած, եւ աս վիճակէն ազատելու ու նորէն կազմուրելու յոյսը բոլորովին ջնջած էր: Բայց յանկարծ իր մնացած իշխաններուն մէջէն ելաւ արի, իմաստուն եւ աստուածապաշտ մէկն, որն որ չէ թէ միայն բոլոր երկրին թշուառ կերպարանքը քիչ ժամանակուան մէջ վախեց, այլ նաեւ զանիկա նոր վառաւորութեան ու բարձր աստիճանի մը հասցուց: Ասիկա էր Աշոտ Բագրատունի՝ Սմբատ Խոստովանողին որդին, որմէ սկսաւ Հայոց թագաւորութեան երրորդ Հարստութիւնն, եւ իր ցեղին անուամբը՝ Բագրատունեաց թագաւորութիւն անուանեցաւ: Աս ցեղին թագաւորութեան բոլոր ժամանակը Հայաստան մշտնջենաւոր պատերազմի դաշտ մը դարձած էր. օտար թշնամեաց յարձակումներ եւ անգաղար ներքին խռովութիւններ խաղաղութիւնը վայելելու շատ քիչ առեն թող տուին: Եւ թէպէտ շատ քաջ թագաւորներ եւ իշխաններ երկայնատեն արութեամբ այնչափ անհամար թշնամիներուն

դէմ՝ զրին ու ներքին խռովութիւնները զազրեցրնելու ջանացին, բայց օրէ օր երկրին ներքին կապերը քայքայեցան եւ տերութիւնն իր զօրութիւնն եւ անով ինքը զինքը բռնելու կարողութիւնը կորսնցուց, եւ վերջապէս իր ընտանի եւ օտար թշնամեացը դարանահալութենէն ընկճեցաւ :

Չորրորդ Գրքերնուս գլխաւոր Աշէի-րնէրն են դարձեալ Յովհան կաթողիկոս՝ որն որ իր պատմութիւնը մինչեւ Աշոտ Բ. թագաւորին ժամանակը կը հասցընէ : Սամուէլ երէց եւ Վարդան, որոնք Բագրատունի թագաւորաց կարգն եւ անոնց գործքերուն համառօտ պատմութիւնը կը գրեն : Ստեփանոս Ասողիկ, որուն պատմութիւնը մինչեւ Գաղիկ Ա.ին ժամանակը կը հասնի : Կիրակոս Գանձակեցի, Մատթէոս Ուսայեցի, եւ Արիստակէս Լաստիվերտացի, Բագրատունեաց վերջին թագաւորներուն գործքերն ու նոյն ցեղին թագաւորութեան զազրելուն պատմութիւնը կ'աւանդեն : Աս պատմագիրներէն զատ շատ հեղինակներ ու յիշատակարաններ եւ քանի մը յոյն մատենագիրներ Բագրատունի թագաւորաց գործքերն եւ անոնց ժամանակը Հայաստանի մէջ պատահած դէպքերը մեզի հասցուցած են, որոնցմէ աս գրքերնուս մէջ շատ բան քաղեցինք :

Գ Լ Յ Ի Խ Ա

Ա Շ Ո Տ Ա .

Ա . Աշոտ իշխանաց իշխան կը գրուի (859) եւ Հայաստան կը խնամէ : Գեորգի գացած նախարարներն ետ կը դառնան . Արատ Աշոտին եղբայրն սպարապետ կը դրուի : Զահապ սպարսիկն Հայաստան կ'արշաւէ , Արատ անոր կը յաղթէ : Բ . Աշոտ թագաւոր կը պսակուի (885) , Վասիլ կայսրն իրեն թագ կը խրկէ : Գ . Վանանդ դաւառին մէջ ծագած խռովութիւնն , Արատին հոն խրկուիլը : Գուգարաց ապստամբիլն եւ Աշոտին Սմբատ որդւոյն ձեռքովը նուաճուիլը : Գ . Աշոտին Կոստանդնուպոլիս Յունաց կայսեր այցելութեան երթալը : Իր հիւանդութիւնն ու մահը (889) :

Ա . ԱՇՈՏ՝ Սմբատ Խոստովանողին որդին , հօրը Պաղատաւ երթալու ատենն Հայոց սպարապետութիւնն առած ըլլալով , անոր ազլետալի մահուանէ ետքն սկսաւ ազգին խնամ տանիլ , եւ ամենուն հետ սիրով վարուելով ու կարօտութիւն ունեցողներուն առատ օգնութիւն ընելով՝ ժողովրդեան սիրան իրեն հետ կապեց : Աշոտին աս վարմունքին համբար քիչ ժամանակուան մէջ Մահմատ Զափր ամիրապետին ահանջն ալ հասաւ , որով անխկա ալ աս իշխանին վրայ մեծ համարում եւ շատ սէր ունեցաւ , եւ Ալի Արմեն անունով մէկն Հայաստան ստաիկան խաւրելով՝ անոր ձեռքովն Աշոտին իշխանաց իշխանի պատիւ տուաւ . բոլոր հարկերը ժողովէն անոր յանձնեց : Ասոր վրայ Աշոտ սկսաւ աւելի եւս ազգը խնամել եւ երկիրը կարգի դնել . եւ երբ որ գերի գացած նախարարները նորին Հայաստան դարձան եւ ըրած ուրացութիւններն աս վրայ զգջալով՝ դարձեալ քրիստոնէութիւնն ընդունեցան , անոնց շատ օգնութիւն ընելով ու շատ սէր ցուցնելով՝ ամենուն սիրելի եղաւ : Իր քաջ եւ արի եղբայրն Արատ զօրաց վրայ սպարապետ դրաւ , երկու ազգիկներէն մէկը Սիւնեաց Վասակ Գափուռ իշխանին կնութեան տուաւ եւ ամիրապետին հրովար-

տակովը զանիկա Սիւնեաց նախարար կարգեց. իսկ երկրորդը՝ Գրիգոր Դերեւնիկ Արծրունի վասպուրականի իշխանին հետ ամուսնացուց: Աս երկու երեւելի իշխաններն Աշոտին շատ օգնութիւն բրին եւ շատ տեղեր անոր ձեռքին տակ նուաճեցին:

Իսպից հազիւ թէ Հայաստան այսպէս նորէն կենդանանալու կը սկսէր, Ջահապ անունով պարսիկ իշխան մը 80,000 զօրքով իր վրայ յարձակեցաւ, եւ մինչեւ Երասխ գետին եզերքն յառաջանալով, հոն կանկ առաւ կեցաւ: Աբաս սպարապետն անմիջապէս 40,000 հայազունդ զօրքով անոր դէմ գնաց եւ անոր զօրքին վրայ խնջալով՝ մեծ մասը ջարդեց, մնացածը ցրուեց, զինքն ալ 16 հոգւով փախուց: Աս յաղթութեան լուրը շրջակայ ազգերուն սիրար մեծ ահձգեց, եւ անկէ ետեւ ժամանակ մ'աս նոր կազմուած տէրութեան վրայ յարձակելու համարձակող չեղաւ:

Բ. Անկէ ետեւ Աշոտ խաղաղութիւն գտնելով՝ իր սկսած կարգադրութիւնները յառաջ տարաւ, եւ բոլոր ջանքով Հայաստանին առաջին քաղաքականութիւնն ու պայծառութիւնը կենդանացնելու ետեւէ եղաւ: Նախարարներն երբ որ աս իշխանին իմաստուն կառավարութիւնն եւ անոր ձեռքովը քիչ ատենուան մէջ ազգին ըրած յառաջագիմութիւնը տեսան, անոր վրայ աւելի եւս սէր ու մեծարանք մը ստացան, եւ աս իրենց մեծարանքը նշանով մ'ալ յայտնելու համար, միտքան որոշեցին որ զանիկա իրենց վրայ թագաւոր դնեն: Աս որոշումնին անմիջապէս Յիսէ ոստիկանին ձեռքովն ամիրապետին իմացուցին, եւ աղաչեցին որ ինքն ալ իր հաւանութիւնը տայ, խոստանալով որ միշտ իրեն հաւատարմութեամբ կը ծառայեն: Ամիրապետն՝ որովհետեւ արդէն Աշոտին աս պատուոյն արժանաւոր ու յարմար ըլլալը գիտէր, նախարարաց աղաչանքը սիրով ընդունեցաւ, եւ նոյն Յիսէ ոստիկանին ձեռքովն անոր թագ ու թագաւորական զգեստներ խորհեց: Եկաւ ոստիկանը Շիրակ գաւառն, եւ Անի քաղ-

քին մէջ Աշոտին թագաւորական զգեստներն հաղ-
ցուց եւ արքունական զահը նստեցուց : Ասկէ ետքը
Գրիգոր կաթողիկոսը մեծ եկեղեցական հանդէս կա-
տարելով՝ նախարարներուն եւ անհամար բազմու-
թեան առջեւ զանիկա թագաւոր օժեց, եւ այսպէս
Հայաստան նորէն իր գահին վրայ տեսաւ իր ազգային
բուն թագաւորը : Աշոտին թագաւորելուն լուրը
Վասիլ Արշակունի Յունաց կայսրն առածին պէս՝
սաստիկ ուրախացաւ, եւ ինքն ալ անոր թագ ու
թագաւորական ընծաներ խրկեց :

Աշոտ թագաւորութիւնն հաստատելով՝ սկսաւ
տէրութեան հարկաւոր կարգադրութիւններն ընել
եւ ամէն իր իշխանութեան տակն եղող քաղաք-
ներն ու գեղերը շէնցընել : Ան հիւսիսային ազգերն՝
որոնք ատեն մը Հայոց տէրութեան հպատակ էին, եւ
թագաւորութիւնն իյնալէն ետեւ ինքնագլուխ եղած
էին, նորէն իր ձեռքին տակ նուաճեց : Եգերացւոց
թագաւորին եւ ուրիշ շրջակայ թագաւորներուն եւ
իշխաններու հետ բարեկամութեան դաշինք դրաւ, եւ
այսպէս տէրութիւնն ամէն կողմանէ ապահովցուց :

Գ . Աս ատեններս Վանանդ դաւառն ապստամբե-
ցաւ եւ անոր իշխաններուն մէջ երկպառակութիւն
իյնալով՝ սկսան իրարու հետ կռուիլ : Թագաւորը
զսնտը խաղաղցընելու համար Աբաս սպարապետը
գործով վրանին խաւրեց, որն որ զնաց իշխանները
նուաճեց եւ երկիրը խաղաղցուց : Մի եւ նոյն ժամա-
նակ Գուգարք ալ թագաւորին դէմ ելան, զորոնք
զսպելու համար Սմբատ՝ Աշոտին երէց որդին, հօրը
հրամանաւր նոյն նահանգը զնաց ու հնազանդեցուց :

Կ . Արբ որ աս խռովութիւնները դազրեցան,
Աշոտ Հայաստանին արեւմտեան կողմերը պտրտելու
գնաց. անկէ Յունաց երկիրն անցաւ ու Փոքր Հայք
պտրտելէն ետքը, դէպ ի Կոստանդնուպոլիս ճամբայ
ելաւ : Եւսն կայսեր հետ տեսութիւն մ'ընելու համար :
Կայսրն իրեն փառաւոր ընդունելութիւն ու մեծ պա-

տիս բրաւ եւ շատ սէր ցուցուց, եւ նոյն պատուով
 Հայաստան խրկեց: Աշոտ Քարսպառ բառած տեղը
 հասած ատենը՝ ծանր հիւանդութենէ մը բռնուե-
 լով՝ անկողին մտաւ, եւ իմանալով որ վախճանը մօ-
 ակեցած է, կանչեց Գէորգ կաթողիկոսն ու հոգւոյն
 ամէն հարկաւոր բաներն հոգայլէն ետեւ, աղքատնե-
 րուն եւ եկեղեցականներուն համար շատ ստակ եւ
 առատ պարգեւներ անոր ձեռքը յանձնեց ու վախճա-
 նեցաւ, որուն թագաւորութիւնը 5 տարի, իսկ բոլոր
 իշխանութիւնը 32 տարի տեւեց: Իր յուղարկաւորու-
 թեան հանդէսը շատ փառաւորութեամբ կատարուե-
 ցաւ. դադաղը սակեղէն ու կերպասեղէն զարդերով
 զարդարուած էր, որուն առջեւէն կ'երթար կաթողի-
 կոսն եւ եկեղեցականներու բազմութիւնն, ետեւէն իր
 երեք որդիքը, Սմբատէն զատ, որն որ դեռ Գուգարաց
 երկիրն էր. անոնց ետեւէն նախարարները, զօրքն ու
 ժողովուրդը. եւ այսպէս տարին իր հարցը դերեզմանը
 թաղեցին: Բոլոր աղղը մեծ սուգ բրաւ այսպիսի իմա-
 սուն, քաջ եւ առաքինի իշխան մը կորսնցընելուն
 համար:

Գ Լ ՈՒ Խ Բ

Ս Մ Բ Ա Տ Ա

Ե. Սմբատ հօրը մահուան համար սաստիկ սուգ կ'ընէ : Ատրներսեհ Վրաց իշխանը զինքը մտիթարեցու համար Հայաստան կու գայ եւ գահը կը նստեցընէ : Արաս սպարապետը թագաւորութիւնն յափշտակելու մտօք զԱտրներսեհ կը բռնէ բանտ կը դնէ, ու Սմբատին դէմ պատերազմի կ'ելլէ : Գէորգ կաթողիկոսն զԱրաս ու զՍմբատ իրարու հետ կը հաշտեցընէ : Արաս իր երդումը չպահելուն համար Սմբատ նորէն անոր դէմ կ'ելլէ ու հաշտութիւն ընելու կը ստիպէ : Ատրներսեհը բանտէն կ'ազատի : Սմբատ Շիրակաւանի մէջ թագաւոր կը պսակուի (892) : Արասին Գէորգ կաթողիկոսին դէմ ըրած դաւաճանութիւնն եւ իր մահը : Զ. Աւրպատականին Ափշին օստիկանը Հայաստան կը յարձակի, Սմբատ առանց պատերազմի անոր հետ հաշտութիւն կ'ընէ : Դուին քաղաքը Սմբատէն կ'ապստամբի, թագաւորը զանիկա կը պաշարէ ու կը նուաճէ : Դուինին՝ երկրաշարժէն կրած վնասները (894) : Է. Ափշին նորէն Սմբատին վրայ կու գայ, թագաւորն անպատրաստ գտնուելով՝ ամուր տեղեր կը քաշուի : Գէորգ կաթողիկոսը հաշտութիւն ընելու համար Ափշինին կ'երթայ եւ անկէ շղթայի կը զարնուի : Դողս զեղին քովէ եղած պատերազմը, Ափշինին յաղթուիլը : Գէորգ կաթողիկոսին ազատիլը : Ը. Վասպուրականին Աշոտ իշխանը Սմբատէն կ'ապստամբի. իր աները Գաղիկ զինքը կը բռնէ բանտ կը դնէ եւ Վասպուրականին իշխանութիւնն ինքը կ'առնու : Սմբատ Աղձնեաց նահանգն ու Տարօն գաւառը Միջագետաց Ահմատ իշխանին ձեռքէն առնելու կ'երթայ. Գաղիկ իշխանին խորհակցութեամբը թագաւորական բանակը վտանգի մէջ կ'իյնայ : Գաղիկ Վան քաղքին մէջ կը սպաննուի : Թ. Նախարարաց մէջ ծագած խռովութիւնը. Ափշինին նորէն Հայաստան արշաւելը. Գարուց Բերդին պաշարուիլն եւ անձնատուր ըլլալը : Սմբատին Ափշինին հետ հաշտութիւն ընելը : Ժ. Սմբատ Վրաց Ատրներսեհ իշխանը թագաւոր կը պսակէ : Ափշինին նորէն Սմբատին հետ թշնամանալն եւ իր չարաչար մահը : ԺԱ. Ասրուպատականին Յուսուփ օստիկանը Հայաստան կը յարձակի, Հայոց թագաւորն անոր դէմ կ'ելլէ ու հաշտութիւն ընելու կը ստիպէ : ԺԲ. Արասանդին Եգերացուց թագաւորը Հայաստանին քանի մը տեղերը կը յափշտակէ. Սմբատ Վրաց թագաւորին հետ անոր դէմ պատերազմի կ'ելլէ : Արասանդին՝

Վրաց թագաւորէն կը բռնուի ու Սմբատին կը խրկուի: Հայոց թագաւորը զանիկա նորէն իր երկիրը կը խաւրէ: Նոր տուրքի պատճառաւ նախարարները թագաւորին հետ կը թշնամանան, եւ Վրաց թագաւորին հետ խօսք կը դնեն զանիկա սպաննելու: Սմբատ իրեն գէմ նիւթուած դաւաճանութիւնը կ'իմանայ ու միտքանեալներուն վրայ կ'երթայ: Վրաց թագաւորը Սմբատէն ներում կը խնդրէ ու դաւաճանները ձեռք կու տայ: ԺԳ. Գազիկ Արծրունիին ու Սմբատին մէջ ծագած թշնամութիւնը. Գազիկին Յուսուփէն թագաւոր պահուելը: Յուսուփ Հայաստան կ'արշաւէ, Գազիկին հետ կը միանայ ու Սմբատը բռնելու ետեւէ կ'ըլլայ: Թագաւորին Մուշեղ եւ Աշոտ որդիները Գազիկին զօրացը վրայ կ'երթան. Ուտէացոց զնդին փախելովք կը յաղթուին ու Մուշեղ թշնամեաց ձեռքը կ'իյնայ: ԺԷ. Գազիկ կ'ուզէ Սմբատին հետ միանալ եւ գՅուսուփ Հայաստանէն վճնտել: Թագաւորն ամիրապետէն Յուսուփին գէմ օգնութիւն կը խնդրէ եւ Կապոյտ բերդին մէջ կ'ամրանայ: Կապոյտ բերդը կը պաշարուի, Սմբատ անձնատուր կ'ըլլայ (913) ու շղթայի կը գարնուի: Երբնջակ բերդին պաշարումը, Սմբատին դառն տանջանքներով սպաննուելը (914): Երբնջակին առնուելն ու մէջիններուն ջարդուելը:

Ե. ԱՇՈՏԻՆ յաջորդեց իր երէց որդին Սմբատ, որուն թագաւորութիւնը խռովութեամբ սկսաւ եւ խեղճութեամբ լմննցաւ: Հօրը մահուան լուրը Գուգարաց երկրին մէջ առնելով՝ աճապարեց Շիրակաւան եկաւ եւ մեծ սգոյ ու տրամութեան մէջ մտաւ, եւ հաղիւ Գեորգ կաթողիկոսին մխիթարական խօսքերը կրցան իր տրամութիւնը քիչ մը փարատել: Նաեւ Ատրներսեհ Վրաց մեծ իշխանը զինքը մխիթարելու համար Հայաստան եկաւ, եւ որովհետեւ Աբաս՝ Աշոտին եղբայրը դեռ Վանանդ գաւառն էր, նախ անոր այցելութեան գնաց, եւ զանիկա մխիթարելէն ետեւ, արքայորդւոյն գալու պատրաստուեցաւ: Բայց Աբաս թագաւորութիւնը յափշտակելու միտք ունենալով՝ թող չտուաւ որ Ատրներսեհ Սմբատին քովն երթայ, վախնալով որ իր խորհուրդը կ'իմացուի եւ երկուքը մէկտեղ իրեն գէմ կ'ելեն: Ատրներսեհ շատ խօսքե-

րով Աբասն համոզեց որ զինքը թող տայ, ցուցրնելով որ իր շերթայը շատ խոտով թիւններու եւ շիտթու թեանց պատճառ կը ըլլայ, եւ եկաւ Շիրակուան Արաբասն ալ միտթարեց, անոր սգոյ զգեստներն հանեց եւ թագաւորական զգեստ հագցրնելով՝ դահր նստեցուց, եւ անկէ մեծամեծ ընծաներ ու պարզեւներ առած՝ դարձաւ նորէն Աբասին եկաւ: Ասիկա Ատրներու Նահին բրածին վրայ սաստիկ նեղացած ըլլալով, քանի մը շարամիտներուն զրդուութեամբ բռնեց զանիկա շղթայով կապեց եւ Աարուց բերդին մէջ բանտարկեց, անկէ ետքը զօրք ժողոված Սմբատին վրայ քալեց որ զանիկա թագաւորութենէ մերժէ եւ ինքը տեղն անցնի: Ժողովեց Սմբատ ալ իրեն հաւատարիմ մնացած զօրքն, Աբասին դէմ ելաւ եւ երկու կողմ իրարու հետ սաստիկ կատաղութեամբ զարնուեցան, երկու կողմանէ ալ մեծ կոտորած եղաւ եւ շատ զեղեր ու քաղաքներ ապականեցան: Գէորդ կաթողիկոսն առ շարիքները տեսնելով՝ մէջերնին մտաւ եւ զԱբաս յորդորեց որ պատերազմէն ետ կենայ ու զԱտրներու հազատ թողու, որուն Աբաս երեսանց հաւանեցաւ, միայն պայման դրաւ որ Ատրներու հալ իր քեռայրը Գուրգէնէն առած երկու ամրոցներն ետ դարցընէ, եւ իր Գաւթթ որդին պատանդ տայ. եւ իր խոստումը պահելու համար երդման թուղթ ալ տուաւ: Բայց երբ որ իր ուղածները կատարուեցան, ինքն երդմանը դէմ Ատրներու հը բանտէն չազատեց, եւ դիտնալով որ Սմբատ առ բանիս վրէժն իրմէ պիտ'որ առնու, բերդի մը մէջ մտաւ ամրացաւ: Սմբատ երբ որ Աբասին առ երկմնազանցութիւնը լսեց, բարկութեամբ բորբոքած՝ զօրքը ժողովեց անոր կողմն եղող քաղաքներուն վրայ քալեց, շատ տեղեր ասպատակեց ու կործանեց եւ եկաւ անոր ամրացած բերդը սաստիկ պաշարեց: Աբաս շատ նեղն իյնալով եւ ազատելու ուրիշ ճար չգտնելով, թագաւորին զթութեանն ապաւինեցաւ. բայց իր կենացն ապահովութեանը համար անոր Աբաս որդին

եւ Շապուհ հօրեղբորն որդին Աշոտը պատանդ խնդրեց, ու խօսք տուաւ որ ինքն ալ գլխարներսն հաղատ թող կու տայ: Սմբատ իր խաղաղասէր բնութեամբն աս պայմանը յանձն առաւ, եւ պատանդները տալով՝ Ատրներսն հն ազատեց ու փառօք իր երկիրը խաւրեց. իսկ ինքը դարձաւ Շիրակաւան եկաւ:

Այն ժամանակն Ատրպատականին Ափշին ոստիկանն ամիրապետին խաւրած թագն ու թագաւորական զգեստներն իրեն բերաւ, զորոնք կաթողիկոսն եկեղեցոյ մէջ հանդիսիւ օրհնեց ու Սմբատին հագցուց, եւ ան ատեն Սմբատ Հայոց թագաւոր հրատարակուեցաւ: Աբաս՝ որ դեռ թագաւորութիւնը ձեռք ձգելու խորհրդէն ետ կեցած չէր, աս բանս լսելով՝ շատ բարկացաւ, եւ կարծելով որ իր խորհրդին չկատարուելուն պատճառը կաթողիկոսն է, սկսաւ ժողովուրդը գրգռել որ անոր դէմ ելին ու սուտ ամբաստանութիւններով կաթողիկոսութենէ ձգեն: Շատ մարդիկ՝ թէ եկեղեցականներէն եւ թէ աշխարհականներէն անոր հետ միացան կաթողիկոսը ձգելու, բայց մէջերնէն շատերը պատժուելով ու չարաչար հիւանդութիւններով մեռնելով՝ միւսները զղջացին. Աբաս ալ բրած չարեացը վրայ ապաշխարեց ու քիչ մը ետքը մեռաւ:

Զ. Սմբատ առկէ ետքը խաղաղութիւն գտնելով՝ Լեւոն կայսեր շատ ընծաներով դեսպան խաւրեց եւ անոր հետ միաբանութեան դաշինք դրաւ. կայսրն ալ ասոր փոխարէն՝ իրեն արքունական զգեստ ու զէնք խրկեց եւ զինքն իրեն որդի անուանեց: Ափշին Ատրպատականին ոստիկանն երբ որ աս միաբանութիւնն իմացաւ, սկսաւ կասկածիլ որ Սմբատ կայսեր հետ մէկտեղ իրեն դէմ պիտ'որ ելէ, ուստի ինքն աճապարեց զօրքը ժողովեց ու Հայաստան արշաւեց: Հայոց թագաւորն աս բանիս լուրն առածին պէս 30,000 ընտիր զօրքով Ռոտոկաց գաւառն անոր դէմ ելաւ, եւ այսպէս պատգամ խաւրեց. Ինչու պարսպ

տեղ երկիրս մտեր ես . ես ձեր օգտին համար կայսեր հետ գաշինք դրի, որպէս զի ձեր փաճառականները կարող ըլլան համարձակ Յունաց երկիրը մանել, եւ անկէ քեզի եւ ամիրապետին հարկաւոր եղած ազնիւ բաներն առնուլ բերել: Աս խօսքերն եւ մանաւանդ Սմբատին բանակին զօրութիւնն Ափշինին սիրան իջլուցին, որն որ անոր հետ զարնուելու չհամարձակելով՝ ինքն ալ անոր դեսպան խաւրեց ու հաշտութիւն ըրաւ . ետքն անձամբ անոր եկաւ եւ շատ ընծաներ տալով ու սիրով տեսնուելով՝ Ատրպատական դարձաւ: Սմբատ ալ բանակն առած ճամբայ ելաւ իր տեղը դառնալու . բայց երբ որ Գուին քաղքին առջեւն հասաւ, քաղաքացիք իրեն դէմ ելան եւ թողչառին որ ներս մտնէ: Թագաւորը սաստիկ զայրացած՝ քաղաքն ամէն կողմանէ խօսիւ պաշարեց, դրսի հետ հաղորդութիւնը բոլորովին կտրեց եւ երկու աարի հրով ու զէնքով զարնելով՝ այնչափ նեղը ձգեց որ քաղքին հրամանատարները Մահմէտ եւ Ումայի ալ չկրնալով դէմ դնել՝ գիշերանց անկէ փախան: Բայց Սմբատին զինուորներն անոնց փախուստն իմացան եւ ետեւնէն իյնալով բռնեցին Թագաւորին բերին, որն որ զանոնք քիչ մը տանջելէն ետեւ, ունեցած հարբստութիւննին գրաւեց եւ զիրենք շղթայով կապած լեւոն կայսեր խրկեց: Իսկ Գուին առանց իշխանի մնալով՝ նորէն Թագաւորին հնազանդեցաւ: ~

Անկէ ետեւ Սմբատ տերութիւնն ընդարձակելու ձեռք զարկաւ, եւ կէս մը պատերազմով, կէս մը խաղաղութեամբ շատ տեղերու տիրեց եւ երկրին սահմանը Սեւ ծովին եզերքէն ու Եգերացւոց երկրէն մինչեւ Կովկաս լեռանց ծայրն, եւ անկէ մինչեւ Ատրպատական տարածեց: Բայց աս յաջողութեանց մեջ իրեն մեծ ցաւ պատճառեց Գուին քաղքին կողմերը պատահած երկրաշարժն, որն որ ան ընդարձակ ու բազմամարդ քաղաքն աւերակ դարձուց, եւ բիւրաւոր մարդկան մահուան պատճառ եղաւ:

Է. Արկրաշարժը հազիւ թէ գողակցաւ, Ափշին Ամբասին տէրութեան օրէ օր մեծնալուն եւ ընդարձակելուն վրայ նախանձելով՝ դրած գաշինքն ուղբ տակ առաւ եւ Հայաստանի վրայ քալեց. բայց որովհետեւ պատերազմով Ամբասին յաղթելու յոյս չունէր, խորհախուժեամբ ձայն հանեց որ սրիշ տեղ պատերազմի պիտ'որ երթայ, որպէս զի Հայոց թագաւորը պատրաստութիւն չտեսնէ, եւ ինքը կարող ըլլայ դիւրաւ յաղթութիւնն ստանալ: Իր խորամանկութիւնն աղէկ ալ յաջողեցաւ, վասն զի Ամբաստանեւեւին կասկած չունենալով եւ անոր գաշինքին վրայ վստահացած՝ պատրաստութիւն տեսնելու փոյթ չըրաւ. ուստի Ափշին անարգել Հայաստան մտաւ եւ մինչեւ Նախիջեւան եւ անկէ մինչեւ Գուին քաղքին առջեւը յառաջացաւ: Թագաւորը շուտ մը երկրին ամուր կողմերը քաշուեցաւ եւ ամէն կողմ՝ հրովարտակ խաւրեց որ զօրքն իր քովը գան ժողովուն: Անմիջապէս անհամար քաջ զինուորներ եւ իշխաններ դունդազունդ վազեցին իրենց թագաւորին քովն եկան, որոնցմով Ամբաստ Արագած լեւան մօտ Աժան դեղը գնաց եւ հոն բանակը դրած՝ թշնամին զարնելու պատրաստուեցաւ: Բայց Գէորգ կաթողիկոսը յուսաւով որ կրնայ զԱփշին համոզել եւ առանց արիւն թափուելու խաղաղութիւն ընել տալ, ելաւ անոր գնաց, զորն որ ստիկանն երեսանց սիրով ընդունեցաւ եւ սուտ խոտմունքներով խաբելով՝ թագաւորին խաւրեց որ զանիկա իրեն գալու յորդորէ. միաքն ան էր որ այսպէսով զանիկա ձեռք ձգէ: Ամբաստ առ խորամանկութիւնն իմանալով՝ ամենեւին յանձն չառաւ անոր երթալ, անց ատեն կաթողիկոսը դարձաւ նորէն Ափշինին գնաց, թէպէտ եւ շատերն անոր գլխուն գալիքը գուշակելով՝ շատ յորդորեցին որ չերթայ: Ոստիկանն երբ որ տեսաւ որ Ամբաստ իր լարած որդայթին մէջ չըռնուեցաւ, բարկութիւնը կաթողիկոսին վրայ թափեց, եւ զանիկա շղթայի զարնել տուաւ:

անկէ ետքը զօրաց գլուխն անցած թագաւորին վրայ քալեց ու Գողթ գեղին մօտ բանակը դրաւ : Երեք օր ետքն երկու հողման բանակներն իրարու մօտեցան ու գիմացէ գիմաց ճակատելով՝ սկսան կատաղաբար պարնուիլ, ուր Հայոց քաջ զօրքն իրենց թագաւորին առաջնորդութեամբն Ափշինին բանակը շարաշար յալթեցին, զօրքին մեծ մասը ջարդեցին եւ մնացածը ցիր ու ցան փախուցին : Ափշին առ բանէս զարհուրած՝ Սմբատին հրեշտակ խաւրեց որ հարկը տայ եւ նորէն մէջերնին խաղաղութեան դաշինք դնեն . ինքն ալ իր հողմանէ անկէ ետքը Հայաստանին մնաս չընելու երդում՝ բրաւ : Թագաւորը նոր պատերազմի առիթ չտալու համար անոր ուղածը կատարեց եւ իր տեղը դարձուց : Ափշին՝ կաթողիկոսն ալ հետը տարաւ եւ բանա դրաւ . բայց երկու ամիս ետքը հայ իշխանները շատ ստակ տալով՝ զանիկա ազատեցին եւ նորէն իր ակթուրը դարձուցին :

Ը . Աս ատեններս Աստուրախանին Աշոտ իշխանը Սմբատէն ապստամբեցաւ, եւ շատ ընծաներով Ափշինին երթալով՝ անկէ թագաւորին դէմ՝ օգնութիւն խնդրեց : Բայց իր աները Գազիկ խաբէութեամբ զինքն իր Գազիկ ու Գուրգէն եղբայրներուն հետ բռնեց բանա դրաւ, եւ Աստուրախանին իշխանութիւնն ինքն առաւ : Սմբատ թէպէտ եւ Գազիկին առ գործքին վրայ դժկամակեցաւ, բայց որովհետեւ անիկա իրեն աղէկ հնազանդութիւն ու հպատակութիւն կը ցուցընէր, անոր համար թող տուաւ որ նոյն իշխանութեան մէջ մնայ, եւ ինքն անկէ ետեւ բոլոր մտադրութիւնը տերութիւնը խաղաղընելու ու բարեկարգելու դարձուց : Երբ որ իր առ ջանքովն երկրին ամէն կողմը հանդատութիւնն հաստատուեցաւ, ուզեց նաեւ Աղձնեայ նահանգն ու Տարօն դաւառն օտարաց ձեռքէն ազատել եւ իր խնամակալութեան տակն առնուլ . որովհետեւ նոյն ատենները Միջագետաց Ահմատ իշխանն՝ Աղձնեայ Ապլմախայ իշխանը բռնած եւ նոյն

նահանգին տիրած էր. անկէ Տարօն դաւանն անցնելով՝ Գուրգէն Բագրատունին՝ երկրին նախարարը պատերազմի մէջ սպաննած եւ դաւառը դրուած էր ու շամաց կամաց յառաջ կը քայլէր: Ուտաի 60,000ի չափ զօրք ժողովեց եւ եկաւ Տարօնին արեւելեան կողմը բանակը դրաւ. Ահմատ ալ նոյն դաւառին արեւմտեան կողմը բանակած կեցած էր: Բայց Գագիկ՝ Ասպուրականին իշխանն՝ որն որ Սմբատին բանակին մէջն էր, գաղտուկ թշնամեոյն հետ միաբանած ըլլալով՝ թագաւորին խորհուրդ տուաւ որ դէպ ի հարաւային կողմերն երթայ ու Հոզս գեղին մօտ բանակի, ուսկից, ըսաւ, գիւրաւ կրնանք թշնամին զարնել: Սմբատ որովհետեւ անոր վրայ ամենեւին կասկած մը չունէր, անոր խօսքին անսաց եւ զինքն առաջնորդ առած՝ ելաւ դէպ ի Հոզս երթալու: Տիրանենգ իշխանը շուտ մ'իր ընելիքն Ահմատին իմացուց, եւ ժամանակ որոշեց որ յանկարծ Սմբատին վրայ յարձակի. իսկ ինքը թագաւորական զօրքին առջեւն անցած՝ զաննք քարուտ եւ անջուր տեղեր պարտցընելով՝ այնչափ յոգնեցուց որ շատերը ճամբան ծարաւէն ու յոգնութենէ ինկան մեռան, ու մնացածները կէս գիշերուան ատենը Թուխ գեղին մօտ պզտիկ վտակի մը քով հասնելով՝ հոն թուլացած կիսամեռ ինկան մնացին: Հազիւ թէ արեգական ճառագայթները հորիզոնէն վեր երեւնալով լերանց գլուխները լուսաւորելու սկսած էին, Ահմատին զօրքն ամենայն պատրաստութեամբ ու կարգով Հայոց բանակին վրայ սկսան քայլել: Սմբատ ամենեւին առանց շփոթելու վեր ցաթքեց, շուտ մը զրահն հագաւ, զէնքերն առաւ եւ իր առոյգ ձիուն վրայ աշտանակելով՝ անոնց վրայ յարձակեցաւ, իր զօրքն ալ իր օրինակին հետեւեցան, եւ յոգնութիւնին բոլորովին մոռցած՝ այնպիսի քաջութեամբ մը թշնամեոյն բանակը զարկին որ անոնց կարգն ու կազմութիւնն արեցին, ճակատը քայքայեցին եւ ետ մղեցին: Արդէն

յաղթութեան փողերն հնչելու սկսած էին, երբ որ յանկարծ անօրէն Գաղիկին նենգութեամբը պատե-
րազմին կերպարանքը փոխուեցաւ: Աս տիրամատնիչը
թագաւորական զօրաց քաջութիւնն եւ անոնց զէնքին
չյուսացուելու յաջողութիւնը տեսնելով՝ սկսաւ բա-
նակին մէջ պոռայ. Ալ շէնք կրնար թշնամոյն բազ-
մութեանը դէմ դնել. իր մարդիկներուն ու բեռնա-
կիրներուն ալ հրամայեց որ վրանները կործանեն ու
փակշին: Ասով Սմբատին յաղթող զօրքն ալ շփու-
թեցան, եւ արդէն ստացած յաղթութիւննին բռնի
թող տալով՝ ետ քաշուելու ստիպուեցան. թագաւ-
որն ալ անոնց հետ մէկտեղ ետ քաշուեցաւ եւ Բագ-
րեւանդ գաւառը գնաց քիչ մը հանգիստ բնելու հա-
մար: Աս օրուան պատերազմին մէջ Հայոց կողմանէ
50 հոգւոյ չափ ինկան, որոնց մէջն էր նաեւ Աշոտ
իշխանը՝ Սմբատին քեռայրը:

Գաղիկ իր աս չար խորհրդին յաջողելուն վրայ
ուրախացած՝ Անն քաղաքը գնաց եւ սկսաւ զբօսանքի
հետ ըլլալ: Բայց օր մը երբ որ փառաւոր զգեստներ
հագած՝ զարդարուն ջորիով մը հրապարակին մէջ աս-
դին անդին սիգալով կը ձեմէր, Գաղիկ՝ իրեն բան-
տարկած Աշոտ իշխանին եղբայրն՝ երկու Ամատունի
քաջերու հետ միաբանելով՝ իր վրայ յարձակեցաւ
ու սրով զարկաւ սպաննեց, եւ անմիջապէս Աշոտը
Գուրգէն եղբօրը հետ բանաէն հանեց, ու նորէն երեք
եղբայր մէկտեղ Ասպուրական նահանգի իշխանու-
թիւնն առին:

Թ. Ափշին Ատրպատականին ոստիկանը Սմբատին
զօրքին ցրուիլն ու նախարարաց մէջ եղած խռովու-
թիւնը լսելով, որովհետեւ նոյն ատենը Մոկաց Մու-
շեղ իշխանն ու Գուրգէն Անձեւացին իրարու դէմ
ելած էին ու կը պատերազմէին, յարմար առիթ գտաւ
ու մեծ բանակով Հայաստան արշաւեց. բայց զՍմբատ
ամէն կողմանէ տկարացընելու համար նախ Գուրգարաց
ու Արաց կողմերը գնաց, որպէս զի զանոնք իրեն

Հետ միաբանել եւ Շայոց թագաւորին օգնելու թող
չտայ : Արաց իշխաններն անոր խօսքերուն ամենեւին
մտիկ չըրին, եւ իրենց ամբոյցներուն մէջ քաշուեցան :
Տեսաւ ոստիկանն որ ան ամբոյցները պատերազմով
տանուլը կարելի չէ, զանոնք թողուց ու բոլոր բա-
նակովը Անանգ զաւտը մանելով՝ Մմբատին
ետեւէն ինկաւ որ բռնէ : Եւ երբ որ ան ալ Տայոց
ամուր կողմերը քաշուեցաւ, Ափշին զանիկա բռ-
նելէն ալ յոյր կտրելով՝ դարձաւ Կարուց բերդը
պաշարեց, ուր թագաւորին կինն ու հարսը (Եգե-
րացոց թագաւորին աղջիկն) եւ ուրիշ մեծամեծ
տիկնայք ամրացած էին, թագաւորական զանձին
մէկ մասն ալ հոն դրուած էր : Հասան Գնթունի՝
բերդին հրամանատարը տեսնելով որ չկրնար երկայն
ատեն թշնամւոյն դէմ դնել, Ափշինին ղեսպան խա-
րեց եւ խոտացաւ բերդն իրեն յանձնել, թէ որ ինքն
ալ մէջիններուն կենացը վնաս չընելու երդմամբ խօսք
տայ. ոստիկանն աս պայմանը յանձն առնելով՝
բերդին տիրեց ու բերդականներն ազատ թողուց,
միայն Հասանը, Մմբատին կինն ու հարսն եւ քանի
մ'ուրիշ ազնուական կանայք իր քովն արգելեց, զորոնք
զանձին հետ Գուին տարաւ ու պատուով պահեց.
Ետքը Հասանն ալ թողուց որ իր թագաւորին երթայ :

Մմբատ ձմերուան սկիզբները Տայոց զաւառէն
Երասխաձոր դարձաւ ու Կաղզուան գեղն եկաւ ձմե-
րելու համար, ուր Ափշին իրեն հրեշտակներ խաւրեց
եւ առաջարկեց նորէն հաշտութիւն ընել, պայման
դնելով որ թագաւորն իր Աշոտ որդին ու Մմբատ
եղբորորդին պատանդ տայ, իր Շապուհ որդւոյն աղ-
ջիկն ալ իրեն կնութեան տայ : Թէպէտ եւ աս պայ-
մանը Մմբատին շատ ծանր էր, բայց նախարարաց
իրեն եւ իրարու հետ ունեցած անմիաբանութիւնը
տեսնելով՝ ստիպուեցաւ յանձն առնուլ, եւ պա-
տանդներն ու հարսնացուն խաւրելով՝ հաշտութիւնն
հաստատեց : Ափշին մեծ փառաւորութեամբ հարսնիք

ընելէն ետեւ , ձմեռը Գուին քաղաքն անցուց ու
 դարնան սկիզբը դարձաւ Ատրպատական գնաց :

Ժ . Արբ որ քիչ մը ատեն խաղաղութիւն եղաւ ,
 Սմբատ իր սիրելւոյն՝ Աբայ Ատրներսէ՛հ իշխանին , որն
 որ ամէն նեղութեանց մէջ իրեն հաւատարիմ՝ մնացած
 եւ շատ օգնութիւն ըսած էր , արժանաւոր հատու-
 ցում մ'ընելու համար , անոր գլուխը թագ դրաւ ,
 ծիրանի հագցուց ու Աբայ թագաւոր եւ իր երկրորդն
 ըրաւ : Բայց խաղաղութիւնն երկայն չտեւեց , վասն
 զի Ափշին չարամիտ մարդիկներու զրգռութեամբ
 նորէն Սմբատին հետ թշնամացաւ եւ քանի մ'ապրու-
 տամբ քաղաքներ նուաճելու պատրուակաւ , զօրք
 ժողոված յանկարծ Շիրակ գաւառը մտաւ Սմբատը
 բռնելու համար : Թագաւորն աս բանիս լուրն առա-
 ծին պէս պզտիկ դուժարտակով մը Տայոց ամուր կող-
 մերը քաշուեցաւ , որով ստիկանին խորհուրդը շյա-
 ջողելով՝ իր Գեւգատ սրգին ու ներքինապետը Գուին
 քաղաքը թողուց եւ Ատրպատական դարձաւ : Ան
 ատեն Սմբատ ալ Շիրակ գաւառն եկաւ եւ Անի
 քաղքին մէջ ներքինապետին հետ տեսութիւն ըրաւ ,
 որն որ թագաւորին ազնուականութեանն ու քաղցր
 բնութեանը վրայ զարմացած՝ անոր հետ սիրով կա-
 պուեցաւ , խոստովանելով որ կեանքին մէջ անոր նման
 մարդ տեսած չէ : Քիչ ատենէն ներքինապետն Ափ-
 շինին հետ թշնամանալով՝ անկէ ապստամբեցաւ , եւ
 Սմբատին Աշոտ որդին՝ որն որ իր քովն էր , եւ անոր
 Մուշեղ եղբօրը կինը հետն առած իրեն բերաւ : Թա-
 գաւորն աս բանիս վրայ սաստիկ ուրախացած՝ ներ-
 քինապետին մեծագին ընծաններ տուաւ եւ Ատրես-
 տանի կողմերը խաւրեց :

Ափշին կարծելով որ ներքինապետին ապստամ-
 բութիւնը Սմբատին զրգռելովն եղաւ , անոր դէմ
 սաստիկ բարկացած՝ տէրութեանն ամէն կողմը հր-
 վարտակ խաւրեց որ բոլոր զօրքը դան ժողովուն ,
 միտքը դրած էր որ բոլոր Հայերն իրենց թագաւորին

հետ որէ անցընէ ու Հայաստան անապատ դարձընէ : Բայց դեռ զօրքը ժողլուելու վրայ եղած ատեն, ինքը սաստիկ հիւանդութենէ մը բռնուելով՝ փորոտիքը կտոր կտոր եղաւ, եւ այնպէս չարաչար սատկեցաւ . զօրաց մէջն ալ աս հիւանդութիւնը ճարտկեցաւ եւ շատ կոտորած բրաւ . իսկ մնացածները տեղերնին ցրուեցան :

ԺԱ. Ափշինին յաջորդեց իր որդին Յուսուփ որն որ հօրն ամէն չարութիւնները ժառանգած՝ եւ իր կողմանէ ալ անոնց վրայ աւելցուցած էր : Ասոր չարամտութիւնը գիտնալով Սմբատ թագաւորն՝ ուզեց անկէ ետեւ ոստիկաններու իշխանութենէն ազատ ըլլալ, եւ հարկն ուղղակի ամիրապետին խաւրել . ուստի արժանի ընծաներով անոր հրեշտակ խաւրեց եւ աս բանս անկէ խնդրեց, զորն որ ամիրապետը շատ հաճութեամբ յանձն առաւ : Յուսուփ աս բանիս վրայ շատ նեղանալով՝ ինքն ալ ամիրապետին դեսպան խաւրեց եւ խնդրեց որ Հայոց թագաւորը յառաջուան պէս իր ձեռքին տակն ըլլայ եւ հարկն իր ձեռքովը տայ . եւ երբ որ անիկա խնդիրը չկատարեց, ուզեց զէնքի զօրութեամբ զՍմբատ նուաճել, եւ զօրքն առած Փայտակարան մտաւ, եւ անկէ մինչեւ Ուտի յառաջ քալեց : Թագաւորն անոր գալուն լուրն առածին պէս, ինքն ալ շատ զօրքով անոր դէմ գնաց եւ Աշոց ու Տաշիր դաւառներուն կիրճերը բռնեց որ թշնամուոյն անկից անցնելու թող չտայ . բայց Յուսուփ ճամբան փոխելով՝ ուրիշ կողմանէ Շիրակ գաւառը մտաւ եւ բանակը շուտով քալեցընելով՝ մինչեւ Գուինի առջեւն հասաւ : Լուր հասաւ Սմբատին որ թշնամին Գուինի առջեւը բանակած է, շուտ մը կիրճերը թողուց եւ Արագած լեռան մօտ Արուճ գեղն եկաւ բանակը դրաւ : Ոստիկանը Սմբատին զօրութիւնն իմանալով՝ անոր հետ զարնուելու չհամարձակեցաւ, եւ հաշտութիւն ըրաւ, ու ձմեռը Գուին մնալով՝ զարնան իր տեղը դարձաւ :

Ճ Բ . Աս ժամանակները կոստանդին Եղերացուց
 թագաւորն երկիրն ընդարձակելու բազմանբով՝ կո-
 գարաց կողմերն արշաւեց : Արաց թագաւորը՝ կոս-
 տանդինն փեռան շատ ջանաց որ զանիկա համնդէ
 նոյն տեղէն ետ քաշուելու , որպէս զի Սմբատ ալ իրեն
 դէմ ելլելէն ետ կենայ . բայց երբ որ անիկա ամե-
 նեւին իր խօզքերուն ականջ չդրաւ , Սմբատ եւ
 Ատրներսեհ անոր դէմ ելան՝ որոնց զօրութենէն կոս-
 տանդին վախցաւ . եւ իր բերդերուն մէջ քաշուելով՝
 ուզեց հաշտութիւն ընել : Սմբատ Արաց թագաւորն
 ու քանի մը նախարար խրկեց որ խօսին . հայ նախա-
 րարներն անոր հետ խօսելու տաւննին՝ Ատրներսեհին
 հրամանովը բռնեցին Սմբատին տարին , որն որ զանիկա
 շղթայի վարկաւ եւ Անի բերդը դրաւ . անոր բերդե-
 րէն շատերն ալ գրաւեց եւ իր իշխաններէն կուսա-
 կալներ դրաւ : Բայց աս պատճառաւ Եղերացուց մջ
 սաստիկ խռովութիւն եւ երկպառակութիւն ծագե-
 ցաւ , որոնք կ'ուզէին ուրիշ անպիտան եւ անգութ
 մէկն իրենց թագաւոր դնել : Սմբատ աս բանիս լուրն
 առածին պէս կոստանդինը՝ շորս ամիս բերդարգելու-
 թենէ ետքն ազատեց ու թագաւորական զգեստնե-
 րով զարդարելով՝ ձեռքը գունդ մը զօրք տուաւ եւ
 իր երկիրը խաւրեց , մտածելով որ անոր աս շնորհքն
 ընելով՝ սիրար կը շահի եւ անկէ ետեւ իրեն հաւա-
 տարիմ կը մնայ . միանգամայն Արաց թագաւորին ալ
 հաճելի գործք մ'ըրած կ'ըլլայ անոր փեռան նորէն
 իր առջին պատուոյն հասցընելով : Բայց Ատրներ-
 սեհ կարծելով որ Սմբատ իրեն նախատինք ընելու
 համար աս բանս ըրաւ , անոր դէմ թշնամացաւ եւ
 սխ պահեց : Նոյն օրերը Յուսուփ՝ ամիրապետէն
 ապստամբելով՝ ամիրապետը Սմբատին հրաման խա-
 րեց որ զօրքն առնու ապստամբին վրայ երթայ : Թա-
 գաւորն իր Յուսուփին ըրած երդմանը դէմ ընել
 չուզելով՝ աս հրամանը դրսանց ընդունիլ ցուցուց , եւ
 պզտիկ գունդ մը վասպուրականի կողմերը խաւրեց :

բայց ամիրապետին հրեշտակներն երթալուն պէս, Յուսուփին իմացուց որ ան խրկած զօրքն իրեն օգնու թիւն ընելու համար է: Ոստիկանը Սմբատին թշնամիներէն գրգռուած, անոր խօսքին չհաւատաց, եւ երբ որ ամիրապետին հետ հաշտուեցաւ, անկէ վրէժ առնելու համար հարկը կրկին պահանջեց. ամիրապետէն ալ սաստիկ սպառնալէքով նոյն հրամանն եկաւ: Թագաւորը չկրնալով բռնութեամբ ասոր դէմ դնել, հրաման հանեց որ ամենուն ստացուածքին հինգերորդ մասն առնուի ու հարկը վճարուի: Նախարարներն ասոր վրայ սաստիկ նեղացան եւ խորհուրդ ըրին որ Սմբատն սպաննեն, որոնց մէջէն Հասան մեծ իշխանն ուրիշ տանուհինգ իշխաններու հետ յանձն առաւ աս խորհուրդը գլուխ տանելու. Վրաց թագաւորն ալ ասոնց հետ միաբանեցաւ, որովհետեւ նախարարները խոստացան զինքը Սմբատին աեղ Հայոց թագաւոր դնել: Միաբանեալներն որոշեալ օրը մէջերնէն քանի մը հօգի թագաւորին խաւրեցին որ զանիկա պատուելու պատրուակով չար խորհուրդը կատարեն. Հասանն ալ Վրաց թագաւորին հետ շատ զօրքով Շիրակ գաւառն եկաւ, եւ Անի մայրաքաղաքն անոր ձեռքը տուաւ, իսկ ինքն Երազգաւորս թագաւորական քաղաքը դնաց: Սմբատ նախարարաց դաւաճանութիւնն իմանալով՝ աճապարեց Շիրակ գաւառն եկաւ: Յանկարծակիի եկան միաբանեալներն, եւ ուրիշ բան չկրնալով ընել, ինչ որ կրուցան աւար առին եւ Տայոց գաւառին ամրոցները փախան ապաւինեցան: Բայց ասկէ յառաջ թագաւորին վրայ մտածուած չարութեան լուրն ամէն կողմ տարածուած ըլլալով՝ գունդագունդ քաջ ու տիրասէր զինուորներ վազեցին անոր քովն եկան զանիկա պաշտպանելու համար. Սմբատ ալ անոնց գլուխն անցած, դաւաճաններուն վրայ քալեց: Ատրներոսէ վտանգին մեծութիւնը տեսնելով ու Սմբատին զթած բնութիւնն ալ գիտնալով՝ ինքն իրեն անոր եկաւ ու թոյ-

ըրթիւն խնդրեց . թագաւորը վեհանճնութեամբ մ'անոր յանձանքը ներեց, որուն հոխարէն Ատրնեբսեհ ալ գաւաճանութեան գլխաւորներն անոր ձեռքը տուաւ : Սմբատ անոնց աշուրներն հանել տուաւ ու կէսը Յունաց կայսեր, կէսն ալ Եգեբացւոց թագաւորին խաւրեց :

ԺԳ. Հազիւ թէ աս վտանգն անցաւ, նոր ազմուկ մ'երկրին խաղաղութիւնը բոլորովին վրդովեց, որուն պատճառն էր Գագիկ Արծրունի իշխանն : Ասիկա թագաւորէն խնդրեց որ Նախիջեւան քաղաքն իրեն տայ, պատճառ բերելով որ նոյն քաղաքն յառաջագոյն մեր ցեղին կալուածն էր . բայց թագաւորը դեռ քիչ մը յառաջ զանիկա մասնաւոր հրովարտակով Սիւնեաց Սմբատ իշխանին պարգեւած ըլլալով՝ չուզեց իր հրամանն ետ առնուլ : Գագիկ աս բանիս վրայ շատ նեղացաւ եւ ընծաներով Յուսուփ ոստիկանին երթալով՝ թագաւորին դէմ ամբաստանութիւն ըրաւ : Չարամիտ ոստիկանը Հայոց զօրութիւնը բաժնելու համար՝ Գագիկին շատ պատիւ ըրաւ, ու գլուխը թագ դնելով՝ թագաւոր անուանեց եւ իր տեղը խաւրեց : Հայերն աս խորամանկութիւնն իմացան ու մեծ արամութեան մէջ ինկան, մանաւանդ երբ որ տեսան որ ոստիկանն իր ծածուկ մեքենայած չարութիւնն սկսաւ յայանել ու պատերազմի պատրաստուիլ : Սմբատ շարեաց առջեւն առնելու համար Յովհան կաթողիկոսը շատ ընծաներով Յուսուփին խրկեց որ զանիկա հանդարտեցընէ . բայց նենգամիտ ոստիկանն երեսանց կաթողիկոսին պատիւ ընելով՝ բռնեց զանիկա բանտ դրաւ : Անկէ ետքը Գագիկ Արծրունին իրեն կանչեց եւ անոր հետ խօսք դրաւ որ երկուքը մէկտեղ Սմբատին դէմ ելլեն :

Չմեռն անցածին պէս Յուսուփ իր զօրքովը Հայաստան մտաւ ու Նախիջեւան քաղաքին քով Գագիկին հետ միանալով՝ Չաակի տօնին օրերը Սիւնեաց գաւառը մտաւ եւ շատ ջարդ ու քանդ ընելէն ետեւ՝ Գուին

դարձաւ : Անկէ Սմբատին պատգամ խաւրեց որ եթէ
 աս տարւան հարկն ամբողջ վճարելու ըլլաս , քեզի
 հետ կը հաշտուիմ ու խաղաղութեամբ տեղս կը գառ-
 նամ : Թագաւորը թէպէտ եւ ոստիկանին խաբէու-
 թիւնը գիտէր , բայց որպէս զի չըսուի որ ստակի
 ագահելուն համար երկրին ապահանութեան պատ-
 ճառ եղաւ , շուտ մը 60,000 դահեկան խաւրեց : Ոստի-
 կանը ստակն առաւ , բայց խոստումը չպահեց , այլ
 սաստիկ արագութեամբ Սմբատին ետեւէն ինկաւ , որն
 որ նեղը մտնելով՝ Վրաստանի կողմերը քաշուեցաւ :
 Յուսուփ շատ աշխատեցաւ որ զանիկա ձեռք ձգէ ,
 բայց չկրնալով յաջողընել , նորէն Գուին դարձաւ ,
 ուր Աշոտ Հայոց սպարապետն իրեն անձնատուր եղաւ :
 Հոն Յովհան կաթողիկոսն իրեն շատ ստակ խաւրե-
 լով՝ բանտէն ազատեցաւ :

Ղարնան սկիզբը ոստիկանը Գագիկ արծրունիին
 ձեռքը մեծ գունդ մը զօրք տուաւ ու Սմբատին վրայ
 խաւրեց , որն որ իր Գուին դառնալէն ետեւ Վրաստա-
 նէն Երազգաւորս եկած էր : Թագաւորն իր բանակն իր
 Մուշեղ եւ Աշոտ որդւոցը ձեռքը տուաւ ու թշնամ-
 ւոյն վրայ խաւրեց , պատուէր տալով որ երթան ճամ-
 բաներն եւ անցքերը բռնեն , եւ անոնց յառաջ գալն
 արգելուն : Արի երիտասարդներն իրենց զօրքին գլուխն
 անցած յառաջ քալեցին ու Նիգ գաւառին մէջ թըշ-
 նամեաց հասան , որոնք տափարակ տեղ մը բանակած
 նստած էին . անմիջապէս պատերազմական փողերն
 հնչեցընել տուին եւ զօրքին օրինակ տալու համար
 նախ իրենք վազեցին թշնամին զարնելու սկսան , եւ
 անոնց բանակին կարգը շփոթելով՝ իրարմէ բաժնեցին :
 Բայց երբ որ պատերազմը սաստկացաւ , Սեւորդէք
 ըսուած Ուտէացի գունդն՝ որոնք թագաւորական
 բանակին մէջն էին , յանկարծ կռնակնին դարձուցին
 եւ սկսան մէկզի երթալ . Աշոտ արքայորդին ալ նոյն
 գնդին մէջն ըլլալով՝ ստիպուեցաւ անոնց հետ ետ
 քաշուիլ : Իսկ Մուշեղ քովի քիչևոր զօրքովն երկայն

առեն քաջութեամբ կռուելէն ետեւ, թշնամեաց բազմութիւնը զինքը պաշարեցին ու բռնեցին Յուսուփին տարին: Անօրէն իշխանն առ յաղթութեամբ զինովցած՝ սկսաւ ամէն տեսակ չարիք զօրծել. իր կռասկալներն Հայաստանին ամէն կողմը ցրուեց որ քանդէն, յափըտակէն ու ջարդէն. քաղաքներն ու գեղերն այրեց մտխիր դարձուց. անմեղ մարդկանց արիւնովն ամէն կողմ լեցուց: Շատերն այսպիսի անողորմ թշնամուց մը ձեռքէն ազատելու համար աներնին տեղերնին թող տուին եւ անմատչելի լեռներու վրայ եւ անառիկ ամբողջներու մէջ փախան ամրացան, որով շատ տեղեր անապատ եւ անբնակ մնաց:

ԺԳ. Գազիկ Արծրունին առ ամէն չարիքներն՝ որոնց պատճառն ինքն եղած էր, տեսնելով՝ սկսաւ խիղճը զարնել, եւ մտածել որ անտարակոյս ինքն ալ առ անգութ օտարազգի իշխանին կատաղութեանը պիտ'որ հանդիպի. ուստի առ մտածմունքով՝ զաղտուկ Սմբատին իմացուց որ կ'ուզէ իրեն հետ միաբանիլ, որպէս զի առ օտարածինն Հայաստանէն դուրս վաճառելու եւ եղած չարեաց առջեւն առնելու հնարք մը գտնեն: Իմաստուն թագաւորը յայտնի տեսնելով որ միայն անոր հետ միանալով ազգին խեղճութեան ճար չիկրունար ըլլալ, ինքն Երասխաձոր դաւառին ամուր կողմը քաշուեցաւ եւ Գրիգոր մեծ իշխանն ամիրապետին խաւրեց որ Հայաստանին վիճակն անոր առջեւը դնէ եւ անկէ օգնութիւն խնդրէ: Բայց ամիրապետն Եգիպտոսացուոց ապստամբութեան պատճառաւ չկրցաւ Սրմբատին խնդրած օգնութիւնն ընել. նոյնպէս Յունաց կողմանէ զալու օգնութիւնն ալ լեւոն կայսեր մեռնելովն արգելուեցաւ: Սմբատ ամէն օգնութենէ զրկուած եւ իր նախարարներէն ալ թող տրուած՝ երկնից օգնութեանն ապաւինեցաւ, եւ իրեն հաւատարիմ մնացող քիչոր զօրքովը Վապոյտ բերդը քաշուեցաւ: Տարիէ մը թշնամեաց զօրքն անարդել յառաջ քալեցին, եւ եկան անհամար բազմութեամբ բերդը պաշա-

րեցին ու շրջակայ տեղերն աւրեցին, կործանեցին, անապատ դարձուցին. Բայց բերդին չկրցան վնասել, որովհետեւ մէջի զօրքը սաստիկ քաջութեամբ պատերազմելով՝ բիւշուոր մարդիկ կը ջարդէին ու յարձակումներն ետ կը մղէին: Բայց որովհետեւ Յուսուփին բանակին մէջ շատ քրիստոնեայ զինուորներ ալ կային, անօրէն իշխանը միշտ զանոնք առաջին կարգը կը կեցընէր որ դիմացէն եկող հարուածներն իրենք ընդունին եւ այլազգի զօրքն անվնաս մնայ: Սմբատ տեսնելով որ իր պատճառաւն այնչափ հազարաւոր քրիստոնեաներ կը ջարդուին, լաւազոյն համարեցաւ անոնց ազատութեան համար իր կեանքը վտանգի մէջ դնել, ու ստի ստիկանէին իմացուց որ կ'ուզէ անձնատուր ըլլալ, միայն անկէ իր եւ բերդին մէջիններուն կենացը շինասելու երդում խնդրեց: Երբ որ երդումն առաւ, բերդէն ելաւ Յուսուփին քովն եկաւ, որն որ իսկզբան անոր քիչ մը պատիւ ցուցուց եւ ետքը զանիկա իր քովն արգելեց: Գազիկ Արծրունին Սմբատին վիճակէն իր գլխուն դալիքն ալ գուշակելով՝ առանց մէկու մ'իմացընելու յանկարծ ձի հեծաւ եւ ոտիկանին քովէն փախաւ իր երկիրը գնաց: Յուսուփ աս բանէս Սմբատին վրայ ալ կասկած չեղած լալով՝ հրաման տուաւ որ անոր ձեռուրներն ու սաւուրները շղթայով կապեն ու տանին բանտ դնեն: Հոն տարի մը սաստիկ նեղութեամբ պահելէն ետեւ, հետն առած Երընջակ բերդին վրայ գնաց, ուր շատ նախարարներ ու մեծամեծաց տիկնայք ամրացած էին, միւրքը գնելով որ Հայոց իշխաններուն մնացորդներն ալ բոլորովին ջրնջէ: Բայց երկայն ատեն չկրնալով բերդն առնուլ բարկութիւնը թագաւորին վրայ թափեց եւ զանիկա դահիճներու ձեռք տուաւ որ շարշարեն: Անկարելի է աս անգութ մարդիկներուն անոր տուած տանջանքները գրով յայտնել. հասաւ դաւազաններով անխնայ ծեծեցին, մարմինը կոճղներով պնդեցին, հարկաւոր կերակուրն եւ ըմպելիքը կտրեցին, եւ շատ

ուրիշ անտանելի տանջանքներ տուին : Երանելի թագաւորն առ ամէն դառն չարչարանքներն Աստուծոյ սիրոյն համար համբերութեամբ կը կրէր , եւ անդադար ազօթքով ինքը զինքն անոր կը յանձնէր . նաեւ քահանայէ մ'ալ քրիստոսի մարմնոյն հաղարդուելով՝ աւելի եւս Աստուծոյ սիրովը բորբոքեցաւ ու մեռելու պատրաստուեցաւ : Գահիճները զինքն երկայնատեն տանջելէն ետեւ , իր թաշկինակն առին ու բերանը խոթեցին որ շունչն արգելուի . հաստ գաւազաններով ու գելարանով վիզը պնդեցին . ետքը գրկունն վրայ ծանր բեռեր դրին ու տասը հոգի անոնց վրայ նստան , մինչեւ որ շունչը բոլորովին կտրեցաւ : Անկէ ետեւ գլուխը կտրեցին եւ Յուսուփին հրամանովը մարմինը տարին Գուին քաղաքը խաչի վրայ դամեցին : Աս եղանակաւ մեռաւ Մաբատ 22 տարի թագաւորելէն ետեւ . բայց իր յիշատակն անմահ մնաց , չէ թէ միայն իր ան խոսվալից ժամանակներն ըրած պատերազմներուն ու յաղթութիւններուն համար , այլ գլխաւորաբար իր առաքինութեանցն եւ երանելի վախճանին համար , զորն որ նաեւ Աստուած փառաւորեց . վասն զի , ինչպէս Յովհան կաթողիկոս աղանատես պատմագիրը կ'ըսէ , անոր արիւնը թափուած հողը շատ հիւանդներ բժրշկեց , եւ աս սքանչելիքներով քանի մը հեթանոս ալ քրիստոնէական կրօնն ընդունեցան ու մկրտուեցան :

Յուսուփ զՄաբատ մեռցրնելէն ետեւ , Երընջակին պաշարումն աւելի եւս սաստկացուց ու վերջապէս առաւ . մէջիններէն շատերը ջարդեց ու մնացածները գերի առած՝ Գուին տարաւ բանտարկեց , որոնց մէջէն շատ ազնուական տիկիներն բանտին խտուրթեանը չգիմանալով՝ քիչատենէն մեռան :

Գ Լ ՈՒ Խ Գ

Ա Շ Ո Տ Բ . Ե Ր Կ Ա Թ

ԺԵ . Աշոտ Հագարացիները Հայաստանէն կը վռնտէ եւ Տօրը դահը կը նստի (915) : Հագարացւոց Հայաստան ասպատակելը . Հայ նախարարաց մէջ ծագած խռովութիւնն ու Հայաստանին աստիկ սովը (918) : ԺԶ . Աշոտ Կոստանդնուպոլիս Կոստանդին կայսեր կ'երթայ , եւ Յունաց օգնական զօրքով Հայաստան կը դառնայ : Յուսուփ Աշոտին Տօրեղբորորդին Աշոտ սպարապետը Հայոց թագաւոր կը պսակէ : Աշոտին եւ սուտ թագաւորին մէջ եղած պատերազմներն եւ ըրած հաշտութիւննին : Աշոտ Գուգարաց երկիրը մեծ վտանգի մէջ կ'իյնայ եւ իր քաջութեամբը կ'ազատի : Աշոտ սպարապետը նորէն թագաւորին դէմ կ'ելլէ . թագաւորն անոր կը յաղթէ : ԺԷ . Աշոտ կ'ուզէ Գուին քաղաքն սպարապետին ձեռքէն առնուլ . քանի մը հոգւոյ մատնութեամբն իր զօրքը կը յաղթուին : Յովհաննէս կաթողիկոսը թագաւորն եւ սպարապետը նորէն իրարու հետ կը հաշտեցնէ : Ուտէացւոց Մովսէս իշխանը կ'ապստամբի , Աշոտ զանիկա կը բռնէ եւ աշուրներն հանել կու տայ : ԺԸ . Արաս Աշոտին եղբայրն ու Գուրգէն Ափսաղաց իշխանը թագաւորին դէմ դաւաճանութիւն կը նիւթեն : Սահակ իշխանն Աշոտին հետ կը թշնամանայ եւ նախարարաց միջնորդութեամբը նորէն կը հաշտուի : Աշոտ Գուին քաղաքը կը նուաճէ . Սմբատին , Աշոտ սպարապետին ու Գուրգէնին դէմ պատերազմի կ'ելլէ եւ անոնց կը յաղթէ : Սահակ նորէն թագաւորին հետ կը թշնամանայ . Աշոտ անոր վրայ կ'երթայ ու կը յաղթէ , զինքն ալ կը բռնէ ու կը կուրացընէ : ԺԹ . Աշոտ Ատրպատականի Սլուկ իշխանին հետ կը բարեկամանայ եւ անկէ Աբրայից արքայի (Շահնշահ) պատուանուն կ'ընդունի : Շամշոզէ բերդին իշխանը կ'ապստամբի , Աշոտ զանիկա նորէն կը նուաճէ : Ուտէացւոց Յլիկ Ամրամ իշխանին ապստամբիլը , Աշոտին անոր վրայ երթալը . իր զօրացը զինքը թշնամուոյն ձեռքը մատնելու խորհուրդը եւ անոր իր քաջութեամբն անոնց ձեռքէն ազատիլը : Ի . Վասպուրական նահանգին մէջ պատահած դէպքերը . Բիւրակն բերդին Հագարացիներէն պաշարուիլն ու մատնութեամբ առնուիլը (923) : ԻԱ . Աշոտին Սեւան կղզին քաշուիլը . Պէշիր ոսարկանին Հայաստան ասպատակելը : Գէորգ Մարգպետունի իշխանին անոր յաղթելը : Պէշիր Սեւան կղզւոյն վրայ կը յարձակի , Աշոտ նաւակ-

ներով անոր դէմ կ'երթայ եւ զօրքը զարնելով կը վճռուէ :
Պէշիբին Գեղայ բերդին քով Գէորգ իշխանէն յաղթուիլը :
Աշոտին իր եղբօրը հետ հաշտուիլն եւ իր մահը (928) :

ԺԷ. ՍՄԲԱՏԻՆ բռնուած ատենն, անոր երեց որ-
դին Աշոտ սկսած էր Հայաստանն ասպատակող հա-
գարացի զօրաց դէմ շատ քաջութիւններ ընել եւ
շատ կողմեր անոնցմէ մաքրել : Երբ որ հօրն աղէտալի
մահը լսեց, ան անագորոյն ոստիկանին դէմ ունեցած
ատելութիւնն աւելի եւս սաստկանալով՝ միտքը դրաս-
որ անկէ աս բանիս վրէժն առնու, եւ իրեն հա-
ւատարիմ զօրքը ժողվելով՝ սկսաւ ահագին քաջու-
թեամբ անոր զօրացը հետ զարնուիլ : Նախ եւ յառաջ
բոլոր անոր Հայաստանի մէջ բռնած բերդերն առաւ,
մէջի զօրքը ջարդեց եւ ինքը պահապաններով ու պա-
շարով զանոնք ամրացուց : Անցաւ Քաղբեւանդ գա-
ւառն ուր թշնամեաց գունդ մը բանակած կեցած էր.
զարկաւ ջարդեց անոնց բազմութիւնն եւ իրենց զօ-
րապետը բռնելով՝ կաշին տիկի պէս հանել տուաւ ու
բերդի մ'աշտարակէն կախեց միւս թշնամեաց վախ
ձգելու համար. նոյնպէս բոլոր Շիրակ գաւառին ու
Գուգարաց կողմերն եղող թշնամիները զարկաւ եւ
իրենց երկիրը վճռուեց : Հայաստանին մեծ մասը թըշ-
նամիներէն մաքրելէն ետեւ, անցաւ Արաց երկիրն եւ
Տփղիսի մէջ նստող հազարացի զօրքն ալ սաստիկ
զարկաւ ու շատ իշխաններ բռնեց շղթայի զարկաւ
հայ գերիներու հետ փոխելու համար, եւ անոնց
բանակին աւարը ժողվեց Տաշրաց դաւառը դար-
ձաւ : Հոն լուր առաւ որ թշնամեաց մէկ գունդը
դէռ Աղստեւի կողմերը մնացած է. քովի զօրքէն 200
քաջեր ընտրեց եւ յանկարծ անոնց վրայ յարձակե-
ցաւ ու ջարդեց : Աս յաղթութիւններն արիւնրուշա
հազարացիները սասանեցուցին, որոնք ամէն կողմանէ
եւ քաշուեցան եւ երկիրն անոնց ասպատակութիւն-
ներէն ազատելով՝ հանգիստ ու խաղաղութիւն գտաւ :
Աշոտին աս գործքերը տեսնելով Հայոց նախարար-

նէրը, Արայ թագաւորին հետ վարանեցան եւ զանրկա հօրը գահը նստեցրնելով՝ Հայոց թագաւոր հրասարակեցին :

Բայց Յուսուփ իր զօրացը ջարդուելուն եւ Հայաստանէն վաճառուելուն վրայ սաստիկ կատաղած ըլլալով, դարձեալ իր զօրացեալներն եւ իշխաններն անհամար զօրքով Աշոտին երկիրները խաբէց, որոնք եկան ամէն կողմ ցրուեցան եւ առաջին անգամէն աւելի կատաղութեամբ եւ անգթութեամբ սկսան երկիրն ապականել, աստատակել, ջարդել ու գերել, ու բխրաւոր մարդիկ դառն եւ անտանելի տանջանքներով սպաննել, եւ աս բաներս 7 տարի անդադար ընելով՝ շատ քաղաքներ ու գեղեր անբնակ աւերակ դարձան : Աս դառն ժամանակիս մէջ նաեւ ներքին խռովութիւն մ'ալ ծագեցաւ, որն որ երկրին՝ թշնամեաց տուած վնասէն շատ աւելի վնասեց . վասն զի նախարարներէն շատերն իրարու դէմ ելան եւ սկսան իրարու զօրքը ջարդել . ոմանք ալ Արայ թագաւորին հետ միաբանած, նոյն իսկ Աշոտին կենացը դարանակալ ըլլալու ձեռք զարկին, որոնց դէմ թագաւորն իր անձին պաշտպանութեանը համար պատերազմելու ստիպուելով՝ չկրցաւ նորէն արտաքին թշնամեաց դէմ ելլել եւ երկրին թշուառութիւնները դադրեցընել :

Այսպիսի ներքին եւ արտաքին պատերազմներու պատճառաւ երկրագործութիւնը բոլորովին դադրեցաւ եւ սաստիկ սով մը երկրին չորս կողմը պատեց, զորն որ Յովհան կաթողիկոս ժամանակակից պատմիչը շատ աղէտալի կը նկարագրէ : Աս սովը, կ'ըսէ, բոլոր երկիրն ապականեց . ամէն քաղաքներուն եւ գեղերուն մէջ մարդիկ անօթիութենէ մեռելի գոյն դարձած, ասդին անդին կերակուր կը փնտռէին : Հարուսաներէն շատերը բոլոր ինչքերնին ապրուստի տալով՝ վերջին աղքատութեան հասան : Ոմանք ուրիշ բան չկրնալով գրանել, ամէն տեսակ՝ նաեւ վնասակար խոտերն ուտելու ձեռք զարկին, որով շատերը շարսշար ախտերէ բռն-

նուեցան ու մեռան: Հաս ճնայք իրենց սիրելի որդի-
 քը թեթեւ գնով կը ծախէին, որ գանձ անոնց սակովն
 իրենց կեանքը կարող բնան պահել: Հրապարակները
 քաղցէն վերջին շունչն հասած մարդիկներով լեցուն
 էին, որոնք առանց օգնականութեան մնալով՝ ետեւ
 ետեւ կը մեռնէին: Այլ ոչ կերակրող սեղան գնող կար,
 ոչ կարգաւորեալ կերակուր ուտող. քիչ մը ցորեան
 գանողն՝ առանց ազարու եւ եփելու կ'առնուր կ'ու-
 տէր. նոյնպէս միւր գեռ կէս եփած կրակին վրայէն
 կը յափշտակէին ու կ'ուտէին: Քայց աւելի սոսկալին
 ան էր որ գանուեցան նաեւ մարք, որոնք իրենց անօ-
 թիւութենէ մահուան դուռն հասած՝ որդիքն եփեցին
 ու կերան: սմանք ալ գաղտուկ իրենց բնկերները բրա-
 նեցին եւ ոչխարի պէս մորթելով՝ անոնց մտով կերա-
 կրեցան: Աչ բարեկամ բարեկամի կը խնայէր, ոչ ազ-
 գական ազգականի եւ ոչ եղբայր եղբոր. ամէն մարդ
 սովէն ստիպուած՝ իրարու վրայ կը բռնանային իրար կը
 տանջէին ու կը ստիպէին որ եթէ պահուած կերակուր
 ունի՝ յայտնէ: Քաղցէն մեռնողներուն մարմիննե-
 րովն հրապարակներն ու փողոցները լեցուեցան, գո-
 րոնք թաղելն անկարելի ըլլալով՝ անոնց հոտէն կա-
 տալի շներ ու գայլեր եւ շատ գիշատիչ թռչուններ
 քաղաքները լեցուեցան, որոնք նաեւ ողջ մարդիկնե-
 րու ալ շատ վնաս տուին:

Ժ.Զ. Սիկողայան Աստանդնուպոլսի պատրիարքը
 Հայաստանին թշուառ վիճակին լուրն առնելով՝ Յով-
 հան կաթողիկոսին մխիթարական թուղթ մը գրեց,
 որուն մէջ զանիկա կը յորդորէր որ ջանայ հայ իշխան-
 ներն իրարու հետ հաշտեցընել եւ միաբան թշնամ-
 ւոյն գեմ գինել, ան ատեն, կ'ըսէր, մեր կայսրն
 ալ ձեզի շատ զօրք օգնութեան կը խաւրէ: Կաթո-
 ղիկոսն առ նամակը մեծ ուրախութեամբ ընդունեցաւ,
 եւ նախ Արայ թագաւորն՝ որուն քովն ինքը նոյն
 ժամանակը կը կենար, համոզեց որ Հայոց իշխաննե-
 րուն հետ միաբանի. անկէ Տարօն գաւառն եկաւ

ազգն ալ մխիթարելու եւ միարանութեան յորդորելու . բայց աննեւրով որ Յուսուփ անորէն իշխանը Գուինի մէջ նստած՝ իր ասպատակութիւններն եւ արիւնհեզութիւններն անդադար կը շարունակէ , Աստանդին կայսեր նամակ մը գրեց , որուն մէջ Հայաստանին վիճակը տեղն ի տեղը նկարագրեց եւ խնդրեց որ իրենց օգնէ : Կայսրն աս նամակս առածին պէս Թեոդորոս իշխանը Հայաստան խաւրեց եւ Աշոտ թագաւորն ու կաթողիկոսն իրեն կանչեց որ հարկաւոր բաներու վրայ խօսին եւ թշուառութեանց առջեւն առնելու հնարք մը մտածեն : Յովհանն կաթողիկոսն աս հրակերբ չընդունեցաւ , ուստի Աշոտ առանձին ելաւ կայսեր դնաց , որուն Արսասանդին շատ պատիւ բրաւ ու մեծ սէր ցուցուց , եւ անկէ Հայաստանին վիճակին վրայ ազէկ տեղեկութիւն առնելով՝ շատ ընծաներով եւ մեծ գունդ մը յունական զօրքով իր տեղը խաւրեց :

Յուսուփ երբ որ կայսեր Աշոտին բրած օգնութիւնը լսեց , սկսաւ վախնալ , եւ որպէս զի Հայաստանին զօրութիւնը բաժնէ ու տկարացընէ , Աշոտ սպարապետը՝ Սմբատ թագաւորին Շապուհեղբօրն որդին՝ որն որ իր քովն էր , թագաւորական զգեստներով զարդարեց , գլուխը թագ դրաւ , եւ Հայոց թագաւոր անուանելով Հայաստան խաւրեց : Իրօք ալ չարամիտ իշխանին խորհուրդը կատարուեցաւ , վասն զի աս սուտ թագաւորն իր կողմնակիցներէն զօրք ժողովելով՝ բուն թագաւորին վրայ դնաց , զանիկա մերժելու եւ բալոր թագաւորութիւնն յափշտակելու համար : Ժողովեց Աշոտ թագաւորն ալ իր զօրքն եւ երկու կողմ սկսան իրարու հետ սաստիկ զարնուիլ : Յովհանն կաթողիկոսն աս բանս իմացածին պէս փութաց եկաւ երկու հակառակող կողմանց միջնորդեցաւ , եւ շատ դժուարութեամբ իրարու հետ հաշտեցուց ու մէջերնին խաղաղութեան ու միարանութեան գաշինք հաստատեց : Ասկէ ետքն Աշոտ թագաւորը

Գուգարաց կողմերը Շամշոզդէ բերդը գնաց, ան նա-
 հանգին Վասակ եւ Աշոտ իշխաններն՝ որոնք ժամա-
 նակէ մը վեր իրմէ ապստամբած էին, հնազանդեցը-
 նելու համար: Բայց ան աեղը պաշար զժուարու
 գանուելուն համար, զօրքը մօտաւոր դաւառները խոր-
 կեց որ համբար ժողվեն, իսկ ինքը 250 զինուորով
 Սահուրէթ բերդը գնաց: Ապստամբ իշխաններն երբ
 որ թագաւորին զօրացը ցրուիլը լսեցին, շուտ մ'իրենց
 զօրքը ժողվեցին, շրջակայ հազարացի իշխաններէն
 ալ քիչ մ'օգնութիւն առին ու 4000 հոգւով Աշոտը
 բերդին մէջ պաշարեցին: Բայց արի թագաւորն առ
 յանկարծական վտանգէն ամենեւին չվհատեցաւ, այլ
 շուտ մ'իր պղտիկ գնդովը շանթի պէս թշնամեցն
 զօրացը վրայ յարձակեցաւ, զարկաւ ցրուեց անոնց
 բազմութիւնը եւ շատերը ջարդեց, միկ մասն ալ
 գերի բռնեց, որոնց մէջէն այլազգիներուն քթերն
 եւ ականջները կտրել տուաւ, եւ անցաւ Վրաստան
 գնաց: Հին լուր առաւ որ Աշոտ սպարապետն իր դա-
 շինքին եւ երգմանը գէմ նորէն զօրք ժողվեր ու Վա-
 զարշապատ քաղքին կողմերը գրաւեր է. ինքն ալ
 անմիջապէս բանակն առաւ ու գիշերանց անոր վրայ
 հասաւ, երբ որ անիկա Վաղաւեր բուռած աւանն ան-
 հոգ նստած էր. զարկաւ անոր բանակն եւ յաղթու-
 թեամբ Վաղարշապատ մտաւ. իսկ սպարապետը փա-
 խաւ իր քաղաքը գնաց: Աթոզիկոսն առ բանս լսե-
 լով՝ նորէն անոնց մէջ մտաւ եւ շատ աշխատու-
 թեամբ դարձեալ հաշտեցուց. բայց անոնք քիչ ժա-
 մանակէն դրած դաշինքնին աւրեցին եւ սկսան կա-
 տաղաբար իրարու հետ պատերազմիլ, եւ երկու տարի
 այսպէս շարունակելով՝ շատ արիւն, աւեր եւ ապա-
 կանութիւն բրին:

ԺԷ. Ասիկէ ետքն Աշոտ թագաւորը Սահակ իշ-
 խանին աղջիկն իրեն կին առնելով՝ անոր զօրքովն
 աւելի եւս զօրացաւ, եւ Գուին քաղքին վրայ գնաց
 որ հոն Աշոտ սպարապետին հետ նորէն զարնուի ու

բարբառվին նուաճէ, կաթողիկոսը շատ Ըննաց որ զանոնք հաշտեցընէ բայց պարսպ . եղ, վասն զի թագաւորն իր զօրքին շատութեանը վրայ վստահացած՝ անոր խօսքին ականջ չդրաւ . եւ երբ որ սկսան զարնուիլ, Սահակ իշխանին որդւոյն դաւաճանութեամբ թագաւորական զօրքը յաղթուեցաւ ու ցրուեցաւ : Աշտ բարկացած գնաց Ափխազաց Գուրգէն իշխանէն նոր զօրք առաւ եւ Աղարշապատին վրայ եկաւ որ նորէն սպարապետին հետ զարնուի . բայց աս անգամ Յովհանն կաթողիկոսը շատ զօրաւոր խօսքերով զանոնք համոզելով՝ իրարու հետ հաշտեցուց :

Աս հաշտութիւնն հաստատուելուն պէս Աշտ իր Սահակ աներոջը հետ Ուտի դաւառին Մովսէս իշխանը հնազանդեցընելու գնաց : Մովսէս թէպէտ եւ թագաւորին զօրութեանը դէմ գնելու կարողութիւն չունէր, ի վերայ այսր ամենայնի չուզելով անոր հնազանդիլ, Ուտիին բիրտ ու կատաղի բնակիչներէն մեծ գունդ մը կազմեց եւ անոր դէմ ելաւ : Թագաւորն անոր սիրով պատգամ խաւրեց ու յորդորեց որ պարսպ տեղ ընդդիմութիւն չընէ եւ արեան պատճառ չըլլայ, եւ երբ որ անիկա մտիկ չըրաւ, յարձակեցաւ զարկաւ անոր գունդն ու բոլորովին ցեր ու ցան ըրաւ, զինքն ալ՝ որ Սիւնեաց Սմբատ իշխանին քովը գացած էր, բռնեց եւ աշուրները փորել տուաւ :

ԺԸ . Աշտ Ուտին կարգի գնելէն ետեւ Շիրակ դաւառը դարձաւ, եւ իր Աբաս եղբայրն ու Ափխազաց Գուրգէն իշխանն իրեն կանչեց տեսութիւն բնելու համար : Աս երկու իշխաններն արգէն թագաւորին վրայ նախանձ ունենալով՝ զանիկա սպաննելու ետեւէ էին, ուստի աս հրաւերն իրենց դաւաճանութիւնն ի գործ գնելու աղէկ առիթ համարեցան եւ ելան Արմրանի գեղն եկան, ուր որ թագաւորը կը կենար : Բայց հոն խորհուրդնին չկրնալով յաջողցընել, երբ որ Աշտ Երազգաւորս քաղաքը գնաց, երկուքը մէկտեղ յանկարծ անոր վրայ յարձակեցան : Թագաւորն արգէն

քիչ մը յառաջ անոնց խորհուրդն իմացած էր, անոր համար դեռ իրենք չհասած, Աբասին որդին ու քաղաքացուց մէկ մտոր հետն առաւ Ուտիի կողմերը քաշուեցաւ: Աբաս ու Գուրգէն եկան տեսան որ Աշոտ հոն չէ, քաղքին մէջ մնացած բաները թալկեցին եւ ելան գացին: Կոյն օրերը Սահակ իր աներն ալ իրեն դէմ թշնամացաւ ու պատերազմի ելաւ, բայց նախարարներուն միջնորդութեամբն առանց զարնուելու նորէն հաշտուեցաւ: Անկէ ետեւ Աշոտ Գուինի վրայ գնաց, որն որ իրմէ ապստամբած էր, ու սաստիկ պատերազմաւ նուաճելով՝ անցաւ Արաց երկիրը գնաց, եւ Արներսեհ թագաւորին հետ մէկտեղ Գուրգէնին վրայ քալեց անոր բրած չարիքներուն վրէժն առնելու համար: Գուրգէն՝ Աբասին եւ Աշոտ սպարապետին հետ միաբանելով՝ թագաւորին դէմ ելաւ, բայց յաղթուելով ու նեղը մանելով՝ հաշտութիւն խնդրեց, եւ յանձն առաւ բրած վնասներուն կրկին հատուցումը ընել:

Գեռա առ խօսակցութեան մէջ եղած ատեննին Աշոտին գոյժ հասաւ որ Սահակ իր երդումն ոտքի տակ առնելով՝ Ուտի նահանգը կ'ասպատակէ, ամրոցներէն թագաւորական զօրքը կը վանտէ եւ երկրին բնակիչները կ'առնու իր բերդերը կը տանի: Թագաւորն Արներսեհին խորհրդովը Գուրգէնին հետ բրած խօսակցութիւնն ի կախ թողուց, եւ շուտ մը զօրքն առաւ երդմնազանց իշխանին վրայ քալեց. բայց որպէս զի շուտով անոր հասնի բանակին մէջէն 300 քաջեր ընտրեց հետն առաւ ու մնացած զօրքէն բաժնուած՝ եկաւ Չորափոր գաւառը քարուտ բլրի մը վրայ կեցաւ: Անկէ Սահակին եպիսկոպոսի մը ձեռքով այսպէս պատգամ խրկեց. Ես քեզի ի՞նչ վնաս բրի որ դուն բրած երդումդ աւրելով իմ երկիրներս այսչափ ապականեցիր, եւ կ'ուզես նաեւ իմ արիւնս ալ թափել. բայց եկու յափշտակած բերդերդ եւ առած գերիներդ ետ տուր եւ քեզի հետ նորէն հաշտուինք:

Սահակ՝ եպիսկոպոսն իր վրանին մ. ջ արգելեց եւ բաւ . Գունն հոս կեցիր, ես կերթամ սրովս անոր պատասխան կու տամ . աս ըսաւ եւ 8000էն աւելի զօրքով եկաւ թագաւորին կեցած բլուրը պաշարեց, վահանաւոր հեռեւակներն առաջին կարգը շարելով՝ ու ձիււորներն անոնց ետեւը կեցընելով : Աշոտ առանց շփոթելու իր 300ին մէջէն 100 հոգին՝ որոնք ճամբորդութեամբ եւ աշխատութեամբ սաստիկ յոգնած էին, զատեց բլրին վրայ թողուց, եւ 200ովը բլրէն վար իջաւ : Հոն Սահակին տուած երգման թուղթը ձեռքն առած՝ աչուրներն երկինք վերցուց եւ այսպէս ըսաւ . Տէր թէ որ ես աս երգման դէմ դործեցի, աս չարեաց պատիժն իմ գլուխս թափելիս թէ որ Սահակ ասոր դէմ դործեց, անկէ վրէժն առ եւ զիս աս զուր մահուանէն ազատէ : Ասկէ ետքը նոյն երգման թուղթն իր բանակին հետ տարած խաչելութեան վրայ կապել տուաւ, եւ փոքրիկ դնդին առջեւն անցած՝ սաստիկ աղաղակաւ թշնամւոյն զօրացը վրայ յարձակեցաւ, որոնք խռոված ու շփոթած՝ ցիր ու ցան եղան, այնպէս որ եւ ոչ երկու հոգի իրարու քով մնացին . իսկ Սահակ իր Գրիգոր որդւոյն հետ թագաւորական զօրաց ձեռքն ինկաւ : Աշոտ մտածելով որ եթէ զանոնք ողջ պահելու կամ բանտարկելու բլայ, նորէն իրեն դէմ դաւաճանութիւն կ'ընեն, երկուքին ալ աչուրներն հանել տուաւ :

ԺԹ . Աս խառնակութեան ատենը Յուսուփ ոստիկանն ամիրապետէն ապստամբեցաւ, եւ անկէ իր վրայ խաւրուած զօրքէն բռնուելով՝ իր տեղը Սբուկ իշխանն Ատրպատականի ոստիկան դրուեցաւ, որն որ Աշոտին հետ բարեկամութեան դաշինք հաստատեց եւ անոր Արքայից արքայի (Շահնշահի) պատուանուն տուաւ : Հաղիւ թէ Հայաստան քիչ մը հանգչելու սկսած էր, յանկարծ Վասակ Գնթունի՝ Շամշոզէ բերդին իշխանը՝ թագաւորէն ապստամբեցաւ եւ Գուրգէնին հետ դաշինք դրաւ բերդն իրեն տալու, աս

պայմանաւ որ ինքն ալ իր երկրին բերդերէն մէկն իրեն տայ : Գուրգէն պայմանն յանձն առաւ , բայց երբ որ Վասակ անոր տուած երդմանը վրայ վստահացած ելաւ քովը գնաց , զինքը բռնեց հետը Շամշադէին տղերը բերաւ , ու մէջի զօրքն ստիպեց որ բերդն իրեն յանձնեն : Անոնք պատասխան տուին թէ Կինչեւ որ Վասակը մեզի չեա յանձներ , բերդը չենք տար . ան ատեն Գուրգէն սկսաւ բերդը զարնել : Ներսիսներն առ բանս թագաւորին իմացուցին , որն որ շուտ մը զօրքն առաւ հոն հասաւ ու Գուրգէնը վռնակեց բայց բերդապահները բերդն անոր ալ չուզեցին տալ , մինչեւ որ Վասակ իրենց չտրուի : Աշոտ տաքցած պաշարեց բերդն ու մէջինները նեղը ձգեց : Աս միջոցիս Գուրգէն բերդապահներուն գաղտուկ մարդ խաւրեց եւ երդմամբ խօսք տուաւ իրենց իշխանն իրենց յանձնելու , որոնք ասիէ յորդորուած՝ բերդին մէկ ծածուկ դուռը բացին , եւ անոր զօրքէն 300 հողի ներս առին : Ասոնք ներս մտածնուն պէս , իրենց խաբեպայ իշխանին հրամանին համեմատ , սկսան բերդապահները ջարդել . ան ատեն անոնք ալ միջնաբերդը փախան եւ Գուրգէնին զօրացը դէմ դնելու եւ դուրս վռնակելու կը ձգնէին : Թագաւորը ներսի աղմուկն եւ աղաղակը լսելով՝ եւ պատճառը չգիտնալով՝ կարծեց թէ բերդականներուն մէջ երկպառակութիւն ինկեր է եւ իրար կը ջարդեն , սկսաւ ինքն ալ դրսէն բերդը զարնել : Անոնք ներսէն պոռալով իրեն իմացուցին թէ պատերազմը Գուրգէնին զօրքին հետ է : Եթէ այնպէս է , ըսաւ թագաւորը , շուտով դռները բացէք որ ներս մտնեմ ու կռիւը լմնցընեմ : Բերդականներն անմիջապէս վազեցին դռները բացին . Աշոտ իր գնդովը ներս մտաւ ու Գուրգէնին բոլոր զօրքը գերի բռնեց : Անկէ դարձաւ եկաւ Կոտայք գաւառն եւ Աշոտ սպարապետը հրաւիրեց որ գայ իրեն հետ հաշտուի եւ մէջերնին միաբանութեան գաշինք դնեն . Յովհան կաթողիկոսն ալ կանչեց որ առ բանիս

Երբ որ ու միջնորդ բլայ: Կաթողիկոսն աս գործըր
 յանձն առաւ եւ երկու կողմանն մէջ մշտնջենաւ որ խա-
 զալու թեան դաշինք հաստատեց, որուն համար Գուրն
 քաղքին մէջ մծ աբախութեան հանդէսներ կա-
 տարուեցան: Հանդէսը լմրննալէն ետեւ թագաւորն
 սպարապետէն բաժնուեցաւ եւ ճամբայ ելաւ Ուտի
 նահանգն երթալու: Բայց զեւ ճամբան եղած ատենը,
 գոյժ առաւ որ Յիկ Ամրամ^ն նոյն նահանգին իշխանն
 ապստամբեր ու Գուրգէնին հետ միացեր է: Աճապա-
 րեց Ուտի հասաւ որ անկէ զօրք ժողմէ եւ աս նոր
 ապստամբին վրայ երթայ, կարծելով թէ նահանգին
 բնակիչներուն մծ մասն իրեն հաւատարիմ մնացած
 է. բայց երբ որ իմացաւ որ բոլոր նահանգն ապս-
 տամբին կողմն անցեր է, դարձաւ Եղերացուոց թա-
 գաւորին քովն եկաւ, եւ անկէ գունդ մը զօրք օգ-
 նութեան առած՝ Ամրամին վրայ քալեց: Ապստամբ
 իշխանն իր ընտանիքը Տաւաշ բերդը դրաւ, եւ իր
 օգնականներուն հետ շատ զօրք ժողոված՝ Կուր գետին
 քովն անտառներու մէջ ամրացաւ, անոր համար Աշոտ
 չկրնալով անոր հետ զարնուիլ, ինքն ալ բերդի մը
 մէջ քաշուեցաւ, որն որ ամէն կողմէն խիտ անտառ-
 ներով պատած էր եւ միայն նեղ ճամբայ մ'ունէր,
 ուսկից դուրս ելլելն ու կերակուր կամ ջուր բերելը
 շատ դժուարին էր, մանաւանդ որ թշնամիք ալ հոն
 մօտ ըլլալով՝ դուրս ելլելու թող չէին տար: Ասկէ
 Աշոտին զօրաց սիրտը լքաւ, որոնք վտանգէն ազա-
 տելու համար խորհուրդ բրին որ թագաւորը բռնեն
 կապեն ու թշնամոյն ձեռքը սան: Թագաւորն աս
 խորհուրդը ժամանակին իմացաւ, եւ իրեն հաւատա-
 րիմ մնացողներէն քանի մը հոգի հետն առած՝ կէս
 գիշերուան ատեն հեծաւ իր առոյգ ձին, ճեղքեց իր
 զօրքն ու կրճէն անցաւ Աաքաւաքար բերդը գնաց:
 Ամրամ ասոր լուրն առածին պէս, եկաւ զօրքովը
 կրճին բերանը բռնեց ու մէջի զօրքը գերեց. ետքն
 ամէնուն զէնքերն առաւ եւ զիրենք ազատ թողուց:

Ի. Հայաստանին մէկ կողմն աւ բաներս եղած ժամանակը Ասապուրական նահանգը խաղաղութեան մէջ էր, վասն զի Գագիկ՝ նոյնտեղաց թագաւորն ամէն իր իշխանութեան տակն եղող իշխաններուն հետ սիրով ու քաղցրութեամբ վարուելով՝ ամենուն սիրան իրեն հետ կապած էր, միանգամայն արտաքին թշնամեաց յարձակումն ալ դադրած էր։ Բայց աւ հանգիստը շուտով աւրուեցաւ, երբ որ Յուսուփ ամիրապետին հետ հաշտուելով՝ բանակն ելաւ եւ նորէն իր առաջին իշխանութիւնն առաւ։ Գագիկ անոր շարամատութիւնն եւ իրեն դէմ ունեցած թշնամութիւնն աղէկ գիտէր, անոր համար հանգիստ եւ անհոգ նստիլն ապահով չսեպեց, այլ իր երկրին բնակիչներն ամուր տեղեր դրաւ եւ ինքն իր Գուրգէն եղբորը հետ զօրքով պատրաստ կեցաւ որ հարկ եղած ատեն երկիրը պաշտպանէ։ Ոստիկանն Ատրպատական հասածին պէս զօրքը ժողվեց եւ Ասապուրական մըտաւ. բայց տեսնելով որ ամէն կողմ անբնակ է եւ միանգամայն Գագիկին պատրաստութենէն վախնալով՝ անոր դեսպան խրկեց եւ հարկերուն համար շատ ստակ առաւ. անկէ ետեւ անոր հետ բարեկամութեան դաշինք զնելով՝ Նսրը իշխանը Հայոց ոստիկան դրաւ եւ ինքը նորէն Ատրպատական դարձաւ։ Աս անպիտան ոստիկանն իր իշխանութեան սկիզբէն սկսաւ ազգին նեղութիւններն ու տառապանքներն աւելցնել. շատ իշխաններ խաբէութեամբ կը բռնէր կը բանտարկէր եւ անոնց սաստիկ տանջանքներ կու տար. Յովհան կաթողիկոսն ալ ձեռք ձգելու կը ջանար, ասոր համար անիկա ժողովրդեան թախանձելովը Սեւան կղզին քաշուեցաւ. բայց քիչ մը ետքն անկէ ելաւ Բիւրակն բերդն եկաւ եւ Նսրին նամակ մը գրեց, որուն մէջ անկէ իր կենացն ապահովութեանը համար երդման գիր կը խնդրէր, խոստանալով որ ինքն ալ կրցածին շափ ասոր հատուցումը կ'ընէ։ Ոստիկանն անմիջապէս աւ երդման թուղթը տուաւ, որով կաթողիկոսն

ապահովեցած՝ Բիւրակն կեցաւ : Բայց մահաժամանակն
 դատարի մը գրգռու թեամբը Նսրբ ըրչ մը եաքն եր-
 դումն աւրեց եւ Բիւրակն զօրք խրկեց որ կաթողիկոսը
 բռնեն : Անիկա աս բանս յառաջագոյն խնայաւ եւ բեր-
 դէն փախաւ Աշոտ թագաւորին քովը գնաց : Ոստիկա-
 նին զօրքն եկան բերգը պաշարեցին եւ սկսան զարնել .
 մէջիններն ալ Աստուծոյ ապաւինած՝ սաստիկ քաջու-
 թեամբ դէմ կը դնէին ու թշնամիներէն շատ մարդ կը
 ջարդէին : Բայց նոյն միջոցին ներսէն քանի մը զինուոր
 թշնամեաց հետ գաղտուկ խօսք ընելով՝ բերդն անոնց
 մատնեցին : Մտան ներս կատղած հագարացիներն ու
 բերդականներն անխնայ ջարդեցին , շատ եկեղեցա-
 կաններ ալ բռնեցին դասն տանջանքներով նահա-
 տակեցին . անկէ ետքը բոլոր քաղքին աւարը ժողվե-
 ցին եւ մնացած կանայքն ու տղաքը գերի բռնած՝
 ոստիկանին տարին . նաեւ բերդը մատնող զինուորներն
 ալ հետերնին տարին որ Նսրբ անոնց արժանաւոր հա-
 տուցում ընէ . բայց անիկա անմիջապէս աս մատնիչ-
 ներուն գլուխը կտրել տուաւ , իսկ գերիներն ազատ
 թողուց :

ԻԱ. Երջն օրերը Նսրբ Յուսուփէն ապստամբներու
 վրայ խաւրուելով՝ անոր տեղ ոստիկան գրուեցաւ
 Պէշիբ իշխանն , որուն առաջին գործքն եղաւ զօրք
 ժողվել եւ Աշոտ թագաւորին վրայ երթալ , զանիկա
 իրեն հնազանդեցընելու համար : Բայց որովհետեւ
 Աշոտ նոյն ժամանակը Սեւան ամուր կողին էր , չկրցաւ
 միտքը դրածը յաջողցընել . ուստի ան կողմերն աս-
 պատակելու եւ ժողովուրդը ջարդելու ու դերելու
 ձեռք զարկաւ : Գէորգ Մարզպետունի՝ Աշոտին իշ-
 խաններէն մէկն աս բանիս լուրն առածին պէս , պրդ-
 աիկ գունդ մը քաջ զինուորներ ժողվեց եւ ասպատակ-
 ներուն վրայ յարձակելով՝ ցրուեց ու փախուց : Պէշիբ
 ասով սուլի եւս գրգռուեցաւ եւ նորէն մեծ պա-
 տրաստութեամբ Գեղամայ ծովին եղերքն եկաւ որ
 Սեւան անցնի եւ Աշոտը բռնէ սպաննէ : Մեծ էր թա-

գաւորին վրայ հասած վտանգը, վասն զի իր անձին պաշտպանութեանը համար քովը 100 հոգիէն աւելի զօրք չունէր, բայց իր արութիւնն եւ անվհերք քաջատրտութիւնը զինքն առ վտանգէն ալ փառօք ազատեց: Շուտ մը հրամանն տուաւ իր մարդիկներուն որ 10 նաւակ պատրաստեն, եւ անոնց մէջ 70 քաջ աղեղնաւորներ զնելով՝ ինքն ալ անոնց մէկուն մէջ մտաւ ու ծովեզերքը բնակած թշնամւոյն վրայ քալեց, եւ սաստիկ արագութեամբ նաւակներուն մէջէն անոնց վրայ նետ թափելով՝ զանոնք շփոթեց ու փախուց: Պէշիր իր ցրուած զօրքը նորէն ժողովելով՝ Գեղայ բերդին վրայ դնաց, յուսալով որ բերդականներն անպատրաստ կը գտնէ եւ կրնայ բերդին տիրել. բայց Գեորգ իշխանն՝ որն որ նոյն բերդին մէջն էր, թշնամւոյն մօտենալն իմացածին պէս, իր զնդովն յանկարծ դուրս յարձակեցաւ, եւ անոնց աղէկ ջարդ մը տալով՝ մնացածը Գուին փախուց: Ասկէ ետքը քիչ մ'ատեն ասպատակութիւնները դադրեցան. Աշոտ ալ Սեւանէն ելաւ եւ սկսաւ ազդը խնամել. իր Աբաս եղբօրը հետ ալ հաշտուեցաւ ու քիչ մը ետքը վախճանեցաւ, որուն թագաւորութիւնը 15 ասորիի չափ տեւեց:

Իր արութեանն ու սաստիկ զօրութեանը համար ժողովուրդը զինքն Երկաթ կ'անուանէին. իսկ Յունաց պատմագիրները կը պատմեն որ Աշոտ կոստանդնուպոլիս եղած ատենն՝ երկաթէ հաստ գաւազան մը երկու ծայրերէն բռներ եւ իր սաստիկ ուժովը պսակի պէս կըրցուցեր է:

Ի Բ. Աբաս եղբորը անդ թագաւոր կը գրուի (928) եւ Հայաստան կը խաղաղցընէ : Ապլխարիպ զօրապետը՝ Վասպուրահանի Աշոտ Գերենիկ թագաւորն այլազգիներուն կը մտանէ, եւ ետքը նորէն կ'ազատէ : Ի Գ. Կարսին մայր եկեղեցւոյն շինուիլը : Ափիսագաց Բեր թագաւորին Հայաստան արշաւելն եւ Աբասէն յաղթուիլը : Աբասին մահը (951) :

Ի Բ. ՈՐՈՎՀԵՏՏԵՒ Աշոտ թագաւորն որդի չունէր, նախարարները Գագիկ Արծրունի Վասպուրահանի թագաւորին խորհրդովն անոր Աբաս եղբայրն իրենց վրայ թագաւոր դրին, որն որ գահն ելածին պէս Հայաստան խաղաղցընելու ու ժողովուրդը տառապանքներէն ազատելու ձեռք զարկաւ : Երկրին ամէն կողմերէն ասպատակները վաճառեց, Գուին նստող ոստիկանին հետ խաղաղութեան դաշինք հաստատեց, ամէն Հագարացիներէն գերի բռնուած նախարարներն ազատեց ու տեղերնին խրկեց, եւ քիչ ժամանակուան մէջ ամէն կողմ հանգչեցուց : Աս տեսնելով ասդին անդին ջրուած հայերը, դունդագունդ դարձան իրենց տեղերն եկան :

Աբասին թագաւորութեան ութերորդ տարին Գագիկ Արծրունի Վասպուրահանի թագաւորը 29 տարի թագաւորութիւն բնելէն ետեւ մեռաւ, եւ իրեն յաջորդեց իր որդին Աշոտ Գերենիկ : Ասիկա Ապլխարիպ Հանունի զօրապետին վրայ կասկած ունենալով՝ անոր իշխանութիւնը ձեռքէն առաւ : Զօրապետն աս բանիս վրէժն առնելու համար Հեր ու Զարեւանդ գաւառներուն ոստիկանը գաղտուկ դրգուեց որ Գերենիկին վրայ գայ, խոստանալով որ ինքն ալ իրեն կ'օգնէ : Ոստիկանը շուտ մը զօրքը ժողովեց Վասպուրահան մտաւ, Գերենիկին հետ զարնուեցաւ՝ յաղթեց, զինքն ալ բռնեց ու տարաւ բանտարկեց. եւ շատ անգամ զրօ-

անքի զայցած ատենը հետք կը աստեղծու ծառաներուն ձեռքը կու տար որ ծաղրեն ու հետք խաղան: Արծնասորներն Ապլխարիպին աս գործքին վրայ շատ նեղացան եւ զանիկա նշովեցին, որով զօրապետին սիրար շարժեցաւ եւ բրածին վրայ զղջալով՝ Գերենիկին գաղտուկ մարդ խաւրեց եւ ըսաւ. Ոստիկանին ծառաները հետք խաղացած ատենը, դուն անոնց բովէն փախիր դէպ ի Արմիայ ծովը գնայ, ես հոն կը սպասեմ եւ զքեզ կ'ազատեմ: Թագաւորն աս խօսքէս յորդորուած՝ որոշեալ օրը ծառաներուն ձեռքէն ծովին կողմերը փախաւ, անոնք ալ ետեւէն ինկան որ բռնեն: Գուրսցաթքեց Ապլխարիպ իր դարանած տեղէն ու ծառաներուն վրայ վազեց, շատերն սպաննեց մնացածը փախուց եւ սկսաւ հալածել: Փախչողներուն մէջէն յաղթանդամ ու զօրաւոր մարդ մը յանկարծ ետ դարձաւ ու սուրը ձեռքն անոր վրայ յարձակեցաւ: Արի զօրապետն անոր շարժելու ատեն թող չտուաւ, այլ իր քաջասուր սրովն անոր ձախ թեւին այնպէս ուժով մը զարկաւ՝ որ զանիկա մէջքէն երկու կտոր ըրաւ. եւ մինչեւ քաղքին առջեւը հասնելով՝ երբ որ դռները գոց գտաւ, զարկաւ պողովատէ սուրն երկաթէ դրան ու խորունկ ներս խոթեց: Անկէ դարձաւ Ասպուրական Գերենիկն իր աթոռը նստեցուց, ինքն ալ անկէ նորէն մեծ պատիւ գտաւ. բայց Գարենիկ քիչ մը ետքը վախճանեցաւ եւ իրեն յաջորդեց իր եղբայրն Արուսահլ Համուղասպ:

ԻԳ. Ասպուրականին կողմերն աս բաներս պատահած ատեն, Աբաս թագաւորն իր երկիրը շէնցընելու ու վարդարելու փոյթ կը տանէր. Կարս քաղաքն իր թագաւորութեան մայրաքաղաքն ըրաւ, եւ հոն մեծ ու փառաւոր եկեղեցի մը շինել տուաւ, որուն շինութիւնն հինգ տարի տեւեց: Բայց դեռ եկեղեցւոյն օժման հանդէսը չկատարուած, Ափխազաց Բեր թագաւորն Հայաստան արշաւեց եւ Կարս գետին եզերքը բանակեցաւ: Աբաս անոր դեսպան խրկեց եւ գալուն

պատճառն հարցուց, որուն Բեր պատասխան տուաւ .
 Կ'տղեմ՝ զալ քու շինել առած եկեղեցիդ Վրաց
 ծէսով օծել տալ : Բարկացաւ Աբաս աս պատասխա-
 նին վրայ, եւ շուտ մ'ինքն ալ Հայոց զօրքը ժողվեց
 սնոր վրայ զնաց ու գետին ասդիի եզերքը բանակե-
 լով՝ Գեորգ Մարզպետունի քաջ իշխանը պզտիկ
 գնդով մը խրկեց որ գետէն անդին անցնի ու թշնամին
 շփոթէ : Գեորգ անմիջապէս իր դունդը ծածուկ տե-
 ղէ մը միւս կողմն անցուց եւ Բերին զօրքն անհոգ կե-
 ցած ատենն՝ յանկարծ վրանին յարձակեցաւ ու զա-
 նոնք խռովեց . գետին միւս կողմէն ալ թագաւորա-
 կան զօրքն սկսան անոնց վրայ նետ տեղալ, եւ այսպէս
 զանոնք բոլորովին ցրուեցին ու վախուցին : Բեր իր
 ցրուած զօրքը նորէն ժողվեց ու գետէն ասդին անց-
 նելով՝ Հայոց բանակն այնպէս սաստիկ զարկաւ որ
 զօրքը խռովեցան ու սարսափած մնացին : Բայց Աբաս
 արի թագաւորն առանց այլայլելու շուտ մը ձի հեծաւ,
 քաշեց սուրն ու կայծակի պէս թշնամոյն զօրացը
 մէջ մտաւ, առջեւը պատահողը զարկաւ գետինը
 ձգեց . իր օրինակէն՝ լքած զօրքն ալ նոր հոգի առին
 եւ ամէնը մէկտեղ Բերին բանակին վրայ ինկան,
 կէսը սրով զարկին կէսն ալ գետին մէջ մղեցին, Բերն
 ալ բռնեցին թագաւորին բերին : Աբաս առաւ զանի-
 կա հետը Կարս բերաւ եւ նորաշէն եկեղեցին խոթե-
 լով՝ Տես, ըսաւ, ան եկեղեցին՝ զորն որ դուն քու
 ծէսովդ օծել տալ կ'ուզէիր . աղէկ նայէ, վասն զի
 մէյ մ'ալ պիտ'որ չտեսնես . եւ դուրս հանելուն պէս
 աշուրներն հանել տուաւ : Ափիսաղներն երբ որ աս բանս
 լսեցին, շատ բնձաներով եկան Աբասին ոտքն ինկան,
 եւ անկէ ետեւ Հայոց դէմ թշնամութիւն չընելու
 խոստում տալով՝ իրենց թագաւորն առին տարին :

Աբաս ասկէ ետքը 9 տարի ալ ապրեցաւ ու
 խաղաղութեամբ վախճանեցաւ, որուն բոլոր թագա-
 ւորութեանը 24 տարի տեւեց : Իրեն յաջորդեց իր
 երէց որդին Աշոտ Գ :

Գ Լ ՈՒ Ի Ե Ե

Ա Շ Ո Տ Գ ՝ Ո Ղ Ո Ր Մ Ե Ծ

ԻԳ. Աշոտ հօրը կը յաջորդէ (952) եւ Հայաստան սուլթանականներէն կը մտորէ : Իր թագաւոր պսակուիլը (961) : Մուշեղ Աշոտին պատիկ եղբայրը Վարս քաղքին մէջ թագաւոր կը պսակուի : Համառն հազարացի զօրապետն Աշոտին դէմ պատերազմի կ'ելլէ . թագաւորն անոր կը յաղթէ , զինքն ալ կը սպաննէ : Աշոտին ողորմածութեան գործքերը : ԻԵ. Յովհաննէս Չմբշիկի կայսեր Հայաստան արշաւելը : Աշոտին անոր դէմ ըրած պատրաստութիւնը . կայսեր Հայոց հետ հաշտութիւն ընելը : Աշոտին մահը (977) :

ԻԳ. ԱՇՈՏ հօրն իշխանութիւնն առածին պէս , սկսաւ Հայաստանն իր խաղաղութեան մէջ պահելու խնամ տանիլ . եւ որովհետեւ հօրը մահուրնէ կտեւ ամէն կողմանէ թշնամիք Հայաստան արշաւած՝ կ'ապատակէին , ինքն անմիջապէս Շիրակ գաւառն եկաւ եւ 2000 ընտիր զօրք ժողովելով՝ ամէն կողմ պարտեցաւ եւ ասպատակները զարկաւ ու վռնտեց : Աս գործքիս լուրը բոլոր Հայոց թշնամիներուն սիրտը վախ մը ձգեց , որոնք ամէն կողմանէ ետ քաշուեցան ու երկիրը խաղաղացաւ : Անկէ կտեւ Աշոտ 60,000ի չափ զօրք ժողովեց եւ Գեորգ Մարզպետունիին Գոռ որդին անոնց վրայ սպարապետ դրաւ . 30,000 զօրք ալ Գոռ ժողովեց եւ առաջին զօրաց հետ միացընելով՝ 90,000ի բանակ մը կազմեց , որով բոլոր շրջակայ ազգերը զարհուրեցան եւ ընծաներ ու պարգեւներ խաւրելով՝ անոր հետ խաղաղութեան դաշինք հաստատեցին : Աշոտ այսպէս 9 տարի ազգը խնամելէն կտեւ նախարարներն ու զեցին զինքը՝ թագաւոր օժեւ տալ , ուստի Աղուանից Փիլիպպոս թագաւորն եւ անոնց Յովհաննէս կաթողիկոսն Հայաստան հրաւիրեցին որ աս հանդիսութեան ներկայ ըլլան , եւ քառասունի չափ Հայ եպիսկոպոսներ իշխաններուն հետ մէկտեղ Շիրակ գաւառին Անի քաղաքը

գալով՝ մեծ փառասորութեամբ Աշտար Հայոց թա-
ղասոր օձեցին: Իսկ անոր Մուշեղ եղբայրն՝ որն որ
Վանանդ գաւառին գաւառապետ դրուած էր, իր կող-
մնակիցներուն հաւանութեամբը Արար քաղքին մէջ
թագաւոր օձուեցաւ, թէպէտ եւ միշտ եզրօրը հետ
միաբան մնաց եւ անոր հրամաններուն կը հնազանդէր:

Այն ժամանակներն Համաուն Հագարացոց զօ-
րագետն ամիրապետէն ապստամբելով՝ Աշտարին դես-
պան խրկեց եւ անկէ հարկ պահանջեց. եւ երբ որ
անիկա մտիկ չըրաւ ու դեսպանները վռնտեց, զօրա-
պետն իր բանակն առած՝ անոր վրայ եկաւ: Թագաւորն
իր զօրքովն անոր դէմ ելաւ, զարկաւ յաղթեց, զինքն
ալ բռնեց սպաննեց: Ամիրապետն աս բանիս լուրն
առնելով՝ շատ ուրախացաւ, եւ շնորհակալութեան
համար Աշտարն արժանաւոր ընծաներ ու թագաւորա-
կան թագ խրկեց: Անկէ ետեւ Աշտար բոլոր ջանքն
իր ժողովուրդը խեղճութենէ ազատելու դարձուց.
զանոնք արտաքին թշնամեաց արշաւանքներէն ապա-
հովցրնելու համար, երկրին ամէն կողմը բերդեր եւ
ամրոցներ շինել տուաւ. նաեւ Անի մայրաքաղաքն ալ
նոր բերդով զօրացուց: Բոլոր իր գանձն աղքատաց ու
կարօտելոց բաշխեց: Ան աստիճանի էր իր բարեպաշ-
տութիւնն եւ ողորմածութիւնն, որ չէր կրնար աւանց
իր սեղանին վրայ աղքատ կամ հաշմանդամ մ'ունե-
նալու հանգիստ կերակուր ուտել: Ամէն օր քաղքին
կաղերը, կողբերն ու բորոտներն իրեն հետ սեղան կը
նստեցրնէր եւ ամենուն պէտքը կը հոգար: Ասոնց
համար շատ քաղաքներ մասնաւոր աղքատանոցներ
շինել տուաւ եւ ամենուն մուտք կտպեց, որոնց շատ
անգամ ինքն այցելութեան կ'երթար եւ կը ծա-
ռայէր: Այսպիսի գթութեան գործքերուն համար
ազգն ալ իրեն արժանաւոր պատուանուն տուաւ եւ
Ողորմած անուանեց:

Ինչ . Արբ որ այսպէս ամէն տեղ թագաւորին
խնամակալութեամբը ժողովուրդը խաղաղութիւն ու

Հանգիստ կը վայելէր, յանկարծ անակնկալ կողմանէ
 մ'աս հանգիստն աւրուեցաւ : Յովհաննէս Չմբշկիկ
 Յունաց կայսրը մեծ պատրաստութեամբ Հաղարացոց
 վրայ երթալու ատեն, քանի մ'անզգամ մարդիկներս
 գրգռութեամբը յանկարծ զօրքն Հայաստան դար-
 ձուց եւ եկաւ Տարօն գաւառը բանակեցաւ : Աշոտ
 իսկզբան աս բանէս շատ խռովեցաւ, բայց ետքն ինքը
 զինքը զօրացրնելով՝ ամէն կողմ հրաման խրկեց որ
 զօրքը քովը ժողվուին : Շուտ մ'ամէն գաւառներուն
 զուժարտակներն իրենց իշխաններովը վազեցին Շիրակ
 դաւառն եկան . նաեւ Ասպուրականին Աշոտ թա-
 գաւորն՝ որն որ հօրն Աբուսահլին յաջորդած էր՝
 Աշոտին հետ միաբանեցաւ, եւ իր Գուրգէն ու Աւ-
 նէքերիմ եղբայրները դունդ մը զօրքով անոր օգնու-
 թեան խաւրեց : Ատնցմով թագաւորական բանակը
 80,000ի հասաւ, զորն որ Աշոտ առաւ Հարք գաւառն
 եկաւ եւ անկէ կայսեր գետպան խրկեց որ շուտով
 Հայաստանէն դուրս ելլէ : Կայսրն արդէն անոր զօ-
 րութենէն վախցած բլլալով՝ գետպաններուն խօսք
 սուաւ որ ետ կը քաշուի, միայն թագաւորէն օգնա-
 կան զօրք խնդրեց : Աշոտ անոր 10,000 ընտիր զօրաց
 դունդ մը խրկեց, զորոնք Չմբշկիկ առածին պէս Հայ-
 ստանէն դուրս ելաւ : Աշոտ ասկէ ետքը քանի մը
 տարի ալ խաղաղութեամբ թագաւորեց եւ վախճա-
 նեցաւ : Իր 26 տարւան տերութեան ատենը բոլոր
 իր իշխանութեան տակն եղող ժողովուրդն ամէն
 տեսակ հանգիստը վայելեց, եւ իր մահուընէ ետքն
 ալ ազգին մէջ իր բարի յիշատակն անմահ մնաց :

Գ Լ Ո Ւ Խ Թ

Ս Մ Բ Ա Տ Ի

Ի Զ. Սմբատ Տօրը կը յաջորդէ (977). Անի քաղաքը կ'ամբարացընէ ու շէնքերով կը զարդարէ: (Անիին աւերակները): Ի Է. Սմբատին ու Կարսի Մուշեղ թագաւորին մէջ ծագած թշնամութիւնը: Մուշեղին մահն եւ իր Աբաս սրբւոյն ըսած բարեկարգութիւնները: Ի Ը. Սմբատին՝ թագաւորութեանը վերջին ժամանակներն ըսած գործքերն եւ իր մահը (990):

Ի Զ. ՍՄԲԱՏ՝ Աշոտ Ողորմածին երէց որդին, Տօրը տեղ թագաւորեց եւ անոր նման քաջութեամբ ու իմաստութեամբ ազգը խնամեց: Ամէն բանէ յառաջ իր արքունի քաղաքն ամրացընել ուղելով անոր շորս կողմը սաստիկ ամուր ու բարձր պարիսպ մը շինեց եւ դեղեցիկ աշտարակներով ու զարդերով զարդարեց. պարսպին առջեւն ալ խորունկ փոս մը փորել տուաւ: Ասո՛ք ու թը տարւան մէջ կատարելէն ետեւ, քաղքին մէջը զարդարելու ձեռք զարկաւ, եւ նոյն ատենուան անուանի Տրգատ ճարտարապետին ձեռքովը շատ մեծամեծ եկեղեցիներ շինեց. նաեւ մայր եկեղեցին ալ արտաքոյ կարգի փառաւորութեամբ սկսաւ շինել տալ. բայց չկրցաւ իր կենդանութեան ատենը լմնցընել:

Անի քաղաքը Սմբատին ատենն այնչափ մեծցաւ ու գեղեցկացաւ, որ նոյն ժամանակուան ամենէն անուանի քաղաքներուն մէկը կը համարուէր. միայն իր եկեղեցիներուն թիւը 1001ի հասած է: Իր բնակչացը թուոյն համար հիմակուան իր աւերակները տեսնող եւրոպացի ճամբորդները կ'ըսեն թէ մէկ միլիոնի հասած պիտ'որ ըլլայ: Աս քաղքին աւերակները մինչեւ այսօր կեցած են, որոնք իրենց տխուր վիճակին մէջն ալ մեր դարուն երեւելի ճամբորդներուն մեծ զարմանք կը պատճառեն, եւ քաղքին յառաջուան գեղեցկութեանն ու փառաւորութեանը ցոյցը կու տան:

Գեր Բորգըրը Անգղիացին 1817ին աս աւերակը պարտեցաւ, որն որ թէպէտ եւ մօտաւոր աւազակաց վախէն չկրցաւ քանի մը ժամէն աւելի հոն մնալ, ի վերայ այսր ամենայնի

այսչափ քիչ ժամանակուան մէջ տեսածներն ալ իրեն վրայ մեծ ազդեցութիւն ըրին եւ զարմանքը շարժեցին, ինչպէս իր ստորագրութիւնը կը ցուցնէ: «Քաղաքը, կ'ըսէ աս գիտունը, դղեակներով, աշտարակներով ու պալատներով լեցուն է: Իր մեծ դրան վրայ քարէ փորուած ինձ մը կայ: Մեծամեծ քարէ խաչեր ամէն կողմ կը տեսնուին. կտորած սիւներ ու խոյակներ խառն ի խուռն դիզուած կը կենան: Հոս է հին Հայոց թագաւորներուն պալատներն, ամէն մէկը մշտեկ քաղաքի ընդարձակութեամբ, որոնք նաեւ իրենց կործանած վիճակին մէջ այնպիսի գեղեցկութիւն մ'ունին որ գրիչը չկրնար նկարագրել: Իրենց ամէն սրահներն սրահնչիլ քանդակներով եւ ամենագեղեցիկ խճանկարներով (մուզայիզներով) զարդարուած են: Որ կողմն որ գացի, Հայոց հին արքայանիստ քաղաքին հաստատուն ու գեղեցիկ ճարտարապետութեանը վրայ ստիպուեցայ զարմանալ, որուն նմանն իմ հայրենեացս մէջ երբեք տեսած չէի: Եկեղեցիները բարձրաբերձ կամարներով ծածկուած, զարմանալի խճանկարներով պատած, որոնց բոլորախը կարմիր, սեւ ու դեղին քարերէ Խորուսիկեան եղանակաւ շինուած շքանակներ կը պատեն, սիւներով ու կամարի զարդերով զարդարուած, այնպէս անարատ մնացած են որ կարծես թէ երէկ ճարտարապետին ձեռքէն ելած են, եւ կը ցուցնեն որ չէ թէ ժամանակն, այլ մարդիկ, պատուրազմն եւ երկրաշարժը քաղաքն աս վիճակի մէջ ձգած են: Ամէն կողմ հայերէն գրուածներն ու զարդերն իրենց վրայ նոր խորհրդածութիւններ ընելու կը հրաւիրեն, բայց աւագակաց վախն՝ որոնք միշտ աս կողմերէս անցնող ճամբորդներուն ընչիցն ու կենացը դարանակալ կ'ըլլան, շուտով ասկէ հեռանալու կը ստիպեն:

Գեր Բորգըրէն աւելի ճիշդ եւ ընդարձակ տեղեկութիւն կու տայ Անիին աւերակներուն վրայ Ալայգունդ Համիլդըն, որն որ 1836ին Յունիսի 13ին Կարսի քաղաքապետին մարդիկներէն մեկուն հետ հոն գնաց եւ ամբողջ օր մը պարտեցաւ: «Աւերակը, կ'ըսէ, հիմակուան Անի ըսուած գեղէն մկ անդղիական մղոն եւ Կարսին ուղղակի արեւելեան կողմն, անկէ 24 մղոն հեռու Ախուրեան գետին քովն է: Դիրքն երեքանկիւնի ձեւ մ'ունի եւ ապառաժուտ գերակալուց մը վրայ է, որուն արեւելեան կողմը ժայռերով կը պաշտպանուի եւ անոնց ստորտը գետին հոսանքը կը թանայ: Արեւմտեան կողմը ցամաք փոս մը կայ, որուն երկու կողմերը խռոչներով եւ այրերով խորունկցուած են: Իսկ

երբորդ կողմն որ առաջին երկու կողմերուն հետ միանալով՝ երեքանկիւնը կը կատարէ; ամուր, լայն եւ շատ տեղ կրկին պարսպով պատած եւ անհամար կըր աշտարակներով ապահովացած է: Քաղքէն դուրս միայն երկու հայերէն արձանադիրներով լեցուն մատուռ կայ, որոնց շէնքը պարսպին ներսի շէնքերուն նման է: Ասոնց բարձրութիւնը տեղ տեղ մինչեւ 40—50 ոտնաչափի կը հասնի. իրենց շինուածքը շատ սրանչելի է. դրսէն՝ զարմանալի ճարտարութեամբ իրարու վրայ սպուցուած մեծամեծ չորերկուսի քարեր զիրենք կը պատեն: Քաղքին մէջը մտնելու միայն երկու դուռ կըցայ տեսնել. արեւմտեան դրան երկու կողմը շատ բարձր աշտարակներ շինուած են, բայց շէնքերէն թափուած նիւթերը զանիկա բոլորովին գոցած եւ անմտանելի բրած են: Արեւելեան դռնէն մտնելու ատեն, պէտք է կրկին պատերէ անցնիլ, բայց աս երկու պատերուն մուտքերն մէկ ուղղութեան մէջ (դիմացէ դիմաց) չեն, այլ ներքինն արտաքնոյն դէպ ի ձախ կողմն՝ անկէ բաւական հեռու է: Գրսի մուտքին անմիջապէս դիմացն ինկող պատը Հայերէն արձանադիրներ կը ծածկեն. ասոնց մէջ քարի վրայ նուազ արուեստով փորուած առիւծի պատկեր մը կայ, որն որ Հայոց ճարտարապետութեան հասարակ զարդերէն մէկն է: Նստեւ ներքին դրան երկու կողմերն ալ կըր աշտարակներ կը բարձրանան, որոնց ձախ կողմինն ստորոտն, անմիջապէս դրան մուտքին քով երեք խորշեր, եւ անոնց ամէն մէկուն մէջ մէյմէկ վրանին խաչի պատկեր փորուած խոշոր քարեր կան:

Աս դռնէն ներս մտնուելուն պէս, զարմանալի քաղքին բոլոր տեսարանը կը բացուի: Ամէն կողմ պզտիկ շէնքերու եւ բնակութեան աներու աւերակներով լեցուն է, որոնց մէջ 20ի չափ մեծամեծ շէնքեր (ըստ մեծի մասին եկեղեցի ու մատուռ,) կանգուն կը կենան: Ասոնցմէ զատ են երկու բարձր միկթի աշտարակներն եւ երկու թաղաւորական պալատները: Բայց ասոնց մէջ ամենէն աւելի մտադրութիւնն իրեն դարձնողը մեծ ու փառաւոր եկեղեցին է, զորն որ միւսներէն զանազանելու համար մայր եկեղեցի կրնանք անուանել: Աս ընդարձակ խաչաձեւ շէնքը դրան ճամբուն հարաւային կողմը կ'իյնայ, եւ դեռ անարատ մնացած է. սրածայր յարկը խոշոր չորերկուսի քարերով ծածկուած եւ ներսէն կամարի վրայ հաստատուած է, որն որ իր կենդրոնին վրայ եզոզ դմբութէն (կաթողիկէէն) զատ ամբողջ կը կենայ: Եկեղեցւոյն դիւաւոր դուռը շէնքին

արեւմտեան ծայրը կ'իյնայ, որուն երկու կողմն Հայերէն արձանագիրներ կը ծածկեն . ասոնք թէ որ օրինակուելու եւ հրատարակուելու բլրան, Հայոց պատմութեան շատ բուսաւորութիւն կրնան տալ : Անիին մէջ գրեթէ շէնք չկայ որ Հայերէն արձանագրով լեցուն չըլլայ : Եկեղեցւոյն ներսի կողմը մէկ զլխաւոր միջին ճիւղ եւ երկու կողմնական թեւեր բաժնուած է . առաջինը 107 սանաչափ երկայնութիւն եւ 66 սանաչափ լայնութիւն ունի : Շինութեան կերպը հին Սարակինտեան եւ Բիւզանդեան ոճին խառնուրդ մըն է, եւ աս ճարտարապետութեան ոճը բոլոր Անիի մէջ կը տեսնուի . բայց շէնքերէն շատերուն մէջ զարդերու ու քանդակներու զանազանութիւն մը կայ, որոնք միշտ Արարացւոց կամ Մաւրիտանացւոց հարուստ զարդերուն կը նմանին :

Քաղքին հարաւային կողմն երեքանկեան ծայրին մտաբարձր ապառաժ մը կայ, որուն վրայ միայն առանձնականաց սներ եւ 34 մատուռ շինուած են : Աս մատուռներէն մէկը գեռանկործան կեցած է, որուն շէնքը շատ աղէկ ու հարուստ է : Ապառաժին ու մայր եկեղեցւոյն մէջերն ուրիշ եկեղեցի մ'ալ կայ, որն որ թէպէտ եւ գեանի հաւասար եղած է, բայց իր աւերակներուն մէջն ալ ճարտարապետութեան ամենարարակ գործուածներ կը տեսնուին : Ասկէ քաղքին արեւմտեան կողմը դառնալով՝ շատ հարուստ զարդարուած շէնքեր կու գան, որոնց մէջ 30 սանաչափ արամազձով ութանկիւն մատուռ մը կայ : Ասիկա իր պատերուն վրայ եօթը բոլորաձեւ խորշեր ունի . վրան գմբեթ մը ծածկած է եւ ութը կողմանէ մուտք ունի : Շէնքին ներսի կողմը շատ պարզ է, բայց դուրսը քանդակներով ու գոգուածներով զեղեցիկ զարդարուած : Աս մատրան հիւսիսային արեւելեան կողմը շատ հարուստ զարդերով զարդարուած եկեղեցի մ'ալ կայ, որուն կից է արտաքոյ կարգի զեղեցիկ կամարով մատուռ մը : Վամարը զանազան դաշտեր բաժնուած է, զորոնք գոյնզգոյն քարերով շինուած խճանկարներ կը զարդարեն : Պատերն ամենազեղեցիկ արարացի քանդակներ փորուած են, որոնց մէջ կրկնաթեւ խաչեր յաճախ կը տեսնուին :

Անիին աւերակներուն ամէն մէկ մասին, իր կամարներուն, խոյակներուն, սիւնակներուն, սիւներուն եւ ամէն տեսակ զարդերուն վրայ սարակինտեան ու գոթացի հարուստ ճարտարապետութեան ծագումը կատարեալ կրնայ սորվուիլ :

Նոր խորհրդածութեան շաշա մ'ալ կը բանայ, քաղքին պարսպին արեւմտեան ծայրն եղող Հսկայաձեւ շէնքի մ'աւելերակը, որն որ անտարակոյս թագաւորական պալատն է, իր գառնիկոններն հարիւրաւոր խուցեր ունին. մեծ դուռը սարակինոսեան ամենագեղեցիկ սճով է, եւ իր մեծ սրածայր կամարին վրայ պատուհան մ'ունի: Բոլոր պատին երեսը խճանկարներով հարուստ զարդարուած է. խոշոր չորեկուսի քարերէ շինուած պատին արուեստն ան ստիճանի կատարեալ է՝ որ քարերուն կցուածները դեռ այսօր շինուածի պէս կ'երեւան: Պալատին կից ապառաժ պատերուն մէջ քանի մ'այրեր կան որոնց ներսի կողմը քանդակներով լեցուն են, բայց անոնց մէջ շատ անարուեստ եւ անկատար կերպարանքներ ալ կան: Աս այրերէն մէկուն պատերուն վրայ ճարտար արուեստով սիւներ փորուած են իրենց խոյակներովն ու պսակներովը: Մայր եկեղեցւոյն վարի կողմը խիստ բարձր բայց նեղ կամրջի մը մնացորդները կը նշմարուին, որն որ ժամանակաւ Ախուրեան գետին երկու եզերքն իրարու հետ կը միացընէր. բայց հիմա միայն իր խարխիսներն երկու եզերքին առջեւը մնացած են,:

Էւզինէոս Պորէ գաղղիացի գիտուն ճանապարհորդը 1838ին Անիին արձանագիրներն օրինակեց, ինչպէս ինքն իր նամակներուն մէջ (Բ. Հատոր, 2 էջ) կ'ըսէ. բայց կ'երեւայ որ զանոնք Գաղղիա խաւրած ատենը ճամբան կորսուած ըլլան: Աս արձանագիրներէն մէկ քանին, Ոսկերչեան Տէր Յովհաննէսին Հայաստան պտըտած ատենն օրինակած յիշատակարաններուն մէջ կը դանուին. բայց երեւելի բաներ չըլլալուն համար հոս դնելն աւելորդ կը համարինք:

Իէ. Սմբատ աս շինութիւններուն ատենն ստիպուեցաւ նաեւ զէնքի ձեռք զարնել իր տէրութեանը վտանգած խաղաղութիւնը նորէն հաստատելու համար: Վասն զի Մուշէղ իր հօրեղբայրն՝ որն որ ժամանակէ մը վեր սրտին մէջ իրեն զէմ թշնամութիւն կը նիւթէր, յանկարծ սկսաւ զանիկա երեւան հանել եւ գործքով ալ ցուցընել, որով երկրին հանգիստն ալ վրդովելու սկսաւ: Թագաւորն ասոր վրայ բարկացած, անոր յանգզնութիւնը պատժելու համար զօրքն առաւ անոր երկիրները մտաւ եւ շատ տեղեր ապականեց. Շատիկ բերդն ալ ձեռքէն առաւ: Բայց Տայոց նահանգին կիւրապաղատը շատ զօրքով Մու-

չեղին օգնութեան հասնելով եւ մինչեւ Շիրակ գաւառն յաստիանարով՝ Սմբատին հարկ եղաւ հաշտութիւն բնել եւ առած բերդն եւ գործբնել :

Մտչել ասիլ ետքը տարի մ'ալ ապրեցաւ եւ մեռաւ . իրեն յաջորդեց իր Աբաս որդին, որն որ կառավարութիւնը ձեռք առածին պէս իր պատիկ տէրութիւնը ծաղկեցրնելու հոգ տանելու սկսաւ : Շատ տեղեր դասատուներ բանալ տուաւ որ տղաք ուսում ու գիտութիւն սորվին : Երկրորդ գործքն ալ հօրը ժամանակները բազմացած աւազակներէն երկիրը մաքրելն եղաւ, որոնք այնչափ յանդգնած էին՝ որ նոյն իսկ Կարս քաղքին մէջ ցորեկ ատեն ժողովուրդը յայտնի կը կողոպտէին : Աբաս ատնեց ետեւէն իյնալով՝ բռնածն անխնայ սպաննել տուաւ, որով զիչ ժամանակուան մէջ զանոնք բոլորովին ջնջեց :

ԻԸ . Սմբատ իր թագաւորութեան վերջին ժամանակները քանի մ'անարժան գործքերով իր բարի անունն աղարտեց : Օր մը թագաւորական խտափ մթերանոցը յանկարծ բռնկելով՝ բոլորովին այրեցաւ : Թագաւորը շատ ետեւէ եղաւ որ աս բանիս պատճառ եզորդ գտնէ : Նոյն օրերը խենդ մարդ մը եկեղեցոյ մէջ կեցած ատենը, յանկարծ վազեց բուրվասը յափշտակեց դուրս ելաւ . երբ որ ժողովուրդը վրան հասան որ բռնեն, խենդն անոնց բաւ, Թող տուէք որ երթամ թագաւորին մթերանոցն այրեմ : Աս խօսքը Սմբատին ականջն հասնելով՝ կարծեց թէ խտան պրողը նոյն մարդն է, հրամայեց որ անոր աչուքներն հանեն ու եղեգի մէջ պատելով այրեն, մարմինն ալ քաղքէն դուրս դաշտը նետեն : Քանի մը կրօնաւորներ անկից անցած ատեննին աս ողորմելիին մարմինը գտան եւ տարին թաղեցին . բայց թագաւորն իմացածին պէս հրաման տուաւ որ նորէն հանեն ու շներուն առջեւը նետեն : Կրօնաւորներն ասոր վրայ նեղացան, եւ գուշակութեամբ ըսին թէ թագաւորին մարմինն ալ այսպէս անթաղ պիտ'որ մնայ : Ասիլ

զատ եկեղեցական պատուիրանի դեմ՝ իր քրոջն ազ-
ջիկն իրեն կնութեան առաւ. բայց ի՛նչ ատենէն սաս-
տիկ տենդէ մը բռնուելով՝ մեռաւ, եւ իրեն յաջորդեց
իր եղբայրը Գազիկ Ա.։ Իր թագաւորութիւնը 13
տարի տեւեց, եւ այսչափ ժամանակուան մէջ շատ
քաջութիւններ ընելով՝ թշնամեաց ահարկու եղաւ եւ
ազգը խաղաղ ու հանդիստ պահեց։

ԳՒԼՈՒԽ Ի

ԳԱԳԻԿ Ա. ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅ (ՇԱՀՆՇԱՀ)

ԻԹ. Գազիկին գահ նստելը (990), իր բարեպաշտութիւնն
եւ եկեղեցւոյ ըրած բարիքները։ Լ. Սմբատ թագաւորին
մարմնոյն գերեզմանէն հանուիլն. Գազիկին կենաց վերջին
գործքերն եւ իր մահը (1020)։

ԻԹ. ԳԱԳԻԿ եղբօրը գահը նստելուն պէս, անոր
քաջութեանն եւ իմաստութեանը հետեւող եղաւ
եւ իր ժողովրդեան հանգստին ու խաղաղութեան
հոգ տարաւ։ Իր քաջութիւններուն համբաւը Հայ-
աստանին միշտ դարանակալ եղող թշնամիներն այն-
չափ վախցուց՝ որ եւ ոչ մէկն համարձակեցաւ անոր
վրայ յարձակելու եւ երկրին հանգիստն աւրելու։ Բա-
րեպաշտութեան կողմանէ ալ իր նախորդներն ան-
ցուց. եկեղեցւոյ շատ բարիքներ ըրաւ. Անի մայրա-
քաղաքին մէջ Գրիգոր Լուսաւորչին պատուոյն մեծ ու
փառաւոր եկեղեցի մը շինել տուաւ։ Շատ անգամ
եկեղեցական ժամերգութեան ներկայ կը գտնուէր
եւ պաշտօնէից հետ աստուածային պաշտօն կը կա-
տարէր։ Աղքատաց ալ շատ սղորմութիւն կ'ըներ։
Իր բարեպաշտութեան նմանող եղաւ իր ամուսինը
Կատրամիտէ թագուհին՝ Սիւնեաց Վասակ իշխա-
նին աղջիկն, որն որ շատ բարերարութիւններէն
եւ բարեպաշտական գործքերէն զատ, Անիին մէջ

Սմբատ թագաւորին սկսած մայր եկեղեցին իր ծախ-
քովը լմրնցուց եւ զանազան բնձաներով զարդարեց :

1. Գաղղիկին թագաւորութեան առաջին օրերն
Անիին մէջ թէթեւամիտ կին մը սկսաւ ժողովրդեան
պատմել որ երազիս մէջ Սմբատ թագաւորը տեսայ,
որն որ ինծի ըսաւ թէ ես մեռած չեմ, այլ գե-
րեզմանին մէջ սղջ առողջ կեցած եմ: Միամիտ ժո-
ղովուրդն ու զօրքն սա բանս ճշմարիտ կարծեցին եւ
աղմուկ մը ծագելու նշաններ սկսան երեւալ: Թա-
գաւորն ասոր առջեւն առնելու համար շուտ մը
Սմբատին գերեզմանը մարդ խաւրեց, մարմինն հանել
տուաւ եւ հրապարակի մէջ դրաւ որ ամէն մարդ
տեսնէ: ասով ամէնը հանգարտեցան:

Անկէ ետքը Գաղղիկ խաղաղութեամբ տէրու-
թիւնը կառավարեց. Հայաստանին շատ բերդերը
թշնամեաց ձեռքէն ազատեց եւ իր իշխանութեան
տակն առաւ: Իրեն սահմանակից հայազգի իշխան-
ներուն ալ շատ օգնութիւն ըրաւ եւ զանոնք թշնա-
մեաց յարձակումներէն ազատեց. եւ իր երկիրը
շատ տեսակ բարեկարգութիւններով զարդարելէն
ու պայծառացրնելէն ետեւ, խոր ծերութեան մէջ
վախճանեցաւ, որուն թագաւորութիւնը 30 տարի
տեւեց:

Գ Լ ՈՒ Խ Ը

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ս Մ Բ Ա Տ

ԼԱ. Սմբատին թագաւորելը (1020) եւ իր Աշոտ եղբորը հետ թագաւորութեան համար ունեցած գոտութիւնը: Աշոտին ու Սմբատին մէջ եղած պատերազմն եւ իրենց հաշտուիլը: Սմբատին Ափխազաց թագաւորէն բանազրուիլն եւ սպասիլը: **ԼԲ.** Աշոտ Սմբատին որոգայթ կը լարէ եւ կ'ուզէ սպաննել: Ապիրատ իշխանը զանիկա մահուանէ կ'ազատէ եւ նորէն դահը կը նստեցընէ: **ԼԳ.** Թաթարաց Վասպուրական յարձակիլը. Հայոց անոնց հետ ըսած պատերազմները. Սենեքերիմ թագաւորին իր երկիրներն Յունաց կայսեր տալն եւ Սերաստիա քաղաքիլը (1021): **ԼԴ.** Թաթարաց Տուղթիլէկ իշխանին Սմբատին երկիրները մտնելը. Վասակ Պահլավունի սպարապետին մահը: **ԼԵ.** Վասիլ կայսեր Հայաստանի կողմերը գալը. Սմբատին նամակով մ'Անի քաղաքը կայսեր տալու խոստում ընելը, եւ Պետրոս կաթողիկոսին պատճառաւ եղած խռովութիւնը: **ԼԶ.** Կոստանդին կայսրը (Վասիլին յաջորդը) Սմբատին Անիին համար տուած նամակը հայ քահանայի մը ձեռքով ետ կու տայ (1029). քահանան նամակը քովը կը պահէ եւ նորէն Մէքսյէլ կայսեր կու տայ: Սմբատին եւ Աշոտին մահը (1040):

ԼԱ. ՊԱԳԻԿԻՆ մահուանէ ետքն՝ իր երկու որդւոցը մէջ թագաւորութեան յաջորդութեան պատճառաւ մեծ խռովութիւն ծագեցաւ. վասն զի Յովհաննէս Սմբատ անոր երէց որդին՝ որն որ իրաւամբ հօրը իշխանութեանը ժառանգն էր, թէպէտ եւ իմաստուն՝ բայց պատերազմի անհմուտ եւ ծանրամարմին ըլլալով՝ իր պզտիկ եղբայրն Աշոտ, առոյգ եւ քաջ պատերազմող երիտասարդը կ'ուզէր որ թագաւորութիւնն ինքն առնու: Եւ երբ որ տեսաւ որ Սմբատ բռնութեամբ դահը նստաւ, ինքն ալ զօրք ժողովեց եւ քիչ մը ժամանակ ասդին անդին ասպատակելէն եւ թագաւորին երկիրներն ապականելէն ետեւ, Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին քովը գնաց, եւ անիկ ալ շատ զօրք օգնութեան տանելով՝ եկաւ Անի

քաղքին առջեւը բանակեցաւ : Սմբատ առ բանեւ շատ այլայլեցաւ , եւ շուտ մը հրամանն տուաւ որ պատերազմի փողերը զարնուին եւ զօրքն՝ որոնք 40,000 հեաեւակ եւ 20,000 ձիաւոր էին , քաղքէն դուրս ելլեն եւ Աշոտին բանակը զարնեն : ‘Նոյն ժամանակը վրացի իշխանն մը՝ որն որ Ափխազաց թագաւորին կողմանէ դեսպան խրկուած էր , Սմբատին առջեւն ելլելով՝ Կնձի հրամանն տուր , բտաւ , եւ ես Աշոտը բռնած քու առջեւդ կը բերեմ : Թագաւորն իր եղբօրը քաջութիւնը դիտնալով՝ անոր պատասխանեց . Առիւծին կորիւնը չտեսած՝ զանիկա մի արհամարհէր : Երբ որ բանակներն իրարու դիմաց ճակատեցան , վրացի իշխանը նիզակը ձեռքը բռնած յառաջ անցաւ եւ սկսաւ պոռալ . Աշոտ սով է նէ յառաջ գաց : Արի երիտասարդն առ խօսքին վրայ բարկացած՝ քաշեց պողովատիկ սուրն ու ձին վազըննելով՝ Վրացւոյն մօտեցաւ , եւ թեթեւ շարժմամբ մ’անոր նիզակէն պրծելով՝ որովն անոր երկաթէ սաղաւարտին այնպիսի ուժով մը զարկաւ որ զանիկա մինչեւ կուրծքն երկու ճղքեց ու ձիէն վար ձգեց : Ասկէ ետքը զօրաց հրամանն տուաւ որ զարնուելու սկսին , որոնք իրենց առաջնորդին առ դործքէն օրինակ առնելով՝ սաստիկ քաջութեամբ զարնուեցան ու Սմբատին զօրքը շարաշար յաղթելով քաղքին մէջ փակուցին , որոնց շատերն ալ չկրնալով ներս մտնել՝ Ախուրեան գետին մէջ ինկան ու խղղուեցան :

‘Ախարարներն երբ որ այսչափ կոտորածն եւ եղած ապականութիւնները տեսան , ուզեցին միջնորդ բլլալ եւ երկու եղբայր իրարու հետ հաշտեցընել . ուստի Պետրոս կաթողիկոսն եւ Ափխազաց Գորգի թագաւորն հետերնին առած՝ անոնց դացին , եւ շատ խօսքերով երկու կողմն իրարու հետ հաշտեցուցին : Երկիրն ալ երկու մաս բաժնեցին . Անի քաղաքն իր մերձաւոր դատաւաներովը Սմբատին , իսկ Պարսից եւ Վրաց սահմանակից երկիրներն Աշոտին տուին , եւ որոշեցին որ Սմբատին մեռնելէն ետքն՝ Աշոտ բոլոր Հայոց թագաւոր

բլայ : Բայց Սմբատ աս խաղաղութեան պտուղը չկրուցաւ վայելել . վասն զի Աշոտին կողմնակից իշխաններէն մէկը Գորգիին իր վրայ ամբաստանաւ թիւն ընելով՝ թէ Շատիկ գաւառն՝ որն որ իմ կալուածս էր, անխրաւութեամբ ձեռքէս յափշտակեց, զանիկա թագաւորին դէմ գրգռեց, եւ աս պատճառաւ Գորգի Սմբատին վրայ զօրք խաւրեց, որոնք Հայաստան մտնելով՝ իմացան որ անիկա տեղ մ'իջեւաներ է. գիշերանց յանկարծ վրան յարձակեցան երբ որ անիկա հանդիստ կը քնանար : Սմբատ անկողնէն ցաթքեց եւ փախչելու աճապարեց . բայց մարմնոյն ծանրութեան համար չկրնալով շուտով փախչել, Գորգիին զօրքն հասան բռնեցին . իսկ իր քովի նախարարները քաջութեամբ ետ քաշուելով՝ իրենց ետեւէն ինկող զօրքը մինչեւ Անիին դրան առջեւը սաստիկ ջարդեցին, բոլոր ճամբաներն անոնց դիակներովը լեցուցին եւ անվտանգ քաղաքը մտան : Թշնամոյն զօրքն անկէ գարձան եկեղեցիները կողոպտեցին ու Սմբատը հետերնին առած՝ իրենց թագաւորին տարին : Գորգի զանիկա բանազնել տուաւ, բայց քիչ մը ետքն անկէ երեք բերդ առնելով՝ ազատ թողուց :

ԼԲ. Հաղիւ թէ Սմբատ աս վտանգէն զերծաւ, ուրիշ մեծագոյն վտանգի մը մէջ ինկաւ . որովհետեւ իր եղբայրն Աշոտ միշտ թագաւորութիւնը ձեռք ձգելու ետեւէ բլալով՝ եւ տեսնելով որ քանի որ Սմբատ կենդանի է՝ իր բաղձանքին հասնիլը կարելի չէ, միտքը դրաւ որ զանիկա սպաննէ, եւ աս խորհուրդը դիւրաւ գլուխ հանելու համար այսպիսի հնարք մը մտածեց : Ինքը զինքը ծանր հիւանդ ձեւացրնելով՝ անկողին մտաւ եւ իր պառկած սենեկին մէջ դարան մը շինել տուաւ . աս ընէլէն ետքն եղբորը մարդ խաւրեց եւ իր վիճակն իմացրնելով՝ աղաչեց որ իր քովը գայ եւ ան սաստիկ ցաւերուն մէջ զինքը մխիթարէ : Բարեսիրտ թագաւորն եղբորը սիրոյն համար անմիջապէս ելաւ անոր քովը գնաց, բայց անկողնոյն մօտեցած աստնը՝

դարանին մէջ ինկաւ եւ սկսաւ Աշոտին ազատել որ իրեն խնայէ: Ապիրատ իշխանն՝ որուն Աշոտ յառաջագոյն պատուիրած էր որ Սմբատ դարանն իյնալուն պէս առնու առանձին տեղ մը տանի եւ սպաննէ, եկաւ գանիկա դարանէն հանեց իբրեւ թէ Աշոտին հրամանը կատարելու համար, եւ տարաւ Անի քաղաքն իր աթոռ նստեցուց, ըսելով թէ Լաւագոյն է որ իմաստուն թագաւոր ունենանք, քան թէ անգութ բռնաւոր մը. իսկ ինքը Գաւին քաղաքն Ապուսվար ամիրային քովը գնաց, վախնալով որ Աշոտ իր աս ըրածին համար իրեն չարիք մը կը հասցընէ, եւ հոն անհիմն կասկածանքի մը համար ամիրայէն սպաննուեցաւ:

ԼԳ. Լս առեններս Թաթարաց (Սկիւթացւոց) մէջէն Թիւրք ըսուած ցեղը Վասպուրական արշաւեց, եւ շատ կողմեր սրով ու հրով սկսաւ ապականել: Սենեքերիմ թագաւորն աս բանիս գոյժն առածին պէս, իր զօրքը պատրաստեց եւ իր Գաւիթ որդւոյն ու Շապուհ զօրապետին ձեռքը տալով՝ թշնամւոյն վրայ խաւրեց: Եկան շարուեցան Հայոց զօրքը թշնամեաց դիմացը, որոնց անչափ բազմութիւնն եւ այլանդակ կերպարանքը թէպէտ եւ իրենց քիչ մը վախ պատճառեց, բայց իրենց քաջ առաջնորդներուն օրինակը շուտ մ'աս երկիւղը փարատեց եւ զիրենք քաջութեամբ պատերազմելու յորդորեց: Պատերազմն սկսածին պէս Թաթարներն սկսան իրենց սաստիկ նետերն Հայոց վրայ թափել եւ անոնցմէ շատ մարդ վիրաւորեցին: Հայ զօրքն՝ որոնց մեծ մասը սուսերաւոր ու տիգաւոր էր, տեսնելով որ կը տկարանան, սուրերնին քաշեցին եւ թշնամւոյն վրայ յարձակելով՝ անոնցմէ շատ մարդ ջարդեցին, ու դաշտին երեսն անոնց դիակներովը ծածկեցին, բայց կատարեալ յաղթութիւնը չկրցան ստանալ, վասն զի իրենցմէ տասնապատիկ աւելի թշնամին իր նետերուն տարափն անդադար տեղալով՝ իրենց մեծ մասը վիրաւորած էր: Շապուհ սպարապետը տեսաւ որ ալ դէմ դնելը կարելի չէ, արքայ-

որդւոյն բաւ . Պէտք էնք եւ քաշուիլ , վասն զի գօրոց մեծ մասը վիրաւորած ինկած է , եւ սօսնեաւրուն դէմ նոր տեսակ զգեստ մը պատրաստելու էնք : Բայց արի պատանին անոր խօսքին ակունջ չզրաւ , եւ նորէն գործուելու սկսաւ , ուզելով յաղթութիւնը բռնի ստանալ : Շապուհ տեսնելով որ փոսնոցն երթալով կը մեծնայ , արքայորդին ալ չլինալով խօսքով համոզել որ ետ դառնայ , բարկութեամբ անոր վրայ յարձակեցաւ , եւ կռնակին սաստիկ զարնելով՝ ստիպեց որ ետ քաշուի : Այսպէսով պատերազմը դադրեցաւ եւ Շապուհ ու Գաւիթ Սենեքերիմին քովը դարձան , որոնցմէ թաղաւորը պատերազմին դժբախտ վախճանն իմանալով՝ մեծ արամութեան ու հոգի մէջ ինկաւ , վասն զի դիտէր որ թշնամին կամաց կամաց յառաջ պիտ'որ քալէ եւ իրեն եւ իր ժողովրդեան մեծամեծ շարիքներ պիտ'որ հասցընէ : Աւտի ասոնց առջեւն առնելու համար , շուտ մը բոլոր իր իշխանները կանչեց եւ անոնց հետ խորհուրդ բնելով՝ որոշեց որ երկիրը Յունաց կայսեր յանձնէ , եւ ինքն անոր իշխանութեան տակը խաղաղ տեղ մը քաշուի ու հանդիստ կեանք անցընէ : Աս խորհրդով նամակ մը գրեց եւ իր Գաւիթ որդւոյն ձեռքովը կայսեր խաւրեց , որուն մէջ բոլոր իր երկիրներն անոր կուտար , եւ անոնց փոխարէն Սեբաստիա քաղաքն իր շրջակայ զաւառներովը կը խնդրէր : Այսիկ կայսրը Գաւթին մեծ ընդունելութիւն բրաւ , եւ անոր հօրը խնդիրը սիրով յանձն առնելով՝ մասնաւոր հրովարտակով մը Սեբաստիան իրեն տուաւ : Սենեքերիմ սս հրովարտակն առածին պէս , բոլոր ընտանիքն , ազգականներն , իշխաններն ու զօրքը ժողկեց Սեբաստիա դնաց , եւ դաշանց թղթով Ասպուրականը կայսեր յանձնեց :

ԼԳ . Թաաթարները Ասպուրականի մէջ Հայոց յաղթելէն ետեւ՝ ամէն կողմ տարածուեցան , որոնցմէ Տուզըիլէկ անունով իշխան մը մեծ գումարտա-

կով մը Ամբաստին երկիրը մտաւ եւ սկսաւ նիդ գաւառն տապառակել : Առասկ Պասչուռնի սպարապեան՝ որն որ նոյն ժամանակն ան գաւառին Բջնի բսուած բերդին մէջ կը նստէր, շուտ մ'աս յարձակումը թագաւորին խնայուց . իսկ ինքը նոյն ատենը քովը գանուած 500 զօրքն առած՝ Բջնին իր Գրիգոր որդւոյն յանձնեց եւ թշնամւոյն վրայ գնաց , եւ նախ վանք մը մանելով՝ ինքն ու բոլոր զօրքը մեղքերնին խոստովանեցան եւ այնպէս սկսան աներկիւղ յառաջ երթալ : Ճամբան գեղի մը պատահեցան , ուր թըշնամեաց մէկ մասը մտած բոլոր գեղացիներն անխնայ ջարդած՝ աները թալլելու հետ էր : Սպարապեան աս անողորմ գործքին վրայ սաստիկ բարկացաւ , եւ անոնց վրայ վազելով՝ նոյն տեղը 200 հոգի ջարդեց , մնացածն ալ իրենց բանակն հալածեց եւ յաղթանակաւ յառաջ անցնելով՝ անոնց բուն բանակին հասաւ : Իր քիչսոր զօրքն իրենց առաջին յաղթութենէն քաջալերուած՝ անոնց բազմութիւնը բանի տեղ չդրին եւ աներկիւղութեամբ անոնց վրայ յարձակեցան ու մեծ կոտորած բրին : Պատերազմին սաստկացած ատենը Թաթարաց մէջէն վիթխարի խափշիկ մը՝ որն որ իր սաստիկ քաջութեանը համար Եօթնգայլ կը կոչուէր , Հայոց բանակին ձայն տուաւ եւ Առասկը յառաջ կանչեց որ իրեն հետ մենամարտի : Յառաջ անցաւ քաջ սպարապեան եւ անոր նիզակին հարուածը պարապի հանելով՝ ինքը սրովն անոր գլուխը զարկաւ երկու կտրեց ու մեռած գետինը փռեց : Ասով Թաթարները սաստիկ կատուեցան ու պատերազմն աւելի եւս սաստկացրնելով՝ երկու կողմանէ ալ շատ կոտորած եղաւ : Սպարապետը տեսաւ որ իր սակաւթիւ գօրքը տկարանալու վրայ է , զարկաւ ճղքեց թշնամւոյն բազմութիւնն ու Սերկելոյ լեռան վրայ ելաւ որ քիչ մը հանգչի : Հոն բարձր տեղ մը քնացած ատենը , չար գեղացի մը զինքը հրելով վար նետեց եւ սպաննեց :

Ոմանք կը պատմեն թէ Վասակ Թաթարաց զօրքին յաղթելէն ետեւ, Սերկելւոյ լերան վրայ ելած՝ Աստուծոյ գոհութեան աղօթք կը մատուցանէր: Նոյն ժամանակը թընափներէն մէկն՝ որ հոն պահուըտած էր, դիտուն մեծ քար մը զարկաւ եւ սպաննեց:

ԼԵ. Սմբատին թագաւորութեան երրորդ տարին Գորգի Ափխազայ թագաւորը Յունացմէ ապստամբեցաւ, որուն՝ կեդրենոս յոյն պատմագրին պատմածին նայելով՝ նաեւ Սմբատ շատ օգնութիւն բրաւ: Եւ երբ որ Վասիլ կայսրը Գորգիին վրայ զալով՝ անոր յաղթեց եւ սկսաւ Հայաստանի սահմանը մօտենալ, Սմբատ վախեցաւ որ անիկա իր երկիրն ալ կը յարձակի, ուստի շուտ մը Պետրոս կաթողիկոսին ձեռքովն անոր նամակ մը խաւրեց, որուն մէջ կը խոստանար իր մահուանէ ետքն Անի քաղաքն ու բոլոր իր տիրած երկիրներն իրեն տալ, որովհետեւ ինքն որդի չունէր որ իրեն յաջորդէր: Կայսրը շատ ուրախութեամբ նամակն ընդունեցաւ, եւ թագաւորին հետ հաշտութիւն բրաւ:

Կաթողիկոսն աս պատգամաւորութիւնը կատարելէն ետեւ, Սերաստիա քաղաքը Սենեքերիմ թագաւորին քովը գնաց, եւ քանի մը տարի հոն, քիչ մ'ալ Գաղիկ՝ Կարուց թագաւորին քովը մնալով՝ Անի քաղաքն իր աթոռը դարձաւ: Բայց հոն թագաւորին եւ իշխաններուն բրած անկարգութիւնները տեսնելով՝ թող տուաւ Վասպուրական գնաց: Սըմբատ Պետրոսին աս գործքին վրայ զայրացած, ուղեց զանիկա ձեռք ձգել ու պատժել, ասոր համար անոր նամակ գրեց ու նորէն Անի հրաւիրեց, խոստանալով որ անկէ ետեւ իրեն կ'անսայ. Վասպուրականին յոյն իշխաններն ալ միջնորդ բռնեց: Կաթողիկոսն աս նենգութենէն խաբուեցաւ եւ դարձաւ նորէն Անի եկաւ. բայց թագաւորն հրաման տուաւ որ զինքն անմիջապէս բռնեն բանտ դնեն, եւ անոր տեղը Գէոսկարոս Սանահնի վանքին առաջնորդը կա-

Թողիկոս գրաւ : Գէոսկորոս կաթողիկոսութիւնն առաձին պէս սկսաւ ամէն տեսակ անկարգութիւնը դործել . շատ անարժան մարդիկ եպիսկոպոս ձեռնադրեց . յայտնի յանցանաց համար իրենց աթոռէն մերժուածները նորէն ետ դարձուց եւ ասոնց նման շատ գործքեր ըրաւ : Հայոց եպիսկոպոսներն ու բոլոր եկեղեցականներն առ անկարգութիւնները տեսնելով՝ ղԹագաւորն եւ Գէոսկորոսին կաթողիկոս ըլլալուն մասնակից եղող իշխանները նզովեցին , ու կաթողիկոսին անունն եկեղեցիներու մէջ յիշելէն դադրեցան : Աս նզովքը Թագաւորին եւ իշխաններուն շանթի հարուածի մը պէս եկաւ , ուստի շուտ մը Պետրոսը՝ մէկ ու կէս տարի բանար կենալէն ետեւ հանեցին եւ շատ աղաչանքով հաւանեցընելով՝ նորէն իր աթոռը նստեցուցին . իսկ Գէոսկորոս Սանահնի վանքը քաշուեցաւ :

ԼԶ. Եթով տարիի չափ ետքը Կոստանդին կայսրը՝ Վապին եղբայրը հիւանդանալով եւ մահուան մօտ ըլլալն իմանալով , իր ծառաներուն հրաման տուաւ որ Հայոց ազգէն մէկը դանեն եւ իրեն բերեն : Ծառաները Կիրակոս անունով քահանայ մը դտան , որն որ Կաթողիկոսարանին մէջ հիւրերու հոգաբարձու էր , եւ նոյն ժամանակը Կոստանդնուպոլիս կը դանուէր , եւ առին կայսեր բերին : Կոստանդին Սմբատին Անիին համար տուած նամակն առ քահանային ձեռքը տուաւ եւ ըսաւ . Աս գիրը տար Հայոց Թագաւորին տուր եւ իմ կողմանէս ըսէ . որովհետեւ ինձի ալ ամէն հողածիններուն պէս մահուան հրաւեր եկաւ , առ քու նամակդ ու Թագաւորութիւնդ որդւոցդ տուր : Կիրակոս նամակն առաւ քովը պահեց , եւ երբ որ Միքայէլ Գ. (Ե.) Յունաց կայսրութեան դահճը նրաստաւ , տարաւ անոր տուաւ , եւ ասոր փոխարէն շատ ոսկի տուաւ : Աս անզգամութեան գործքին դառն հետեւութիւնները քիչ ժամանակուան մէջ սկսան երեւալ , որոնց վրայ իրաւամբ կ'ողբայ Արիստակէս

Լատախլերոսացի ժամանակակից պատմագիրն՝ որն որ
ան ամեն տառապանքներն աչքովը աեսաւ :

Արիտակէս սս առններս Վասպուրական նահանգին
Բերկրի քաղաքին մէջ պատահած զարհուրելի դէպք մը կը
պատմ : Բերկրի քաղաքը, կ'ըսէ, ժամանակէ մը վեր Պար-
սիկները Յունաց ձեռքէն առած՝ եւ Խորիկ անունով ան-
դուծ եւ անողորմ իշխան մը հոն քաղաքապետ դրած էին :
Յունաց իշխանները Քանձի հայ իշխանին հետ մկտեղ
նորէն զանիկա պատերազմաւ ետ առին, Խորիկը քաղ-
քին միջնաբերդը փախուցին, եւ անկէ ետքն սկսան անհոգ
նստիլ : Քաղաքապետը մօտաւոր ամիրաներուն ծածուկ
մարդ խաւրեց եւ օգնութիւն խնդրեց, որոնք շուտ մը
զօրքերնին առին եւ եկան յանկարծ յոյն ու հայ զօրաց
վրայ ինկան, շատերը ջարգեցին ու մէկ մասն ալ գերի
բռնեցին : Ան առեր Խորիկ միջնաբերդէն դուրս ելաւ,
եւ իր գազանային վրէժն հանելու համար, հրաման տուաւ
որ մէկ մարդաչափ խորունկ փոս մը փորեն եւ գերիներէն
այնչափ մարդ մորթեն, մինչեւ որ անոնց արեամբը փոսը
լեցուի. եւ երբ որ հրամանը կատարուեցաւ, ինքը մտաւ
նոյն արեան մէջ լուացուեցաւ :

Սմբատ 20 տարի թագաւորութիւն ընելէն ետեւ
Անիին մէջ վխտածանեցաւ. իր եղբայրն Աշոտ ալ՝ որն
որ թագաւորութեան յաջորդ պիտ'որ ըլլար, իրմէ
քիչ մը յառաջ մեռած ըլլալով՝ միայն անոր որդին
Քաղիկ թագաւորութեան ժառանգ մնաց :

Գ Լ ՈՒ Ի Թ

Գ Ա Գ Ի Կ Բ Ի Ն Ե Ր Ե Ք Տ Ա Ր Ի Ա Ն Թ Ա Գ Ա Ի Ո Ր ՈՒ Թ Ե Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

ԼԵ. Հայաստանին խռովութիւնը, Միքայէլ կայսեր Հայոցմէ Անին պահանջելը: Յունաց Հայաստան արշաւելն եւ. ասպատակելը: Վեստ Սարգսին թագաւորելու համար ըրածները: Անի քաղաքին առջեւն եղած մեծ պատերազմը, Յունաց յաղթուիլը: ԼԸ. Գաղթիկին թագաւոր պսակուիլը (1040), Սարգսին անոր դէմ ըրած դաւաճանութիւնը: Կոստանդին Մոսամասոս Հայաստան զօրք կը խաւրէ, Գաղիկ անոնց կը յաղթէ: Նիկողոսոս զօրապետը նորէն Գաղիկին վրայ կը խաւրուի, թագաւորն անոր ալ կը յաղթէ: ԼԹ. Կայսրը Սարգսին խորհրդովը Գաղիկն իրեն կը կանչէ. թագաւորը նենդաւոր նախարարաց երդման վրայ վստահացած՝ Կոստանդնուպոլիս կ'երթայ եւ հոն կ'արգելուի (1045): Նախարարաց Անիին համար ըրած խորհուրդը. Պետրոս կաթողիկոսին Անիին բանալիներն Յունաց կայսեր խաւրելը: Գաղիկ բռնի Անին կայսեր թող տալու կը հաւանի, եւ անոր տեղ Պիզու քաղաքը կ'առնու: Խ. Պարակամանոս զօրապետին զօրքով Անի դալը. Հայոց անոր վրայ ըրած յաղթութիւնն եւ Անիին իրեն յանձնուիլը:

ԼԵ. ՍՄԲԱՏ մեռնելուն պէս Հայաստանին խաղաղութիւնը բոլորովին խռովեցաւ, նախարարաց իրարու հետ ունեցած կապը քակուեցաւ, արաւաքին թշնամիք ալ երկիրն անտէրունչ տեսնելով՝ ամէն կողմանէ ներս յարձակեցան, եւ Հայոց թագաւորութեան խախտած ու քայքայած շէնքին սաստիկ բախելով՝ անոր վերջին կործանումը բերին, որուն աղէտալի նկարագիրն աս ու հետեւեալ գլխուն մէջ պիտ'որ տանք:

Ինչպէս վերը պատմեցինք, Յովհաննէս Մմբաս թագաւորն իր կենդանութեան ատենը Յունաց կայսեր թուղթ տուած էր որ իր մահուանէ ետքն Անի քաղաքն եւ անոր շրջակայ գաւառներն իրեն սայ: Երբ որ ինքը վախճանեցաւ Միքայէլ կայսրն

Հայոց գեապուն խաւրեց ու պահանջեց որ քաղաքն իրեն տան : Անոնք առ բան յանձն շտոին , ասոր համար կայսրն երեք անգամ մեծ բանակներ խաւրեց , որոնք համարձակ Հայաստան մտան , շատ ակզեր աւար առին , Գարդեցին ու քանդեցին . շատ քաղաքներ ալ զիրենք պաշտպանող չգտնելով՝ Յունաց անձնատուր ելան : Նախարարներն ու զօրքն իրենց մէջ ծագած երկպառակութեան համար չկրցան միաբան Յունաց դէմ ելլել եւ երկիրը պաշտպանել : Ասան զի Աեստ Սարգիս իշխանը՝ Սմբատին տէրութեան հոգաբարձուն , անոր մահուան ատենը բովանդակ արքունի գանձը ժողված իրեն առած էր , եւ կ'ակզերինքը թագաւորել . շատ ամրոցներ ու քաղաքներ ալ իրեն կողմնակից զօրքերով բռնած էր : Իսկ Աահրամ Պահլաւունի սպարապետն եւ ուրիշ շատ իշխաններ Սարգսին դէմ զատ միաբանութիւն մ'ըրած էին :

Աս խառնակութեան մէջ Գաւիթ Անհողին Աղուանից թագաւորը Հայաստան յարձակեցաւ ու շատ աւեր եւ ապականութիւն ըրաւ . նոյնպէս Յոյներն ալ առաջին երեք արշաւանքներնուն յաջողելուն վրայ վտահայցած՝ չորրորդ անգամ 100,000 զօրքով Հայաստան մտան եւ մինչեւ Անիին առջեւն հասնելով՝ ամէն կողմանէ սաստիկ պաշարեցին : Քաղքին մէջն եղող զօրքն՝ որոնց թիւը 30,000 էր , տեսնելով որ վերջին վտանգի մէջ են , եւ միանգամայն յոյն զօրքին ամէն օր իրենց տուած սաստիկ անարգանքէն եւ խօսած հայհոյութիւններէն արտաքոյ կարգի գրգռուելով՝ իրենց Աահրամ սպարապետին առաջնորդութեամբ քաղքին Ծաղկոց ըսուած դռնէն յանկարծ դուրս յարձակեցան , եւ այնպիսի կատաղութեամբ մը յոյներն սկսան զարնել որ անոնք սարսափած՝ կռնակնին դարձուցին ու խառն ի խուռն փախան : Հայոց գունդն անոնց ետեւէն ինկաւ եւ որուն որ հասաւ առանց խնայելու զարկաւ սպաննեց , եւ քաղքին առջեւի կանաչազարդ դաշտը կոյս կոյս

գիտիններով ընդուց, մինչև արևան յորդութիւնն Ախարեան գետին ջուրը կարմիր ներկեց : Ահա հրամ սպարապետին սիրան աս ողորմելի տեսարանն շարժելով՝ ազաշանօք ու յորդորանքով հազիւ իր զօրքն համոզեց որ պատերազմը դադրեցընեն : Յոյները պատերազմի դաշտին վրայ 20,000 մեռած ու խոցուած թող տուին . իսկ բանակին մնացած մասը ցիր ու ցան եղած փախաւ :

ԼԸ . Ըս յաղթութենէն ետքը Ահահրամին հետ միտքանած նախարարները խորհուրդ ըրին եւ Պետրոս կաթողիկոսն ալ կանչելով՝ Սմբատին եղբօրորդին Գազիկ Բ . առայգ եւ իմաստուն երիտասարդն Հայոց թագաւոր օծել տուին : Սարգիս աս բանս իմացածին պէս, գանձերն առաւ Անիի բերդը մտաւ ամրացաւ : Գազիկ արիական քաջասրտութեամբ ելաւ մինակ անոր քովը գնաց ու յորդորեց որ անկէ ելլէ երթայ . ան ալ հաւանեցաւ եւ Սուրմառի բերդաքաղաքը գնաց . բայց իր ձեռքին տակն եղող քաղաքներն ու բերդերը թագաւորին չտուաւ , այլ կը մտածէր որ Յունաց երկիրն անցնի եւ անոնց ամէնը կայտեր տայ : Գազիկ անոր միտքն իմանալով՝ քանի մը հողի հետն առած՝ անոր բանակը գնաց , մտաւ աներկիւղ անոր վրանն ու բռնեց Անի բերաւ , եւ սաստիկ պատիժներով ստիպելով՝ ամէն բերդերն ու թագաւորական գանձը ձեռքէն առաւ : Երբ որ այսպէս բոլոր հայրենի երկիրներուն տիրեց , զօրքը ժողվեց ամէն կողմ պտրանցաւ , եւ իրեն հնազանդիլ չուզողները նուաճեց . անկէ ետքը Գրիգոր Պահլավունին՝ Ահահրամ սպարապետին եղբօրորդին հետն առած՝ Թաթարներուն վրայ յարձակեցաւ , որոնք նոյն ասանները բազմութեամբ իր երկիրը մտած կ'աւրէին ու կ'ասպատակէին . զարնուեցաւ անոնց հետ Հուրաստան գետին քով , ու շատերը ջարդելով՝ մնացածը փախուց , եւ այսպէս թագաւորութիւնն ամէն կողմանէ ապահովընելով՝ իր ակառքը դարձաւ :

Բայց հազիւ թէ տարի մը խաղաղութեամբ անցաւ, Սարգիս՝ անհաւատարիմ ու տիրանենգ իշխանն սկսաւ դարձեալ, թագաւորին դէմ դաւաճանութիւն ընել: Վասն զի Գագիկ աս նենգաւորին կեղծաւորութենէն խաբուելով՝ անոր յանցանքին թողութիւն տուած եւ նորէն մեծ պատուոյ հասցուցած էր: Սարգիս աս բարերարութեան երախտագէտ ըլլալու տեղ, զանիկա իր միտքը դրածն յառաջ տանելու գործածեց: Աս ժամանակները Աստանդին Մոնոմախոս Միքայէլ Ե.ին յաջորդելով՝ Սարգիսն գաղտնի զրգուութեամբ Գագիկին ղետպան խառնեց եւ Անին իր դաւառովն անկէ ուղեց: Թագաւորն ամենեւին յանձն չառաւ իր արքունի քաղաքն օտարի տալ. ան ատեն կայսրը Միքայէլ Ասիա իշխանը մեծ բանակով Հայաստան խրկեց որ քաղաքը բռնութեամբ առնու: Գագիկ հայադուռդ զօրքով անոր զիմացն ելաւ, զարկաւ ցրուեց անոր բանակն ու յաղթանակաւ իր քաղաքը դարձաւ: Աստանդին իր զօրացն յաղթուելուն գոյժն առածին պէս՝ Նիկողայոս զօրապետն աւելի շատ զօրքով Գագիկին վրայ խառնեց. Գուինի Ապուսվար ամիրային ալ թուղթ մը գրեց որ ինքն ալ արեւելեան կողմանէ անոր վրայ յարձակի, եւ այսպէս զանիկա ամէն կողմէն նեղը ձգեն: Այսպիսի ծանր ու վտանգաւոր վիճակի մէջ էր Հայոց երիտասարդ թագաւորը, բայց իր անվէհեր քաջութիւնը շուտ մ'իրեն ինչ ընելէքը սորվեցուց: Անմիջապէս իր զօրութիւնը մէկտեղ ժողկելով՝ իմացաւ որ չիկրնար երկու մեծ թշնամիներուն մէկտեղ յաղթել. ուստի աճապարեց Ապուսվարին շատ ընծաներով հրեշտակներ խառնեց, եւ անոր հետ հաշտութիւն ըրաւ: Անկէ ետքը բանակին ղլուխն անցած՝ քալեց Յունաց վրայ, որոնք յաղթութիւնն ստոյգ գնելով՝ կը փութային ժամ մը յառաջ Հայոց հետ զարնուիլ: Բանակներն իրարու մօտեցածնուսն պէս, հրաման տուաւ Հայոց թագաւորն որ փոզերը հըն-

չուին և զօրքը զարնուելու սկսի : Պատերազմն երկայն չառելոց, վասն զի հայ զօրքը սաստիկ յարձակմամբ մը յունական բանակը ցրուեց ու փախչելու ստիպեց :

ԼԹ. Վոստանդին կայսրը տեսնելով որ չիկրնար իր կամքը բռնութեամբ յառաջ տանիլ, յունական նենգութիւնը ձեռք առաւ, որուն Վեստ Սարգիս ալ իր կողմնակիցներովն աղէկ օգնական բլլալով՝ Հայոց թագաւորութեան վերջին կործանումը բերաւ : Որովհետեւ աս իշխանին խորհրդովը կայսրը Գագիկին սիրոյ թուղթ մը գրեց, եւ զանիկա հրաւիրեց որ գայ իրեն հետ տեսութիւն մ'ընէ, ու խաչի եւ աւետարանի վրայ երգում ընելով՝ կը խոստանար զինքը նորէն իր երկիրը խաւրել որ խաղաղութեամբ թագաւորէ. Միայն կ'ըսէր, մէկ անգամ մը զքեզ տեսնեմ, անկէ ետեւ քեզի քու թագաւորութիւնդ որդւոց որդի թող կու տամ. բայց իմաստուն թագաւորն Յունաց խաբէութիւններն ու նենգաւորութիւնը գիտնալով՝ ամենեւին յանձն չառաւ : Ան առենը Սարգիս եւ իր դաւակիցներն սկսան թագաւորն յորդորել որ երթայ, եւ Պետրոս կաթողիկոսը միջնորդ բռնելով՝ խոստում տուին որ իրենք հաւատարիմ կը մնան եւ իրեն համար կեանքերնին կը գնեն : Աս խոստումնին հաստատուն պահելու համար կաթողիկոսն եւ ամէն իշխանները Քրիստոսի արեամբն երգման զիր մը գրեցին թագաւորին տուին : Գագիկ ասոր վրայ վստահացած՝ Անիին բանալիները Պետրոս կաթողիկոսին յանձնեց եւ ելաւ կայսեր քովը գնաց, թէպէտ եւ Վահրամ սպարապետն եւ ուրիշ զինքը թագաւորեցրնող իշխանները խորհուրդ կու տային որ չերթայ : Վոստանդնուպոլիս հասածին պէս բոլոր կայսերական իշխանները հանդիսութեամբ զինքը զիմաւորելու եկան, եւ առին կայսեր տարին : Վոստանդին քանի մ'օր անոր պատիւ բրաւ, եւ ետքն սկսաւ պահանջել որ Անին իրեն տայ. եւ երբ որ Գագիկ ամենեւին մէկ եղանակաւ մ'անոր չզիջաւ,

բարկանալով՝ զինքը կղզւոյ մը մէջ բանտի պէս արգելեց : Հայոց իշխաններն աս բանս իմացածնուն պէս խորհրդի ժողովուեցան, եւ ոմանք կ'ուզէին Անին Ափխազաց Բագարաս թագաւորին, ոմանք ալ Աղուանեց Գաւիթ թագաւորին տալ : Կաթողիկոսը տեսնելով որ ինչպէս որ ըլլայ քաղաքն օտարաց ձեռք պիտ'որ անցնի, Սամուսատ նստող յոյն իշխանին այսպէս թուղթ մը գրեց . «Թագաւորիդ իմացուր որ ես Անին եւ բոլոր մեր աէրութեան երկիրներն իրեն կու տամ . բայց անիկա ասոր ինչ հատուցում կ'ընէ, : Կայսրը Սամուսատի իշխանէն կաթողիկոսին միաքն իմանալով՝ շուտ մ'անոր շատ ստակ խաւրեց եւ զանազան պատիւներ շնորհեց, որոնցմով Պետրոս հաճելով՝ Անին 40 բանալիները կայսեր խրկեց . բանալիներուն հետ մէկտեղ տիրանենդ իշխաններն ալ կայսեր թուղթ մը խաւրեցին, որուն մէջ կ'ըսէին թէ Անին եւ բոլոր արեւելեան (Հայոց թագաւորին տակն եղող) երկիրները քեզի կու տանք : Մոնոմախոս երբ որ աս նամակն առաւ, կանչեց Գագիկն եւ զանիկա անոր առջեւ զնելով՝ ըսաւ . Ահա ասիկ քու իշխաններդ բոլոր քու երկիրներդ ինձի տուին : Թագաւորը սաստիկ այլայլեցաւ, եւ հառաչելով պատասխանեց . Աստուած իմ եւ նենգաւոր իշխաններուն մէջ դատաստան ընէ . բայց Հայաստանին տէրն ու թագաւորն ես եմ, ուստի թէպէտ եւ իշխաններս զանիկա քեզի տան, ես ամենեւին չեմ տար : Կայսրը 30 օր անդադար աշխատեցաւ որ Գագիկէն հաւանութիւն առնու, բայց անկարելի եղաւ . վասն զի անիկա միշտ հաստատութեամբ պատասխան կու տար թէ Չեմ կրնար իմ հայրենեացս երկիրն ու մայրաքաղաքս քեզի տալ : Ետքը տեսնելով որ իրեն Հայաստան դառնալու եւ նորէն թագաւորութիւնը ձեռք ձգելու ամենեւին յոյս եւ միջոց մը չկայ, սկամայ կայսեր զիջաւ, եւ Անին տեղ Պիղու քաղաքն ու քանի մ'ուրիշ քաղաքներ առնելով՝ հոն

քաշուեցաւ : Անկէ ետեւ Յունաց երկրին մէջ միշտ ասդին անդին կը պտըտէր , եւ ուր որ կ'երթար , Յոյներուն շատ նեղութիւն կու տար անոնց իրեն ըրած չարեացը վրէժն առնելու համար :

Խ . Առստանդին կայսրը Գազիկէն հաւանութիւն առածին պէս՝ Պարակամանոս ներքինին զօրքով Հայաստան խրկեց որ Անին առնու . բայց անիկա երբ որ քաղքին առջեւն հասաւ , դռները գոց գտաւ , որովհետեւ թագաւորին հաւատարիմ մնացած զօրքն ու ժողովուրդն՝ իրենց տիրոջը վրէժն առնելու համար Անիի մէջ ժողվուած եւ պատերազմի պատրաստուած էին : Պարակամանոս քաղաքը պաշարեց եւ սկսաւ դարնել . ներսիններն ալ քաջութեամբ դէմ կը դնէին եւ ըիւր հայհոյութիւններով ու թշնամանիչ խօսքերով բոլոր Յունաց ազգը կը նախատէին : Քիչ մը ժամանակ այսպէս անյնելէն ետեւ , որ մը քաղաքացիք ու զօրքը կարգի մտնելով՝ յանկարծ դուրս յարձակեցան , յունական բանակը չարաչար զարկին եւ ցիր ու ցան ըրած փախուցին , եւ անոնց աւարը ժողվեցին քաղաքը դարձան : Գեռ աս յաղթութեան ուրախութեան մէջ էին , երբ որ գոյժ հասաւ որ Գազիկ թագաւորն Յունաստան արգելուեր է եւ ալ նա պիտ'որ չգառնայ . ամենուն ուրախութիւնը արամուծութեան փոխուեցաւ , բոլոր քաղաքը մեծէն մինչեւ պզտիկ սուգ մասն եւ կոծով ու լացքով սկսան իրենց թագաւորն ողբալ եւ անոր դաւաճանութիւն ընողներուն դէմ անէծք ու նզովք կարգալ . վասն զի իրենց ապագայ վիճակն յայսնի կը գուշակէին : Եւ տեսնելով որ ուրիշ հնարք չկայ , Յունաց զօրապետն ետ կանչեցին ու խաղաղութեամբ քաղաքն իրեն յանձնեցին :

Ահա ասիկ աս վախճանն ունեցաւ Բագրատունեաց ցեղին 160 տարւան թագաւորութիւնն՝ որուն իյնալովն Հայաստանի մէջ ազէտից ու թշուառութեան ընդարձակ ասպարէզը բացուեցաւ :

Գ Լ ՈՒ Խ Ժ

ԳԱԳԻԿ ԲԻՆ ԵՐԵՍՈՒՆՈՒՀԻՆԳ ՏԱՐԻԱՆ
ՊԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԽԱ. Յունաց Հայոց ըրած շարիքները. Պարսից Հայաստան արշաւելն եւ սասպաակելը: Սմբատայ բերդին առնուիլն եւ մէջն եղած կոտորածը: Արծն քաղքին կործանոււմը: ԽԲ. Տուղբիլ Պարսից թագաւորին Հայաստան գալն եւ ըրած սասպատակութիւնները: Գաղիկ Կարուց թագաւորին անար գէմ ելլելն ու յաղթուիլը: Թաթուլ իշխանին սպաննուիլը: Մանազկերաի պատերազմին նկարագիրը: ԽԳ. Արծիկէ քաղքին առոււմը: Պարսից շանագան անգամ Հայաստան ըրած յարձակումները: ԽԴ. Պարսից Արիաւելան թագաւորին Հայաստան գալն, Անի քաղքին առնուիլն ու կործանուիլը (1064): Կարուց Գաղիկ թագաւորին Յունաց երկիրը քաշուիլը: ԽԵ. Գաղիկ թագաւորը Կեսարիայի յոյն մտարապոլիսը կը սպաննէ. Կիզիստրա բերդին յոյն իշխաններէն կը բռնուի ու կը սպաննուի (1079):

ԽԱ. ՀԱՄԱՆՔ Տիմա այնպիսի տեղ մը, ուր չէ թէ պատմութիւն՝ այլ ողբ եւ աշխարհնք պէտք ենք գրել Հայաստանի վրայ հասած անհնարին թշուառութեանց համար, որոնք իր թագաւորութիւնն իյնալուն պէս սկսելով՝ անդադար շարունակեցին. որովհետեւ ազգին պաշտպան ըլլալ եւ զանկա թշնամեաց յարձակումէն պահող իշխանները ցրուելով ու ջնջուելով՝ կատաղի եւ անգութ թրշնամիք ամէն կողմանէ անարգել յառաջ կու գային, անմեղ եւ անտէրունջ ժողովրդեան արիւնք գետի պէս կը վազցընէին, եւ երկրին երեսն անոնց դիակներովը ծածկելով՝ անոնց բնակած քաղաքներուն աւերակներն իրենց գիերուն գերեզման կ'ընէին: Բայց մենք աս աղէտից վրայ ողբալն Արիստակէս Լաստիվերտացոյն ծարտար գրչին թողունք, որն որ անոնց մեծ մասն աչքովը տեսած ըլլալով՝ կենդանի եւ սրտաշարժ եղանակաւ մ'անոնց վրայ ողբերգութիւն կ'ընայ գրել, եւ սկսինք անոնց համառօտ պատմութիւնը պատմել:

Անեղ առք Յոյները, Բաղրաստանեաց թագաւո-
 լութիւնը ջնջելէն ետեւ, Հայաստանին բանի մը
 քաղաքներուն մէջ սկսար գնդեր պահապան դրին, եւ
 սկսան ջանալ որ Հայոց ազգը բոլորովն անհետ ընեն
 եւ իրենց մէջ ընկրղմեն: Անոնց կաթողիկոսին ալ
 որուն գէթ Հայաստանն իրենց տալուն համար երախ-
 տագէտ պէտք էին ըլլալ, դարձնակալ ըլլալով՝ բռ-
 նեցին Առստանդնուպոլիս տարին: Պարսից Տուղբիլ
 թագաւորն Հայաստանին այսպիսի խառնակ եւ ան-
 տերունչ վիճակը տեսնելով՝ հոն մեծ դուժարակ մը
 զօրք խրկեց, որոնք եկան ամէն կողմ առպատակելով՝
 մինչեւ Քասեան դաւառը յառաջացան, եւ ՉԱ դաւառ-
 հրով ու սրով անապատ դարձնելէն ետքը, բիւրա-
 ւոր գերիներով եւս դարձան: Արկրորդ տարին աւելի
 եւս բազմութեամբ եկան մասն Հայոց երկիրն եւ
 դարձեալ առաջին անգամէն աւելի ջարդ ու քանդ-
 ընելով՝ մինչեւ անոր արեւմտեան սահմանը հասան.
 ամէն կողմ իրենց բազմութեամբը ծովու պէս ծած-
 կեցին, եւ սկսան անյագ երկաթն անմեղ արեամբ
 ներկել. ոչ ծերի խնայեցին, ոչ երիտասարդի, ոչ
 աղու, այլ կատաղի դազաններու պէս որուն որ պա-
 տահեցան՝ զարկին սպաննեցին: Քայց ամէն տեղէն
 աւելի Մանանազի դաւառին Սմբատայ բերդ ըսուած
 ամուր քաղաքն աւ անագորոյն զօրքին կատաղու-
 թեանն հանդիպեցաւ. վասն զի տեղւոյն ամբու-
 թեանը համար հոն ամէն կողմանէ շատ բազմութիւն
 իրենց ինչքերովն եւ անասուններովն եկած ժողովուած
 էին: Պարսիկներն եկան քաղքին չորս կողմը պատ-
 նելով փակեցին ու պարիսպները փլցրնելով ներս
 յարձակեցան. բնակչաց մեծ մասն անխնայ ջարդեցին
 ու մնացածները քաղքին հարուստ աւարովը հետեր-
 նին առած ելան դացին: «Ասոնց երթալէն ետեւ,
 կ'ըսէ Աստիվերտացին, շատ խղճալի եւ ողբոց ար-
 ժանի էր քաղքին տեսիլը: Ախրաւորուածներէն
 ոմանք դեռ կէս մը կենդանի եւ լեզուին ծարաւէն

յամբած, տկար ձայնով մ'իրենց ծարաւին հնարք մը գտնելու կը ջանային, բայց օգնութեան հասնող մը չկար. ոմանք ալ սաստիկ վէրք մ'առած ու ձայներնին կտրած՝ անդադար կը հեւային: Ոմանց վիզը կէս մը կտրուած ու կիսամեռ գետինն ինկած՝ յաւին սաստկութենէն կը հառաչէին եւ ոտուքնին ու ձեռուքնին գետինը կը զարնէին: Բայց ասոնցմէ աւելի ողորմելի պզտիկ տղոց վիճակն էր. վասն զի անողորմ Պարսիկները գերիները քաղքէն հանելէն ետեւ, տղաքը ծնողքներուն զրկէն յափշտակեցին ու գետինը զարկին, որոնց բազմութենէն բանակին տեղը կ'եռար ու կը շարժեր: Ոմանք քարի զարնուած ու չարաչար մեռած էին. ոմանց փորը պայթած ու փորոտիքը դուրս թափուած. իսկ ողջերէն չափահասներն ասդին անդին վազելով՝ արտասուալից աչօք մայրերնին կը փնտռէին, որոնց լալուն ձայնը լեռները կը թնդացընէր. բայց որոնք որ դեռ չէին կրնար քալել, գետնին երեսը սողալով կը պոռային,»:

Սմբատայ բերդէն դարձան Պարսիկներն Արծն ըստմամբ ու հարուստ քաղքին վրայ եկան. քաղաքացիք անոնց դէմ դրին եւ մէջերնին երկայն եւ արինահեղ պատերազմ մ'եղաւ, այնպէս որ քաղքին չորս կողմի արտերը դիակներով լեցուեցան: Բայց վերջը Պարսիկներն յաղթելով՝ ներս մտան եւ անխնայ ջարդեցին, տներն ալ կրակի տուին, որոնց մէջ հազարաւոր մարդիկ ալ այրեցան: Այսպէսով աս հռչակաւոր քաղաքը մոխրակոյտ մը դարձաւ. իր 140—150,000 բնակիչները կէս մը սրով կէս մը հրով մեռան ու մնացածներուն մեծ մասն ալ գերութեան տարուեցան:

Աս սաստիկ կոտորածներն ու կործանումները տեսնելով Յունաց Կոմնենոս զօրավետն, իր 60,000 զօրքովը Պարսից վրայ քալեց որ անոնց արշաւանացը վերջ տայ. իրեն հետ միացան նաեւ Վասպուրականին Ահարոն իշխանը, Գրիգոր Մազխատրոս Պահլաւունի, եւ Լիպարիտ Վրաց քաջ թագաւորը: Եկան զար-

նուեցան թշնամւոյն զօրքին հետ, բայց իրենց մէջ ծագած անտիրաբանութեան պատճառաւ շարաշար յաղթուեցան, Վրաց թագաւորն ալ գերի բրու- նուեցաւ :

ԽԲ. Տուրքիին զօրքը վեց եօթը տարի պայտէս Հայաստանն արեամբ ընցրնելէն ետեւ, ինքը թագաւորն անհամար զօրքով ու փղերով անձամբ հոն եկաւ եւ Ապահոնեաց դաւառին մէջ Մանազկերտ ամուր քաղաքին մօտ բանակը դրաւ : Անկէ ամէն կողմ՝ իր արիւնքուռչա ասպատակները սփռեց, որոնք առաջին կոտորածներէն զերծ մնացած դաւառներն ու քաղաքներն անմարդացուցին ու կործանեցին : Մտան նաեւ Խորձեն ու Հանձիթ դաւառներն ուր շատ բազմութիւն ամրացած էին, եւ առհասարակ որէ անյուցին. նոյնպէս Գերջան եւ Եկեղեաց դաւառներն ու Տայոց նահանգը սաստիկ կատաղութեամբ ասպատակեցին եւ դարձան մտան Վանանդ գաւառը : Հոն հայ իշխանները Գաղիկ Աբասեան Արուսեաց թագաւորին հրամանին տակ ժողվուած՝ իրենց զօրքովը թշնամւոյն դէմ ելան, եւ թէպէտ անոնց մէջ մեծ կոտորած բրին, բայց ետքը չորս կողմանէ պաշարուելով՝ յաղթուեցան, իշխաններէն երեսուն հոգի զարնուեցան մեռան ու թաթուլ քաջ իշխանը բռնուած Տուրքիին տարուեցաւ : Թաթուլ նոյն պատերազմին մէջ Պարսից Արսուրան ամիրային որդին վիրաւորած ըլլալով՝ որն որ Տուրքիին շատ սիրելի էր, թագաւորն անոր ըսաւ. եթէ աս տղան ապրի, զքեզ ալ կ'ազատեմ, իսկ եթէ մեռնի, զքեզ անոր զոհ կ'ընեմ. որուն թաթուլ պատասխանեց. Թէ որ զարնուածքն իմն է, չապրիր, իսկ եթէ ուրիշին է, ան չեմ գիտեր : Երբ որ քիչ մը ետքը թագաւորը տղուն մեռնելուն գոյժն առաւ, զթաթուլ ալ սպաննել տուաւ եւ աջ թեւը կտրելով Արսուրանին խաւրեց զանիկա միւթարելու համար, ըսելով թէ Որդիդ վատ բազկէ մեռած չէ :

Տուղբիլ աս ասպատակութիւններուն զբաղած ատեն, Մանագիկերոցիք պատրաստութիւն տեսնելու հետ էին, վասն զի յայտնի կը գուշակէին որ անիկա իր ահագին սուրն իրենց վրայ ալ պիտ'որ դարձնէ. եւ որովհետեւ հունձքի ատեն էր, դիւրաւ կըցան բաւական պաշար ժողովել քաղաքը խոթել. պատե-
րազմի հարկաւոր բաներն ալ ըստ բաւականի հողա-
ցին, եւ քիչ մը ետքն իրենց գուշակութիւնն իրօք
կատարուեցաւ: Վասն զի Պարսից ասպատակներն
իրենց բանակը դարձածնուն պէս, Տուղբիլ հրաման
տուաւ որ Մանագիկերոքը սաստիկ պաշարեն ու զարնեն.
քաղքին բարեպաշտ իշխանն աղօթքով զՎաստած
օգնութեան կանչելէն ետեւ, սկսաւ քաղաքացիները
քաջալերել որ չվախնան եւ յոյսերնին Աստուծոյ վրայ
դնեն. եկեղեցականներուն ալ պատուէր տուաւ որ
անդադար աղօթք ընեն: Պարսից զօրքն ամբողջ ամիս
մը սաստիկ աշխատեցան եւ օրն երկու անգամ՝ մէյ
մ'առտու մէյ մ'ալ իրիկունը քաղքին վրայ յարձա-
կում կ'ընէին, բայց մէջինները քաջութեամբ դէմ
դնելով՝ չկրցան բան մ'ընել: Շատ անգամ ուղե-
ցին ականներ բանալով պարսպին մօտենալ ու հիմը
փորել, բայց չկրցան յաջողընել. որովհետեւ Տուղ-
բիլին իշխաններէն մէկը քաղաքացւոց վրայ գթա-
լով՝ Պարսից ամէն խորհուրդները մազաղաթի վրայ
կը գրէր եւ նետին ծայրը կապած՝ պարսպէն ներս
կը նետէր եւ քաղաքացւոց կիմացընէր թէ այսօր
աս կողմը պիտ'որ զարնեն, կամ քաղքին աս կողմն
ական պիտ'որ բանան: Քաղաքացիք ալ ասկէ խրա-
տուած՝ բոլոր մտադրութիւննին թշնամւոյն դարան
գործած կողմերը կը դարձնէին եւ պարապի կը
հանէին: Տուղբիլ երկայն ատեն պարսպ տեղ աշ-
խատելէն ետեւ, խոշոր քարեր նետող մեքենաներ
բերել տուաւ եւ սկսաւ անոնցմով պարիսպը զարնել.
բայց ծերունի երէց մը՝ որն որ աս տեսակ մեքենա-
ներուն գիտութեանն ալէկ տեղեակ էր, թշնամւոյն

մեքենաներուն զէմ՝ աբիշ զործիրներ շիտկեց, եւ մեծամեծ քարեր նեակելով՝ զանոնք կտարեց եւ ան զործունեաց ըրաւ: Պարսից առ փորձն ալ չյաջողեցաւ, բայց անոնք սասով ալ չյուստահատեցան, այլ շուտ մը թաղաւորին հրամանաւը Քաղէշ քաղաքին ահազին բաբան մը բերին՝ որով 60 լիտր ծանրութեամբ քար կը նետուէր, եւ քաղաքին զիմացը կանգնեցին. եւ որպէս զի ներսէն նետուած քարերն անոր մնաս չհասցընեն, առջեւը բամբակի բեռերէ եւ ուրիշ բաներէ պատնէշ մը շինեցին: Սարսափեցաւ Մանազկերտ առ ահազին մեքենան տեսնելով, բայց իր սարսափն աւելի եւս մեծցաւ, երբ որ անով նետուած առաջին քարը քաղաքին պարսպին զարնելով՝ անոր մէկ մասը կործանեց վար ձղեց: Աստի քաղաքապետը տեսաւ որ քաղաքը վերջին վտանդի մէջ է, կանչեց իր զօրքերն եւ ըսաւ. «Ով որ առ մեքենան այրելու հնարք մը կը գտնէ, զինքն առատ պարգեւներով կը վարձատրեմ՝ եւ կայսրմէ իրեն համար մեծ պատիւ կ'առնում. եւ եթէ ինքը մեռնի, իր ընտանեացն ու ծնողացը հատուցում կ'ընեմ: Ան ատեն Փռանկ ազգաւ քաջասիրտ զինուոր մը յառաջ անցաւ եւ ըսաւ. «Ես քաղաքին փրկութեան համար կեանքս կը դնեմ, ու Ասպէն հաւանութիւն առնելով՝ նախէ ու ծծրմբէ լաղազրուած զիւրավառ հեղուկ մը շինեց շիշերու մէջ լեցուց, ու կէս օրւան սաստիկ տաքին ատենն, երբ որ թշնամեղն զօրքն իրենց վրաններուն մէջ կը հանգչէին, երազընթաց ձիու մը վրայ հեծած՝ կռնակն ալ խոշոր վահան մը զարկած՝ քաղաքէն դուրս ելաւ, եւ ձեռքը թղթով մը սկսաւ գէպ ի Պարսից բանակն երթալ, Մանրադոդ, Մանրադոդ պռուպով, այսինքն պատգամաւոր կամ թղթաբեր: Պարսիկները ձեռքի թուղթը տեսնելով՝ կարծեցին թէ քաղաքին կողմանէ թաղաւորին նամակ կը բերէ, եւ անհոգ եղան: Փռանկն երբ որ բաբանին մօտեցաւ, կանկ առաւ եւ սկսաւ մտազրութեամբ մ'անոր

նայիլ, այնպէս ցուցրնելով թէ անոր մեծութեանը վրայ կը զարմանայ. բայց յանկարծ ծոյկն շիշերն հանեց ու պատրաստած հեղուկը բարանին վրայ թափեց, ուսկից շուտ մը ծիրանագոյն բոց մը սկսաւ ելլել, եւ առջեւի բամբակներուն օգնութեամբք քիչ ժամանակուան մէջ ան փայտակերտ բլուրը լափեց լմրնցուց. իսկ ինքը ձին գարձուց եւ փախաւ մտաւ քաղաքը: Պարսիկ զինուորները թէպէտ եւ աճապարեցին ետեւէն ինկան, բայց չկրցան հասնիլ: Աստղեցաւ Տուզիլ եւ հրաման տուաւ որ մեքենաներով պարսպին հիմերը փորեն. բայց քաղաքացիք իրենց ունեցած յաջողութիւններէն ողի առած՝ պարսպին վրայէն սրածայր գերաններ ու խոշոր քարեր վար կը նետէին ու փորողները շարաշար կը սպաննէին. նաեւ երկաթի ճանկերով զանոնք վեր կը քաշէին ու կը մեռցընէին. որոնց մէջ Որատլիզ պարսիկ զօրապետն ալ պարսպին առջեւը պատերազմելու ատենը ճանկով վեր քաշեցին: Ասոր վրայ թագաւորը յուսահատեցաւ, եւ ետ քաշուելու հրաման տուաւ. բայց Աղիան զօրապետին աղաչելովն՝ որ մ'ալ կեցաւ եւ ուզեց վերջին փորձն ընել, ու նոյն օրւան պատերազմը բողբոլին աս զօրապետին յանձնեց: Աղիան շատ հնարքներով ջանաց որ պարսպին մօտենայ ու խրամատելով ներս յարձակի, բայց ներսիններուն քաջութիւնն անոր հնարքները պարապի հանեց: Երկու քաջասիրտ հայ պատանիք ալ յանկարծ բերդէն դուրս յարձակելով՝ բռնեցին զինքը Ասպին տարին, որն որ անմիջապէս անոր գլուխը կտրեց մեքենայով Տուզիլին բանակը նետեց. ժողովրդեան ալ հրամայեց որ պարսպին վրայէն բարձր ձայնով զթագաւորը ծաղրեն: Նաեւ, կ'ըսէ Մատթէոս Ուռհայեցի, քաղաքացիք էող մ'առին մեքենայով Տուզիլին առջեւը նետեցին, ու բերդին վրայէն պուռացին. Առ ասիկա քեզի կին բրէ, ու մենք ան ատեն Մանազկերտը քեզի օժիտ կու տանք:

ԽԳ. Տուղբիլ ըստկու թեամբ ու արամու թեամբ
 ժողովեց ըստակին մնացորդն ու դարձաւ եկաւ Արծկէ
 քաղաքին վրայ: Քաղաքացիք ամենեւին հոգ չունե-
 ցան, վասն զի քաղաքին կէսն անտօխի պարսպով
 պատած էր, կէսն ալ Բյնունեայ ծովը կը պաշտպա-
 նէր ու թշնամեղն անմատչելի կ'ընէր: Բայց Պար-
 սիկները ծովին մէջ ծանծաղ տեղ մը դտնելով՝ անկէ
 ներս մտան ու բոլոր բարկութիւննին անոր վրայ
 թափեցին. բնակչացը մեծ մասը ջարդեցին ու մնա-
 ցածը գերելով՝ հետերնին Պարսկաստան տարին:
 Քանի մը տարի ետքը նորէն դարձան մտան Հայաս-
 տան, եւ ուր որ մարդ գտան անխնայ ջարդեցին ու
 գերեցին. խեղճ ժողովուրդը չէր գիտեր ուր ապաստի,
 որովհետեւ կատաղի թշնամիք ամէն տեղ ետեւնէն
 կը հասնէին եւ արտաքոյ կարգի տանջանքներով կը
 սպաննէին: Յունաց զօրքը քանի մ'անգամ փորձե-
 ցին անոնց դէմ ելլել եւ վանտել, բայց իրենք յաղ-
 թուեցան եւ ետ քաշուելու ստիպուեցան: Անկէ
 ետեւ Պարսիկներն աւելի եւս համարձակութիւն
 առած, բոլոր երկրին երեսը տարածուեցան, խլով
 զաւանան անապատ դարձուցին. անկէ անցան Հարբ
 զաւան եւ Մանկան դոմ բուռած գեղն ու բոլոր
 անոր մտաւոր գեղերը թալլելէն ետեւ, բնակիչները
 բռնեցին սառած գետի վրայ նետեցին, ուր սասոցը-
 ները կտարելով՝ խեղճերը ջրին մէջ թափեցան ու
 չարաչար մեռան: Աս ժամանակա նաեւ Հայաստանի
 շրջակայ ազգերն ալ անդադար ներս կը յարձակէին,
 եւ Հայոց սակաւաւոր մնացորդն ալ կէս մը ջարդելով
 կէս մը գերելով կը սպանէին:

ԽԴ. Տուղբիլին մահուանէ ետքն անոր Արիապան
 եղբայրը Պարսից թագաւորեց, եւ իր նախորդին նման
 Հայաստան արշաւելով՝ եկաւ Անի քաղաքը պաշարեց:
 Քաղաքացիք երկայն տտեն քաջութեամբ դէմ դրին,
 մինչեւ Պարսիկներն յուսահատած՝ ետ քաշուելու
 սկսան: Բայց քաղաքին իշխանները կարծելով թէ

Թ շնամին նորէն յարձակում ընելու պատրաստու-
 թիւն կը տեսնէ, եւ իրենց երկայն տաւն անոնց գէմ
 դնելն անկարելի համարելով, քաղքին միջնորդող
 քաջուեցան: Ժողովուրդն երբ որ ինչըր զինքն առանց
 առաջնորդի տեսաւ, սկսաւ պռուպ եւ սաստիկ վայ-
 նասուն մը փրցընել: շատերն ալ քաղքին ետեւի
 դռներէն դուրս ելան եւ սկսան փախչիլ: Պարսից
 վերջապահ զօրքը շուտ մ'առ բանս թագաւորին իմա-
 ցուցին, որն որ նորէն ետ դարձաւ եւ առանց ընդդի-
 մութեան ներս մտաւ: Չիկրնար ստորագրուիլ պար-
 սիկ զօրաց քաղքին մէջ բրած անգթութիւնները.
 «Տըղաքը, կ'ըսէ Լատաիվերտացին, մօրերնուն զրկէն
 կը յափշտակէին ու քարի զարնելով կը մեռցընէին,
 եւ մայրերն իրենց որդիքն իրենց արցունքովն եւ
 արեամբը կը թանային: Հայրն ու որդին մէկ սուր կը
 սպաննէր, ծեր եւ երիտասարդ, քահանայ ու սար-
 կաւագ մէկ թրով իրենց մահը կը գտնէին, եւ այս-
 պէս քաղաքը ծայրէ ծայր դիակներով լեցուեցաւ:
 Սպաննուողներուն բազմութենէն քաղքին առջեւէն
 անցնող մեծ վտակն (Լխուրեան գետը) արեան գոյն
 դարձաւ. վայրենի եւ ընտանի դազանները մեռելնե-
 րուն գերեզման եղան, վասն զի չկար մէկն որ զանոնք
 թաղէր: Նաեւ քաղքին մէջ սաստիկ կրակ մ'ալ
 բորբոքեցաւ, որով բոլոր քաղաքն հողաբլուր մը դար-
 ձաւ,»:


Արիստական Անին առածին պէս՝ Գազիկ Վարսի
 թագաւորին դեսպան խաւրեց ու պահանջեց որ գայ
 իրեն հպատակի: Գազիկ ուզելով ճարտարութեամբ
 մը Պարսից թագաւորին բարկութենէն անվնաս ազա-
 տիլ, շուտ մը սեւ զգեստներ հագաւ ու սուգ մտաւ:
 Արիստլանին դեսպանը զանիկա առ կերպարանքի մէջ
 տեսնելով՝ երբ որ պատճառն հարցուց, Գազիկ պա-
 տասխան տուաւ. Քանի որ իմ բարեկամն Տուզիլը՝
 Արիստլանին եղբայրը մեռած է, եւ այսպէս սոց
 զգեստ կը հագնիմ: Գեսպանը զարմացած՝ գնաց

Թագաւորին պատմեց, որն որ անմիջապէս ելաւ Կարս եկաւ ու Գազիկին հետ սիրով տեսնուելով՝ անոր փառասօր Թագաւորական զգեստներ հագցուց եւ խաղաղութեամբ ետ դարձաւ : Բայց Գազիկ անկէ ետքը Կարս մնալն ապահով չհամարեցաւ, անոր համար քանի մ'օրէն իր իշխաններն հետն առած՝ Յունաց երկիրը գնաց եւ կայսրմէ Փոքր Հայոց Ծմնդաւ բերդն առնելով՝ հոն բնակեցաւ :

Ալիապան քանի մը տարի ետքը դարձեալ եկաւ մտաւ Հայոց երկիրն, ու շատ գաւառներէն Յունաց զօրքը վռնտելով՝ իր տակը նուաճեց եւ զանազան գաւառապետներու յանձնեց, որոնք ժողովրդեան սաստիկ տառապանք ու նեղութիւն տուին : Յոյները քանի մ'անգամ մեծ զօրութեամբ Պարսից դէմ ելան եւ ուղեցին զանոնք իրենց սահմաններէն վռնտել, բայց չկրցան յաջողընել. իրենց Ռոմանոս Գիողի-նէս (Գիոժէն) կայսրն ալ դերի բռնուեցաւ :

ԽԵ. Հայաստան այսպիսի խառնակութեան ու տառապանաց մէջ եղած ատեն, Գազիկ Թագաւորն Յունաց երկիրը կը պարտէր, եւ դեռ Թագաւորի անունը վրան կրելով՝ ամենուռն պատկառելի էր : Ասիկա իր ազգին ամէն օր Յոյներէն կրած նախատինքներն աչքովը տեսնելով կը ջանար անոնցմէ ասոր վրէժն առնուլ, եւ ուր որ կ'երթար, իր զօրքին հրաման կու տար որ Յոյները բռնեն ծեծեն ու չարչարեն : Աս միջոցիս լնեց որ Մարկոս Աեսարիայի մետրապոլիտը Հայոց դէմ սաստիկ ատելութիւն ունենալով՝ ամէն շներն Արմէն (Հայ) կ'անուանէ. նաեւ ինքն ալ շուն մ'ունի, որուն անունն Արմէն դրած է. բարկութեամբ բորբոքած՝ քանի մը քաջասիրտ ծառաներով ելաւ Աեսարիա գնաց, եւ մետրապոլիտն իմացուց որ կ'ուզէ իրեն այցելութեան դալ : Մարկոս զանիկա սիրով ընդունելով՝ փառասօր սեղան մ'ըրաւ, եւ երբ որ գինւով քիչ մը զուարթացան, Թագաւորն անոր հարցուց. Լսեցի որ գեղեցիկ շուն մ'ունիս եղեր, կ'ուզեմ

մնացող Հայերն՝ անդադար իրարմ^ն Ետեւ Եկող
 յարձակումներէն հետեւած տառապանքներուն աակը
 կը հեծէին, մինչեւ որ աս վերջին խաղաղութեան
 ժամանակները դալով՝ անոնց նկատութիւններուն
 սփոփութիւն տուին: Բայց մենք ասոնց պատմու-
 թիւնը մեր վեցերորդ գրքին թաղանթ, և հիմա
 սկսինք Հայոց թագաւորութեան Չորրորդ Հարսառ-
 թեան, այսինքն Ռուբենեան ցեղին պատմութիւնը
 պատմել:



ԳԻՐԻՔ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՌՈՒԲԵՆԵԱՆՅ ՏԵՐՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒԲԵՆԵԱՆՅ տէրութիւնը Բագրատունեաց
 ցեղին թագաւորութեան զազրելէն ետեւ Հայաս-
 տանէն դուրս Այլիկիայի մէջ Ռուբեն իշխանին
 ձեռքովն հաստատուեցաւ, որմէ նաեւ իր անունն
 ալ առաւ, եւ 300 տարի երբեմն խաղաղութեամբ
 եւ երբեմն պատերազմաւ տուեց: Աս հայա-
 կան թագաւորութեան Չորրորդ հարստութիւնն իր
 սկիզբները թէպէտ եւ պզտիկ եւ աննշան բան մըն
 էր, բայց իր առաջին իշխաններուն քաջութիւնն եւ
 իմաստութիւնը կարող եղան զինքն իր դարանակալ-
 ներէն պահպանել, եւ հետզհետէ պայծառացրնելով
 ու զօրացրնելով զանիկա բարձր աստիճանի մ'ըն-
 դունակ ըրին: Աս իշխանաց քրիստոնէութեան ըրած
 մեծամեծ օգնութիւնները զիրենք բոլոր եւրոպական
 ազգաց առջեւը շատ անուանի ըրին. Հռոմէական
 արքունիքն ալ անոնց արդիւնքը ճանչնալով՝ զա-
 նոնք արժանաւոր հատուցմամբ մը վարձատրելու
 համար թագաւորական թագ խաւրելով՝ արքունական
 պատուոյ հասցուց, զորն որ նաեւ Գերմանական եւ
 Յունական կայսրներն ալ հաստատեցին: Ռուբեն-
 եան ցեղը թագաւորական իշխանութիւնը ժամանակ
 մը փառօք վայելելէն ետեւ, Եղիպտացւոց յարձա-

կա մենքն սկանն, որսնք Խաչակրաց զօրս թիւնք խորասակելով՝ կուզէին նաև Արիկեան թագաւորութիւնն ալ ջնջել: Արիկիա իսկզբան շումայ քահանայապետներուն խնամակալութեամբն՝ եւ անոնց բրած բարոյական ու նիւթական օգնականութիւններովը, նաև թաթարաց ազգին իրեն թիկունք բլլալովը կարող եղաւ ինքք զինքք պաշտպանել ու կանգուն բռնել: Բայց հեազհեաէ իր օգնութեան սպիւրները դազրեցան եւ թշնամիներն օրէ օր աւելցան, որոնց բռնութեան դէմ չկրնալով դնել, բարբառին ընկճեցաւ եւ ինկաւ:

Ռուբենեանց պատմութիւնը գրող հեղինակները շատ են, որոնց մեծ մասը ժամանակակից կամ մօտաւոր ժամանակաւ բլլալուն համար արժանահաւատ կրնայ համարուիլ: Ազգային պատմագրաց գլխուորներն են Մասթէոս Ռուհայեցի (ԺԲ դարուն), որն որ Ռուբեն Ա.ին ժամանակէն մինչեւ Ղեւոն Ա.ին ժամանակը (1130) կը պատմէ: Ասոր զործքին շարունակողն եղաւ Գրիգոր երէց ու մինչեւ 1160—70 հասցուց: Աիրակոս Գանձակեցին ու Վարդան (ԺԳ) իրենց պատմութիւնը մինչեւ Հեթում Ա. կը հասցընեն: Սամուէլ երէցին պատմութիւնն իր շարունակութեամբը մինչեւ Ղեւոն Ե.ին գահ ելլելը կը հասնի: Վահրամ իր համառօտ ոտանաւոր չափով պատմութիւնը մինչեւ Ղեւոն Գ.ին թագաւորելը կը հասցընէ եւ հոն կը լմնցընէ: Ասոնց կարգը կրնանք դնել նաև Հեթում պատմիչն ալ՝ որն որ իր թաթարաց պատմութիւն անուանուած գրքին մէջ Ռուբենեան թագաւորաց շատ զործքերը կը գրէ, եւ մինչեւ 1310 Ղեւոն Գ.ին ժամանակը կը հասցընէ: Աս Հեթումը Ռուբենեան թագաւորաց ցեղէն իշխան եւ Արիկոսայ բերդին հրամանատարն էր. բայց ետքը կրօնաւորական վիճակ ընդունելով՝ իր ժամանակուան գաղղիբերէն լեզուան իր պատմութիւնը գրեց: Աօիկա նաև հայերէն լեզուաւ համառօտ ժամանակագրութիւն

մ'ալ ունի, որուն մէջ ալ Ռուբենեան իշխանաց շատ պատմութիւնները կը բովանդակին: Հեթումէն ետեւ կու գան Սմբատ, Ս. Ներսէս Այսեցի, Մալաթիա Աբեղայ եւ շատ անանուն հեղինակներու գրուածներ ու յիշատակարաններ, որոնք առ Հարսառ թեան գործքերուն աւանդապահն եղած եւ զուննք մեզի հասցուցած են:

Օտարազգի պատմագրաց մէջէն Կուլիէլմոս Տիւրային Թարոս Բ.ին, Մլէհին եւ Ռուբեն Բ.ին գործքերը կը պատմէ. իսկ Բասիլիոս Յովհաննէս Հերոլտ Լեւոն Բ.ին ու Հեթում Ա.ին ըրած պատերազմներուն պատմութիւնը կը գրէ: Հենրիկոս Սպոնգանոս եւ Անտուան Լեւոն Բ.ին թագաւոր պատկուիրը կը գրեն. Նիկետաս ու Աիննամոս յոյն պատմագիրները Թարոս Բ.ին ու Մլէհին Յունաց զէմբրած պատերազմներուն պատմութիւնը մեզի կ'աւանդեն: Ռայնալտոս իր Եկեղեցական Տարեգրութեանցը մէջ Լեւոն Բ.ին թագաւոր պատկուելէն սկսեալ մինչեւ Ռուբենեան թագաւորութեան ջրնջուիրը Ալիկիայի մէջ պատահած երեւելի դէպքերուն եւ պատերազմներուն պատմութիւնը կը գնէ, զորոնք բոս մեծի մասին Ատաիկանեան դիւանին նամակներէն հանած է: Իննովկենտիոս Գ. Քահանայապետին նամակներուն հաւաքման մէջ զորոնք Ստեփանոս Բաղուզիոս հաւաքած է, Լեւոն Բ.ին նոյն Քահանայապետին գրած նամակներն՝ եւ առ թագաւորին ու Տրիպոլոսի կոմսին մէջ եղած երկայն գծաութեան պատմութիւնը կը բովանդակի: Յովհաննէս Մարիանա¹ Սպանիայի պատմութեան մէջ Լեւոն Չ.ին Եգիպտոսի բանակէն ազատիլն եւ Եւրոպա գալը, իսկ Յովհաննէս Ֆրուասար եւ Յովհան Ժիւլենալ տեղ Իւրզէն² անոր Գաղղիայի մէջ անցուցած կեանքին

1 Johannes Mariana, Historia de rebus Hispaniae.

sins, Historie de Charles VI. roi de France.

2 Jean Juvenal des Ur-

ստորագրութիւնն, Է. Անգղիայի ու Վաղշիայի թագաւորներն իրարու հետ հանձնադրեցին իւր համար ըրածները կը գրեն: Աս պատմագիրներէն զառ կայ նաեւ բոլոր Ռուբենեան ցեղին սկիզբէն մինչեւ վերջը պատմող պատմագրութիւն մը, որուն հեղինակն է Ստեփանոս Լուսինեան¹. բայց աս պատմութեան մեծ մասն անհիմն է: ուրիշ հեղինակաց ասանդածին անհամաձայն ըլլալուն համար, անկէ շատ քիչ բան տալիք:

ԳՂՈՒԻ Ա

Ռ Ո Ւ Բ Ե Ն Ա .

Ա. Ռուբեն Տաւրոս լեռանց վրայ իր տէրութեան հիմը կը դնէ (1080): Իր մահը (1095):

Ա. ԳԱԳԻԿ Բ.ին բռնուած աստերը, քովի երեք ընկերներուն մէջն էր իր ազգականը Ռուբեն քաջ եւ իմաստուն իշխանը: Ասիկա թագաւորին Արդիստրայի աշտարակէն կախուիլն աչքովը տեսնելով՝ Յունաց ազգին դէմ վրէժխնդրութեան ոգւով բորբոքեցաւ, ու միտքը դրաւ որ անոնց իշխանութեան տակ եղող Հայոց մէկ մասին գլուխն անցնի, եւ անոնց հետ ընդհանուր Յունաց դէմ ելլէ, եւ իր ազգն անոնց հարստահարութիւններէն ազատէ: Ստուգիւ մեծ ու շատ դժուարին էր Ռուբենին խորհուրդը, մանաւանդ Հայոց ան ցրուած վիճակին մէջ. բայց իր իմաստութիւնն, իրեն հետ միաբանողներուն անվէհեր քաջութիւնն եւ անոնց յոյն ազգին դէմ ունեցած ստատիկ զրգուութիւնը դիւրաւ յաջողեց ու գլուխ հանեց: Ռուբեն Հայոց ընդհանուր վիճակն ու դիրքն իր աչքին առջեւը բերելով՝ եւ անոնց զանազան տեղ ունեցած զօրութիւնը կշռելով, մտքին մէջ սրոշեց որ իր ձեռք զարնելու գործքին ամենէն յարմար

¹ Etienne de Lusignan, mes de Hierusalem, Cypre, *Histoire générale des Royaumes de France et d'Arménie*.

տեղ Տաւրոս լեռանց վրայ է, ուր թէ հայազգի-
ներուն շատութիւնն եւ թէ տեղւոյն ամուր գիրքն
իրեն մեծամեծ յաջողութիւններ կը խոստանային :
Անվիջապէս էլաւ հոն գնաց եւ իր մտածմունքը
տեղւոյն հայ բնակիչներուն հաղորդեց, որոնք զինքն
ուրախութեամբ ընդունեցան եւ շատ քաջասիրտ
մարգիկ իրեն զինուորեցան : Ասոնցմով քիչ ժամա-
նակէան մէջ բոլոր Յոյները նոյն լեռանց վրայէն
վանտեց, եւ ան կողմերուն տիրելով՝ իր տէրութիւնը
հոն հիմնեց :

Ուուբէն 15 տարի իշխանութիւնը վարեց ու վախ-
ճանեցաւ, եւ բոլոր աս ժամանակն իր ձեռքին տակ
եղող ժողովուրդն հանդիսա պահելու հոգ տարաւ :
Նաեւ Տաւրոս լեռանց մծաերը տիրող հայազգի իշ-
խաններն իր տէրութեան հետ կապակցելու ետեւէ
եղաւ եւ գլուխ ալ հանեց, որոնց մէջ գլխաւորներն
էին Գող Վասիլ, Ապիրատ եւ Օշին՝ Լամբրոն բեր-
դին իշխանը : Ասոնք իր հաստատած փոքրիկ տէրու-
թեան մեծնալուն ու զօրանալուն օգնական ու գոր-
ծակից եղան :

Գ Ա Ո Ւ Խ Բ

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն Ա .

Բ . Կոստանդին հօրը կը յաջորդէ (1095) եւ երկիրները
կ'ընդարձակէ : Իր խաչակրաց բրած օգնութիւնները, Կոստու-
թեան պատիւ ընդունիլն եւ իր մահը (1100) :

Բ . Ուոսիւսեան յաջորդեց իր որդին Կոստան-
դին Ա . որն որ իշխանութիւնն առածին պէս սկսաւ
իր մեծ հանձարն ու քաջութիւնն ի գործ դնել :
Ժողովեց Հայոց քաջերն եւ անոնցմով երկիրն ընդար-
ձակեց . Յունաց ձեռքէն շատ քաղաքներ ու բերդեր
առաւ . նաեւ Վահկայ բերդին տիրեց եւ ամթուր
հոն հաստատեց :

Աստաններս Արևմտեան ազգերն Թրքանսո Բ-
 քահանայապետին յորդորելովք Ս. Երկիրն եզրկա-
 տացոյց ձեռքէն ալսանելու համար ահապին պատ-
 րաստութեամբ Ասիա արշաւեցին : Աստանդին աս
 բարեպաշտական գործքին մասնակից բլլալու համար
 Խաչակրաց իշխաններուն հետ նիզակակցութեան
 դաշինք դրաւ, եւ անձամբ անոնց շատ պատակազմ-
 ներուն մէջ գտնուելով՝ շատ քաջութիւններ բրաւ :
 Խաչակիրք քանի մ'անգամ եզրկատական գործին
 յաղթելէն ետեւ՝ Անտիոք քաղաքը պաշարեցին .
 բայց հոն զօրքին պաշարը պակսելով՝ բանակին մջ
 սաստիկ սով ինկաւ : Աստանդին աս բանս լսածին
 պէս, իր երկրին ամէն կողմէն ուտելիք ժողովեց ու
 խաչակիր բանակին խրկեց : Իր օրինակին հետեւեցան
 նաեւ Օշին ու Բագունի իշխաններն եւ ուրիշ շատ
 իշխաններ ու Սեաւ լեւան վանքերուն կրօնաւորներն,
 որով Խաչակիրք հոգի առին եւ Անտիոքին տիրեցին .
 եւ աս բանիս արժանաւոր հատուցում մ'ընելու
 համար, բանակին իշխանները Աստանդինն Մարգեղի
 ու Կոմնի պատիւ տուին, շատ ալ մեծագին բնձաներ
 խաւրեցին :

Աստանդին քաջութեամբ եւ իմաստութեամբ
 5 տարի ազգը խնամելէն ետեւ վախճանեցաւ, եւ
 Ասատաղան վանքն՝ իր հօրը թաղուած գերեզմանը
 թաղուեցաւ : Իրեն յաջորդեց իր անդրանիկ որդին
 Թորոս Ա :

Գ Լ ՈՒ Խ Գ

Թ ՈՐ Ո Ս Ա .

Գ . Թորոս Տօրը կը յաջորդէ (1100) եւ բոլոր Արլիկիան իր իշխանութեան տակը կը նուաճէ : Պարսիկները Արլիկիա կը յարձակին . Գող Ասաիւ անոնց կը յաղթէ ու կը վանտէ : Գ . Թարոսին Աիգիսարա բերդն առնուլն ու Քապիկ թա-
գաւորը մեռցընող իշխանները բռնելն եւ սպաննելը : Իր
մահը (1123) :

Գ . ԹՈՐՈՍ Տօրը քաջութեանն եւ իմաստուն
կաստիարութեանը հետեւող բլլալով՝ երբ որ անոր
մահուանէ և տեւ տէրութիւնն ինքը ժառանգեց, բոլոր
փոյթն ու մտադրութիւնն իր ազգը կարգի դնելու
եւ երկիրն ընդարձակելու գարձուց : Զարկաւ վաճառեց
բոլոր Արլիկիայէն յունական զօրքն՝ եւ ինքը նոյն գա-
ւառն իր իշխանութեան տակն առնելով՝ սկսաւ
քաղաքները զանազան շէնքերով ու փառաւոր եկե-
ղեցիներով զարդարել : Բայց այսպիսի յաջողութեամբ
տէրութիւնն յառաջ տարած ատեն, յանկարծ 12,000
պարսիկ ասպատակներ Տարոս լերանց կողմերը յար-
ձակեցան, Անարզաբա գաւառը թալլեցին, եւ ան-
համար գերիներով գարձան մտան Գող Ասաիւ իշ-
խանին երկիրը : Աճապարեց Ասաիւ զօրքը ժողվեց
եւ անոնց վրայ հասաւ, ու սաստիկ պատերազմով
անոնց յաղթելով՝ շատերը բռնեց, մնացածը փա-
խուց եւ Արլիկիայէն առած գերիներնին ձեռքբրնէն
առաւ : Երկրորդ տարին Պարսիկներն աւելի շատ բազ-
մութեամբ Ասաիւն վրայ եկան առաջին յաղթուել-
նուն վրէժն առնելու համար . բայց անիկա նորէն
իրենց դէմ ելաւ ու վաճառեց :

Հազիւ թէ Թորոս Պարսից առաջին անգամ
առած վնասները նորոգած էր, գարձեալ այլազգեաց
մեծ գունդ մը Արլիկիա յարձակեցաւ եւ Անարզա-
բային կողմերը նորէն ասպատակեց : Թորոս իսկզբան

չէր համարձակած անոնց անհամար բազմութեանը գէժ պատերազմի ելլել : Բայց իրենց բրած աւերն եւ ապականութիւնները տեսնելով՝ իր պրօսիկ գունդն առաւ եւ իր Աւան քաջ եզրօրը հետ անոնց վրայ յարձակեցաւ . եւ զարկաւ վաճակեց, թէպէտ եւ իր զօրքէն եւ իշխաններէն ալ շատ մօրզ կորսնցուց :

Գ. Երբ որ այլազգեաց արշաւանքները զազրեցան, Թորոս դարձեալ իր զէնքը Յանայ վրայ դարձուց եւ անոնցմէ շատ քաղաքներ առաւ : Աստաններս Գագիկ թագաւորն սպաննուց երեք եզրաբք Մանապէի որդիքը զեւ Արիստարա բերդին մէջ կ'իշխէին, որոնցմէ մէկը Թորոսին հետ խնամութիւն ունենալով՝ խոստացած էր որ նոյն բերդն իրեն տայ : Թորոս՝ որովհետեւ իր ակրութիւնը մինչեւ Ասպազոպիկի սահմանը տարածած էր, ուզեց Արիստարան ալ՝ որն որ նոյն կողմերը կ'իշխար, շուտով իր իշխանութեան տակն առնուլ . ուստի դուռ մը զօրքով Մանապէան իշխաններուն այցելութեան գնաց, որպէս զի տառապի վերդն անոնցմէ ուզէ : Երբ որ բերդին մօտեցաւ քովիններէն մէկը ներս խաւրեց եւ իր գալն իմացուց : Յոյն իշխաններն անմիջապէս մէջերնէն մէկն ընծաներով անոր զիմացը խաւրեցին : Ահաւ իշխանը բերած ընծան որն որ ծանրագին գաշոյն ու փառաւոր զգեստ մըն էր, Թորոսին տուաւ, եւ անոր հետ սիրով խօսակցելէն ետեւ կերակրի նստան : Սեղանը լմնցած ին պէս Թորոս յոյն իշխանին գառնալով՝ Գուք, ըսաւ, խոստացած էք որ Արիստարա բերդն ինձի տաք . արդ հիմա ժամանակն է, զանիկա ինձի յանձնեցէք, եւ իմ ակրութեանս մէջ ուր որ կ'ուզէք ձեզի ուրիշ երկիր մը տամ : Իշխանը տուած խոստումը կատարել չուզելով՝ պատասխանեց թէ Արիստարա մեր հայրենական ժառանգութիւնն ըլլալով՝ չենք կրնար քեզի տալ : Աս պատասխանին վրայ Թորոս սաստիկ բարկացաւ, իմանալով որ անոնք զինքը խաբեր են, եւ իշխանին բերած ընծաներն ետ դար-

ձուց ու բառ . ել, առնդ գնա եւ ասկէ ետքը պատրաստ եղէք . ինքն ալ ճամբայ երա ու բերդէն հետ ապա : Բայց գիշերն եկածին պէս ետ դարձաւ ու քովի հետեւակները բերդին մօտ դարանի գնելով՝ ինքը ձիաւորներովը նորէն ետ քաշուեցաւ : Աստուանց բերդականներն ամենեւին բանէ մը տեղեակ չլրարով՝ սկսան բերդէն դուրս ելլել , եւ յանկարծ Հայոց գունդն անոր առջեւը տեսնելով՝ զարհուրած ներս փախան ու դռները գոցեցին : Բայց Թորոսին զօրքը բերդին բարձունքներն յարձակմամբ առին եւ սկսան մէկ կողմանէ ներսիններուն հետ պատերազմիլ , միւս կողմանէ ալ դռներուն կրակ տալ , որն որ քիչ ժամանակէն մէջ սաստիկ բորբոքեցաւ եւ ամէն կողմը պատեց : Բերդականները վտանգին մեծութիւնը տեսնելով՝ քովի կողմանէ դուռ մը բացին եւ սկսան փախչիլ : Հոն հասան հայական զօրքն ու բերդը բռնեցին . փախչողներուն ալ ետեւէն ինկան եւ առհասարակ ամէնը բռնեցին : Ասկէ ետեւ Թորոսին աւետարներ խրկեցին եւ բանն իմացուցին , որն որ շուտ մը հոն եկաւ եւ Մանապեան երէք իշխաններն առջեւը բերել տալով՝ բարկութեամբ հրամայեց որ երթան Պապիկ Թաղաւորին սուրն եւ զգեստները բերեն , եւ երբ որ բերին Թորոսին սիրան ելաւ եւ սկսաւ աչքէն արցունք թափել . բոլոր զօրաց սիրան ալ շարժեցաւ եւ ամէնը մէկտեղ սկսան իրենց դժբախտ Թաղաւորն սղլալ : Թորոս հրամայեց որ բերդին գանձերն ալ առջեւը բերեն , բայց յոյն իշխանները յանձն չառին . ասոր համար Հայոց իշխանապետը զանոնք ասնջել տուաւ որ գանձերուն տեղերն յայտնեն : Նոյն միջոցին մէջերնէն մէկը պատուակաւ մը զինուորաց ձեռքէն պրծաւ , եւ ինքը զինքը բարձր տեղէ մը վար նետելով՝ շարաշար մեռաւ . իսկ երկրորդն արտաքոյ կարգի յանդգնաւ . Թեամբ մը սկսաւ Թորոսն յանդիմանել եւ սպառնալէքներ ընել . Ինչ պատասխան պիտ'որ տաս , բառ ,

Յունաց կայսեր որ զմեզ՝ իր իշխաններն այսպէս կը չարչարէս : Աս խօսքը թորոսին բարկութիւնն աւելի եւս բորբոքեց , որն որ հաստ զաւազան մ'առած լիբը յոյնին վրայ յարձակեցաւ եւ ըսաւ . Գուք ս՛վ էք որ Հայոց օձեալ թագաւորն սպաննեցիք , կամ ինչ պատասխան տուիք Հայոց ազգին աս անօրէնութեան զօրժքին համար . աս ըսելով արատաւալից աչուրներով սկսաւ անօր զարնել , մինչեւ որ հոգին վիչեց : Անկէ ետքը բերդին ամէն զանձերը ժողովել տալով հոն իր զօրքէն պահապան դրաւ ու Վահկայ բերդը դարձաւ . իրեն հետ բերաւ նաեւ Արկիտորային երրորդ իշխանը :

Ասկէ ետեւ 10 տարիի չափ ալ ազգը խնամեց եւ իր իշխանութեան 23 երրորդ տարին խաղաղութեամբ վախճանեցաւ , եւ իր շինել տուած Գրազարկ վանքը թաղուեցաւ : Իր քաջութիւնները զինքն օտար ազգաց առջեւ շատ անուանի բրած էին , որոնք Արկիկիան թորոսի երկիր կ'անուանէին : Իրեն յաջորդեց իր եղբայրը Աեւոն Ա . վասն զի իր մէկհատիկ որդին Աստանդին՝ քանի մը չարագործներէն թիւնաւորուած եւ իրմէ յառաջ մեռած էր :

Գ Լ Ս Ի Խ Գ

Լ Ե Ի Ս Ն Ա

Ե. Լեւոն Արիւկիայի իշխանութիւնը կը ժառանգէ (1123) Անտիոքի իշխանին օգնութիւն կ'ընէ : Նենգութեամբ կը բռնուի ու բանա կը դրուի, եւ բանի մը քաղաքներ ու պատանդ տարով կ'ազատի : Զ. Յովհաննէս Կոմնենոս կայսեր Արիւկիա արշաւէն, Անարգարա քաղքին պատերազմն եւ Յունաց նոյն քաղքին տիրելը : Է. Աւահկայ բերդին պատերազմն եւ անոր Յունաց զօրքէն առնուիլը : Ը. Լեւոնին իր երկու որդիներովը բռնուիլը (1137) եւ Կոստանդնուպոլսոյ բանակն մջ մեռնիլը (1141) :

Ե. ԼԵՒՈՆ Արիւկիայի աւերութեան գահէն ելածին պէս իր երկիրն ընդարձակելու ձեռք զարկաւ, եւ իր մեծամեծ յաղթութիւններովը քիչ ժամանակէն մէջ շատ անուանի եղաւ : Նախ եւ յառաջ Յունաց դէմ պատերազմի ելլելով՝ անոնց յաղթեց եւ Մամեստիա ու Տարսոն երեւելի քաղաքներուն տիրեց. անկէ ետեւ Անտիոքի Ռոզերիոս (Ռոճեր) իշխանին օգնութեան զնաց, որն որ Ազաղ բերդաքաղաքին պլլազգի իշխանին դէմ պատերազմի ելած էր, եւ պլլազգի զօրքին յաղթելով՝ բերդին տիրեց ու յաղթանակաւ ետ դարձաւ : Բայց Ռոզերիոսին մահուանէ ետքն՝ Անտիոքին նոր իշխանը Լեւոնին դէմ թշնամութիւն ունեցաւ, ու Մարաշի Բաղատինոս (Բաղտին) կոմսին հետ միաբանելով՝ անոր ձեռքովը զանիկա նենգութեամբ բռնեց եւ Անտիոք քաղքին մէջ բանա դրաւ : Լեւոն քանի մ'ամիս բանառ կենալէն ետեւ, Ատանա ու Միսիս քաղաքներն եւ 60,000 դահեկան, որդիներէն մէկն ալ պատանդ տարով՝ անկէ ազատեցաւ : Բայց Արիւկիա եկածին պէս շուտ մը զօրքը ժողովեց ու առած քաղաքները պատերազմաւ ետ առաւ. անկէ յառաջ քալեց եւ Անտիոքի իշխանին երկիրը մտաւ, ու շատ տեղեր ասպատակելով եւ աւրելով՝ զանիկա այնչափ նեղը ձգեց՝ որ ստիպուե-

յառ ասած պատանդն ետ տալ եւ իրեն հետ հաշտութիւն ընել :

Զ. Աս հաշտութիւնը հաստատուելն քիչ մը ետքը , Յովհաննէս Ամեննոս Պէրփեբուժէն կայսրը լսելով որ Աեւան Ալիէկիայի մէջ բոլոր Յանոց երեւելի քաղաքներն սուեր է , եւ նաեւ Սելէւկիա քաղաքն ալ սաներու կը սպառնայ , հրաման տուաւ որ պատրաստական զօրքերը ժողովին եւ նոր զօրաժողով ալ ըլլայ . շատ ալ պաշար պատրաստել ստաւ , եւ այսպիսի ահագին զօրութեամբ Ալիէկիայի վրայ քալեց , ու Ալիէկեան դրոնք ըստած լեբանց անցրերէն անցնելով Մամեստիա , Տարսն եւ Ասանա քաղաքներուն առանց աշխատութեան տիրեց : Աս յաջողութեան վրայ արտաքոյ կարգի ուրախացած , ուզեց բոլոր Ալիէկեան տէրութիւնն իր սակը նուաճել , ուստի զօրքին մէկ գումարտակն՝ որն որ պարսկական վաշտերէ կազմուած էր , Անարզաբա ամուր բերդաքաղաքին վրայ խաւրեց , որ անոր բնակիչները զրգուեն եւ ինչ մտքի վրայ ըլլալնին իմանան : Անարզաբա նոյն ժամանակն իր անհամար բնակիչներէն զսա՝ ամէն կողմանէ հսն սպառնողներուն բազմութեամբն ու քաջ սպառազէն զինուորներով լեցուն էր , որոնք բոլոր ջանքով աշխատելով բերդին առջևը մարտկոյներ շինած եւ պատերազմական մեքենաներով քաղաքն աւելի եւս ամրացուցած էին : Եկան յունական զօրքը քաղքին առջևը , զորոնք քաղաքացիք տեսածնուն պէս , դռներէն դուրս ելլելով՝ վրանին յարձակեցան , շատերը նոյն տեղը ջարդեցին , մնացածները փախուցին եւ երկայն ատեն ետեւէն ինկան ու հալածեցին : Բայց նոյն ատենը բոլոր կայսերական բանակն հսն հասաւ , որով քաղաքացւոց հարկ եղաւ ետ քաշուիլ ու քաղքին սէջ մտնել . կայսերական բանակն ալ յառաջ եկաւ եւ քաղաքը պաշարեց : Հոս սկսաւ բուն սաստիկ եւ արինահակ պատերազմը : Յոյները մեքենաներն յառաջ քշեցին , եւ անոնցմով մեծամեծ կլոր քարեր նե-

տեղով՝ տշնարանները խախտելու և կործանելու կաշխատելին . Հայերն ալ իրենց պատանւաներուն ետեւը կանդնած՝ բաբաններէն խոշոր քարերու տարափ կը ակղային եւ յունական զօրքին շատ վնաս կու տային : Ասկէ վաս անոնց մեքենաներուն վրայ կրակ կտրած երկաթի կտորներ նետելով՝ անոնց փայտե սինները կայրելին եւ գործիքներն անգործածական կընէին : Ապտրն իր զօրաց կտրուիչն ու տկարանալը տեսնելով՝ սկսաւ վհատիլ եւ ետ քաշուելու պատրաստուիլ . բայց իր Խասհակ որդւոյն մէկ հնարքը պատերազմին կերպարանքը բոլորովին փոխեց , եւ յաղթութիւնն Յունաց կողմը դարձուց : Աս պատանին տեսնելով՝ որ իրենց գժբախտութեան գլխաւոր պատճառը ներսէն նետուած հրեղէն երկաթներն են , հօրը խորհուրդ տուաւ որ մեքենաներուն փայտեղէն մասերը կաւով ծեփել տայ : Ապտրն անմիջապէս աս խորհուրդն ի գործ դրաւ , եւ երկրորդ օրը նորէն քաղաքը զարնելու սկսաւ . բերդականները թէպէտ եւ դարձեալ իրենց բորբոքեալ երկաթներովը կայսերական զօրաց մեծ վնաս տուին , բայց անոնց մեքենաներուն չկրցան վնասել , վասն զի զանոնք պատող կակուղ ու խոնաւ կան աս բորբոքիչ ու մեքերուն զօրութիւնը կը կտրէր որով անոնցմէ նետուած քարերը բերդին քանի մը կողմը կործանեցին ու զօրաց ներս մանելու խրամատներ բացին : Քաղաքացիք ասով ալ չվհատեցան , այլ կատաղաբար ներս մանողներուն վրայ յարձակելով՝ անոնցմէ շատ մարդ ջարդեցին , մինչեւ որ բոլոր յունական բանակը քաղքին մէջ մտաւ , ամէն կողմ բռնեց ու պատերազմը դադրեցուց :

Է . Անարգաբա առնուելէն ետեւ կայսրը բոլոր զօրութեամբ Աշհկայ բերդին վրայ եկաւ , զորն որ բնութիւնը ժայռերով եւ արուեստանամուր պտրտպով ամրացուցած էր , եւ ներս պատգամ խաւրեց որ բերդը խաղալութեամբ իրեն ասան : Բերդականներն աս առաջարկութիւնը մերժեցին եւ իրենք զիրենք

գրպարտութիւններ ընելով՝ աշուրներն հանել տաին եւ նաեւ կեանքն ալ յափշտակեցին . իսկ Աւան Թորոսին հետ նորէն բանտ գրուեցաւ , ուր սաստիկ տառապանքներուն չդիմանալով՝ քիչ տաննէն մեռաւ : Իր իշխանութիւնը 1½ տարի տեւեց . իսկ Արստանգնուպոլսց մէջ պանդխտութիւնը ¼ տարի :

Գ Լ Ո Ւ Խ Ե

Թ Ո Ր Ո Ս Ի .

Թ . Թորոսին Արստանգնուպոլսէն Կիլիկիա գալն ու հօրը տերութիւնն առնուլը (1144) : Մանուէլ կայսեր Կիլիկիա արշաւելը . Անդրոնիկոս զօրապետին Թորոսին վրայ խաւրուիլն եւ անոր Հայոց զօրքէն յաղթուիլը (1145) : Ժ . Թորոս Երուսաղեմի թագաւորին օգնութեան կ'երթայ . Յունաց զէմ՝ նորէն պատերազմի կ'ելլէ : Անդրոնիկոս նորէն Կիլիկիայի վրայ կը խրկուի , Թորոս անոր վրայ մեծ յաղթութիւն կ'ընէ : Արստանգին Կալամանոս զօրապետին Թորոսին վրայ գալն եւ անկէ յաղթուիլը : ԺԱ . Թորոսին երկրակալութիւնները . Գըլլճ՝ Ասլան Իկոնիոսի (Ղոնեայի) սուլթանին Կիլիկիա յարձակիլն , իր զօրքին կոտորածը , եւ Թորոսին հետ հաշտութիւն ընելը : Յոյները Թորոսին Ստեփանէ եղբայրը կը սպաննեն . Թորոս ասոր վրէժն առնելու համար նորէն անոնց զէմ՝ պատերազմի կ'ելլէ ու բոլոր Կիլիկիան ձեռքերնէն կ'առնու : ԺԲ . Մանուէլ կայսեր Թորոսին վրայ գալն եւ Երուսաղեմի թագաւորին միջնորդութեամբն անոր հետ հաշտուիլը (1159) : Թորոսին մահը (1168) :

Թ . ԹՈՐՈՍ Տօրը մահուանէ , ետեւ կայսեր հրամանաւ ընտանէն աղատելով՝ կայսերական զօրաց մէջ մտաւ , եւ իր քաջութեամբը քիչ ժամանակեան մէջ երեւելի եւ անուանի եղաւ : Նոյն տանները Թաթարաց արշաւանքներուն պատճառաւ Յովհաննէս Արմենէոս կայսրը զօրքով Կիլիկիա երթալով՝ զինքն ալ հետը տարաւ , եւ երբ որ հոն կայսրը դիպուածով մը զարնուելով՝ մեռաւ եւ զօրքն ետ դարձան , Թորոս հոն մնաց եւ հայ քահանայի մը քոյն երթալով՝ անոր

խնայուց որ ինքը Աւետիսն որդին է : Քահանան զինքը շատ սիրով բնդունեցաւ , եւ քիչ մը ժամանակ ոչխարներու վրայ հովիւ գրաւ եւ զնաց Ալիլիկայի մեծերուն ու ժողովրդեան ծածուկ իմացուց որ Աւետիսն որդին իր քովն է : Հայերն արդէն Յունաց բրած ըրտնութիւններէն սաստիկ նեղացած ըլլալով՝ մեծ բաղձանքով իրենց առաջին տէրերուն կը փափաքէին , որոնց ժամանակը խաղաղ ու հանգիստ կեանք կ'անցրնէին . ասոր համար քահանային իրենց տուած անակնկալ աւետիսն իրենց մեծ ուրախութիւն պատճառեց , եւ շուտ մը շատ քաջասիրտ պատերազմողներ ժողովուեցան ու Թորոսն իրենց իշխան անուանելով՝ անոր զինուոր գրուեցան : Արի պատանեակն այսպէս հօրը տէրութիւնը ձեռք ձգելէն ետեւ , նախ Աշկայ բերդին վրայ զնաց , պատերազմաւ անոր տիրեց եւ տէրութիւնն հոն հաստատեց . անկէ ետեւ կամաց կամաց յունական զօրքը Ալիլիկայի քաղաքներէն վռնտեց եւ իր հայրենական երկիրներուն նորէն տիրեց :

Թորոսին աս գործքերուն լուրը Մանուէլ Ամեննոս կայսրն աւնելով՝ շատ խռովեցաւ , եւ շուտ մը Հունգարացուց հետ բրած պատերազմը ըննցրնելով՝ բանակն առաւ Ալիլիկայի վրայ քալեց եւ Ասանա ու Տարսոն քաղաքներուն տիրեց : Անկէ ետքն Անդրոնիկոս զօրապետը Թորոսին վրայ խաւրեց որ զանիկա բռնէ : Թորոս՝ որ նոյն ատենը Բարձրբերդ ամրոցը քաշուած էր , Անդրոնիկոսին իր վրայ զալն իմացածին պէս , անոր դեսպան խաւրեց եւ ըսաւ . Թէ որ կայսրն արդարութեամբ եւ իրաւամբ կառավարէ , ես անոր ամէն հրամաններուն կը հնազանդիմ . որուն յոյն զօրապետն այսպէս պատասխան խրկեց . Ապսեր արդար եւ իրաւացի հրամանն աս է որ զքեզ ալ հօրդ կապուած շղթայովը կապենք : Աս պատասխանին վրայ Թորոս սաստիկ զայրացաւ , եւ շուտ մ'իր պատերազմական կարգադրութիւններն ընելով՝ ամենայն զօրութեամբ

Յանաց դէմ գնելու պատաստուեցաւ : Հետեւակ զօրքն ան լեբանց կիրճերուն մէջ, ուսկից որ կայսերական բանակը պիտ'որ անցնէր, զարանի գրաւ, իսկ ձիաւոր զօրքն ինքը հեան առած Բարձրերդ կեցաւ : Եկաւ Անգրոնիկոս իր բանակովն սկսաւ կիրճերէն անցնիլ . Հայոց դարանակալներն իրենց դարաններէն յանկարծ դուրս ցաթքեցին եւ անոնց վրայ իյնալով՝ մեծ կոտորած ըրին, ու շատ մեծամեծ իշխաններ ու զօրապետներ դերի բռնեցին իրենց իշխանին բերին : Կայսրն իր իշխաններուն բռնախլը լսելով՝ Թորոսին դեսպան խաւրեց եւ ուզեց զաննք դնել եւ աղատել : Թորոս ամբարտաւան Յոյներն իր սաջեւն աղաչելու եկած տեսնելով՝ հարցուց անոնց . Քանի կ'արժեն ձեր իշխաններն որոնք հիմա իմ գերիներս են : Գեսպանները շփոթեցան եւ ուրիշ բան չկրնալով ըսել, ինչ արժենին դուն գիտես, ըսին . ան ալ վեհանձնութեամբ մը պատասխան տուաւ . Թէ որ արժէք ունեցող բաներ ըլլային, չէի ծախեր . ինչ որ կ'ուզէք տուէք եւ առէք տարէք : Գեսպաններն իրենց իշխաններուն պատիւ ընելու համար շատ ոսկի վճարեցին : Թորոս հրաման տուաւ որ անոնց ամէնն ալ իր զօրքին բաժնեն : Զարմացան դեսպաններն ու պատկառանօք մը հարցուցին թէ ի՞նչ պատճառաւ այնչափ ստակն անարգ զինուորներուն բաժնել կու տաս . Որպէս զի, պատասխանեց Թորոս, աւելի քաջալերուին եւ ուրիշ անդամ նորէն ձեր իշխանները բռնեն : Ասոր վրայ կայսրն Անտիօքի իշխանին միջնորդութեամբը Թորոսին հետ հաշտութիւն ըրաւ եւ բարեկամութեան գաշինք հաստատեց :

Ժ . Աս տեսներս Նուրատին Հալէպի սուլթանը շատ զօրանալով՝ Լատինացւոց Ասորիքի մէջ ունեցած քաղաքներէն շատերն առած՝ եւ քանի մ'անդամ ալ պատերազմաւ խաչակիր զօրքին յաղթած էր, ու կամաց կամաց յառաջ կ'երթար : Բաղտունոս Գ. Երուսաղէմի թագաւորն աս չարեաց առջեւն առնելու հա-

Ճար բոլոր լատին իշխանները մոզմեց եւ պատրաստուեցաւ անոր դէմ ելլելու . եւ որովհետեւ Թորոս իր պատերազմական հմտութեան եւ բրած քաջութիւններուն համար շատ անուանի եղած էր, թագաւորն անոր ալ զեւպան խաւրեց ու հրախրեց որ ինքն ալ զօրքովն իրենց բանակը դայ, եւ միարան հասարակաց թշնամին վանեն: Թորոս առ պատգամաւորութիւնը շատ ուրախութեամբ բնդունեցաւ, եւ որովհետեւ, կ'ըսէ Ասիլիւրմս Տիւրացի, հզօր ու ժիր մարդ էր, շուտ մ'իր անհամար զնդերուն գլուխն անցած՝ Անտիոք քաղաքը թագաւորին բանակն եկաւ, որուն վրայ Լատինացիք սաստիկ ուրախացան, եւ յաղթութիւնն ստոյգ գնելով՝ բանակնին շարժեցին ու թշնամին զարկին. շատ քաղաքներ ալ ձեռքէն առին:

Հաղիւ թէ Թորոս առ արշաւանքն ալ բնեցընելով՝ իր յաղթական զօրքովը Ալիլիկա դարձաւ, նենգաւոր Յոյներն իրենց դաշինքն աւրեցին, ուստի եւ արի իշխանը զէնքն անոնց վրայ դարձուց եւ Անարզաբա քաղաքը՝ զորն որ հաշտութեան ատենը կայսեր տուած էր, պատերազմաւ նորէն ետ առաւ. նաեւ Մամեստիա (Մոպսուեստիա) քաղքին տիրեց: Աս բաներուն լուրը Կոստանդնուպոլիս հասածին պէս, կայսրը նորէն Թորոսին դէմ զինեցաւ, եւ ահեղ պատրաստութեամբ Անդրոնիկոս իշխանը Ալիլիկայի վրայ խաւրեց, որուն անհամար գանձեր տալէն զատ, հրաման տուաւ որ Կիպրոսի տուրքերն ալ ինքն առնու, որպէս զի կարող ըլլայ պատերազմին հարկաւոր եղած բաներն աղէկ հոգալ եւ թշնամւոյն զիւրաւ յաղթել: Եկաւ մտաւ Անդրոնիկոս Ալիլիկա, եւ բոլոր զօրութեամբ Մամեստիայի վրայ քալեց, ուր որ Թորոս իր զօրքը կենդրոնացուցած էր: Հոն սաստիկ եւ արիւնասեղ պատերազմ մ'եղաւ եւ Յունաց բանակը շարաշար յաղթուեցաւ, որուն պատմութիւնը յոյն պատմագիրները զանազան եղանակաւ կը պատմեն: Կիննամոսին պատմութեան նայելով՝ Անդրոնիկոս Մա-

մեափան ամէն կողմանէ պաշարեց, եւ անկէ ետքը ինքը զինքը կերուխօսով եւ զբօսանայ տալով՝ բօրբողին անհոգ կը կենար: Թորոս աս բանս դիտելով՝ մութ գիշերւան մը ժամանակ, երբ որ Երկինքէն սաստիկ տարափ կը տեղար, քաղքին ամէն զոները բանալ տուաւ, եւ յանկարծ դուրս յարձակելով՝ յունական բանակը զարկաւ ու խառնիխուռն փախուց: Անդրոնիկոս աս խառնակութեան մէջ շատ արատարոյ կարգի փորձերու ձեռք զարկաւ որ յաղթութիւնն ինքն ստանայ, բայց բան մը չկրցաւ բնել. եւ հոգի իրեն սպառնացող վտանգէն պրծելով՝ զօրացը մնացորդովն Անտիոք քաշուեցաւ: Այսպէս Աիննամոս, որուն նման կը պատմէ նաեւ Ասհրամ հայ պատմագիրը: Իսկ Նիկեոսա քոնիատոս առանց Մամեստիան յիշելու, կը պատմէ թէ Անդրոնիկոս Թորոսին հետ քանի մ'անգամ զարնուելէն ու յաղթուելէն ետեւ, վերջին անգամ դաշտի վրայ անոր հետ մեծ պատերազմ մ'ալ ըրաւ ու խայտառակութեամբ յաղթուեցաւ: Այսան զի, կ'ըսէ, աս զօրավարն իր զօրքն աղէկ կարգի դրած չէր, այլ խառնիխուռն շարած կեցուցած էր. ասոր հակառակ Թորոս իր զօրքը կարգաւորեալ գնդեր ու գումարտակներ բաժնելով՝ աղէկ դիրքով շարեց. մէկ մասն ալ դարանի դրաւ: Եւ երբ որ սկսան զարնուիլ, դարանամուտներն յանկարծ սաստիկ զօրութեամբ իրենց դարաններէն դուրս յարձակեցան, որոնց յարձակմանն Յունաց փաղանգները չկրնալով դէմ դնել, ցիր ու ցոս սկսան փախչիլ: Անդրոնիկոս այլայլած ու շփոթած՝ ձեռքի նիզակն ուղղեց ու ձին վազցրնելով՝ Թորոսին քովն եկաւ, որն որ իր առոյգ ձիուն վրայ նստած, իր թիկնապահներուն հետ հանդարտ կեցեր՝ հայ զօրքին թշնամին հալածելէն ետ դառնալուն կը սպասէր. զարկաւ նիզակն անոր վահանին ու զանիկա ձիէն վար ձգեց, եւ իր Երազութեամբն անոր թիկնապահներուն ձեռքէն պրծելով՝ փախաւ գնաց. բայց Թորոսին վնաս մը չկրցաւ

րնել, վասն զի անոր կարծի զրահն ու հսկոյածեւ վահանը նիզակին հարուածը պարապի հանեցին : Ասկէ ետքն Անդրոնիկոս բանակին մնացորդը ժողվեց եւ Անախըբ գնաց :

Մանուէլ կայսրն իր զօրքին յաղթուելուն գոյժն առածին պէս՝ Աստանդին Աարամանոս իշխանը նոր բանակով մը Աիլիկիա խաւրեց, հրաման առլով որ հոնտեղաց հայերը բոլորովին նուաճէ եւ անոնց տըրութիւնը ջնջէ : Բայց Թորոս իր յաղթական զօրքովը Տարսոն քաղքին քով անոր դիմացն ելլելով՝ զարկաւ յաղթեց, զինքն ալ գերի բռնեց, զորն որ ետքը կայսրը շատ գանձ տալով գերութենէ ազատեց :

ԺԱ. Թորոս աս յաղթութիւններով քաջալերուած՝ եւ տեսնելով որ յունական զօրքն իրեն դէմ գնելու կարողութիւն չունի, ժողվեց իր քաջ զօրքն եւ Աիլիկիային ամէն կողմն արշաւելով՝ իր ձեռքին տակ նուաճեց եւ տէրութիւնը մինչեւ ծովին եղերքն հասցուց : Անկէ դէպ ի արեւմուտք քալելով՝ Իսաւրիա գաւառին ալ տիրեց եւ այսպէս երկիրը գրեթէ կրկնապատիկ ընդարձակեց : Աս բաներուն լուրն հետզհետէ կայսեր ականջն հասնելով՝ զանիկա մեծ հողի մէջ ձգեց, վասն զի իր երկու մեծ բանակները Թորոսէն զարնուած ըլլալով՝ չէր կրնար շուտով նոր պատրաստութիւն տեսնել եւ անոր վրայ երթալ. ասոր համար Ղոնեայի (Իկոնիոնի) Գրլըճ Ասլան սուլթանին շատ ընծաներ խաւրեց ու յորդորեց որ Թորոսին վրայ ելլէ եւ զանիկա բռնէ : Սուլթանը Հայոց իշխանապետին հետ երդմամբ դաշինք դրած ըլլալով՝ աս բանէս հրաժարեցաւ, բայց ետքը կայսեր նորէն խաւրած մեծագին ընծաներովն եւ բրած մեծամեծ խոստմունքներովն անոր ուզածին հաւանեցաւ, եւ զօրքն առած յանկարծ Աիլիկիա մտաւ, եւ Անարկաբա քաղքին մօտ Թիլի ըսուած ամրոցը պաշարեց : Բայց հոն բանակին մէջ սաստիկ

ժանտախտ մ'իսկաւ ու զօրքին շատ կոտորած բրաւ .
անոնց մէկ գումարտակն ալ՝ որն որ իր Եպարուզ որդւոյն
տակ ասդին անդին տապատակութիւն կ'ընէր, Թո-
րոսին Ստեփանէ եղբայրը զարկաւ եւ շատերը՝ նաեւ
Եպարուզն ալ մէկտեղ սպաննեց, մնացածը ցրուեց :
Կոյն ժամանակն ինքը Թորոս ալ իր զօրքովը Վանեայի
կողմերն յարձակեցաւ եւ անկէ շատ տար ու գերի
տուած Աիլիկիա դարձաւ, ու վեհանձնութեամբ մ'ա-
նոնց ամենն ալ Գրքոճ Ասլանին պարգև խաւրեց :
Ասոր վրայ սուլթանը զօրքն առած իր Երկիրը քա-
շուեցաւ . բայց որովհետեւ կ'ուզէր իր յաղթուելուն
վրէժը Թորոսէն առնուլ, քիչ մը ժամանակ ետքը
նորէն Աիլիկիա յարձակեցաւ : Հայոց յաղթող զօրքն
իրենց քաջ իշխանին առաջնորդութեամբը շուտ
մ'անոր դէմ ելան եւ նորէն մեծ յաղթութեան նշան
կանգնեցին, որով սուլթանն ստիպուեցաւ Թորոսին
հետ հաշտութիւն ընել :

Ես պատերազմն ալ յաջողութեամբ լմրննալէն
ետել, Թորոս իր զէնքը նորէն Յունաց վրայ դար-
ձուց, անոնցմէ իր Ստեփանէ եղբորը վրէժն առնելու
համար : Ասան զի աս իշխանն ալ եղբորը նման քա-
ջութեամբ Յունաց հետ պատերազմելով՝ անոնցմէ
շատ քաղաքներ եւ նաեւ Գերմանիկ բերդն ալ
առած, եւ Սեաւ լեռնն ըսուած տեղն առանձին
իշխանութիւն մը հաստատած էր : Յոյները ծածուկ
զարան դրին ու բռնեցին զինքն եռացած կաթսայի
մէջ նետելով՝ սպաննեցին . եւ որովհետեւ աս սպա-
նութեան պատճառն Անդրոնիկոս Եւփերբենոս՝ Աի-
լիկիային Յունաց ձեռքը մնացած պզտիկ մասին կու-
սակալը կը կարծուէր, Թորոս անոր վրայ զնաց եւ
Յունաց իշխանութիւնը Աիլիկիայի մէջէն բուրովին
ջնջեց :

ԺԲ. Մ'անուէլ կայրը Աիլիկիայի մէջ եղած
բաները լսելով՝ պատրաստուեցաւ անձամբ Թորոսին
դէմ ելլել, եւ ուզելով որ յանկարծ անոր վրայ հասնի,

ձայն հասնեց թէ Պարսից վրայ պիտ'որ երթայ, եւ այսպէս սաստիկ արագութեամբ բանակը յառաջ քալեցուց, ու Աիլիկիայի սահմանն հասածին պէս յանկարծ ճամբան փոխեց եւ հոն մտաւ: Անտարակոյս Թորոս մեծ վտանգի մէջ կ'իյնար այսպիսի անակնկալ յարձակման մը դէմ անպատրաստ գանուելով՝ թէ որ բախտն իրեն օգնութեան չհասնէր: Ասան զի Լատինացի ուխտաւորներէն մէկն, որոնք Ս. Երկիրն երթալու համար լերանց եւ անտառներու մէջէն ոտքով ճամբայ կ'ընէին, կայսեր Աիլիկիայի սահմանը մանելը տեսնելով՝ աճապարեց Տարսոն եկաւ, ուր որ նոյն ժամանակը Թորոս կը կենար, ու բանն իմացուց: Արի իշխանն ասկէ շատ այլայլեցաւ, բայց մեկու մը բան մը չըտաւ, միայն Թովմաս ու Վեորդ իշխաններուն յայտնեց եւ շուտ մը լերանց վրայ գնաց ամրացաւ: Երկրորդ օրը կայսրը Աիլիկիա մտաւ ու Թորոսը տեղ մը չգտնելով՝ Լամոս ու Աիսարամոն քաղաքներուն վրայ գնաց եւ առաւ. անկէ յառաջ անցաւ եւ Անարզաբա ու Ղոնդինիատոն քաղաքներուն ալ տիրեց, նոյնպէս Թիլի ամրոցն ու Տարսոն ամուր քաղաքը նուաճեց եւ դարձաւ Մամեոսիա եկաւ: Հոն Բաղտուինոս Երուսաղեմի թագաւորն իրեն այցելութեան եկաւ, եւ տեսնելով որ կայսերական զօրքը քաղքէն դուրս բանակեր է, հարցուց տեղեկացաւ որ Թորոսին դէմ երթալու կը պատրաստուին. ինքը միջնորդ եղաւ եւ զԹորոս քովը կանչելով՝ կայսեր հետ հաշտեցուց:

Թորոս առ հաշտութենէ ետեւ 9 տարի ալ տէրութիւնը վարեց եւ իր իշխանութեան Չիւրորդ տարին խաղաղութեամբ վախճանեցաւ:

Թ Ո Վ Մ Ե Ս Պ Ա Յ Լ ՈՒ Մ Լ Ե Հ

ԺԳ. Թովմաս Թորոսին որդւոյն ու Կիլիկիայի տէրութեան յանձանձիւ կը գրուի (1168): Մլեհ անոր զէմ կ'ելլէ եւ Կիլիկիայէն դուրս ելլելու կը ստիպէ: ԺԴ. Մլեհ եղբօրն իշխանութիւնը կ'առնու. (1169) եւ իր սահմանակիցներուն զէմ պատերազմի կ'ելլէ: Լատինացի իշխաններն իրեն զէմ կ'ելլեն: ԺԵ. Մլեհին Յունաց վրայ ըրած յաղթութիւններն, իր կայսեր հետ հաշտուիլն եւ Հայոց զօրքէն սպաննուիլը (1174):

ԺԳ. ԹՈՐՈՍ մահուան անկողինն իյնալուն պէս, իր աները (ըստ Լատին պատմագրաց իր աղջկանը որդին) Թովմաս Պայն Անտիոքէն կանչեց, եւ իր զեռ անչափահաս որդին եւ բոլոր տէրութիւնն անոր յանձնեց: Երբ որ ինքը վախճանեցաւ, երկրին իշխանները Թովմասն իրենց գլուխ ճանչցան եւ ամէնն անոր հնազանդեցան: Բայց Մլեհ Թորոսին եղբայրն, որն որ ժամանակէ մը վեր Հալէպի Նուրատտին սուլթանին քովը կը կենար, եղբօրը մահը լսելով՝ սուլթանէն խնդրեց որ իր զօրացը մէկ մասն իրեն տայ, որպէս զի երթայ զԹովմաս վճռուէ եւ Կիլիկիայի տէրութիւնն ինքն առնու՝ եւ աս առաջարկութիւնն անոր ընդունելի ընելու համար անոր նպաստաւոր ու հաճոյական պայմաններ գրաւ: Նուրատտին խնդիրքն յանձն առաւ եւ իր բանակին մեծ մասը Մլեհին յանձնեց որ երթայ ու զածք գլուխ տանի: Արդ եկաւ Մլեհ բռնութեամբ իր հայրենեացը երկիրը մտաւ, եւ զանիկա այլազգի ու բարբարոս զօրաց ոտից կոխան ըրաւ. շատ գեղեր ու քաղաքներ ապականեց, եւ շատ տեղեր առպատակեց: Թովմաս աս առպատակութիւններն արգելելու բաւական զօրութիւն չունենալով, մանաւանդ որ իր գէշ վարմունքովն իշխաններուն հաճելի եղած չէր, քաշուեցաւ նորէն Անտիոք դնաց. իսկ Թորոսին

որդին շարամիտ մարդիկներու ձեռք իյնալով՝ սպաննուեցաւ :

ԺԳ. ՄԼԵՏ աս եղանակաւ եղբօրը տէրութիւնը բռնութեամբ ձեռք ձգեց, եւ անմիջապէս Տաճարականաց¹ Արիւիկայի մէջ ունեցած կալուածներն ու ստացուածները ձեռքերնէն առաւ եւ զիրենք երկրէն դուրս վաճառեց : Ասկէ ետքը Նուրատաինին ու Թուրքաց ցեղին իշխաններուն հետ նորէն դաշինք դրաւ, եւ անոնցմէ օգնութիւն առած իր սահմանակից քրիստոնեայ իշխաններուն դէմ պատերազմի ելաւ ու շատ տեղերու տիրեց. եւ որչափ որ թէ՛ պատերազմի եւ թէ՛ առած քաղաքներուն մէջ քրիստոնեայ կը բռնէր, զամէնն ալ անհաւատներու երկիր տանել կու տար եւ իրբեւ գերի կը ծախէր : Ատաինացի իշխաններն աս բաներուս անջեւն առնելու համար խորհրդի ժողովուեցան, եւ միաբան որոշեցին որ ՄԼԵՏին դէմ պատերազմի ելլեն, վասն զի անիկա բարբարոս թրշնամիներէն աւելի իրենց մնասաւար ըլլալու սկսած էր : Բայց երբ որ աս որոշումն Երուսաղէմի թագաւորը լսեց, ուզեց ինքը մէջ մտնել ու բանը խաղաղութեամբ լմնցընել. աս վախճանաւ քանի մը մարդով Անտիօք եկաւ ու ՄԼԵՏին դեսպան խաւրեց եւ առաջարկեց որ որոշեալ օր մը երկու կողմանէ սահմանուած տեղ մը դայ, եւ հոն իրարու հետ խօսելով՝ մէջերնին գտնեն : Աս վորձը քանի մ'անգամ ըրաւ, բայց ՄԼԵՏ ամենեւին չանսաց. ան ատեն ինքն ալ Ատաինական զօրքն առաւ Արիւիկա մտաւ, ու դաշտային տեղերն եւ անպարիսպ քաղաքներն ասպատակեց եւ աւարեց, ու որչափ ցորեն եւ ուրիշ երկրի բերք գտաւ, ամէնն ալ կրակի տուաւ : Աս գործողութեան մէջ եղած ատենը, յանկարծ գոյժ հասաւ որ Նուրատաին իր երկիրները մտեր է ու կ'ասպա-

¹ Տաճարականները տեսակ զատութեան համար պատեմը զինուորական կրօնաւորութիւնը պարտաւորութիւններ էին, որոնք Ս. Երկրին առնէին :

ասիկ, քանի որ բերդեր ալ պաշարեր է. շուտ մը կիլիկիայէն ելաւ եւ իր երկիրը պաշտպանելու գնաց, որով Մլէճ իրեն սպառնացող վտանգէն զերծաւ:

Ժ.Ե. Ըսկէ ետքը Մլէճ Յունաց հետ պատերազմելու սկսաւ, եւ անոնց շատ վնաս հասցուց: Իրեն դէմ եկաւ նախ Միքայէլ Բրանաս դուքսը, բայց բան մը չկրնալով ընել, իր տեղն Անդրոնիկոս Եւփերբենոսը խրկուեցաւ. բայց աս ալ չկրցաւ երեւելի գործք մը գործել: Անկէ ետեւ կայսրը հեղհեաէ կիլիկիայի վրայ շատ զօրապետներ խաւրեց, զորոնք Մլէճ միշտ զարկաւ ու յաղթեց: Ամենէն ետքն եկաւ Կոստանդին Կալամանոս, եւ իր զօրացը բազմութեամբը Հայոց շատ վնաս տուաւ, բայց վերջն ինքն ալ իր առաջիններուն նման չարաչար յաղթուեցաւ ու մեծ կորստով վաճառուեցաւ: Մլէճ աս յաղթութիւններուն վրայ վստահացած՝ Նուրատտինին, Լիկայոնիայի սուլթանին ու Գաղատիայի իշխանին հետ դաշնագրութիւն մ'ըրաւ եւ անոնց հետ մէկտեղ Յունաց դէմ նորէն պատերազմի ելաւ: Ան տանըր Մանուէլ կայսրը մեծ բանակով անձամբ իրեն դէմ եկաւ, բայց առանց զարնուելու իրարու դեպպաններ խաւրելով հաշտութիւն ըրին:

Երբ որ պատերազմները դադրեցան, Մլէճ իր չարասիրտ եւ անգութ բնութեամբն սկսաւ ժողովուրդը սառտիկ չարչարել ու տառապեցրնել: Չօրքն աս բանիս վրայ զայրացան ու Սոյ մէջ զարկին զինքն սպաննեցին Տ տարի իշխանութեան մէջ մնալէն ետեւ:

Գ Լ Ո Ւ Խ Է

Ռ Ո Ւ Բ Ե Ն Ի .

ԺԶ . Ռուբեն Կիլիկիայի իշխան կը գրուի (1174) : Անտիոքի իշխանէն կը բռնուի ու կը բանտարկուի : Իր Լեւոն եղբայրը զինքը կ'ազատէ : Ռուբեն իշխանութենէն կը հրաժարի (1185) եւ Լեւոնն իր տեղը զնելով՝ ինքը վանք կը քաշուի :

ԺԶ . ՍԼԵՆԻՆ սպաննուելէն ետքը՝ Հայոց իշխաններն անոր Ստեփանէ եղբորը որդին Ռուբենը կանչեցին եւ իրենց գլուխ ու իշխանապետս դրին, որն որ տէրութիւնը խաղաղութեամբ վարեց եւ իր իմաստութեամբն ու բարութեամբը շատ անուանի եղաւ : Իր ժամանակը Կիլիկիա արտաքին թշնամեաց յարձակումէն ազատ մնաց եւ ժողովուրդն Երջանիկ հանգստութիւն մը վայելեցին :

Իր իշխանութեան առաջին տարիները, Պեմունդ Անտիոքին իշխանն իրեն հետ բարեկամութիւն հաստատեց, ու Տարսոն քաղաքը՝ զորն որ ինքը Յոյներէն առած էր, ստիով իրեն ծախեց, որովհետեւ Տարսոն Ռուբենին երկրին մէջ եւ Անտիոքէն շատ հեռու բլաւով՝ ինքը չէր կրնար զանիկա դիւրաւ կառավարել : Բայց շատ ասան շանցաւ ասոնց բարեկամութիւնն աւրուեցաւ, որուն պատճառն եղաւ Հեթում՝ Լամբրոն բերդին իշխանը : Ասիկա շնչին բանի մը համար Ռուբենին հետ թշնամանալով՝ Ռուբեն անոր վրայ գնաց ու Լամբրոնը պաշարեց : Հեթում նեղն ինկաւ եւ ազատութեան ուրիշ հնարք չգտնելով՝ Պեմունդի գաղտուկ մարդ խաւրեց եւ օգնութիւն խնդրեց : Իշխանը շուզեց Ռուբենին դէմ յայտնի պատերազմ բանալ, ասոր համար նենդութեան ձեռք զարկաւ, որուն գործիք առաւ իր անոր հետ ունեցած բարեկամութիւնն, եւ շուտ մ'անոր զեւպան խաւրելով՝ կողունքի հրաւիրեց : Ռուբեն բանէ

մը կատկած չունենալով՝ ելաւ անոր քովը զնաց, բայց յանկարծ Պեմունդին մարդիկը զինքը բռնեցին եւ Անտիոքի մէջ բանտարկեցին: Պեմունդ երբ որ տեսաւ որ իր նենգութիւնն այսպէս դիւրաւ յաջողեցաւ, միտքն ուրիշ խորհուրդ մ'ինկաւ, այսինքն Ռուբենին բոլոր երկիրներն իր տակը նուաճել. կը կարծէր որ Աիլիկիա անտէրունչ մնացած ըլլալով՝ կրնայ իր աս խորհուրդն ալ դիւրութեամբ գլուխ տանիլ: Բայց բանն իր կարծածին պէս չկատարուեցաւ. վասն զի Լեւոն, Ռուբենին եղբայրն՝ անոր բռնուելուն վրայ զայրացած՝ ժողվեց Հայոց զօրքն եւ երկիրը թրշնամեաց դէմ քաջութեամբ պաշտպանեց եւ անոնց իր սահմանէն անցնելու թող չտուաւ. նաեւ Լամբրոնի իշխանէն ալ՝ որն որ եղբորը բռնուելուն բուն պատճառն էր, վրէժ առնելու համար, զնաց անոր բերդը սաստիկ պաշարեց եւ այնչափ նեղը ձգեց որ Հեթում մ ստիպուեցաւ իրմէ թողութիւն խնդրել ու հաշտութիւն ընել: Ասկէ ետքը Պեմունդին շատ ստակ խաւրելով՝ եղբայրն ազատեց ու Աիլիկիա բերաւ:

Ռուբեն նորէն իր աթոռը դառնալով՝ սկսաւ ժողովուրդն աւելի եւս հոգալ ու խնամել, եւ զանոնք միշտ խաղաղ ու հանդիստ պահելու փոյթ ունեցաւ: Աս եղանակաւ 11 տարի իշխանութիւնը վարելէն ետեւ, կառավարութիւնն իր Լեւոն եղբորը ձգեց, եւ ինքը վանք քաշուեցաւ կրօնաւոր եղաւ, ուր կենացը մնացած քիչ ժամանակը ճգնութեամբ եւ աւաքինի գործքերով անցընելով՝ բարի մահուամբ վախճանեցաւ ու Գրազարկ վանքը թաղուեցաւ:

ԺԷ. Լեւոնին՝ իշխանութեանն առաջին տարիներն ըրած զործ-
քերը. Ղոնեայի սուլթանին յաղթելն, Իսաւրիա պաւստին
տիրելն եւ Հալէպի սուլթանին վրայ ըրած յաղթութիւնը
(1186): ԺԸ. Ասորիքի մէջ պատահածները. Փրեզերիկոս
կայսեր Ասիա արշաւելն ու Լեւոնին անոր զօրաց ըրած օղ-
նութիւնը: ԺԹ. Լեւոնին թագաւոր պսակուելը (1198):
Ի. Անտիոքի իշխանութեան յաջորդութեան պատճառաւ
Լեւոնին ու Տրիպոլոյ կոմսին մէջ ծագած գժտութիւնը
(1199): Տաճարականաց Լեւոնին դէմ ըրածները. Լեւոնին
անոնց դէմ ելլելն եւ Իննովկենտիոս Փ. քահանայապետին
թուղթ գրելը: Պատգան զղեկին խնդիրը: Լեւոն իր թշնա-
մեաց երկիրը կ'ասպատակէ. Ղոնեայի սուլթանին վրայ յաղ-
թութիւն կ'ընէ եւ Հասմ քահանայապետին դեսպան կը
խաւրէ: ԻԱ. Իննովկենտիոս քահանայապետը Սոփրեա ու
Պետրոս կարգինալներն Անտիոքի խնդրոյն դատաւոր կը
կարգէ: Լեւոն նորէն Անտիոքի վրայ կը յարձակի: Տա-
ճարականներն Հայոց դէմ նենդութիւն կ'ընեն, Լեւոն զա-
նոնք Կիլիկիայէն դուրս կը վաճառէ: ԻԲ. Պետրոս կարգինալը
Լեւոնն եւ իր երկիրը կը նզովէ. Հայոց կաթողիկոսը չուզեր
նզովքն հրատարակել: Սոփրեաին Լեւոնն ու Տրիպոլոյ կոմսն
իրարու հետ հաշտեցընելու ջանքը. կոմսին անոր անսալ
չուզելն ու Լեւոնին նորէն քահանայապետին բողոքելը (1205):
Քահանայապետին՝ Անտիոքին խնդիրն ուրիշ գատաւորներու
յանձնելը: ԻԳ. Անտիոքայ վեճին դադրիլը (1211): ԻԴ. Լեւոն
Կիպրոսի թագաւորին աղջկանը հետ կը պսակուի (1210).
Իրեն դարանող թշնամիներուն կը յաղթէ եւ զէթում
Լամբրոնին ասպատակը իշխանը կը բռնէ: ԻԵ. Հալէպի սուլ-
թանը Կիլիկիա կը յարձակի, Լեւոն անոր կը յաղթէ (1212):
ԻԶ. Լեւոնին Ղոնեայի սուլթանին հետ ըրած պատերազմն
ու հաղտութիւնը (1216): ԻԷ. Լեւոնին մահն (1219) եւ
իր թաղման համար եղած հակառակութիւնը:

ԺԸ. ԵՒՄՆ՝ Ռուբենին եղբայրն, որն սր անոր
կենդանութեան ատենը Կիլիկիայի իշխանութեան
գահն ելած էր, իր քաջութեամբն եւ աստուածպաշ-
տութեամբն իր նախորդներէն աւելի փառաւոր եւ
անուանի եղաւ, եւ իր իմաստութեամբը՝ հարե՛նեացը

տէրութիւնը մեծցուց ու պայծառացուց : Իրեն սահմանակից իշխաններուն դէմ՝ պատերազմի ելաւ եւ անոնց շատ քաղաքներուն տիրեց . շատերն ալ իրեն հարկատու բլաւ , որով իր թշնամիներուն ահարկու եղաւ : Աւելին աւ յաղթութիւնները Ղոնեայի սուլթանը անսնելով՝ սկսաւ կասկածիլ որ գուցէ անիկա զէնքն իր վրայ ալ կը դարձնէ . անոր համար զօրքը ժողովեց եւ յանկարծակի Ալիլիկիա յարձակեցաւ , յուսալով որ զանիկա անպատրաստ գտնելով՝ կրնայ յաղթել ու նուաճել : Աւելն թէպէտ եւ թշնամոյն զօրութեանը համեմատ պատրաստութիւն չունէր , բայց իր անվեհեր քաջութեամբը քովն եղած քիչնոր զօրքով անոր դէմ ելաւ եւ յաղթեց . սուլթանն ալ խառնուրդին մէջ հայ զօրքէն զարնուեցաւ մեռաւ : Աւելն անկէ դէպ ի արեւմուտք դարձաւ եւ Իսաւրիա գաւառը նորէն իր իշխանութեան տակ նուաճելէն ետեւ , արեւելեան կողմը քալեց եւ հոն ալ շատ քաղաքներու տիրեց . եւ որովհետեւ Հալէպի ու Շամի սուլթանը մեծ պատրաստութեամբ Ալիլիկայի վրայ կու գար , անոր վրայ գնաց եւ զարկաւ վառնաեց : Տէրութիւնն այսպէս ամէն կողմանէ ընդարձակելէն եւ ապահովցրնելէն ետքը , բոլոր մտադրութիւնն երկիրը բարեկարգելու դարձուց , ու շատ շինութիւններով զանիկա զարգարեց : Սահմանագլուխները շատ ամրոցներ ու դղեակներ շինել տուաւ որ տէրութիւնը թշնամոյն յարձակմանէն պաշտպանուի . տեղ տեղ ուրկանոցներ հաստատեց եւ բոլոր բորտաներն՝ որոնք յառաջագոյն անդարման մնացած էին , անոնց մէջ ժողովեց եւ անոնց առատ ուժիկ կապեց . շատ ալ վանքեր շինել տուաւ , եւ ամենուն մասնաւոր մուտք հաստատեց :

ԺԸ. Բայց ան ժամանակն որ Ալիլիկիա իր արթուն ու հսկող իշխանին խնամակալութեանը տակ , խորին խաղաղութիւն մը կը վայելէր , Ասորիքի ու Պաղեստինի կողմերն ահագին պատերազմի մը մէջ կը ծփար :

Որովհետեւ աս ատեններս Սալտահն Լոյիպտոսի սուլթանը սաստիկ զօրանալով՝ լատին իշխաններուն մէջ ծագած խռովութենէն եւ երկպառակութենէն առիթ առած, ահագին պատրաստութեամբ անոնց վրայ յարձակեցաւ, եւ քանի մ'անգամ անոնց յաղթելէն ետքը, Երուսղէմն ալ առաւ ու Պաղեստինի եւ Ասորոց մեծ մասին տիրեց: Աս բոթալից լուրը Եւրոպայի թագաւորներուն հասածին պէս՝ նորէն անհամար խաչակիր զօրք պատրաստեցին, եւ Փրեդերիկոս Ա. Գերմանացոց կայսրն անոնց գլուխն անցած՝ Ասիա արշաւեց, քանի մը տեղ այլազգի իշխաններուն զօրքը զարկաւ եւ յաղթութեամբ յառաջ գալով՝ Ղոնեա քաղաքն ալ առաւ: Անկէ Լեւոնին դեսպան խաւրեց եւ հրաւիրեց որ ինքն ալ զօրքն առած՝ Խաչակրաց բանակը գայ, որպէս զի միաբան Ս. Երկիրն երթան եւ զանիկա թշնամւոյն ձեռքէն ազատեն. կաթողիկոսին ալ աս բանիս յորդորիչ ըլլալու համար մասնաւոր դեսպան խաւրեց: Լեւոն արդէն ասկէ յառաջ Աղեմէս Քահանայապետին իրեն ու կաթողիկոսին գրած նամակներն առած ըլլալով՝ երբ որ դեսպաններն ալ եկան եւ կայսեր հրաւերը ծանուցին, շուտ մը կաթողիկոսը Տարսոն կանչեց եւ անոր հետ մէկտեղ Միսիս քաղաքը գնաց, ու կայսեր նամակ մը գրելով ծանոց որ ինքը Միսիսի մէջ իր գալուն կը սպասէ: Նոյն ատենը լուր առաւ որ կայսերական բանակին կերակուրը պակսեր է, եւ զօրքը մեծ նեղութեան մէջ են. անմիջապէս Ալիլիկային ամէն կողմը հրաման խաւրեց եւ շատ պաշար ժողվել տալով՝ կայսեր խրկեց:

Փրեդերիկոս Լեւոնին իրեն ըրած օգնութեան վրայ սաստիկ ուրախացաւ, եւ անոր թուղթ մը գրելով խոստացաւ որ զինքը թագաւոր պսակէ, ու բանակն յառաջ շարժելով՝ Իսաւրիա մտաւ, ուր Լեւոն՝ կաթողիկոսին հետ զինքը դիմաւորելու գնաց: Բայց դեռ հոն չհասած՝ կայսեր աղէտալի մահուան գոյժն

առաւ. վասն զի Փրեդերիկոս լուացուելու համար Աւելեկիայի առջեւէն անցնող դեար մանելով եւ շկրնաւով ջրին սաստկութեանը դէմ դնել, հան խղզուեցաւ:

ԺԹ. Աս դժբախտ դեպքը թէպէտ եւ բոլոր Հայոց մեծ արտմութիւն պատճառեց, որոնք անյագ բաղձանքով իրենց սիրելի իշխանին թագաւորական պսակով պսակուելուն կը սպասէին, բայց քանի մը տարի ետքն իրենց արտմութիւնը փարատեցաւ եւ բաղձանքնին մեծ փառաւորութեամբ կատարուեցաւ:

Վասն զի Ալեոն իր ամէն կողմանէ ունեցած յաջողութիւնները անտեսելով եւ Փրեդերիկոս կայսեր խոստումն ալ միշտ միաքն ունենալով, իր իշխաններուն հետ խորհուրդ բրաւ եւ Ալեզեստինոս Գ. Քահանայապետին դեսպանի ձեռքով նամակ մը խաւրեց, եւ անկէ խնդրեց որ իրեն թագաւորական պատիւ տայ. նամակ մ'ալ Հենրիկոս Զ. կայսեր՝ Փրեդերիկոսին որդւոյն խրկեց, որուն մէջ անոր հօրն ըրած խոստումը յիշեցրնելով կը խնդրէր որ ինքը նոյն խոստումն կատարիչն ըլլայ: Քահանայապետը Ալեոնին դեսպանը սիրով ընդունեցաւ, եւ կայսեր հաւանութեամբ Մոզունտիայի արքեպիսկոպոս Աոնրադոս կարդինալին փառաւոր թագ մը տուաւ ու Ալիլիկիա խրկեց որ Վլեոն հանդիսի թագաւոր պսակէ: Ալեոն Աոնրադոսին Ալիլիկիա հասնիլն իմացածին պէս, ամէն մտաւոր դաւառները դեսպան խաւրեց ու բոլոր եկեղեցական եւ աշխարհական մեծամեծներն հրաւիրեց որ գան իրեն օժման հանդէսին ներկայ ըլլան: Ըուտ մ'ամէն կողմանէ անհամար եպիսկոպոսներ, վանահայրներ եւ երեւելի իշխաններ եկան Տարսոն՝ Ալիլիկիայի նոյն ժամանակեան մայրաքաղաքը ժողովուցան, եւ Մկրտութեան տօնին օրը քաղքին Ս. Ստիխասյր եկեղեցւոյն մէջ մեծ ու փառաւոր հանդիսութեամբ Ալեոնը թագաւոր օծեցին: Օժման հանդէսը լմնալէն ետքը, Աոնրադոս Վլեոն Անտիոքի Պեմունգ իշխանին հետ հաշտեցրնելու ետեւէ եղաւ:

որովհետեւ քանի մը տարի յառաջ ան երկու իշխաններուն մէջ թշնամութիւն մը ծագած բոլորով Վեռն զՊեմանդ բռնած՝ Սոյ բերդին մէջ բանտարկած էր, եւ իր անխոնջ ջանքովը գլուխ տարաւ, եւ անոնց մէջ բարեկամութիւն հաստատեց:

Վեռնին թագաւոր պատկուելն երբ որ շրջակայ ազգաց իշխանները լսեցին, ամէն ուրախացութեան համար անոր դեսպաններ ու ծանրագին բնձաներ խաւրեցին. նաեւ Ալեքս Անգեղոս Յունաց կայսրն ալ փառաւոր թագ մը խրկեց:

Վեռն արքայական ակթուն ելածին պէս՝ սկսաւ տերութիւնը նոր կարգի մը մէջ խոթել եւ անոր թագաւորական կերպարանք տալ: Նախ արքունի քաղաքը փոխեց ու Սիս քաղաքը տերութեան մայրաքաղաքն ըրաւ, եւ հոն իր անուամբն ու պատկերովն ստակ տպելու սկսաւ: Պալատին պաշտօնները բարեկարգեց եւ շատ նոր թագաւորութեան հարկաւոր պաշտօնատէրներ դրաւ: Աս ամէն բան կարգի դնելէն ետքը, հարկ համարեցաւ իր Հռոմաց Քահանայապետէն բնդունած պատուոյն համար՝ անոր իր շնորհակալութիւնը նշանով մը յուցընել. եւ որովհետեւ կեղեւտինոս նոյն տարին վախճանած էր, անոր յաջորդն Իննովկենատիոս Գ.ին յարգութեան ու հպատակութեան նամակ մը եւ շատ մեծագին բնձաներ խրկեց: Աստուծով նաեւ Գրիգոր կաթողիկոսն ալ Քահանայապետին հպատակութեան նամակ գրեց, որոնց Իննովկենատիոս նոյն տարին պատասխան տուաւ:

Եւ թղթակցութիւնն եղած տարին, յանկարծ Անտիոքի իշխանութեան յաջորդութեան պատճառաւ մեծ վէճ մը ծագեցաւ որն որ երկուսն ատեն շատ վնասներու եւ արիւնհեղութեան պատճառ եղաւ: Վէճին բուն սկիզբը Ռայմոնտոս իշխանին մահուանէն անմիջապէս ետքն սկսաւ: Որովհետեւ ար Ռայմոնտոս Պեմանդին Անտիոքայ տիրող իշխանին որդին էր եւ Վեռնին եղբօրը աղջկանն՝ Ալիզային հետ ամուս-

նայած ըլլալով՝ անկէ Ռուբեն անունով որդի մ'ունեցած էր: Երբ որ ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ եւ իմացաւ որ մահը մօտ է, կանչեց իր հայրն եւ աղաչեց որ յաջորդութեան իրաւունքն՝ որն որ ըստ օրինաց իրեն կ'իյնար, իր որդւոյն Ռուբենին տայ: Հայրն անոր աղաչանքն ընդունեցաւ, եւ որդւոյն մահուանէ ետքը, Ռուբենն իր առջեւը կանչելով՝ բոլոր իր տէրութեան իշխաններուն առջին հրատարակեց որ անիկա իր յաջորդը պիտ'որ ըլլայ: Ասկէ ետքն ամենուն ալ խաչի եւ աւետարանի վրայ հաւատարմութեան երդում ընել տուաւ: Բայց Տրիպոլսի կոմսը՝ վախճանեալ Ռայմոնտոսին եղբայրը, կարծելով՝ թէ եղբորը մեռնելէն ետեւ Անտիոքի իշխանութիւնն իրեն կ'իյնայ, եւ աս գործքով ինքն իր իրաւունքէն զրկուեցաւ, Տաճարականաց եւ Ասպնջականաց հետ միաբանեցաւ եւ Ղեւոնիմ գէմ պատերազմի ելաւ, որովհետեւ անիկա Ռուբենին գլխաւոր պաշտպանն էր. եւ քանի մ'անգամ անոր հետ զարնուելէն ու յաղթուելէն ետեւ, զէնքն Անտիոքի վրայ դարձուց, եւ իր հայրը Պեմունդն եւ անոր հաւատարիմ մնացող իշխաններն անկէ վռնտեց: Ասկէ ետքը քաղքին բնակիչները սուտ խօսքերով համոզեց որ իշխանութեան օրինաւոր ժառանգն ինքն է, նաեւ շատ ստակ տալով հաւանեցուց որ իրենց տիրոջն բրած երդումներնուն գէմ՝ իրեն հաւատարմութեան երդում ընեն: Ղեւոն աս բանիս լուրն առածին պէս, զօրքն առաւ Անտիոք աճապարեց, Պեմունդը նորէն իր աթոռը նստեցընելու համար. եւ միանգամայն Ռոպերդոս Մարկատեանը Հռոմ Քահանայապետին խաւրեց եւ ամէն բան տեղն ի տեղը պատմելով՝ դատին որոշումն անոր յանձնեց:

Արբ որ ինքը Տրիպոլսոյ կոմսին հետ կը պատերազմէր որ զանիկա Անտիոքէն վռնաւ, իր դեսպանը Հռոմէն դարձաւ ու Քահանայապետէն նամակ մը բերաւ, որուն մէջ Իննովկենտիոս կը խոստանար որ դատն իր

նոյն օրերն արեւելք գալու հրեշտակներուն կը յան-
 ձնէ. միանգամայն կը յորդորէր որ պատերազմը գա-
 դրեցրնէ, մինչեւ որ հրեշտակները գասն որոշէն :
 Գեապանն աս նամակին հետ Ս. Պետրոսի դրօշն ալ
 բերաւ, զորն որ Քահանայապետն իրեն ընծայ կը
 խրկէր, պատուէր տալով որ զանիկա միայն անհաւատ-
 ներու դէմ բրած պատերազմներուն մէջ գործածէ :
 Եւ որովհետեւ նոյն ատենները Գասդոն դղեկին պատ-
 ճառաւ Լեւոնին ա. Տաճարականաց մէջ ալ գժտու-
 թիւն մը ծագած էր, Քահանայապետը թագաւորին
 աս բանիս համար ալ զատ նամակ մը գրեց, որով անոր
 խրատ կու տար որ նոյն դղեակը Տաճարականաց ետ
 դարձրնէ. վասն զի զանիկա սարակիներն իրենցմէ
 առած եւ ետքը խաչակրաց նոր արշաւանքէն վախ-
 նալով թող տուած էին, զորն որ Լեւոն գատարկ
 գտնելով իր զօրքովը բռնած էր, համարելով որ անիկա
 յառաջագոյն Մլէհին իր հօրը հօրեղբօրն էր : Բայց
 աս նամակը Տաճարականաց առաջնորդին խրկեց որ
 Լեւոնին տայ : Զատ նամակ մ'ալ գրեց Քահանայա-
 պետը Տրիպոլոյ կոմսին ու պատուիրեց որ ուրիշին
 իրաւունքէն ետ կենայ : Բայց աս պատուէրն օգուտ
 մը չբրաւ, ու խնդիրն երթալով աւելի եւս սաստկա-
 ցաւ : Վասն զի Տրիպոլսի կոմսն եւ Անտիօքացիները
 տեսնելով որ չեն կրնար իրենք առանձին Լեւոնին
 զօրութեանը դէմ դնել, Ղոնեայի Ռուզնատին սուլ-
 թանին դեսպան խաւրեցին եւ անոր հետ դաշինք
 դնելով՝ որոշեցին որ ինքը մէկ կողմանէ, իրենք ալ
 միւս կողմէն Լեւոնին վրայ ելլեն եւ զանիկա բոլորովին
 յաղթահարեն : Լեւոն աս բանս իմանալուն պէս լըր-
 տեսներ խաւրեց որ կոմսին դեսպանները բռնեն,
 որոնք զանազան հնարքներով զանոնք ձեռք ձգեցին
 ու բռնադատելով՝ իրենց դեսպանութեան վախճանն
 յայտնել տուին : Ասոր վրայ թագաւորը սաստիկ բար-
 կացած՝ նորէն Անտիօքի վրայ քալեց եւ հակառա-
 կորդներուն երկիրն երեք ամիս շարունակ աւրջտրկեց :

բայց ետքն անոնց հետ առժամանակեայ զինադադար մը հաստատելով՝ բարբ զօրքովը Ղանեայի սուլթանին վրայ դարձաւ՝ որն որ ահագին բանակով դէպ ի Ալիկիա յառաջ կու գար : Տաճարականաց ալ 20,000 բիւզանդեան ոսկի խաւրեց որ դան իրեն հետ միանան եւ մէկտեղ հասարակաց թշնամին վանեն : Անոնք յօժարութեամբ յանձն առին եւ մինչեւ Անտիոք եկան, Ղեւոն ալ զանոնք դիմաւորելու համար նոյն կողմերը գնաց, ուր անոնց առաջնորդը Քահանայապետին Գաադանի համար գրած նամակն իրեն սուսաւ : Ասոր վրայ թագաւորը նոյն առաջնորդին հետ խօսելով՝ մէջերնին որոշեցին որ երկու կողմն ալ Քահանայապետին հրեշտակ խաւրեն եւ աս դատին որոշումն ալ անոր յանձնեն : Տաճարականներն երբ որ այլազգեաց ահագին զօրութիւնը տեսան, չուզեցին Ղեւոնին հետ անոնց դէմ պատերազմի երթալ, ու խաւրած զօրքերնին ետ կանչեցին : Ղեւոն աղաչեց որ դոնէ ինքը թշնամւոյն վրայ դացած ատեն, իրենք Ալիկիան պահպանեն : Տաճարականներն աս ալ յանձն չառին : Բայց թագաւորն իր բանակովը թշնամւոյն յաղթեց, եւ անմիջապէս Տելտոնեան կարգէն Գեռներիոս զեւնուորը նամակով մը Քահանայապետին խրկեց, եւ ամէն բան պատմելով՝ Տաճարականաց եւ Անտիոքացիներուն բրածներուն վրայ տրտունջ բրաւ :

ԻԱ. Քահանայապետն՝ ինչպէս որ իր նամակին մէջ խոստացած էր, Անտիոքի խնդրոյն դատաստանը Սոփրեա ու Պեարոս կարդինալներուն յանձնեց, զորոնք ինքն հրեշտակութեամբ արեւելք կը խաւրէր : Ասոնք երբ որ Ասիա եկան, Ղեւոնին եւ Անտիոքացոցնց մէջ պատերազմը նորէն աւելի եւս սասակուած թեամբ սկսած էր : Սոփրեա անմիջապէս սկսաւ իրեն յանձնուած պաշտօնն ի դործ դնել, եւ որովհետեւ Ղեւոն Անտիոքին առջեւ բանակը դրած՝ քաղաքը կը զարնէր, անոր աղաչեց որ քիչ մը ժամանակ պատեւրազմը գաղբեցընէ, մինչեւ որ իրեն հետ խօսի : Ղեւոն

Յ օր զինադադար շնորհեց եւ նոյն միջոցին Սփրեա
իրեն գալով՝ զինադադարն 9 օր ալ երկնցընել առաւ :
Բայց կարգինալին ամէն ջանքը պարապի զնայ, վասն
զի թէպէտ եւ Լեւոն ինքը զինքը բոլորովին անոր
դատաստանին յանձնեց, եւ անոր որոշմանը գլխ
ծուելու պատրաստ ցուցուց, բայց հակառակորդ
կողմն ամէն լատին իշխաններն իրեն կողմնակից
ունենալով՝ Սփրեաին պատասխան տուաւ որ ան
խնդիրը ոչ քեզի ոչ ալ Հռոմայ եկեղեցւոյն կը վերա-
բերի, եւ այսպէս կարգինալը բան մը չկրնալով ընել
Մարգատ քաղաքը զնայ : Լեւոն տեսնելով որ խըն-
դիրը դատաստանաւ որոշուելիք չունի, ուղեց ինքն
իր սրտին որոշել. ուստի Անտիոքին վրայ յարձակում
բրաւ եւ գիշերանց անոր պարսպին մէկ կողմանէ ներս
մտաւ. բայց իմանալով որ շատ արիւն պիտ'որ թա-
փուի, քաղքին հայրապետը կանչել տուաւ եւ
աղաչեց որ իրեն ու քաղաքացւոց մէջ միջնորդ ըլլայ
ու հաշտութիւն ընել տայ : Գեւ աս խօսակցութիւնն
ըլլալու ատենը, յանկարծ Տաճարականներն որոնց
հետ Լեւոն հաշտութիւն ըրած էր, սկսան աշտա-
րակներէն Հայոց զօրքին վրայ նետ թափել եւ անոնց
շատ վնաս տուին : միանգամայն Հովպի սուլթանին
հետ դաշինք դրին եւ զանիկա ալ թագաւորին դէմ
հանելոյին : Ասոր վրայ Լեւոն զայրացած՝ Արիլիկա դար-
ձաւ, եւ անմիջապէս իր տէրութեանը մէջ գտնուող
Տաճարականաց կալուածներն ու ստացուածները
ձեռքերնէն առնելով՝ զամէնն ալ իր երկրէն դուրս
վաճառեց :

Ի Բ. Նոյն ժամանակը Պետրոս կարգինալն Անտիոք
եւ անկէ Արիլիկա եկաւ Սփրեաին անկատար թո՞-
ղունցած գործքն յառաջ տանելու համար, եւ Լեւոն
նին ու Տաճարականաց մէջ ծագած նոր գժտութիւնն
իմանալով՝ ուղեց նախ զանիկա խաղաղքընել : Բայց
որովհետեւ ինքն ու ելի վերջիններուն կողմն էր, ան-
ձամբ Լեւոնին եկաւ եւ ստիպեց որ Տաճարականաց

ինչքը նորէն իրենց դարձրնէ, որուն Լեւոն պատասխան տուաւ. Պատրաստ եմ քու հրամանդ կատարելու, միայն աս պայմանաւ որ Տաճարականներն ասկէ ետքը Անտիոքի խնդրոյն մէջ չխառնուելու խօսք տան: Բայց անոնք աս պայմանն յանձն չառնելով՝ թագաւորն ալ անոնց կարուածներն ետ դարձրնել չուզեց: Պետրոս քանի մ'անգամ ալ թէ նամակով թէ գեսպանի ձեռքով զԼեւոն ստիպելով՝ երբ որ միշտ նոյն պատասխանն առաւ, քանի մը եպիսկոպոսոսաց հետ ժողովք ըրաւ, ու զթագաւորն եւ բոլոր անոր երկիրը նզովեց. Յովհաննէս կաթողիկոսին ալ հրաման խրկեց որ աս նզովքն իր վիճակին մէջ հրատարակէ: Ասթուղիկոսն այլայլած՝ իր արքեպիսկոպոսները ժողովքի կանչեց, եւ անոնց հետ խորհուրդ ընելով որոշեց որ նզովքը չհրատարակէ. Լեւոն ալ Քահանայապետին բողբեց: Սոփրեա կարդինալը Պետրոսին աս գործքին վրայ շատ դժկամակեցաւ, եւ ինքը մէջ մանելով՝ նոյն կարդինալին հետ մէկտեղ Լեւոնը Տաճարականաց հետ հաշտեցուց:

Պետրոս ասկէ ետքն Անտիոքի խնդրոյն ձեռք զարկաւ ու շատ ջանաց որ երկու կողմն ալ դատն իրեն եւ Սոփրեաին յանձնեն. բայց երբ որ անկարելի եղաւ, յանուն Քահանայապետին պատուիրեց որ պատերազմն երկու կողմանէ՛ ալ դադրեցընեն, եւ դարձաւ Ակկոն քաղաքը գնաց: Հոն Երուսաղէմի թագաւորին եւ ուրիշ մեծամեծ իշխաններուն հետ խորհուրդ ընելով՝ որոշեցին որ ամէնը մէկտեղ երկու կողման ալ դեսպան խաւրեն եւ ստիպեն որ զիրենք առանց պայմանի իրենց դատաստանին յանձնեն, եւ իրենց վճիռն հաստատուն պահելու երաշխաւորութեան համար պատանդ տան. եւ որ կողմն որ աս բանս յանձն չառնու, ամէնը մէկտեղ անոր դէմ ելլեն ու հալածեն, նաեւ եկեղեցական նզովքով ալ պատժեն: Աս դեսպանութեան ընտրուեցաւ Արեմնացուոց եպիսկոպոսն, որուն ձեռքը կարդինալները նամակ մը տուին հակառակող կողմանց

ցուցրնելու համար . հրաման ալ տուին որ Եթէ անոնցմէ մէկն իրենց անսալ չուզէ , անմիջապէս իրենց կողմանէ գանդիկա նզովէ : Լեւոն կարգինալաց գեսպանը մեծարանօք ընդունեցաւ , եւ յանձն առաւ 40 օր զինադադար ընել , նաեւ գեսպան ալ խրկեց որ իր կողմանէ խօսի . իսկ հակառակորդ կողմը կարգինալաց պահանջածը յանձն չառաւ , եւ՝ ոչ անձամբ ոչ ալ գեսպանով ուզեց անոնց հետ խօսիլ : Ան ատեն Լեւոնին գեսպանը կարգինալներէն պահանջեց որ ըստ իրենց որոշմանը Տրիպուլոսը կոմսը նզովեն եւ անոր օգնութիւն ընելէն ետ կենան . բայց Պետրոս զանազան պատճառանքներով աս բանէս ետ կեցաւ : Սոփրեա տեսնելով որ Լեւոնին գեսպանին խնդրածն արդար եւ իրաւացի է , որովհետեւ Ակհոնի մէջ Երուսաղէմի թագաւորին եւ այնչափ իշխանաց միաբան հաւանութեամբն որոշուած էր որ իրենց շանսացողը պատժուի , կ'ուզէր որոշումն ի գործ դնել , բայց Պետրոս ամենեւին անոր չհաւանեցաւ , եւ այսպէս խնդիրը դարձեալ չկրցաւ որոշուիլ :

Ասոր վրայ Լեւոն նորէն Քահանայապետին թուղթ գրեց , եւ ամէն բան կարգաւ պատմելէն ետեւ՝ Պետրոսին վրայ քանքատեցաւ որ միշտ հակառակորդին կողմը կը բռնէ եւ արդար դատաստան չընել , եւ աղաչեց որ իր դատն ուրիշ արդար մարդիկներու յանձնէ , որոնք խնդիրն անաչառութեամբ որոշեն : Քիչ մը ետքն երկու կարգինալներուն կոտորանու պոլիս երթալ հարկ ըլլալով՝ Իննովկենտիոս անոնց տեղ քանի մը վանահայրներ եւ իշխաններ Անտիօքի խնդրոյն դատաւոր կարգեց , եւ անոնց պատուէր խաւրեց որ երկու կողմն ալ խրատեն որ կամ իրարու հետ միաբանին , կամ խնդիրը դատաւորաց յանձնեն որոնք մինչեւ երեք ամիս որոշեն . եւ կամ իրենք անձամբ քննեն ու որոշումը տան : Իսկ թէ որ ասով ալ չլիաջողեր , երկու կողմն ալ Հռոմ փաստաբաններ խաւրեն եւ դատն ինքն անձամբ կտրէ : Միանգամայն պա-

Ինչպէս Քնարի վէճին դադարելու մտայած ատեն ներք, Աստուծոն Ախարոս կղզին անցած եւ Հոն նոյն կղզւոյն թաղաւորին քրոջը հետ պատկուած էր: Քիչ մը ետքն երբ որ թագուհւոյն ազգականներուն պղծութիւն ընելու համար նորէն Ախարոս գնաց, իր թշնամիներն իմանալով՝ շատ պատերազմական նաւերով դարանեցան որ զինքը բռնեն: Թագաւորն աս բանէս տեղեակ չըլլալով՝ առանձին նաւով մը ետ դառնալու ատեն, թշնամիք վրան յարձակեցան. բայց անիկա շատ մը նորէն Ախարոս դառնալով՝ անկէ պատերազմական նաւեր առաւ ու թշնամեաց վրայ քալեց, անոնց նաւերէն շատերն ընկղմեց, մնացածը ցրուեց եւ յալմանակաւ Արիւկիա մտաւ: Հոն հասածին պէս լսեց որ Հեթում՝ Ամբրոն բերդին իշխանն իր հեռաւորութիւնն առիթ առնելով՝ ապստամբեր է եւ թագաւորական երկիրները կ'ասպատակէ. անոր դեսպան խաւրեց ու յորդորեց որ նորէն հնազանդի, բայց երբ որ անիկա չանսաց, թագաւորը զինքն իր երկու որդիներուն հետ բռնեց բանտարկեց, ու Ամբրոն բերդն եւ ապստամբին բոլոր կալուածները յարքունիս գրաւեց:

Ինչ. Հազիւ թէ ասոր վրայ քիչ մը ատեն անցաւ, նոր թշնամի մը զինքը պատերազմի ասպարէզը կանչեց: Ասիկա էր Ղայասէտտին Ղազի Հալէպի սուլթանն՝ որն որ Զատիկի սօնին օրերը մեծ բանակով Արիւկիայի սահմանները գալով՝ դեսպաններու ձեռքով Աստուծոն պատգամ խաւրեց. Թէ որ ինձի չես հնազանդիր եւ հարկ չես տար, բոլոր զօրքովս երկիրդ կը մանեմ, ժողովուրդդ անխնայ կը ջարդւմ եւ ուրախութեան օրերդ սգոյ ու արտմութեան օրեր կ'ընեմ: Թագաւորը սուլթանին արշաւանքն եւ իրեն դեսպան խաւրեց յառաջագոյն իմանալով՝ հրաման տուաւ իր ծառաներուն որ դեսպաններուն զիմացն երթան, եւ զանոնք զանազան պատրուակներով ասդին անդին պարտցընեն: Իսկ ինքը զօրքը ժողովեց յանկարծ սուլթանին բանակին վրայ ինկաւ, որն որ անհոգ նստած՝

իր դեսպաններուն ետ դառնալուն կը սպասէր: Ասանակնկալ յարձակումն անոր զօրաց մէջ սաստիկ վախ մը ձգեց, որոնք այլայլած ու շփոթած՝ ամէն բան թող տուին ու փախչելով կեանքերնին ազատելունայեցան. սուլթանն ալ աս խռովութեան մէջ հաղիւկըցաւ փախչիլ եւ ազատիլ: Հայոց զօրքը թշնամւոյն ետեւէն ինկան, շատերը գերի բռնեցին մնացածը ցիր ու ցան ըրին, եւ դարձան անոնց պարապ թող տուած բանակը կողուպտեցին: Լեւոն յաղթանակաւ դարձաւ եկաւ Ախլիկիա եւ զօրքին հրաման տուաւ որ թշնամւոյն վրանները գետի մը քով՝ կանգնեն, անոնց դրօշները վրաններուն դրան առջեւը տնկեն, եւ աւարառած զէնքերնին ու պատերազմական կարասիքնին անոնց մէջ շարեն: Անկէ ետեւ կանչել տուաւ սուլթանին դեսպաններն եւ անոնց իրենց տիրոջը բանակը ցուցուց, որոնք սարսափած՝ թագաւորին ոտքն ինկան եւ աղաչեցին որ իրենց կեանքը շնորհէ: Լեւոն զանոնք թող տուաւ որ երթան, ու սուլթանին իրմէ ուզած հարկէն շատ աւելի ինքն անոր վրայ դրաւ:

ԻԶ. Լեւոն նոյն յաջողութիւնը չունեցաւ քանի մը տարի ետքը Ղոնեայի Ազէտտին Գայգաուզ սուլթանին հետ բրած պատերազմին մէջ: Վասն զի երբ որ Գայգաուզ մեծ բանակով մը Ախլիկիա արշաւեց եւ Կապան բերդը պաշարեց, Լեւոն պատրաստութիւն չունենալով՝ անոր դէմ պղտիկ գումարտակ մը խրկեց, պատուէր տալով որ միայն պաշտպանողական պատերազմ ընեն եւ թշնամւոյն յառաջ գալն արգելուն, մինչեւ որ ինքը բոլոր զօրքը ժողովէ եւ իրենց օգնութեան գայ: Բայց անոնք Գայգաուզին բանակին հասածնուն պէս, առանց թագաւորին սպասելու յարձակողական պատերազմի սկսան եւ թշնամւոյն բազմութենէն յաղթուելով՝ շատերը ջարդուեցան, ու Կոստանդին աւագ պարոնը, Կոստանդին՝ Լամբրոնի իշխանին որդին, Կեռասակ Մամիկայի իշխանն եւ ուրիշ շատ երեւելի իշխաններ գերի

բունուեցան : Աս դժբախտութեան գոյժը Լեւոնին շանթի հարուածի պէս եկաւ , բայց անիկա ինքը զինքը զօրացընելով՝ շուտ մը քովի զօրքին հրաման տուաւ որ ճամբայ ելլեն . ինքն ալ անոնց գլուխն անցած յարձակեցաւ մտաւ Գայգաուզին երկիրը , շատ տեղեր ապականեց եւ բիւրաւոր գերի բռնեց : Սուլթանն իր յաղթութեանն ուրախութիւնը կատարած ատենը՝ բօթաբերներն եկան իրեն իր երկրին վիճակը պատմեցին . շուտ մը Ալիկիլիան թողուց իր երկիրն աճապարեց , եւ հոն Լեւոնին հետ հաշտութիւն ընելով՝ իրարմէ առած գերիներն ետ դարձուցին :

Ի՛կ . Այսպիսի քաջութիւններով եւ իմաստուն կառավարութեամբ 34 տարի իր տէրութիւնը վարեց Լեւոն յաղթող թագաւորը . 13 տարի իբրեւ իշխանաց իշխան եւ ազգապետ տիրեց , իսկ թագաւորական պսակով պսակուելէն ետքը 21 տարի , ու Սիս քաղքին մէջ վախճանեցաւ , իրեն յաջորդ եւ ժառանգ ընտրելով իր մէկհատիկ աղջիկը Զապէլ , զորն որ մասնաւորապէս Աստանդին աւագ պարոնին եւ Ատան իշխանին յանձնեց : Բոլոր ժողովուրդն՝ որն որ իր խնամակալութեան տակ հանգիստ եւ երջանկութիւն վայելած էր , զինքը կորսնցընելուն համար շատ ցաւեցաւ ու խորունկ սգոյ մէջ մտաւ . նոյնպէս զօրքն որ անոր առաջնորդութեամբն այնչափ յաղթութիւններ ըրած էին , անկէ զրկուելուն համար սաստիկ ցաւեցան , եւ երկայն ժամանակ ամենուն սիրտը տխրութիւն մը պատած էր : Մեծ հակառակութիւն եղաւ իր մարմինը թաղելու պատճառաւ , վասն զի ոմանք կ'ուզէին որ Սիս մայրաքաղաքին մէջ թաղուի , իսկ ոմանք կ'ըսէին թէ Ակներ վանքը տարուի՝ զորն որ Լեւոն շատ կը սիրէր : Բայց ետքը մտածելով որ նոյն վանքը Ալիկիլայի սահմանին վրայ ըլլալով՝ կրնան իր թշնամիները մարմինը գերեզմանէն հանել եւ այրել իրենց անկէ կրածներուն վրէժն առնելու համար , միաբանեցան եւ փառաւոր յու-

զառկաւորութեամբ Սիսի մէջ թաղեցին եւ վրան գեղեցիկ շերիմ մը շինեցին, եւ միայն սիրան Ակնե՛՛ վանքը տարին :

ԳՆՈՒԽ Թ

ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՀԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍ

ԻԸ. Ռուբեն Անտիոքին իշխանը Լեւոնին թագաւորութիւնը ձեռք ձգելու համար Կիլիկիա կու գայ (1219) . Կոստանդին իշխանը զինքը կը բռնէ : Զապէլ հօրը կը յաջորդէ (1220) եւ Փիլիպպոս իշխանին հետ կը պսակուի : Փիլիպպոս բանտի մէջ կը մեռնի (1225) : Զապէլ Սելէւկիա կը փախչի, Կոստանդին զանկա Սիս կը բերէ եւ իր Հեթում որդւոյն հետ կը պսակէ (1226) :

ԻԸ. ԹԻՊԷՏ եւ Լեւոն իր մեռնելէն յառաջ իրեն յաջորդն որոշած էր, բայց այնպէսով ալ յաջորդութեան պատճառաւ մեծ խռովութիւնն ծագեցաւ : Ռուբեն Անտիոքին իշխանը՝ զորն որ Պեմսւնդ իշխանը նոյն քաղքէն վնասած էր, երբ որ Լեւոնին մահը լսեց, աճապարեց Կիլիկիա եկաւ, յուսալով որ թագաւորութիւնն ինքը կրնայ առնուլ . իշխաններուն միջէն ալ Ասհրամ սպարապետն եւ ուրիշ քանի մը երեւելիներ անոր կողմը բռնեցին : Կոստանդին մեծ իշխանն՝ որն որ Զապէլին խնամակալ գրուած էր, աս խռովարարը զսպելու համար, շուտ մը թագաւորական զօրքը ժողովեց եւ զնայ Տարսոն քաղքին մէջ անոր զօրքին սաստիկ ջարդ մը տուաւ, եւ զինքն իր կողմնակից իշխաններովը բռնեց : Ասկէ ետքը Զապէլը թագաւորական գահը նստեցուց եւ Պեմսւնդ Գ. Անտիոքի իշխանին Փիլիպպոս որդին անոր փեսայացունելով՝ Հայոց թագաւոր անուանեց :

Փիլիպպոս և տարի թագաւորութիւնը վարելէն ետեւ, սկսաւ արքունական պալատը կողոպտել եւ անոր ծանրագին զարդերն ու գանձերը, նաեւ թագաւորական թագն՝ Անտիոք իր հօրը խաւրեց :

Զօրքն աս բանիս վրայ սաստիկ դայրացան ու բռնեցին զինքը բանտ դրին, եւ ստիպեցին որ Անտիոք խրկածներն ետ բերել տայ. բայց իր հայրն ոչ զանոնք ետ սուաւ, ոչ ալ որդին բանտէն ազատելու փոյթ բրաւ, եւ այսպէս անիկա բանտին մէջ տառապանօք մնաւ: Ան ատեն Աոստանդին իշխանն ուզեց կաթողիկոսին եւ միւս իշխաններուն հաւանութեամբն իր Հեթում որդին Զապէլին հետ պրակել ու թագաւորեցընել. բայց թագուհին ասոր ամենեւին չհաւանեցաւ եւ ելաւ Սելեւկիա քաղաքն՝ իր մօրն ազգականներուն քովը գնաց: Աոստանդին շատ աշխատեցաւ որ զանիկա համոզէ, բայց երբ որ անկարելի եղաւ, ժողովեց զօրքն ու գնաց Սելեւկիա պաշարեց, մինչեւ որ քաղաքացիք նեղը մտնելով՝ ստիպուեցան թագուհին անոր ձեռքն յանձնել: Զապէլ տեսնելով որ մեծ խռովութեան պատճառ պիտ'որ ըլլայ, յանձն առաւ Աոստանդինն ուզածը կատարել եւ անոր հետ Սիս մայրաքաղաքն եկաւ, ուր հարսանեաց հանդէսը կատարուելէն ետեւ՝ Հեթում Հայոց թագաւոր օծուեցաւ, որուն թագադիր եղաւ Աոստանդին իշխանը՝ Ամբրոն բերդին իշխանին որդին:

Գ Լ Ո Ւ Խ Ժ

Հ Ե Թ Ո Ւ Մ Ա.

ԻԹ. Հեթումի թագաւորական գահը կը նստի (1226) եւ գանազան բարեկարգութիւններ կ'ընէ: Թաթարները դէպ ի կիլիկիա յառաջ կու գան. Հեթումի անոնց հետ բարեկամութեան դաշինք կը դնէ: Լամբրոնին իշխանին ապստամբիլը, Հեթումին անոր հետ ըրած պետերազմները: Լ. Հեթումի թաթարաց ինքնակալին կ'երթայ (1253), եւ անոր հետ բարեկամութեան դաշինք կը դնէ: Ղոնեայի սուլթանին դէմ պատերազմի կ'ելլէ եւ կը յաղթէ: Հեթումին թաթարաց օգնութեան երթալն եւ Ասորիքի մէջ ըրած պատերազմները: ԼԱ. Եգիպտացոց կիլիկիա արշաւելլը, Հեթումին որդւոցն անոնց դէմ ելլելլը. Թորոսին մեռնիլն ու Լեւոնին դերի բռնուիլլը: Լեւոնին ազատիլլը (1269). Հեթումին թագաւորութենէ հրաժարիլն ու վանք մանելլը (1270), եւ իր մահը:

ԻԹ. Փիլիպոլոսիւն մահուան երկրորդ տարին Լեւոն Բ.ին գահը նստաւ անոր արժանաւոր յաջորդ Հեթումի Ա. առջգ ու քաջասիրտ պատանին, որն որ իր հռչակաւոր նախորդին երեւելի գործքերուն նմանելլու բարի նախանձ մ'ունենալով՝ ակտուն ելած օրէն տէրութիւնը բարեկարգելլու եւ պայծառացընելլու ձեռք զարկաւ: Իրեն առ բարի փափաքին օգնական ու գործակից ունեցաւ իր իմաստուն ու գործունեայ հայրն, որուն տէրութեան ամէն գործքերն յանձնած էր: Առատանդին ուզելլով ամէն բանէն յառաջ որդւոյն թագաւորութիւնը ներքուստ հաստատել, իր երէց որդին Սմբատը բոլոր զօրաց վրայ սպարապետ դրաւ. Առատանդին թագազիր իշխանն ալ դարձեալ Լամբրոն բերդին հրամանատար ըրաւ, յուսալով որ ասով զանիկա կը շահի եւ անկէ ետեւ թագաւորութեան հաւատարմութեամբ կը ծառայէ: Սահմանակից ազգաց իշխաններուն, եւ մասնաւորապէս Ղոնեայի Ալայէտաւին սուլթանին հետ՝ որն որ Լեւոնին մահուանէ

ետքը Կիլիկիա յարձակած ու քսնի մը քաղաքներ առած էր, խաղաղութեան ու բարեկամութեան դաշինք դրաւ :

Կիլիկիա այսպէս խաղաղութիւն վայելած ատեն, բուն Հայաստան թաթարաց արշաւանքներէն սաստիկ նեղութեան մէջ էր. ասոր համար ան կողմերը բնակող Հայերը գունդագունդ Կիլիկիա սկսան գալ, զորոնք Հեթում իր խնամակալութեան տակն առաւ եւ իր տէրութեան քաղաքներուն մէջ տեղաւորեց : Թաթարներն ամէն տեղ իրենց դէմ ելլողներուն յաղթելով՝ կամաց կամաց Կիլիկիայի սահմանները մօտեցան : Անոնց դէմ ելաւ Ղայասէտտին ֆէյխիւսրէվ՝ Ղոնեայի սուլթանը, բայց չարաչար յաղթուելով փախաւ. իր մայրն եւ ընտանիքն ալ Հեթումին քովը փախան ապաւինեցան : Հեթում տեսնելով որ Թաթարներն ամէն կողմ նուաճեցին եւ իր սահմանը հասան, շուտ մ'անոնց Բաչու զօրապետին շատ ընծաներով դեսպան խաւրեց ու խնդրեց որ իրեն հետ բարեկամութեան դաշինք դնէ : Զօրապետը թագաւորին ուզածը յանձն առաւ, միայն պահանջեց որ Ղայասէտտինին ընտանիքն իր ձեռքը տայ : Հեթումին շատ ծանր եկաւ աս պայմանը, բայց մեծագոյն չարիքներէ վախնալով՝ զանոնք ակամայ Բաչուին յանձնեց :

Կ'երեւայ որ Հեթումին ու Ղայասէտտինին մէջ բարեկամութեան դաշինք մը կար, որուն յիշատակին համար գուցէ տպուած է ան նշանաւոր ստակն՝ որն որ մինչեւ հիմա կը գտնուի : Ասոր մէկ երեսը կայ Հեթում ձի հեծած ու ձեռքը թագաւորական դաւազան, որուն շրջանակը գրուած է ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ. իսկ երկրորդ երեսին մէջ տեղն աս գրուածը կայ السلطان الاعظم غياث كنجسرو الدين كنجسرو بن كيقباد Ղայասէտտինին փոքրէն ֆէյխիւսրէվ ղեռն ֆէյխուսր «Աւագ տէր պաշտպան աշխարհի եւ հաւատոյ ֆէյխիւսրէվ որդի ֆէյքոպատայ», եւ անոր շրջանակը ضرب بسيدس سنه اربعين و ستيا يد «Չատեալ է Սին», յամի վեցհարիւրորդի քառասներդի :

Հեթում Թաթարաց կողմանէ ապահովեալուն պէս բոլոր զօրութեամբ Լամբրոնի Առստանդին իշխանը հնազանդեցընելու ետեւէ եղաւ՝ որն որ իրեն դէմ ապստամբած էր եւ երկիրը կը խռովէր: Շատ աշխատեցաւ թէ ինքը թէ իր հայրը Առստանդին որ զանիկա սիրով ու քաղցրութեամբ նուաճեն, բայց ապրտամբն իր յամառութեան մէջ մնաց: Ան ատեն թագաւորը բարկութեամբ բորբոքած՝ զօրքն առաւ անոր վրայ գնաց եւ ամէն երկիրները գրաւելէն ետեւ՝ Լամբրոնը պաշարեց: Առստանդին նեղն իյնալով՝ թագաւորին դեսպան խաւրեց ու խոստացաւ որ կը հնազանդի եւ իր որդին պատանդ կու տայ: Բայց Հեթում ամենեւին չհաւանեցաւ: Ապստամբ իշխանն ասոր վրայ զայրացած՝ Ղայասէտտինին քովը փախաւ որն որ Հեթումին հետ սաստիկ թշնամացած էր իր ընտանիքը Թաթարաց մատնելուն համար, եւ անկէ շատ զօրք առնելով՝ յանկարծ կիլիկիա մտաւ, երբ որ թագաւորական զօրքը տեղերնին ցրուած էին, ու սկսաւ շատ աւեր եւ ապականութիւն ընել եւ բիւրաւոր մարդիկ անխնայ ջարդել: Բայց թագաւորը շուտ մը զօրքը նորէն ժողովելով՝ եօթն անգամ զանիկա շարաշար զարկաւ եւ դարձեալ իր բերդին մէջը խոթեց, ուր ապստամբը փակուած մնաց:

Լ. Ասկէ ետքը Հեթում իր իշխաններուն հետ խորհուրդ ընելով՝ որոշեց որ ինքն անձամբ Թաթարաց մեծ ինքնակալին երթայ եւ անոր հետ մշտնջենաւոր խաղաղութեան ու բարեկամութեան դաշինք հաստատէ: Բայց իրմէ յառաջ իր Սմբատ եղբայրը՝ Հայոց սպարապետը խաւրեց որ անկէ հրաման խնդրէ, որն որ գնաց դեսպանութիւնը կատարեց, եւ չորս տարիէն հրամանն առած ետ դարձաւ: Բայց Հեթում ճամբայ ելլելու պատրաստուած ատենն, ինքնակալը մեռաւ եւ անոր յաջորդեց Մանդոյ խանն. ուստի Թաթարաց զօրապետին ձեռքովը նոր ինքնակալէն ալ իրեն երթալու հրաման խնդրեց, եւ երկրորդ տարին հրամանն ըն-

դռնելով՝ ելաւ Ամէլէք քաղաքը գնաց : Հոն Մանգոյ Հայոց թագաւորին փառաւոր ընդունելութիւն ըրաւ , եւ անոր խնդիրքները լսելով՝ որոնց գլխաւորներն էին Թաթարաց ու Հայոց մէջ մշանջենաւոր սէր ու բարեկամութիւն կապուիլ . Իր ուղած ասենն իրեն օգնութիւն խրկել , եւ Թուրքաց իրմէ առած տեղերն ետ առնուլ եւ իրեն տալ , ամենուն ալ հաւանեցաւ : Եւ մասնաւոր հրովարտակաւ հաստատեց : Ասկէ ետքը զանիկա իր Հուլաւոն եղբօրը հետ՝ որն որ զօրքով Սարակինոսաց դէմ կ'երթար , պատուով Արիկիա խաւրեց :

Հեթում երեք ու կէս տարի տէրութենէ զուրս մնալէն ետեւ , նորէն իր աթոռը դարձաւ եւ անմիջապէս Ղաննայի Ազգէտտին սուլթանին դէմ պատերազմի ելաւ , որն որ իր Թաթարաց հետ բարեկամութիւն հաստատելուն վրայ բարկանալով՝ Արիկիա արշաւած էր : Զարկաւ ցրուեց անոր բանակն եւ շատ քաղաքներ՝ որոնց մէջ նաեւ Գերմանիկ ու Պեհեստնի բերդերն ալ ձեռքէն առաւ : Երկու տարի ետքը Հուլաւոն զօրապետէն իրեն հրաւէր եկաւ որ զօրքն առած Ուռհա քաղաքը գայ , որպէս զի միաբան Ս . Երկրին վրայ երթան ու Սարակինոսաց ձեռքէն ազատեն , ինչպէս որ ինքը Հեթում Թաթարաց ինքնակալէն խնդրած էր : Թագաւորը շուտ մը 40,000 հետեւակ ու 12,000 ձիաւոր զօրքով գնաց Հուլաւոնին հետ միացաւ , եւ անոր խորհուրդ տուաւ որ նախ Հալէպի վրայ քալէ , ուր Մէլիք նազար սուլթանը կը աիրէր , եւ զանիկա նուաճելէն ետքն , Երուսաղէմի վրայ երթայ : Հուլաւոն աս խորհրդին հաւանեցաւ եւ բոլոր զօրութեամբը Հալէպը զարնելով՝ քիչ ժամանակէն մէջ առաւ . սուլթանն ալ բոլոր ընտանիքովը բռնեց Պարսկաստան խաւրեց : Անկէ ետքը Հայոց թագաւորին՝ աւարին մեծ մասն ու Արիկիայի մօտ շատ բերդեր պարգեւեց եւ Երուսաղէմի վրայ երթալու պատրաստուեցաւ . բայց նոյն ժամանակը

լուր առաւ որ Մանգոյ մեռեր է , ուստի շուտ մը զօրքն առաւ ետ դարձաւ , եւ միայն Արիպողայ զօրապետն , կամ ըստ սմանց իր Ապաղա որդին 20,000 զօրքով Ասորոց երկիրը թողուց որ քրիստոնէից օգնէ ու Ս . Երկիրը Սարակինոսաց ձեռքէն ազատէ :

ԼԱ . Թաթարաց զօրքին այսպէս ետ քաշուելէն Եգիպտացոց Փնտուխտար սուլթանը Համարձակութիւն առած՝ մեծ պատրաստութեամբ Ասորիք արշաւեց , Արիպողային յաղթեց եւ շատ քաղաքներ՝ նաեւ Անտիոքն ալ առաւ : Աս բանիս լուրը Եւրոպա Հասածին պէս Աղէմէս Գ . Քահանայապետը բոլոր քրիստոնեայ թագաւորներուն նամակներ խրկեց որ նորէն Ս . Երկրին օգնութեան երթան . նամակ մ'ալ Հեթումին խաւրեց , որով զանիկա կը յորդորէր որ նեղութեան մէջ եղող քրիստոնէից օգնութեան Հասնի : Բայց նոյն ժամանակը Թաթարաց մէջ մեծ խռովութիւն ծագելով՝ Հեթումին Հարկ եղաւ զօրքով Թաթարաստան երթալ , որով Սարակինոսաց դէմ երթալն արգելուեցաւ : Փնտուխտար երբ որ Հեթումին Արիպողայէն Հեռանալը լսեց , իր Սմբմթ զօրապետը Եգիպտական բանակին մէկ մասովն անոր երկիրը խաւրեց : Լեւոն ու Թորոս՝ թագաւորին որդիքն անմիջապէս որչափ կրցան զօրք ժողովեցին եւ թշնամւոյն դէմ ելան , բայց խառնուրդին ատենը Թորոս զարնուեցաւ մեռաւ , եւ Լեւոն Եգիպտացի զօրքէն բռնուեցաւ : Ասկէ ետքն Եգիպտացիք ամէն կողմ տարածուեցան եւ շատ աւեր եւ ապականութիւն րբին . Սիս մայրաքաղաքն ալ առին ու կրակի տուին , եւ թագաւորաց ու իշխանաց գերեզմանները բանալով՝ անոնց ոսկրներն Հանեցին եւ այրեցին : Հեթում ասոնց գոյժը շատ ուշ առաւ եւ շուտ մ'աճապարեց Արիպողայ եկաւ . բայց թշնամին արդէն ամէն բան լինցուցած՝ ու գերութեամբ եւ աւարով դարձած դացած էր : Շատ մեծ ցաւ պատճառեց իրեն իր որդւոցը կորուստն , անոր Համար Թաթարաց Ապաղա

խանը շատ յորդորեց որ իրեն հետ միտնայ եւ Եգիպտացիներէն՝ որդւոցը վրէժն առնուն. բայց անիկա իր սահմանակիցներուն հետ պատերազմ ունենալով՝ չկրցաւ Հայոց թագաւորին օգնել : Հեթում երբ որ Թաթարներէն յոյսը կտրեց, Ալեմէս քահանայապետին դիմեց եւ անկէ օգնութիւն խնդրեց, որուն քահանայապետը մխիթարական նամակ մը գրեց, եւ խոստացաւ որ կարելի եղածին շափ շուտով իրեն օգնութիւն կը խրկէ : Բայց թագաւորն իր դերութեան մէջ եզրղ որդւոյն յիշատակաւը միշտ տանջուելով՝ դանիկա օր մը յառաջ ազատելու համար, Փնտուխտարին դեսպան խաւրեց եւ աղաչեց որ Ալեմէս իրեն դարձրնէ ու մէջերնին բարեկամութեան դաշինք հաստատեն : Սուլթանը սիրով յանձն առաւ, միայն խնդրեց որ Հեթում ալ իր Սանկուլասար բարեկամը՝ զորն որ Թաթարները գերի բռնած էին, անոնց ձեռքէն ազատէ եւ իրեն խրկէ, միանգամայն Հալէպ քաղաքն ալ իրեն դարձրնէ : Թագաւորը շուտ մ'անոր խնդիրքը կատարեց, եւ այսպէս Ալեմէսը գերութենէ ազատելով՝ տարի մը եւ տասն ամիս Եգիպտոս մնալէն ետեւ Աիլիկիա դարձաւ : Մեծ ուրախութիւն պատճառեց թէ Հեթումին եւ թէ բոլոր ժողովրդեան արքայորդւոյն գալուստը, եւ անոր Աիլիկիա մանելը յաղթանակի հանդէսի մը նման եղաւ : Ամէն իշխանները՝ թագաւորին հետ անոր դիմացը գացին ու մեծ փառաւորութեամբ առին Տարսոն բերին :

Ասոր վրայ տարի մ'անցնելէն ետեւ Հեթում թագաւորութենէ հրաժարեցաւ, եւ աէրութիւնը Ալեմէսին յանձնելով՝ ինքը վանք մտաւ կրօնաւոր եղաւ. անունն ալ փոխեց Մակար գրաւ, ու քիչ ժամանակէն բարի մահուամբ վախճանեցաւ, 46 տարի թագաւորելէն ետեւ, եւ մարմինը Գրաղարկ վանքը թաղուեցաւ :

Գ Լ ՈՒ Խ ԺԸ

Լ Ե Ի ՈՒՆ Գ .

ԼԲ . Լեւոն Տօրը մահուան ցաւէն կը հիւանդանայ : Տարսոնի մջ թագաւոր կ'օծուի (1270) : ԼԳ . Իշխանները Լեւոնին դէմ զաւաճանու թիւն կ'ընեն , թագաւորը զանոնք կը բռնէ : Փնտուխտար Կիլիկիա կը յարձակի ու կ'ասպատակէ (1274) : Տարսոն քաղաքը կ'առնուի : ԼԴ . Կիլիկիա պատահած դժբախտ դէպքերը . Փնտուխտարին նորէն Լեւոնին վրայ գալը , Հայոց թագաւորին անոր յաղթելը (1276) : ԼԵ . Լեւոն Ղոնեայի սուլթանին կը յաղթէ . Եգիպտոսոց դէմ թաթարաց օգնութեան կ'երթայ (1282) եւ թաթար զօրապետին երկչոտութեամբն՝ յաղթութիւնը կը կորսընցընէ : Լեւոնին մահը (1284) :

ԼԲ . ԼԵԻՈՒՆ Տօրը մահուանը վրայ սաստիկ տրտմելով ու ցաւելով՝ դեռ թագաւորական դահճը չնստած՝ ծանր հիւանդութենէ մը բռնուեցաւ եւ անկողին մտաւ . ասոր համար ամէն մօտաւոր ազգայ իշխաններն , եւ նոյն իսկ թաթարաց խանն եւ Եգիպտոսի սուլթանը զինքը մխիթարելու համար դեսպաններ խաւրեցին : Նաեւ հայ իշխաններն ալ շատ աշխատեցան որ անոր տրտմութիւնը փարատեն եւ թագաւոր օծել տան , բայց աշխատութիւննին պարապի գնաց : Հազիւ երեք ամիս ետքը արքայորդւոյն հիւանդութիւնն ու տրտմութիւնը մեղմացաւ , եւ ան ատեն թագաւոր օծուելու հաւանութիւն տուաւ . ուստի կաթողիկոսն ու բոլոր եկեղեցական եւ աշխարհական մեծամեծները Տարսոն քաղաքը ժողվուեցան եւ մեծ փառաւորութեամբ օծման հանդէսը կատարեցին :

Լեւոն զահն ելածին պէս բարերարութեան ու բարեպաշտութեան գործքերու ձեռք զարկաւ : Ամէն իրեն դէմ յանցանք ընողներու ընդհանուր թողութիւն շնորհեց , աղքատաց առատ ողորմութիւն բաշխեց եւ անոնցմէ շատերուն ամէն օր թագաւորական սեղանէն կերակուր կը բաժնէր : Իր մեծ ուրախու-

Թիւնն ուրիշներուն բարիք ընել էր, որով իր ժամանակն ամէն կարօտեալներն աղէկ դարման ու մխիթարութիւն գտան: Լեւոն նաեւ արքունիքն ալ շատ զարդարեց, պաշտօնեաները շատցուց ու զօրաց ուժիկն աւելցուց: Ուսման եւ ուսումնականաց ալ շատ սէր ունենալով՝ իր ժամանակեան գիտունները կը յարգէր եւ ամենուն առատ վարձք կու տար, որոնց համար մասնաւոր տեղեր ալ շինել տուաւ: Ամէն հայերէն գրքերէն շատ օրինակներ գրել տուաւ եւ ամէն տեղ տարածեց որ կարդալ ուզողները կարող ըլլան դիւրաւ գտնել. եւ տեղ տեղ դպրոցներ բանալ տուաւ, աղոյ բարոյական ու մտաւոր կրթութեան համար: Եկեղեցիներու եւ եկեղեցականաց ալ շատ շնորհքներ ըրաւ, եւ շատ տեղեր նորոգեց:

ԼԳ. Բայց առաքինի ու բարերար Թագաւորին այս ամենայն՝ ժողովուրդն երջանիկ ընելու եւ երկիրը հանգիստ պահելու ջանքը, ներքին եւ արտաքին թշնամիներէն եւ բնական պատահարներէն շատ արգելքներ գտաւ: Իր Թագաւորութեան երկրորդ տարին, իշխաններն եւ նոյն իսկ իր ազգականներն իրեն դէմ ոտք ելան եւ ուզեցին զինքը դաւել. բարեբախտութեամբ բանը շուտով երեւան ելաւ ու Լեւոն կարող եղաւ անոնց գլխաւորները դեռ իրենց չար խորհուրդը կատարելու չսկսած՝ բռնել: Բայց իր գթութեամբն անոնց ամէնն ալ առանց պատիժ մը տալու ազատ թողուց, միայն իրենց բերդերն եւ ամրոցները ձեռքերնէն առաւ որ նորէն ապստամբութեան խորհուրդ չունենան:

Ներքին խռովութեան երկիւղն այսպէս փարատելու ատենը, միւս կողմանէ եգիպտական զօրքը Թիւրքերուն եւ Արաբացիներուն հետ միացած՝ իրենց Փնտրութեամբ սուլթանին առաջնորդութեամբ յանկարծ Այլիկիա մտան: Լեւոն սկսաւ պատրաստութիւն տեսնել որ անոնց դէմ ելլէ, բայց իր անհաւատարիմ իշխանները չուզեցին իրեն հնազանդիլ եւ միաբան

Թշնամւոյն դէմ երթալ, որով Թագաւորն ալ ստիպուեցաւ ամուր տեղեր քաշուիլ եւ երկիրը Թշնամւոյն առջեւը բաց մնաց: Մասն կատաղե զօրքն եւ անարգել ամէն կողմ տարածուեցան, անպարիսպ քաղաքները Թալլեցին, բնակիչները ջարդեցին եւ շատ տեղեր այրեցին: Ուզեցին նաեւ Սիս բերդաքաղաքն ալ առնուլ ու կործանել, բայց մէջինները սաստիկ քաջութեամբ դէմ դրին եւ զանոնք վնասեցին, ուր քաջասիրտ քահանայ մը սաստիկ արիութեամբ պատերազմելով եգիպտական զօրաց մեծ մնաս տուաւ եւ անոնց զօրապետն սպաննեց, Թէպէտ եւ ետքն ինքն ալ զարնուեցաւ ինկաւ: Նոյն բախտը շունեցաւ Տարսոն հարուստ ու մարդաշատ քաղաքը. վասն զի չկրննալով երկայն ատեն Թշնամեաց յարձակմանը դէմ դնել, անոնք շատ կողմերէն ներս մտան, ամէն երեւելի շէնքերն եւ եկեղեցիները կրակի տուին, տները Թալլեցին ու բնակչաց մեծ մասը սրէ անցուցին: Անկէ ետեւ աւար առած բիւրաւոր անասուններովն եւ անչափ հարստութեամբ ու դերութեամբ ելան գացին: Լեւոնին շատ մեծ ցաւ պատճառեց աս ասպատակներուն ըրած մնասներն ու ժողովրդեան խեղճութիւնն, եւ ամենուն առատ ողորմութիւն ու պարգեւ բաշխելով՝ վշտացեալ ժողովրդեան շատ մեծ մխիթարութիւն եղաւ:

ԼԳ. Աս աղէտալի դէպքին յաջորդեցին դժբախտ պատահարներն, որոնք գթած Թագաւորին սրտին շատ ցաւ ու տրտմութիւն պատճառեցին: Արքայորդւոց մէկուն մահն աս դժբախտութեանց սկիզբն եղաւ, եւ անկէ ետեւ իրարու ետեւէ եկան Թագաւորին ծանր հիւանդութիւնն, իր աղջկան մահն՝ որն որ իր դու հիւանդ պառկած ատենը վախճանեցաւ, սաստիկ ժանտամահն որ շատ կոտորած ըրաւ, եւ երկրին անբերութիւնը: Բայց առաքինի Թագաւորն իր ցաւերուն մէջ արիութիւնն ամենեւին չկորսընցուց եւ աս ամէն բան իբրեւ Աստուծոյ ձեռքէն ընդունեւ:

լով՝ համբերութեամբ տարաւ, որով երկնից պոյցելու-
թիւնն ալ իր վրայ դարձուց եւ անկէ ետեւ իր դործ-
քերուն մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ :

Եգիպտոսի Փնաուխտար սուլթանն իր առաջին
անգամ բրած յաղթութենէն համարձակութիւն
առած՝ երկու տարի ետքը մեծ բանակով նորէն Ալիւ-
կիայի վրայ քալեց, եւ զօրքը զանազան առաջքներ
բաժնելով՝ ամէն կողմ սփռեց որ աւարեն ու քանդեն .
բայց աս անգամ բռնն առաջին անգամէն շատ տար-
բեր վախճան ունեցաւ : Լեւոն տեսնելով՝ որ թշնամին
ամենայն համարձակութեամբ իր ասպատակութիւնը
կը կատարէ, շուտ մ'իր կարգադրութիւններն ընե-
լով՝ զօրքը քանի մը գումարտակ բաժնաց եւ ծերունի
Սմբատ սպարապետին հետ յանկարծ անոնց վրայ յար-
ձակեցաւ : Եգիպտացիք նոյն տեղերուն անաեղեակ
ըլլալով՝ չկրցան Հայոց յարձակումն յառաջագոյն
իմանալ եւ անոնց դէմ պատրաստուիլ . ասոր համար
Հայերը զանոնք ամէն կողմանէ պաշարեցին եւ չարա-
չար զարկին, որոնք ժողված աւարներն մէկդի նետելու
եւ զէնք առնելով՝ իրենք զիրենք պաշտպանելու սա-
պուեցան : Փնաուխտար աճապարեց իր բանակին օգ-
նութեան հասաւ, եւ սկսաւ ցրուածները ժողվել ու
կարգի խտրել, եւ փախչողները զսպել ու պատերազ-
մելու ստիպել . բայց աս միջոցին իրեն նետ մը գալով՝
չարաչար վիրաւորեցաւ : Քովի մարդիկները շուտ մը
զինքն առին բանակատեղը տարին, ուսկից զօրացը
մնացորդովը դարձաւ Գամասկոս գնաց : Աս յաղթու-
թեան լուրը Թաթարաց Ապաղա խանը լսելուն պէս
Լեւոնին շատ ընծաներ խաւրեց եւ զանիկա իրեն
կանչեց, ուղելով Թուրքաց երկիրը՝ զսրն որ ինքը
պատերազմաւ առած էր, անոր յանձնել . բայց Լեւոն
աս պարզեւէն հրաժարեցաւ, ցուցնելով որ իրեն շատ
դժուարին է երկու թագաւորութիւն մէկտեղ կառա-
վարել եւ այնչափ թշնամեաց դէմ պաշտպանել :
Միայն խանին խորհուրդ տուաւ որ նոյն երկիրն աղէկ

կարգի մը դնել որ Սարակինոսները կարող չըլլան նորէն անոր աիրել :

Այլ Լեւոն Եգիպտացւոց զէմբրած յաղթութենէն զատ մեծ յաղթութիւն մ'ալ Ղոնեայի սուլթանին վրայ բռաւ, որն որ իր հեռաւորութեան տակէն Ալիլիկա արշաւած եւ ասպատակած էր: Ասով իր թշնամիներուն սիրտը վախ ձգեց, եւ անկէ ետեւ անոնցմէ մէկը խլրակելու չհամարձակեցաւ: Երբ որ Ալիլիկա ամէն կողմանէ ասպահովցած՝ սկսաւ խաղաղութիւն ու հանգիստ վայելել, Թաթարաց եւ Եգիպտացւոց մէջ նոր պատերազմ մը բորբոքեցաւ, որուն պատճառաւ նաեւ Լեւոնին ալ հարկ եղաւ նորէն զէնք առնուլ: Վասն զի Ապաղա խանն ուղելով Եգիպտացիները բոլորովին Ասորւոց երկրէն վանակել, իր Մանգոտամուր եղբայրը 30,000 Թաթար զորաց զորավար դրած եւ աս գործքս անոր յանձնած էր: Մանգոտամուր թշնամին մեծ զօրութեամբ մը զարնելու համար Լեւոնն ալ իրեն օգնութեան կանչեց, որն որ շուտ մը զօրքն առաւ անոր քովը գնաց եւ միաբան Ասորիք մտան ու մինչեւ Համս քաղաքն յառաջ գացին: Սպիթեատին ալ Ալիլի Եգիպտոսի սուլթանը Համսին յօտ դաշտին վրայ զօրքը ձակատեցուցած՝ Թաթարաց գալուն կը սպասէր, եւ երբ որ անոնք հոն մօտեցան սաստիկ զօրութեամբ վրանին յարձակեցաւ: Թաթարաց բանակին աջ թեւը Լեւոն իր հայագունդ զօրքովը կեցած էր, ձախ թեւն Ալմախ թաթար զօրապետն, իսկ կենդրոնն ինքը Մանգոտամուր կը կառավարէր: Լեւոն իր գունդը գեղեցիկ դրիք շարած ըլլալով՝ Եգիպտացւոց ձախ թեւն ետ մղեց եւ զանիկա բուն բանակէն բաժնելով՝ առջեւն առաւ սկսաւ հարածել, եւ Համսէն անդին մինչեւ երեք օրուան հեռու տեղ քշեց. նոյնպէս Ալմախ թշնամւոյն աջ թեւը քայքայեց եւ մինչեւ Գարա քաղաքն՝ որն որ պատերազմի դաշտէն երեք օր հեռու էր, մղեց տարաւ: Բայց Մանգոտամուր Եգիպտաց-

ւայ վիտին ըսուած գնդէն՝ որն որ իր դիմացը ճակատած էր, վախնալով՝ ետ քաշուեցաւ եւ Եփրատ գետին կողմերը գնաց: Ալֆի որ արդէն յաղթութիւնը կորսուած կը համարէր ու բոլորովին լքած էր, երբ որ ճակատատեղը պարպուած տեսաւ, քովը մնացած զօրքովը բլրոյ մը վրայ ելաւ եւ նոյն տեղը բռնեց կեցաւ: Լեւոն թշնամին բոլորովին ցրուելէն ետեւ դարձաւ եկաւ ճակատին տեղը, ու Մանգոտամուրը հոն չգտնելով՝ ինքն ալ անոր ետեւէն գնաց. նոյնպէս Ամասի երկու օր սպասելէն ետեւ, մեծ զօրապետին ետ քաշուիլը լսելով՝ ինքն ալ գնաց անոր հետ միացաւ: Ան ատենը Մանգոտամուր Թաթարներն առաւ իր տեղը դարձաւ, Լեւոնն ալ իր երկիրը խաւրեց. բայց ճամբան Հայոց զօրքին պաշարն ու ձիերուն կերակուրը պակսելով՝ շատ նեղութիւն քաշեցին. Եգիպտացւոց զօրքն ալ շատ անգամ՝ վրանին յարձակում՝ ըրին եւ անոնց մեծ վնաս տուին: Այսպիսի դժուարութեամբ դարձաւ եկաւ Լեւոն իր երկիրը, զօրքէն եւ իշխաններէն շատերը կորսնցրնելով:

Լեւոնին Եգիպտացւոց հետ ըրած վերջին պատերազմին պատճառութիւնը Յովհաննէս Հերոլտ տարբեր կը պատմէ: Նախ Փնտուխտարին Հայոց հետ ըրած վերջին պատերազմը գնելէն ետեւ, ուր կ'ըսէ թէ անիկա նետով մը վիրաւորուելով՝ Դամասկոս դարձաւ եւ նոյն վերքէն մեռաւ, պատճառութիւնն այսպէս յառաջ կը տանի: «Փնտուխտարին յաջորդեց Հելլիս (Ալֆի), որն որ իր ազգականին մահուան վրէժն առնելու համար դարձեալ Հայոց դէմ պատերազմի ելաւ: Ասոնք պարապ տեղ մեզմէ օգնութիւն խնդրելէն ետքը, որովհետեւ բոլոր արեւմտեան աշխարհքը խռովութեան եւ երկպառակութեան մէջ էր, երբ որ լեցին թէ Թաթարաց մէջ քաղաքային պատերազմը դադրեր է, Ապաղախանին աղաչեցին որ իրենց օգնէ: Թաթարն աղաչանքը լսեց եւ իր Մանտոգամար եղբայրը 30,000 ձիաւոր զօրքով (Հայոց) թապաւորին օգնութեան խաւրեց՝ որ իր զօրքն անոնց հետ միացընէ եւ Ասորիք երթալով Սարակինոսները զսպէ: Հելլիս նոյն ժամանակն Համա քաղաքը պաշարած էր, որն որ Անտիոքէն ու Կեսարիայէն (Անտիոքի մօտ քա-

դար մը) շատ հեռու չէ, որ հաստատարիմ Հայ բերդապահ-
ներ սաստկուածեամբ դէմ կը դնէին: Արդ որ թաթարը
Հայոց գնդերով հոն մտնեցաւ, Սարակինոսը մեծ փախ մէջ
ինկաւ, յայտնի տեսնելով՝ որ թշնամին զօրութեամբ,
թուով ու ճարտարութեամբ իրմէ շատ վեր է: Ուստի
հնարքը ձեռք առաւ ու թաթար զօրապետին մարդ խու-
րեց, զանիկա զանազան խոստմունքներով հաւանեցընելու:
Համար որ Հայերը թողու ու մէկգի երթայ, եւ կամ թէ որ
պատերազմի ալ սկսելու ըլլայ, կռուոյն սաստկացած ասնոն
անոնցմէ բաժնուի: Ոսկւով աս մարդուն հաւատարմութիւնն
աւրուեցաւ, որն որ շուտ մ'ամենուն հրաման տուաւ որ
զարնուելու սկսին: Հայոց թագաւորն՝ որ պատերազմի
հմուտ ու խոհեմ մարդ մըն էր, պատասխան տուաւ թէ
պէտք չենք պատերազմին բախտը փորձել, այլ յապաղելով
թշնամինիս թուլացընելու ենք, որն որ աւելի աւարի բան
թէ կռուի յօժարութեամբ կը դիմ. մանաւանդ որ լրտե-
սելով իմացանք, ըսաւ, որ Սարակինոսաց պաշարն հազիւ
մինչեւ երեք օր կը բաւէ: Թաթարը կը սնդէր թէ յապաղե-
լով յաղթութիւնը կը կորսնցընենք, փասն զի կամ թշնամին
կը փախչի ու կ'ազատի, եւ կամ նոր օգնութիւն ընդունե-
լով՝ զօրութիւնը կը շատցընէ: Վերջապէս ամէնը զէնքի
կանչուեցան: Պատերազմին սկիզբը Հայերն երկու թեւերէն
ալ գեղեցկապէս յաղթեցին. բայց երբ որ Մանտոգամար
Սարակինոսաց ցրուիլն ու փախչելու նայիլը տեսաւ, շուտ
մը ձիէն վար ցածքեց. աս բանս տեսնելով թաթար զօրը,
նոյն ազգին սովորութեան համաձայն՝ իրենք ալ ձիերէն
վար իջան: Հայերն իրենց ձիաւոր նիզակակիցներէն, որոնց
միայն վատահացած էին, սլսպէս մատնուելով ու լքուելով,
մանաւանդ որ նոյն միջոցին Սարակինոսն ինքզինքը ժողովեց
եւ զօրութիւնն ամբողջացուց, ստիպուեցան իրենց բանակը
դառնալ: Թաթարն իբրեւ յաղթուած Եփրատ գետին կողմը
գնաց. իսկ Հայերը պատերազմէն ետքն երկու օր թշնամ-
ւոյն մէջ բանակելէն ետեւ, Սարակինոսներն անոնց յու-
սահատութեան վրայ զարմացած, թող տուին որ ազատ
երթան: Ետքը Համային եւ ուրիշ քաղաքներու տիրեցին
ու տեղերնին դարձան: Ապաղա ետ դարձող թաթարները
նախատելու համար, հրամայեց որ բոլոր իրենց կենաց
ժամանակը կանանց զգեստ հագնին. իսկ զօրապետներն եւ
նոյն իսկ իր եղբայրը գլխատել տուաւ:

Աւտոն ասկէ ետեւ 7 տարի ալ խաղաղութեամբ
թագաւորեց ու բարի մահուամբ վախճանեցաւ: Իր

առաքինութիւնները, քաղցր բնութիւնն, առատա-
 ձեռնութիւնն եւ ողորմածութիւնն՝ որով ամէն իրեն
 դիմողին օգնական կ'ըլլար, մահուանէ ետքն ալ իր
 անունն անմահ ըրին: Իր ժամանակը թէ ներքին եւ
 թէ արտաքին դժբախտութիւններ անդադար իրարու
 ետեւէ եկան, բայց իր այրական հաստատութիւնն
 ամէն բանի յաղթեց: Մեռնելէն յառաջ իրեն յա-
 ջորդ որոշեց իր Հեթում որդին, որուն իրեն ար-
 ժանի կրթութիւն մը տուած էր, եւ հանգիստ սրտով
 լմընցուց իր 19 տարւան թագաւորութիւնը:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

Հ Ե Թ Ո Ւ Մ Բ . Թ Ո Ր Ո Ս Գ . Ս Մ Բ Ա Տ
 Ո Ւ Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն Բ .

ԼԶ. Հեթում հօրը գահը կը նստի (1289): Եգիպտացիք
 Կիլիկիա կ'արշաւեն (1291) եւ Հռոմկալ բերդաքաղաքը կ'առ-
 նուն: Հռոմայ քահանայապետին յորդորելովը Լատինացիք
 Եգիպտացուց դէմ կ'ելլեն ու Կիլիկիայէն դուրս ելլելու կը
 ստիպեն: ԼԵ. Հեթում թագաւորութենէ կը հրատարի եւ
 կառավարութիւնն իր թորոս եղբօրը կը յանձնէ (1293):
 Իլխանութիւնը նորէն կ'առնու, եւ քուրբուս տեսութիւն
 ընելու համար թորոսին հետ Կոստանդնուպոլիս կ'երթայ
 (1295): ԼԸ. Սմբատ թագաւորութիւնը կը յափշտակէ
 (1296), թորոսն սպաննել ու Հեթումին աշուրներն հանել
 կու տայ: Կոստանդին Սմբատը կը բանտարկէ եւ ինքը կը
 թագաւորէ (1298): Հեթումին աշուրները կը լուսաւորուին
 եւ նորէն թագաւոր կը դրուի (1299): ԼԹ. Եգիպտացիք Կի-
 լիկիայի վրայ կու գան, Հեթում անոնց կը յաղթէ: Իր Ղազան
 խանին օգնութեան երթալը, Կիլիկիայի ասպատակները ջնջելն
 եւ թագաւորութենէ հրատարիլը (1305):

ԼԶ. Լ Ե Ւ Ո Ս Ի Ն յաջորդեց իր որդին Հեթում Բ.
 զոն որ աւելի կրօնաւորական կենաց քան թէ թագա-
 ւորական պատուոյ բաղձանք ունենալով՝ թագաւոր
 օծուիլ չուզեց, այլ իբրեւ պարզ իլխան տէրութիւնը
 կը կառավարէր եւ կառավարութենէ աւելցած ժամա-

նակը հաղեւոր կրթութիւններու կը զբաղէր: Բայց աս առաքինի իշխանը հազիւ քանի մը տարի կարող եղաւ տէրութիւնը խաղաղութեամբ վարել: անկէ ետեւ Եգիպտացւոց արշաւանքն իր հանգիստն աւրեց եւ զէնք առնելու ստիպեց: Վասն զի Մալքը ալ Աշուֆ Սալահատաին՝ Ալֆիին որդին Պաղեստին եւ Ասորիք արշաւելով՝ շատ ասպատակութիւն ընելէն ետքը, սկսաւ դէպ ի կիլիկիա յառաջանալ: Հետեւ շուտ մը սահմանագլուխները զօրք խրկեց եւ աղէկ ամրացուց. Թաթարաց խանին ալ դեսպան խրկեց եւ անկէ օգնութիւն ուզեց: Բայց աս կողմանէ յոյսը պարապի երթալով՝ Նիկողայոս Գ. Հռոմայ Քահանայապետին եւ արեւմտեան թագաւորներուն թուղթ գրեց որ շուտով իրեն օգնութիւն խրկեն: Ինքը դեռ աս պատրաստութեան մէջ եղած ատեն՝ Աշուֆին բանակը կիլիկիա մտաւ եւ Հռոմկայ ամուր բերդաքաղաքը պաշարեց: Բերդականներն իրենց քաջ իշխանին առաջնորդութեամբ սաստիկ քաջութեամբ դէմ դրին. բայց թշնամիք իրենց մեքենաներովը բերդին մէկ կողմը փլուցին ու ներս յարձակեցան, քաղքին բնակիչները սրէ անցուցին, երեւելի շէնքերն սյրեցին եւ ամէն բան թալլելէն ետեւ՝ Ստեփանոս կաթողիկոսն ու Ջարդէն մնացած քաղաքացիները, շատ նուիրական անօթներ եւ նաև Ս. Գրիգոր Լուսաւորչին աջ հետերնին առին, եւ քաղաքն աւերակ թող տուած դուրս ելան:

Այն ժամանակն Աշուֆին գոյժ հասաւ որ քրիստոնէից զօրքն Եգիպտոս մտած եւ Աղեքսանդրիա պաշարած են ու մօտ են առնելու: Ասոնք Քահանայապետին յորդորելովը Հետեւին օգնութիւն ընելու համար ժողվուած եւ Եգիպտացւոց դէմ ելած էին: Աշուֆ անկէ շատ շփոթեցաւ, եւ անմիջապէս զօրքին հրաման տուաւ որ կիլիկիայէն ելնեն, ու սաստիկ արտօրալով եկաւ հասաւ Աղեքսանդրիային առջեւն, ուր քրիստոնէից հետ զարնուելով՝ յաղթեց ու ցրուեց: Քիչ մը ժամանակ ետքը Եգիպտոս սաս-

տիկ ժանտախտ մ'ինկաւ եւ մեծ կոտորած բրաւ . Աշրաֆ միաբըր դնելով որ աս հարուածն իր աւար առած Ս. Աջին ու նաւիրական անօթներուն համար է, ուզեց շուտ մը դանոնք ետ խաւրել, որոնց ազատութեան համար Հեթում մալ արդէն իրեն քանի մը բերդեր սուած էր, բայց մահը վրայ գալով՝ իր յաջորդը Զինէտաին Բեթպողայ աս բանս ի գործ դրաւ ու Հեթումին հետ հաշտութիւն բրաւ :

Ա. Աս հաշտութենէն ետքը Հեթում ուզելով իր սկսած կրօնաւորական կեանքը խաղաղ ու հանգիստ յառաջ տանիլ, տէրութիւնն իր Թորոս եղբորը յանձնեց եւ ինքը վանք մը քաշուեցաւ . բայց Թորոս՝ եղբորն իմաստութեանը վրայ մեծ համարում ունենալով՝ ամէն բանի մէջ անոր խորհուրդ կը հարցընէր եւ ըստ այնմ կը գործէր : Ասոր երկու տարւան իշխանութեան ժամանակը յիշատակի արժանի բան մը չպատահեցաւ . միայն իր քոյրը Զապէլ՝ Վիպրոսի թագաւորին եղբորը հետ պսակուեցաւ, որուն հարսնիքին հանդէսը Սիս քաղքին մէջ մեծ փառաւորութեամբ կատարեց : Ասկէ ետքն ինքն ալ կրօնաւորական վիճակի փափաքելով՝ իշխանութիւնը նորէն Հեթումին յանձնեց եւ վանք մտաւ :

Հեթում չկրցաւ եղբորը թախանձանքին դէմ դնել, ուստի նորէն կառավարութիւնն իր ձեռքն առնելով՝ նոյն տարին Թաթարաց Ղազան խանին գնաց ու մէջերնին եղած դաշինքը նորէն հաստատեց : Անկէ Վիլիկիա դարձածին պէս Անդրոնիկոս կայսեր կողմանէ երկու երեւելի իշխաններ իրեն դեսպան եկան, եւ խնդրեցին որ իր քոյրերէն մէկը կայսեր Միքայէլ որդւոյն կնութեան տայ : Հեթում հաւանեցաւ եւ երկու քոյրերն ալ դեսպաններուն հետ Վոստանդնուպոլիս խրկեց, որոնցմէ մեծը Մարիամ՝ կայսեր որդւոյն իսկ Թեփանէ կամ Թէոդորա ուրիշ երեւելի յոյն իշխանի մը հետ պսակուեցաւ : Հարսանեաց հանդէսը լմնալէն ետեւ, Հեթում իր Թորոս եղբորը

Տետ Սարիամ թագուհւոյն պցելութիւն մ'ընելու համար Աստանդնուպոլիս գնաց, եւ Ալիէկիայի կառավարութիւնն իր Սմբատ եղբորը յանձնեց :

19. Թագաւորը Ալիէկիայէն հեռանալուն պէս, Սմբատ ինքը զինքը թագաւոր հրատարակեց, իշխաններն ու կաթողիկոսն ալ համոզեց որ թագաւորութեան իրաւունքն իրեն կ'իյնայ, ըսելով թէ Հեթում թագաւոր օծուած չէ այլ կրօնաւոր մըն է, եւ պայպէս հանդիսիւ օծուեցաւ եւ շուտ մ'ալ իր անուամբն ստակ տպեց. նաեւ Բոնիփակիոս Ը. Քահանայապետին ալ դեսպան խրկեց եւ անկէ Ալիէկիայի թշնամիներուն դէմ օգնութիւն խնդրեց: Հեթում առ բաներս ամենեւին չգիտնալով՝ պցելութիւնը կատարելէն ետեւ դարձաւ Ալիէկիա եկաւ. Բայց հայ իշխաններն անոր դէմ ելան ու վռնտեցին: Աս անակնկալ գէպքին վրայ Հեթում շատ պղպլեցաւ, եւ շուտ մը Արարոս գնաց, անկից ալ Աստանդնուպոլիս անցաւ որ կայսրմէ օգնութիւն գտնէ. եւ երբ սր յոյսը պարագի ելաւ, Ազգան խանին դիմեց: Բայց որովհետեւ Սմբատ յառաջագոյն անոր դացած եւ թագաւորութեանն հաստատութիւն առած էր, ու թաթարաց Տետ աւելի եւս կապուելու համար թաթար կնոջ մը հետ ամուսնացած էր, Հեթում ու թորոս՝ խանին զօրքին մատնութեամբը Սմբատին ձեռքն ինկան, զորոնք շուտ մը բանտ դնել տուաւ եւ քիչ ժամանակէն զթորոս սպաննեց ու Հեթումին աշուրներն հանեց: Աստանդին՝ Հեթումին չորրորդ եղբայրն առ անգթութեան գործքին վրայ սաստիկ բարկանալով՝ յանկարծ Սմբատին վրայ յարձակեցաւ եւ բռնեց բանտարկեց. Հեթումն ալ բանտին տառապանքներէն ազատեց, եւ ինքը թագաւորական գահը նստաւ: Տարի մը ետքն Աստուծոյ նախախնամութիւնը Հեթումին առաքինութիւններուն փոխարէն՝ անոր աչքին լոյսը նորէն շնորհեց, որուն վրայ բոլոր ժողովուրդը սաստիկ ուրախանալով՝ ուզեցին զանիկա գարձեալ իր

աթոսը նստեցընել: Կոստանդին տարածէս չ'այս քայ-
րացած ետեւէ եղաւ որ Սմբատը բանառէն հանէ եւ
անոր հետ մէկտեղ Հեթումին դէմ ելլէ. բայց Հե-
թում ծագելու խռովութեան առջեւն առնելու
համար, իր իշխաններուն, Տաճարականներուն եւ
Առաջնականներուն օգնութեամբն անոնց երկուքն ալ
բռնեց Յունաց կայսեր խաւրեց եւ ազաշեց որ անոնց
Կոստանդնուպոլսէն դուրս ելլելու թող չտայ:

ԼԹ. Հեթում առ եղանակաւ երրորդ անգամ
իշխանութիւնն առնելով՝ շուտ մը զօրքը կարգի դրաւ
եւ Եգիպտացւոց վրայ գնաց, որոնք Գամասիոսի
սուլթանին առաջնորդութեամբը դէպ ի Ալիկիա կու
գային. զարկաւ ցրուեց անոնց բազմութիւնը, սուլ-
թանն ալ բռնեց Ղազան խանին խաւրեց: Քիչ մը
ետքը Ղազանէն իրեն պատուէր եկաւ որ զօրքն առ-
նու իր քովը գայ, որովհետեւ կ'ուզէր Եգիպտոսի
Մէլիք Նազար սուլթանին դէմ պատերազմի ելլել. եւ
երբ որ Հեթում անոր բանակն հասաւ, խանը բոլոր
զօրութեամբ Մամէս քաղաքը գնաց, ուր Մէլիք Նազար
իրեն համար պատրաստ կը սպասէր, եւ անոր հետ
զարնուելով՝ յաղթեց ու զօրքին մեծ մասը ջարդեց:
Ասով գոհ չըլլալով՝ ուզեց բոլոր Եգիպտոսը նուաճել,
ուստի Հեթումն հեան առած՝ հոն յարձակեցաւ եւ
շատ տեղերու տիրեց. բայց նոյն ժամանակը լուր
առաւ որ Պայտոն իր աղգականն ապստամբեր է եւ
իր երկիրները կը խռովէ. ասոր համար յաղթութիւնը
կէս թող առաւ եւ բանակն առած՝ զանիկա նուա-
ճելու գնաց: Չորս տարի ետքը նորէն մեծ պատրաս-
տութեամբ Եգիպտացւոց դէմ ելաւ եւ Եփրատին
քովն հասնելով՝ Հեթումն ալ իրեն կանչեց. բայց
գեռ արշաւանքը չսկսած՝ հարկազրեցաւ նորէն իր
էշկիրը դառնալ, որովհետեւ Պայտոն դարձեալ խռու-
վութիւն հանելու սկսած էր. միայն իր Գոթլուզ զօ-
րապետը քիչ մը զօրքով հոն թողուց որ Հեթումին
հետ մէկտեղ Ասորիքն ու Պաղեստին Եգիպտացւոց

ձեռքէն յռնու : Ասոնք թէպէտ եւ իսկզրան թշնամին քանի մը տեղ զարկին եւ անոր մեծ վնաս տուին , բայց ետքն ստիպուեցան ետ քաշուիլ եւ Լփրատէն անդին անցնիլ , ուր ջրին յորդութենէն զօրաց շատերը խղրուեցան : Հեթում անկէ Նինուէ՝ Ղազանին քովը գնաց , զորն որ խանը պատուով ընդունեցաւ եւ կրած վնասին տեղն անոր 1000 թաթար զօրք տուաւ Կիլիկիայի պաշտպանութեան համար , շատ ալ ոսկի պարգեւեց եւ իր տեղը խաւրեց :

Այն տարին Ղազան խանը մեռաւ եւ իրեն յաջորդեց Ղարպազանտ , որն որ մահմետական կրօնն ընդունելով՝ քրիստոնէից դէմ դարձաւ . Հայոց ալ շատ վնաս տուաւ , եւ տարի մ'անգագար Կիլիկիայի դաշտերն ապականեց : Ասկէ միւս մօտաւոր ազդերն ալ համարձակութիւն տուին եւ սկսան հետզհետէ Կիլիկիա արշաւել եւ ասպատակել : Հեթում տեսնելով որ երկիրն աս ասպատակներէն մաքրելու համար իր զէնքէն ուրիշ օգնական չունի , ժողովեց իր զօրքն եւ յանկարծ 7000 այլազգի զօրաց վրայ յարձակեցաւ որոնք իր երկրին շատ կողմերն ասպատակած էին եւ աւարներով լեցուած ետ կը դառնային , եւ այնպէս չարաչար զարկաւ որ 7000էն հազիւ 300 հոգի կրցան փախչիլ , միւսները կէս մը ջարդուեցան կէս մ'ալ գերի բռնուեցան : Աս կոտորածին վրայ ասպատակութիւնները բոլորովին դադրեցան . Եգիպտոսի սուլթանն ալ Հեթումին հետ հաշտութիւն րրաւ :

Հեթում Կիլիկիան հանդարտեցրնէն ետքն՝ իր Թորոս եղբօրն որդին Ղեւոնն իրեն տեղ թաղաւոր օծել տուաւ ու գահը նստեցուց . իսկ ինքը Թաղաւորահայր անունն առած՝ սկսաւ դարձեալ կրօնաւորական կրթութեանց պարսպիլ :

Գ Լ ՈՒ Խ Դ

Լ Ե Ի ՈՒ Ն Գ

Խ. Լեւոնին գահ նստելը (1305) եւ այլազգեաց դէմ ըրած յաղթութիւնները: Իր եկեղեցական խնդրոյ մը պատճառաւ թաթարներուն մասնաւիճն ու Հեթումին եւ իշխաններուն հետ սպաննուելը (1307):

Խ. Լեւոն թագաւորական գահն ելածին պէս սկսաւ երկրին խաղաղութեանն ու ժողովրդեան հանդրատեան հոգ տանիլ. քանի մ'անգամ իր հօրեղբօրը հետ Սարակինոսաց դէմ պատերազմ էլաւ, որոնք Արիւկիա արշաւելու կը սպառնային, եւ անոնց յաղթեց. եւ որպէս զի զանոնք բոլորովին կարող ըլլայ նուաճել, Մամեստիայի Աոստանդին եպիսկոպոսն եւ քիչ մը ետքը Աողոսան ու Եգիտոս դեսպանները Աղեմէս Ե. Քահանայապետին խրկեց եւ անկէ օգնութիւն ուղեց: Բայց յանկարծ ծագած եկեղեցական խնդիր մը, չէ թէ միայն իր ամէն ջանքը պարապի հանեց, այլ նաեւ իր կենացը կորսուելուն ալ պատճառ եղաւ: Գրիգոր Է. Անաւարզեցի կաթողիկոսն՝ իշխանութիւնն առած օրէն կը բաղձար քանի մը ծէսի փոփոխութիւն ընել. բայց միշտ մեծամեծ արգելքներ դիմացն ելլելով՝ չէր կրցած իր խորհուրդն յառաջ տանիլ: Երբ որ Լեւոն գահ էլաւ եւ Արիւկիա խաղաղութեան մէջ էր, Գրիգոր նորէն իր խորհուրդը գլուխ տանելու ձեռք զարկաւ, եւ իրեն հարկաւոր երեւցած փոփոխութիւնները գրի անցընելով՝ Լեւոնին եւ Հեթումինն տուաւ: Նոյն միջոցին ինքը վախճանեցաւ, բայց թագաւորն ուղեւով որ աս բանիս վրայ խորհուի եւ որոշում մ'ըլլայ, ամէն կողմ հրաման խաւրեց որ եպիսկոպոսներն ու վանահայրները գան Ասոյ մէջ ժողովք մ'ընեն: Եկան ժողովուեցան քաղքին Ս. Սոփիա մայր եկեղեցւոյն մէջ քառասունէն

աւելի եպիսկոպոսներ աւ շատ երեւելի եկեղեցական-ներ և իշխաններ, եւ միաբան որոշեցին ևր Պարիզորին դրածներն բնդունին, նաեւ գրով ալ աս որոշումն հաստատեցին: Ասկէ ժողովրդեան մէջ մեծ խռովութիւն և երկպառակութիւն ծագեցաւ. եւ որովհետեւ Սոյրնակիչներուն մեծ մասն աս փոփոխմանց դէմ էին, թագաւորին աւ թագաւորահօր դէմ թշնամացան, և զային թաթարաց Պիլարդու խանն՝ որն որ նոյն ժամանակը գունդ մը զօրքով Աիլիկիա եկած էր, զանազան ամբաստանութիւններով անոնց դէմ գրգռեցին: Պիլարդու շուտ մը Հեթում թագաւորահօր դեսպան խաւրեց եւ իրեն կանչեց. ան ալ նորապսակ թագաւորն աւ շատ իշխաններ հետն աւաճ՝ Անարզաբա գնաց: Երբ որ գիշեր աաեն խանին վրանը կը մտներ, անհկապատրուակ իերերով թէ ինչու իր հրամանն այսչափ աշ կտտարեց, հրամայեց իր ծառաներուն որ եկողներուն ամէնն ալ սպաննեն. բայց մէջերնէն մէկը կարող եղաւ փախչիլ եւ աս աղէտալի դէպքին գոյժը բերել: Օչին Աւետին եղբայրն աս բանս լսածին պէս, շուտ մը բոլոր զօրքը Սիս քաղաքը ժողովեց, եւ բարկութեամբ Պիլարդուին վրայ երթալով՝ զանիկա Աիլիկիայէն դուրս վռնտեց: Այսպէս լրնեցաւ Աւետին 2 տարւան թագաւորութիւնը:

Գ Լ ՈՒ Խ Ժ Կ

Օ Շ Ի Ն

ԽԱ. Օշին եղբորը կը յաջորդէ (1308) եւ Ալիկիայի խոս-
փութիւնը կը զազրեցնէ : Եւրոպայի իշխաններն Ասիա
արշաւելու կը պատրաստուին : Օշին ու Աիպրոսի թագա-
ւորին մէջ թշնամութիւն կը ծագի : ԽԻ. Օշին Հռոմաց
Քահանայապետէն եւ Եւրոպայի թագաւորներէն օգնութիւն
կը խնդրէ : Քահանայապետը զՕշին Աիպրոսի թագաւորին
Հեա հաշտեցնելու հոգ կը տանի : Օշին մահը (1320) :

ԽԱ. ՕՇԻՆ այնպիսի ատեն մը զահն էլաւ, որ
ամէն կողմանէ թշնամիք շաղցած էին, որոնք Ալիկի-
իայի աերութեան կործանումը կը նիւթէին. բայց իր
արթնութիւնն ու գործունէայ իմաստութիւնը կարող
եղան այնչափ թշնամեայ դարանակալութեան գէժ
երկիրը պաշտպանել : Առաւվարութիւնը ձեռք առա-
ծին պէս ներքին խռովութիւնները դազրեցնելու
փոյթ տարաւ, որոնք իր նախորդին ատենն սկսած՝
դեռ կը շարունակէին. եւ որովհետեւ ասոնց բուն
պատճառն եկեղեցական խնդիրներն էին, անոր համար
հրաման տուաւ որ նորէն ժողովք մ'ըլլայ, եւ աս
բաներս կարգի դրուին :

Աս ատեններս Աղեմէս Ե. Քահանայապետը տես-
նելով որ Սարակինոսները բոլոր ասիական քրիստո-
նէաները նուաճեր են եւ միայն Ալիկիան ու Աիպրոս
կղզին անոնց լծէն ազատ մնացեր է, ամէն Եւրոպեան
թագաւորաց նամակ գրեց եւ յորդորեց որ նորէն
արեւելք արշաւեն, եւ՝ թէ մնացած քրիստոնէաներն
իրենց սպառնացող վտանգէն ազատեն, եւ թէ Ասու-
րիքն ու Ս. Երկիրն այլազգեայ ձեռքէն առնուն :
Երբ որ քահանայապետին աս թուղթը բոլոր Եւրոպա
տարածուեցաւ, շատ բարեպաշտ իշխաններ, եւ նոյն
խակ Գաղղիայի Փիլիպպոս թագաւորն աս արշաւանքն
ընելու յօժարեցան : Բայց որովհետեւ պատրաստու-
թիւն տեսնելու երկայն ժամանակ հարկաւոր էր, Քա-

հանայապետը վախնալով որ Վարակինոսները միջոց
 կը գտնեն եւ բոլոր գործ թէ ամբ Ալիլիկայի ու Ախպրասի
 վրայ յարձակելով՝ գտնուէր այ կը նուաճեն, Ապոնջա-
 կանոց զլխաւորին հրաման խտրեց որ շուտով իր
 մարդ իկնեքէն 1000 ձիաւոր ու 4000 հետեւակ ժողով
 եւ երթայ Ալիլիկայի ու Ախպրասի սահմանները պաշտ-
 պանէ, եւ աս բանիս ծախքն իր գանձէն վճարելու
 խօսք տուաւ : Քահանայապետն աս երկու թաղաւոր-
 ութեանց պահպանութեան համար այսպէս հող
 բրած տուէն, յանկարծ Ախպրասի մէջ խռովութիւն
 մը ծագելով՝ Հենրիկոս նոյն կողմն թաղաւորն
 ստիպուեցաւ Ալիլիկա վախչել : Երկրորդ տարին խռու-
 վութիւնը դադրեցաւ ու Հենրիկոս իր ամբողջ դար-
 ձաւ . բայց չիզիացաւ ինչ պատճառաւ նոյն ժամա-
 նակն ասոր եւ Օշին մէջ թշնամութիւն մը մտաւ
 եւ պնչալի սաստկացաւ որ մինչեւ իրարու դէմ գէնք
 առին : Քրիստոնեայ իշխանաց աս երկպառակութենէն
 Սարակինոսներն համարձակութիւն առին, եւ սկսան
 անոնց վրայ յարձակելու պատրաստութիւն տեսնել :
 Ասէ երկու հակառակող կողմերն ալ վախնալով՝ եւ
 միանգամայն Քահանայապետին իրենց դրած նամակէն
 յորդորուելով՝ որով զերենք կը խրատեր որ թշնա-
 մութիւնը մեկդի թողուն, ու գեցին հաշտութիւն ընել,
 եւ դատին որոշումը Քահանայապետին յանձնեցին :
 Օշին շուտ մ'իր կողմանէ Հռոմ փաստաբաններ
 խտրեց, զորոնք Քահանայապետը մեծ պատուով
 ընդունեցաւ . բայց որովհետեւ Ախպրասի թաղաւորին
 կողմանէ մարդ եկած չէր, Աղեմէս նամակով մ'Օշնէն
 խնդրեց որ մօտաւոր Զատիկն նորէն Հռոմ հրեշտակ-
 ներ խրկէ, որ երկու կողմանէ ալ դատը լսէ եւ մէջեր-
 նին խաղաղութիւնն հաստատէ : Բայց հաշտութիւնը
 նոյն ժամանակը չյաջողեցաւ :

ԽԲ. Օշին տեսնելով որ Սարակինոսներն օրէ օր
 Ասորոց երկրին մէջ կը հաստատուին եւ իշխանու-
 թիւննին կը տարածեն, իր թաղաւորութեան վեց-

երորդ տարին դարձեալ Եւրոպա դեսպաններ խաւրեց, որոնց գլխաւորն էր Յակոր՝ Ասպանի եպիսկոպոսն, որպէս զի Ասիայի քրիստոնէից վիճակը քրիստոնեայ թագաւորներուն առջեւը դնեն եւ զանոնք յորդորեն որ իրենց օգնութեան հասնին : Վեսպանները նախ Յովհաննէս ԻԲ. Քահանայապետին զայցին եւ իրենց գալուն վախճանն անոր յայտնեցին. ան ալ զիրենք Գաղղիայի թագաւորին խաւրեց : Բայց նոյն ատենն Եւրոպա ծագած խռովութիւնն աս թագաւորին շատոնց ունեցած Ասիա արշաւելու բաղձանքը կատարելու արգելք եղաւ. ասոր համար Քահանայապետը Սարակինոսաց զօրութիւնն ուրիշ եղանակաւ մը նուազընել ուզելով, ամէն քրիստոնէից նզովքով արգելեց որ անոնց ամենեւին օգնութիւն չընեն եւ պատերազմի հարկաւոր եղած բաներ չծախեն : Երկրորդ տարին Օշին դարձեալ Գաղղիայի Փիլիպպոս թագաւորին, Սիկիլիայի Ռոպերդ թագաւորին եւ Տարենտոնի Փիլիպպոս իշխանին՝ օգնութիւն խնդրելու համար դեսպան խաւրեց : Քահանայապետն աս բանս իմանալով՝ նամակով մ'իրեն իմացուց որ Գաղղիայի թագաւորը Բեղգիական պատերազմին զբաղած ըլլալով՝ չիկրնար անձամբ Ասիա գալ, բայց իր քաջ իշխաններէն մէկը մեծ բանակով քեզի օգնութեան պիտ'որ խաւրէ. եւ որովհետեւ Արարոսի թագաւորին եւ իր մէջն եղած զրգտութիւնը գեռ բոլորովին դադրած չէր, խոստացաւ որ իր կողմանէ խնդիրը որոշելու մարդիկ կը դնէ. բայց առ այժմ, ըսաւ, ըրած զինազաղարնիդ նորոգեցէք : Քիչ մը ետքն Ասպնջականաց Մորիսիոս ասպետն ու Նիկիոսիայի Պետրոս կանոնիկոսն երկու թագաւորաց հաշտեցուցիչ կարգեց, բայց ասոնք գեռ իրենց պաշտօնն ի գործ դնելու չսկսած՝ Օշին վախճանեցաւ, 12 տարի թագաւորելէն ետեւ : Մեռնելէն յառաջ երկրին խաղաղութեանը հոգ տանելով, իր տասնամեայ որդին Լեւոնն՝ Օշին իշխանին յանձնեց որ թագաւորական գահը նստեցընէ եւ ինքն անոր խնամակալ ըլլայ :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ե

Լ Ե Ի ՈՒՆ Ե .

ԽԳ . Լեւոնին թագաւորելը (1320) . Եգիպտացւոց , Թաթարաց ու Թուրքականներուն Վիլիկիա արշաւելն Էւրոսիանու թիւնները : Լեւոն Հռոմայ քահանայապետէն օգնութիւն կը խնդրէ : ԽԴ . Յովհաննէս ԻԲ . քահանայապետին Հայոց օգնութեան հասնելու համար ըրած ճիգը : (Իր բոլոր քրիստոնէից աս բանիս համար հանած կոնդակը) : ԽԵ . Թաթարաց խանը քահանայապետին յորդորելովն Հայոց օգնութիւն կը խրկէ : Լեւոն Եգիպտացւոց հետ հաշտութիւն կ'ընէ (1323) : Հաշտութեան պայմանները : Հայոց ու Վիպրոսի թագաւորին միջ եղած վեճին բոլորովն լմբննալը : ԽԶ . Լեւոնին անկարգ գործքերն . այլազգեաց նորէն Վիլիկիա յարձակիլը (1329) : Լեւոն Բենեգիկոսոս ԺԲ . քահանայապետէն օգնութիւն կը խնդրէ . Եգիպտացիք դարձեալ Վիլիկիա կ'արշաւեն (1335) . քահանայապետը սոզէ նեղեալ Հայոց պաշար կը խրկէ : ԽԷ . Եգիպտոսի սուլթանը Լեւոնին վրայ զօրք կը խաւրէ (1337) . թագաւորն Եւրոպացւոց հետ թշտակցութիւն չընելու պայմանաւ անոր հետ կը հաշտուի : Լեւոնին մահը (1342) :

ԽԳ . Լեւոն հօրը մահուանէ ետքը հանդիսութեամբ թագաւոր օժուելով՝ արքունական գահը նստաւ . բայց որովհետեւ ինքը դեռ տասնամեայ տղայ էր , կառավարութեան գործքերն Օշին իշխանն՝ իր խնամակալն սկսաւ կատարել , որուն առաջին գործքն եղաւ ամէն կողմանէ նեղութենէ պաշարուած երկիրը բարեկարգել ու հանգստացընել : Ասոր գործունէութեամբ Լեւոնին թագաւորութեան առաջին տարին խաղաղութեամբ անցաւ . բայց յանկարծ աղէտալի պատերազմներու հրդեհը բորբոքելով՝ Վիլիկիայի կերպարանքը բոլորովն փոխեց եւ անոր կործանմանն սկզբնաւորութիւնն ըրաւ :

Աս ժամանակս Եգիպտոսի ու Պաղատաի վրայ կ'իջնէր Մելիք Նազար սուլթանն , որն որ ամէն ասիական քրիստոնէականներն իր տակը նուաճելով՝ եւ տեսնելով որ միայն Վիլիկիայի Հայերն իր իշխանութենէն ազատ

մնացած են, սկսաւ զանոնք ալ նստածելու եւ քրիստոնէութիւնն Ասիայէն բոլորովին ջնջելու պատրաստուիլ : Աս մտքի վրայ եղած ասեմեր, լոր առաւ որ Գաղղիայիք նորէն արեւելք արշաւելու պատրաստութիւն կը անենեն. ուստի աճապարեց որ անոնք չհասած ինքն իր խորհուրդն ի զործ զնէ : Աւ որպէս զեբանք դիւրաւ գլուխ հանէ, Թաթարաց Գիմուրթաշ զօրապետին եւ Թիւրքմէններուն Արաման իշխանին հետ դաշինք դրաւ եւ զանոնք իրեն հետ միացուց : Հայոց մէջ աս ասեմներս խռովութիւն եւ երկպառակութիւն ինկած էր եւ իշխաններն իրարու ու թագաւորին դէմ թշնամացած էին, որով թշնամաց Աիլիկիա մանելը շատ դիւրին եղաւ : Առաջին յարձակումը Գիմուրթաշ ըրաւ, որն որ 30,000 ձիաւորով մտաւ Աիլիկիա եւ 25 օր անդադար աօպատակեց, աստած մարդիկը ջարդեց, անպարիսպ քաղաքներն առաւ ու կրակի տուաւ, բոլոր անդերն ապականեց, եւ անասուններն աւար առաւ եւ հազարաւոր գերիններով դարձաւ գնաց : Ժողովրդեան շատերն ամուր լերանց վրայ փախչելով՝ հազիւ կրցան կեանքերնին ազատել : Թաթարները քաշուելուն պէս եկաւ Արաման իշխանն իր թիւրքմէն զօրքովը, եւ առաջին ասպատակութենէ զերծ մնացած անդերն ապականեց ու կործանեց : Երբ որ աս ալ ետ դարձաւ, Եգիպտոսի սուլթանն իր զօրքը խրկեց որ Աիլիկիային վերջին կործանման հարուածը տան, որոնք եկան սաստիկ պատերազմաւ Լայաս ծովեզերեաց բերդաքաղաքն առին, բնակիչներէն շատերն անխնայ ջարդեցին ու քաղաքն իր ծովու մէջ շինուած ամուր բերդովը կործանեցին գեանի հաւասար բրին : Քաղաքացւոց սաստիկ նեղութեան ասեն իրենց շատ մեծ օգնութիւն եղան Աիպրոսի նաւերը՝ զօրսնք նոյն կղզոյն թագաւորը քրիստոնէական սիրով խնայած էր վտանգեալ հայերն ազատելու համար : Շատ մարդ աս նաւերուն մէջ փախչելով՝ Աիպրոս տարուեցան :

Եգիպտացիք իրենց յազթութեան ուրախութեան մէջ անհոգ եւ անկասկած կեցած ասան, 600 արի ու քաջասիրտ հայ զինուորներ մահն աշուրնին առած՝ յանկարծ անոնց բազմութեան վրայ յարձակեցան, զանոնք շփոթեցին, եւ մէջերնէն շատ մարդ ջարդելէն ետեւ ետ քաշուեցան. աս բանս նոյն օրը երեք անգամ կրկնելով Եգիպտացւոց զօրքը շատ տկարացուցին: Բայց Լեւոն եւ բոլոր իշխանները տեսնելով որ վտանգն օրէ օր կը սաստկանայ եւ իրենք առանձին չեն կրնար անոր առջեւն առնելու դարման գտնել, խորհուրդ քրին ու Հոամ Յովհաննէս ԻԲ. Քահանայապետին գետպանի ձեռքով նամակ խաւրեցին, որուն մէջ իրենց վիճակն անոր առջեւը դնելով՝ կ'աղաչէին որ շուտով իրենց օգնութիւն ընէ:

ԽԳ. Աս նամակն ու գետպաններուն տուած տեղեկութիւնները խնամոտ Քահանայապետին սրտին մեծ ցաւ ու տրտմութիւն պատճառեց, եւ շուտ մը սկսաւ տառապելոց օգնութեան հասնելու միջոց մը փնտռել: Նախ Գաղղիայի Կարողոս թագաւորին թուղթ մը գրեց եւ Վիլիկիայի վիճակն անոր իմացընելով՝ յորդորեց որ շուտով Ասիա արշաւէ եւ նեղութեան մէջ եղող քրիստոնէից օգնական ըլլայ. բայց երբ որ անիկա զանազան պահանջմունքներ ընելով ու խնդիրներ հանելով բանն ուշացուց, եւ ետքն Անդղիացւոց դէմ պատերազմ բանալով՝ աս արշաւանքէն բոլորովին ետ կեցաւ, Քահանայապետն հայրական գթով շարժած՝ բոլոր քրիստոնէից կոնդակ մը հանեց, որով Հայոց վտանգն ու տառապանքն անոնց կը ծանուցանէր, եւ ներողութիւն տալով կը յորդորէր որ խաչի նշան առնուն եւ Սարակինոսաց դէմ պատերազմի երթան:

Քահանայապետին աս կոնդակը պատշաճ կը համարինք հոս դնել, որովհետեւ ասիկա թէ՛ նոյն խնամոտ Հովուապետին Հայոց վրայ ունեցած գութն յայանի կը ցուցընէ, եւ թէ՛ աս ժամանակեան պատմութեան վրայ շատ լուսաւորութիւն կու տայ:

«Յովհաննէս եպիսկոպոս, ծառայ ծառայիցն Աստուծոյ, ամէն մեր աս թուղթը տեսնող քրիստոնէսայ հաւատացեալներուն:

Երբ որ մեր միտքն ու խորհուրդը սաստիկ մտադրու-
թեամբ Ս. Երկրին օգնելու եւ անոր սղալի վիճակին վրայ
կը դարձընենք, կը ստիպուինք մարգարէին հետ ըսել.
«Քու տառապանքդ ծովու պէս մեծ է, ո՞վ կրնայ քեզի
դարման ընել»: Ստուգիւ մարգարէն անոր վրայ գալու
մեծ վիշտը յիշելով՝ եւ չկրնալով զանիկա ուրիշ բանի մը
նմանցընել, ալէկոծեալ ծովու նմանցուց, որն որ հոգ-
մերուն բռնութեամբ կը կուտակի ու կ'ամբօթի, ըսելով.
Քու տառապանքդ ծովու պէս մեծ է. վասն զի ամէն կող-
մանէ ալիքները կը ծածկեն, դարանները կ'որսան ու թըշ-
նամիք սպաննելու կ'աշխատին: Բայց երբ որ մարգարէն
անոր դարման ընելու սաստիկ դժուարութիւնն եւ Աս-
տուծմէ բարորո՞վին լքուած ըլլալն ալ տեսաւ, շատ իրաւ-
ամբ աւելցուց. «Վ՛վ կրնայ քեզի դարման ընել. վասն զի
անոր վրայ սէր ունեցողներն հեռացած, անոր օգնական
ըլլողները մէկդի պացած են: ատելիները մօտեցած սաստիկ
կը ծանրաբեռնեն որ կարող չըլլայ նորէն յառնել: Նաեւ
անոր սահմանակից Հայերուն պաւառներուն եւ անդաս-
տաններուն վրայ ալ յարձակելով՝ մարդիկը կը փարդեն,
երկիրն անապատ կը դարձընեն: Այսպէս կը հարստահարեն
որ զանոնք ջնջեն, կ'ընկճեն որ իրենց հարկատու ընեն,
կը բռնանան որ հաւատքին ուրացընել տան:

Որովհետեւ, ցաւով կը պատմենք ու մեծ սրտի դառ-
նութեամբ կը յիշենք, աս մօտերս մեր մեծարեալ եղբարքը՝
Հայոց արքեպիսկոպոսներն եւ եպիսկոպոսները, եւ մեր
սիրելի որդին ի Քրիստոս Լեւոն թագաւորն, Օշին՝ Աորի-
կոսի իշխանն ու Աիլիկիայի կառավարն եւ Հայոց ուրիշ
իշխաններն ու ժողովուրդն իրենց նամակովն ու հրեշտակ-
ներովն արտասուօք մեզի ծանուցին որ Քարիլոնի սուլթանն,
որն որ իբ չարութեամբն երկրորդ Փարսաւոն մըն է, որուն
սիրտն Աստուծոյ ժողովրդեան դէմ կարծրացած է, եւ
թիւրբա՞նները՝ թէպէտ եւ իրենց (Հայոց) մինչեւ հիմա
շատ միասներ հասուցած էին, բայց որովհետեւ ան կող-
մերը քրիստոնէից ձեռքը Հայաստանէն (Աիլիկիայէն) զատ
հաստատուն երկիր չմնաց, ասոր համար հիմա զանիկա բա-
լորովին ջնջելու կը ջանան. մանաւանդ երբ որ լուր առին
որ Առաքելական գահն որոշած է նոյն Հայոց իրենց այն-
չափ նեղութեան մէջ օգնութիւն ընել: Միանգամայն

կասկածելով որ չըլլայ թէ Գաղղիացիք Հայոց հետ միանալով՝ սաստիկ զօրութեամբ իրենց վրայ յարձակին, նոյն սուլթանը թաթարաց հետ՝ որոնք 100 ասրիէ ի վեր Հայոց բարեկամ էին, եւ անոնց օգնութեամբն Հայերն իրենք զիրենք Սարակինոսաց դէմ կը պաշտպանէին, անոնց դէմ կը գնէին, եւ նաեւ անոնց վրայ կը յարձակէին, եւ թիւրքմէններուն Արաման իշխանին հետ փնասակար բարեկամութիւն հաստատեց, որպէս զի երեքպատիկ զօրութեամբ զօրացած՝ երեք կողմանէ Հայոց երկիրը յարձակին, անոնց ղյժը կոտորեն եւ զանոնք ռանակոխ ընեն, եւ աս գիտաւորութիւնը դործքով ալ կատարեցին:

Այսն զի Դիմուրթաշ թաթարաց զօրապետը, Հայաստանի սահմանակից եղող իշխաններուն ամենէն մեծն ու զօրաւորը, 30.000 ձիաւոր զօրքով Հայաստան արշաւեց, եւ 25 օրուան մէջ որ իբրեւ թշնամի հոն կեցաւ, Ջարդեց, կործանեց, սյրեց ու յափշտակեց. եղբն, ոչխարներն եւ ուրիշ անասուններն աւար առաւ, արտերուն գետ կանանչ հասկերն իր ձիերովն այնպէս սպառեց որ եւ ոչ սերմի համար մնացորդ մնաց: Եւ որովհետեւ Հայաստանի մէջ թաթարաց վրայ ամենեւին կասկած մը չկար որ թշնամութեամբ իրենց վրայ կը յարձակին, եւ իրենք թաթարներն ալ ուրիշ անգամներ Հայոց երկրին մէջ բարեկամարար պարտած ըլլալով՝ անոր ներքին վիճակը գիտէին, զաշտարու վրայ անհամար մարդիկ սպաննելէն, եւ լերանց վրայ ու բերդերու մէջ ապաւինած կանանցմէ ու աղփքմէ շատերը գերի բռնելէն ետքը, եկեղեցիները կործանեցին, սեղանները պղծեցին, քահանաներն սպաննեցին, նաեւ արքայարանները, վանքերն ու խրճիթներն ալ կիզիչ կրակով սպառեցին: Ասոնց կատաղութիւնն այնչափ սաստկացաւ, որ ոչ մեռածներու խնայեցին, ոչ վախճանելոց վրայ դուրս ունեցան, այլ անոնց մարմինները գերեզմանէն հանեցին, գերեզմանները պղծեցին, շիրիմները կողոպտեցին եւ յիշատակարանները դատարկ թողուցին. նոյնպէս ողջերուն ստացուածներն ու կահկարասիքն ալ աւար առին:

Երբ որ Դիմուրթաշ թաթարը Հայոց երկրէն քաշուեցաւ, վերը յիշուած Արամանը՝ թիւրքմէններուն իշխանը, նոյն Դիմուրթաշին հոգաբարձութեամբը, մանաւանդ թէ անզգամ դրդառութեամբը, մեծ բանակով Հայաստան արշաւեց եւ ինչ որ գտաւ աւրեց, կործանեց ու ցրուեց: ... Նոյն իսկ սուլթանն ալ՝ որն որ վերը պատմուած անզգամութեանց զրգուիչն եղած էր, ուզելով երբորդ վշտով

մ'ալ Հայերն ընկճել, առաջին երկուբիւն յաշուելէն ետքն, անհամար սարակինոսաց զօրք Հայաստան խրկեց, որոնք մնացած տեղերն անընակ ըրին. Լայստ քաղաքն՝ որ իր բերդօվը շատ երեւելի էր, կործանեցին եւ սյրեցին. նաեւ անոր ծովի մէջ շինուած ամուր բերդը՝ ծովէն ու ցամաքէն պատերազմելով՝ առին ու գետնի հաւասար ըրին, որպէս զի ասոր մէջն ալ կատարուի Յովէլ մարդարէին աս դուշակութիւնը. «Զմնացորդս թրթրոյ եկեր մարախ եւ զմնացորդս մարախոյ եկեր ջորեակ, եւ զմնացորդս ջորեկի եկեր երեւել», Ասոր համար նեղեալը մեզի կ'աղաղակէ, ինչպէս որդին իր հօրը. ծովին անդիի կողմն եղող քրիստոնէսայ ժողովուրդը Հռոմայ եկեղեցւոյն իբրեւ մտր կը բողբէ, ընդհանուր քրիստոնէից իբրեւ եղբարց կը դիմէ եւ անկէ օգնութիւն ու նպաստ կը խնդրէ: Վասն զի քրիստոնէութիւնը թշուառ Հայաստանի մէջ բռնադատուած է. . . . սուլթանն անոր բնակիչները կը սպառէ, կը քանդէ կ'այրէ, անոնց ջնջում եւ իր մշտնջենաւոր ծառայութեան լուծը վրանին դնել կը սպառնայ: Նաեւ մեղի Եգիպտացիք, ինչպէս որ կը պատմուի, ցռկանաւներ կը պատրաստեն ու կը ջանան որ Ախլրոսի հաւատացեալ, բարեպաշտ ու քրիստոնէութեան շատ յարմար թաղաւորութեան վրայ յարձակին: Վասն զի սուլթանը նոյն կողմոյն թաղաւորին բարկացած է, որովհետեւ անիկա Հայոց վրայ զթալով՝ պատերազմի վտանգներուն աստենն անոնց շատ նաւեր խաւրեց եւ Լայստ քաղքին բնակիչներն եւ ուրիշ Հայաստանի մէջ բնակող քրիստոնէաներ անոնցմով Ախլրոս բերել տուաւ որպէս զի մահուանէ ազատին:

Բայց «Ոչ այսպէս ամբարիշտ, ոչ այսպէս», այլ կը յուսանք ի Տէր որ զանոնք կը ցրուեն «Իբրեւ փոշի զօր հոսէ հողմ ի վերայ երեսաց երկրի: Քանզի ճանաչէ տէր զշաւիղս արդարոց, եւ ճանապարհ ամբարշտաց կորիցէ», Եւ արդէն նոյն Տէրն երեք տարի յառաջ նոյն Հայոց թաղաւորութեան մէջ իր զթութիւնը ցուցուց: Վասն զի 200ի չափ քրիստոնէայ զինուորներ՝ որոնց կեանք Քրիստոս էր ու մեռնիլը շահ, մեր փրկչին ապաւինած, Հայաստանին մէկ կապանին մէջ իրենց վրայ յարձակող 18,000 սարակինոս ձիաւորներէն 6000էն աւելի ջարդեցին, մէկ մասն ալ գերի բռնեցին: Հիմա ալ իր Հաւատացեալներուն միշտ սքանչելիք ընող ողորմած Աստուածը դադրած չէ. վասն զի, ինչպէս վերը յիշուած լուրերէն իմացանք, Լայստին կործանուելէն եւ անոր ծովեզերեայ բերդին քանդուելէն

եայն, երբ որ սուլթանին Հայաստանի մէջ եղող զօրքն աւարաւ լեցուած յազմականներու պէս բրբուլթեամբ կ'ուրախանային, 600 արի ու հզօր հայ զինուորներ մի եւ նոյն օրուան մէջ երէք անգամ մասնաւոր պատերազմներ ընելով՝ անոնց բազմութեան վրայ յաղթութեան նշան կանգնեցին, այնպէս որ անոնց զօրազուխը զարմացած՝ բոլոր զօրքը ժողվեց եւ անոնցմէ 4—5000 հոգի (Ապասին քովն ինկոզներն ալ մեկտեղ համընելով) պակաս գտաւ։ Եւ զարմանք չէ, վասն զի «Կարդացին արգարք առ Տէր եւ Տէր լուաւ նոցա, յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա»։ . . .

Արդ մենք եւ ամէն Քրիստոսի Հաւատացեալներն, երբ որ անոր՝ որն որ մեզի համար խաչին վրայ շարչարուեցաւ, վերքերը կը տեսնենք, անձկութիւնը կը յիշենք, այնչափ անհամար թշնամանքները մայրերնիս կը բերենք, կըրնա՞նք արդեօք հաւատացեալ ժողովոյդեան այնչափ նեղութեանը մէջ, այնչափ թշուառութեանն, այնչափ աղաղակին եւ այնչափ երկիւղին մէջ մեր արաստուրը բռնել, հեծութիւննիս արդելուլ եւ գթութեան աղիքը փակել, հեռու ըլլայ սա բանս հաւատացելոց մարէն եւ բոլոր քրիստոնէից երկրէն։

Ասոր համար մենք եւ մեր եղբայրները՝ Հռոմայ եկեղեցւոյն կարգինալները, հասուն դատաստանաւ մտածելով՝ խորհրդածութեան կշռովը կը կշռենք եւ սրտանց ցաւակից կ'ըլլանք եւ այնչափ մեասներուն ու պատահարներուն առջեւն առնելու, այնչափ ընչից կորստեան, հոգւոյ եւ մարմնոյ գտանգներուն օգնութեան հասնելու եւ անոնց շուտով զարման ընելու ճամբայ ու միջոց կը փնտռենք։ Հիմակու հիմա մեզի եւ մեր վերը յիշուած եղբայրներուն ամէն բանէն դիւրին երեւցած միջոցը, Քրիստոսի Հաւատացեալներէն ստակ ժողվելն է, որուն համար նաեւ Հայերն ալ իրենց վերմեռանդ աղաչանքը մատուցին, որով՝ ցորեան, դարի եւ ուրիշ կենաց հարկաւոր բաներ, նոյնպէս զէնք ու թոշակաւորաց թոշակ հոգացուի, որոնց Հայերն հիմա շատ հարկաւորութիւն ունին իրենք զիրենք պաշտպանելու համար։ Նաեւ կրնայ հաւատացելոց գրամական օգնութեամբը Հայաստանի պաշտպանութեան համար՝ պատշաճ, թէ՛ ձիաւոր եւ թէ՛ հետեւակ պատերազմողներ հոգացուիլ, մինչեւ որ ամենակարող Աստուածն իր մարդասէր գթութեամբը տառապանաց մէջ եղող ժողովոյդեան եւ բոլոր նեղեալ քրիստոնէից վրայ գթալով՝ իր ամենազօր աջն երկնցընէ անոնց օգնելու համար։

Առաջի՛ առննուդ առհասարակ եւ ամէն մկերնուդ առանձին հայրական խնամով կ'աղաչենք, զձեզ կը յորդորենք, եւ հոգեւոր խնդութեան վարձքովն՝ որն որ իրամբ ժամանակաւորներէն վեր կը համարուի, զձեզ կը փութացընենք, եւ Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի ամենասուրբ արեանը թափուելուն եւ Աստուծոյ զթափեանը համար ամննուդ կը պաղատինք որ Հայոց արեանն ու հաւատքին, տառապանացն ու կործանմունք վրայ զթափով՝ անոնց եւ Ախարացոց առատ նպատաներով եւ առատաձեռն սղորմութեամբ օգնութիւն ընէք, եւ իրբեւ քրիստոնէական կրօնի նախանձախնդիր, նաեւ անձամբ Արեւելք երթալու եւ հոնտեղի հաւատացեալ ժողովուրդը պաշտպանելու պատրաստուիք, :

Ասկէ ետքը Քահանայապետն ամէն Արեւելք պատերազմի գացողներուն եւ հոն տարի մը ծառայողներուն, նաեւ անոնց՝ որոնք անձամբ չկրնալով երթալ թոշակաւոր զինուոր կը բռնեն կամ ստիով օգնութիւն կ'ընեն, ներողութիւն կը շնորհէ, ու կոնդակին վերջն ամէն եկեղեցական առաջնորդներուն կը պատուիրէ որ իր աս գրուածն իրբեւ քարոզ՝ ժողովրդեան առջեւը դնեն, եւ զանոնք մէջը խնդրուած բաները կատարելու յորդորեն :

Աս կոնդակէն զատ բոլոր եկեղեցական առաջնորդներուն շրջաբերական թույլթ մը խրկեց, որուն մէջ քանի մը համառօտ ազօթքներ գրած էր Աստուծոմէ նեղեալ քրիստոնէից օգնութիւն խնդրելու համար, ու կը պատուիրէր որ զանոնք ամէն եկեղեցիներու մէջ ժողովրդեան ընել տան. միանգամայն եկեղեցիներուն գանձանակները ձգուած ստակները զատ պահեն որ Ս. Երկրին օգնութեան համար գործածուին : Արիշ նամակ մ'ալ Թաթարաց Պուսայիս խանին խաւրեց, որուն մէջ անոր իր նախորդներուն Հայոց հետ ունեցած բարեկամութիւնն եւ անոնց բրած օգնութիւններն յիշեցընելով՝ կ'աղաչէր որ ինքն ալ անոնց նեղութեանը մէջ անոնց օգնական ըլլայ ու Սարակիսոսաց դէմ պաշտպանէ : Նոյնպէս Հայոց եպիսկոպոսներուն ալ երկու նամակ գրեց, որոնց մէջ իր սաստիկ ցաւն անոնց յայտնելէն ետեւ, կ'աղաչէր որ ժողովուրդը թշնամեաց դէմ հաստատուն կենալու

յորդորեն եւ ջանան զԱստուած իրենց հետ հաշտեցնել, որպէս զի իրենց ողորմի: Թագաւորն եւ իշխաններն ալ զատ նամակով մը յորդորեց որ արատաւօր իրենց մեղքերուն վրայ զղջալով՝ եւսանդեամբ Աստուծոյ ողորմութիւնը խնդրեն, եւ բրիտանական թեան սիրոյն համար ամէն վտանգ յանձն առնուն: Կր կողմանէ ալ ամէն պատերազմի մէջ մեռնողներուն ներողութիւն շնորհեց, եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքին ու բենեւենդի Կերալտոս սարկաւազապետին հրաման խաւրեց որ Լեւոնին 30,000 սակի խաւրեն, որպէս զի անոնցմով Սարակինոսաց դէմ ընելու պատերազմներուն ծախքը հոգայ:

Խ: Խոնամոս Քահանայապետին աս ամէն ջանքը պարտալի չելաւ, վասն զի Հայերն անոր նամակներովն իրենց հաւատքին պաշտպանութեանը համար բոլոր զօրութեամբ թշնամւոյն դէմ դնելու յորդորուեցան. մէկ կողմանէ ալ Պուսայիտ խանն անոր նամակէն շարժած, իր զօրապետներէն մէկը 10,000 կամ բոսոսումանց 20,000 ձիաւոր զօրքով Հայոց օգնութեան խաւրեց, պատուէր տալով որ սուլթանին ու Հայոց մէջ հաշտութիւն ընել տայ, եւ եթէ աս բանս չիյաջողիր, ինքը զՀայերը պաշտպանէ: Երկրորդ տարին աս զօրապետին ձեռքովն հաշտութիւնը հաստատուեցաւ, որուն պայմանները նոյն տարին Կիպրոսէն գրուած վաճառականի նամակ մ'այսպէս կը դնէ: «Սուլթանը Հայոցմէ ամէն տարի որոշեալ տուրք պիտ'որ առնու, որն որ պիտ'որ ըլլայ տարին 1,200,000 դենար, ան տեսակ դենարէն՝ որուն չորս հատը մէկ Կիպրոսի Բիւզանդեան արծաթ ստակին հաւասար է: Ասկէ զատ Լայասին եւ իր նաւահանգստին առուտուրէն առնուած տուրքին կէսը, նոյնպէս ծովէն հանուած աղերուն կէսն իրեն պիտ'որ ըլլայ, եւ (Եփրատ) գետէն սկսեալ դէպ ի Ասորիքի կողմը բնակողներէն՝ ամէն 20 տարին անցած էրիկ մարդու զլուխ մէկ Բիւզանդեան սակի գլխահարկ պիտ'որ առնու: Իսկ ինքն ասոնց դիմացը՝ Հայաստանի

մէջ ամենեւին բերդ կամ ամրոց պիտի չունենայ, ու
 Հայասի բերդն եւ ուրիշ ամէն բերդերը՝ գործնք ինքը
 կործանել տուաւ, իր ծախքովը յառաջուան պէս կամ
 աւելի եւս ամուր շինել պիտի որ տայ, : Նոյն նամակը
 կ'ըսէ թէ, «Վ'ըսուի որ Հայոց կաթողիկոսն՝ որն որ
 Ասորոց Հալէպ քաղաքն էր, սուլթանին հրամանովը
 Քայիրոյ գնաց, անոր հետ վերը գրուած գաշինքն հաս-
 տատելու համար. բայց դեռ չկոխացու իր որ աս հաշ-
 տութիւնն սրչափ ատենուան համար է. ամսնք 13
 ամսնք ալ 14 տարւան համար է կ'ըսեն», :

Վիշ մը ետքը Քահանայապետն աս հաշտութեան
 լուրն եւ անոր ստաց դարադաններն հաստատուն տեղէ
 առաւ, եւ սաստիկ ուրախանալով՝ շուտ մը Քաղղեայի
 Կարողոս թագաւորին նամակ գրեց, որուն մէջ անոր
 սյսպէս աւետիս տուաւ : «Քու թագաւորական բար-
 ձրութեանդ ուրախութեանը համար կը ծանուցանենք
 որ սուլթանը տարւէ տարի 50,000 փղորին տուրք
 աւնելու պայմանաւ Հայոց հետ հաշտութիւն ըրեր եւ
 մէջերնին 15 տարւան խաղաղութիւն հաստատուեր
 ու նոյն կողմերն հրատարակուեր է : Արդէն պատե-
 րավմի պատճառաւ փախած Հայերն իրենց տեղը դար-
 ձեր են», : Եւ որովհետեւ Կիպրոսի եւ Հայոց մէջ եղած
 վէճը դեռ բոլորովին լմնցած չէր, Քահանայապետը
 զանրկա ալ դադրեցընելու եւ երկու թագաւորներն
 իրարու հետ սերտիւ կապելու համար, Երուսաղէմի
 պատրիարքն, Այմերիկոս՝ Պափոսի եպիսկոպոսն եւ
 Մաւրիտիոս՝ Ասպնջականաց առաջնորդն անոնց մէջ
 դատաւոր ու հաշտեցուցիչ կարգեց : Լեւոն աս վախ-
 ճանաւ իր դեսպանները Կիպրոս խրկեց եւ հոն խա-
 ղաղութիւնն ու հաշտութիւնը հաստատուեցաւ :

ԽՁ. Թէպէտ եւ սյսպէս Կէհիկիա Քահանայա-
 պետին ջանքովն արտաքին թշնամունքէն ազատելով
 խաղաղութիւն գտաւ, բայց Լեւոն իր անկարգ գործ-
 քերովն աս խաղաղութիւնը բոլորովին աւրեց, եւ թըշ-
 նամեաց նորէն իր վրայ դալու առիթ տուաւ : Վասն

զի աւերութեան երեւելի իշխաններն՝ որոնք իր կառավարութեան գլխաւոր օգնականներն էին, պաշտօններնէն ձգեց, եւ անոնց աւել նոր պաշտօնեաներ գրաւ իր խնամակալին հետ ալ թշնամանալով՝ սպաննել տուաւ. նոյն իսկ իր կինն իր անդթութեանը զոհ բրաւ եւ Սիկիլիայի Թագաւորին Աստանդիա անդջկանը հետ նորէն պսակուեցաւ: Աս անդգամութիւններն անխիղճ գործած ատենն, երբ որ աւերութեան ամէն կողմն անհոգ եւ առանց պաշտպանութեան թող տրուած էր, այլազգիք դարձեալ Աիլիկիա արշաւեցին, Ջարդեցին, Թալեցին, քանդեցին եւ աւարով լեցուած՝ դարձան դային: Աւելոն նորէն Քահանայապետին դեսպան խաւրեց եւ աղաչեց որ իրեն օգնէ. եւ որովհետեւ իր սահմանակից այլազգի իշխաններն իրեն ստկի կարօտութիւն ունենալը դիտարարով՝ Անտիոքեղա եւ Սիգուինոն բերդերը կ'ուզէին իրմէ գնել, Թագաւորն այլազգեաց ոտքն իր երկրին մէջ նորէն չհաստատելու համար, նոյն բերդերը Հռոմացւոց ասպետներուն պարգեւեց որ զանոնք ամրացրնեն եւ Աիլիկիայի սահմանն ապահովցրնեն. եւ աս բանս ալ Քահանայապետին իմացուց:

Իննեղիկտոս ԺԲ. Յովհաննէս Քահանայապետին յաջորդն՝ աս բաներս լսելուն պէս, նորէն խաչակիր զօրք սուր հանելու ձեռք զարկաւ, որպէս զի արեւելեան քրիստոնէից վերջին պատասպարանը (Աիլիկիա) Սարակինոսաց դէմ պաշտպանուի, եւ նաեւ Ս. Երկիրն անոնց ձեռքէն ազատի: Թուղթ գրեց ամէն Թագաւորներուն որ աս սուրբ պատերազմին օգնական ու գործակից ըլլան: Ամէն տեղ քարոզիչներ տարածուեցան որ ժողովուրդը խաչակիր զօրք գրուելու յորդորեն: Ասիկէ ամէն արեւմտեան իշխանները յորդորուեցան եւ սկսան լահազին պատրաստութիւն տեսնել. որոնց մէջ ամենէն աւելի՝ Փիլիպպոս Գաղղիայի Թագաւորն՝ աւելի սպառնալիքներով ու համբաւով՝ քան թէ՛ գործքով պատրաստութիւն կը ցուցրնէր:

Այսպիսի ահազին գորդիւնն ու պատրաստութիւնն երբ որ Եգիպտոսի սուլթանը լսեց, բարկութեամբ բորբոքած՝ բոլոր կատաղութիւնն Հայոց վրայ թափեց, եւ անոնց հետ բրած խաղաղութեան դաշինքն աւելուով՝ Արիւիկիա մեծ բանակ մը խաւրեց, որուն զօրապետ դրաւ Հայէպի ամիրան: Եկան Եգիպտացիք անարգել ամէն կողմ տարածուեցան, ջարդեցին, կործանեցին եւ աւարով ու գերութեամբ ետ դարձան: Լեւոն անոնց գէմ՝ դնելու զօրութիւն չունենալով՝ անառիկ բերդի մը մէջ մտաւ ամրացաւ, եւ Բրամոնդ Լուսինեան Արիւիկոսի կոմսը դեպքանութեամբ Բենեդիկտոսին խրկեց: Քահանայապետը շատ աշխատեցաւ որ Եւրոպայի թագաւորներէն Հայոց օգնութիւն մը հոգայ, բայց երբ որ ջանքը պարապի ելաւ, Սիկիլիայի, Ալպրոսի, Հոռոզոսի, Արեւելի, Եւրէայի քրիստոնէից եւ ուրիշ արեւելեան հաւատացեալներու նամակներ գրեց՝ որ Հայոց օգնութեան երթան, ցուցնելով անոնց որ եթէ Հայաստան Սարակինոսաց ձեռքն անցնի, ալ անկէ ետեւ Պաղեստինի մուտքը բոլորովին կը գոցուի: Նաեւ իր գանձէն 10,000 ոսկի տալով, լրիչ մը ստակ ալ Գաղղիայի թագաւորէն առնելով՝ շատ ցորեան դնեց ու Արիւիկիա խաւրեց, վասն զի թշնամեաց ասպատակութիւններէն արտերն աւրուած ըլլալով՝ տեղ տեղ սով ինկած էր:

Եւ. Վահանայապետին այսչափ ջանքն եւ բրած օգնութիւնները չկրցան Հայոց տառապանքները թեթեւցնել, վասն զի իրենց թշնամիներուն կատաղութիւնն օրէ օր կը սաստկանար, որոնք անդադար իրենց վրայ յարձակելով կը ջարդէին ու կը գերիւնէին: Ասոնց մէջ ամենէն երեւելին եղաւ Եգիպտոսի Մէլէք էլ Նաղար Մահմուտ սուլթանին զօրքին ասպատակութիւնն, որոնք իրենց իշխանին հրամանաւր Արիւիկիա մտնելով՝ արտաքոյ կարգի անգթութեամբ քաղաքներուն ու գեղերուն բնակիչներն սպաննեցին եւ ինչքերն աւար առին: Լեւոն սաստիկ

նեղը մաներով՝ ստիպուեցաւ սուլթանին հաշտութեան համար պահանջած պայմանն յանձն առնալ, որն որ էր իր դեսպանին առջեւն աւետարանի վրայ երզում բնելով խօսք տալ՝ որ անկէ ետեւ ամենեւին Հոռոմ նամակ կամ դեսպան չխաւրէ. եւ այսպէս թշնամին իր ասպատակութիւնները դադրեցուց ու Արիւկիայէն դուրս ելաւ: Հաս մեծ ցաւ պատճառեց Բենեդիկտոսին առ պայմանն՝ որով անկէ ետքը Հայոց եւ Հոռոմայ մէջ եղած հաղորդութիւնը բոլորովին պիտ'որ կարէր, եւ նոյն տարին Ղեւոնդին նամակ մը դրելով՝ քահանայապետական իշխանութեամբ զանիկա առ վնասակար երզումէն արձակեց:

Անկէ ետքը Ղեւոնդ Կ տարիի չափ ալ իշխանութիւնը վարեց եւ թագաւորութեանը ՉԼերորդ տարին վախճանեցաւ:

Գ Լ Ո Ւ Ի Ի Ժ . Գ .

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն Գ . Գ Ո Ւ Ի Ի Տ Ո Ն Ե Ի

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն Գ .

ԽԸ . Կոստանդին թագաւոր կ'ընարուի (1342) եւ իր զօրքէն կը սպաննուի: ԽԹ . Գուրխոսն Կոստանդինին իշխանութիւնը կ'առնու (1343). Ժողովուրդն իրեն ընթացքը չհաւանելով՝ զինքը կը սպաննեն: Ծ . Կոստանդին Արիւկիայի գահը կ'ելլէ (1345), եկեղեցական խնդիրները կը դադրեցընէ ու Կիւրացւոց եւ Հոռոմացւոց օգնութեամբն Եգիպտոսի սուլթանին կը յաղթէ: Կղեմէս քահանայապետին Հայոց օգնութիւն ընելու համար ըրած ջանքը. Կոստանդին Եւրոպայի թագաւորաց դեսպան խրկելը. իր Եգիպտացւոց վրայ ըրած յաղթութիւնն եւ իր մահը (1362):

ԽԸ . Լեւոնդին մահուամբը թագաւորական ցեղն սպառելով՝ անոր հետաւոր ազգականներուն մէջէն Յովհաննէս իշխանը թագաւոր ընարուեցաւ, որն որ Ղեւոնդ Գ-ին Զապելլ ազնկանն սրբին էր, եւ անուանեցաւ Կոստանդին Գ: Բայց ասոր իշխանութիւնն հաղիւ տարի մը տեւեց. վասն զի գահն ելածին պէս

անկարգ ընթացք մը բռնելու սկսաւ, որով ժողովուրդն եւ նոյն իսկ զօրքն իրեն դէմ զրգոտեցան եւ գարկին սպաննեցին :

Եւ թէ . Արստանդնէն ետեւ անոր Գուխտն եղբայրը թագաւոր ընտրուեցաւ, որն որ շատ կարճ ու խռովակից թագաւորութիւն եւ եղբորը նման վախճան ունեցաւ : Աթուր նստած տարին Եզիպտացիք անհամար բազմութեամբ Աիլիկիա արշաւեցին եւ որով ու հրով ամէն կողմ անապատ դանձուցին . Երկրորդ տարին գարձեալ նոյն արշաւաւքը կրկնեցին : Թագաւորն ասոնց դէմ դնելու կարողութիւն չունենալով՝ Աղեմէս Զ. Գահանայապետին իրարու ետեւէ զեօպաններ խաւրեց եւ ազաչեց որ շուտով իրեն օգնութիւն խրկէ : Մէկ կողմանէ ալ ժողովրդեան կամքին դէմ բաներ ընելով՝ չէ թէ միայն անոնց սիրան իրմէ պաղեցուց, այլ նաեւ շատերն ալ իրեն դէմ թշնամի բրաւ եւ անոնց ձեռքովը կեանքն ալ կորսընցուց 2 տարի թագաւորութիւն ընելէն ետեւ :

Եւ . Գուխտնին յաջորդեց Արստանդին Գ. որն որ մօր կողմանէ Ռուբենեան ցեղին հետ ազգականութիւն ունէր, եւ իշխաններուն հաւանութեամբը թագաւոր պսակուեցաւ : Աս արթուն եւ արի իշխանը թէպէտ եւ դառն ժամանակ մը գահն ելաւ, բայց իր իմաստութեամբն ու քաջութեամբը կարող եղաւ տէրութիւնը ներքուստ խաղաղ պահել եւ արտաքին թշնամեաց յարձակմանէ երկիրը պաշտպանել : Իր նախորդներուն ժամանակը Աիլիկիայի մէջ եկեղեցական խնդիրներ կը յուզէին, որոնք դեռ իր ատենն ալ դադրած չըլլալով՝ ներքին խաղաղութեան աւրուելուն պատճառ կ'ըլլային . ուստի առաջին փոյթն աս բաներս շտկելն եղաւ : Երբ որ ասոնք քիչ մը կարգի դրաւ եւ յուզմունքը դադրեցուց, սկսաւ Եզիպտացուց յանձակմանը դէմ դնելու պատրաստութիւն տեսնել : Վասն զի Եզիպտոսի սուլթանը լսելով որ արեւմտեան տէրութիւններն Ասիա արշա-

ւելու եւ իր տիրած երկիրները ձեռքէն տանելու կը պատրաստուին, Հայոց ալ վերջին աստիճանի տկարացած ըլլալը գիտնալով, Ասորոց, Բարեկացոց եւ Եզիպտոսի զօրքը ժողովեց ու կատալութեամբ Ախիկիայի վրայ քալեց, միաքը դնելով որ Հայոց տէրութիւնը վերցընէ եւ Ախիկիա բնակող քրիստոնէակաները բոլորովին ջնջէ. կը կարծէր որ ասով Արեւմտեանը իր վրայ յարձակելու խորհրդէն ետ կը կենան: Եկամտաւ Ախիկիայի սահմանն եւ առաջին յարձակմամբ Այաս քաղքին տիրեց. բայց Աոստանդին իր զօրքովն եւ Արպրոսի Հուկոն թագաւորին ու Հռոդոսի Աստուածատուր (Գէողատ) իշխանին օգնութեամբն անոր բանակը զարկաւ ետ մղեց, եւ յառաջ գալու թող շտուաւ:

Այս յաղթութեան լուրն երբ որ Ալեմէս Քահանայապետն առաւ, շատ ուրախացաւ եւ շուտ մը նոյն պատերազմի մէջ գանուող ամէն իշխաններուն նամակ գրեց, որուն մէջ անոնց եռանդն ու ջանքը շատ կը գովէր: Եւ որպէս զի իր կողմանէ ալ անոնց օգնութիւն մ'ընէ, Արեաէի Փրանկիսկոս արքեպիսկոպոսին եւ նաւական խաչակիր զօրաց զօրապետին հրաման խաւրեց որ Ախիկիա երթան եւ Հայոց պաշտպանեն: Նոյնպէս Վենետիկի Անգրէաս Տանտուղոս դուքսն ալ յորդորեց որ Հայոց նաւով օգնութիւն խրկէ Այաս քաղաքն Եզիպտացոց ձեռքէն ետ առնելու համար, որուն Աոստանդին շատ ետեւէ կ'ըլլար: Երբ որ Քահանայապետին յորդորանքներէն օգուտ մը չեղաւ, Աոստանդին իր կողմանէ Գազղիայի եւ Անգղիայի թագաւորներուն գեսպան խրկեց եւ անոնցմէ օգնութիւն խնդրեց, որովհետեւ Եզիպտացիք նոյն տարին նորէն Ախիկիա արշաւած էին: Բայց անոնցմէ ալ յոյսը պարապի ելլելով՝ ինքն իր զօրքովն եւ Հասպացոց օգնութեամբը թշնամեաց դէմ ելաւ, անոնց յաղթեց եւ երկրէն դուրս վռնտեց, Իսսոն կամ Աղէքսանդրեզա գղեակն ալ ձեռքերնէն առաւ:

Ասկէ ետքը 5 տարի ալ խաղաղութեամբ թագաւորեց եւ իշխանութեանը 18երորդ տարին վախճանեցաւ :

ՊՆՈՒԽ ԺԷ

ԼԵՒՈՆ Զ.

ԾԱ. Հայոց իշխաններն Ռերբանոս Քահանայապետին յորդորելովը ՂԼԵՈՆ իրենց թագաւոր կ'ընտրեն (1365) : Եզիպտացիք Վիլիկիա կը յարձակին (1366) . ԼԵՈՆ կը յաղթուի եւ հաշտութիւն կ'ընէ : Եզիպտացիք նորէն ԼԵՈՆին վրայ կու գան (1371) եւ անոր կը յաղթեն . ԼԵՈՆ լերանց վրայ կը փախչի եւ կը ծածկուի : Մարիամ թագուհին Հոռոմ նամակ կը գրէ . Հայերը ԼԵՈՆը մեռած կարծելով՝ կ'ուզեն Պրանչլիայի Ռթոն իշխանն իրենց թագաւոր դնել : ԼԵՈՆ երեւան կ'ելլէ : ԾԲ. Եզիպտոսի սուլթանը գարձեալ ԼԵՈՆին վրայ զօրք կը խաւրէ (1374) . թագաւորը Կապան բերդին մէջ կ'ամրանայ : Եզիպտացւոց Վիլիկիայի մէջ ըրած անգլթուլթիւնները . Կապան բերդին պաշարուիլը . ԼԵՈՆին սովէն ստիպուելով անձնատուր ըլլալը (1375) , Եզիպտոս տարուիլն ու բանտարկուիլը . ԾԳ. Սոհեր (Շահան) իշխանին Եւրոպա գալն եւ ԼԵՈՆին ազատութեանը համար ըրած ջանքը : Կաստիլիայի թագաւորին ձեռքովը ԼԵՈՆ բանտէն կ'սպասի (1382) , Երուսաղէմ ուխտի կ'երթայ եւ ետքը Սպանիա կու գայ (1383) : ԼԵՈՆին Գաղղիայի թագաւորին այցելութեան երթալն (1386) եւ անկէ գտած շնորհքները : ԾԴ. Անգղիացւոց ու Գաղղիացւոց թագաւորներն իրարու հետ հաշտեցնելու համար ըրածները . իր Անգղիացւոց թագաւորին երթալն եւ անկէ գտած ընդունելութիւնը : ԾԵ. ԼԵՈՆ փարիզի մէջ կը վախճանի (1393, Նոյեմբեր 22) ու Կեղեասինեանց եկեղեցին կը թաղուի : Կիպրոսի թագաւորներն Հայոց թագաւորի պատուանուն կ'առնուն .

ԾԱ. ՍՈՍԱՆԿՍԻՆ մահամբը Վիլիկիային խաղաղութիւնը տակն ու վրայ եղաւ , եւ աղբին ներքին կապը բոլորովին քայքայեցաւ , որով եւ անկէ ետքն եկող թշուառութիւնները Հայոց աէրութեան կործանման վերջին հարուածը տուին : Երկրին իշխաններն՝ որոնց անկ էր ժողովրդեան բարոյն ու խաղա-

ղութեանք հոգ տանիլ, անտէրունչ Երկրին թագաւոր մը զնելու ամենեւին փոյթ շունեցան, այլ ամէն մէկն իր Կամբին ու յօժարութեանն հետեւելով՝ Երկու տարիի չափ ժողովուրդն անիշխանութեան եւ անհնարին տառապանաց մէջ թող տուին:

Աս ժամանակս Հռոմայ Քահանայապետն էր Ուրբանոս Ե. որն որ իր նախորդներուն նման արեւելեան քրիստոնէից վրայ մեծ գութ ունէր, եւ անդադար կը ջանար որ անոնց օգնութիւն բնէ ու Սարակինոսաց բռնութիւններէն ազատէ: Ասիկա երբ որ Հայոց վեճակն իմացաւ, շուտ մը Աիլիկիայի եպիսկոպոսներուն, վանահայրներուն, իշխաններուն ու ժողովրդեան ուղղուած նամակ մը խրկեց, որով անոնց իր ունեցած ցան ու տրտմութիւնը յայտնելէն ետեւ, կը յորդորէր որ ամէնք միաբանին եւ Լեւոն Լուսինեան իշխանը՝ Աիպրոսի Պետրոս թագաւորին ազգականն իրենց վրայ թագաւոր զնեն. Ասով, կ'ըսէր, ձեր առաջին պայծառութեանն ու յաջողութեանը դիւրաւ կրնաք հասնիլ. իր կողմանէ ալ օգնութիւն ու նպաստ կը խոստանար: Քահանայապետին աս նամակէն եկեղեցական եւ աշխարհական մեծերն յորդորուեցան եւ նոյն Լեւոնը կանչելով՝ թագաւորական գահը նստեցուցին: Բայց Աիլիկիայի ինքը զինքը բռնելու զօրութիւնն սպառած՝ եւ ասոր հակառակ իր թշնամիներուն զինքը նուաճելու ճիգն ու ջանքը սաստկացած բլլալով՝ Լեւոնին թագաւորութիւնը չկրցաւ անոր օգուտ մ'ընել, այլ ինքն ալ ազգին հետ վերջին թշուառութեան մէջ ինկաւ: Գահն ելլելուն երկրորդ տարին՝ Եգիպտացիք Աիպրոսի թագաւորին իրենց դէմ մղած պատերազմներուն համար, բոլոր քրիստոնէից դէմ զայրացած՝ կատաղաբար Աիլիկիա արշաւեցին. եւ թէպէտ Լեւոն անոնց դէմ ելաւ եւ սաստիկ դարնուեցաւ, բայց չկրնալով անոնց բազմութեան յաղթել, ազաչանօք հաշտութիւն բրաւ: Հինգ տարի ետքն Եգիպտացիք դարձեալ Լեւոնին վրայ եկան եւ

անոր քիչուոր զօրքին հետ զարնուելով՝ յազմեցին : զինքն ալ վերաւորեցին : Բնադաւորք փախաւ ամուր լերանց վրայ ապահնեցաւ , ու ժամանակ մը ծածկուեցաւ , եւ այսպէս երկիրը թշնամեաց առջեւը բաց մնաց , սրնք մտան աստիկ անդ թաթեամբ ջարդեցին , քանդեցին , թալլեցին եւ զարձան գացին : Մարիամ թագուհին աս բաներէս եւ իր ամուսնոյն կորստէն՝ սրն որ պատերազմի մէջ մեռած կը կարծուէր , խորունկ տրտմութեան ու սզոյ մէջ մտաւ , եւ Յովհաննէս արքեպիսկոպոսն Եւրոպա խաւրեց որ Ալիկիայի վիճակն իմացընէ եւ օգնութիւն մը գտնէ : Արքեպիսկոպոսը նախ Փիլիպպոս Տարենտացի իշխանին եկաւ՝ որն որ թագուհւոյն աջակիւնն էր , եւ անկէ յանձնարարական թուղթ առնելով՝ Հռոմ Գրիգոր ԺԱ . Քահանայապետին զնաց եւ ամէն բան անոր իմացընեէն ետեւ , ըսաւ թէ երկրին մեծ մխիթարութիւն եւ օգնութիւն կ'ըլլայ , թէ որ արեւմտեան իշխաններէն քաջ ու զօրաւոր իշխան մը թագուհւոյն հետ ամուսնանայ եւ կառավարութիւնն յանձն առնու : Քահանայապետն աս բանիս հաւանեցաւ , եւ ամէն իշխաններէն աւելի Պրաւնշլպայկի Ոթոն իշխանը Ալիկիայի թագաւորութեան յարմար գտաւ , վասն զի անիկա քաջ պատերազմող իշխան մըն էր , եւ միանգամայն Գերմանացւոց կայսեր ու Աիպրոսի թագաւորին հետ ազգականութիւն ունենալով՝ զիւրաւ կրնար անոնցմէ օգնութիւն գտնել : Ասոնք մտածելով Քահանայապետը նոյն Փիլիպպոս իշխանին գրեց որ Ոթոնը Հայոց թագուհւոյն հետ պատկելու հոգ տանի : Բայց նոյն միջոցին Ղեւոն երեւան ելլելով եւ իր գահը դառնալով՝ աս պատրաստութիւնները դադրեցան :

ԾԲ. Թագաւորին այսպէս նորէն իր ժողովրդեան երեւնալը թէպէտ եւ անոնց շատ մեծ ուրախութիւն պատճառեց , բայց աս ուրախութիւնը քիչ ժամանակ կրցան վայելիլ . վասն զի տարի մը ետքը զարձեւալ

զանիկա եւ անոր հետ իրենց ազատութիւնն ալ բոլորովին կորսնցուցին: Մէլէք էլ Եշրէֆ Շապահ Աղիպտասի սալմանը Ալիլիկայի տէրութիւնը ջնջել եւ զանիկա իր սակը նուաճել ուղելով՝ իր զօրապետներէն մէկը մեծ բանակով հոն խաւրեց: Աւելն թշնամւոյն բազմութենէն զարհուրած՝ իր ամուսնոյն եւ քանի մ'իշխաններու հետ Ասպան բերդը մտաւ ամրացաւ: Աղիպտասցիք իրենց զէմ՝ ելլող մը չունենալով անարդէլ ամէն կողմ տարածուեցան եւ դիւրաւ նուաճեցին: Ասոնց բրած անգթութիւնը զբով չիկրնար ստորագրուիլ. քաղաքներն ու գեղերն այրեցին, քանդեցին եւ գեանի հաւասար ըրին. բոլոր անոնց բնակիչները՝ հաւատքինն ու բանալ չուղելուն համար չարաչար սպաննեցին. երկրագործներուն ողջ ողջ կաշին հանեցին. կրակ կորած երկաթներով եկեղեցականաց ու կրօնաւորաց աչուքներն հանեցին, եւ բռնած քահանաներնուն լեզուն ու մատուրները կարեցին որ կարող չըլլան քրիստոնէական կրօնը քարոզել եւ խորհուրդները մատակարարել: Այսպիսի անգթութեամբ ամէն կողմ նուաճելէն ետքն, եկան Ասպան բերդն ալ պաշարեցին եւ սկսան զարնել. բայց անոր սաստիկ ամրութեանը համար չկրնալով մնաւ մ'ընել, պաշարումը սաստկացուցին եւ դրսի հետ հազարգութիւնը բոլորովին կտրեցին որ մեջիններն անօթութեամբ նեղելով՝ անձնատուր ըլլալու ստիպեն: Բերդն ինն ամիս այսպէս պաշարուած մնալով՝ մեջիններուն կերակուրն հատաւ, եւ սկսան մկան ու ձիւ միս ուտել, եւ երբ որ զանոնք ալ սպառեցին, անոնց կաշիներն ուտելու ձեռք զարկին: Աւելն տեսաւ որ բերդին մեջ կենալն ալ անկարելի է, ուստի պաշարման իններորդ ամիսը թշնամւոյն զօրապետին հետ զաշինք գնելով՝ դռները բացաւ եւ իր ամուսնոյն ու քովն եղող մարդիկներուն հետ անձնատուր եղաւ: Աղիպտասցիք մասն բերդը թալլեցին եւ թաղաւորն իր մարդիկներովն առին Եգիպտոս տարին, զորոնք

սուլթանը բանտ դնել տուաւ եւ Ալիիկայի ամէն
կողմն իր զորքէն պահապաններ դնելով Հայոց աս
վերջն տերութեան յիշատակն ալ բալորովին ջնջեց:

ԾԳ. 1 Եւոնին բանտարկութեան հինգերորդ տա-
րին: Սոհեր (ըստ սմանց Շահան) Արիկոս բերդին
իշխանն՝ որն որ թագաւորին բանտակից էր, այլազգի
իշխանաց միջնորդութեամբը բանտէն ազատելով՝
Քաղղիա Աղեմէս 1: Հակառակաթոռ քահանայապե-
տին¹ եկաւ, եւ անոր Ալիիկայի վիճակն ու թագա-
ւորին գերութիւնը պատմեց: Հետը Լեւոնին կողմանէ
նամակ մ'ալ բերած էր, որուն մէջ անիկա արեւմտա-
եան թագաւորաց կ'աղաչէր որ իր վրայ ողորմին ու
զինքը գերութենէ ազատեն: Աղեմէս թէպէտ եւ իր
իշխանութեան տակն եղող եպիսկոպոսներուն եւ իշ-
խաններուն թղթեր գրեց եւ յորդորեց որ Հայոց օգ-
նութիւն ընեն, բայց Սոհեր տեսնելով որ բան մը
չկարողիր, անկէ Սպանիա գնաց ու Աստիլիայի
Յովհաննէս թագաւորին առջեւն ելլելով՝ Լեւոնին
նամակը տուաւ եւ աղաչեց որ անոր օգնէ: Յով-
հաննէս աս իշխանին պատմածներէն եւ Լեւոնին նա-
մակէն շարժելով՝ Մէլէք էս Սալահ սուլթանին ըն-
ծաներով դեսպան խրկեց եւ անկէ խնդեց որ Հայոց
թագաւորն եւ իր ընտանիքն ազատ թողու, որուն
խնդիրքին սուլթանն հաւանելով՝ զանոնք բանտէն
հանեց եւ թող տուաւ որ ուր որ կ'ուզեն երթան:
Բարեպաշտ թագաւորն իր ազատութիւնը գտածին
պէս նշուածազէմ սուրբ տեղերուն այցելութեան գնաց,
եւ հոն իր ազատութեան համար Աստուծոյ շնորհա-
կարութիւն մատուցանելէն ետեւ, արեւմուտք անցաւ
իր ազատչին ալ շնորհակալ բլլալու համար: Կախ
Հոռոմ՝ Ուրբանոս քահանայապետին այցելութիւն

1 Աս ատենւան ըուն Քա- էին, Հոռոմ փոխելուն համար,
հանայապետներ Ուրբանոս Զ. Գաղղիայի մէջ աս Աղեմէսն ալ
որն որ աթոռը Գաղղիայի քահանայապետ ընտրուեցաւ
Ալիիկոն քաղքէն՝ ուր իր նա- իրբեւ Ուրբանոսին հակառակ-
խորդաներուն մէկքանին նստած ամթոս:

մ'ընդունանոր իր յարգութիւնը մատոյց , եւ անկէ Սպարսկոյ Յովհաննէս թագաւորին գնաց , որն որ զինքը շատ էրով ու պատուով ընդունելով՝ Մատրիա եւ Ելիզաւրձիս քաղաքներն իրեն բնակութեան համար որ. շ. ց. առատ ու տարեկան մուտք կապեց որ աստիճանին վայել կեանք անցընէ : Լեւոն երեք տարի Սպարսկոյ կենալէն ետքը , Գաղղիայի Կարոլոս Ձ . թագաւորին այցելութեան գնաց եւ հոն ալ թագաւորի արժանի ընդունելութիւն գտաւ : Երբ որ առաջին անգամ Կարոլոսին գնաց , թագաւորը գահէն ելելով վազեց իրեն փաթուռեցաւ եւ սիրոյ համբոյր տուաւ . ետքն իր քովը նստեցուց եւ Կիլիկիայի վիճակին ու բոլոր արեւելքի վրայ տեղեկութիւններ հարցուց : Անկէ ետքը հրամայեց որ անոր տարւէ տարի թագաւորական դանձէն 6000 ֆրանգ տրուի . 5000 ֆրանգ ալ անմիջապէս պարգեւեց որ իր բնակարանին կարասիքը շալէ . նաեւ խոստացաւ որ իրեն օգնական զօրք ալ կու տայ որպէս զի իր երկիրը Սարակինոսաց ձեռքէն ազատէ , ու Ս . Տնիի մէջ Ս . Անտոնի պալատն իրեն բնակարան տուաւ : Լեւոն հոն բնակեցաւ ու թագաւորին հետ յաճախ կը տեսնուէր , եւ արքունեաց ամէն հանդէսներուն ներկայ կը գտնուէր :

ԾԳ . Աս ատեններս Գաղղիացուց եւ Անգղիացուց մէջ անդադար պատերազմ կ'ըլլար , եւ նոյն տարին երկու կողմն ալ ուզելով հաշտութիւն ընել ու չկրնալով իրարու հետ միաբանիլ , Գաղղիայի թագաւորն որոշած էր որ անկէ ետեւ ամենեւին հաշտութիւն ընելու վրայ խօսք չընէ , այլ պատերազմն ամենայն սաստկութեամբ յառաջ տանի : Լեւոն երբ որ աս որոշումն իմացաւ , քրիստոնէական սիրով բարբոքած ուղեց ինքը միջնորդ ըլլալ եւ երկու պատերազմող տէրութիւններն իրարու հետ հաշտեցընել ու միաբանել , յուսարով որ ասոնց հաշտուելովը նաեւ բոլոր արեւելեան քրիստոնէից եւ նոյն իսկ իրեն մեծ օգնութիւն կրնայ ըլլալ : Ուստի էլաւ Գաղղիայի թա-

գաւորին գնաց, երբ որ անոր խորհրդականներն եւ մեծամեծ իշխանները քովը ժողովուած էին: Հոն գեղեցիկ եւ ազդու ճառ մը խօսելով՝ ցուցուց որ Սարակինոսները քրիստոնէից ինչ վնասներ ու բռնութիւններ կ'ընեն, եւ անոնց բրած յաղթութիւններն ու կոտորածները մէկիկ մէկիկ առջեւնին դրաւ եւ ըսաւ. Աս բաներուս զօրաւոր դարմանը միայն աս է որ Գաղղիա եւ Անգղիա իրարու հետ միանան եւ Սարակինոսաց դէմ ելլեն՝ զանոնք նուաճեն եւ երկիրնին ձեռքերնէն առնուն: Ես պատրաստ եմ ըսաւ, ասոր համար Անգղիա երթալ եւ թագաւորին հետ խօսել: Կարողս աս բանիս իր հաւանութիւնը տուածին պէս, Ղեւոն շուտ մը ճամբայ ելաւ ու Պոլոյնէն նաւ մը մտնելով՝ յաջող հողմով Տուվրի նաւահանգիստն հասաւ, եւ հոն գտնուող անգղիացի իշխաններուն ու թագաւորին եղբօրորդւոյն իր գալուն պատճառն իմացուց. անոնք ալ իր քովը մարդիկ դրին ու Ղոնտոն՝ թագաւորին խաւրեցին: Ղեւոն Ղոնտոն մտած ատենը քաղքին բնակիչքն ամէն կողմանէ իր անցնելու ճամբաները ժողովուեցան. նաեւ շատ երեւելի իշխաններ իր դիմացն ելան եւ մեծ պատուով ընդունելով՝ ուրախութեան հանդէսներ ըրին: Քիչ մը ետքը Հայոց թագաւորն Անգղիացւոց թագաւորին գնաց եւ անոր հետ սիրով տեսնուելով՝ իր գալուն պատճառը յայանեց, որուն պատասխան տրուեցաւ որ թագաւորական խորհրդականներուն ամէնն հոս չըլլալով՝ հարկ է սպասել մինչեւ որ դան ժողովուին, եւ ան ատեն քեզի քու խնդրիդ պատասխանը կը տրուի: Չորս օր ետքը թագաւորն իր խորհրդականներովը Վեստմինսդերի պալատը գնաց եւ զՂեւոն ալ կանչել տուաւ: Հոն խորհրդեան սրահին մէջ ինքը թագաւորն իր գահը նստաւ, Ղեւոնն ալ իր քովը, անկէ ետեւ եկեղեցական աւագանին եւ ետքը խորհրդականները կարգաւ իրենց տեղը նստեցան եւ Հայոց թագաւորին իմաց ըրին որ իր աղաչանքն ու

խնդիրն բսէ: Ան ասնն Վեւոն արդու եղանակաւ մը սկսաւ ցուցընել թէ աս երկու մեծ տէրութեանց մէջ եղած պատերազմը քրիստոնէութեան ինչ մեծ միտաներ հասցուց ու կը հասցընէ, եւ թէ նոյն իսկ պատերազմող տէրութիւններուն շատ վտանգի ու միտառու պատճառ կ'ըլլայ: Գանդերպուրիի արքեպիսկոպոսն, ինչպէս որ յառաջագոյն իրեն յանձնուած էր, Վեւոնին խօսքին պատասխանը տուաւ եւ որոշուեցաւ որ Անգղիայի թագաւորն իր դեսպանները Գաղղիա խաւրէ եւ հոն Գաղղիացուց կողմանէ խորհուած պատգամաւորներուն հետ խօսին ու հաշտութիւնն հաստատեն: Եկան ժողովուեցան Պուլոյն քաղաքը, բայց երկայն խօսակցութիւններէն ետեւ չկրցան միաբանիլ, եւ առանց բան մ'որոշելու տեղերնին դարձան, թէպէտ եւ Վեւոն շատ աշխատեցաւ որ զանոնք միաբանէ:

ԾԵ. Վեւոնին աս ճիզը պարապի երթալով՝ եւ անով նաեւ իր թագաւորութիւնը նորէն ձեռք ձգելու յոյան ալ կորսուելով, անկէ ետեւ բոլոր իր կենացը մնացած ժամանակը արտամութեամբ անցուց եւ 1393ին Նոյեմբերի 22ին Փարիզի մէջ վախճանեցաւ 11 տարի թագաւորելէն, 7 տարի Եգիպտոսի բանտը մնալէն եւ 12 տարի Եւրոպա պանդխտանալէն ետեւ: Շատ սուգ բրին իր մահուան վրայ Փարիզի բնակիչները, վասն զի իր համեստութեանն, իմաստութեանն ու բարի վարուցը համար ամենուն սիրելի եղած եւ մեծ համարում ստացած էր: Թաղման հանդէսը շատ փառաւոր եղաւ. գրեթէ Փարիզի մէջ գանուող բոլոր իշխաններն ու ժողովուրդն եկած էին իրենց վերջին սէրն ու յարգութիւնը ցուցընելու համար, եւ այսպիսի փառաւորութեամբ կեղեւտինեանց եկեղեցւոյն մէջ Աւագ խորանին աջ կողմը պատին մէջ շինուած գեղեցիկ մարմարէ գերեզմանը դրուեցաւ: Իր առաքինութիւններուն եւ իմաստութեանը համար բոլոր Եւրոպայի մէջ շատ անուանի եղած էր, ասոր համար

չկայ պատմագիր մը՝ որ իր վրայ գրած ատենն իրեն մեծամեծ գովութիւններ չտայ ու զինքը խոհեմ, իմաստուն, արթուն ու համեստ չանուանէ: Բոլոր ունեցած հարստութեանը՝ զորն որ Գաղղիայի, Անգղիայի, Կաստիլիայի թագաւորներուն եւ ուրիշ իշխաններուն իրեն կապած տարեկան մուտքերէն ժողոված էր, մէկ մասը Փարիզի աղքատներուն ձգեց, մէկ մասն իր տունը հոգացողներուն. մաս մ'ալ իր ծառաներուն եւ ընտանի բարեկամներուն. Կեղեստինեան կրօնաւորաց ալ դրամադրուի մը դրաւ որ իրեն համար անդադար աղօթք ընեն, եւ իր կտակակատարն Անգղիայի Ռիքարտ թագաւորն ըրաւ:

Այսպիսի վախճան ունեցաւ Լեւոն Զ. Կիլիկիայի վերջին թագաւորն, որուն մահուամբը Ռուբենեան ցեղին 300 տարւան իշխանութիւնն ալ բոլորովին դադրեցաւ: Իր մեռնելէն ետեւ Կիպրոսի Յակօբ Ա. թագաւորը Լուսինեան ցեղէն ըլլալով՝ որմէ էր նաեւ ինքը Լեւոնն ալ, Հայոց թագաւորի պատուանունն առաւ, թէպէտ եւ Կիլիկիա բոլորովին Սարակինոսաց ձեռքն էր, եւ իր զինանշանին մէջ Հայոց դրօշին նշանն ալ՝ որն որ գլուխը թագով առիւծ մըն էր, նկարել տուաւ. նաեւ իր ստակներուն վրայ ալ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ գրել տուաւ: Աս պատուանունն իր յաջորդներն ալ պահեցին մինչեւ Յակօբ Գ.ին ատենը Կիպրոս վենետիկցոց ձեռքն անցնելով՝ ան ալ դադրեցաւ:



ԳԻՐԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Հ Ե Յ Ե Ս Տ Ե Ն Ի Վ Ի Ն Է Կ Ն Ի Ր
 Ե Ն Կ Ե Ի Ո Ւ Թ Ե Ն Է Ն Զ Ր Կ Ո Ւ Ե Լ Է Ն
 Ե Տ Կ Ը

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ զ ը ք ե ը ն ի ս կ ը պ ա տ մ է Հ ա յ ա ս տ ա ն ի ն ի Ր ս ե պ հ ա կ ա ն ա ե Ր ա թ ի ը ն ը կ ր ս ն ց ը ն ե լ է ն ե ա ք ն ու ն ե ց ա ծ վ ի ճ ա կ ն , ի Ր զ ա ն ա զ ա ն ա զ ց ա ց ձ ե ու ք ն ա ն ց ն ի ի ն , ա ն ո ն ց ձ ե ու ք ո վ ը կ Ր ա ծ փ ո փ ո խ ու թ ի ը ն ն ե Ր ն ե ւ ա ս փ ո փ ո խ ու թ ե ա ն ց ի Ր բ ն ա կ ի չ ն ե Ր ու ն վ ը ա ց ը Ր ա ծ ա զ ց ե ց ու թ ի ը ն ը , զ Ր ը ն ք կ ա Ր ց ա ու մ ի ն չ ե ւ մ ե Ր Ժ ա մ ա ն ա կ ը կ ը հ ա ս ց ը ն է : Ե ս 800 տ ա Ր ւ ա ն (1050—1850) շ ը ջ ա ն ի ն ա ու ա ջ ի ն ե ո թ ը զ ա Ր ու ն մ է ջ (1050—1750) Հ ա յ ա ս տ ա ն ա ն զ ա զ ա Ր պ ա տ ե Ր ա զ մ ն ե Ր ու մ է ջ ը ն կ ը մ ա ծ պ ի ա ' ս Ր ա ե ս ն ն է ք , ե ւ ա ն ո ն ց պ ա տ ճ ա ո ա ի Ր ք ա զ ա ք ն ե Ր է ն շ ա տ ե Ր ու ն կ ր ծ ա ն ու մ ն ե ւ ի Ր բ ն ա կ ի չ ն ե Ր ու ն ս ա ս տ ի կ ու զ ա ու ն տ ա ու ա պ ա ն ա ց մ է ջ ի յ ն ա լ ո վ ' հ ե ո ա ո Ր ա ե զ ե Ր ց Ր ու ի ը , ն ա ե ւ ա ն ո ն ց մ է բ իւ Ր ա ո Ր ն ե Ր ու ն բ ա ն ու թ ե ա մ ք օ տ ա Ր ե Ր կ ի Ր ն ե Ր տ ա Ր ու ի ը պ ի ա ' ս Ր ն շ մ ա Ր ն է ք : Բ ա յ ց ա ս ե ո թ ը զ ա Ր ե Ր ու ն յ ա ջ Ո Ր զ Ո Ղ ու թ Ե Ր Ո Ր զ ա Ր ու ն մ է ջ (1750—1850) պ ի ա ' ս Ր ա ե ս ն ն է ք պ ա տ ե Ր ա զ մ ա ց ն ու ա զ ի ը , ն ե զ ու թ ե ա ն ց մ ե զ մ ա ն ա ի ն ե ւ Հ ա յ ա զ ց ի ն ի Ր վ ը ա ց ա ի Ր ո Ղ ա ե Ր ու թ ե ա ն ց խ ն ա մ ա կ ա լ ու թ ե ա մ ք ը ն Ո Ր կ ե ն զ ա ն ու թ ե ա ն ու ն Ո Ր յ ա ո ա ջ ա զ ի մ ու թ ե ա ն ա ս պ ա Ր է զ ի մ ը մ է ջ մ ա ն ե լ ը :

Աս ժամանակւան պատմութիւնը շատ ազգային պատմագիրներ զրեցին, որոնց մէջ Կիրակոս Գանձակեցի՝ Թաթարաց Հայաստանի տիրելը, Թովմաս Մեծսիեցի՝ Լանկթիմուրին Հայաստանի մէջ բրածներն եւ Առաքել՝ Շահարասին Հայոց մէկ մասը Պարսկաստան տանելը մեզի կ'աւանդէ: Ասոնցմէ զատ շատ անանուն մատենագիրներ եւ յիշատակարաններ աս ժամանակւան զէպքերը կը պատմեն: Իսկ օտարազգի պատմագրաց մէջ ասոնք պատմողներն անհամար են որոնց անուններն հոս շարելն աւելորդ կը համարինք:

Գ Լ Ո Ւ Խ Ե

Մ Է Լ Ի Բ Շ Ա Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Տ Ի Ր Ե Լ Է Ն
Մ Ի Ն Չ Ե Ի Թ Ա Թ Ա Ր Ա Ց Չ Ա Ն Ի Կ Ա
Գ Ր Ա Ի Ե Լ Ո Ւ Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Ա. Մէլիքշահին Հայաստանի տիրելը (1086—1093): Թաթարաց Հայաստան արշաւելը (1093): Վրաց Դաւիթ Թագաւորը հիւսիսային Հայաստանի կը տիրէ (1124): Բ. Փաւտոսն այլազգի իշխանը Շիրակ գաւառը կ'առնու (1128): Վրաց Գորգի (Կորիկէ) Թագաւորն ու Զաքարիա եւ Իւանէ իշխաններն Հայաստանին հիւսիսային եւ արեւելեան մասերն այլազգեաց ու Պարսից ձեռքէն կ'առնուն (1160—1220):

Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ Թագաւորութիւնը ջնջուելու ատենը, Հայաստանին արեւմտեան մասը Յունաց ձեռքն էր, արեւելեան մասը Պարսից իշխանութեան տակ, հիւսիսային կողմերը Վիրք բռնած էին, իսկ հարաւային գաւառներուն՝ Հագարացոց ամիրաները կ'իշխէին, եւ աս վիճակին մէջ 40 տարիի չափ մնաց: Բայց երբ որ Մէլիքշահ՝ Ալիասլանին որդին Պարսից գահն ելաւ, իր տէրութիւնն ընդարձակելու ձեռք զարնելով՝ անհամար զօրքով Հայաստան արշաւեց, ամէն հոն տիրող իշխանները վաճտեց եւ բոլոր նոյն երկիրն իր իշխանութեան տակն առաւ: Ասոր մա-

հուանէ ետքը Հայաստան գարձեալ դանազան ազգաց ձեռքը բաժնուեցաւ, որուն հիւսիսային եւ արեւմտեան կողման մեծ մասին՝ Թաթարները տիրեցին ու ժողովուրդը սաստիկ նեղութեան ու տառապանաց մը ձգեցին: Աս նեղութեան ատենն հիւսիսային Հայոց մեծ միախառնութիւն եղաւ Գաւիթ Վրաց քաջ թագաւորն՝ որն որ քանի մը յաղթական պատերազմներով նոյն կողմերն իր իշխանութեան տակն առաւ, եւ իրեն դիմող Հայոց՝ տեղ եւ ապրուստ տալով խնամեց: Գաւիթ իմանալով որ Շիրակ գաւառին բնակիչներն ալ այլազգի իշխանաց բռնութեան տակ կը հեծեն, իր յաղթական զօրքովն հօն ալ հասաւ, եւ առանց դժուարութեան բոլոր նոյն գաւառին եւ անոր Անի մայրաքաղաքին տիրելով՝ անդորրացուց: Ասոր վրայ անկէ փախած Հայերը նորէն իրենց տեղերը դարձան:

Բ. Վանի մը տարի ետքը Փալտուն իշխանն՝ Անի քաղաքին ամիրային որդին, անհամար զօրքով եկաւ նոյն քաղաքը սաստիկ պաշարեց, եւ թէպէտ ներսիները քաջութեամբ դէմ դրին, բայց պաշարնին հատնելով սովը թշնամիէն աւելի սկսաւ զիրենք նեղել. դրսէն ալ օգնութեան յոյս չկար, որովհետեւ Գաւիթ քաջ թագաւորը մեռած էր եւ իր յաջորդն իրեն քաջութիւնը չունէր, ասոր համար Փալտունին հետ դաշինք դրին ու քաղաքն իրեն տուին: Փալտուն Անին առնելէն ետեւ բոլոր Շիրակ գաւառն ալ իր տակը նուաճեց:

Բայց Վերք Գորգի թագաւորին ժամանակը դարձեալ զօրանալով՝ Անիին տիրեցին, եւ անոր յաջորդներուն ատենը Զաքարիա եւ Իւսանէ հայազգի քաջ իշխաններուն առաջնորդութեամբը բոլոր հիւսիսային Հայաստան այլազգեաց ձեռքէն առին. նաեւ երկայն ատեն Պարսից դէմ պատերազմ մղելով՝ արեւելեան Հայաստանի մեծ մասին ալ տիրեցին, ու 60 տարի, մինչեւ Թաթարաց յարձակման ժամանակն

իրենց իշխանութեան տակ եղող երկիրները խաղաղութեան մէջ պահէցին :

Գ Լ ՈՒ Ի Ի Բ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԹԱՐԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Գ. Ճէլալէտտին (Ջալալադին) Խորազմի սուլթանը Հայաստան կը փախչի եւ Հայերը կը նեղէ : Թաթարաց Չարմազան զօրապետին Հայաստան արշաւելը (1233) : Բաշու զօրավարն եւ իր ըրածները : Գ. Հուլաուն զօրապետը բոլոր Հայաստանը կը նուաճէ (1253—1254) : Անի քաղաքին կործանելը (1320) : Հայաստանին նորէն զանազան ազգաց մէջ բաժնուելը (1340) :

Գ. ՏԱՍՈՒՐԵՔԵՐՈՐԻ ԴԱՐՈՒՆ ԱԿԻՂՆԵՐԸ Թաթարներն սկսան հիւսիսային Ասիայի մէջ զօրանալ, որոնք իրենց ճինկիղտան քաջ թագաւորին առաջնորդութեամբն Ասիայի մեծամեծ թագաւորութիւնները նուաճեցին եւ Խորազմի ճէլալէտտին սուլթանին ալ յաղթելով՝ զանիկա իր զօրքովը Հայաստան փախուցին : Ճէլալէտտին իր յաղթուելուն բարկութիւնը Հայոց վրայ թափեց, եւ շատ գաւառներու բնակիչներն անխնայ ջարդեց. եւ թէպէտ Վիրք ու Հայք անոր դէմ ելան, բայց չկրնալով անոր զօրութեան դէմ դնել, դարձեալ երկիրն անոր կատաղութեանը թողուցին, զորն որ սաստիկ անդթութեամբ ի գործ դրաւ ու բիւրաւոր մահէր գործեց, մինչեւ որ Փոքր Ասիայի եւ Ասորոց այլազգի իշխաններուն եւ Վատրնայւոց ու Արիկեան Հայոց զօրքէն յաղթուելով՝ Պարսկաստանի սահմանը փախաւ եւ հոն սպաննուեցաւ :

Ճինկիղտանին մեռնելէն ետքը Թաթարաց զօրքն Ուխաթայ խանին հրամանաւն սկսան դէպ ի Հայաստան յառաջ գալ, իրենց զօրավար ունենալով Չարմազան իշխանն, եւ իրենց բազմութեամբ բոլոր երկիրը ծածկելով՝ Վրաց Հայաստանին բոլորովին

տիրեցին . Անի քաղաքն ալ տաին եւ բնակիչներն իրենց մէջ բաժնելով զամենն ալ սրբ անցուցին . նոյնպէս շատ քաղաքներու բնակիչներն ալ ջարդեցին : Չարմաղան աս բաներս բնելէն ետեւ հիւանդացաւ եւ զօրավարելու անկարող եղաւ , ասոր համար Աւխաթայ անոր սեղը Բաչու իշխանը խաւրեց , որն որ անմիջապէս բանակն առաւ Կարին գաւառն արշաւեց , ու սաստիկ պատերազմաւ Թէոդուպոլիս (Կարին) քաղքին տիրելով՝ բնակիչները սրէ անցուց : Ղայասէտօին Ղոնեայի սուլթանը Բաչուին դէմ պատերազմի ելաւ . Կարինն ազատելու համար՝ որն որ նոյն ժամանակն իր իշխանութեան տակն էր , եւ Երզնկայի մօտ անոր հետ զարնուեցաւ , բայց չարաչար յաղթուելով՝ ստիպուեցաւ Հայաստանին իր իշխանութեան տակն ելող մասը , քանի մը բերդերէն եւ ամուր քաղաքներէն զատ , Թաթարաց ձեռքը թողուլ , որոնք իրենց տէրութիւնն հոն հաստատելով՝ ժողովրդեան վրայ ծանր սուրբ դրին եւ զանոնք սաստիկ նեղութեան մէջ ձգեցին , եւ հազիւ Հեթում Կիլիկիայի Հայոց թագաւորին Մանգոյ խանին ըրած աղաչանքովն աս նեղութիւնները քիչ մը թեթեւցան :

Դ . Տասը տարի ետքը Հուլաւոն Մանգոյ խանէն Հայաստանի կողմերուն իշխան դրուեցաւ , որն որ սաստիկ արիւնահեղ պատերազմներով Հայաստանին զանազան կողմերուն տիրող իշխաններուն յաղթեց եւ բոլոր նոյն աշխարհքը ծայրէ ծայր նուաճեց : Թաթարաց Հայաստանի վրայ ունեցած աս միահեծան տէրութիւնն 90 տարի շարունակ տեւեց , եւ աս միջոցիս մէջ յիշատակի արժանի դէպք կամ փոփոխութիւն մը չպատահեցաւ : Միայն պատմագիրներն Անիին՝ Բագրատունեաց մայրաքաղաքին կործանումը կը յիշատակեն , որուն բնակիչներն ասդին անդին ցրուելով՝ անոնցմէ մէկ մասն ալ Խորմ , Լեհաստան ու Մոլտաւիա անցան եւ բնակութիւննին հաստատեցին : Բայց չորեքտասաներորդ դարուն կէսերը

Թաթարաց խանին տերութիւնը զանազան մասեր
բաժնուելով՝ անոր միութիւնը քակուեցաւ եւ իր
ընդարձակ երկիրներուն մէջ զանազան իրարմէ անկախ
տերութիւններ կազմուեցան: Աս պատճառաւ Հայ-
աստանն ալ դարձեալ զանազան իշխաններու ձեռք
ինկաւ. հարաւային կողմերը Գիւրտերը բռնեցին,
որոնք առանձին իշխաններու կամ պէյերու տակ ին-
քնագլուխ տերութիւն մը կազմած էին, արեւելեան
կողմը Պարսիկները գրաւեցին, իսկ արեւմտեան կողմը
կէս մ'Օսմանեանք կէս մ'ալ Թիւրքմէնեան ցեղին
իշխանները նուաճեցին: Աս վիճակին մէջ մնաց մին-
չեւ նոյն դարուն վերջերը Լանկլթիմուրին ժամա-
նակը, որուն արշաւանքները Հայաստան դարձեալ
տակն ու վրայ ըրին:

Գ Լ Ո Ւ Խ Գ

Լ Ա Ն Կ Թ Ի Մ Ո Ւ Ր Ի Ն Ա Ր Շ Ա Ւ Ա Ն Ք Ն Ե Ր Ը,
Մ Ի Ն Չ Ե Ի Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Ց Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Տ Ի Ր Ե Լ Ը:

Ե. Լանկլթիմուրին Հայաստան արշաւելն (1387) եւ ըրած
Ֆնասները: Վան քաղքին առնուիլը: Հայաստանի սովը:
Լանկլթիմուր Սեբաստիա քաղքին կը աիբէ: Զ. Լանկլթիմու-
րին ետ դառնալէն ետքը Հայաստան պատահածները: Շահ-
բուխին եւ Գիւրտերուն խաբէնաէր թագաւորին մէջ եղած
պատերազմները (1410—1430): Հայաստանին սաստիկ սովը:
Է. Փոքր Ասիայի Հայոց մէկ մասին Կոստանդնուպոլիս տա-
րուիլը (1461):

Ե. ԵՐԲ որ Հայաստանի կողմերը պատերազմները
դադրած ու խաղաղութիւնը աիբած էր, եւ ժողո-
վուրդը քիչ մը հանգիստ կը վայելէր, յանկարծ հիւ-
սիսային կողմերէն ահագին փոթորիկ մը ծագեցաւ,
ան ցանկալի խաղաղութիւնը բոլորովին վերջովեց
ու Հայաստան աղէտից ու թշուառութեան ծով մը
դարձուց: Ասիկա էր Լանկլթիմուրին՝ Էօզլպէք Թա-

Թարաց Թագաւորին արշաւանքն՝ որն որ սաստիկ զօրանալով՝ ամբողջ Թաթարաստանն իր տակը նուաճելէն ետեւ, անհամար զօրքով Պարսկաստան արշաւեց եւ սրով ու հրով տիրեց. անկէ Պաղտաստի վրայ քալեց, եւ զանիկա ալ նուաճելով՝ բոլոր զօրութիւնն Հայաստանի վրայ դարձուց: Արդէն իր անգթութիւններուն եւ բրած կործանումներուն լուրն իրմէ յառաջ Հայաստան հասած ըլլալով՝ երբ որ իր արշաւանքին լուրն ալ եկաւ, ամէն մարդ իրենց գլխուն գալիքը գուշակեցին, եւ շուտ մ'աճապարեցին ամուր եւ անմատչելի տեղեր մտան ամրացան:

Անկթիմուրին զօրքը նախ Սիւնեաց գաւառը մտան եւ ուր որ հասան, գտած մարդիկնին ջարդեցին ու քաղաքները գետնի հաւասար ըրին, եւ նոյն եղանակաւ յառաջ երթալով՝ շատ գաւառներ անապատ դարձուցին: Բիւրաւոր մարդիկ աս կատաղի զօրքէն գերի բռնուեցան, շատերն ալ հաւատքնին ուրանալ չուզելնուն համար դառն ու սոսկալի տանջանքներով սպաննուեցան: Անկէ ետքը Անկթիմուր Վան քաղքին վրայ եկաւ, եւ երբ որ քաղաքացիք անձնատուր ըլլալ յանձն չառին, սաստիկ պատերազմաւ քաղքին տիրեց եւ բոլոր բնակիչները բերդէն վար նետել տուաւ, որոնց մեռելներուն կոյտերը պարիսպներուն բարձրութեանն հաւասարեցան, եւ ան բազմամարդ քաղաքը դատարկացաւ: Ան աստիճանի եղաւ աս գաղանամիտ բռնաւորին Հայաստանի մէջ բրած անգթութիւններն ու սպանութիւններն, որ ոչ անդաստան մնաց եւ ոչ ալ երկիր գործելու մշակ, որով ուտելիքը պակսելով՝ սաստիկ սով մը տիրեց ու Թաթար զօրքէն աւելի անգթութիւններ գործեց: Վասն զի նոյն իսկ ծնողաց ու հպատակաց գութն ու պարտաւորութիւնները մոռցընել տուաւ, որոնք իրենց կեանքը պահելու համար շներն ու կատուներն եւ ուրիշ պիղծ անասուններն ուտել սպառելէն ետեւ, սկսան իրարու ձեռք զարնել, եւ հայրն՝

որդին, մայրն՝ իր սիրելի գուսարը, եւ եղբայր՝ զեղբայր մորթեց, խորովեց ու կերաւ: Այսպէս մէկ կողմանէ թշնամեաց սրովը, միւս կողմանէ անագորոյն սովին բռնութեամբը Հայաստան իր բնակիչներուն մեծ մասէն պարպուեցաւ եւ անոնց զիակներովը լեցուեցաւ:

Անկթիմուր սա եղանակաւ բոլոր Հայաստանը նուաճելէն ետեւ, Փոքր Ասիա անցաւ ու Սեբաստիա քաղքին տիրելով՝ մեջի Հայ զօրքն ողջ ողջ թաղել տուաւ եւ իշխանները սաստիկ տանջանքներով սպաննեց: Անկէ յառաջ գնաց եւ Անկիւրիայի քով Սուլթան Պայազխտին հետ զարնուեցաւ, անոր յաղթեց եւ Սմբրղանդ իր աթոռը դարձաւ¹:

Զ. Անկթիմուրին ետ դառնալովը թէպէտ եւ քիչ մը ժամանակ խաղաղութիւն եղաւ, բայց սա խաղաղութիւնը չկրցաւ երկայն տեւել. վասն զի քանի մը տարիէն անոր մահուան լուրը հասնելով, ան ամէն իշխաններն ու թագաւորներն՝ որոնք իր զօրութենէն ընկճած եւ տերութիւննին կորսընցուցած էին, գարձեալ ոգի առին ու զէնքի զօրութեամբ երկիրնին նորէն ստանալու ձեռք զարկին: Եւ որովհետեւ Հայաստան ասոնց իբրեւ կեդրոնն էր եւ ամէն իշխան անկէ բաժին ունէր, ասոր համար բոլոր պատերազմներուն ասպարէզն եղաւ, եւ անհնարին նեղութեան մէջ ինկաւ:

Աս նուաճեալ թագաւորներուն մէկն ալ Գարա Եռսուֆ՝ քիւրաքուր կամ Թիւրքմէններու թագաւորն էր, որուն երկրին մեծ մասն Հայաստանի հարաւային կողմերն էր: Ասիկա Անկթիմուրին մահուամբն համարձակութիւն գտնելով՝ զօրք ժողովեց եւ եկաւ

1 Կը պատմուի որ Անկթիմուր իր արչաւանքներուն ատենը շատ հայերէն եւ ուրիշ լեզուաւ գրքեր ժողովել տուած եւ Սմբրղանդի ամուր աշտարակներուն մէկուն մէջը

դրած ըլլայ, սաստիկ արգելք դնելով որ ամենեւին անկէ դուրս չհանուին. միայն կարգաւ ուզողները ներս մտնեն եւ քիչ մը ժամանակ կարդան եւ ելլեն:

առանց դժուարութեան նոյն տեղերուն նորէն տիրեց : Բայց քանի մը տարի ետքը Շահրուխ Անկիթիմարին որդին ասոր դէմ պատերազմի ելլելով՝ Հայաստան երկու կողման զօրքէն օտնակոխ եղաւ , շատ քաղաքներ ու գեղեր թալլուեցան , եւ ժողովուրդն իրենց բնակութիւնները թող տալով՝ անմատոյց լեռանց վրայ ապաւինեցան : Աս պատերազմին ատենն Եռուֆ մեռաւ եւ իրեն յաջորդեց իր եղբայրն Իսքէնատէր , որն որ Հայաստանը դարձեալ նուաճեց եւ Շահի Արմէն կոչուեցաւ , եւ իր զօրացն ասպատակութիւններովը Հայոց շատ նեղութիւն տուաւ : Աս ասպատակութիւնները 20 տարի շարունակեցին եւ նոյն միջոցին նաեւ Շահրուխ քանի մ'անգամ անձամբ կամ իր զօրապետներուն ձեռքովը Հայաստան արշաւելով՝ շատ աւեր եւ ապականութիւնն բրաւ , որոնց պատճառաւ մշակութիւնը դադրեցաւ ու սովը դարձեալ իր բազուկները սարածեց : Ժողովուրդն ամէն բան ուտել սպառելէն ետեւ , պիղծ անառուներն եւ նաեւ անոնց սատկած դիերն ուտելու ձեռք զարկին , եւ երբ որ անոնք ալ լմընցան , քաղցին բռնութենէն ստիպուած՝ իրենց ազգականներն ու բարեկամները , եւ ոմանք նոյն իսկ իրենց որդիքնին ու ծնողքնին եփեցին կերան . շատերն ալ հեռաւոր տեղեր ցրուելով՝ քաղաքներն ու գեղերն ամայի եւ դատարկ թողուցին :

Է . Աս ատեններս սուլթան Մէհմէտ Բ . Կոստանդնուպոլիսն առաւ , եւ որովհետեւ Հայոց վրայ շատ սէր եւ մեծ համարում ունէր , Փոքր Ասիայի զանազան կողմերէն հայ բնատանիքներ ժողովեց հոն տարաւ , եւ Պուրսայի Յովակիմ եպիսկոպոսն՝ ինչպէս որ յառաջագոյն անոր խոստացած էր , Պատրիարք անուանելով՝ անոնց եւ բոլոր իր իշխանութեան տակն եղող երկիրներուն (Փոքր Ասիայի եւ Յունաստանի) մէջ գտնուող Հայերուն գլուխ դրաւ :

ՕՍԽԱՆԵԱՆՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻՐԵԼԸ

Ը. Սուլթան Մէհմէտ Բ. Հայաստանին քանի մը քաղաքները կ'առնու (1473): Սուլթան Սէլիմ Ա.ին Շահ Իսմայիլին դէմ ելլէն եւ Հայաստանին հիւսիսային կողմերուն տիրելը (1514): Գահազադ Պարսից թագաւորն Օսմանեանց դէմ պատերազմի կ'ելլէ. Օսմանեանք անոր կը յաղթեն եւ հարաւային Հայաստանն անոր ձեռքէն կ'առնուն (1533): Սուլթան Մուրաա Գ. եւ Հայաստանին բոլորովին Օսմանեաց ձեռքն անցնիլը (1575—1585):

Ը. ՕՍԽԱՆԵԱՆՅ առաջին անգամ Հայաստան մասնելուն պատճառը Թիւրքմէններուն Ուզուն Հասան իշխանն եղաւ, որն որ սաստիկ զօրանալով՝ շատ երկիրներու եւ նաեւ Պարսից թագաւորութեան տիրելէն ետքն, Օսմանեանց երկիրն ալ յարձակեցաւ ու շատ կոտորած եւ անդթուծիւն բրաւ: Սուլթան Մէհմէմէտ Բ. սա բանս լսածին պէս, մեծ պատրաստութեամբ անոր դէմ քալեց եւ Գերջանի մօտ անոր բանակը խորտակելով՝ զինքն ալ վանեց եւ Հայաստանին քանի մ'արեւմտեան քաղաքները ձեռքէն առաւ:

Քստասուն տարի ետքը Սեֆեան ցեղէն Իսմայիլ իշխանը Պարսից թագաւորութեան աթոռն ելլելով՝ պարսկական զօրքով Օսմանեանց երկիրն արշաւեց եւ շատ վնասներ գործեց: Իրեն դէմ եկաւ Սուլթան Սէլիմ Ա. քաջ ու պատերազմող թագաւորը 120,000 զօրքով, եւ Չալտրրան դաշտին մէջ անոր բանակը ջրուելով՝ Հայաստանին հիւսիսային գաւառներն իր իշխանութեան տակը նուաճեց: Շահ Իսմայիլին մեռնելէն ետքն իր յաջորդը Գահազադ դարձեալ Օսմանեանց դէմ պատերազմ գրգռելով՝ Իպրահիմ Փաշա եպարքոսն օսմանեան բանակին զօրավար դրուեցաւ, որն որ Պարսից թագաւորին յաղթեց, եւ Հայաստանին հարաւային գաւառներն ալ անոր ձեռքէն առաւ:

Գահմազդ միշտ իր կորսընցուցած երկիրները նորէն ձեռք ձգելու յարմար առիթ մը՝ փնտռելով՝ երբ որ իմացաւ որ Սուլթան Սիւլէյման Գերմանացուց դէմ պատերազմելու զբաղած է, դարձեալ Հայաստան արշաւեց, ամէն կողմ ոտնակոխ բռաւ, շատ քաղաքներ ու գեղեր այրեց ու կործանեց եւ բնակիչները սրէ անցուց։ Աս բաներուս գոյժը Սուլթան Սիւլէյման առնելով՝ շուտ մ'անձամբ Գահմազդին դէմ ելաւ, անոր երկիրներն ասպատակեց եւ արեւելեան Հայաստանն՝ որն որ գեռ Պարսից ձեռքն էր, բոլորովին աւրշարկեց։ Բայց ետքը Պարսից թագաւորին հետ հաշուութիւն ընելով՝ ետ դարձաւ։

Հազիւ թէ ասոր վրայ քսան տարի անցաւ, Պարսից եւ Օսմանեանց մէջ պատերազմը դարձեալ նորագուեցաւ, որով Հայաստան նորէն սաստիկ նեղութեան մէջ ինկաւ եւ շատ դաւառներ ապականեցան, մինչեւ որ Օսմանեանք զօրանալով՝ Պարսիկները Հայաստանէն բոլորովին վանտեցին եւ զանիկա ամբողջ իրենց իշխանութեան տակն առին։ Աս պատերազմներուն պատճառաւ երկայն ատեն մշակութիւնը դադրելով՝ Հայաստան սաստիկ սով մ'ալ ինկաւ, որմէ հազարաւոր մարդիկ մեռան, ու շատ գեղեր բոլորովին իրենց բնակիչներէն պարպուելով՝ ամացի մնացին։

Գ Լ ՈՒ Խ Ե

Շ Ա Հ Ա Բ Ա Ս Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ա Ր Շ Ա Ի Ե Լ Ը

Թ. Շահարաս Հայաստան կը յարձակի (1603) եւ Այրարաս նահանգին կը տիրէ: Օսմանեանց Սինան փաշա սպարապետը Պարսից փրայ կու գայ: Շահարաս Հայերը Պարսկաստան տանելու մտքով զանոնք Այրարատեան դաշտը ժողվել կու տայ եւ իրենց քաղաքներն ու գեղերը կ'այրէ (1604): Ժ. Հայոց Պարսկաստան տարուելու ատեն քաշած սառսպանքներն իրենց Երասխ գետէն անցնելուն ստորադրութիւնը, Ասպահան հասնիլն ու հոն տեղաւորուիլը: Զուգայի Հայոց Պարսկաստան տարուիլն ու Նոր Զուգային շինուիլը: Շահարասին Պարսկաստան գացող Հայոց բրած շնորհները: ԺԱ. Հայոց՝ ազատամբ իշխաններուն ազատակութեան ու սովի պատճառաւ հեռաւոր տեղեր ցրուիլը (1606—1608): Պարսից եւ Օսմանեանց մէջ եղած հաշտութիւնը (1613—1620) եւ արեւելեան Հայաստանին Պարսից ձեռքը մտալը:

Թ. ՊԱՐՍԻՑ եւ Օսմանեանց մէջ եղած վերջին պատերազմին ատենը Շահարաս դեռ նոր Պարսից գահէն ելած ըլլալով՝ շէր կրցած թշնամւոյն դէմ դնել, եւ անոնց առած երկիրներն՝ որոնց մէջ նաեւ պարսկական Հայաստանն իրենց ձեռքը թող տալով, հաշտութիւն ընելու ստիպուած էր: Բայց երբ որ թագաւորութեան մէջ հաստատուեցաւ ու զօրքը կարգաւորեց, միտքը դրաւ որ նոյն երկիրները նորէն ետ առնու, եւ աս խորհուրդն ի գործ դնելու յարմար առիթն ալ շուտով գտաւ: Վասն զի նոյն ատեններն Օսմանեանց Պարսկաստանի սահմանակից եղող կուսակալներն իրենց ժողովրդեան սաստիկ նեղութիւն տալու սկսած էին, աս պատճառաւ անոնց գլխաւորներէն շատերը Շահարասին քովը փախան եւ զանիկա Օսմանեանց դէմ պատերազմի ելլելու յորդորեցին, խոստանալով որ իրենք ալ իրեն կ'օգնեն: Շահարաս ասոնց խօսքերէն յորդորուած՝ բանակն առաւ եւ յանկարծ Արարատական յարձակեցաւ, եւ անոր

տիրելէն ետքը՝ Հայաստան մտաւ, Նախիջևան քաղաքն առաւ, երկիւմն բերդը սաստիկ պաշարեց եւ երկայն ատեն զարնելով՝ անոր տիրեց. անկէ ետեւ ըստը Այրարատ նահանգը նուաճեց եւ Ամիրզանա նախարարն հոն կուսակալ դրաւ: Իր զօրքէն շատ զնդեր ալ Հայաստանին ամէն կողմը սփռեց, որոնք ամէն տեղ թալլեցին ու քանդեցին, եւ բիւրաւոր մարդիկ գերի բռնած՝ իրենց բանակը բերին, զորոնք Հահաբաս Պարսկաստան խրկեց: Հայերն որչափ որ կրցան Պարսից թագաւորին պատիւ եւ աղէկ ընդունելութիւն ըրին, յուսալով որ անոր իշխանութեան տակ հանդիստ պիտ'որ գտնեն, բայց թագաւորին անյապ ագահութիւնն իրենց այս յոյսը պարապի հանեց:

Հահաբասին յարձակման եւ օսմանեան զօրաց յաղթուելուն պիտը կոտորանդնուպալիս հասածին պէս, Սուլթան Ահմէտ՝ ճղալէզառէ Սինան փաշան օսմանեան բանակին սպարապետ դրաւ եւ թշնամոյն վրայ խաւրեց: Պարսից թագաւորը կարս քաղաքին քով Սինանին մօտենալը լսելով՝ իր զօրքն Ագճագալէ քաղաքը կենդրոնացուց, եւ հոն իր իշխաններուն յայտնեց՝ թէ կ'ուղէ Հայաստանի բնակիչներն իրենց քաղաքներէն հանել ու Պարսկաստան տանիլ. վասն զի պատերազմաւ Օսմանեանց յաղթելու եւ Հայաստանի տիրելու յոյս չունենալով, կ'ուղէր որ անոր բնակիչները պարպէ եւ երկիրն աւրէ անապատ դարձրնէ, եւ այնպէս թէ՛ թշնամին նեղը ձգէ, եւ թէ՛ իր երկրին բնակիչը շատցրնէ: Աս մտքով Հայոց գլխաւորները կանչեց եւ ըսաւ. Որովհետեւ Օսմանեանց հետ ձեր երկրին մէջ պիտ'որ պատերազմինք, եւ երկու բանակներուն մէջ ալ շատ գազանամիտ եւ աւաղակ մարդիկ կան, անտարակոյս ձեր ստացուածքին ու բնտանեացն՝ եւ նաեւ ձեր կենայր մեծ վտանգ պիտ'որ հասնի. ստոր համար ամէնքնիդ ալ ձեր ինչքն ու բնտանիքը ժող-

վեցեք ու քանի մ'օրւան հետու տեղ մը գացե՛ք, եւ պատերազմը լմննալէն ետքը՝ նորէն խաղաղութեամբ տեղերնիդ կը դառնաք: Հայ իշխանները թագաւորին միաբն իմանալով՝ Պարսից խաներուն գացին եւ շատ պատճառներով անոնց ցոյցուցին որ աս բանս ընելն անկարելի է: Բայց Շահաբաս անոնց խօսքերուն ամենեւին ականջ չդրաւ, այլ Ամիրգունա նախարարն աս գործքիս վերահացու կարգեց. ամէն մէկ գաւառին ալ իր իշխաններէն մէյմէկ հոգի որոշեց որ ժողովուրդը ժողվեն ու դէմ դնողներն անմիջապէս սպաննեն: Իշխանները շուտ մ'իրենց զնդերովք տարածուեցան Հայաստանի գաւառներուն մէջ, եւ ամէն քաղաքներուն ու գեղերուն բնակիչները սասաիկ չարչարանքներով ու բռնութեամբ իրենց բնակութիւններէն հանելով՝ գունդագունդ Այրարատեան դաշտը բերին ժողվեցին, որոնց բազմութիւնն ան ընդարձակ դաշտը ծայրէ ծայր լեցուց: Իսկ գատարկացած քաղաքներն ու գեղերը՝ մէջի համբարներովը կրակի տուին եւ այրեցին:

Ժ. Շահաբաս երբ որ իմացաւ որ իր անօրէն հրամանը կատարուեր է, եւ Օսմանեան բանակն իրմէ շատ հեռու չէ, երեսը դարձուց Այրարատին կողմն եկաւ՝ ուր ժողովրդեան բազմութիւնը կեցած էր, եւ հրամայեց որ զանոնք յառաջ քշեն: Չիկրնար ստորագրուիլ աս խեղճերուն՝ ճամբան քաշած տառապանքները. վասն զի Պարսիկները զանոնք անդադար եւ առանց հանգիստ առնելու յառաջ երթալու ստիպելով, որոնք որ ակարութեան կամ յոգնութեան համար չէին կրնար քալել, չարաչար կը ծեծէին, կամ քթերնին եւ ականջնին կը կտրէին. սմանք ալ կը սպաննէին ու գլուխնին երկայն ձողերու վրայ կը անկէին որ ուրիշները վախնան եւ շուտով յառաջ երթան: Այսպիսի տառապանքներով եկան հասան Երասխ գետին եզերքը. եւ որովհետեւ այնչափ անհամար բազմութիւնը գետէն կարգաւորեալ եղանա-

կառնեցրե՛ն լաւ շատ ժամանակ հարկաւոր էր, Պարսիկները վախցան որ Օսմանեանք նոյն միջոցին իրենց վրայ կը յարձակին եւ իրենց գերիները ձեռք բնեն կաշատեն. ասոր համար խեղճ ժողովուրդն ստիպեցին որ շուտով դիմաց անցնին: Շատ նուախներ ու լաստեր բերին՝ որոնցմով Հայերն ու Պարսից զօրքը խառն սկսան գետն անցնիլ. բայց տեսնելով որ այսպէսով շատ ուշ կ'երթայ, սրերով ու գաւազաններով ժողովուրդն ստիպեցին որ ջրին մէջը նետաւին ու լողալով դիմաց անցնին: Ասոր վրայ սկսան ամենք լաց ու ողբ ընել, որովհետեւ մէկ կողմանէ սուրն ու միւս կողմանէ ջուրն իրենց կեանքը յափշտակելու կը սպառնար: Նետուեցան մտան ծերք ու տղաք, արք եւ կանայք լայնատարած գետին յորձանքներուն մէջ, ուր մայրն իր աղջկան, հայրն իր որդւոցը, տղան իր ծնողացն եւ եղբայր եղբոր մահն աչքովը կը տեսնէր, եւ լալէն ու ողբալէն դատ օգնութիւն մը չէր կրնար ընել: Բիւրաւոր տկար ու լողալ չկրցող մարդիկ ջրին ալիքներուն զոհ եղան եւ իրենց մեռելները բոլոր գետին երեսը ծածկեցին: Ժողովրդեան մեծ մասն աս եղանակաւ կորուեցաւ, եւ մնացածները գետեղերքը հասան, զորոնք Պարսիկներն Ասպահան տարին ու քաղաքացիները քաղքին մէջ՝ իսկ գեղացիները գեղերու մէջ տեղաւորեցին. մէկ մասն ալ Շիրակ գաւառը տարին:

Հայաստանի բնակիչներն իրենց քաղաքներէն հանուելու առնն, անոնցմէ սմանք իրենց ընտանիքովը լերանց վրայ փախած եւ ամուր այրերու մէջ ապաւինած էին: Շահաբաս աս բանս իմանալով՝ զօրք խաւրեց որ զանոնք ալ բռնեն բերեն, որոնք գացին այրերը մտան եւ մէջիններն արտաքոյ կարգի անգթութեամբ ջարդեցին ու շատ քիչերը բռնած՝ բանակը տարին: Մէկ կողմանէ ալ Գահմազուլի խանը թագաւորին հրամանաւր Զուլայ հարուստ տւանին բնակիչներն իրենց բնակութիւններէն հանեց ու

Պարսկաստան տարաւ եւ աւանք կրակի տուաւ, որոնք Ասպահանին քովը Նոր Զուղան շինեցին: Պարսից թագաւորը բոլոր բերած Հայերը Պարսկաստանի մէջ տեղաւորելով՝ թեպէտ եւ բազմանքէն հասաւ, բայց գիտէր որ անոնք կամաց կամաց նորէն իրենց տեղը պիտ'որ փախչին, եւ իր բուն բազմանքն՝ որն որ էր Հայոց ձեռքովն իր երկրին արուեստներն՝ եւ գլխաւորաբար վաճառականութիւնը ծաղկեցունել, պիտ'որ չկատարուի: Ասոր համար սկսաւ անոնց սաստիկ սէր ցուցնել, մանաւանդ Զուղայի մեծամեծներուն, որոնց ամէն տեսակ ազատութիւն տուաւ. իրենց ազգային քաղաքապետ մը դրաւ, կրօնի կատարեալ ազատութիւն շնորհեց, եւ շատ անգամ հ'նդիաւոր օրերը Հայոց եկեղեցին կ'երթար: Նաեւ յաճախ անոնց տունը կերակուր կ'ուտէր եւ Հայու ու Պարսկի մէջ դատ բացուած ատեն, միշտ Հայուն կողմը կը բռնէր. շատ քիչ ալ հարկ կ'առնուր: Ըստպիսի խորամանկութեամբ՝ դալթած Հայոց սիրան իրեն հետ կապեց եւ կամաց կամաց անոնց որդւոյն իրենց հայրենեացը յիշատակը մոռցնելով՝ զանոնք Պարսկաստանի հաստատուն բնակիչներն ըրաւ:

ԺԱ. Հայաստան Պարսից զօրքէն ազատելէն ետեւ, աւելի անդու թ թշնամիներու ձեռք մասնուեցաւ: Վասն զի աս ատեններս Օսմանեան երկիրներուն զանազան կողմերը՝ մանաւանդ Հայաստանի մէջ շատ ապստամբ իշխաններ բռնացած էին, որոնց գլխաւորներն էին Գալէնտէր օլլու, Միւսէլլիմ Զաւուշ, Ճէմշիտ ու Թափալ Օսման. ասոնց ամէն մէկը 10—20,000 աւազակ ու զազանամիա մարդիկ ժողոված՝ ամէն տեղ կ'ասպատակէին, կը յափշտակէին, կը ջարդէին ու կը քանդէին, որոնց ձեռքէն Հայաստանի ժողովրդական մնացորդը սաստիկ նեղուելով՝ սկսան հեռաւոր տեղեր, գլխաւորաբար Ահաթան, Մուրախա եւ Աթաերթսանի կողմերն երթալ, մանաւանդ երբ որ աս ասպատակութիւններուն պատճառաւ երկրին մէջ

աստիկ սովմ'ինկաւ, եւ ամէն բան սպասելով՝ քաղցր քիւրաւոր մարդկան կեանքն սկզաւ յափշտակել: Աս նեղութիւններն երկու տարիի չափ տեւեցին, մինչև որ Գույուճու Մուրատ փաշան ապստամբներուն վրայ դալով՝ զանոնք նուաճեց եւ երկիրը խաղաղուց:

Բանի մը տարիէն ալ Օսմանեանց ու Պարսից մէջ խաղաղութիւն հաստատուելով՝ ամէն կողմ բուրրովին հանգչեցաւ, եւ Հայաստանին արեւելեան մասը դարձեալ Պարսից ձեռքը մնաց:

Գ Լ Ո Ւ Խ Օ

Գ Ա Ի Թ Ա Ի Ե Ն Ի Ի Շ Խ Ա Ն Ն Ե Ի Ի Բ
Ը Բ Ա Ծ Ն Ե Բ Ը

ԺԲ. Լազերուն ասպատակութիւնը, Սիւնեաց եւ Արցախ նահանգին Հայերուն անոնց դէմ գնելու պատրաստութիւնը (1720): Դաւիթ իշխանին վրաստանէն կանչուիլը (1722): Դաւթին ըրած յաղթութիւնները: Մեղրի քաղքին պատերազմը (1724): ԺԳ. Օսմանեան զօրաց Դաւթին վրայ դալը. Հոլիձոր բերդին պաշարուիլն եւ Դաւթին հնարքովն ազատիլը: Դաւթին մահը (1728): ԺԴ. Մխիթար զօրապետը Դաւթին տեղը կ'անցնի. Օսմանեանք զՀոլիձոր կ'առնուն (1729): Մխիթար Խնձորէսք բերդին մէջ կը սպանուի:

ԺԲ. (ՍՄԱՆԵԱՆՑ Պարսից հետ հաշտուելէն ետեւ Հայաստանի մէջ քիչ մը ժամանակ խաղաղութիւն եղած եւ ժողովրդեան նեղութիւնները նուազելու սկսած էր: Բայց աս խաղաղութիւնը ժԸ. դարուն սկիզբներն յանկարծ վրդովելով՝ շատ կողմեր, եւ գլխաւորաբար հիւսիսային Հայաստան դարձեալ վերի վայր ըրաւ: Աս նոր խռովութեան պատճառը Լազերուն Պարսից երկիրը յարձակիլն էր, երբ որ մէկ կողմանէ ալ Միր Մահմուտ՝ Գանասահարին իշխանն Ասպահան քաղաքն առնելով՝ Շահ Հիւսէյինը թագաւորութենէ ձգած՝ եւ ինքն անոր տեղը թագաւորած էր, եւ աս պատճառաւ բոլոր Պարսից աւ-

բաթիւնը սաստիկ աղմկի եւ ակէկոծութեան մէջ էր: Սիւնեաց եւ Արցախ նահանգին հայ բնակիչները տեսնելով որ ասպատակներն անարգել յառաջ կու գան, եւ ուր որ կը հասնին կը ջարդեն, կը թալեն ու կը կործանեն, եւ զիրենք անոնց դէմ պաշտպանող մը չկայ, Արաց երկրէն Գաւթ Սիւնի քաջ իշխանը կանչեցին եւ իրենց առաջնորդ զնելով՝ 4—500 հոգի քաջասիրտ մարդիկ անոր քովը ժողովեցան որ թըշնամիներն իրենց երկրէն վանտեն: Գաւթ Մսիթար անունով մէկն իր զօրքին զօրապետ զնելով՝ քանի մը տեղ թշնամիներուն յաղժեց ու փախցուց: Աս յաջողութեան լուրն երբ որ մտաւ որ հայ իշխաններն առին, շատերն այլազգեաց բանաթիւններէն տաղաւկացած ըլլալով՝ իրենց մարդիկներովը Գաւթին քովն եկան եւ այսպէս անոր զօրքը 2000ը անցաւ: Պարսից իշխանները Հայոց ըրածներն իմանալուն պէս, աճապարեցին անոնց վրայ եկան որ շատ չզօրացած զարնեն ու նուաճեն: Գաւթ իր Մսիթար ու Տէր Աւետիք զօրապետներովն անոնց դէմ ելաւ, անոնց յաղթեց եւ քանի մը բերդերու ալ տիրեց: Բայց իր՝ Նախիջեւանի խանին հետ ըրած պատերազմն անյաջող երթալով՝ զօրքին շատերը ջարդուեցան. ասոր վրայ ինքն ալ Հոլիձոր գեղը քաշուեցաւ, եւ անոր քովն ամուր բերդ մը շինելով՝ բնակութիւնը հոն հաստատեց:

Գաւթին այսպէս Պարսից զօրքին հետ մրցելու ատենը, քանի մ'ուրիշ հայ իշխանն ար ալ 3—4000 զօրք ժողոված՝ իրենց մտաւոր պարսիկ իշխաններուն հետ կը կռուէին, երբեմն յաղժելով եւ երբեմն յաղթուելով: Աս կռիւներուն մէջ ամենէն սաստիկն եւ արիւնահեղն եղաւ Մեղրի քաղքին մէջ եղածն, ուր յատկան իշխանը 2000 քաջ զօրքով եւ քաղաքացւոց օգնութեամբը 18,000 պարսիկ զօրաց հետ զարնուելով՝ անոնց մեծ մասը ջարդեց ու մնացածը ցիր ու ցան ըրաւ: Հաղիւ թէ աս կռիւները դադրեցան,

Թիւքնքններու գունդ մը Գաւթին երկիրն արշաւեց եւ սկսաւ ասպատակել: Շուտ մը Մխիթար ու Տէր Աւետիք զօրապետներն անոնց դէմ ելան եւ շարաշար զարնելով՝ փախուցին:

ԺԳ. Նոյն տարիներն Օսմանեանք նորէն Պարսից դէմ պատերազմ՝ բանալով՝ Հաճի Մուսղափա փաշան ուրիշ երկու երեւելի փաշաներով անոնց վրայ խրկուեցաւ, որուն զօրքը Հայոց շատ վնաս եւ նեղութիւն տուին: Երբ որ Սիւնեաց նահանգը հասան եւ հոն ալ սկսան ասպատակել, Գաւթին զօրքն անոնց դէմ ելաւ եւ զարկաւ փախուց: Այլազգիք աս բանէս գրգռուած, մեծ զօրութեամբ Գաւթին վրայ եկան եւ Հոլիճոր բերդն՝ ուր անիկա ամրացած էր, պաշարելով՝ սկսան գնդակոծել: Բայց բերդին սաստիկ ամրութիւնը, ներսիններուն քաջութեամբ դէմ դնելն եւ նաեւ կռուին սաստկացած ատենը Մխիթար եւ Տէր Աւետիք զօրապետներուն պղտիկ գնդով մը դուրս յարձակիլն ու թշնամին շփոթելը, զանոնք ետ քաշուելու ստիպեց: Այլազգիք քիչ մը հանգիստ առնելէն ետքը նորէն ժողովուեցան, եւ երկրորդ անգամ Հոլիճոր բերդն առնելու փորձ փորձեցին. բայց աս անգամ ալ Գաւթին մէկ հնարքն իրենց ջանքը պարապի հանեց: Ասան զի աս հանճարեղ իշխանը գիշերանց մատակ ձիու երամակ մը թշնամեաց բանակին մէջ խաւրեց, որոնց խնամքով ձայնէն՝ բանակին բոլոր ձիերը կատղելով՝ սկսան առդին անդին վազել եւ մեծ շփոթութիւն ձգեցին: Նոյն միջոցին Գաւթի ալ իրեններովը դուրս յարձակեցաւ ու խռոված թշնամին ցիր ու ցան բրած՝ փախուց: Ասկէ ետեւ քանի մը յաղթական պատերազմներ ալ մղեց եւ իշխանութեանը վեցերորդ տարին վախճանեցաւ:

ԺԴ. Գաւթին յաջորդեց զօրքին եւ իշխաններուն հաւանութեամբը Մխիթար քաջ զօրապետը, բայց ասոր իշխանութիւնը շատ քիչ տեւեց: Ասան

ըն տարի մը ետքն Օսմանեան զօրքը Հոլիձորին վրայ դալով եւ սաստիկ պաշարելով՝ բերդականաց մէջ խռովութիւն ծագեցաւ եւ բերդը թշնամուոյն մատնեցին: Մխիթար թէպէտ եւ անկէ փախաւ եւ նորէն զօրք ժողովելով՝ քանի մը քաղաքներու տիրեց. բայց Օսմանեանց զօրքը Հոլիձորն աւնելէն եւ իրենց խոստմանը դէմ մէջինները սրէ անցընելէն ետեւ, բոլոր զօրութեամբ իրեն ետեւէն ինկան որ բռնեն: Եւ երբ որ Խնձորէսք բերդն եկաւ, հոն քանի մը Հայեր զինքն սպաննեցին եւ գլուխը Թավրէժի փաշային տարին, որն որ այնպիսի քաջ մարդու մը մահուան վրայ սաստիկ ցաւելով՝ սպաննողներն անմիջապէս գլխատել տուաւ:

Ասկէ ետեւ քանի մը հայ իշխաններ ալ փորձեցին նոյն կողմերն ինքնագլուխ տիրել, բայց չկրնալով յաջողընել, ոմանք Օսմանեանց իշխանութեան տակ նուաճեցան, ոմանք ալ Հայաստանէն ելան եւ հեռաւոր տեղեր գացին:

Գ Լ ՈՒ Խ Ե

ՕՍՄԱՆԵԱՆՑ ԻՈՒՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏԻՐԵԼԸ՝ ՆԱՏԸՐ ՇԱՀԻՆ ԱՆՈՐ ՄԷԿ
ՄԱՍԸ ՆՈՐԷՆ ԱՌՆՈՒԼԸ

Ա.Ն. Պարսկաստանին սաստիկ խռովութիւնը (1722). Օսմանեանց Պարսից դէմ պատերազմ բանալն ու բոլոր Հայաստանի ակրէլը (1727): Ժ.Զ. Պահմազդ Պարսից թագաւորը Հայաստան կ'արշաւէ (1730). Օսմանեանց Հէքիմզատէ Ալի փաշա զօրապետն անոր կը յաղթէ եւ կը վռնակէ (1732): Ժ.Է. Նասրը շահին Օսմանեանց հետ ըրած պատերազմներն եւ Հայաստանին մէկ մասին նորէն Պարսից ձեռքն անցնիլը (1733—1746):

Ժ.Ե. Երբ որ Պարսից թագաւորութիւնը զանազան իշխաններ իրարու ձեռքէն յաժշտակելով եւ իրարու հետ պատերազմելով՝ բոլոր նոյն տէրութիւնը սաստիկ պղէկոծութեան ու խռովութեան մէջ ձգած էին, Սուլթան Ահմէտ Գ. Օսմանեանց թագաւորն աս բանս յարմար առիթ համարելով՝ Պարսից դէմ պատերազմ բացաւ, յուսալով որ առաջին պատերազմին տակնը կորորնցուցած երկիրները կրնայ նորէն ձեռք ձգել: Իր բանակին զօրավար դրաւ Քէօփրիսիւ Ապտալաֆ փաշան, եւ անոր օգնականն առաւ Հաճի Մուսղափա փաշան եւ Արիֆ Ահմէտ փաշան, որոնք առանց արդէլքի Պարսից երկիրը մտան, Երիւան, Նախիջևան, բոլոր Սիւնեաց նահանգն, ուր, ինչպէս վերը բոսնը, Քաւիթ Սիւնի իշխանը կը ախրէր, առին եւ մինչեւ Թաւրէժ հասան բռնեցին: Օսմանեան բանակին այսպէս յաջողութեամբ յառաջացած ատներ, Ալլըվի իշխանը Պարսից թագն յաժշտակել ու զօրներուն ամէնը նուաճեց ու ջնջեց, եւ ինքը թագաւորութեան ավտոր նստելով՝ Համասանի մօտ Օսմանեանց դէմ ելաւ, անոնց յաղթեց եւ ետքն անոնց ամէն առած երկիրներն իրենց թող տալով՝ հաշտութիւն ըրաւ, առ պայմանաւ որ իրենք ալ զինքը

Պարսից թագաւոր ձանձանն : Օսմանեանք որչա-
մանը յանձն առին եւ խաղաղութիւնը հաստատեցին ,
եւ այսպէս ամբողջ Հայաստանը գարձեալ իրենց
ձեռքն անցաւ :

ԺԶ . Իսոյց այսպէս զիւրա ստացած երկիր-
նին չկրցան երկայն տունն խաղաղութեամբ պահել :
Գահճազպ շահը Պարսից թագաւորութեան օրինա-
ւոր ժառանգն՝ որն որ Եշրեֆին բռնութեամբ գահը
յառիշտակած ատենը Պարսկաստանին մէկ կողմը
քաշուած՝ իր կողմնակիցները քովը ժողովուր եւ զը-
րանալու հետ էր , երբ որ անոր յաղթելու բաւա-
կան զօրութիւն ժողովեց անոր վրայ քալեց , եւ իր
Նատրը Ալի կամ Գահճազպ գուլի քաջ զօրապե-
տին ձեռքովն անոր յաղթեց ու Գանտահարին կող-
մերը բռնեց սպաննեց : Անկէ ետքն անոր Օսմանեանց
հետ ըրած դաշինքն անվաւեր եւ անզօր համարելով՝
Կոստանդնուպոլիս դեսպան խրկեց եւ պահանջեց որ
Պարսիցմէ առած երկիրնին ետ տան . միանգամայն
նոյն երկիրները զօրք խաւրեց , որոնք օսմանեան
կուռակալներն անպատրաստ գտնելով՝ զարկին յաղ-
թեցին եւ մինչեւ Երիւանայ առջեւը յառաջացան :
Աս բաներուն լուրը թէպէտ Կոստանդնուպոլիս հա-
սաւ , բայց նոյն ժամանակը զօրաց ապստամբութեան
պատճառաւ քաղաքը սաստիկ խռովութեան մէջ
ըլլալով՝ չկրցան դարման մը դտնել , մինչեւ որ Սուլ-
թան Ահմետ Գ . թագաւորութենէ հրաժարեցաւ ,
եւ իր յաջորդը Սուլթան Մահմուտ Ա . գահն ելլելով՝
Գահճազպին դէմ զօրք խաւրեց , որոնք Հէքիմզատէ
Ալի փաշային զօրաւարութեամբը Գուրիճան դաշտին
մէջ անոր հետ զարնուեցան ու շարաշար յաղթեցին ,
որով Գահճազպ ստիպուեցաւ Հայաստանին իր իշխա-
նութեան տակն եզող մասն Օսմանեանց ձեռքը
թողուլ :

ԺԷ . Հայաստանին կողմն աս գործողութիւններն
եղած ատեն , Նատրը Ալի՝ Գահճազպին զօրապետն

ուրիշ տեղ մը պատերազմի խարուած էր, ուր մեծա-
 մեծ յաղթութիւններ կատարելով՝ երբ որ ետ դար-
 ձաւ եւ Պահմազպին Օսմանեանց հետ զրաժ գաշինքը
 լսեց, սաստիկ զայրացաւ եւ բռնեց զանիկա թագա-
 ւորութենէ ձգեց եւ անոր նորածին որդին գահը
 նստեցուց: Հուտ մ'ալ Կոստանդնուպոլիս զեպան
 խարեց եւ պատերազմ սպառնալով՝ իրենց Պարսիցմէ
 առած երկիրներն ետ պահանջեց, եւ առանց զե-
 պանին ետ դառնալուն սպասելու, Օսմանեանց եր-
 կիրը յարձակեցաւ քանի մ'անգամ Տիգրիս գետին
 քով անոնց կուսակալներուն յաղթեց, եւ ետքը
 Պելլուճիսթան ծագած ապստամբութեան պատճա-
 ռաւ զէնքն ան կողմը դարձնելու ստիպուելով՝ Օս-
 մանեանց հետ զինադադար բրաւ: Բայց երկրորդ առ-
 ըին դարձեալ պատերազմը նորոգեց, եւ իր բանակին
 զլուխն անցած՝ մինչեւ Պայաղիտ ասպատակեց եւ
 Երիւան ու Քանձակ քաղաքները պաշարեց, երբ որ
 Օսմանեանք զեռ պատրաստութեան մէջ էին: Քիչ մը
 ետքը լուր առնելով որ Քէօփրիւլիւ Ապտուլլահ փա-
 շան եւ Տիգրանակերտի կառավար Սարը Մուսղաֆա
 փաշան 80,000 զօրքով իր վրայ կու դան, ինքն ալ
 իր բանակովն՝ որուն զօրութիւնը թշնամւոյն բանակին
 զրեթէ հաւասար էր, եկաւ Եջմիածնի քով կեցաւ:
 Անկէ մինչեւ Երիւան յառաջ դնաց եւ Արփա շայրին
 (Ախուրեան գետին) քով Օսմանեանց հետ սաստիկ
 եւ արիւնահեղ պատերազմ մ'ընելով՝ անոնց վրայ
 մեծ յաղթութիւն բրաւ, ուր Ապտուլլահ փաշան եւ
 Սարը Մուսղաֆան ալ ինկան: Ասկէ ետքը Քանձա-
 կին, Երիւանին եւ ուրիշ շատ Հայաստանի ու Վրաս-
 տանի քաղաքներուն տիրեց: Հետեւեալ տարին եր-
 կու տէրութեանց մէջ խաղաղութիւն եղաւ եւ Նատրը
 բոլոր առած քաղաքները նորէն Օսմանեանց տուաւ:

Բայց սա խաղաղութիւնն ալ երկայն ատեն
 չկրցաւ տևել: Նատրը Ալի Պարսից իշխաններէն
 թագաւոր անուանելէն ետեւ, զանազան պատրուակ-

436 Զ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՏՎՈՒՄԻ ԵՏՎՈՒՄԻ
 ներքոյ դարձեալ Հայաստան մասս ու Կարսի մաս
 եւ Երբուանայ քով Օսմանեանց վրայ մեծ յաղթու-
 թիւն ընելէն ետեւ անոնց հետ հաշտութիւն բրաւ,
 պայման զնելով որ երկու տէրութեանց սահմանները
 Մուրատ Գին ժամանակուան պէս մնան, այսինքն
 ըստը Ատրպատական նահանգն եւ Հայաստանին Կուր
 եւ Երասխ գետերուն մէջ եղած մասն մինչեւ Երբու-
 ան՝ Պարսից ձեռքը մնայ: Այսպիսի վախճան ունե-
 ցաւ աս երկայնօրեամանակեան պատերազմը, որուն
 պատճառաւ Հայաստան սաստիկ վնասներ կրելէն եւ
 տերակ դառնալէն ետեւ, դարձեալ երկու տէրու-
 թեանց մէջ բաժնուեցաւ:

Գ Լ ՈՒ Խ Ը

Ռ ՈՒ Ս Ա Յ՝ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Մ Է Կ Մ Ա Ս Ի Ն Տ Ի Ր Ե Լ Ը

ԺԸ. Պարսից Ֆէթհ Ալի թագաւորը Ռուսաց երկիրը կը
 յարձակի. Մատթթեան զորապետն անոր զէմ կ'ելլէ եւ ետ
 կը վռնաէ (1826): Ռուսերը Պարսից Հայաստանին մէջ կը
 մտնեն: Ռուսաց Էջմիածնի տիրելը (1827): Բաղրեւիչ զօ-
 րապետին Ապպաս Միրզային վրայ ըրած յաղթութիւնը.
 Երբուանայ պաշարուիլն եւ առնուիլը: Պարսից եւ Ռուսաց
 մէջ եղած հաշտութիւնն (1828 Փետր. 22) եւ հաշտութեան
 դիտաւոր պայմանները: ԺԹ. Ռուսաց զօրքին Օսմանեան
 Հայաստան մտնելը (1828 Յունիս. 14). Կարսին ու Կարինին
 առնուիլը: Երկու տէրութեանց իրարու հետ հաշտուիլը
 (1829 Սեպտ. 14): Ի. Հայաստանին հիմակուան բաժանումը:

ԺԸ. ՀԱՅԱՍՏԱՆ Պարսից եւ Օսմանեանց մէջ
 բաժնուելէն ետեւ 80 տարիի չափ (1746—1826)
 երեւելի փոփոխութիւն մը չկրեց, թէպէտ եւ իր բուն
 ժողովուրդը կէս մը վաճառականութեան կէս մ'ալ
 հանգստութիւն գտնելու պատճառաւ զանազան հե-
 աւոր կողմեր կը ցրուէին: Բայց 1826ին վերջերը
 Պարսից Ֆէթհ Ալի թագաւորին առանց ծանուցա-

ներու Ռուսաց երկիրը յարձակին՝ աս երկու տերու թեանց մէջ նոր պատերազմ մը բարբոքեց, որով Հայաստան պատերազմէն հարկաւ հետեւած վնասները կրելէն զատ, իր մէկ բաժնին վրայ նոր տեր մ'ալ ունեցաւ :

Պարսից իրենց 1812ին Ռուսաց հետ դրած դաշինքն աս եղանակաւ աւրելը Նիկողայոս կայսրը շատ զայրացուց, ասոր համար անմիջապէս Վաւկասեան բանակին հրաման խրկեց որ թշնամուցն վրայ քալէ : Մատաթեան (Մատաթավ) հայազգի իշխանը Ռուսաց զօրապետն՝ ամենէն յառաջ պատերազմն սկսաւ, եւ նախ Շամբորի, ետքը Գանձակի (Եղիսաբէթուպոլսի) քով Պարսից բանակը զարնելով՝ զանոնք իրենց երկիրը մղեց :

Իսկայ Ռուսերը միայն այսչափով չչատանալով՝ սեղեցին Պարսից բրածին վրէժն ալ առնուլ, ուստի բոլոր Վաւկասեան բանակն յառաջ քալեց եւ Պարսկական Հայաստան մտաւ : Հայերն՝ որովհետեւ երկայն ժամանակէ ի վեր Պարսից բռնութեան տակ կը հեծէին, Ռուսաց զօրքը տեսնելնուն պէս իբրեւ իրենց ազատիչն ուրախութեամբ ընդունեցան եւ անոնց ամէն հարկաւոր եղած բաները յօժարութեամբ տուին : Պենդենտորժի զօրապետը Մարտի մէջ իր գումարտակովը դէպ ի Երասխ գետը յառաջացաւ եւ Իջմիածնի տիրեց : Նոյնպէս Բասքեւիչ զօրապետը մինչեւ նոյն գետին մօտերը յառաջ եկաւ, Նախիջևան քաղաքն առաւ եւ Ապպասապատ բերդը պաշարեց : Պարսիկներն իրենց պատահած դժբախտութիւններուն վրէժը Հայոց վրայ թափեցին եւ անոնց բոլոր գեղերը թավեցին ու կրակի տուին, զիրենք ալ Երասխէն անդին վաճակեցին : Բասքեւիչ Պարսից բանակն՝ որուն Ապպաս Միրզա արքայորդին կը հրամայէր, ճեղանպուրտի քով երրորդ անգամ զարկաւ, եւ նոյն բերդն ալ առնելով՝ զօրաց հանգիստ տուաւ :

Մեղաեմբերի 19ին Բասթբեիչէն զուժարաակը Սերաորապատ բերդին ալ տիրեց. 24ին Երիւանայ առջեւը հասաւ, եւ ամէն կողմանէ սաստիկ պաշարելով՝ Հոկտեմբերի 1ին առաւ ու յաղթանակաւ ներս մտաւ: Երբ որ Ռուսաց բանակն առ յաղթութիւն ներէն ետքն Ատրպատական նահանգն ալ մտաւ եւ Մարանդ ու Թավրէժ քաղաքներն առաւ, կայսրն ուզեց Պարսից հետ հաշտութիւն ընել: Բայց Ֆէթհ Ալի առ առաջարկութիւնը յանձն չառաւ, անոր համար Բասթբեիչ իր զօրքովը յառաջ քալեց ու Որմիա եւ Արտեպիլ բերդերուն ալ տիրեց. ան առնն Պարսից թագաւորն ստիպուեցաւ Ռուսաց առաջարկած հաշտութեան զիջանիլ, եւ անոնց դրած պայմաններն՝ որոնց գլխաւորներն էին Ա. Երասխ եւ Կուր գետին մէջ եղած երկիրներն իրենց թողուլ եւ Բ. Պարսից երկրէն Ռուսաստան անցնիլ ուզողներուն ամենեւին արգելք չդնել, յանձն առնուլ:

ԹԹ. Ռուսաց ու Պարսից մէջ խաղաղութիւնը հաստատուելէն անմիջապէս ետքը, Նիկողայոս կայսրն Օսմանեանց դէմ պատերազմ հրատարակելով՝ Յունիսի 14ին Բասթբեիչ 12,000 զօրքով եւ 70 թնդանոթով Կումրիէն ելաւ եւ սկսաւ յառաջ քալել: Քանի մ'որ ետքը Կարս քաղաքին առջեւն հասաւ եւ սկսաւ զնդակոծել: Մէջի օսմանեան զօրքը թէպէտ եւ աղէկ դէմ դրին, բայց Ռուսերը Յունիսի 23ին քաղաքին դղեակը յարձակմամբ առնելով՝ քաղաքն ալ անձնատուր ըլլալու ստիպեցին: Անկէ Բասթբեիչ Ախլըյխայի վըայ զնաց եւ Օգոստոսի 15ին յարձակմամբ առաւ, որով նաեւ Արտահան քաղաքն ալ ինքնիրեն անձնատուր եղաւ: Աս պատերազմներուն ատենը Վան ու Պայազիտ գաւառներուն քիւրտ բնակիչները Հայոց արտաքոյ կարգի նեղութիւն տուին, եւ անոնց շատ գեղերը թալլեցին: Ռուսաց զօրքը նոյն տարւոյն վերջերը Պայազիտն եւ քանի մ'ուրիշ քաղաքներ ալ առնելէն ետքը ձմերոց քաշուեցան,

Եւ երկու կողմանէ ալ երկրորդ տարւան պատերազմին համար մեծամեծ պատրաստութիւններ սկսան տեսնուիլ : Օսմանեանք իրենց ընդարձակ տէրութեան գանազան գաւառներէն մեծ բանակ մը ժողովելով՝ Ռուսաց առած երկիրներն ետ առնելու կը ջանային , իսկ Բասքեւիչին միաբը կարին քաղաքն առնուլ էր , որուն առջեւը նոյն քաղքին վաշան 50,000 զօրքով կը սպասէր : Նոյն կողմերուն ցուրտ օդին պատճառաւ հաղիւ Յունիսի Չին (1829) կրցան պատերազմն սկսիլ , եւ Բասքեւիչ երկու անգամ օսմանեան բանակին հետ զարնուելով՝ մինչեւ կարինի առջեւը յառաջացաւ : Քաղաքացիք կ'ուզէին մինչեւ վերջին շունչը գէմ դնել , բայց Ռուսաց բրած խոստումներէն յորդորուած՝ Յունիսի ՉՅին անձնատուր եղան :

Կարին Ռուսաց արշաւանքին վերջին կէսն եղաւ , վասն զի Սուլթան Մահմուտ նոյն տարին Աեպտեմբերի 14ին կայսեր հետ Ադրիանուպոլսի խաղաղութիւնն հաստատելով՝ բանակներն ետ քաշուեցան : Աս խաղաղութեան դաշինքով Ռուսաց եւ Օսմանեանց մէջ սահմանաց փոփոխութիւն մ'ալ եղաւ , որով եւ օսմանեան Հայաստանին մէկ պզտիկ մասն ալ Ռուսաց Հայաստանին հետ միացաւ :

Ի. Ռուսերն այսպէս Հայաստանին մէկ մասին տիրելէն ետեւ , զանիկա երեք կուսակալութիւն բաժնեցին , այսինքն Երիւան , Նախիջեւան եւ Աստապատ կամ Արդուպատ , որոնց ամէն մէկուն վրայ զատ զատ կուսակալներ դրին : Օսմանեանց Հայաստանը 11 նահանգ բաժնուած է , վեցը Մեծ Հայոց ու հինգը Փոքր Հայոց մէջ , որոնց ամէն մէկը մէյմէկ փաշա կը կառավարէ : Իսկ Պարսից ձեռքը մնացած Հայաստանին մասն երեւելի բան մը չէ եւ առանձին դաւառ չկայացրնէր , այլ Ատրպատական նահանգին հետ միացած է :

Հ Ա Յ Ո Ց Ա Ջ Գ Ի Ն Հ Ի Ռ Ա Կ Ի Ա Ն Վ Ի Ճ Ա Կ Ը

ԻԱ. Հայոց Հայաստանէն դուրս ցրուիլը: ԻԲ. Իրենց թիւն եւ գլխաւոր բնակած երկիրները: Օսմանեանց երկրին մէջ գտնուող Հայոց վիճակը: ԻԳ. Ռուսի Հայերն եւ իրենց զանազան ժամանակ Ռուսաց կայսրներէն բնդունած ազատութիւնները: Նոր Նախիջևանին շինուիլը (1786): Ռուսի Հայոց զինուորական վիճակը: ԻԴ. Պարսկաստանի Հայոց վիճակը: ԻԵ. Աւստրիական Հայք: Անիի Հայոց Լեհաստան գաղթելն, իրենց զառ ազգային գլուխ եւ առանձին դասաստան ունենալը (1344—1356): Վաճառականութեան եւ զինուորութեան մէջ բրած յառաջագիմուլթիւննին: Լեհաստանի Հայոց հիմական վիճակը: Մաճառաստանի եւ Արտասլի Հայերը: Կարուս Զ. կայսեր՝ Հայոց Կերլա (1726) ու Պաշպալով (1738) քաղաքներն ազատ քաղաք բնելը: Աւստրիայի կայսերաց իրենց բրած շնորհքներն եւ իրենց սւաման ու քաղաքական պաշտօններու մէջ ունեցած յառաջագիմուլթիւնը: ԻԶ. Հնդկաստանի Հայոց վիճակը: ԻԷ. Աս հինգ գլխաւոր տեղերէն դուրս գտնուող Հայերը:

ԻԱ. ՄԻՆՉԵԻ Հիմա Հայոց աշխարհին կրած փոփոխութիւններն եւ անոր զանազան անգամ զանազան օտար տէրութեանց ձեռք անցնիլն, ու վերջապէս երեք տէրութեանց մէջ բաժնուիլը կարգաւ պատմեցինք. միանգամայն աս փոփոխութեանց ասեմնն Հայոց կրած տառապանքները, նեղութիւններն ու վնասներն ալ յիշեցինք: Բայց որովհետեւ աս փոփոխութիւններն եւ անոնցմէ հետեւած նեղութիւնները, Հայաստանի բուն բնակչացը վրայ ուրիշ երեւելի եւ մտադրութեան արժանի փոփոխութիւն մ'ալ պատճառեցին, այսինքն աստեն մը հոժ եւ ամիսփ ազգը՝ ցրուեալ եւ գրեթէ աշխարհքիս ամէն կողմը տարածուած ազգ մ'ըրին, անոր համար հարկ է որ հայեցուածնիս ասոր վրայ ալ դարձրնենք եւ Հայ ազգին աս վիճակն ալ մտադրութեամբ մը զննենք,

որպէս զի անոր ներկայ վիճակին վրայ կատարե՞ց
գաղափար մ'ունենանք :

Հայերուն իրենց երկրէն դուրս ցրուիլն արդէն
Հայաստանի սեպհական թագաւորութեան կանգուն
եղած ատենն սկսած էր, երբ որ զանազան անգամ
օտար տէրութիւններ, գլխաւորաբար Պարսիկները
Սասանեան ցեղին թագաւորութեան ժամանակն, իր
վրայ յարձակելով՝ բիրաւոր գերիներ իրենց երկիրը
կը տանէին, ինչպէս մեր պատմագիրները կը յիշեն :
Աս եղանակաւ ցրուիլն աւելի եւս յաճախեց Արշա-
կունեաց ցեղին թագաւորութեան իյնալէն ետեւ .
վասն զի ան ատեն բոլոր Հայոց երկիրը Պարսից ձեռքն
անցնելով՝ սկսան կամաց կամաց անոր բնակիչները
պարպել եւ իրենց երկրին ներքին դաւառներուն մէջ
կրէլ : Նոյն ժամանակն սկսաւ նաեւ Հայոց ինքնակամ
օտար երկիրներ դազլթելը . որովհետեւ կրակապաշտ
Պարսիկներուն բռնութիւններէն ազատելու համար,
կամ անյաջող պատերազմէ մը ետքն՝ անոնց կատա-
ղութեան զոհ չըլլալու համար, Նախարարներէն սմանք
իրենց ընտանիքովն եւ մարդիկներովը բուն երկիրնին
թող կու տային եւ Յունաց երկիրը կ'անցնէին . եւ
այսպէս Սասանդնուպոլոց մէջ եւ գլխաւորաբար
Փոքր Ասիայի զանազան կողմերը Հայ դազլթականու-
թիւններ հաստատուեցան, որոնք ժամանակ ժամա-
նակ՝ իրենց Պարսից բռնութեան տակ հեծող ազգա-
կիցներուն ասպնջական եւ տպաւէն եղան :

Սարակինոսաց Հայաստանի տիրելէն ետքը, բրա-
նութեան ու տառապանաց աւելնալովը՝ Հայոց ցրուիլն
ալ սկսաւ յաճախել . նոյնպէս Թաթարաց ժամանակն
եւ անոնցմէ ետքը Պարսից ատենը հեազհետէ Հայ-
աստան իր բուն բնակիչներէն կը պարպուէր, եւ իր
գեղեցիկ քաղաքներն, ու շէն եւ մարդաշատ գեղերն
ամայի մնալով՝ աւերակ կը դառնային : Հայոց այսպէս
դազլթելը երկայն ատեն շարունակեց, որչափ որ Հայ-
աստան մըշանջենաւոր պատերազմի դաշտ մը դար-

ձած եւ զանազան բարբարոս ազգաց կոխան եղած էր, մինչեւ աս խաղաղութեան ու հանդատեան ժամանակները գալով՝ անոնց մնացորդներուն իրենց երկրին մէջ մնալու համարձակութիւն տուին :

Հայոց ցրուելուն գլխաւոր պատճառ մ'ալ վաճառականութիւնն եւ արուեստն եղաւ. որովհետեւ շատերը կամ ինքնակամ իրենց շահուն համար, եւ կամ զանազան թաղաւորներ իրենց երկիրը ծաղկեցրնելու համար զանոնք բռնի ստիպելով կամ հրաւրելով՝ հայրենիքնին թող տուին եւ օտար երկիրներ գացին հաստատուեցան, ինչպէս քիչ մը Լաբը պիտ'որ տեսնենք :

ԻՅ. Հայ ազգն՝ որն որ ըստ նորագոյն հաշուոց 4 միլիոնի մօտ ժողովուրդ ունի, թէպէտ եւ, ինչպէս վերը ըսինք, ամէն տեղ տարածուած է, ի վերայ այսր ամենայնի դեռ իր մեծ կէս մասն ($2\frac{1}{2}$ միլիոն) իր հայրենեացը մէջ կը բնակի: Իսկ անկէ դուրս Հայոց բազմութիւն գտնուող երկիրներ՝ նախ Տաճկաստանի Ասիական, Եւրոպեան եւ Ափրիկեան գաւառներն են, Երկրորդ Ռուսաստանի հարաւային գաւառներն, Երրորդ Պարսկաստան, Զորրորդ Աւստրիա եւ Հինգերորդ Հնդկաստան :

Տաճկաստանի ընդհանուր Հայերն՝ որոնց թիւը $2\frac{1}{2}$ միլիոն կը համարուի, Հայաստանէն զատ գլխաւորաբար Փոքր Ասիայի, Կիլիկիայի, Կոստանդնուպոլսոյ եւ իր շրջանակին, ու Մոլտաւիայի մէջ կը բնակին. նաեւ Եգիպտոսի մէջ ալ 3—4000 հոգի կը գտնուին: Ասոնց գլխաւոր գործքն երկրագործութիւն, կենդանաբուծութիւն (Ասիայի եւ բուն Հայաստանի մէջ), վաճառականութիւն եւ արուեստագիտութիւն է, եւ աս չորս ճիւղերուն՝ մանաւանդ վերջի երկուքին մէջ՝ Օսմանեան տէրութեան բոլոր հպատակներուն ամենէն յաջողակն ու ճարտարը կը համարուին, եւ կրնայ ըսուիլ որ Ասիայի վաճառականութիւնն եւ արուեստը գրեթէ միայն իրենց ձեռքն

է: Աս դործքերէն զաս, շատ քանքարաւոր մարդիկ, երևելի քաղաքներուն մէջ տէրութեան մեծամեծ պաշտօնները կը վարեն, եւ իրենց արթնութեամբն ու յաջողակութեամբը՝ մեծ համարում ու պատիւ ստացած են: Տէրութիւնն ալ անոնց արդիւնքը ճանչնալով՝ հետզհետէ անոնց զանազան պատուոց ստիճաններ եւ ազատութիւններ կը շնորհէ:

Տաճկաստանին Հայաստանէն դուրս գաւառներուն մէջ, ինչպէս քիչ մը յառաջ պատմեցինք, արդէն նոյն երկիրներն Օսմանեանց ձեռքը չանցած, զանազան անգամ զանազան պատճառաւ հայ դաշխակահնութիւններ դացած հաստատուած էին, որոնք նաեւ Օսմանեան Հարստութեան զօրանալէն եւ Յունաց երկիրներուն տիրելէն ետքն ալ շարունակեցին: Նոյն իսկ Օսմանեան թագաւորներն աս բանիս մասնաւոր փոյթ մ'ունեցան. Սուլթան Մէհմետ Բ. Կոստանդնուպոլիս առածին պէս՝ հոն Հայոց դաշխակահնութիւն մը բերաւ, եւ քաղքին զանազան կողմերը բնակեցուց: Նոյնպէս Սուլթան Սէլիմ Ա. բոլոր Հայաստանը Պարսից ձեռքէն առնելէն ետեւ, շատ հոյ արուեստաւորներ, զլիսաւորաբար թափրէթ քաղքէն Կոստանդնուպոլիս խաւրեց: Աս Կոստանդնուպոլսոց դաշխակահնութիւնն երթալով աւելնալով 200,000ը անցաւ:

Ի՞նչ. Ռուսաստանի Հայերը Ռուսի Հայաստանէն զատ զլիսաւորաբար վրաստանի, Խրբովի, Շիրվանի (Աղուանք) Լեհաստանի եւ տէրութեան քանի մ'երևելի քաղաքներուն մէջ կը բնակին, որոնց թիւը 1828էն ետեւ մինչեւ մէկ միլիոնի հասաւ: Ասոնց այսչափ բազմանալուն զլիսաւոր պատճառը, Ռուսի տէրութեան՝ Հայոց ազգին վաճառակահնութեան մէջ յաջողակութեան եւ ճարտար արուեստագիտութեան վրայ ունեցած մեծ համարումն եղաւ, որով ամէն միջոց ի դործ դնելով՝ եւ մեծամեծ ազատութիւններ խոստանալով՝ ջանաց իր տէրութեան մէջ Հայերը

բազմապիսի, եւ անոնց ձեռքովն երկիրը ծաղկեցրին : ԺԸ . դարուն սկիզբները (1720) երբ որ Պետրոս Մեծ կայսրը բարձր ճգամբ Ռուսաստանի արուեստն ու վաճառականութիւնը ծաղկեցրին ձեռք զարկաւ, Հայոց աս երկու ճիւղին մէջ ալ ունեցած յառաջադիմութիւնն իր մատարութիւնն անոնց վրայ դարձուց, եւ շատ ջանալով Ռուսաստանի քանի մ'երեւելի քաղաքներուն մէջ առաջին անգամ Հայ դպրութեաններ բերաւ, եւ անոնց ամէն տեսակ ազատութիւն շնորհեց : Այստեղ ասորի ետքը (1780) դեռ խորմ' Ռուսաց ձեռքը շանցած՝ կատարին, Բ. կայսրուհին նոյն նահանգը բնակող Հայերն հրախրեց որ գան իր երկիրը բնակին, եւ անոնց մեծամեծ շնորհքներ ու արտունութիւններ խոստացաւ : Խորմցի Հայք աս հրաւերն բնականեցան, եւ իրենցմէ երեւելի մաս մը Տոն գետին կողմերը գացին ու հոն՝ Նոր Նախ-իջեւան քաղաքը շինեցին, ուր Ռեիդիկոզըն Անդղիացւոյն տուած տեղեկութեան նայելով՝ 1816ին 4600 տուն հայ բնակիչ կար, ազգային քաղաքապետի մ'իշխանութեան տակ :

Բայց Հայոց բազմութեամբ Ռուսաստան դաղթելը բուն 1828ին Պարսկական պատերազմէն ետքն սկսաւ . վասն զի Ռուսի կայսրնեքն իրենց երկրին մէջ Հայազգիները շատցրին զիտաւորութիւնը միշտ ունենալով, երբ որ նոյն տարին Նիկողայոս կայսրը Պարսից յաղթեց եւ զանոնք խաղաղութիւն բնելու ստիպեց, հաշտութեան պայմաններուն մէջ աս ալ դրաւ որ Պարսից տէրութիւնն իր երկրէն Ռուսաստան անցնող քրիստոնէից ամենեւին արդելք պիտ'որ չդնէ : Աս դաշանց հաստատուելէն անմիջապէս ետքը, սկսան բիւրաւոր Հայեր մեծամեծ բարիքներ գտնելու յուսով՝ զիրենք հարստահարող ու չարչարող Պարսից երկիրը թողուլ եւ Ռուսաստան դիմել : Ռուսի կայսրն պսպիտի դաշինք մ'ալ 1830ին Օսմանեան տէրութեան հետ դրաւ, բայց աս դաշինքը Պարսից հետ

գրուածին հետեւութիւնը չունեցաւ : Պատաստան Հայերն իր դազը ժողովելու ջանքին արդիւնքը քիչ ժամանակեան մէջ տեսաւ. վասն զի անոնք իրենց նոր բնակութիւններուն մէջ հաստատուելուն պէս, սկսան Պատի վաճառականութեան նոր կենդանութիւն մը ապ, մանաւանդ Կաւկասեան գաւառներուն մէջ : Նաեւ տէրութեան մեծ քաղաքներուն մէջ մեաքսի եւ ազնիւ կերպաններու գործարաններ բացին, եւ ճարտարութեան աս ճիւղը նոյն երկրին մէջ շատ յատուց տարին : Հայոց պատերազմական կարողութիւնն ալ Պատի կառավարութեան աչքէն անտես չկրցաւ մնալ. ուստի զանոնք նաեւ զինուորութեան մէջ ալ խօթեց, եւ անոնցմէ 20—25,000ի դունդ մը կազմեց զորոնք տէրութեան միւս զինուորներուն ունեցած շատ պարտաւորութիւններէն ազատ կացուց եւ միայն իրենց երկիրը պաշտպանելու պարտք գրաւ : Քիչ ժամանակեան մէջ Հայերն ասոր մէջ ալ շատ յառաջադէժ եղան, եւ մէջերէն շատ քաջ զորավեաներ ելան, որոնք իրենց մեծամեծ յաղթութիւններով տէրութեան առջեւը մեծ արդիւնք ունեցան, եւ բարձր պատիւներ, ազնուականութիւն եւ երեւելի պաշտօններ բնդունեցան :

ԻՊ. Պարսկաստանի Հայերն՝ որոնց գաղթելուն վրայ աս Գլքին Զ. զլխուն մէջ խօսեցանք, ասէն մը շատ ծաղկած եւ հարստացած՝ եւ միանգամայն բազմութիւ ալ էին, երբ որ Պարսից թագաւորներն իրենց երկիրը ծաղկեցընելու մտօք անոնց ամէն տեսակ ազատութիւն շնորհած էին եւ շատ ալ օգնութիւն կ'ընէին : Բայց Նաաբը շահին մահուանէ ետքը (1750) Պարսկաստան սաստիկ խռովութեան մէջ իյնալով Հայերն ալ նոյն խռովութեանց պատճառաւ մեծ վնաս կրեցին ու մեծամեծ վտանգներու մէջ ինկան. անոր համար սկսան ուրիշ երկիրներ ցրուիլ : Մէկ կողմանէ ալ Պարսիկներն՝ որոնք Հայոց այնչափ յառաջանալուն ու հարստալուն վրայ սաստիկ կը նախանձէին,

սկսան անոնց վերջին աստիճանի բռնութիւն ընել և գանձեր տասապեցընել, որով անոնց սիրար Պարսիկ ազգին գէմ մահացու տաւութիւն մը մտաւ, և անոնց մէջ կենայն անկարելի ըրաւ: Ասոր համար երբ որ 1828ին Ռուսաց հետ զազլթականութեան ազատութեան դաշինքը գրուեցաւ, բիւրաւ որ ընտանիք իրենց տունը տեղը թողուցին և Ռուսաստան անցան: Այսպէսով Պարսկաստանի Հայերը շատ նուազեցան և հազիւ 2—300,000 հոգի մնացին, բայց անոնք ալ իրենց առաջին պայծառութիւնն ու հարստութիւնը չունին:

Ինչ. Պարսկաստանէն ետքը շատ Հայազգի գրտնուող երկիր՝ Աւստրիական տէրութեան Կալիցիա, Պուդոլինա և Արաւալ դաւառներն են: Հաստեղաց Հայերուն թիւը 20—25,000 կը համարուին: Կալիցիայի, ինչպէս նաեւ Ռուսի Լեհաստանի Հայերը, Լեհաց թագաւորութեան ատենը նոյն կողմերը դաղթեցան, երբ որ Ժ.Ա. դարուն մէջ Բաղրատունեաց թագաւորութիւնը ջնջուելով՝ անոնց Անի մայրաքաղաքը բարբարոս ազգաց ձեռքը մատնուեցաւ: Անեցիք առ բարբարոսաց բռնութիւններուն շիրնալով դիմանալ, շատերն իրենց տունը տեղը թողուցին, և որչափ կրցան ստացուածնին ժողվելով՝ Խրքմ անցան, և անկէ մէկ մասը Մոլտաւիա, ու մեծ մասը Լեհաստան եկան՝ ամէն անցած տեղերնին իրենցմէ մէյմէկ փոքր զաղթականութիւններ թող տալով: Ասոնք Լեհաստանի առաջին հայ զաղթականութիւնն հաստատուցին, և Լեհի թագաւորներէն ամէն տեսակ օգնութիւն զանելով՝ իրենց առաջին քաղաքակիցներուն (Անիի մէջ մնացողներուն) որոնք բարբարոսաց լծին տակ կը հեծէին, նախանձելի եղան և զանոնք ալ իրենց ձգեցին. մանաւանդ երբ որ Անի զանազան իշխաններու ձեռք անցնելով՝ նեղութիւնն ու խեղճութիւնն օրէ օր սկսաւ սաստկանալ: Այսպէսով Լեհաստանի հայ զաղթականութիւնն աճեցաւ և մինչեւ 40,000 տուն եղաւ:

ԱՆՏԻ թագաւորներն՝ որոնք աս ժողովականները սիրով իրենց երկիրն ընդունած էին, անոնց քանքարն եւ ամէն բանի յաջողակութիւնը տեսնելով՝ անոնց շատ ազատութիւններ շնորհելէն ետքը, նաեւ զատ ազգայնութեան իրաւունք տուին եւ առանձին ազգային գլուխ մը դրին, որն որ վայր իմանուանուէր: Աս իրաւունքը Գաղիմիր թագաւորը 1344ին նախ Կամենիցի Հայերուն, եւ ետքը 1356ին Աեմպերկի (Իլվովի) Հայոց մասնաւոր հրովարտակներով շնորհեց, զորն որ նաեւ իր յաջորդներն ալ հաստատեցին: Ասկէ զատ անոնց 12 հայազգի դատաւորներ ալ դրին, որոնք ազգային գլխոյն հետ ամէն դատաստանները կը կտրէին: Երկու դար ետքը (1516) Աեմպերկի մէջ Սիկիսմունտ թագաւորին հրամանաւ Հայոց առաջին դատաստանարանը շինուեցաւ: Երբ որ ԺՁ դարուն սկիզբները Թաթարաստանի Հայոց շատերն ալ Ահաստան գալով՝ առաջիններուն հետ միացան, աս գաղթականութիւնը նոր պայծաութիւն մ'ունեցաւ, եւ միանգամայն նոր փոփոխութիւն մ'ալ կրեց: Իսկզբան Հայոց դատաստանները հայերէն լեզուաւ կ'ըլլային, բայց ասոնց գալովը՝ որովհետեւ շատուր էին, եւ թաթարերէնէն ուրիշ լեզու չէին գիտեր, առաջիններն ստիպուեցաւ անոնց խոնարհիլ եւ իրենց բնիկ լեզուն թող տալով՝ թաթար լեզուն դատաստանի լեզու բրին: Գեռ մինչեւ հիմա աս լեզուաւ գրուած դաշնագիրներ եւ ուրիշ գրուածներ Ահաստանի գիւաններուն մէջ կը գրուուուին: Բայց որովհետեւ ասիկա անկատար լեզու մ'ըլլալով՝ չէր կրնար ամէն բանի յարմարիլ, լատիներէնն, իբրեւ Ահճի տէրութեան դատաստանական լեզուն՝ սկսաւ գործածուիլ, եւ կամաց կամաց բոլոր Հայոց դատաստանները գրուեց:

Ահաստանի Հայերը քիչ ժամանակուան մէջ նոյն երկրին ամէն երեւելի քաղաքներն իրենց առուտուրով բռնեցին եւ անոր վաճառականութիւնը

բողոքովին իրենց ձեռքն առին: Տէրութեան զործքերուն մէջ ալ մասն եւ անոնց մէջ այնչափ արգիւնք տնեցան՝ որ շատ ընտանիք իրենց ծառայութեան փոխարէն ազնուականութեան պատիւ ընդունեցան, եւ ոմանք նաեւ մինչեւ թագաւորին երկրորդն ըլլալու արժանի եղան: Զինուորութեան մէջ ալ շատ յառաջադիմութիւն ըրին, եւ միջերևն շատ երեւելի զօրապետներ ելան. ոմանք ալ թագաւորին թիկնապահ զբռեցան:

Եւ հաց թագաւորութեան իյնալովն եւ նոյն երկրին երեք տէրութեանց մէջ բաժնուելով՝ թէպէտ եւ Հայոց առաջին պայծառութիւնը կորսուեցաւ, եւ իրենց առաջին բաղմութիւնն ալ չմնաց, կէս մ'օտար ազգաց մէջ խառնուելով՝ կէս մ'ալ ուրիշ տեղեր ցրուելով. բայց դեռ անոնցմէ 6,000 Աւստրիայի կալիցիա ու Պուզովինա գաւառներուն մէջ կը դանուին, որոնց շատերն իրենց նախնեացն ստացած հարստութիւնն, ազնուականութիւնն եւ ազատութիւնները կը վայելէն: Նաեւ ոմանք տէրութեան պաշտօններն ալ կը կատարեն:

Արտեալի ու Մաճառաստանի Հայերն ալ, որոնք 15—18,000ի կը հասնին Լեհաստանի Հայոց անցքը կրեցին: Ասոնք ԺԱ. եւ ԺԲ. դարուն Հայաստանէն Մոլտաւիա գաղթած եւ հոն հաստատուած էին. բայց 1671ին Օսմանեանց եւ Լեհաց մէջ բացուած պատերազմին պատճառաւ բոլոր Մոլտաւիա ռանակոխ ըլլալով, հոնտեղի Հայոց շատերն Արտեալի լերանց վրայ փախան ապաւինեցան, եւ քանի մը տարի հոն պարապ տեղ նորէն իրենց երկիրը դառնալու սպասելէն ետքը, Միքայէլ Ափաֆի իշխանէն Արտեալի մէջ մնալու հրաման խնդրեցին, զորն որ նոյն իշխանն իրենց շնորհեց: Երբ որ հոն հաստատուեցան՝ սկսան ամէն ջանքով վաճառականութեան ետեւէ ըլլալ ու յառաջ երթալ: Արտեալի իշխաններն եւ Աւստրիայի կայսրներն ալ ասոնց ժրութեան օգնելու

համար, աստե՛ն աստե՛ն շատ ազատութիւններ շնորհեցին. անոնց բնակած քաղաքներուն մէջ իրենց համար գտա հայտոյզի դատաւորներ դրին, թէպէտ եւ Հայերը գտա ազգ չսեպուելու պայմանաւ Արաւելոյ բնդ ո՛նտ ամ էին: Հայաքաղաք կամ՝ Կերլա քաղաքը՝ զորն որ Հայերը Ահորոտոս Ա. կայսեր աստենն՝ անոր հրամանաւ շինած էին, եւ Պաշպալով՝ զորն որ մասնաւոր իրենց բնակութեան համար առած էին, Կարոյոս Զ. կայսրն առանձին հրովարտակներով թագաւորական ազատ քաղաք ըրաւ, անոնց մէջ ազգային դատաստանարան, 12 հոգւով Ծերակոյտ եւ Պիրով անունով քաղաքապետ դրաւ. աս իրաւունքը դեռ մինչեւ հիմա նոյն քաղաքները կը վայելեն:

Արաւելի Հայերէն շատերն իրենց անխոնջ աշխատութեամբը մեծամեծ հարստութիւններ ժողվելով՝ սկսան զէպ ի Մաճառաստան ատրամուխ եւ հոն մեծամեծ կալուածներ գնեցին: Մէկ կողմանէ ալ ուսման ու դիտութեան ետեւէ եզան, ու մէջերնէն շատ դիտուն մարդիկ տէրութեան պաշտօններու մէջ մտնելով՝ մեծ արդիւնքներ ցուցուցին, որոնց փոխարէն Աւսարիայի կայսերը ալ, մանաւանդ Մարիամ Թերեզիա կայսրուհին անոնցմէ շատ բնատնիքներ ազնուականութեան աստիճանի հասնեց: Գեռ մինչեւ հիմա թէ՛ Մաճառաստանի եւ թէ՛ Արաւելի մէջ շատ Հայտոյզի դատաւորներ, գաւառապետներ, գաւառապետի փոխանորդներ, զօրապետներ եւ ուրիշ երեւելի պաշտօնատէրներ կը գտնուին, որոնք տէրութեան առջեւը մեծ յարգ ու պատիւ ունին:

Իջ. Հայոց հինգերորդ գաղթականութեան երկիրը Հնդկաստան է, որն որ թէպէտ եւ հիմա իր առաջին պայծառութիւնն ու բազմութիւնը չունի, ի վերայ այսր ամենայնի դեռ մինչեւ աս օրս նոյն բնդարձակ երկիրն իր առուտորովը բռնած է: Հոս տեղաց Հայերը Պարսից հայ գաղթականութեան մէկ մասը կրնան համարուել. վասն զի նախ Նոր Զուլայի

Հայերը վաճառականութեան պատճառաւ հոս գալով՝ սա գաղթականութեան հիմնիչ եղան, եւ ետեւէ ետեւ ուրիշ տեղերէն իրենց քովն և կող ազգակիցներուն ասպնջական բլալով ու մէջերինն խառնելով՝ զանիկա մեծցուցին: Աս վաճառական ժողովուրդը թէպէտ եւ քիչոր էր (բստ սմանց 20,000, եւ բստ այլոց 10,000): Բայց իր ճարտարութեամբը գրեթէ բոլոր Հնդկաստանի տէր եղած էր, քանի որ Անգլիացիք նոյն երկրին մէջ ուրք կոխած չէին: Արկրին թագաւորներն իրեն ամէն տեսակ ազատութիւն տուած էին, եւ իր մէջէն շատերը մեծ զօրապետի, իշխանի (Ռաճայի) աստիճան, եւ ուրիշ մեծամեծ պատիւներ ու պաշտօններ ունէին, եւ իր ազգեցութիւնն այնչափ մեծ էր որ նոյն իսկ երկրին բուն տէրերն իր ուղածին պէս կը շարժէր, ու թէ՛ գրտի թէ՛ ներտի հարստութիւնն իր գողը կը ժողվէր:

Անգլիացւոց Հնդկաստանի տիրելն՝ Հայոց սս յաջողութեան մեծ հարուած մը տուաւ, բայց չկրցաւ զանիկա բոլորովին կործանել: Գեւ նոյն երկրին երեւելի քաղաքներուն մէջ, Պոմպայ, Ալիպթա, Մատրաս, Բատալիա, Սինկափոր եւ այլն, կը գրտնուին շատ հայազգի բնասնիք, որոնք Հնդկաստանին Անգլիայի լծէն ազատ կողմերուն վաճառականութեան մեծ մասը ձեռքերնին պահած են:

Ի՛. Բայց Հայոց իրենց հայրենիքէն դուրս տարածութիւնը միայն սս հինգ գաղթականութեան մէջ չի բովանդակիր, այլ նաեւ անոնցմէ դուրս Հին աշխարհքին երեք մասին մէջ ալ, ծաղկեալ քաղաքներու եւ գլխաւոր նաւահանգիստներու մէջ հայ վաճառականներ ու գործարանատէրներ յաճախ կը գտնուին: Անցած երկու դարերուն մէջ ասոնք Եւրոպա խիստ շատ էին, մանաւանդ Ամսդերտամի, Մարսիլիայի, Լիվոնոյի, Թրեստի, Վենետիկի, նաեւ Հոռոմի, Անգոնայի, Փարիզի, Լոնտոնի ու Վիեննայի մէջ, որոնք թէպէտ եւ հիմա կէս մ'ուրիշ տեղեր

երթալով՝ կէս մ'ալ տեղացի ազգաց հետ խոստումներով՝ կամ բողբոջին պակասած եւ կամ նուազած են, բայց իրենց թողուցած յիշատակարանները, շինած եկեղեցիներն եւ իրենց անուամբ անուանուած փողոցները դեռ մինչեւ հիմա կանգուն մնացած եւ իրենց յիշատակը պահած են:

Ասիայի մէջ ալ երեւելի առուտուրի տեղ մը չկայ, ուր գէթ քանի մը հայ ընտանիք չգտնուին: Աւղանիստանի մայրաքաղաքին (Գապուլի) մէջ դեռ մինչեւ ասօրս Նատրը շահին եւ Ահմէտ շահին Նոր Զուլայէն տարած հարիւրաւոր Հայոց մնացորդը կը գրտնուի: Ասոնք երկայն ատեն Տուրանեան ցեղին իշխանութեան տակ բարձր պաշտօններ կը կատարէին, մինչեւ Գիմուր շահին մահը. բայց անկէ ետքը յաջորդութեան կռիւները ծագելով՝ շատերն իրենց ընտանիքովն ուրիշ տեղեր ցրուեցան եւ միայն 20—30 հոգի նոյն տեղը մնացին: Նոյն իսկ Ճենաստան՝ որուն սահմաններն օտարականաց համար գոցուած է, իր մեծ քաղաքներուն եւ վաճառատեղիներուն մէջ հայ բնակիչներ ունի: ԺԳ. դարուն սկիզբը Գանդոն քաղաքին մէջ Հայոց ընտանիք գտնուին՝ Անդրէաս նոյն քաղաքին եպիսկոպոսը մեզի կ'աւանդէ, եւ միանգամայն կը պատմէ թէ անոնցմէ հարուստ տիկին մ'իր ծախքովն եկեղեցի մը շինել տուած է: ԺԸ. դարուն սկիզբը հայ վաճառականները մինչեւ Ճենաց Սինինկ քաղաքը գացին ուր Հայր Հռիփիս նոյն կողմերը ճամբորդութիւն բրած ատենն՝ անոնցմէ մէկուն հետ տեսնուեցաւ: Աս մօտերս դարձեալ Հնդկաստանի եւ Նոր Զուլայի Հայերէն կազմուած վաճառականաց ընկերութիւն մը Ճենաստան անցաւ եւ հոն հաստատուեցաւ:

Իսկ Ափրիկէի մէջ, Եգիպտոսէն զատ, ուր՝ ինչպէս ըսինք 3—4000 հայ կայ, մինչեւ Հապէշիսթան (Եթովպիա) տարածուած են: Աս երկրէն առաջին անգամ Փորդուկալի տէրութեան խրկուող դեսպանը

Հայազգի մըն էր, եւ 1834ին Հայ քահանայ մը Հայկե-
շիսթանի եկեղեցւոյն զլուխ դրուած էր :

Ահաւասիկ աս է Հայոց թէ իրենց Հայրենեայը
մէջ մնացող, եւ թէ անկէ դուրս գանուող մասին հի-
մական վիճակն, որուն վրայ եթէ ընդհանուր գիտու-
ղութիւն մ'ընելու ըլլանք, կը տեսնենք որ բաւական
յաջող վիճակ է : Ասոր աւելի եւս կը համազուինք,
եթէ աչքերնուս առջեւը բերենք ան ազգերն' որոնք
ատեն մը Հայոց նման եւ ոմանք անոնցմէ աւելի
անուանի ազգեր էին, եւ հիմա վերջին խեղճութեան
եւ անարգութեան մէջ են, եւ անոնց վիճակը մերինին
հետ համեմատենք : Յայանի է որ աս յաջողութիւնն
ազգերնուս բնաւորութիւն եղած քանի մ'աղէկ յատ-
կութիւններէն, գլխաւորաբար հաւատարմութենէ,
ժրութենէ, ճարտարամտութենէ եւ անձնանուէրու-
թենէ յառաջ եկած է, զորոնք մեր նախահարքն իբրեւ
առաւ եւ հաստատուն ժառանգութիւն մեզի թո-
ղուցած են : Բայց կայ ազգերնուս մէջ նաեւ ասոնց
եղծիչ թերութիւններ ալ, որոնք ատեն ատեն մէջեր-
նիս սպրդած մտած, եւ շատ ու մեծամեծ նխաներու
պատճառ եղած են, զորոնք բոլոր մեր պատմութեան
ընթացքն աղէկ կըռողը կրնայ տեսնել : Ուստի ազգին
ճշմարիտ պարծանքին ու պայծառութեան բաղձացող
Հայազգւոյն քաղցր պարտքն է ամենայն փութով իր
ազգը միշտ անուանի ընող առաքինութեանց ետեւէ
ըլլալ, եւ ազգին պատուոյն ու պայծառութեան դա-
րանակալ մոլութիւններէն հեռու փախչիլ, որով թէ
ազգն եւ թէ ազգին հետ ինքը զինքն ալ անուանի
եւ փառաւոր կ'ընէ :

ԲԲԻՍՏ
ՅԱՌԵՂ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

Հ Ա Յ Կ Ա Ջ Ա Ն Ց Ի Շ Խ Ա Ն Ն Ե Ր Ը

2350.*

Հայկ.

2990.

Արմենակ.

Արմայիս.

Ամասիա.

Գեղամ.

1250.

Հարմայ.

1300.

Արամ.

Արայ Գեղեցիկ.

Կարգոս (Արայեան Արայ).

Անուշաւան.

Պարէտ.

Արրակ.

Ջաւան.

Փառնաս.

Սուր.

Հաւանակ.

Վաշտակ.

Հայկակ Ա.

Ամպակ.

Առնակ.

Շաւարշ.

Նորայր.

Վտտասկար (Վտտաս. Կար).

Գոռակ.

Հրանտ.

Ընձաք.

Գղակ.

Հաւրոյ.

* Հայկականց ամէն իշխանն րուն ժամանակները ճշգիւ չեն գիտցուիր, ստոր համար հոս շատերուն անջևը ասարոյ թիւ

զնեց զանց տոնուած է, եւ միայն անոնց դրուած է՝ որոնց գէթ որ դարուն մէջ բլլալն յայտնի է:

ՔՐԻՍՏ. ՅԱՌԱՆԶ	ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
1200 .	<p>Զարմայր . Պերճ . Արբուն . Հոյ . Յուսակ . Կայսակ .</p>
680 .	<p>Սկայորդի . ՀԱՅԿԱԶԱՆՑ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ</p>
640 .	Պարոյր .
600 .	<p>Հրաչեայ . Փառնուսս . Պաճոյճ . Կոռնակ . Փառոս . Հայկակ Բ . Երուանդ Ա .</p>
570 .	Տիգրան Ա .
530 .	<p>Վաչագան . Առաւան . Ներսէճ . Զարեճ . Արմոզ .</p>
405 .	<p>Տերերազ կուսակալը . Բագամ . Վան . Վաչէ .</p>
330 .	<p>Հայկազանց թագաւորութեան ջնջուիլը . ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԸ</p>
330 .	<p>Միհրան . Նեոպաղսմէոս . Արդուարդ .</p>

ՔՐԻՍՏ
ՅԱՌԱՅ

ԺԱՆԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

- Արտաւազ (Արտաւազան) .
 Արտաշէս .
 Զահրան (Զասրիատէս) .
 Միհրորուզան .
 Արտաւազդ :
- ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ
- 150 . Վաղարշակ Ա .
 128 . Արշակ Ա .
 115 . Արտաշէս Ա .
 90 . Տիգրան Բ .
 88 . Տիգրան Ատրուոց [մագաւոր կ'ընտրուի :
 70 . Տիգրանակերտին քոջն եղած պատերազմը :
 63 . Ատրուոց ապստամբիլը :
 36 . Արտաւազդ .
- ԱՐՏԱՒԱԶԳԻՆ ՅԱԶՈՐԴՆԵՐՆ ԸՍՏ
 ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՄԱԳՐԱՑ
- 33 . Աղէքսանդր .
 33 . Արտաշատ (Արտաշէս) .
 20 . Տիգրան Ա .
 5 . Տիգրան Բ . եւ Երատոյ .
 5 . Արտաւազդ .
 2 . Տիգրան Բ . երկրորդ անգամ .
- ՔՐԻՍՏ .
 ԵՏՔԸ
- 1 . Արիօբարզան .
 Արտաւազդ .
 Տիգրան Գ .
 Երատոյ .
- 15 . Վոնոն .
 18 . Զենոն Արտաշէս .
 Արշակ .

ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐ.

Միջոցառում .
Հասարակական
Տրդատ .
Տրդատի Գ .
Տրդատ Երկրորդ Երկրամաս .

ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՏՈՒԹՅԱՆ

33. Արամ .
3. Արդար .

ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՏՈՒԹՅԱՆ

31. Արդարին դարձր .
35. Անանուն .
35. Անասարուկ .
65. Արուանդ Բ .
85. Արասչէս Բ .
127. Արասարդ Բ .
130. Տիրան Ա .
151. Տիրան Գ .
193. Վաղարշ .
213. Խոսրով ՄԷԾ .
257. Ս. Գրիգոր Առասարչին ճիւղերը :
261. Արասչին Հայաստանի տիրելը :
286. Տրդատ .
287. Ս. Գրիգորին վերադ նեա... իլը :
301. Հախսիսեանց նահատակութիւնը :
301. Ս. Գրիգորին վերադն հանա իլը և Հայոց
դարձր :
318. Տրդատին ու Ս. Գրիգորին Համ Երկրամաս :
333. Ս. Գրիգոր կը վախճանի :
343. Խոսրով Բ .
353. Տիրան Բ .
364. Արշակ Բ .

ԲԲԻՍՏ.
ԵՏԲԸ

ԺԱՄԸՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵԽՏԱԿ

Ս . Ներսէս Մեծ :

- 382 . Պապ .
 391 . Վարապղատ .
 392 . Արշակ Գ . եւ Վարդարշակ Բ .
 396 . Խոսրով Գ .
 399 . Ս . Սահակ Մեծ :
 400 . Վռամշապուհ .
 404 . Հայոց գրին գիւար :
 421 . Խոսրով Գ . երկրորդ անգամ .
 422 . Շապուհ պարսիկ .
 427 . Արտաշէս (Արտաշիւր) .
 433 . Արշակունեաց թագաւորութեան դպրիւր :

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Բ

- 434 . Վեհմիհրշապուհ .
 440 . Ս . Սահակին եւ Ս . Մեսրոպին մահը :
 Վասակ Սիւնի .
 Յազկերտին Հալաճանքը :
 451 . Վարդանանց պատերազմը :
 Ատրորմիզդ .
 454 . Ղեւնդեանց մարտիրոսութիւնը :
 461 . Ատրվինասպ .
 481 . Սահակ Բագրատունի .
 482 . Շապուհ Միհրանեան .
 484 . Անդեկան .
 485 . Վահան Մամիկանեան .
 510 . Վարդ .
 513 . Բուրղան .
 518 . ՄԺԷԺ Գնունի .
 Գենշապուհ .
 551 . Հայոց թուականին Հաստատուիւր :
 552 . Վշնաս Վահրամ .

ԳՐԻՍՏ.
ԵՏԲԸ

ԺԱՄԱՆԵԼԿԵԳՐԱԿԸՆ ՏԱԽՏԸԿ

- Վարազդատ .
564 . Սուրեն .
578 . Վշոն ճիճը .
592 . Սմբատ Բագրատունի .
600 . Գաւիթ Սահառունի .
623 . Վարազաիրոց Բագրատունի .
632 . Գաւիթ Սահառունի Կիւրապաղատ .
Վարազաիրոց Կիւրապաղատ .
Սմբատ Կիւրապաղատ .
656 . Համազասպ Մամիկոնեան .
659 . Գրիգոր Մամիկոնեան .
693 . Հապարացիք Հայաստանի կը տիրեն :

Ո Ս Տ Ի Կ Ա Ն Ք

- 694 . Աբղլա .
704 . Կոշմ .
717 . Վլիթ .
727 . Մոհմաա .
731 . Աբղլաղիղ .
742 . Մրուան .
743 . Աշոտ Բագրատունի Պատրիկ .
758 . Եղիա Ա .
760 . Սմբատ (Սահակ) Բագրատունի Պատրիկ .
767 . Սիւլէյման .
Պէքիբ .
Հասան .
786 . Եղիա Բ .
792 . Խուզիմա .
803 . Հոլ .
Բաղարատ Բագրատունի Պատրիկ .
848 . Ապուսէթ .
859 . Աշոտ Իշխանաց Իշխան :

ԳՐԻՍ
ԵՏԻՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԻՏԱԿ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ

885. Աշոտ Ա.
 889. Սմբատ Ա.
 908. Գագիկ Արծրունի Վասպուրականի թագաւոր :
 919. Աշոտ Բ. Երկաթ.
 928. Աբաս .
 937. Աշոտ Դերենիկ Վասպուրականի թագաւոր :
 952. Աշոտ Գ. Ողորմած .
 953. Աբուսահլ Համազասպ Վասպուրականի թագաւոր :
 961. Մուշեղ Կարս քաղքին մէջ կը թագաւորէ :
 977. Սմբատ Բ.
 990. Գագիկ Ա. Արքայից արքայ (Շահնշահ) .
 1020. Յովհաննէս Սմբատ .
 1021. Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը Սերաստիա կը քաշուի :
 1040. Գագիկ Բ.
 1045. Գագիկին թագաւորութենէ զրկուելը :
 1079. Գագիկ կը սպաննուի :
 Կարսի Գագիկ թագաւորը Յունաց երկիրը կը քաշուի :

ՌՈՒԲԵՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՆԵՐԸ

1080. Ռուբեն Ա .
 1095. Կոստանդին Ա .
 1100. Թորոս Ա .
 1123. Լէւոն Ա .
 1144. Թորոս Բ .
 1168. Թովմաս Պայլ .
 1169. Մլէհ .
 1174. Ռուբեն Բ .

ՔՐԻՍՏ ԵՏՔԸ	ԺԱՆՄԱՆԱԿԸ ԳՐԱԿԱՆ ՏԵԽՏԱԿ
	Թ Ի Ի Բ Ե Ն Ե Ա Ն Յ Թ Ա Գ Ա Բ Թ Բ Ն Ե Բ Ը
1185.	Լեւոն Բ.
1220.	Զապէլ լիպոպոլսի եւ փիլիպպոս. Հայաստան թաթարաց իշխանութեան տակ (1233—1240):
1226.	Հեթում Ա.
1270.	Լեւոն Գ.
1289.	Հեթում Բ.
1293.	Թորոս Գ.
1296.	Սմբատ.
1298.	Կոստանդին Բ.
1305.	Լեւոն Գ.
1308.	Օշին.
1320.	Լեւոն Ե. Անի քաղաքը կը կործանի:
1342.	Կոստանդին Գ.
1343.	Գուխտն.
1345.	Կոստանդին Գ.
1365.	Լեւոն Զ.
1375.	Լեւոն կը բռնուի:
1382.	Բանաէն կ'ազատի: Լանկիթիմուր Հայաստան կ'արշաւէ:
1393.	Լեւոնին մահը:
1473.	Օսմանեանք Հայաստան կը մտնեն:
1580.	Հայաստան բողոքոզին Օսմանեանց իշխանութեան տակ:
1604.	Շահարաս Հայոց մէկ մասը Պարսկաստան կը տանի:
1720.	Դաւիթ Սիւնի իշխան:
1746.	Հայաստան Օսմանեանց եւ Պարսից մէջ կը բաժնուի:
1828.	Հայաստանին մէկ մասը Ռուսաց ձեռքը կ'անցնի:

ԱՆՈՒԱՆՑ 8 ԱՆԿԸ

- Արաս թագաւոր . 262 . 268 . Ալի . 98 .
 269 . 275—278 . Ալմախ . 375 . 376 .
 Արաս թագաւոր Կարուց . 282 . Ալփասլան . 306 . 313—315 .
 287 . Ալփի . 376 .
 Արաս սպարապետ . 239—241 . Ալփի . 375 . 379 . 414 .
 243—246 . Ալլըցխա . 438 .
 Արդար . 80—87 . Ախուրէան գետ . 88 . 91 . 283 .
 Արդար Եղեւսիայի թագաւոր . 286 . 291 . 301 . 314 . 435 .
 109 . 110 . Ակարացիք . 54 .
 Արդեու . 84 . Ակկոն . 356 . 357 .
 Արդլազիզ . 229 . 230 . Ակնեք . 362 . 363 .
 Արդլայ . 229 . Ակոռի . 201 . 204 .
 Արեղեանք . 101 . Ահարոն . 308 .
 Արեւդենոս . 5 . Ահմատ . 243 . 249 . 250 .
 Արուսահլ Արծրունի . 317 . Ահմէտ Գ . 425 . 433 . 434 .
 Արուսահլ Համազասպ . 277 . Ահմէտ Շահ . 451 .
 281 . Ահմէտ փաշա Արիֆ . 433 .
 Արրահամ քահանայ . 198 . Աղբիանոս . 127 .
 Ազաթանգեղոս . 35 . Աղեքսանդր , Անտոնիոսին որ-
 Ազադալէ . 425 . դին . 67 . 70 . 71 .
 Ադարենացիք . 50 . Աղեքսանդր Մեծ . 29 . 30 . 41 .
 Ադդէ կոմս . 153 . Աղեքսանդր քուրմ . 105 .
 Ադդէ հայրապետ . 84 . 86 . Աղեքսանդրեզա . 403 .
 Ադդոն . 72 . 73 . Աղեքսանդրիա թագուհի . 48 .
 Ադրամեւ . 15 . Աղեքսանդրիա քաղաք . 171 .
 Ադրիանոս . 101 . 379 .
 Ադրիանուպոլիս . 439 . Աղիովիա . 66 . 102 . 104 . 144 .
 Ազազ . 329 . Աղիան . 312 .
 Ազատ գետ . 137 . Աղձնիք . 82 . 117 . 128 . 130 .
 Աղէտաին Գայգասուզ . 361 . 132 . 135 . 136 . 243 . 249 .
 368 . Աղուանք . 22 . 43 . 50 . 110 .
 Աթանազիներէս . 124 . 136 . 154 . 168 . 181 . 185 .
 Աթենաս . 44 . 186 . 188 . 189 . 202 . 279 .
 Աթղահակ . Տ . Աշղահակ . 300 . 304 . 443 .
 Աթուրխան . 428 . Աղստեւ . 263 .
 Ալայէտտին . 365 . Աղցք . 147 .
 Ալանաղան . 150 . Ամասիա . 6 . 7 .
 Ալանք . 93 . 95—97 . 108 . Ամատունիք . 101 . 114 . 118 .
 Ալէքս Անգեղոս . 351 . 123 . 132 . 166 . 167 . 251 .
 Ալի Արմէն . 239 . Ամարաս . 135 .
 Ալիգա . 351 . Ամէլէք . 368 .
 Ալի փաշա Հէքիմզատէ . 433 . Ամրսոս . 47 .
 434 . Ամիրզունա . 425 . 426 .

- Ամբրնէրակ՝ 182 .
 Ամբնասա . 31 .
 Ամիլաննոս . 35 .
 Ամպակ . 15 .
 Ամպերտամ . 450 .
 Ամրամ . 262 . 272 .
 Այաս . 403 .
 Այսմերիկոս . 398 .
 Այրարաս . 12 . 95 . 102 . 107 .
 114 . 141 . 161 . 171 . 124 —
 426 .
 Անակ . 109 . 111 . 112 . 119 .
 Անահիա . 119 .
 Անան . 82 . 83 .
 Անանու . 86 .
 Անասուլ . 170 .
 Անարզարա . 325 . 329 . 330 .
 331 . 337 . 339 . 341 . 385 .
 Անգեղ առն . 125 . 127 . 131 .
 Անգղ . 182 .
 Անգղիա . 322 . 403 . 410 . 412 .
 Անգղիացիք . 391 . 404 . 409 .
 450 .
 Անգոնա . 450 .
 Անդովկ . 146 . 158 .
 Անդրէաս առարեալ . 83 .
 Անդրէաս եպիսկոպոս . 451 .
 Անդրէաս Տանտուղոս . 403 .
 Անդրոնիկոս Բ . կայսր . 382 .
 Անդրոնիկոս Էպիֆրէնոս .
 340 . 344 .
 Անդրոնիկոս զօրապետ . 334 —
 339 .
 Անի ամրոց . 44 . 89 . 114 .
 119 . 138 . 147 .
 Անի գեղ . 283 .
 Անի քաղաք . 240 . 253 . 255 .
 256 . 279 . 280 . 282 . 283 .
 285 . 286 . 288 — 293 . 296 —
 306 . 313 . 314 . 317 . 415 —
 417 . 440 . 446 .
 Անծիա . 141 .
 Անկիւրիա . 157 . 420 .
 Անձեւացիք . 104 .
 Անյոյլ բերդ . 151 . 159 . 166 .
 168 .
 Աննիբաղ . 31 . 95 .
 Անյոյլ . 22 .
 Անուշաւան . 14 .
 Անտիգոնոս . 64 . 65 .
 Անտիոք իշխան . 145 . 146 .
 Անտիոք քաղաք . 48 . 49 . 79 .
 324 . 329 . 335 . 337 . 342 .
 343 . 345 — 347 . 351 — 360 .
 363 . 364 . 369 . 376 .
 Անտիոքեղա . 399 .
 Անտիորոս Ատիացի . 51 .
 Անտիորոս Էպիֆան . 32 .
 Անտիորոս զօրապետ . 135 . 136 .
 Անտիորոս ՍԷՃ . 31 .
 Անտոնիոս . 43 . 65 — 67 . 70 . 71 .
 Անտոնիոս Կարակաղղա . 109 .
 110 .
 Անտոնիոս Պիոս . 104 .
 Աշղահակ . 19 — 25 . 103 .
 Աշխազար . 120 .
 Աշխազար Դիմաքսեան . 162 .
 Աշխէն . 120 .
 Աշտա Ա . 237 . 239 — 242 . 244 .
 Աշտա Բ . 238 . 244 . 252 .
 253 . 258 . 262 — 276 .
 Աշտա Գ . 278 — 282 .
 Աշտա Ա . Գերեհիկ, Վասպու-
 րականի թագաւոր . 276 . 277 .
 Աշտա Բ . Վասպուրականի
 թագաւոր . 281 .
 Աշտա Արծրունի . 235 .
 Աշտա Գուգարաց իշխան . 267 .
 Աշտա, Գազիկ Բ. ին թողը . 317 .
 Աշտա Բագրատունի իշխան Ա .
 228 .
 Աշտա Բագրատունի իշխան Բ .
 230 . 231 .
 Աշտա Բագրատունի իշխան Գ .
 235 .
 Աշտա Բագրատունի Մասկեր
 232 .
 Աշտա, Սմբատ Ա. ին քեռայրը .
 251 .
 Աշտա սպարապետ . 258 . 262 .
 265 . 267 . 269 . 271 .
 Աշտա Վասպուրականի իշխան .
 243 . 249 . 251 .
 Աշտա, Յովհաննէս Սմբատին
 եղբայրը . 290 — 293 . 298 .
 Աշոց . 114 . 119 . 129 . 154 .
 Աշուշա . 182 . 201 .
 Աշտիշատ . 44 . 125 . 126 . 176 .

- Աշրափ . 379 .
 Ապաշուներ . 82 . 127 . 128 .
 150 . 309 .
 Ապագա խան . 369 . 371—377 .
 Ապիրաս . 290 . 292 .
 Ապիրաս . 323 .
 Ապլխարիպ իշխան . 317 .
 Ապլխարիպ Հաւնունի զօրա-
 պետ . 276 . 277 .
 Ապլմախա . 249 .
 Ապուսէթ . 233—235 .
 Ապուսփար . 293 . 302 .
 Ապպասապատ . 437 .
 Ապպաս Միրզա . 436 . 437 .
 Ապպիանոս . 48 . 49 .
 Ապպիանոս պատմիչ . 35 . 44 .
 50 . 51 . 58 .
 Ապտուլաճ . 229 .
 Ապտուլաճ փաշա քէօփրիւ-
 լիւ . 433 . 435 .
 Ապտարաճման . 225 .
 Ապրասմ Սպանդուներ . 169 .
 Առանկար Ամառունի . 188 . 191 .
 Առաստամ Գնունի . 204 . 205 .
 Առաւան . 27 .
 Առաքել պատմիչ . 414 .
 Աբերանի . 66 . 102 . 104 .
 144 .
 Առնակ . 15 .
 Առնուրաս . 321 .
 Առուէղեանք . 101 .
 Ահա . 19 . 33 . 36 . 40 . եւ այլն .
 Ասողիկ Տ. Ստեփանոս Ասողիկ .
 Ասորեստան . 2 . 11—17 . 85 .
 101 . 110 . 120 . 132 . 151 .
 225 . 253 .
 Ասորեստանեայք . 10 . 16 .
 Ասորիք . 11 . 31 . 33 . 42 . եւ
 այլն .
 Ասուղ . 44 .
 Ասպաշան . 424 . 427—429 .
 Ասպնջականք . 352 . 382 . 387 .
 388 . 398 .
 Ասպուրակէս . 165 .
 Ատապատ . 439 .
 Ատեղօն . 224 .
 Ատղիկ . 126 .
 Ատուածատուր . 403 .
 Ատան . 362 .
 Ատանա . 329 . 330 . 335 .
 Ատամ Արծրունի . 317 .
 Ատամ Գնունի Ա . 175 . 178 .
 Ատամ Գնունի Բ . 185 . 204 .
 206 .
 Ատաիկոս . 170 .
 Աարներսէճ . 201 . 206 .
 Աարներսէճ Վրաց թագաւոր .
 243—246 . 253 . 255—257 .
 269 .
 Աարսրմիզդ . 194 . 196 .
 Ատրպասական . 31 . 36 . 44 .
 75 . 116 . 136 . 186 . 189 .
 203 . 225 . 243 . 246 . 247 .
 253 . 262 . 270 . 273 . 424 .
 436 . 438 . 439 .
 Ատրվչնասպ . 200 . 201 . 203—
 205 .
 Արարացիք . 49 . 50 . 58 . 80 .
 82 . 174 . 207 . 285 . 372 .
 Արագած . 6 . 7 . 248 . 254 .
 Արածանի . 52 .
 Արամ . 6 . 8—11 .
 Արամազդ . 44 .
 Արամայիս Տ. Արմայիս .
 Արաման . 390 . 393 .
 Արամաս . 135 .
 Արամաստան . 9 .
 Արամեան . 9 .
 Արայ Արայեան . 14 .
 Արայ Գեղեցիկ . 6 . 11—14 . 16 .
 Արասա . 7 .
 Արարատ Տ. Այրարատ .
 Արբակ . 15 .
 Արբեղա . 44 .
 Արբուն . 15 .
 Արգամ . 91—94 . 97 .
 Արգամնղան . 15 .
 Արդուարդ . 30 . 31 .
 Արեա . 80 . 82 .
 Արիարաթ , Կապադովկացոց
 թագաւոր . 30 .
 Արիարաթ , Կապադովկացոց
 թագաւորին որդին . 30 . 32 .
 Արիարաթ , Միհրդատին որ-
 դին . 45 .
 Արիորարզան . 45 .
 Արիորարզան , Մարաց թագա-
 ւորին որդին . 70 . 72 . 73 .

- Արհոս . 133 .
 Արհատակէս , Ս . կաթողիկոս .
 114—116 . 127 . 133 . 134 .
 Արհատակէս Ղասաիվերացի .
 238 . 297 . 298 . 306 . 307 . 314 .
 Արհատորուղոս . 64 .
 Արհատոն . 101 .
 Արիք . 101 .
 Արծկէ . 306 . 313 .
 Արծն . 306 . 308 .
 Արծրունիք . 16 . 125 .
 Արկադ . 161 . 164 . 165 . 168 .
 Արձան բլուր . 131 . 132 . 224 .
 Արձան թարգմանիչ . 171 .
 Արձան քրմապետ . 125 . 126 .
 Արմայիս . 6 . 7 .
 Արմաւիր . 6—8 . 10 . 14 . 38 .
 41 . 48 . 89 . 90 . 95 . 149 .
 Արմենակ . 3 . 5—7 . 14 .
 Արմենիոս . 9 .
 Արմոզ . 27 .
 Արմտնի . 268 .
 Արշակ Ա . 34 . 38 . 39 .
 Արշակ Բ . 142—152 . 157—159 .
 Արշակ Գ . 160—163 .
 Արշակ Ա . Մեծ Պարթեւաց
 թագաւոր . 33 . 36 . 101 .
 Արշակ Բ . Պարթեւաց թա-
 գաւոր . 98 .
 Արշակ , Պարթեւաց թագա-
 ւորին որդին . 71 . 73 .
 Արշական . 40 .
 Արշակաւան . 142 . 146—148 .
 Արշակունիք . 33 . 35 . 114 . 134 .
 156 . 441 .
 Արշամ . 78—80 . 83 . 84 .
 Արշարունիք . 133 . 155 . 162 .
 170 . 172 . 173 .
 Արշաւիր , Կամսարին որդին .
 133 . 135 . 138 . 149 .
 Արշաւիր , Կամսարական . 186 .
 187 . 192 .
 Արշաւիր Պարթեւաց թագա-
 ւոր . 78 . 81 .
 Արշէզ . 57 . 59 . 62 . 63 . 78 .
 Արուճ . 254 .
 Արսէն ընծայեցի . 193 .
 Արսէն քահանայ . 199 .
 Արսուրան . 309 .
 Արտապարք . 72 . 142 . 151 .
 Արտազ . 98 . 191 . 216 .
 Արտակ Պալուսի կամ Մոկա-
 յի . 179 . 193 .
 Արտակ Ռշուսի . 179 . 190 .
 Արտաշան . 438 .
 Արտանէս . 43 .
 Արտաշամա . 40 .
 Արտաշաս . 70 . 71 .
 Արտաշատ . 30 . 31 . 42 . 52 .
 68 . 72 . 73 . 75 . 93 . 95 .
 116 . 120 . 123 . 179 . 191 .
 203 . 211 . 220 .
 Արտաշէս Ա . 38 . 39—42 .
 Արտաշէս Բ . 88—103 . 114 .
 Արտաշէս Գ . 170 . 171 . 173 .
 Արտաշէս , Արտաւազդ Աին
 որդին . 70 .
 Արտաշէս Ջենոն . 73 .
 Արտաշէս կուսակալ . 30—32 .
 Արտաշէս Ա . Պարթեւաց թա-
 գաւոր . Տ . Արշէզ .
 Արտաշէս Բ . 81 . 82 . 85 .
 Արտաշէս . Գ . 98 .
 Արտաշէս Ռշէզ . 27 .
 Արտաշէս , Տիգրան Բին Էլ-
 բայրը . 78 .
 Արտաշիաս . 43 .
 Արտաշիր . 170—172 .
 Արտաշիր , Շապուհին որդին .
 165—167 .
 Արտաշիր Սասանեան . 109—
 115 . 117 . 129 .
 Արտաւազ . } 30 . 31 .
 Արտաւազան . }
 Արտաւազդ . Ա . 35 . 62 . 63 .
 66—68 . 78 .
 Արտաւազդ Բ . 93 . 97—105 .
 Արտաւազդ , Արիորարշանին
 որդին . 70 . 73 .
 Արտաւազդ իշխան թագաւոր .
 70 . 72 .
 Արտաւազդ կուսակալ . 30 . 32 .
 Արտաւազդ Մանդակունի .
 113—116 . 119 . 130 .
 Արտաւան Ա . 73 . 74 .
 Արտաւան Բ . 109 . 110 .
 Արտեալ . 440 . 446 . 448 . 449 .
 Արտեմիս . 44 . 101 .

- Արտակալէ. 438.
 Արաւն Գարեղեան. 190.
 Արցախ. 195. 429. 430.
 Արփա չայք. 435.
 Արբէղայցոս զօրապետ. 46.
 Արբէղայցոս թագաւոր. 75.
 Արբէղայցոս իշխան. 134.
 Ադէ. 87.
 Աւետիք. 430. 431.
 Աւինեոն. 408.
 Աւղանիսթան. 451.
 Աւասրիա. 440. 442. 448. 449.
 Աւրեղիանոս. 113.
 Աւրեղիոս. Տ. Մարկոս Աւրեղիոս.
 Ափաֆի. 448.
 Ափիազք. 262. 268. 276—278. 290.
 Ափշին զօրապետ. 234.
 Ափշին ոստիկան. 243. 246—254.
 Ափրիկէ. 451.
 Ափրոզիտէս. 74.
 Բար. 26.
 Բարան. 233. 234.
 Բարեւաջիք. 10. 17. 23. 24. 50. 403.
 Բարիւոն. 3. 5. 23. 392.
 Բարիկ Սիւնի. 160.
 Բարիկ, Աստակին սրդին. 182.
 Բարկէն Սիւնի. 203. 204. 206. 209.
 Բազամ. 27.
 Բազայառինջ. 44.
 Բազարան. 88. 90. 94. 95.
 Բազարան. 95.
 Բազարատ Բազրատունի. Ա. 37. 38.
 Բազարատ Բ. 132. 135—137.
 Բազարատ Գ. 233. 234.
 Բազարատ թագաւոր Ափխազաց. 304.
 Բազաւան. 100. 108. 114.
 Բազրատունիք. 18. 39. 42. 44. 78. 84. 127. 174. 237. 305. 306. 317. 414. 417. 446.
 Բազրեւանդ. 150. 176. 251. 263.
 Բազ. 7.
 Բազունի. 324.
 Բաթնիքաղ. 81.
 Բակ. 194.
 Բակուր բղէշխ. 117. 135. 136.
 Բակուր, Պարթեւաց թագաւորին սրդին. 62. 63.
 Բակուրակերտ. 101.
 Բաղէշ. 311.
 Բաղիս գետ. 59.
 Բաղուզիոս. 321.
 Բաղտին } Իշխան. 329.
 Բաղտուհնոս }
 Բաղտուհնոս թագաւոր. 336. 341.
 Բայբերդ. 89.
 Բանիկ. 317.
 Բաշու. 366. 416. 417.
 Բասեան. 99. 107. 212. 213.
 Բասէն. 307.
 Բասիլիոս Յովհ. Հերոլա. 321.
 Բասիլք. 107—109. 116. 127. 129. 130.
 Բասքեւիշ. 436—439.
 Բատ գաւառ. 89.
 Բատ Սահառունի. 160.
 Բատաւիա. 450.
 Բարաղամ. 11.
 Բարզանէս. 10.
 Բարզափրան. 43. 63—65. 78.
 Բարձրբերդ. 335. 336.
 Բարղամ. 9. 11.
 Բարղամինա. 45.
 Բարշղ. } 206—208.
 Բարսեղ. }
 Բենդիդիոս. 43.
 Բենեդիկտոս ԺԲ. 389. 399. 401.
 Բենեւենդ. 397.
 Բեր. 276—278.
 Բերկրի. 298.
 Բզնունեաց ճով. 4. 313.
 Բզնունիք. 7. 134.
 Բէլ. 2—6. 10.
 Բէլ կուրք. 81.
 Բէլ Հոն. 198.
 Բիւրակն. 262. 273. 274.

- Բյուր գեղ. 176.
 Բողանոս. Տ. Վիկահոս.
 Բանիփակիրոս Ը. 381.
 Բուզնան. 81.
 Բուխա. 233. 235.
 Բուրգար. 112.
 Բուրզան. 218. 219.
 Բջնի. 295.
 Բրամանդ Լուսինեան. 100.
 Բրբիչյ. 175.
 Գարեհանոս. 58.
 Գազ. 135.
 Գաղիկ Ա. 238. 288—290.
 Գաղիկ Բ. 298—306. 315—
 317. 322. 325—327.
 Գաղիկ Արասեան կարուց թա-
 զաւոր. 296. 306. 309. 314.
 315. 317.
 Գաղիկ Արծրունի իշխան. 243.
 249—251.
 Գաղիկ Արծրունի իշխան. 249.
 251.
 Գաղիկ Արծրունի Վասպու-
 րականի թագաւոր. 244.
 257—260. 273. 276.
 Գաղիչյ. 179. 190. 203.
 Գաղաւոն. 163—165. 169.
 Գաղիմիր. 447.
 Գալէնաէր օղու. 428.
 Գաղատիա. 57. 344.
 Գաղղիա. 286. 321. 322. 386.
 388. 391. 398—400. 403.
 408. 409—412.
 Գաղղիացիք. 390. 393. 404.
 409. 411.
 Գայգաուզ. 361. 362.
 Գայիանէ. 121. 122.
 Գայիոս. 72.
 Գայիրոյ. 398.
 Գայլ գետ. 42. 47. 119.
 120.
 Գայլ Վահան. 224.
 Գանդերպուրի. 411.
 Գանդոն. 451.
 Գանձակ. 317. 435. 437.
 Գանձի. 298.
 Գանասահար. 429. 434.
 Գասպուլ. 451.
 Գասնի. 74.
 Գասնիկ. 134.
 Գասպոն. 347. 353.
 Գարա Երուսալ. 420.
 Գարեգին Արուսեյակեան. 193.
 Գարջոյլ Խոսիս ունի Ա. 137.
 Գարջոյլ Խոսիս ունի Բ. 204.
 205.
 Գղիհն. 201. 206. 212. 213.
 Գեգուհն. 116. 127. 130—
 132.
 Գեղ. 8.
 Գեղամայ ծով. 8. 91. 274.
 Գեղամի. 6. 8.
 Գեղայ բերդ. 263. 275.
 Գեղարունի. 6. 8.
 Գեռներիոս. 354.
 Գեր Բորղլը. 282. 283.
 Գերեզմանք. 6.
 Գերմանացիք. 80. 349. 406.
 423.
 Գերմանիկ. 340. 368.
 Գերմանիկոս. 71. 73. 81.
 Գէորդ իշխան. 341.
 Գէորդ Բ. կաթողիկոս. 242—
 245. 248.
 Գէորդ Մարզպետունի. 262.
 263. 274. 275. 278. 279.
 Գըլըճ Աջան. 334. 339. 340.
 Գիսակ. 92. 94.
 Գիսանէս. 116. 124. 125.
 Գիա Վահէուունի. 179. 190.
 Գղակ. 15.
 Գնէլ Արշակունի. 142—145.
 Գնէլ Գնունի. 64.
 Գնթունիք. 79.
 Գնունիք. 16.
 Գոթլուզ. 382.
 Գողթն. 98. 165.
 Գող Վասիլ. 323. 325.
 Գոռ. 279.
 Գոռակ. 15.
 Գոռնէաս. 74.
 Գորգի, Ափխազաց թագաւոր.
 291. 292. 296.
 Գորգի, Վրաց թագաւոր.
 414. 415.
 Գորդոնոս. 153.
 Գուգարացիք. 132.

- Գուգարք . 136 . 182 . 201 . 239 . 241 . 242 . 244 . 251 . 255 . 262 . 263 . 267 .
 Գուժք . 116—118 .
 Գուխանն . 401 . 402 .
 Գուր . 52 .
 Գուրգէն , ԱրուսաՏլին որդին . 281 .
 Գուրգէն Անձեւացի . 251 .
 Գուրգէն Արծրունի . 249 . 251 .
 Գուրգէն , Ափխազաց թագաւոր . 262 , 268—272 .
 Գուրգէն Բագրատունի . 250 .
 Գուրգէն , Վասպուրականի իշխան . 273 .
 Գուրիճան . 434 .
 Գրիգոր Ա . Ս . Լուսաւորիչ . 35 . 109 . 112—114 . 116 . 119 . 120 . 123—128 . 132—134 . 140 . 288 . 379 .
 Գրիգոր Բ . կաթողիկոս . 241 .
 Գրիգոր Զ . Ապիրբա . 351 .
 Գրիգոր Է . Անաւարդեցի . 384 . 385 .
 Գրիգոր ԺԱ . Քաճանայապետ . 406 .
 Գրիգոր Դերենիկ Արծրունի . 240 .
 Գրիգոր երէց . 320 .
 Գրիգոր իշխան . 259 .
 Գրիգոր իշխան , Աշոտ Բին աներորդին . 270 .
 Գրիգոր Մագիստրոս . 308 .
 Գրիգոր Մամիկոնեան Ա . 217 .
 Գրիգոր Մամիկոնեան Բ . 225 . 227 . 228 .
 Գրիգոր Մամիկոնեան Գ . 231 .
 Գրիգոր ՊաՏլաուունի . 295 . 301 .
 Գրիգորիս . 134 . 135 .
 Գաժգոյնք . 22 .
 Գաճմազդուլի խան . 427 . 434 .
 Գաճմազլ Ա . 422 . 423 .
 Գաճմազլ Բ . 433—435 .
 Գամասկոս . 229 . 230 . 374 . 382 .
 Գանիէլ Էպիսկոպոս . 167 .
 Գանիէլ Տերունի , 139 . 140 .
 Գազրէժ . Տ . Թազրէժ .
 Գարա Սիւնի . 163 .
 Գարա քաղաք . 375 .
 Գարանազի . 156 .
 ԳարեՏ , Պարթեւայ թագաւոր . 89 . 90 . 95 .
 ԳարեՏ , Պարսից թագաւոր . 29 . 41 .
 Գաւիթ ԱնՏողին . 300 . 304 .
 Գաւիթ Անյազլթ . 171 .
 Գաւիթ Բագրատունի . 235 .
 Գաւիթ , Գազիկ Բին որդին . 317 .
 Գաւիթ , Գրիգոր Լուսաւորչին աները . 114 .
 Գաւիթ կաթողիկոս . 233 .
 Գաւիթ Մամիկոնեան Ա . 174 .
 Գաւիթ Մամիկոնեան Բ . 231 . 232 .
 Գաւիթ ՍաՏաուունի . 222 . 223 . 225 .
 Գաւիթ , Սենէքերիսին որդին . 293 . 294 .
 Գաւիթ Սիւնի . 429—431 . 433 .
 Գաւիթ , Վրաց թագաւոր . 414 . 415 .
 Դելլիոս . 67 .
 Դեմեար . 116 . 124 . 125 .
 Դեմեար քուրմ . 125 . 126 .
 ԴենշապուՏ իշխան . 198 . 199 .
 ԴենշապուՏ մարզպան Ա . 175 . 178 .
 ԴենշապուՏ մարզպան Բ . 218—220 .
 Դերենիկ Աշոտ . 276 . 277 .
 Դերենիկ Գրիգոր . 240 .
 Դերջան . 309 .
 Դեւգաս . 253 .
 Դէմոնակս . 46 .
 Դէոգաս . 403 .
 Դէոսկորոս . 296 . 297 .
 Դիմաքսեան . 94 .
 Դիմուրթաշ . 390 . 393 .
 Դիմուր շաՏ . 451 .
 Դիոգորոս Սիկիւլացի . 2 . 10 .
 Դիոգինէս . } 315 .
 Դիոժէն . }
 Դիոկղեաթանոս . 115—118 . 121 .
 Դիոն Կասսիոս . 35 . 36 . 109 .
 Դոդս . 243 . 249 .
 Դոմնէս . 72 .

- Դուին. 135 · 137 · 201 · 203
 Էւ սյլն .
 Դրազարկ . 328 · 346 · 370 ·
 Դրաստամատ . 159 .
 Էազուպ . 340 .
 Եղերացիք . 241 · 247 · 252 ·
 255 · 257 · 272 .
 Եղիպտացիք . 99 · 259 · 319
 Էւ սյլն .
 Եղիպտոս . 59 · 66 · 67 · 110
 Էւ սյլն .
 Եղիտիոս . 384 .
 Եղեսիա . 68 · 70 · 80 · 81 ·
 83 · 84 · 86 · 109 · 171 .
 Եղիա Ա . 229 · 230 .
 Եղիա Բ . 229 · 232 .
 Եղնիկ . 171 .
 Եթովպիա . 451 .
 Եկրատան . 133 .
 Եկեղեց գաւառ . 104 · 119 ·
 163 · 309 .
 Եղիշէ . 174 · 179 · 187 .
 Եղիսաբէթուպոլիս . 437 .
 Ենանոս . 78 · 79 .
 Եուսուֆ . 420 · 421 .
 Եպիսթեմէս . 28 · 29 .
 Երազգաւորս . 256 · 258 · 268 .
 Երախնաւու . 104 .
 Երանեակ . 104 .
 Երասխ . 7 · 8 · 22 · 75 · 89 ·
 90 · 97 · 107 · 112 · 203 · 211 ·
 240 · 424 · 426 · 436 — 438 .
 Երատոյ . 70 · 72 · 73 .
 Երասխաձոր . 133 · 252 · 259 .
 Երեմիա . 23 .
 Երեւել . 163 .
 Երզնկայ .
 Երէզ .
 Երիզա .
 Երընջակ . 244 · 260 · 261 .
 Երիւան . 425 · 433 — 436 · 438 .
 Երուազ . 91 · 93 — 95 .
 Երուանդ Ա . 2 · 18 · 23 — 25 .
 Երուանդ Բ . 88 — 95 .
 Երուանդակերա . 88 · 90 .
 Երուանդաշատ . 88 · 90 — 92 · 95 .
 ԵրուանդաՎան . 92 .
 Երուսաղէմ . 18 · 43 · 59 Էւ սյլն .
 Էւ սյարս . 41 .
 Էւսպրիս . 174 .
 Էւբէա . 400 .
 Էւզինէս Պորէ . 286 .
 Էւմենէս . 30 · 31 .
 Էւսարատիոս . 332 · 333 .
 Էւսարոպիտոս . 35 · 50 .
 Էւրոֆնոս Տով . 43 .
 Էւրոպա . 40 · 321 · 349 · 369 ·
 386 · 387 · 400 · 401 · 404 ·
 406 · 411 · 450 .
 Էփեսոս . 44 .
 Էփրատ . 44 · 57 · 58 · 63 · 76 ·
 139 · 156 · 377 · 382 · 383 · 397 .
 Էքսիպոն . 64 .
 Եօթնգայլ . 295 .
 ԶաՀրան . 30 — 32 .
 Զապէլ [Թագուհի . 362 — 364 .
 Զապէլ, Լեւոն Գ.ին աղջիկը .
 401 .
 Զապէլ, Հեթում Բ.ին քոյրը .
 380 .
 Զասրիտաէս . 31 .
 Զարգմանոս . 93 · 98 .
 Զարեհ, Արտաշէս Բ.ին որ-
 դին . 99 · 100 .
 Զարեհ [Թագաւոր . 27 .
 Զարեհ, Պերոզին որդին . 216 .
 Զարեւանդ . 191 · 206 · 276 .
 Զարիպար . 43 .
 Զարմայր . 14 · 15 .
 Զարմիհր Հազարաւուխա . 201 ·
 211 · 212 .
 Զարուէն . 49 · 51 .
 Զարուհի . 21 .
 Զաւան . 15 .
 Զաբարիա . 414 · 415 .
 Զէնոր . 35 · 130 .
 Զէնորիա . 71 · 74 · 75 .
 Զէնոն . 71 · 75 .
 Զինեւատին քէթպողա . 380 .
 Զոնարաս . 174 .
 Զրադաշտ . 14 .
 Զօրայ Գնթունի . 79 .
 Զօրայ Ռշուունի . 139 — 141 .
 Էշրէֆ շահ . 433 · 434 .
 Էջմիածին . 435 — 437 .
 Էօզպէր Թաթար . 418 .

ԲՆՆԱԿ . 15 .
 ԲՆՏԻ Կ ԸԿԵԱՅԻ . 190 .
 ԹՎԱԳԼՈՍ ԱՌԱՔԵԿԱԼ . 80 . 84 . 86
 ԹՎԱԿԱՐԱՍՏԱՆ . 419 . 447 .
 ԹՎԱԿԱՐՔ . 290 . 293 — 296 . 320 .
 334 . 365 — 371 . 374 — 377 .
 379 — 381 . 385 . 389 . 390 .
 392 . 396 . 414 — 418 . 441 .
 ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՆԱՆԳԱՅԻ Ա . 192 .
 ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՆԱՆԳԱՅԻ Բ . 306 .
 309 .
 ԹՎԱՊՐԷԺ . 133 . 432 . 433 .
 438 . 443 .
 ԹՎԱՐԱԹՎԱ . 91 .
 ԹԵՐԵՂԻԱ . Տ . ՄԱՐԻԱՄ ԹԵՐԵՂԻԱ .
 ԹԵՓԱՆԷ . 380 .
 ԹԷՆՈՂՈՍ ՂՈՐԱՍՅԱԿԱՆ . 143 .
 148 . 149 .
 ԹԷՆՈՂՈՍ ՄԷՏ . 151 — 153 .
 156 . 157 . 161 .
 ԹԷՆՈՂՈՍ ՓՈՐՔ . 168 . 170 .
 185 . 186 .
 ԹԷՆՈՂՈՐԱ . 380 .
 ԹԷՆՈՂՈՐՈՍ ԻՂՆԱՆ . 266 .
 ԹԷՆՈՂՈՐՈՍ ՈՆՇՏՈՒՆԻ . 225 . 226 .
 ԹԷՆՈՂՈՒՍՈՒԹՅԱՆ . 170 . 417 .
 ԹԷՆՆԵՐԻԱՍՍ . 109 .
 ԹԻԼԻ . 339 . 341 .
 ԹԻԼՆ ԱԼԱՆ . 44 . 134 . 155 .
 ԹԻԼՐՔ . 293 . 343 . 368 . 372 .
 374 .
 ԹԻԼՐՔՈՒՆ . 389 . 390 . 392 .
 393 . 420 . 422 . 431 .
 ԹՈՎՄԱ ԱՐՃՐՈՒՆԻ . 174 .
 ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԿԱԼ . 84 .
 ԹՈՎՄԱՍ ԻՂՆԱՆ . 341 .
 ԹՈՎՄԱՍ ՄԵԾՈՒԲԵՅԻ . 414 .
 ԹՈՎՄԱՍ ՊԱՅԼ . 342 .
 ԹՈՐՂԱՆ . 134 . 139 . 140 .
 ԹՈՐՈՍ Ա . 324 — 328 .
 ԹՈՐՈՍ Բ . 321 . 333 — 342 .
 ԹՈՐՈՍ Գ . 378 . 380 . 381 . 383 .
 ԹՈՐՈՍ , ՀԵԹՈՒՄ ԱՒՆ ՈՐՂԻՆ .
 365 . 369 .
 ԹՈՒԽ ԳԵՂ . 250 .
 ԹՈՒՂԻԱ . 156 . 157 .
 ԹՈՒՐՔ . Տ . ԹԻԼՐՔ .

ԹՈՒՄԱԼ ՕՍՄԱՆ . 428 .
 ԹՐԱԿԱՅԻ . 80 .
 ԹՐԵՍԱ . 450 .
 ԻԼԼԻԳՈՐՃԻԱ . 409 .
 ԻԼՎՈՎ . 447 .
 ԻԿՆԻՈՆ . 334 . 339 .
 ԻՆՆՈՎԿԵՆՄԻՈՍ Ք . 321 . 347 .
 351 . 352 . 357 — 359 .
 ԻՎՐԱՆՇԻՄ ՓԱՂԱ . 422 .
 ԻՍԱՀԱԿ ԿՐՄԵՆՆՈՍ . 331 .
 ԻՍԱԼՐԻԱ . 339 . 347 — 349 .
 ԻՍԼԱՆԱ . 157 .
 ԻՍՄԱԿԻԼ ՂԱՀ . Տ . ՇԱՀ ԻՍՄԱԿԻԼ .
 ԻՍՏՈՆ . 403 .
 ԻՍՔԵՆՍԵՐ . 418 . 421 .
 ԻԼԱՆԷ . 414 . 415 .
 ԼԱՂՔ . 429 .
 ԼԱՄՐՈՆ . 323 . 345 — 347 .
 360 . 361 . 364 . 365 . 367 .
 ԼԱՄՈՍ . 341 .
 ԼՈՅՍԱ . 390 . 394 . 395 . 397 . 398 .
 ԼԱՆԿԻԹ ԻՄՈՒՐ . 414 . 418 — 421 .
 ԼԱՍՏԻՎԵՐՍԱՅԻ . Տ . ԱՐԻԱ .
 ԱՍԿԵԱ ԼԱՍՏԻՎԵՐՍԱՅԻ .
 ԼԱՍԽՆԱՅԻՔ . } 9 . 336 . 337 .
 ԼԱՍԽՆՔ . } 378 . 416 .
 ԼԵՀԱՍԱՆ . 417 . 428 . 440 .
 443 . 446 — 448 .
 ԼԵՀՔ . 448 .
 ԼԵՄԿԵՐԿ . 447 .
 ԼԵՆՆ Ա . 320 . 326 . 329 .
 330 . 333 — 335 .
 ԼԵՆՆ Բ . 321 . 345 — 363 . 365 .
 ԼԵՆՆ Գ . 320 . 365 . 369 —
 378 . 401 .
 ԼԵՆՆ Դ . 320 . 383 — 385 .
 ԼԵՆՆ Ե . 320 . 388 . 389 .
 391 . 392 . 397 — 401 .
 ԼԵՆՆ Ձ . 321 . 404 . 412 .
 ԼԵՆՆ ՂՈՐԱՍՅԱԿԱՆ . 229 .
 ԼԵՆՆ ԻՄԱՍՏԱՍԵՐ . 241 .
 246 . 259 .
 ԼԻԿԱՅՆԻԱ . 344 .
 ԼԻԿԻԱՆՈՍ . 115 . 117 . 118 .
 ԼԻՎԱՐԻԱ . 308 .
 ԼԻՎՈՒՆՈՅ . 450 .
 ԼԻՂԱՅԻՔ . 41 .

- Լիւիոս . 35 .
 Լնդորարտացիք . 156 .
 Լնտան . 410 . 450 .
 Լուսինեան . 412 .
 Լփինք . 187 .
 Խաղ . 144 . 150 .
 Խաղիբք . 107—109 . 225 . 228 .
 Խաղլաաղ . 111 . 185 . 186 .
 Խաղտիք . 195 . 201 . 211 .
 Խառան . 61 . 87 .
 Խլաթ . 313 .
 Խնձորեւք . 429 . 432 .
 Խոշակունիք . 23 .
 Խոռ . 5 . 7 .
 Խոռխոռուկիք . 7 . 127 .
 Խոսրան Արծրունի . 82 .
 Խոսրով Ա . ՄԷԾ . 35 . 109—114 .
 Խոսրով Բ . 135—138 .
 Խոսրով Գ . 34 . 35 . 161 —
 166 . 168 . 169 .
 Խոսրով . Պարսից թագա-
 ւոր Ա . 218—221 .
 Խոսրով . Պարսից թագա-
 ւոր Բ . 221—224 .
 Խոսրովակերտ . 137 .
 Խոսրովիդուխա . 114 . 118 . 123 .
 Խորազմի . 416 .
 Խորենացի . Տ . Մովսէս Խո-
 բենացի .
 Խորէն Խոռխոռուկի . 187 .
 192 . 193 .
 Խորձէն . 309 .
 Խուզիմա . 233 .
 Խարիկ . 298 .
 Խրամ . 23 .
 Խրլմ . 417 . 443 . 444 . 446 .
 Ծաղկոտան . 208 .
 Ծմնդաւ . 315 .
 Ծննդոց անտառ . 90 .
 Ծովք . 30 . 31 . 49 . 57 . 134 .
 135 . 137 . 140 .
 Կարիւռնիա . 47 .
 Կաղմոս . 3—6 . 11 .
 Կալամանոս . 334 .
 Կալիցիա . 446 . 448 .
 Կալիաթա . 450 .
 Կաղզուան . 252 .
 Կամենից . 447 .
 Կամսար . 116 . 132—134 .
 Կամսարականք . 133 . 135 . 149 .
 150 . 166 . 167 . 207 . 208 .
 Կայպակ . 15 .
 Կապագոովկացիք . 31 . 32 . 45 . 47 .
 Կապագոովկիա . 30 . 37 . 43 . 44 .
 49 . 56 . 57 . 91 . 99 . 105 . 326 .
 Կապան . 361 . 388 . 404 . 307 .
 Կապոյտ բերդ . 244 . 259 .
 Կասրք . Տ . Կասպք .
 Կասպերիոս . 76 .
 Կասպից ծով . 98 .
 Կասպք . 93 . 98 .
 Կասսիոս . 43 . 62 . 63 . 71
 Կաստիլիա . 405 . 408 . 412 .
 Կատարինէ Բ . 444 .
 Կատրամիտէ . 288 .
 Կար . 15 .
 Կարդոս . 14 .
 Կարենեանք . 109 .
 Կարենի Պաշլաւ . 82 . 111 .
 Կարէն . 81 .
 Կարին . 128 . 170 . 223 . 417 .
 437 . 439 .
 Կարոլոս Ե . Գաղղիացւոց
 թագաւոր . 391 . 398 .
 Կարոլոս Զ . Գաղղիացւոց
 թագաւոր . 409 . 410 .
 Կարոլոս Զ . կայսր . 440 . 449 .
 Կարիանոս . 115 .
 Կարոս . 115 .
 Կարս . 243 . 245 . 252 . 276—
 283 . 287 . 296 . 306 . 309 .
 314 . 315 . 425 . 436 . 438 .
 Կարրաս . 61 .
 Կարբեդոնացիք . 31 .
 Կաւասա . 218 . 219 .
 Կաքաւարսք . 272 .
 Կեդրենոս . 174 . 296 .
 Կեղեստինեանք . 404 . 411 . 412 .
 Կեղեստինոս Գ . 350 . 351 .
 Կեռասակ . 361 .
 Կեսարիա . 11 . 63 . 112—114 .
 116 . 118 . 119 . 124 . 126 .
 127 . 133 . 155 . 306 . 315 .
 Կեսարիա Ասորոց . 376 .
 Կերալոոս . 397 .

- Կերլա . 440 . 449 .
 Կիսքսար Ա . 16 . 17 .
 Կիսքսար Բ . 24 .
 Կիզիկոն . 46 .
 Կիզիկարա . 306 . 316 . 317 .
 322 . 325 . 326 . 328 .
 Կիլիկիա . 49 . 57 . 317 եւ այլն .
 Կիկերոն . 35 .
 Կիննամոս . 321 . 337 .
 Կիպոզա . 369 .
 Կիպրացիք . 396 . 401 .
 Կիպրոս . 337 . 347 . 360 . 380 .
 381 . 386—390 . 394 . 397 .
 398 . 400 . 403—406 . 412 .
 Կիստրամոն . 341 .
 Կիրակոս Փանծակեցի . 174 .
 223 . 238 . 320 . 414 .
 Կիրակոս քահանայ . 297 .
 Կիւզիկոն . 42 .
 Կիւրոս Մեծ . 18 . 20 . 23 —
 26 . 41 .
 Կիւրոս Փոքր . 2 . 18 .
 Կղաւդիոս . 113 .
 Կղեմս Գ . Քահանայապետ .
 349 .
 Կղեմս Դ . 369 . 370 .
 Կղեմս Ե . 384 . 386 . 387 .
 Կղեմս Ջ . 401—403 .
 Կղեմս Հակոբակաթոս . 408 .
 Կղէոպարա . 66 . 67 .
 Կղէոպարա , Պողոսայիսի
 Թագուհիք . 42 . 48 .
 Կողոսոն . 384 .
 Կողքիս . 9 . 43 . 57 .
 Կողքիսացիք . 47 .
 Կոմենոս զօրապետ . 308 .
 Կոնրատոս . 350 .
 Կոշմ . 229 . 230 .
 Կոռնակ . 18 .
 Կոստանդ կայսր . 135 . 139 .
 Կոստանդիա . 399 .
 Կոստանդիանոս Մեծ . 116 .
 127 . 128 . 132 . 133 . 135 .
 Կոստանդին Ա . 323 . 324 .
 Կոստանդին Բ . 378 . 381 . 382 .
 Կոստանդին Գ . 401 . 402 .
 Կոստանդին Դ . 401—404 .
 Կոստանդին Աւագ պարոն .
 361—365 .
 Կոստանդին, Եգեբացոյ Թա-
 ղաւոր . 243 . 255 .
 Կոստանդին Եպիսկոպոս . 384 .
 Կոստանդին, Թորոս Ա.ին որ-
 դին . 328 .
 Կոստանդին, Լամբրոնի իշխա-
 նին սրբին . 361 . 364 . 365 .
 367 .
 Կոստանդին Կալամանոս . 334 .
 339 . 344 .
 Կոստանդին կայսր . 227 .
 Կոստանդին Մոնոմախոս . 299 .
 302—305 .
 Կոստանդին Պերփերուժէն .
 262 c 266 .
 Կոստանդին, Վահկայ իշխան .
 332 . 333 .
 Կոստանդին, Վասիլ Բ.ին Եղ-
 բայրը . 290 . 297 .
 Կոստանդնուպոլիս . 135 . 138 .
 142 եւ այլն .
 Կովկաս . 40 . 47 . 95 . 99 .
 188 . 247 .
 Կովկասեան լեռինք . 36 .
 Կոսայք . 271 .
 Կոտաս . 42 . 45 .
 Կորբուղոն . 71 . 75—77 .
 Կորգուացիք . 44 .
 Կորգուիք . 49 . 51 . 52 . 54 .
 87 . 111 .
 Կորդրիք . 98 .
 Կորիկէ . 414 .
 Կորիկոս բերդ . 320 . 392 .
 400 . 408 .
 Կորիւն . 171 .
 Կուաշ . 143 . 144 .
 Կուառս . 130 . 131 .
 Կուլիէլմոս Տիւբացի . 321 . 337 .
 Կումրի . 438 .
 Կուրգեա . 95 . 108 . 186 . 187 .
 208 . 209 . 272 . 277 . 436 . 438 .
 Կռուակք . 204 .
 Կրասոս . 43 . 59—63 .
 Կրեմոնացիք . 356 .
 Կրեւէ . 400 . 403 .
 Կրիւտոս . 41 .
 Հարէլ . 167 .
 Հարէլ քահանայ . 222 .

- Հագարացիք . 174 . 225 . 234 . 262 . 276 . 280 . 281 . 414 .
 Հագարաուուխո . 201 .
 Հալէս . 336 . 342 . 347 . 348 . 355 . 360 . 368 . 370 . 398 . 400 .
 Համա . 376 . 377 .
 Համազասպ Աբուսահճ . 277 .
 Համազասպ Մամիկոնեան Ա . 166 . 167 . 169 .
 Համազասպ Մամիկոնեան Բ . 225 . 227 .
 Համազասպ Վասպուրականի իշխան . 232 .
 Համազասպեան . 192 .
 Համատան . 433 .
 Համիրդըն . 283 .
 Համուուն . 279 . 280 .
 Համս . 375 .
 Հայաստան . 1 . 2 . 6 . 9 եւ այլն .
 Հայաքաղաք . 449 .
 Հայկ . 2—6 . 10 .
 Հայկազունք . 1 . 26 . 29 . 36 . 37 . 40 . 89 .
 Հայկակ Ա . 15 .
 Հայկակ Բ . 18 .
 Հայկաշէն . 3 .
 Հայոց ձոր . 6 .
 Հայր ներքինապետ . 141 .
 Հայք . 1 . 2 . 4—6 եւ այլն .
 Հայք քաղաք . 6 .
 Հանձիթ . 309 .
 Հաշտեանք . 36 . 38 . 87 . 104 . 131 . 135 .
 Հասկէ շիւթան . 451 . 452 .
 Հասան Գնթուկի . 252 .
 Հասան իշխան . 256 .
 Հասան ոստիկան . 229 . 231 .
 Հարմայ . 6 . 7 .
 Հարոն . 232 .
 Հարք . 3 . 6 . 7 . 124 . 132 . 281 . 313 .
 Հաւանակ . 15 .
 Հաւրոյ . 15 .
 Հեթում Ա . 320 . 321 . 363—370 . 417 .
 Հեթում Բ . 378—385 .
 Հեթում , Մամիրոնի իշխան . 345—347 . 360 .
 Հեթում պատմիչ . 320 .
 Հելպիս . 376 .
 Հեղինէ . 87 .
 Հենրիկոս կայսր . 350 .
 Հենրիկոս , Կիպրոսի թագաւոր . 387 .
 Հենրիկոս Սպոնդանոս . 321 .
 Հեշա . 136 .
 Հեր . 88 . 191 . 206 . 214 . 276 .
 Հերակլ . 223 . 225 .
 Հերակլէս . 26 . 44 .
 Հերոդոտոս . 2 . 27 .
 Հերոս . Տ . Յովհաննէս Հերոլտ .
 Հերովդէս . 64 . 65 . 78—81 .
 Հերովդէս Չորրորդապետ . 92 .
 Հերովդիանոս . 35 .
 Հեփթաղք . 212 . 213 . 222 . 223 .
 Հիւսէյին շահ . 429 .
 Հիւրկանոս . 43 . 64 . 78 . 79 .
 Հմայեակ Դիմարսեան . 187 . 193 .
 Հմայեակ Մամիկոնեան . 195 . 201 .
 Հնդկաստան . 109 . 111 . 440 . 442 . 449—451 .
 Հոլ . 232 .
 Հոլիձոր . 429—432 .
 Հոկուաւիանոս . 62 . 66 . 71 . 72 .
 Հոզս . 250 .
 Հոյ . 15 .
 Հոնք . 110 . 130 . 177 . 185 . 188 . 190 . 194—196 . 203 . 205 . 208 . 218 . 219 .
 Հուլաուն . 368 . 416 . 417 .
 Հուկոն . 403 .
 Հունդարացիք . 335 .
 Հուրաստան . 301 .
 Հոադամիդդ . 71 . 74 . 75 .
 Հոիդիս . 451 .
 Հոիփսիմեանք . 116 . 123 . 124 .
 Հոիփսիմէ . 121 . 122 .
 Հոողացիք . 399 . 401 . 403 .
 Հոողոս . 400 . 403 .
 Հոոմ . 64 . 65 . 72 եւ այլն .
 Հոոմայեցիք . 31 . 34 . 42 եւ այլն .
 Հոոմկլայ . 378 . 379 .
 Հոփանոս . 168 .
 Հրահատ Կամարական Ա . 169 .
 Հրահատ Կամարական Բ . 205 . 206 . 209 . 210 .

Հրանտ . 15 .
 Հրայկայ . 16—18 .
 Հրեայք . 16 . 18 . 38 . 39 .
 43 . 48 . 64 . 65 . 83 . 85 .
 95 . 101 . 151 .
 Հրէաստան . 65 . 79 .
 Չիրաւ . 152 . 153 .
 Չորսփոր . 269 .
 Ղազան խան . 378 . 380—383 .
 Ղազար Փարպեցի . 174 . 179 .
 213 .
 Ղայասէտտին Ղազի . 360 .
 Ղայասէտտին Քէյխիւարէզ .
 366 . 367 . 417 .
 Ղանգուարաբ . 156 .
 Ղարպաղանտ . 383 .
 Ղեկք . 154 . 155 .
 Ղեւոնդ արքեպիսկոպոս . 124 .
 133 .
 Ղեւոնդ քահանայ . 171 . 182 .
 191 . 192 . 194 . 196 . 199 .
 Ղոնգինիատն . 341 .
 Ղոնեա . 334 . 339 . 340 . 347 —
 349 . 353 . 354 . 361 . 365 .
 366 . 368 . 371 . 375 . 417 .
 Ղուկիանոս Շամշատացի . 105 .
 Ղուկիոս Վերոս . 105—107 .
 Ղուկուղլոս . 42 . 45—56 . 59 .
 Ճենաստան . 451 .
 Ճենք . 129 . 451 .
 Ճէլալէտտին . 416 .
 Ճէմշիա . 428 .
 Ճէվանպուլատ . 437 .
 Ճիհր . Տ . Վըրն Ճիհր .
 Ճինկիլիան . 416 .
 Ճորայ կապան . 108 . 109 . 188 .
 Մադէս . Տ . Նիւքար .
 Մաժան . 97 . 99 . 105 . 107 . 108 .
 Մաժար . 11 . 63 . 100 .
 Մալիք ալ Աշրաֆ Սալահատ-
 տին . 379 .
 Մակար . 370 .
 Մակեդոն . 149 .
 Մակեդոնացիք . 29—31 . 37 .
 Մահմատ . 239 .

Մահմաւ . 247 .
 Մահմուտ Ա . 434 .
 Մահմուտ Բ . 439 .
 Մաղաբիա արեղայ . 321 .
 Մաճառաստան . 440 . 448 . 449 .
 Մամբրէ . 171 .
 Մամգուն . 116 . 129 .
 Մամգունեան . 129 .
 Մամես . 382 .
 Մամեստիա . 329 . 330 . 337 .
 341 . 374 .
 Մամիկոնեանք . 129 . 142 . 217 .
 Մամիլայ . 361 .
 Մանազկերտ . 306 . 309—312 .
 Մանաճիհր Ռշտունի Ա . 132 .
 135—137 .
 Մանաճիհր Ռշտունի Բ . 175 .
 178 .
 Մանանաղի . 162 . 163 . 307 .
 Մանաւազ . 5 . 7 .
 Մանաւազեանք . 7 . 134 .
 Մանդոյ խան . 367—369 . 417 .
 Մանդոտամուր . 375 . 376 .
 Մանդակունիք . 113—115 .
 Մանեսայ այր . 116 . 134 .
 Մանէճ Ապահոնի . 179 . 190 .
 Մանիոս . 42 . 45 .
 Մանկան դոմ . 313 .
 Մանու . 101 .
 Մանուէլ Ամասունի . 166 .
 Մանուէլ Ամենեսոս . 334 .
 335 . 339 . 340 . 344 .
 Մանուէլ Մամիկոնեան Ա . 160 .
 Մանուէլ Մամիկոնեան Բ . 220 .
 Մանտալեան . 326 . 327 .
 Մանտալէ . 326 .
 Մանտոզամար . 376 . 377 .
 Մասիս . 7 . 22 . 103 . 124 .
 Մատաթալ . }
 Մատաթեան . } 436 . 437 .
 Մատթէոս Ուռհայեցի . 238 .
 312 . 320 .
 Մատրաս . 450 .
 Մատրիա . 409 .
 Մար Արաս կաթինա . 1 . 10 .
 17 . 18 . 23 . 34 . 36 . 37 .
 Մար իլիան . 135 .
 Մարանդ . 101 .
 Մարանդ քաղաք . 438 .

- Կարաշ . 329 .
 Կարաստան . 22 . 38 . 43 .
 47 . 72 . 89 .
 Կարաց մարզ . 92 .
 Կարգաս . 355 .
 Կարգպետունի . Տ . Գեորգ
 Կարգպետունի .
 Կարիամ թագուհի . 404 . 405 .
 Կարիամ թերեզիա . 449 .
 Կարիամ, Հեթում Բ.ին քոյ-
 րը . 380 . 381 .
 Կարիամ, Ս . Գրիգոր Լուսա-
 ւորչին ամուսինը . 114 . 118 .
 Կար Իհար . 82 .
 Կարինոս . 82 .
 Կարկիանոս զորապետ . 221 .
 Կարկիանոս կայսր . 186 .
 Կարիսաս . 65 .
 Կարկոս Արեղիոս . 106 . 107 .
 Կարկոս մեարապոլիա . 315 .
 316 .
 Կարսիլիա . 450 .
 Կարբ . 9 — 11 . 14 . 16 . 17 .
 19 — 26 . 38 . 46 . 47 . 50 .
 56 . 70 — 72 .
 Կաւի . } 227 .
 Կաւիէ . }
 Կաւրիկիոս . 221 .
 Կաւրիտանայիք . 285 .
 Կաւրիտիոս . 398 .
 Կեհնունիք . 132 .
 Կեղտի . 224 .
 Կեղրի . 429 . 430 .
 Կենանգր . 174 .
 Կեսրոպ . 165 . 167 . 168 .
 170 . 171 . 175 . 176 .
 Կետակէս . 126 .
 Կերուժան Արծրունի Ա . 142 .
 148 . 151 — 154 . 160 .
 Կերուժան Արծրունի Բ . 232 .
 Կէլիք էլ Էլըէֆ Շապան . 407 .
 Կէլիք էլ Նազար Մահմուտ .
 400 .
 Կէլիք էս Սալահ . 408 .
 Կէլիք Նազար Ա . 368 . 382 .
 Կէլիք Նազար Բ . 389 .
 Կէլիքշահ . 414 .
 Կէհէմէտ Բ . 421 . 422 . 443 .
 Կժէժ Գնունի . 218 . 219 .
- Կհհհհ զորապետ . 201 . 208 .
 210 .
 Կհհհհ կուսակալ . 30 .
 Կհհհհ , Պարսիկ իշխան . 223 .
 224 .
 Կհհհհ , Վրաց թագաւոր .
 132 . 136 . 137 .
 Կհհհհ , Կարաց թագա-
 ւոր . 56 .
 Կհհհհ ՄԼԾ . 40 . 42 — 50 .
 54 — 59 . 63 . 91 .
 Կհհհհ , Վրաց իշխան . 71 .
 73 . 74 .
 Կհհհհ Փարբ . 59 . 63 .
 Կհհհհ զապուհ . 192 .
 Կհհհհ ռուզան . 32 .
 Կհհհհ կայսր . 36 . 37 . 39 . 44 .
 49 . 53 . 78 . 79 . 81 . 86 —
 92 . 109 . 136 . 161 . 167 .
 231 . 249 .
 Կհհհհրական ծով . 11 .
 Կհսիս . 329 . 349 .
 Կիր Մահմուտ . 429 .
 Կիւսէլիմ Չաւուշ . 428 .
 Կիբայէլ, Անդրոնիկոս կայսեր
 որդին . 380 .
 Կիբայէլ Ասիտ . 302 .
 Կիբայէլ Ափաֆի . 448 .
 Կիբայէլ Բրանաս . 344 .
 Կիբայէլ կայսր . 290 . 297 .
 299 . 302 .
 Կլէհ . 321 . 342 — 345 . 353 .
 Կիսիթար զորապետ . 429 — 432 .
 Կժբին . 36 . 42 . 53 . 54 . 68 .
 70 . 76 . 81 . 86 . 87 . 135 .
 136 . 146 .
 Կշակ . 11 .
 Կողունաիա . 350 .
 Կողպաշտէ . 94 .
 Կոլտաիա . 417 . 428 . 442 .
 446 . 448 .
 Կոհմատ զորապետ . 229 . 230 .
 Կոհմատ ոստիկան . 229 . 230 .
 Կոնեսէս . 71 . 75 . 76 .
 Կոնոմախոս . Տ . Կոստանդին
 Կոնոմախոս .
 Կոպուռեստիա . 337 .
 Կովսէս Խորենացի . 1 . 2 . 7 .
 16 . 17 . 33 — 35 . 41 . 42 .

- 65 · 89 · 95 · 96 · 104 · 105 · Յակոբ . Ս . Մճրնայ հայրա-
151 · 171 · պեա . 135 — 137 .
- Մոփսէս կաթողիկոս . 219 . Յասուն . 9 .
- Մոփսէս , Ուսէացւոց իշխան . Յիսէ . 240 .
- 262 · 268 . Յիսուս . 82 .
- Մորիսիոս . 388 . Յոյնք . 2 · 9 · 10 · 11 է . սլլն .
- Մորփիւղիկէս . 36 · 37 . Յովակիմ պատրիարք . 421 .
- Մուշ Դիմարսեան . 186 · 187 . Յովէլ . 394 .
- Մուշեղ , Կարուց թագաւոր . Յովհան Անձեւացի . 206 .
- 279 · 280 · 282 · 286 · 287 . Յովհան թարգմանիչ . 171 .
- Մուշեղ Մամիկոնեան Ա . 154 . Յովհան Ժիւփեհաւ տէգ Իւր-
159 · 160 . ղէն . 321 .
- Մուշեղ Մամիկոնեան Բ . 241 . Յովհան Իմաստասէր . 230 .
- Մուշեղ Մամիկոնեան Գ . 218 . Յովհան Կաթողիկոս պատմիչ .
- 222 — 224 . 174 · 223 · 230 · 238 · 244 ·
- Մուշեղ Մամիկոնեան Դ . 231 . 257 · 258 · 261 · 262 · 264 —
232 . 266 · 268 · 270 · 273 .
- Մուշեղ Մոկացի . 251 . Յովհան Մամիկոնեան . 174 .
- Մուշեղ , Սմբատ Ա ին որդին . Յովհան Մանդակունի . 205 .
- 244 · 253 · 258 . 206 · 217 .
- Մուշեղամարգ . 131 . Յովհան Մոկացի . 206 .
- Մուշէ . 199 . Յովհաննէս Աղուանից կա-
թողիկոս . 279 .
- Մուշկան Նիսաւաւուրա . 190 . Յովհաննէս արքեպիսկոպոս .
- 193 — 196 . 406 .
- Մուսղաֆա փաշա Համճի . 431 . Յովհաննէս , Գաղիկ Բ ին որ-
433 . ղին . 317 .
- Մուսղաֆա փաշա Սարը . 435 . Յովհաննէս կաթողիկոս Է . 356 .
- Մուսի . 231 . Յովհաննէս , Կասախիւսյի թա-
գաւոր . 408 · 409 .
- Մուրաա Գ . 422 . Յովհաննէս Կոմնենոս . 329 .
- Մուրաա Դ . 436 . 330 · 334 .
- Մուրաա փաշա Գույուճու . Յովհաննէս Կոստանդին . 401 .
- 429 . Յովհաննէս Կոստանդին . 321 .
- Մուրացանք . 23 · 91 · 103 . Յովհաննէս Վարդանա . 321 .
- Մուրենաս . 47 · 50 . Յովհաննէս Մկրտիչ . 124 · 126 .
- Մուրց . 107 . Յովհաննէս Ոսկերչեան . 286 .
- Մուուղ . 138 . Յովհաննէս Չմրչիկի . 279 · 281 .
- Մրուան . 229 — 231 . Յովհաննէս Սմբատ . 290 — 301 .
- Մորիկ . 221 — 223 . Յովհաննէս Քահանայպետ
Ի Բ . 388 · 389 · 391 · 392 · 399 .
- Յարէթ . 3 . Յովհաննէս Քսիփիլինոս . 109 .
- Յազղ Սիւնի . 209 · 210 . Յովհաննէս Քրոսասար . 321 .
- Յազկերա Ա . 168 · 169 . Յովսէպոս . 2 · 35 · 36 .
- Յազկերա Բ . 175 — 182 · 189 . Յովսէփ կաթողիկոս . 171 .
- 194 · 196 — 199 . 175 · 176 · 178 · 179 · 185 .
- Յակոբ Էպիսկոպոս . 388 . 191 · 192 · 194 · 196 · 199 .
- Յակոբ , Կիպրոսի թագա- Յուլիանոս Ուրացոյղ . 139 —
ւոր Ա . 412 . 141 · 251 .
- Յակոբ , Կիպրոսի թագա-
ւոր Գ . 412 .

- Յուլիոս Կեսար . 59 . 63 .
 Յունաստան . 29 . 41 . 144 .
 149 . 150 . 152 . 155 . 156 .
 223 . 305 . 421 .
 Յուսակ . 15 .
 Յուսիկ . 139 . 140 . 143 .
 Յուսուփ . 243 . 244 . 254 — 257 .
 259 — 262 . 270 . 273 . 274 .
 Յուստինիանոս . 228 . 229 .
 Յուստինոս կայսր . 220 . 221 .
 Յուստինոս պատմիչ . 2 . 9 . 44 .
 Նարոզ . 81 .
 Նաբուգոդոնոսոր . 17 . 18 .
 Նախիջեւան Հին . 97 . 203 . 230 .
 248 . 257 . 425 . 433 . 437 . 439 .
 Նախիջեւան նոր . 440 . 444 .
 Նատըր Ալի . } 433 — 435 . 445 .
 Նատըր շահ . } 451 .
 Ներքովթ . 3 .
 Ներշապուհ Արծրունի . 179 .
 186 . 192 .
 Ներոն . 71 . 75 . 77 .
 Ներսէս , Ասորեստանի թա-
 գաւոր . 85 .
 Ներսէս Երուանդունի . 206 .
 Ներսէս Կամսարական Ա . 142 .
 148 . 149 .
 Ներսէս Կամսարական Բ . 205
 — 207 .
 Ներսէս Կամսարական Գ . 228
 — 230 .
 Ներսէս , Հայոց թագաւոր . 27 .
 Ներսէս Ուրծացի . 190 .
 Ներսէս պարսիկ . 135 . 138 .
 Ներսէս Քաջբերունի . 192 . 193 .
 Ներսէս Ա . Ս . Մեծ . 142 —
 145 . 147 — 155 . 157 . 159 .
 165 .
 Ներսէս Գ . կաթողիկոս . 225
 — 227 .
 Ներսէս Գ . Ս . Կլայեցի . 321 .
 Ներսէս , Գիսակին որդին . 94 .
 Ներսէս իլիան . 218 . 222 .
 Ներսէս Ճիճրակեցի . 169 .
 Նեոպոլիտէոս . 30 . 31 .
 Նիզ . 258 . 295 .
 Նիկոր Աշնասպրաւ . 214 — 216
 Նիկեոս Գոնիատոս . 321 . 338 .
 Նիկիա . 116 . 133 .
 Նիկողայոս զօրապետ . 299 . 302 .
 Նիկողայոս , կայսր Ռուսաց .
 437 . 438 .
 Նիկողայոս պարիարբ . 265 .
 Նիկողայոս Քաջանայապետ .
 379 .
 Նիկոսիա . 388 .
 Նինոս . 9 . 10 . 12 .
 Նինուաս . 14 .
 Նինուէ . 1 . 14 . 16 . 36 . 44 .
 80 . 382 .
 Նիսաւաւուրա . 190 . 193 .
 Նիւշապուհ . 198 .
 Նիւքար . 9 .
 Նոյ . 2 . 3 .
 Նորայր . 15 .
 Նուսերիանոս . 115 .
 Նուբատին . 338 . 342 — 344 .
 Նպաս . 153 .
 Նսրբ . 273 . 274 .
 Շահաբաս . 414 . 424 — 427 .
 Շահ Իսմայիլ . 422 .
 Շահակ . 155 .
 Շահան . 404 . 408 .
 Շահապիվան . 176 .
 Շահրուխ . 418 . 421 .
 Շամ . 348 .
 Շամրաթ . 16 . 18 .
 Շամիրամ . 12 — 14 .
 Շամիրամայ քաղաք . 38 .
 Շամշապրան . 82 .
 Շամշատ . 43 . 65 .
 Շամշողղէ . 262 . 267 . 270 . 271 .
 Շամքոր . 437 .
 Շապուհ Ա . 116 . 117 .
 Շապուհ Բ . 128 . 129 . 132 .
 133 . 135 . 138 . 139 . 141 —
 143 . 145 — 148 . 150 — 153 .
 156 — 165 .
 Շապուհ , Աշոտ Աին եղբայ-
 րը . 246 .
 Շապուհ Բազրատունի . 232 .
 Շապուհ զօրապետ . 293 . 294 .
 Շապուհ , Հայոց թագաւոր .
 168 . 169 .
 Շապուհ Միհրանեան . 201 .
 212 . 213 .

- Շապուհ, Բմբաս Ա.ին Եղ- Բ. բրանոս Բ. 324
 բայրբ. 266. Բ. բրանոս Ե. 494. 405.
 Շապուհ, Բմբաս Ա.ին սր- Բ. բրանոս Զ. 408.
 դին. 252.
 Շատիկ. 289. 292.
 Շարայ. 6. 7.
 Շաւարշ. 15.
 Շաւարշ Կամսարական. 164—
 166.
 Շաւարշան. 86. 98.
 Շերգիր. 154.
 Շիրակ. 6. 7. 133. 155. 202—
 204. 253. 254. 256. 263.
 268. 279. 281. 287. 414. 415.
 Շիրակաւան. 243—246.
 Շիրվան. 443.
 Շղոմշապուհ. 199.
 Շմաւոն Անձեւացի. 179.
 Շմուէլ. 175.
 Շտեայ. 201. 212.
 Ոգոհի. 112.
 Ոգոմե. 89.
 Ոթոն. 404. 406.
 Ոթրիաս. 105.
 Ողիմպիադա. 143. 145.
 Ողկան. 125. 126. 128.
 Ոսկեմօր ոսկեծին դիր. 126.
 Ոսկիողայ. 22.
 Ոտն Աբաղածու. 7.
 Որդունիք. 7. 134.
 Որդուպատ. 439.
 Որթք. 147.
 Որմզդուխտ. 152.
 Որմիա. 438.
 Որմիայ ծով. 277.
 Որմիզ. 135.
 Որմիզդ. 221.
 Որոզէս. 74.
 Որտէլմիզ. 312.
 Ռեզուէն Հասան. 422.
 Ռեիդդինդըն. 444.
 Ռեխաթա. 416. 417.
 Ռեմայի. 247.
 Ռեռհայ. 368.
 Ռեռնայր. 154.
 Ռետեացիք. 244. 262.
 Ռեաի. 91. 111. 254. 268.
 269.
 Պալտունիք. 130.
 Պակարոս. Տ. Բակուր.
 Պաղեստին. 36. 42. 47. 48.
 64. 78. 99. 348. 349. 379.
 382. 400.
 Պաղտաս. 231. 239. 389. 419.
 Պաճոյճ. 18.
 Պայազիա. 420.
 Պայազիա քաղաք. 435. 438.
 Պայապիս. 9. 11.
 Պայտոն. 382.
 Պաշպալով. 440. 449.
 Պապ. 142. 145. 149. 151—
 155. 159—161.
 Պապ Արաակունի. 207.
 Պատիժահար. 98.
 Պարակամանոս. 299. 305.
 Պարպէւ Ամատունի. 164—166
 Պարէա. 15.
 Պարթեւաստան. 33. 80—82.
 101. 110.
 Պարթեւք. 9. 30. 32. 33.
 40. 43. 44. 47. 49. 57.
 59—66. 70—85. 88—90.
 93—95. 98—101. 105. 106.
 109. 110.
 Պարխար. 195.
 Պարոյր. 13. 16—18.
 Պարսիկք. յ 17. 23. 24. Էւ.
 Պարսք. յ սլլն.
 Պարսկաստան. 2. 27. 40 Էւ.
 սլլն.
 Պափոս. 398.
 Պելուծիւթան. 435.
 Պեհեստնի. 368.
 Պեմունդ Անտրի իշխան.
 345. 346. 350—352.
 Պեմունդ Գ. Անտրի իշխան.
 363.
 Պենդենտորֆ. 437.
 Պեսոս. 71. 76. 77.

- Պէտրոնիոս . 62 .
 Պէտրոս կաթողիկոս . 290 . 291 .
 296 . 297 . 299 . 301 . 303 .
 Պէտրոս կանոնիկոս . 388 .
 Պէտրոս կարդինալ . 347 . 354
 — 357 .
 Պէտրոս Կիպրոսի թագաւոր .
 405 .
 Պէտրոս Մեծ . 444 .
 Պէրգամոն . 45 .
 Պէրդիկկաս . 30 . 31 .
 Պէրժ . 15 .
 Պէրոզ Պարթեւաց թագաւոր .
 105 .
 Պէրոզ Պարսից թագաւոր .
 199 . 201 . 202 . 213 . 214 .
 216 .
 Պէրոզամաս . 111 . 132 .
 Պէշիր . 262 . 263 . 274 . 275 .
 Պէքիր . 229 . 230 .
 Պիզու . 299 . 304 . 317 .
 Պիլարդու . 385 .
 Պիղատոս . 85 .
 Պլուտարքոս . 35 . 49—53 . 57 .
 59 . 63 .
 Պոդեմոն . 71 . 73 .
 Պոդիրիոս . 2 . 31 .
 Պոմպայ . 450 .
 Պոմպէոս . 42 . 43 . 56—59 .
 Պոմպէոս . } 47 .
 Պոմպոնիոս . }
 Պոնտացիք . 39 .
 Պոնտոս . 46 . 49 . 54 . 71 . 110 .
 Պոնտոսի ծով . 39 .
 Պոպղիոս Կրասոս . 61 .
 Պորէ . 286 .
 Պուգովինա . 446 . 448 .
 Պուլըյն . 410 . 411 .
 Պուսայիտ . 396 . 397 .
 Պուրսա . 421 .
 Պաղոմայիտ . 42 . 48 .
 Պրաւնշվայկ . 404 . 406 .
 Պրիամոս . 15 .
 Պրոքոս . 113 .
 Պրոկոպիոս . 85 .
 Ջալալագին . 416 .
 Ջահապ . 239 . 240 .
 Ջափր . 239 .
 Ջուղայ Հին . 23 . 424 . 427 .
 Ջուղայ նոր . 424 . 428 . 449 .
 451 .
 Ռայմոնտոս . 351 . 352 .
 Ռայնալտոս . 321 .
 Ռիքարա . 412 .
 Ռչտունիք . 43 . 63 . 127 . 136 .
 140 . 196 . 199 .
 Ռոպերիոս . } 329 .
 Ռոճեր . }
 Ռոմանոս . 315 .
 Ռոպերդ . 388 .
 Ռոպերդոս Մարկագեան . 352 .
 Ռոստոմ . 225 .
 Ռոտոկաց զաւառ . 246 .
 Ռուբեն Ա . 319 . 320 . 322 . 323 .
 Ռուբեն Բ . 321 . 345—347 .
 Ռուբեն, Անտիոքի իշխան . 352 .
 359 . 363 .
 Ռուբեն, Լեւոն Աին որդին .
 333 .
 Ռուբենեանք . 319 . 320 .
 Ռուզնատին . 353 .
 Ռուսաստան . 438 . 442—446 .
 Ռուսք . 436—440 . 443—446 .
 Ռոփի . 106 . 107 .
 Ռոփսեան . 107 .
 Սաթինիկ . 93 . 96 . 97 . 101 .
 Սալահատոն . 379 .
 Սալատին . 349 .
 Սակուրէթ . 267 .
 Սահակ, Աշոտ Բին աները .
 262 . 267—270 .
 Սահակ Բագրատունի . 162 .
 163 . 166 .
 Սահակ Բագրատունի Մարզ-
 պան . 1 . 201 . 203 . 205 .
 206 . 209 . 210 .
 Սահակ, Ս. կաթողիկոս . 164—
 172 . 175 . 176 . 179 .
 Սահակ, Գ. կաթողիկոս . 229 .
 230 .
 Սահակ, Ռչտունեաց եպիսկո-
 պոս . 196 . 199 .
 Սահակ Սիւնի . 233 .
 Սահակ Վասպուրականի իշ-
 խան . 232 .

- Թաճարանայ . 166 .
 Թաճ . 234 .
 Թաճոս . 226 .
 Թագամոխի . 141 .
 Թառի . 162—164 .
 Թամուկէ Երեց . 174 . 238 . 320
 Թամուկէ քահանայ . 198 .
 Թամուսատ . 304 .
 Թայֆէտաին ալ Ալֆի . 375 .
 Թանահին . 296 . 297 .
 Թանասար . 16 .
 Թանատրուկ թագաւոր . 84 .
 86—89 . 93 . 147 .
 Թանատրուկ իշխան . 117 . 134
 —137 .
 Թանդուխա . 86 .
 Թանկուլասար . 370 .
 Թանոս . 87 .
 Թասանեանք . 109 . 441 .
 Թասուն . 219 .
 Թասունցիք . 233 . 234 .
 Թատոն Գարեղեան . 208 .
 Թարակինոսք . 368 . 369 . 375—
 377 . 284 . 386—388 . 391 .
 393 . 396 . 397 . 399 . 400 .
 405 . 409 . 410 . 412 . 441 .
 Թարակոս . 16 .
 Թարգէտ վեստ . 299—303 .
 Թարդանարաղ . 16 .
 Թրուկ . 262 . 270 .
 Թեաւ լեառն . 324 . 340 .
 Թերաստիա . 290 . 294 . 296 .
 418 . 420 .
 Թերուխա . 185 . 186 .
 Թէլեւկացիք . 30 . 31 . 43 . 45
 47 . 51 .
 Թէլեւկիա . 330 . 350 . 363 . 364
 Թեղբեստրոս . 128 .
 Թենեքերիմ Ասորեստանի թա-
 գաւոր . 14 . 15 .
 Թենեքերիմ վասպուրականի
 թագաւոր . 281 . 290 . 293 .
 294 . 296 . 317 .
 Թեպտիֆոս Սեւերոս . 107 .
 Թերկելըյ լեառն . 295 . 296 .
 Թերտարապատ . 438 .
 Թեւ Տով . 11 . 39 . 40 . 247 .
 Թեւաղա . 233 .
 Թեւան . 262 . 273—275 .
- Սեւերիանոս . 105 .
 Սեւերոս . Տ . Սեպտիմոս Սե-
 ւերոս .
 Սեւերոս . Տ . Վերուլանոս .
 Սեւորդէք . 258 .
 Սեւուկ Անձեւացի . 206 .
 Սեքստոս Ռուֆոս . 36 .
 Սէլիմ Ա . 422 . 442 .
 Սէն Տնի . 409 .
 Սիգուինոն . 399 .
 Սիլանոս . 73 .
 Սիկիլիա . 388 . 399 . 400 .
 Սիկիմոնեա . 447 .
 Սիդղա . 45 .
 Սիդոն . 65 .
 Սինան Փաշա Ճղալէզատէ . 424
 425 .
 Սինինկ . 451 .
 Սինկափոր . 450 .
 Սիւ . 344 . 351 . 362—364 .
 366 . 369 . 373 . 380 . 384 .
 385 .
 Սիսակ . 8 .
 Սիսական . 8 .
 Սիւլէյման թագաւոր . 423 .
 Սիւլէյման ոստիկան . 229 . 231
 Սիւնիք . Երկիր . 8 . 165 . 183 .
 188—190 . 192 . 234 . 257 .
 419 . 429—431 . 433 .
 Սիւնիք . նախարարութիւն . 8 .
 10 . 125 . 127 . 130 . 131 .
 142 . 143 . 145 . 146 . 148 .
 158 . 160 . 163 . 177 . 179 .
 203 . 206 . 213 . 239 . 240 .
 Սիւնիք Փոքր . 135 .
 Սկայորդի . 14—17 .
 Սկիւթացիք . 293 .
 Սղիունիք . 116 . 128 .
 Սղուկ . 128 . 129 .
 Սմբատ Ա . թագաւոր Բագրա-
 տունի . 239 . 241—261 . 263 .
 Սմբատ Բ . թագաւոր Բագրա-
 տունի . 282 . 286—289 .
 Սմբատ Բագրատունի իշխան Ա .
 88—100 .
 Սմբատ Բ . 120 .
 Սմբատ Գ . 153 . 154 .
 Սմբատ Դ . 170 . 171 .
 Սմբատ Ե . 218 . 222 . 223 .

- Սմբատ . Զ . Կիւրապալատ . 225 . 226 .
 Սմբատ Է . Բիւրատեան . 229 . 231 .
 Սմբատ Ը . Խոստովանող . 233 — 237 . 239 .
 Սմբատ , թագաւոր Ռուբենեան . 378 . 381 . 382 .
 Սմբատ , Հեթում Ը . Ին սպարապետ . 365 . 367 . 374 .
 Սմբատ Մամիկոնեան . 224 .
 Սմբատ սլաւոփ . 321 .
 Սմբատ Սիւնի . 257 . 268 .
 Սմբատ , Սմբատ Ը . Ին եղբորորդին . 252 .
 Սմբատ . Տ . Յովհաննէս Սմբատ . Սմբատայ բերդ . 306 — 308 .
 Սմբատանոյշ . 89 .
 Սմբատուհի . 89 .
 Սմբումի . 369 .
 Սմբրդանդ . 420 .
 Սոհեր . 404 .
 Սոհունդ . 101 .
 Սոփոսոս . 65 .
 Սուր . 15 .
 Սուրենեան } Պահլաւ . 81 .
 Սուրենի } 110 .
 Սուրէն , Արշաւիր թագաւորին որդին . 81 .
 Սուրէն , Գրիգոր Լուսաւորչին եղբայրը . 112 .
 Սուրէն զօրապետ . 59 — 62 .
 Սուրէն Խոռխոռունի . 162 .
 Սուրէն մարզպան . 160 .
 Սուրէն մարզպան . 218 . 220 .
 Սուրմակ . 172 . 175 .
 Սուրմառի . 301 .
 Սոփա . 112 .
 Սոփրետ . 347 . 354 — 357 . 359 .
 Սպահապետի Պահլաւ . 82 . 110 .
 Սպանդարատ . 149 . 154 . 155 .
 Սպանիա . 321 . 404 . 408 . 409 .
 Սպեր . 88 .
 Սպոնդանոս . 321 .
 Ստահր . 110 .
 Ստեփան իշխան . 430 .
 Ստեփանէ . 334 . 340 . 345 .
 Ստեփանոս Առողիկ . 174 . 223 . 238 .
 Ստեփանոս Բաղուչի . 321 .
 Ստեփանոս Լուսինեան . 322 .
 Ստեփանոս կաթողիկոս . 379 .
 Ստրարն . 9 . 35 . 43 .
 Վախթանիկ զօրապետ . 224 .
 Վախթանիկ թագաւոր . 202 . 203 . 205 . 208 . 212 .
 Վահագն . 26 . 27 . 44 . 126 .
 Վահան Ամասունի . Ա . 132 . 136 . 137 . 142 .
 Վահան Ամասունի Բ . 179 .
 Վահան Առուելեան . 162 .
 Վահան Գնունի . 193 .
 Վահան կամարական Մամիկոնեան . 224 . 226 .
 Վահան Մամիկոնեան . Ա . 148 . 151 .
 Վահան Մամիկոնեան Բ . 174 . 201 — 219 .
 Վահան . Տ . Գայլ Վահան . Վահեգազեան մեհեան . 126 .
 Վահէ . 26 . 27 . 29 .
 Վահշնունիք . } 26 . 42 . 44 .
 Վահշունիք . }
 Վահկայ բերդ . 323 . 328 . 329 . 331 . 335 .
 Վահրամ Պահլաւունիք . 300 . 301 . 303 .
 Վահրամ սլաւոփ . 320 . 338 .
 Վահրամ սպարապետ . 363 .
 Վահրիճ Խաղունի . 167 .
 Վաղարշ Հայոց թագաւոր . 107 — 109 .
 Վաղարշ , Պարթեւաց թագաւոր . 71 . 74 — 77 .
 Վաղարշ Պարսից թագաւոր . 214 . 216 . 217 . 219 .
 Վաղարշակ Ա . 1 . 33 . 34 . 36 — 39 . 114 .
 Վաղարշակ Բ . 160 . 161 .
 Վաղարշապատ . 107 . 111 . 121 . 123 . 127 . 137 . 176 . 210 . 214 . 217 . 267 . 268 .
 Վաղարշաւան . 107 .
 Վաղաւեր . 267 .
 Վաղենտինոս . 142 . 143 .
 Վաղերիանոս . 113 .

- վաղէս . 149 .
 վաղինակ Սիւնի . 142 . 145 .
 վայկուն . 42 . 48 .
 վայկունիք . 48 .
 վան թագաւոր . 27 . 29 .
 վան քաղաք . 13 . 38 . 243 .
 251 . 418 . 419 . 438 .
 վանայ ծով . 4 . 13 .
 վանանդ . 230 . 239 . 241 . 244 .
 252 . 280 . 309 .
 վանանդացիք . 163 .
 վաշտակ . 15 .
 վասակ Գնթունի . 270 . 271 .
 վասակ Գուգարաց իշխան .
 267 .
 վասակ Մամիկոնեան Ա . 146 .
 154 . 157—159 .
 վասակ Մամիկոնեան Բ . 201 .
 203 . 204 . 209 . 210 .
 վասակ Պաշլաւունի . 290 .
 295 . 296 .
 վասակ Սիւնի Ա . ուրացող .
 179—186 . 188—191 . 194—
 197 .
 վասակ Սիւնի Բ . Գափուս .
 239 .
 վասակ Սիւնի Գ . 288 .
 վասիլ Ա . կայսր . 239 . 241 .
 վասիլ Բ . 290 . 294 . 296 .
 297 .
 վասիլ, Մանազկերաի իշխան .
 311 . 312 .
 վասիլ . Տ . Գող վասիլ
 վասպուրական . 232 . 235 .
 243 . 249—251 . 255 . 262 .
 273 . 276 . 277 . 281 . 290 .
 294 . 296 . 298 .
 վարազդաս . 156 . 157 . 160 .
 161 .
 վարազդաս մարզպան . 218 .
 220 .
 վարազկերտ . 204 .
 վարազշապուհ Ամատունի .
 203 .
 վարազշապուհ Պալունի . 190 .
 վարազվաղան . 177 .
 վարազաիբոց . 225 . 226 .
 վարաժ . 40 .
 վարամնունիք . 40 .
 վարայրժարոց . 211 .
 վարբակէս . 17 .
 վարդ . 207 . 218 . 219 .
 վարդան Մամիկոնեան Ա . 142 .
 144—146 .
 վարդան Մամիկոնեան Բ .
 ՄԼԾ . 168 . 170 . 171 . 179 .
 181 . 183 . 185—193 . 195 . 201 .
 վարդան Մամիկոնեան Գ . 218 .
 220 . 221 .
 վարդան պատմիչ . 174 . 223 .
 238 . 320 .
 վարդգէս . 48 . 107 .
 վարդուհր . 224 .
 վարժ . Տ . վարաժ .
 վելլէյոս . 35 . 36 .
 վեհմիհրջապուհ . 172 . 175 .
 179 .
 վեհսաճան . 109 . 111 .
 վենդիդիոս . 65 .
 վենետիկ . 403 . 450 .
 վենետիկցիք . 412 .
 վեսամինսդբր . 410 .
 վեսա Սարգիս . 299 . 300 . 303 .
 վերոս . Տ . Ղուկիոս վերոս .
 վերուղանոս Սեւերոս . 75 .
 վժան . 248 .
 վիեննա . 450 .
 վիկտիոս Բողանոս . 75 .
 վին . 207 .
 վիտին գունդ . 376 .
 վիրք . 22 . 40 . 43 . 50 . 52 .
 73 . 74 . 91 . 92 . 95 . 128 .
 132 . 142 . 148 . 168 . 181 .
 201—203 . 208—210 . 243 .
 414—416 .
 վլիթ . 229 . 230 .
 վլոն ճիհր . 218 . 221 .
 վնասեպ Սուրհասպ . 107 . 108 .
 վշնաս վահրամ . 218 . 220 .
 վոլոդէս . 71 . 74 .
 վոնոն . 70 . 73 .
 վուրկ . 187 .
 վում Ա . 167 .
 վում Բ . 169—172 . 175 . 176 .
 վումշապուհ . 166—168 . 171 .
 174 .
 վստաս . } 15 .
 վստասկար . }

- Վրանջունիք . 22 .
- Վրաստան . 26 . 75 . 110 . 127 .
132 . 201 . 202 . 208 . 211 .
212 . 258 . 267 . 435 . 443 .
- Վրէն Վանանդացի . 206 . 207 .
217 .
- Վրթանէս . Ս . 114 . 115 . 117 .
134 . 135 . 138 . 139 .
- Վրկանք . 75 . 222 .
- Վրդր . 98 .
- Տակիտոս կայսր . 113 .
- Տակիտոս պատմիչ . 35 .
- Տաճատ Աշոցայ իշխան . 114 .
119 . 127 .
- Տաճատ Գնթունի . 192 . 193 .
- Տաճարականք . 343 . 347 . 352
— 359 . 382 .
- Տաճկաստան . 442 . 443 .
- Տամրատ . 22 .
- Տայք . 201 . 209 . 226 . 252 .
253 . 256 . 286 . 309 .
- Տանտուղոս . 403 .
- Տաշիր . } 254 . 263 .
- Տաշիրք . } 254 . 263 .
- Տարենտոն . 388 .
- Տարսն . 329 . 330 . 335 . 339 .
341 . 345 . 349 . 350 . 363 .
370 . 372 .
- Տարօն . 116 . 124 . 128 . 129 .
176 . 222—225 . 234 . 235 .
243 . 249 . 250 . 265 . 281 .
- Տաւաշ . 272 .
- Տաւրոս . 317 . 322 . 323 . 327 .
- Տերենտ . } 152 . 153 .
- Տերենտիանոս . } 155 . 159 .
- Տերիւրաղ . 26 . 27
- Տեւտամոս . 15 .
- Տեւտոնեան . 354 .
- Տերեր . } 71—73 . 80 . 81 .
- Տերերիոս . } 85 .
- Տերերիս գեա . 106 .
- Տեղրան Ա . 2 . 18—26 . 38 .
- Տեղրան Բ . 35 . 40 . 42—59 .
62—65 . 78 . 91 .
- Տեղրան Գ . 105—107 .
- Տեղրան Ա Արտաւազդին յա-
ջրդը . 70 . 72 .
- Տեղրան Բ . Փոքր . 70 . 72 .
- Տեղրան Գ . 71 . 73 .
- Տեղրան Գ . Կապուղովացի .
71 . 75 . 76 .
- Տեղրան զօրապետ . 224 .
- Տեղրան Փոքր . 57 . 58 .
- Տեղրանակերտ . 23 . 42 . 44 .
50 . 51 . 71 . 75 . 76 . 142 .
146 . 147 . 435 .
- Տեղրանուհի . 21—23 .
- Տեղրիս . 435 .
- Տեղրոն . 110 . 120 . 165 . 223 .
- Տիմոթէոս . 55 .
- Տիրան Ա . 102 . 104 . 105 .
- Տիրան Բ . 135 . 138—144 .
- Տիրան , Արտաշէս Բ-ին որդին .
99 . 100 .
- Տիրան Մամիկոնեան . 224 .
226 .
- Տիրան , Տեղրան Ա-ին որ-
դին . 26 .
- Տիրիգատէս . 74 .
- Տիրիթ . 140 . 142—146 .
- Տիրոց Բազրատունի . 190 .
- Տշմուտ գեա . 192 . 193 .
- Տմորիք . 98 . 141 . 195 .
- Տոն գեա . 444 .
- Տուրիա . 84 .
- Տուղրիւ . 306 . 307 . 309 .
310 . 312—314 .
- Տուղրիւբէկ . 290 . 294 .
- Տուվր . 410 .
- Տուր . 94 .
- Տուրանեան . 451 .
- Տրայլանոս . 93 . 99 . 100 .
- Տրդատ . 35 . 113—135 .
- Տրդատ Բազրատունի . 104 .
- Տրդատ ճարտարապետ . 282 .
- Տրդատ , Պարթեւաց թագա-
ւորին եղբայրը . 71 . 74—
77 .
- Տրդատ , Տիրան Բ-ին որդին .
140 . 142 . 143 .
- Տրիարիոս . 54 .
- Տրիպոլիս . 321 . 347 . 352 .
353 . 357 . 358 .
- Տրոգա . } 14 . 15 .
- Տրոգադա . } 14 . 15 .
- Տրունիք . 94 .
- Տփղիս . 263 .

- Յիւկ Ամբամ. 262 . 272 .
 Յոլակ . 7 .
 Յոլակերտ . 6 . 7 .
- Փարիոս , 54 .
 Փալտուն . 414 . 415 .
 Փայտակարան դաւան . 254 .
 Փայտակարան քաղաք . 117 .
 135 . 136 . 190 .
 Փաննիոս . 54 .
 Փապակ . Տ . Փափաք .
 Փառախոտ . 6 . 7 .
 Փառանձեմ . 142 . 143 . 145 .
 150 . 151 . 158 .
 Փառնակէս . 58 .
 Փառնաս . 15 .
 Փառնուաս . 18 .
 Փառներսեհ . 140 . 143 .
 Փառոսի . 7 .
 Փարիզ . 404 . 411 . 412 . 450 .
 Փաւոս . 18 .
 Փաւստոս Բուզանդացի . 35 .
 147 . 157 . 158 . 160 .
 Փափակ Պալունի . 206 .
 Փափաք Առուեղեան . 191 .
 Փիլիպպոս , Աղուանից թա-
 դաւոր . 279 .
 Փիլիպպոս առաքեալ . 83 .
 Փիլիպպոս , Գաղղիայի թա-
 դաւոր . 386 . 388 . 399 .
 Փիլիպպոս կայսր . 110 .
 Փիլիպպոս , Հայոց թագաւոր .
 363 . 365 .
 Փիլիպպոս , Տարենտոնի իշ-
 խան . 388 . 406 .
 Փիւնիկեցիք . 48 .
 Փիւնիկէ . 44 .
 Փղորոս . 35 . 36 . 72 .
 Փնտուխտար . 369 . 372 . 374 .
 376 .
 Փոկաս . 223 .
 Փորդուկալ . 451 .
- Փռանկ . 311 .
 Փռիւզիա . 113 .
 Փրաստ . 66 .
 Փրանկիսկոս . 403 .
 Փրեդերիկոս կայսր . 347 . 349 .
 350 .
- Քաղղէացիք . 26 .
 Քաղեայ . Տ . Պայապիս .
 Քաղկեդոն . 46 .
 Քամ . 3 .
 Քանանացիք . 14 . 15 .
 Քանանիդէս . 15 .
 Քաջաջ . 199 .
 Քարձամ . 99 .
 Քարսպառ . 242 .
 Քերեսոփոս . 28 . 29 .
 Քէթպոզա . 380 .
 Քէյխիւսրէվ . 366 .
 Քէյքոպառ . 366 .
 Քիւրոք . 418 . 420 .
 Քուշանք . 159 . 198 .
 Քսենոփոն , 2 . 18 . 26—29 .
 Քսիփիլինոս . 109 .
 Քրիստանտաս . 24 .
 Քրիստոս . 16 . 17 . 23 . 80 .
 82—85 . 219 . 261 . 303 .
 392 . 394—396 .
- Օդոստոս . 70 . 72 . 80 . 81 . 85 .
 Օշական . 137 . 176 .
 Օշին թագաւոր . 385—388 .
 Օշին , Ամբրոնի իշխան . 323 .
 324 .
 Օշին , Կորիկոսի իշխան . 388 .
 389 . 392 .
 Օսմանեանք . 418 . 422—436 .
 438 . 439 . 442—444 . 448 .
 Օտայ . 114 . 116 . 118 . 123 .
- Ֆէթհ Ալի . 436 . 438 .
 Ֆրոսասար . 321 .

- Ի . ՀԱՇԻՒ ԱՐԱՄԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
 Ի սկզբանէ Յուլիսի 1848 մինչև ց30 Յունիսի 1851 :

Թիւթղ. Հաս.	Ընդամեր	Աւուրք	Բաժին	Պլանի
	Աղնուական եւ Ազդատեր Ընկերացն	յորս գրեցանն		գրամ.
	Ըստ Գ. Հաշուի հրատարակե- լոյ յամի 1848 յ30 Յունիսի էին	52	5200
	Ի սոսա յաւելան			
31	Աւգալեան Պր. Յովհաննէս .	6 Յունիս 1849	1	100
32	Մարտիրոսեան Պր. Գալստան .	30 Յունուար 1850	1	100
33	Յովհաննէան Պր. Ղազարոս .	30 Յունուար 1850	1	100
34	Պիւլպիւլճեան Պր. Յովսէփ .	25 Յունիս 1850	1	100
			56	5600

Ե Լ Ք

Յերրորդ Հաշուէ մնայ
 Կազմից Գ. մասենին վասն ընկերաց
 Այլեւայլ ծախուց
 Գրոշմելոյ Պատմութեան Հայոց, 21½ թերթ,
 1000 օրինակ

Արժաթ Ֆիւր .			
92	58		
1	48		
9	50		
669	20		
773		56	

Մ Ո Ւ Տ Ք

Հահ ¼ վերագոյն գրեալ 5600 ղէսոյ գրա-
 մոց մինչև ցայսօր
 Ի վաճառելոյ 19 օրինակաց Ա. մասենին .
 " 27 " Բ. "
 " 43 " Գ. "
 Պակասի, զոր անցուցանեմք ի Ե. Հաշուն

647	40		
11	24		
18	54		
38	42		
57	16		
773		56	

Faint header text at the top of the page, possibly a title or page number.

[Faint text in top-left cell]	[Faint text in top-middle cell]	[Faint text in top-right cell]
[Faint text in middle-left cell]	[Faint text in middle-middle cell]	[Faint text in middle-right cell]
[Faint text in lower-middle-left cell]	[Faint text in lower-middle-middle cell]	[Faint text in lower-middle-right cell]
[Faint text in bottom-left cell]	[Faint text in bottom-middle cell]	[Faint text in bottom-right cell]
[Faint text in lower-bottom-left cell]	[Faint text in lower-bottom-middle cell]	[Faint text in lower-bottom-right cell]
[Faint text in bottom-most-left cell]	[Faint text in bottom-most-middle cell]	[Faint text in bottom-most-right cell]

4749

2013

